

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պ ԵՐԿՐԱԽՏԻՆ

ԵՐ

ԱՌԱՋԻՆ ՊԱՆՏՐԱՏՄԱԿԱՆ ԲՆՆԱՆ
ԿԻՆՏԵՐԻՍՆԵՆ ՊԱՆՏՐԱՏ
Ի ԳԼԽԱՅԷ

ՊԱՆՏՐԱՏ ԲՆՆԱՆ ԽՆԴԵՐՆԵՆ
Ի ՄՈՒՐԱՅԷՆ

ՀՐԱՏԱԿԻՉ
Ս ԵՆՏԵՐԻՍՆԱՆ

ՀԱՏՈՐ Ե



Կ. ՊՈԼԻՍ

Ն ՊԱՆՏՐԱՏ ԳԼԽԱՅԷ

ԿՅՈՒՄ

L67
1637

1999

Handwritten text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page.



ՊԱՐԵՆ ՄԱՐԱԶԱՍԻՆ

ԳԱՏԱՍՏԱՆԸ

1569

ՊԱՋԷՆ ՄԱՐԱԶԱԽՏԻՆ
ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՍՈՍՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆ
ԱՌԱՆ-ԹԻՒՆՆՈՆ ՊԱԼԱՏԻ
Ի ՎԵՐԱՍՈՒ

ՊԱՂԱԿԱՆ ԲՆԱԴՐԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ս. ՄՈՒԲԱՏԵԱՆ

~~ՊԱԼ~~

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Մ. Խ. ԵՆՏԷՆՆԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

Կ.—ՊՈՒԽՆ ԵՆՏԷՆՆԵԱՆ ԽԱՆ ԹԻՒ Յ

8/12/20



Կ. ՊՈՒԽՆ

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆ

1873



ԱՌ ԸՆԹԵՐՅՈՂԾ

Այսօր կախինք հրատարակել Պաղէն Մարաշախտին գատատաւանը, որ մեծ լոյս մը պիտի ձգէ Գաղղիոյ կրած ճախորդութեանց վրայ, և անոր ելքը, ինչ ոչ բլլայ, մեր քաղաքական և զինուորական ժամանակակից պատմութեան մէջ բնդարձակ աեղ մը պիտի գրաւէ:

Բոլոր Գաղղիա երկար ժամանակէ ի վեր եսանդուն անհամբերութեամբ կուգէր Մէջի անձնատուութեան նախընթաց և յարակից դէպքերուն վրայ ստոյգ տեղեկութիւն մը առնուի. և ահա վերջապէս ճշմարտութիւնն պիտի յայտնուի:

Այս հրատարակած գործերնիս պիտի մնայ իբր վաւերական պատմութիւն մը այն սրտաշարժ գատատաւանին, որ Գաղղիոյ Մարաշախտի մը պատուոյն և կենացը կրտսանայ, Քանի մը շարքէն վճիռը պիտի տրուի, բայց սոյն երկատիրութիւննիս վերջէն նկատող ընթերցողները յիշելու են թէ մենք օր ըստ օրէ գրեցինք իւրաքանչիւր նիստի անցքերը, մի միայն ամեն բան տեսնելու լսելու և ըսելու գիտաւորութեամբ, և միայն ճշմարտութիւնն ամեն մտքի և ամեն խղճի բացառապէս կերպիւ ներկայացընելու փափաքով:

Երբոր պատերազմական տեսանն իր վճիռը տայ, անշուշտ շատ գրութիւններ պիտի հրատարակուին զայն քննադատելու կամ պաշտպանելու գիտմամբ: Եւ իւրաքանչիւր հեղինակ պիտի պարծի թէ իւր ըրած նկարագրութիւնն անկողմնակալութեամբ է, սակայն ոչ որ կրտսայ ժխտել թէ վճառն հրատարակութիւնը հարկաւ աղղեցութիւն պիտի ունենայ, բաղձաթիւ վկայութեանց մէջ, հեղինակին ընկերք ընտրութեանը, և նայն իսկ իւր պատմութեանը վրայ: Իսկ մենք, կամայ ակամայ պարտաւորեալ ենք անկողմնադաճ բլլալու՝ գատատաւանին ելքը

4/637-ա

38 1643

զիանալու համար . և մեր երկատիրութիւնը վեճարանութեանց միջոցին խմբագրելով, բոլոր վկայութիւններն ու անոնց արուած պատասխանները որ ըստ օրէ սեղազրութեամբ առնելով, կուղենք պաշտօնական վիպագրութիւն մը ներկայադրենք մեր ընթերցողաց, որով կարենան անձամբ դատել թէ՛ Պաղէն Մարտիրոսը և թէ՛ իւր դատարները :

Փարիզ, 6 Հոկտեմբեր .

Գ. ԳԱՆԻԷԼ
ԻՄՊՐԻՄՈՒ ՏՆՈՋԵՐԱՆՈՆ ԼԵՆԻՆԻ



ԴԱՏԱԻՈՐՔ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏԵՆԻՆ

ՈՐ Ի ԿՈՍՏՆՔՐՈՍՆՆՆ



1. ԲՈՒՆ ԴԱՏԱԻՈՐՔ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ— Զօրաբաժնի զօրապետք, որք թընամուտն դէժ կը հրամայէին իրենց գունդերուն :

- Պ. Զօրապետ Գուքուտի (Նախագահ) :
- Պ. Զօրապետ Տըլա Մօթուտ :
- Պ. Զօրապետ Սեպուհ Տը Շարօ-Լաթուր :
- Պ. Զօրապետ Թրիփիէ :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ— Զօրաբաժնի զօրապետք, որ զինուորական առաջին բաժնին մէջ կը դորձէին :

- Պ. Զօրապետ Փրէնթօ :
- Պ. Զօրապետ Մարթինօ-Տէչնէ :
- Պ. Զօրապետ Ռէսայր :

2. ՕԳՆԱԿԱՆ ԴԱՏԱԻՈՐՔ

- Պ. Զօրապետ Կիօ :
- Պ. Զօրապետ Լալման :
- Պ. Զօրապետ Սիւլօ Տը Մարուա :

ԱՄԲԱՍՏԱՆ (ՔԵՆԵՉ ԴԱՏԱԻՈՐՔ)

- Պ. Զօրապետ Վալտի, Սէրէ Տը Ռիփիէ :

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒՉ (ՀԱՍԵՐԱԿԱՅԻՆ
ԳՈՐԾՈՅ ՊԱՇՏՈՆԱՏՈՒՆԷՆ)

Պ. Զօրապետ զօրաբաժնի, փութի :

ՏԵՂԱՊԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒՉ

Պ. Զօրապետ Տր Գօրծն :

Դ Ի Ի Ա Ն


Պ. Ալլա , դիւանապետ .

Պ. Ռէյմոն , օգնական .

Պ. Գասթր , օգնական .

Պատերազմական տառնին սուրբական հանգա-
մանաց վախճանութիւն մը եղած չէ : Յանցաւո-
րութիւնը վճռելու համար մեծամասնութիւնն
առնուաղն հինգ ձայն պիտի ըլլայ :

Եթէ ամբաստանեալն ինպատ իրեն երեք
ձայն հաւարէ , փոքրամասնութեան շնորհիւ պիտի
արձակուի :



Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏԵԱՆԸ

ԿԱԶՄՈՂ ԶՕՐԱՊԵՏԱՅ ՎՐԱՅ



ԶՕՐԱՊԵՏ ՓՈՒՐԵՒ

Օկուսթ փութի զօրապետը , իսկուսիւն
դէպէս , ծնեալ ի փութուղ յամին 1813 , 1 էդէտն
պատուոյ մեծ պաշտօնակալ է . վարչական գործե-
րու մէջ դերազանց անձ մը , կարգապահ և աշխա-
տասէր : 1870 ին Ավրիկէէն կանչուելով որ լուսաւի
վրայ 16րդ զօրաբանակը կազմէ և հրահանգէ ,
վերջին պատերազմին մէջ Երևելի հանդիսացաւ
իւր կարգադրիչ հանգամանքներուն համար , որք
դիմացան դժուարին և վտանգալից պատերազմի
մը ամեն կերպարանափոխութեանցը :

Իւր կազմած 15րդ զօրաբանակին զլուին
անցած քաջութեամբ կը մարտնչէր , երբ զինա-
դադարը զինքն ստիպեց զինքը վար դնել :

Փութի զօրապետին յանձնուած է ամբաս-
տանութեան վախճան պաշտօնը : Եւ կըսուի թէ

ատենարանութեան նշանաւոր տաղանդ մը ունի, այնպէս որ Լաչօ փաստաբանին հետ ախոյեան մը պիտի ըլլայ:

ՉՕՐԱՊԵՏ ՏԷ Ո՛ՐԱԿԷՐ

Ինչպէս որ ծանօթ է, այս գործին քննութիւնը տասնևվեց ամիսէ ի վեր սկսած է. և որ Ռէյմօն-Ատօլի-Տէղերէ տը Ռիլիէրը զօրագետին յանձնուած էր: Ինքը ճարտարագետ զօրաց բանակին կը վերաբերի: Յիսուն և հինգ տարեկանի մօտ մարդ մըն է, հաստատամիտ, բարձրահասակ, և որ քննիչ ատենակալի մը պէտք եղած հասկացողութեան և կորովմտութեան ամենաբարձր կարողութիւնն ունի:

Այսօր զօրաբաժնի զօրագետ, կը հրամայէ Վէրոայի բանակին Չրդ զօրաբանակին ճարտարագետաց: Իհգէսն պատուոյ ուձիակեր ասպետի աստիճանն ունի, և ամբութեանց մասնաժողովոյն օգնական անդամ է: Չինուորական ծառայութեան կսկիի 1837 ին երկրորդ տեղեկալի աստիճանով:

Տասնևհինգ պատերազմներու մէջ մտած է այսինքն երեսուն տարեկի վեր զազդիական բանակին վարած Ափրիկէի, Հուովոյ, Երիմի, Խոսիոյ և այլն բոլոր պատերազմներուն մէջ զանուած է:

Վերջին պատերազմին, Լուառի բանակին վրայ կարևոր հրամանատարութիւն մը ունեցաւ:

Սա այն զօրագետներէն մէկն է, զոր Գաղղիոյ զինուորներն ամենէն աւելի կը յարգեն ու կը սիրեն:

ԳՈՒՐՈՍ ՏՕՄԱ

Դուքս տ' Օմալ պատերազմական ծառայութեան սղերնաւորութիւն ըրաւ երկրորդ տեղեկալի աստիճանով. յետոյ հարիւրագետ եղաւ զօրագունդի մը մէջ, յորում ծառայեց նաև իբր հետևակ զնդագետ: Այս աստիճանով, հրամանաւեր պաշտօնակալ իւր եզրօրն, Օւլէանի դուքսին, ճակատամարտ մը տուաւ Ափրիկէի մէջ 1840 ին, որմէ ետքը տեղակալ-զնդագետ անուանեցաւ: Երկրորդ ճակատամարտ մը տուաւ 1841 ին Չէրդ յասակալարդ դուքսին տեղակալ-զնդագետի աստիճանով, որմէ ետքը թշնամին չլիթեւո սահմանեալ 19րդ զօրագունդին զնդագետ անուանեցաւ:

Այս իշխանը 1842 ին բանակի մարտնչական աննեցեաւ. և սոյն աստիճանով հրամանատար եղաւ Մէտէա դաւառին և զինամարտիկ փոշտի մը, որուն գլուխն անցած Ալտ-Էլ-Քասէրի գերդաստանը բոլոր սլարոց այիսք և վրաններով մեկտեղ ձերբակալելու զեղեղիկ յոյ՛ գաթիւնը ձեռք բերաւ: Այս զինուորական գործէն յետոյ տեղակալ զօրագետ անուանելով հրամանատար եղաւ Կոստանդինի դաւառին, և տար Պորտոյի բանակին:

ԶՕՐԱՊԵՏ ՍԻՒՆՈ ՏԵՄԱԼՈՒՌՈՒԱ

Պ. Սիւլօ տը Մալուա, ծնեալ ի 14 տարիկի 1813, վաշտի զօրապետ անուանեցաւ 1867 ին, և թուր քաղաքը խրիուեցաւ Պարակէ-տ'իլիէ մա-րաշախտին հրամանին տակ եղած Յրդ. զօրաբա-նակին բոլոր պաշտօնակալաց գլուխ կարգուելով: Ապա մի և նոյն աստիճանով փարիզի բանակին մէջ անցաւ, և իւր պաշտօնները պաշնց մինչև նոյն մայրաքաղաքին պաշարմանէն ետքը: 1870ին զօ-րաբաժնի զօրապետ անուանելով Շանփինյի մէջ հրամանատար կարգեցաւ կեդրոնական զօրաբաժ-նին, որ, ինչպէս գիտենք, թշնամիէն չկեղեք-ուեցաւ:

Չինադ աղարին ատեն՝ Մալուա զօրապետը՝ ղինուորական առաջին բաժնին հրամանատարն էր: Իւր այս վիճակը պաշնց մինչև բանակին վէրայի վրայ քաշուելը, ապա, պաշարման յոգ-նութիւններէն և յառաջագոյն կրած աշխատու-թիւններէն առողջութիւնը խանդարուելով՝ պար-տաւորեցաւ քանի մը ամիս հանգիստ առնուլ: Սակայն 1871ի Յունիտին կրցաւ կրննալ ևրթալ ևրթալ՝ զօրաբաժնին հրամանատարութեան պաշտօնով, բայց պատերազմի նախարարը քիչ ատենէն զանի դարձեալ փարիզ կուեց պաշտօնակալաց յանձնա-ժողովոյն նիստերուն ներկայ գտնուելու համար: Պ. տը Մալուա մինչև յոյսոր նոյն կարևոր պաշ-տօնը կը վարէ, և այս երևելի պաշտօնակալ-զօ-րապետին փորձառութիւնը, վատահ եմք թէ, մեծ ճառայութիւն պիտի մատուցանէ յանձնաժողո-

վոյն, որուն ամենէն աւելի լսելի եղող անդամ ներէն մէկն է ինք:

ԶՕՐԱՊԵՏ ԿԻՕ

Էյլոյի պատերազմին մէջ մեռնող հարիւրա-պետի մը որդի և մօր կողմանէ Պիւֆօնէն սեր-եալ Պ. Սիմօն կիօ զօրապետը փարիզ ծնած է 1805 հոկտեմբեր Յին: Ամենէն առաջ բաղմարուեալից ճեմարանէն ելլելով 1826 ին, Ափրիկէի պատե-րազմներուն կը մասնակցի (1841-42-43): 1864ին զօրաբաժնի զօրապետ կանուանի և Լէգէն պա-տույ մեծ պաշտօնակալ:

Պ. կիօ զօրապետն երևելի պաշտօնակալ է ումբաձիզ զօրաց՝ և միանգամայն ընտիր գիտնա-կան: Պետութեան խորհրդական ըլլալով՝ Գաղ-ղիոյ և Անգղիոյ բոլոր Արուստահանդէսներուն հոգաբարձութեանց անդամ եղած է, և կայսրու-թեան ժամանակ հաստատուած առևտրական քննիչ յանձնաժողովոյն պատգամաւոր ըլլալով՝ իւր հանձարովը մեծ լոյս տուաւ անոր:

1870ի պատերազմին ժամանակ՝ այս զօրա-պետը փարիզու պաշտպանութեան ժողովոյն ան-դամ անուանուեցաւ, և ապա ընդհանուր հրա-մանատար ումբաձիզ զօրաց: Այս տիտղոսով իւր հրամանին տակ ունեցաւ 30,000 ումբաձիզ զօրք, 3,000 թնդանօթ, և 94 մարտիոց և 22 ամբոց զե-նելու և անոնց պաշար հայթայթելու կարող եղաւ:

ԶՕՐԱՊԵՏ ԹՐԻԹԻԷ

Պ. Թրիթիէ զօրապետը՝ փառք-Պայէ զաւա-
ռին Էտէն քաղաքը ծնած է 1801 մայիս 11ին, և
1821ին բաղմարուեստից ճեմարանը մտնելով՝ երկու
տարի ետքն անկէ ելաւ զինուորական ճարտարա-
պետ, և 1837ին Ափրիկէ իրկուեցաւ, և, երեք
տարի յետոյ, Մուղայիայի և Կոստանդինի երկրորդ
արշաւանքէն զինի, Միլիանայի հաշիւաւոր պաշտ-
պանութեան ամենէն երեւելի անձն եղաւ, ուր
զինքը պաշարած էր Ապա-Խլ-դատէր 1840 յուլիս
8էն մինչև 1841 յունիս 29: Այս իբր մէկ տար-
ուան պաշարման մէջ, որմէ միայն 76 պատերազ-
մող ազատեցան 1100 էն, Թրիթիէ հարիւրապե-
տին քաջութիւնն ու դործունէութիւնը յայտնի
եղաւ: Ուստի և յաճորդ տարին հետևակ զօրա-
գունդի ղրկու առուանեցաւ: 1843 ին. Օռլէան-
վիլի դրաման վրայ, Լէզէոն պատուոյ պաշա-
նակալ անուանեցաւ: Պու-Մաղայի դէմ իւր մեծ
քաջագործութիւններն իր համարը վերջին աս-
տիճանի հասուցին, և իրիմի պատերազմին ծա-
դած ժամանակը՝ զնդապետ եղած էր:

Մէնթ-Սանտ մարտիալտէն Արևելեան բանա-
կին ճարտարապետաց հրամանատար կարգուե-
լով՝ Ալմայի պատերազմին մէջ իւր քաղցր շտիկց,
բայց ծանր դէպք մը, որ է ավ որունքին կատ-
րիլը, զինքը պարտաւորեց Պաղլիա վերադառ-
նալ պատերազմին ըննալէն յառաջ:

Այն ժամանակէն ի վեր քիչ մը մոռցուեցաւ
Թրիթիէ զօրապետը, որուն արժանաւորութիւնն

անժխտելի էր և ոչ ոք ժխտեց: Իւր աղատափ-
րութիւնը՝ անվատահաւթիւնն կը պատճառէր,
անոր համար է որ հաղիւ թէ 1863 ին զօրաբաժնի
զօրապետ անուանեցաւ, և 1866 ին՝ մեծ պաշ-
տօնակալ, իւր Անգլիոյ Պարսկաստան անուամբ կա-
րեւոր երկաւիրութեան հրատարակութենէն ետքը:

Թէպէտ իւր պատերազմելու հասակը լրացած
էր 1869 մայիս 11ին (65 տարեկան), բայց եր-
կար ատեն անդործ չկեցաւ, վասն զի պատերազ-
մին սկսած ժամանակը փարիզ դիմեց, այլ միայն
սեպտեմբեր 1 ին ընդունուեցաւ իւր դործակցու-
թիւնը: Փարիզու արտաքին պաշտպանութիւնը
կարգադրելու արշաւուն իրեն յանձնուելով՝ ան-
սահման անձնակազմութեան և դործունէութեան
այնպիսի փորձ մը տուաւ՝ որ փրտսիացիք ան-
անուանելի զինքը: Իսկ իւր զինուորները, որ
միշտ և ամեն տեղ կը անսնէին զանի պարտա-
շէնը կը կոչէին:

ԶՕՐԱՊԵՏ ԱԼՅԱՅԲ

Թէսայր զօրապետը Պաղլիայ հեծելաորդաց
ամենէն դիտուն և ամենէն վաղուս պաշտօնա-
կալներէն մէկն է, և ստիպյն, լիտղաւորութեան
վերահաստատման ժամանակին վերջերը, Մովսրի
կամաւորաց մէջ հասարակ զինուոր մըն էր: Բայց
Ափրիկէն իրեն առիթ առաւ զինուորական աս-
պարէզին մէջ մեծաբայ յառաջանալու:

1854 ին Արևելեան պատերազմին գնաց ան-
ղապահ-գնդապետի աստիճանով, և վերադարձին

գնդապետ եղած էր, ֆանկիլի մէջ ունեցած խր
զեզեցիկ ընթացից շնորհիւր :

Վերջին պատերազմին ատենը Գուլմիէի մէջ
զօրաբաժնի զօրապետ էր, երբ ծանր վէրք մը
առնելով՝ պարտաւորեցաւ ճակատամարտէն քա-
չուիլ : և հրամանատարութիւնը Ռուսացան զօրա-
պետին թողուց, և յայնժամ իր գունդերը խիստ
չուտ իմացան թէ ի՛նչ կորուստներ ըրած էին
իրենց հրամանատարը կորսնցընելով՝ որ Լուառի
եղերքին վրայ դարձեալ պիտի փայլեցնէր խրիմի
պատերազմին մէջ ըրած քաջագործութիւնները :

ՉՕՐԱՊԵՏ ԼԱՎՐԱՆ

Կրտսն թէ՛ Լավրան իջրապետն այս պատե-
րազմական ատենին մէջ տ՛իկզէա զօրապետին
տեղն անցած է՝ անոր խուլ ըլլալուն պատճառաւ :

Բայց որովհետեւ Պ. Լավրան զօրապետը Պ.
տ՛իկզէա զօրապետէն ա՛լ աւելի խուլ է, պէտք է
հետեւցնել թէ՛ այս փոխութեան պատճառը
բոլորովին ուրիշ բան է, այսինքն պարզապէս այն՝
թէ Պ. Լավրան գլխաւոր հրամանատարութիւն
ըրած է, զոր չէ ըրած Պ. տ՛իկզէա :

Պ. Լավրան 1839 ին Սէն-Սիբիլի դինուորական
դալորցէն ելելով՝ դինուորական ասպարէզը մտաւ
Ափրիկէի մէջ, ու մնաց մինչև 1854 : Այս թուա-
կանին՝ Պօքիէ զօրապետը զանի խրիմ՝ տարաւ, ուր
բոլոր պատերազմին ժամանակը կայաններու
արձանագրութեանց գլխաւորն էր, որ տաղակա-
լից և դժուարին պաշտօն մըն է : Այսու ամե-

նայնիւ զայն կատարեց իւր անձնանուիրութեամբն
ու հանճարովը, զոր միշտ ի գործ կը դնէր իւր
ամեն պարտաւորութիւնները կատարելու ժամա-
նակ, և անկէ ճէզայիր վերադարձաւ, ուր գրն-
դապետ և զօրաբանակի զօրապետ եղաւ :

1870 ին Քապիլիի սպարտամութիւնը գտակց,
ապա Գաղղիա դարձաւ, ուր իրեն մեծ հրամա-
նատարութիւն մը յանձնեցին Արևմտեան կողմը :
Այժմ՝ նանթ քաղաքէն կազայ՝ պատերազմական
առաջին ատենին մէջ դատաւոր բազմելու :

ՉՕՐԱՊԵՏ ՏՐՇԱՊՕ-ԼԱԹՈՒՐ

Պ. Տր Շապօ-Լաթուր միապետութեան անկ-
մանէն յետոյ (1837-1847) հինգ անգամ երես-
փոխան ընտրուեցաւ ու չընդունեց, և, պետական
հարուածէն յետոյ ժամանակ մը անգործ մնալով,
նորէն դինուորական ասպարէզը մտաւ վայեան
մարտիախախտ անաշարկութեամբը, և Ափրիկէ
վերադարձաւ, ուր իր մասնաւոր ծանօթութիւն-
ները Գաղղիական այս դաղթականութեան ան-
թիւ ծառայութիւններ մտտուցին : 1853 էն ի վեր
կիտարածնի զօրապետ ըլլալով՝ 1857 ին զօրաբաժ-
նի զօրապետ անուանեցաւ՝ Կասն-Քապիլի երրորդ
արչաւանքէն յետոյ, և 1865 ին, ամբողջութեանց
ժողովոյն նախագահ կարգեցաւ, որուն անգամ
էր 1858 էն ի վեր :

Պ. Սեպուհ Տր Շապօ-Լաթուր 1869 ին պա-
հետի զօրաց չլիանակն անցաւ, բայց վերջին
պատերազմին հրատարակութեան ատեն՝ իւր խըն-
դրանօքը նորէն կուռեցաւ գործելու, և ամբու-

թեանց ժողովոյն մէջ նախագահութեան պաշտօնը դարձեալ յանձն առաւ : Պաշարման միջոցին՝ իւր դարձունէութիւնը վայրկեան մը չթուլցաւ, և, զինադարէն յետոյ, Պորաօ զնաց Աղզային ժողովոյն մէջ իւր ամուր բազմեալ, ուր զինքը խրկած էին իւր նահանգին 65,000 ընտրողները : Այն միջոցին նոր ընդունած էր Լէդէոն պատուոյ մեծ խաչը :

Սեպուհ Տը Շապօ-Լաթուր զօրապետը՝ Դաղմիր փէրիէի եզրոր դուստր՝ Օրիորդ փէրիէն կնութեան առած էր, որմէ միայն մէկ դուակ ունի ողջ, Պ. Արթիւր Տը Շապօ-Լաթուր, նախկին պաշտօնակալ զօրաց աւազակու մրի, և քեակութեան և Շէր նահանգին ընդհանուր ժողովոյ անդամ, Հայր և որդի՝ երկուքն ալ Աղզային ժողովոյ մէջ կեդրոնական ավակողմը կը բաղմին :

ՋՐԱՊԵՏ ՄԱՐԹԻՆՕ-ՏԷՇՆԷ

Լուի-Յիլիէի օրով Պետութեան երկրորդ գիւտնադպիր պատերազմի, Պ. Մարթինօ-Տէշնէ թիւրքօ անուանեալ զօրաց հարիւրապետ էր 24 տարեկան հասակին մէջ, որ ըսել է՝ Սէն-Սիլիի զինուորական դպրոցէն ելլելէն իրը չորս սարի ժամանակ յետոյ : Այնուհետեւ և քեռուն տարւոյ չափ մնաց Ափրիկէ, ամեն արչաւանաց մասնակցելով և ամենուն մէջ նշանաւոր ըլլալով իւր քաջութեամբն ու անխրդալութեամբը :

1870-ին՝ եօթն տարիէ ի վեր կիսաբամբի զօրապետ էր, երբ զօրաբամբի զօրապետ անուա-

նելով Լուաւի վրայ հրամանատարութեան մը կոչուեցաւ : Հոն Մարթին Տը փախէա զօրապետին տեղն օնցաւ՝ երբ նոյն պաշտօնակալն իր հրամարակներ խրկեց Պ. Կամիլէթ թայի :

Պ. Մարթինօ-Տէշնէ զօրապետը ոչ նուազ արի էր դժբաղդութեան մէջ՝ որքան թշնամոյն դէմ և այն զինուորները, որոց պարտութեանն ու թշուառութեանը հաղորդ եղած էր, ոչ նուազ կը յիշէին զինքը քան զայն, որոց խիստ յաճախ յաջողութեան առաջնորդած էր ի ճէղայիր :

ՋՐԱՊԵՏ ՏՐ ԼԱՄՕԹ-ՌՈՒԺ

Յովսէփ Եղուարդ ար Լամօթ-Ռուժ՝ Սէն-Սիլիի դպրոցին աշակերտներէն է, ուսկից 1824-ին ելած է հետեակ զօրաց երկրորդ տեղակալի սատիճանով՝ տասնեկէն տարեկան հասակին մէջ, և հետեակազօրաց ամեն աստիճաններուն հետդհետէ բարձրացած է : 1830-ի յեղափոխութեան ժամանակը հարկըրապետ էր : Թշնամին չխոթելու սահմանեալ զօրաց 8-րդ դուստն անցաւ 1841-ին հրամանատարութեան սատիճանով, և 1848-ին նոյն զօրաց 19-րդ դուստն զնդապետ եղաւ : 1852-դեկտեմբեր 28-ի պետական հարուածէն յետոյ կիսաբամբի զօրապետ անուանելով՝ առաջին դուստերուն հետ թրխմ գնաց, և պատերազմին բոլոր տեղութեան ամեն արիւտար դարձեց : 1855-յունիս 22-ին զօրաբամբի զօրապետ անուանելով ապա իտալոց պատերազմին մէջ զօրաբամբի մը կը հրամայէր, և տեղեկագրերուն մէջ իւր անունը յաճախ կը յիշուէր մեծամեծ գո-

վետներով: Իւր փառաւոր վարժուէքին համար
լէգէն պատուոյ մեծ պաշտօնակալի շքանշանին
արժանացաւ 1859 ին:


ԶՐԱՊԵՏ ՓՐԷՆՍՐԹ

Կնած է 1807 ին:

Պաշտօնով մը Եղիպտական կառավարութեան
քով խրկուելով Ալէքսանդրիոյ Գաղղիացւոց մէջ
լաւագոյն յիշատակներ ձգեց: Հոն միշտ մեծա-
բանօք կը յիշուի պատուարժան փրէնսթոյի անու-
նը, որ հրազինուց մեծ և դեղեցիկ դործարան-
ներ հաստատելով հանդերձ՝ կրցաւ այնքան
խոհեմ ընթացք մը բռնել, որ բոլորովին արտա-
քոյ կարգի արդարատէր մարդու համբաւ ըս-
տացաւ:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՄԱՐԹԷՆ

Պ. Մարթէն միայն ներկայ կը գտնուի վիճա-
բանութեանց, իրր առաջին ատեանին սովորական
պաշտօնակատ: վասն զի ամբաստանելոյն աստի-
ճանը՝ բնականաբար արգելք եղած է իրեն՝ իրր
դատաւոր բազմելու:



ՊԱՋԷՆ ՄԱՐԱԶԱԽՏԻՆ

ԴԱՏԱՍՏԱՆԵՐ



ՄԱՍՆ ԱՌԱՋԷՆ



ԱՆԲԱՏՏԱՆՈՒԹԻՒՆ



ՆԱԽԱԳԱՀ Պ. ԳՈՒԻՄ Մ ՍՄԱԼ ԶՐԱՐԱԺՆԻ ԶՐԱՊԵՏ

Նկատելով, թէ 1873 թ. 6 Հոկտեմբեր

կէս օրը տասը վայրկեան անցած՝ երկրորդ
պաշտօնակալ նուիրակը կը գոչէ. Ատե՛ան:

Իսկոյն կը լսուին այս հրամանները. Զէնք
առէ՛ք, (հաստուր), զէնք ներկայացուցէք
(սէլամ տուր):

Դատաւորը ատեանը կը մտնեն և գրասեղա-
նին առջև ոտքի վրայ կը կենան առանց գլուխ-
նին բանալու: Ասոնք թծուով տասն են: Նախա-
դահ զորապետը՝ դուքս ա՛Օմալ, որ ամենէն
վերջը ներս մտաւ, մէջտեղը կը կանդնի: Իրեն
ձախակողմն են, այս կարգով, զորապետը տը
լամօթ-Ռուժ, Թրիփիէ, Մարթինօ-Տէնէ, Կիօ-
ակողղմն են, զորապետք Սեպուհ տը Շապօ-
լաթուր, փրէնսթօ, Ռէսայր, Լալման, տը Մալ-
ուուա, բոլորն ալ մահկանա գլխարկ գրած:
Պ. Պ. զորապետք դուքս ա՛Օմալ, տը Լամօթ-

Ռուժ և Կիօ, Լէդէոն պատուոյ մեծ ժապաւէնը
կը կրեն և մեծ խաչի շքանշանը կուրծքերուն
վրայ ունին :

Մարթէնիլիէի զօրապետն հիւանդութեան
պատճառաւ բացակայ է, որուն համար ներո-
զուած իւն ըլլալով՝ տեղն անցած է Պ. Ռէսայր օղնա-
կան դատաւորը :

Պ. զօրապետն փութէ, կառալարութեան
մասնաւոր տեսուչ, իւր բանակի օգնականին հետ
և տը Գոլթն զօրապետը, տեսչի օղնական, հաս-
բակաց գործոց պաշտօնէութեանն աթոռներուն
վրայ կը բազմին :

Փաստարանք Պ. Լաչօ և իր որդին՝ պաշտ-
պանութեան յատկացեալ տեղն են : Իրենց քով
միեւնոյն դրասեղանին առջև նստած է՝ Պազէն
մարաշխտին նախկին օղնական բանակի՝ Պ. Վի-
լէթ դնգապետը :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ, ազդու ձայնով մը. — Ատ-
եանը բացուած է :

Գարձեալ հրամանները կը լսուին, և պա-
հակները հրացանին վար կը դնեն :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ. — Հրամանատար, Պ. մա-
րաշխտը ներս մտցուցէք :

Պազէն մարաշխտը ներս կը մտնէ և արա-
դութեամբ մը կերթայ իրեն սահմանեալ դրա-
սեղանին առջև : Իր վրայ կը կրէ Լէդէոն պատ-
ուոյ մեծ ժապաւէնը և շքանշան ու զինուորական
միտայ : Ամենօրեայ հաղուստով է, բայց ուսա-
դիրով : Սուրբ կախած չէ : Ներս եկած ժամա-
մանակը, իւր եղբայրը՝ Պ. Պազէն, ճարտարապետ

կամուրջի և ճանապարհոց, որոշեալ տեղն ա-
թոռի վրայ նստած, կեղէ և անոր ձեռքը կը
սեղմէ դորովանօք : Մարաշխտն ատենը մտած
ժամանակը շատ խռովեալ կերեի, բայց այդ
յուզմունքը շատ չտեւեր, կարծես թէ չուտով
ինքզինքին կը տիրէ : Անդամ մը առաջին նայե-
լէն յետոյ՝ ատենակալաց կը դառնայ և կը բա-
րեւէ :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ. — Պարոն մարաշխտ, հա-
ճեցէք նստիլ :

Մարաշխտը դարձեալ խոնարհութիւն կրնէ,
կը նստի, ձեռնոցները կը հանէ և գլխորկը
(քէվի) քովը կը դնէ :

Հեծեալզօրաց հրամանատար մը որուն յանձ-
նուած է մարաշխտին պահպանութիւնը, անոր
ձօպը նստած է :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ, մարաշխտին. — Անունիդ
և մականունիդ ի՞նչ է :

ԱՄԲԱՍԱՆԵԱԼԸ. — Անունս՝ Ֆռանտուա-
Աչիլ, մականունս՝ Պազէն :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ, — Քանի՞ տարեկան էք :

ԱՄԲԱՍԱՆԵԱԼԸ. — Վաթսուներկու :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ. — Ո՞ր ծնած էք :

ԱՄԲԱՍԱՆԵԱԼԸ. — Վէրսայլ :

Պ. ՆԱԽԱ. — Պաշտօնիդ ի՞նչ է :

ԱՄԲԱ. — Գաղղիոյ մարաշխտ :

Պ. ՆԱԽԱ. — Հիմայ ո՞ւր կը բնակիք :

ԱՄԲԱ. — Փարիզ :

Պ. ՆԱԽԱ. — Նստեցէք : Գիւանապետ, կար-

դացէք ամբաստանութեան բովանդակութիւնը և օրինաց տրամադրութիւնը :

Գիւանապետն հետևեալ զիրը կը կարդայ , որուն համեմատ Պազէն մարտիական ամբաստանեալ է թէ՛ յանցաւոր եղած է 1870 հոկտեմբեր 28 ին Մէջի առկն :

1. Պաշտպանութեան համար ձեռքն ունեցած բոլոր միջոցները չսպառած , և իր պարտաւորութեանն ու պատուոյն բոլոր պահանջածը չըրած՝ անձնատուր ըլլալու համար թշնամոյն հետ բանակցելով և յանձնելով Մէջը , որուն վերին հրամանատարութիւնն ունէր ինք :

2. Մէջի առկն բանակին իրր վերին հրամանատար , հարթ և ամեն կողմը բաց երկրէ մը վրայ անձնատուր ըլլալու դաշինք մը ստորագրելուն համար , որուն հետևանքն եղաւ իր դուռերուն դէնընկէջ ըլլալը :

3. Բանիւ և դրով բանակցելէ յառաջ պարտաւորութեան և պատուոյն ամեն պահանջածն ըրած ըլլալուն համար :

Յանցանք , որ զինուորական դատաստանադրքին 209 և 210 յօդուածներով ցոյց տրուած է այսպէս :

• Յօդուած 209. Մահուամբ կը պատժուի , զինուորական աստիճանէ ձգուելով , ամեն կառավարիչ կամ հրամանատար որ , քննիչ յանձնաժողովոյ մը կարծիքն առնելէ յետոյ դատուելով , յանցաւոր ճանցուի թէ թշնամոյն հետ անձնատուր ըլլալու դաշինք ըրեր է և իրեն յանձնուած ամբուութիւնները յանձներ է՝ առանց սպասելու

պաշտպանութեան համար իւր ձեռքը գտնուած բոլոր միջոցները և առանց ընելու այն ամենը զոր կը պահանջեն պարտաւորութիւնն ու պատիւը :

• Յօդուած 210 : Զինեալ դուռերի ամեն զօրապետ : ամեն հրամանատար որ հարթ և ամեն կողմը բաց երկրի վրայ անձնատուր ըլլալու դաշինք կընէ , կը պատժուի :

• 1. Մահուամբ , զինուորական աստիճանէ ձգուելով , եթէ դաշնացի հետևանքը կրկայ իւր դուռերը զէնընկէջ ընել , կամ եթէ բանիւ կամ դրով բանակցելէ յառաջ պարտաւորութեան և պատուոյ բոլոր պահանջածը չէ ըրած :

• 2. Պաշտօնէ ձգուելով , ուրիշ ամեն պարադայի մէջ :

Պ. ՆԱԽԱԳԱՆՆԱԿ. — Կարդացէք փարիզու կառավարիին հրամանագիրը որ կը հաստատէ պատերազմական ատենին կազմութիւնը , և յաջորդ հրամանագրերերն ալ որ զայն հետզհետէ չափաւորեցին :

Գիւանապետն այն գրերը կը կարդայ :

Պ. ՆԱԽԱԳԱՆՆԱԿ. — Վկաները կանչելէ յառաջ կիմացընեմ կառավարութեան յատուկ տեսչին և ամբաստանելոյն պաշտպան փաստարանին՝ թէ , եթէ հիւանդութիւն ունենան , նախ տեղեկագրին և ապա վէճերուն հաւանականաբար երկար տևելուն համար , այնպէս պիտի կարգադրեմ որ վկայք , կողման պատասխանելէ յետոյ , ատենին սրահէն դուրս ելլեն և ալ չիղան մինչև որ իրենց ներկայութիւնը պիտի ըլլայ :

Օրէնքը պատիժ սահմանած է տտեանը չը ներկայացողներուն :

Պ. ԱՅՈՒՄՆԱՆՔԻ. — Ս. յդ. կարգադրութեանց եւ բնաւ չեմ' ընդդիմանար :

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒՆ ՏԵՍՈՒՉԸ հաւանութեան նշան մը կրնէ :

Պ. ԴՆԻՍՏՐԱՆՔԻ. — Պ. Գիւանապետ, վկաները կանչեցէք :

Պ. Ալլա դիւանապետ կոչում' կրնէ, երկու հարիւր եօթմանասուն երկու վիայք վկայութեան կոչում են ի դիմաց հասարակաց պաշտօնատան, և յիսունըչորս' ամբաստանելոյն պաշտպաններուն կողմէն :

Ասոնց ձանկը կը դնենք հոս' վկայութիւններն սկսելէ յառաջ :

Պ. Նախագահին ըրած կարգադրութեան համեմատ, դործն այդպէս կը կատարուի : Ատեանին կից սրահի մը մէջ, որ վկաններուն համար սահմանեալ էր, իբր նախապատրաստական կոչում մը կըլլայ, և անուններն դրուած անձինք հետզհետէ ատեանը կը մտնեն, մէկ կողմէն դուրս ելլելու նեղ անցքէն յառաջանալով՝ ատեանին աստիճաններուն առջև կուգան, և նուիէն կը կանչուին, այս անգամ դիւանապետէն, « ներկայ » կը պատասխանեն, և իսկոյն որահին միջավայրը պարապ թողուած անդէն կանցնին կերթան : Այսպէս թափօր պարտելու նման կարգով կանցնին ժողովքին առջևէն : Առաջին անուանց սրահին մէջ բարձրաձայն արտասանուին ամենուն վրայ խորհում մը կը բերէ : Մարդ

չկրնար դէմ դնել չդիտեմ' որպիսի տպաւորութեան մը՝ որմէ կը պաշարուի երբ կը տեսնէ որ մի աւ մի կանցնին, հանդիսական զդեստով, բոլոր այն Գաղղիոյ մարաշխանները, զօրապետները, բարձրաստիճան պաշտօնականները, հասնդարաւ և ծանր. իրենց վկայութիւնը բերելով : Նախ կը յառաջանան Գանաօպէր և լրպէօֆ մարաշխանները, Յրօսար, Պուրպաքի, աը լամբրօ աը Փալիքաօ և Շանկարնիէ զօրապետները, իսկոյն մտքի կը ներկայանան 1870 ի անցքերը, և այս տեսարանը զաւալի յիշատակներ կը զարթուցանեն : Գաղղիոյ բանակին պաշտօնականներուն, զօրապետներուն և դիւանօրներուն անցած բոլոր ժամանակին մէջ՝ պահպաններն անշարժ կեցած զէնք կը ներկայացընեն : Իսկ երբ կարգը քաղաքական վկաններուն կուգայ, դէնքերնին վար կը դնեն :

Պ. Պ. Ժիւլ Ֆարլի և Կամպէթիֆայի անունները դրուած ժամանակը՝ հետաքրքրութեան շարժում մը կերեւի ամենուն վրայ : Երբ Ռէնյիէ վկայ կերեւի, ամեն նայուածք անոր վրայ կը հաստատուի : Գէր մարդ մըն է սա՝ և բարձրահասակ, ձերմակ երկայն մաղերով, խարտեալ պիտիտով և միայն կըլակին վրայ պղտիկ մօրուքով :

Պ. Ռուէ չպատասխանեց իր անունը արդուելուն :
Վկայից մէջ իսկ մը կանանց անուններ ալ կային, բայց անոնցմէ միայն երկուքը ներկայացան :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ. -- Դիւանագետ , Հներկա-
յայտող վկայներուն ցանկը շինեցէք :

Ժամը մէկ ու կէսն էր երբ վկայներուն կո-
չումը ըննցաւ :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ. -- Ատենը տասն վայրկեան
հանդիստ կուտայ :


Այս հանդիստը ծանուցանելու ատեն՝ Պ. Նա-
խագահը նշան կընէր ամբաստանելոյն , և մարա-
ջախարդ զլիտարկն առնելով՝ դուրս կելլէր ընկե-
րութեամբ հեծելազորաց հրամանատարին :

Ժամը ճիշդ երկու քին դարձեալ կը լսուի սա
հրամանը թէ : « Չէնք առէք , դէնք ներկայացու-
ցէք » : Ատենը նորէն կսկսի : Վայրկենական
սպասումէ մը յետոյ՝ մարաջախարդ դարձեալ
ներս կը բերուի , որ Պ. Լաչօ վաստարանին բան
մը ըսելէ ետքը իր բազկաթոռին վրայ կը նստի :

Պ. ՆԱԽԱԳԱՀԸ. -- Տեղեկադրին ընթերցու-
մէն առաջ , զոր կը պատուիրէ զինուորական դա-
տաստանագրքին 10 բողոքուածը , նոյն դա-
տաստանագրքին 121րդ յօդուածով ինծի արուած
արտօնութիւնը սկստի գործածեմ , ըստ իմ հա-
ճոյից քանի մը գրութիւններ կարդացընելու :

Դիւանագետ , կարդացէք Գաղղիոյ մարա-
ջախարդի Գուանուա-Ալիլ Պաղէնին ծառայութեան
ցանկը :

Պ. Ալլա դիւանագետն հետեւեալ գիրը կը
կարդայ :



ՅԱՆԿ ԵՄԱՌԱՅՈՒԹԵԱՆՅ ՅՈՒԱՆՍՈՒՍ ԱՇԻՆ ՊԱՉԷՆԻ
ԵՆԵԱՍ ԻՎԵՐՍՈՅՈՒՆ . 15 ՓԵՏՐՈՒՐ 1811 :

• Հասարակ զինուոր 38 բողոք յառաջակարդ-
դունդին մէջ , (18 Մարտ 1831) : -- Ի Գաղղիա :
• Երկրորդ պաշտօնակալ (16 յուլիս 1832 : --
Ի Ճէզայիր :

• Երկրորդ տեղակալ (2 նոյեմբեր 1833) : --
Ի Ճէզայիր :

• Տեղակալ (22 յուլիս 1835) : -- Ի Սպանիա :
Մարաջախարդի դէմքը խրատումը կը իրենցընէ
1831 մարտ 18 ին իրը հասարակ զինուոր պատե-
րազմական ծառայութեան սկսելուն՝ և ապա
նոյն տարուան վերջը տասնապետ ըլլալուն յիշա-
տակին վրայ , բայց չուտով կը տիրէ իր անձին :

• Հարիւրապետ (20 հոկտեմբեր 1839) : --
Ի Գաղղիա , Սպանիայէն վերադարձին :

• Հետեւակ գնդապետ (10 մարտ 1844) : --
Ի Ճէզայիր :

• Տեղակալ գնդապետ (11 ապրիլ 1848 : --
Ի Ճէզայիր :

• Գնդապետ (4 յունիս 1850) : -- Ի Ճէզայիր
• Կիտարածին զորապետ (28 հոկտեմբեր 1854)

-- Ի Խրիմ :
• Զօրաբաժնի զօրապետ (22 սեպտ. 1855) :
-- Ի Խրիմ :

• Գաղղիոյ Մարաջախարդ (5 սեպտեմբեր 1864) :
-- Ի Մէքսիկա :

Դիւանագետն ապա մարաջախարդ ըրած պա-
տնազգնները , դանազան հրամանատարութիւն .

ներք : քաջադործութիւնները և ընդունած շքանշանները կը յիշէ :

• Սյուսիկոյ մէջ Դաղղիական զորարարման պաշտօնակալաց գլուխ : ապա խնամակալ թագուհւոյն բանակաց թագաւորական տեսուչ :

• Օրան նահանգի արարացոց գործերուն անօրէն և Սէպտուի վերին հրամանատար :

• Սիտի-ալէք-Ասլէտի կիսարամենին հրամանատար :

• վերին հրամանատար ի կէլիպօլու և Սէվասթօփօլի դինուորական հրամանատար :

• Քինսուրնի արշաւանքին Անկիօ-գողղիական զորաց գլխաւոր հրամանատար :

• Արևելեան առաջին բանակին Չրդ զորարարման հրամանատար :

• Ընդհանուր տեսուչ՝ 1856-57ին :

• Զինուորական 19րդ բաժնի հրամանատար՝ 1857ին :

• Խոտլիոյ առաջին բանակին Յրդ զորարարման հրամանատար՝ 1859ին :

• Առաջին բանակին Յրդ զորարարման հրամանատար ի փարիզ՝ 1860ին :

• Ընդհանուր տեսուչ 1090-1861-1862ին :

• Մեքսիկոյի արշաւանոց առաջին զորարարման հրամանատար՝ 1863 յուլիս 16ին :

• Երբորդ բանակին հրամանատար ի Նանսի՝ 1867 նոյեմբեր 12 :

• Շալոնի բանակին ընդհանուր հրամանատար՝ 1869ին :

• Կայսերական սահպան զբոց ընդհանուր հրամանատար՝ 1869 հոկտեմբեր 25 :

• Հաենսի Յրդ բանակին հրամանատար 1870 յուլիս 16ին :

• Հաենսի Յրդ, Յրդ, Կրդ բանակին ընդհանուր հրամանատար՝ 1870 օգոստոս 9ին :

• Հաենսի բոլոր բանակաց ընդհանուր հրամանատար՝ 1870 օգոստոս 12ին :

• Լէդէան պանոնոյ ասպետ (1835 նոյեմբեր 22) : — Մազթայի պատերազմին : յԱլքիկէ :

• Լէդէան պատոնոյ պաշտօնակալ (1845 նոյեմբեր 9) : — Սիտի-գաֆիլի պատերազմին : յԱլքիկէ :

• Ռոմկակեր ասպետ (1836 օգոստոս 16) : — ֆինսուրնի առման : ի իրիմ :

• Մեծ պաշտօնակալ (1859 յունիս 20) : — Մարինեանի պատերազմին յիտալիտ :

• Մեծ-Խաչ (1863 յուլիս 2 : — Սան-Լորէն-ձոյի պատերազմին : ի Մեքսիկո :

• Զինուորական շքադրամ (1865 ապրիլ 28) : — Օւլստոյի առման : ի Մեքսիկո :

վերջապէս ուրիշ թուրք մը կարգացուցաւ : որ կը թուէր օտար տէրութիւններէ ընդունած շքանշանները՝ զոր կրելու թոյլտուութիւն եղած էր իրեն :

• Սափօյի դինուորական կարգին Մեծ-Խաչը :

• Պելճիկայի Լէոլիշի կարգին Մեծ-Խաչը :

• Պարսկաստանի Ասիւտ և արևգական կարգին մեծ-նշանը :

• Մեքսիկոյի Արմոնոյ կարգին Մեծ-Խաչը :

• Նօթր-Տամար-կուատրլուփի կարգին մեծ
-խաչը :

• Անգղիոյ Բաղանեաց կարգին ասպետ :

• կարողութի ասպետ (Պարպասթրոյի մէջ
իր ունեցած վարմունքին, և իր զորապետին
զուեղը բերելուն համար) :

• Սպանիոյ Սէն-Ֆէրտինանի ասպետ (Փօսսի
պաշտպանութեան համար) :

• իզպայէլ-լա-դաթուլի բի ասպետ (Պիլպա-
ոյի պաշարման ատեն ունեցած վարմունքին
համար) :

• Սալոյի զինուորական կարգին արծաթ
չքաղբաթը :

• Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. — Գիւանապետ կար-
դացէք նախագահական որդուր, որ կը
հրամայէ քննութեան ժողովի մը կազմուիլը,
որուն առջեւ պիտի խրկուին՝ վերջին պատե-
րազմին ատեն թշնամոյն անձնատուր ըլլալու
դաշինքն՝ ստորագրող պաշտօնակալ զօրապետ-
ներն և այլն :

(Այս գիրն ալ կարդացուեցաւ :

Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. — Մէջի անձնատուր ըլլալու
դաշանց նկատմամբ պէտք եղած քննութիւնն ընե-
լու համար ատեն մը կազմուած ըլլան արդէն ի-
մացուցիք. հիմա սոյն ատենին այդ մասին տուած
տեղեկագիրն կարդացէք :

Պ. Գիւանապետն 1872 Ապրիլ 12 ի ատենին
տուած հետեւեալ դատաստանադրոյ բովանդա-
կութիւնը կը կարդայ :

• Ատենը,

• Մէջի անձնատուր ըլլալու դաշանց վերաբեր-
եալ տեղեկագիրներուն համեմատ,

• իրեն ներկայացած վկայական դրութեանց
վրայ անձնատուր ըլլալու դաշանց պարագաներն
յայտնող բնագրոյն համեմատ,

• Խօսեցընելով նաև Հռենոսի բանակին նա-
խորդ գլխաւոր հրամանատար Պ. Պաղէն մարտ-
չախտն, բանակի հրամանատարներն, այլ և այլ
բանակաց զօրագլուխներն և ուրիշ անձինքն որոց
վկայութիւններն իր նիստերուն դատաստանագ-
րացը մէջ արձանագրուած են,

• Պետք եղած քննութիւններն ընելէն վերջը,
Մէջի անձնատուր ըլլալու դաշանց նկատմամբ հե-
տեւեալ դրաւոր ծանօթութիւնն կը ներկայացընէ.

• Հռենոսի բանակը, որ ի սկզբան պատերազ-
մին Հիւսիսային արեւելեան սահմանադիտոյն վրայ
իր բանակալ գ. ունը եր աստ անդ տարածուած էր,
1870 Օգոստոս 5 ին երկու սրոչ բանակներ ձեւա-
ցաւ : Մին, որ կը կազմէր 1874, 3874 և 7874 գուն-
դերն, Մաք-Մահօն մարալախտին հրամանատա-
րութեան ներքեւ Ալզասի մէջ, և միւսը որ կը

կազմէր 2րդ, 3րդ և 4րդ դուռերն, Պաղէն մարտիտին հրամանատարութեան ներքեւ, Սառի մէջ՝ կայսերական պահապան զորաբանակին, Մէջի առջեւ, ընդհանուր զորապետի հրամանատարութեան տակ կը կենար, մինչդեռ 6րդ դուռն, որ պահեստի զօրքն կը կազմէր, մարտիտ Քանրօպէրի հրամանատարութեան ներքեւ, Շաղծի բանակատեղին իր կազմակերպութիւնը կը լրացրնէր :

« Գաղղիացի բանակին այս յամբ բաժանու մն հազիւ թէ կարգադրուած էր, և ահա Սիստոս 6 ի թշնամուցն յանկարծական յարձակման վրայ, Ֆրէօչիլիէրի և Ֆորպախ-Սբիքէրէնի կորուստներն իհարկէ կը պարտաւորէին զկայսրն ուրիշ միջոցներ ձեռք առնելու :

« Մինչդեռ Մար-Մահօն Արնէվիլէն և Նէօֆիշաթօյէն շտապաւ Շաղծի բանակատեղին կը քաշուի, Մօղէլի և Սառի մէջ առջը գտնուած զորաբանակներն ուրիշ զօրաբանակաց հետ միանալու համար դէպ ի Մրեւելք կը շուեն, և հոն աճապարանօք կանչուած 6րդ դուռիցին հետ կը միանան :

« Այս կարեւոր միութեանց ժամանակ էր որ Սիստոս 12 ի կայսերական հրովարտական համեմատ, հրովարտակ մը որ Սիստոս 13 ին ի գործ դրուեցաւ, Պաղէն մարտիտին Հռենոսի բանակին գլխաւոր հրամանատար անուանեցաւ և զինուորական գործողութեանց ընդհանուր վարչութեան պաշտօնն ստանձնեց :

« Ահա միայն այն օրուրնէ՛ (Սիստոս 13 էն) սկսեալ արեանը կը պարտաւորի մարտիտին

վարուներն քննութեան առնուլ : Բայց որպէս զի կարող ըլլայ իր այս վարմունքին ի սկզբանէ շարժաւթ եղող պարտողներն զանաղանել, ներքի է ատենանին յիշել թէ ինչ տպաւորութիւն ըրած են մարտիտին մտքին վրայ բոլորովին զինուորական գործողութեանց պակասաւոր վարչութեանէն ծաղած պատերազմական արեապի սկզբաւորութիւններն, հրամանատարութեան մէջ գործադրուած անճշդութիւնն և Քերմանացի բանակին յանկարծական յարձակումը :

« Սիստոս 13 ին Պաղէն մարտիտին հրամանատարութեան ներքեւ միացած և Մօղէլի ակափանց վրայ բանակուած զօրաբանակն 2րդ, և 3րդ և 6րդ դուռերէն, կայսերական պահապան զօրքերէն, երկու պահեստի ձիաւոր զօրաբաժիններէն և ընդհանուր պահեստի սմբաձիգ զօրաբանակէն կը բաղկանար, որոց ընդհանուր ճիշդ գումարը 173,688 մարդ և 32,502 ձի կրնէ, 540 թնդանօթով :

« Նոյն օրը, կայսեր նախագահութեամբը Մէջի մէջ կազմուած ատենը սրոյնց որ զօրաբանակըն նախ Մօղէլի ձախ ականցը վրայ քաշուի, յետոյ վէրախնէի վրայ :

« Սիստոս 8 էն ի վեր հրաման եղած էր դեպին այլ և այլ կողմերը կամուրջներ չինել հաղորդակցութիւններն ապահովելու համար : Բայց գործաւորաց անբաւականութեան ինչպէս նաև Վուրին աճմանը պատճառաւ չինութիւններն ուչ մնացած էին :

« Սիստոս 14 ին մինչդեռ զօրաբանակն ետ

քաշուելու համար ճամբայ ելած էր, և ահա թըլուսման Պօրնիի մէջ իր վերջնապահ զօրաց վրայ յարձակեցաւ: Կրգ գունդէն երկու զօրաբաժին, որք արդէն Մօղէլէն անցած էին, նորէն ավ փանցը վրայ անցան Յրգ գունդին օգնութեան հասնելու համար, և պատերազմին մասնակցեցան: Պօրնիի պատերազմին հետեւանքն որ մեր զինուցը համար պատուաւոր էր, մեղի օգուտ մը չունեցաւ, վասն զի զօրարանակի մէկ մասն չատ ժամեր ուշ վերադարձաւ. թշնամին մեր վերջնապահներուն վրայ յարձակելով ուրիշ նպատակ մը չունէր. միայն մեր կորսնցուցած ժամանակէն օգուտ քաղելով Մէջի կողմանէ Մօղէլի կամուրջներուն տիրեց: Իր գունդերն որ Գաղղիացի բանակին հետ զուգահեռականաբար յառաջ կերթային, արագ ընթացքով կը մրցէին նորա հետ և կը ջանային անկէ առաջ անցնիլ, և կամ Գաղղիացի բանակին ետ քաշուելու տեղը անոր վրայ յարձակիլ: Եւ յիրաւի Օգոստոս 15 ին Գերմանացոց յառաջապահ ձիաւորներն Մար-լա-թուրի մօտ վէրտիւնի ճամբուն վրայ մերիններուն հանդիպեցան:

Ե Գաղղիացի զօրաբանակն իր ետ քաշուելիք տեղն ապահովցընելու համար պէտք էր կարելի եղածին չափ երկար առեն թշնամեոյն Մօղէլի ձախ ավանցը վրայ անցնիլն ետ ձգել: Առի և Նօվէանի կամուրջներուն քանդուումը կրնար զմեզ ըստ բաւականին անկէ յառաջ վարել. Առի կամուրջներուն տակ ական փորուած և այս ականներն լցուած էին զօրապետ Բօնիլիէի ձեռքով որ նոյն միջու-

ցին Մէջի բարձր կուսակալութեան և ընդհանուր բանակի գլխաւոր հրամանատարութեան կրկին պաշտօններն կը վարէր:

Ե Օդային կամուրջներուն գալով, ուրիշ բան պէտք չէր ընել բայց եթէ մարտններն կարել տայ մասին Պաղէն մարտվախին բաւական էր կամք մը յայտնել. բայց կամ եղած պատարաստութիւններն չգիտնալով, և կամ ուրիշ որ և է պատճառաւ հրաման չի տուաւ և թշնամին օգոստոս 15 և 16 ին կամուրջներէն օգուտ քաղեց. օգոստոս 15 ին Գաղղիացոց բանակը կահ կարասիքներէն և Մուլէն-լէ-Մէջի երկար անցքը գոցող խնել մը պաշարի կառքերէն նեղուելով դժուարաւ իր ճամբան շարունակեց:

Ե Այս արդեւրբ մէջ տեղէն վերցընելու համար առաջուց բան մը հոգացուած չէր. Գաղղիացի զօրաբանակին իւրաքանչիւր գունդին անցնելիք ճամբաներն առաջուց ոչ ճանչցուած էին և ոչ ալցուցուած: Իրիկուան գէմ, զօրաբանակին ձախ թեւն կրտվոթի դաշտը կը գտնուէր. բայց Յրգ և Կրգ գունդերն Պօրնիի պատերազմին և ճամբուն դժուարութեանցը պատճառաւ ուշ մնացած ըլլալով իրենց համար սահմանուած տեղերը չէին կրցած հասնիլ:

Ե Օգոստոս 16 ին առաւօտեան ժամը չորսին, կայսրը իր բանակը վերստին կազմակերպելու համար Մաք-Մահոն մարտվախին քովն երթալ ուղերով Պաղէն մարտվախտէն զատուեցաւ. ստիպելով զանի որ կարելի եղածին չափ չուտով իր վէրտիւնի վրայ ընելիք ընթացքը փութացնէ:

« Այս ընթացքը՝ երկու զորախումբով պիտի բլ-
 րար մին կը կազմուէր 2 թր. և 6 թր. դուռը երէն որ
 Մար-լա-թուրի ճամբով պիտի երթար, և միւսը
 3 թր. և 4 թր. դուռը երէն որ իթէնի ճամբով պի-
 տի երթար: Այս երկու զորախումբներն օգոս-
 տոս 16 ին առտուն կանուխ ճամբայ պիտի ելնէին,
 բայց առ կողմի բանակն առջի օրը ուշ մնացած
 բլլալուն պատճառաւ չի կրնալով ճամբայ ելնել,
 մարտախոր ձախտիողմեն զորախումբը կազմող
 դուռը երուն հրամանատարացը պատուէր տուա-
 ր որ ճամբայ ելնելու համար նոր հրամաններու ըս-
 պասնն:

« Ահա այս էր իրաց վիճակն, երբ առտուն
 ժամը իննին տեսներն թշնամին յանկարծուտ
 մեր յառաջագահ ձիւորաց վրայ յարձակելով ի
 թիծովիլ, առժամայն իր հոն ներկայ բլլալն իմա-
 ցուց: Մեր յառաջագահ ձիւորներն խառն ի
 խառն դային միացան 2 թր. և 3 թր. դուռը երուն
 հետ, որոց վրայ թշնամին դրեթէ նոյն ժամայն
 յարձակած, և պահպան զորքն իրենց օգնու-
 թեան հասած էր:

« Մասնիկ պատերազմը բացուեցաւ, որուն
 յաջորդաբար մասնակցեցան դրեթէ 3 թր. և 4 թր.
 դուռը երուն բոլոր վաշտերը:

« Թշնամին Մոզէլի ձորէն կրալթի դաշտը
 տանող լեռանց խառններէն դուռը առուող դուրս
 խուժելով ուղեց հոն հաստատուիլ: Բայց մեր
 խուժերն չուտով չփոթ կացութիւննին կարգու-
 ւորելով իրենց զիրքերն պահպանեցին և նոյն
 գիշերն պատերազմի դաշտին վրայ բացօթեայ ան-

ցուցին թշնամոյն խիստ մեծ կորուստներ պատ-
 ճառելնէն վերջը:

« Գլխաւոր հրամանատար մարտախումբ տեսնե-
 լով թէ քանի որ թշնամին իր ձախ կողմին վրայ է,
 ինքը չի պիտի կրնայ Մար-լա-թուրի ճամբով, ուր
 թշնամին ամբացած էր, վէրտիւնի վրայ իր ըն-
 թացքն ընել, կրկին զորաց ուտեստ և ուղիւս-
 մթերք ձարելու և զանոնք հանգստացնելու պէտ-
 քն պատրուակ բռնելով, հիւսմացեց որ գէպ ի
 Մէջ ուղևորին:

« Այս ուղևորութիւնը կատարուեցաւ օգոս-
 տոս 17 ին, և բանակին ձախ թեւն հաստատուե-
 ցաւ ի Ռօզէրիէլ, և ալ թեւն ի Սէն-Բրիւլա-լա-
 -Մօնթաներ, որուն մարտախոր Սըմանվիլէր ա-
 նունն առաւ: Իր ըսածին նայելով, իր դիտաւո-
 րութիւնը նախ հոն պաշտպանողական պատե-
 րազմ մ'ընել և վերջը իթէնի կամ Պրէյլի ճամ-
 բաներով գէպ ի Մէջ գալն է եղեր: Բայց միան-
 գամայն զորարանակին դանուած տեղերուն և
 տեւէն քաղքին աւելի մօտ տեղուանքը կը ճան-
 ցրէր իր խումբերն հոն հաստատուելու համար:

« Ողոտոս 17 ին այս ուղևորութիւնը գէպ-
 քով մը նշանաւոր եղած է զոր պէտք է պատմել:
 Կրալթաի մօտ ամեն կերպ ուտեստ և պաշար
 բեռցուած խել մը կառքեր պարարված կեցած
 էին վիրաւորեալներն տեղափոխելու համար: Օ-
 գոտոս 17 ին երբ զորարանակն ետ քաշուեցաւ,
 այս պաշարներուն մէկ մասն այն կողմէն տնցնող
 դուռը երուն բաժնուեցան, և մնացեալն հոն
 մնաց. այս մնացած պաշարին կրակ տուին, որոց

բայրն գրեթէ 80.000 զօրականի բաժին էր :

« Այս կրուտար , որ այն ատեն բան մ'ըսել չէր , վերջէն աղետալի եղաւ . ինչ որ ալ ըլլայ , գրէ խաւոր հրամանատարէ մը չիմացուած այսպիսի դէպք մը հրամանատարութեան նկատմամբ նշանաւոր անհոգութեան մը և առջի օրուան դէպքերն պատճառ բռնելով ետ քաշուելու դահաւէժ գատման մը նշան չի համարուիր :

« Օգոստոս 18 ին , Բրուսիացուց բանակին իր ընթացքը յառաջ վարելով Գաղղիացի բանակին վրայ եկաւ յարձակեցաւ : Այն ատեն ընդհանուր պատերազմ մը տեղի ունեցաւ . բայց մինչդեռ թշնամին մեր ձախ թեւին վրայ ջոյցեր միայն կընէր , ջոյցեր որ բացարձակապէս գլխաւոր հրամանատարին ուշադրութիւնն զրուեցին , ալ թեւերնուս վրայ կ'արձակէր իր գունդերուն ամենամեծ մասը , զայն կրնիճէր և մինչև իր գտնուած տեղոյն պատնէշներն քաշուիլ կը բռնադատէր :

« Պատերազմի ատեն թեև տկար մասերնիս ալ թեւերնիս ըլլան ակնբեր կը տեսնուէր , սակայն զայն կազմող Յրդ. գունդն , որ դեռ կատարեալ կերպով կազմակերպուած չէր , և իր թընդանօթներուն ամենամեծ մասն ալ Նալոն մտացած , և միայն երկու պահեստի թնդանօթ կար իր քով , պէտք եղած օգնութիւններն չընդունեցաւ : Քանրօպէր մարտավախին գունդերն թէև բաւական կատարուեցան , բայց մինչև իրիկուան ժամը տանին յամառեցան մնացին իրենց տեղը : Անկէ վերջը ետ քաշուելու ստիպուելով 4 թդ. գունդն առին հետերնին տարին :

« Ի սկզբան պատերազմին , Քանրօպէր մարտավախ իր սպայներէն մին Պաղէն մարտավախին զրկեց Բրուսիացուց յարձակումը անոր խնայրնելու համար . Պաղէն մարտավախն ալ ժամը մէկին մի և նոյն սպային ձեռքով իրեն խնայուցած էր որ ռմբաձիգ զօրքերն ու պահեստի թնդանօթները բաժնելով իրեն օգնութեան պիտի երթայ : Բայց ամենեւին հրաման մը չըրաւ , և նոյն օրը մինչև իրիկուն երեք գունդ պահապան զօրք , իր ձիաւորներն և թնդանօթաձիգ ձիաւորներն , երկու բաժին պահեստի ձիաւորներ , ինչպէս նաև զօրաբանակին ընդհանուր պահեստի թնդանօթներուն ամենամեծ մասը ճլարվիլի դաշտին վրայ անդործ անդուցին :

« Պուրպաքի զօրապետը իր կողմանէ դէպ ի Արմանվիլէր երթալով թնդանօթաձիգ պահապան զօրաց բաժինը հօն կանչելու պարտաւոր կարծած էր 4 թդ. գունդին օգնելու համար : Յիշեալ զօրապետը Սոլիի անտառներուն առջև հաստատուեցաւ , և Յրդ. գունդին թնդանօթներուն հետ միատեղ իր թնդանօթներն ալ սաստկապէս գործածելով Բրուսիացուց աշուանքը արդիւնց :

« Գլխաւոր հրամանատարն դէպքերուն ծանրութեան վրայ տարակուսելէ հետի էր . որովհետև այն միջոցին որ Պուրպաքի զօրապետն յառաջ կը քալէր , մարտավախն կը կատեցնէր զանի և կրտսիպէր որ իր բանակատեղին վերադառնայ ըսելով թէ ամեն բան ընցած է , թշնամին մեզ զըննելու համար եկած է :

« Կեդրոնը 3 թդ. գունդը , ձախ կազմը 2 թդ.

դունդը պաշտպան ունենալով իրենց գունդ մը թեթեւազէն պահապան զինուոր, թշնամուսն կըրկնակի յարձակումները յետս մղելէն վերջը իրենց նախկին դրկիցը մէջ կեցած էին :

« Այս պատերազմին մէջ մարաշախտին ունեցած դիրքն անկարելի է քայքայտրել : Իր բանակն թէև պաշտպանողական պատերազմ մը տալու համար իր որոշած անգրուանքը հաստատուն կեցած էր, բայց վերջէն այդ յարձակումն քնելու պէտքն չգրաց, թէև իր անզոտակներն այլ և այլ նշաններով կազդարարէին իրեն որ իրենց ճակատներուն և մատնադրապէս մեր դունդերուն աջ թեւին դիմացը բազմաթիւ դունդեր ամբացած կեցած են :

« Մարաշախտն պատերազմի սկզբնաւորութեանէն երկար ատեն վերջը ձի հեծնելով կերթայ զօրարանակին ձախ թեւը որ ընտ վտանգի ենթա կայ չէ : Իր վերջնապահներուն վրայ յարձակում մը ըլլալն կը մտածէ : Բայց այս յարձակումն առաջնայ ծանուցանող պարտոցայ մը չկայ, և անտարբեր կերելու աջ թեւը անցած անցքերուն, ուր ամբացած է թշնամուսն զօրաց ամենամեծ մասը, զայն կը թողու առանց օգնութեան և կը ջարդէ, յետոյ կը մտնէ իր ընդհանուր բանակատեղին, կը գրէ կայսեր որ իր գունդերն իրենց դիրքերն պահած են, և այն ատեն կիմանայ անոնց կատրածը երբ իր հրդ : և ճօր գունդերուն սպայներն ետ քաշուելու լուրն իրեն բերելու կուգան :

« Այժմ շատ խնդիրներ կը ներկայանայ զբոս պէտք է ըննել, վասն զի օգոստոս 16 էն մարաշախտն իր յատուկ թեղադրութեանց անսպեր է :

« Թէ որ նոյն օրը (օգոստոս 16) չէր կրցած Մարաթուրէն անցնել, պէտք էր որ կայսեր իրեն տուած հրահանգացը ճշդիւ հետեւելու համար օգոստոս 17 ին իթէնի ձամբով վէրախն երթար, կամ, աւելի հիւսիստեղմը, Պրիէյի ձամբով Մոնթմէտի :

« Պէտք է դիտեալ որ իթէնի ձամբով վէրախն երթալն վտանգաւոր ձեւնարկ մ'է : Քանի որ թշնամին Մօղէլի աջ ափանցի վրայէն վանելու փորձ փորձուած չէր, այն կողմը անոր յանձնել և մեր վրայ ձախորդութիւն մը հրախրելու երթալը :

« Բայց Պրիէյի ձամբով Մոնթմէտի երթալուն համար առանկ շնոր կրնար ըսել այս ձամբան ազատ է ամեն վտանգներէ, բայց մարաշախտն վախճանալով որ չըլլայ թէ թշնամին իր վերջնապահներուն և իր զօրարանակին մէկ կողմին վրայ ձգէ, իրր թէ իրեն ետ քաշուելու ատենը թշնամին կը վախճայ իր ետեւէն դալու : ասկից զտո, ուտեա տի և սաղմամթերքի պակասութիւնն, իր զօրքերն հանդստացնելու և երևք պատերազմներէ վերջը զանոնք վերտոնի կազմակերպելու պէտքն պատրուակ ընելով նախապատիւ համարեցաւ Մէց քաշուիլ : Մարաշախտն առանկ սրշում մը լնելու ստիպուած էր, և կամ, կայսեր տնօրէնութեան ներքի դաժուելու այնչափ փափաք չունենալուն : անկախ ըլլալ ուզած է : Այս ետքի կարծիքն իր վերջին վարմունքէն կրնայ ասուղտիլ :

« Մարաշախտն իր օգոստոս 17 առաւօտուն տուած տեղեկագրին մէջ կրնէ թէ օգոստոս 16 րդ օրէն վերջը սաղմամթերքն զոտակելով պարտուո :

բեցաւ դէպ ի Մէջ դատնալ: Արդ՝ թնթանօթի մթերից պատճառական արձանագրութիւններէն կը տեղեկանանք որ օգոստոս 14 ին 171, 168 ուսմբ կար ամեն տեսակ, որոցմէ 43,686 օգոստոս 14 և 16րդ. օրերն նետուած են. և այդ երկու օրուան պատերազմներէն վերջը կը մնայ ուրմն 125,482 ուսմբ. բայց և այնպէս ուսմբերն ասկէց ալ շատ բլլալու են, վան զի 4րդ. դունդը Մէջ վերադարձած ատեն, Պօրնիի պատերազմին մէջ կորսնցուցած ուսմբերուն տեղ նաւարանէն ուրիշ ուսմբեր առեր է:

« Ասկէց կը հետեւի որ օգոստոս 16 երեկոյին էն քիչը 130,000 ուսմբ կայ եղեր, որն որ Պօրնիի և Ռըզօնվիլի պատերազմներուն մէջ սպառուած ուսմբերուն եռապատիկն է:

« Գալով հետեւակազօրաց մթերիցը, օգոստոս 14 և 16 ի պատերազմներուն մէջ իւրաքանչիւր զօրք միլիօն հաչուով 17 փամիուշտ սպառեր է: Արդ՝ որովհետև իւրաքանչիւր զօրք 144 փամիուշտ ունէր, կը հետեւի թէ օգոստոս 16 երեկոյին մէն մի զօրք 127 փամիուշտ ունեցած կըլլայ, որ օգոստոս 14 և 16 ի պատերազմներուն մէջ սպառուածներուն եօթնուկէսպատիկն է:

« Իսկ ուտեստի պակասութեան համար տրուած պատճառն բոլորովին անտեղի է: Իւրաքանչիւր դունդ օգոստոս 14 ին չորս օրուան ուտելիք առած էր. ասկից զատ զօրաբանակին հետ 3300 էն աւելի կառքերով մէկ միլիօն զօրքի բաժին կար, որ ըսել է իւրաքանչիւր զօրականի համար վեց օրուան ուտելիք: Սա ճշմարիտ է որ մարշալսան

օգոստոս 15 ին զօրաբանակին հետ գտնուած կառքերով ուտեստն միատեղ չառնելու հրաման տուած էր, եզական հրաման մը որ այն օրէն իր Մէջէն չի զատուելու նկատմամբ ունեցած դիտաւորութեան մէկ յայտնի ապացոյցն ու վկայութիւնն է, մինչդեռ իր զօրաբանակին բաւական ժամանակ մը դիմացընելու կարեւոր միջոցներէն կը զրկէ:

« Բայց մարշալստին տուած այս հրամանը չէ կրցեր կատարուիլ. այս կառքերով ուտեստն Պան-Սէն-Մարթէն եկած հասած էր, ուրկէ դիւրին էր բերել տալ դունդերուն բայտուիլը սպահողընելու համար: Աւելի զարմանալին սա է որ, ուտեստ բռցուած կառքերն պարագա ետ դարձած ատեննին հրաման ընդունած են վերցընելու այն 15,000 վիրաւորեալներն, որք Ռըզօնվիլ և կրավլըթ և ուրիշ տեղուանք շատ դիւրութեամբ յանձնուեցան թշնամոյն ձեռքը, պատճառելով որ ճննօլայի դաշնադրութիւնն զանոնք պաշտպանելու տրամադրութիւնն ունի:

« Նախընթաց ըսուածներէն կը հետեւի որ մարշալստին իր զօրաբանակին Մէջի բանակեալը դարձընելու նկատմամբ ինքզինքը արդարացընելու համար ցուցուցած պատճառներն անհիմն են: Ասոր այսպէս ըլլալը պատերազմական պարագաներն ի նկատի առնելով ալ կրնայ իմացուիլ: Թըշնամին կըսէր այն ատեն, մեզի ուրիշ բան չի պիտի կրնայ ներկայացընել, բայց եթէ զօրքերու գլուխներ, մինչդեռ մենք միանանք և պատրաստ բլլանք պատերազմ մղելու անոր դէմ: Սակայն իր առատեանն ուղղած ծանուցազրոյն մէջ բարբա

վին աարբեր կարծիք մը կը յայտնէ, այսինքն՝ այնպէս կ'ենթադրէ որ զօրարանակ մը միայն այն աստեան կրնայ իր ամբաշար ընդհանրական զինուորական կրթնել, երբ ուրիշ օգնական զօրարանակ մը կրնա իր կողմէն : Աօի այնպիսի ճշմարտութիւն մ'է՛ զոր պէտք չէ հերքել :

« Մարտական Ժամանակ մը Մէջ մտալով պատերազմի աստեան խաղաղիք կարեւոր գերը միթէ կը կանխատեսէր :

« Միթէ կը կանխատեսէր որ թշնամին օր ըստ օրէն Գաղղիոյ խորը թափանցելով օր մ'ալ մայրաքաղաքը պիտի պաշարէր հոն օրէնքներ դնելու համար, ըայց ծայրայեղ ընդ դիմութիւն պիտի դնէր : Միթէ կը խորհէր որ այն աստեան իր զօրարանակն ետ դարձնելով, իր հաղորդակցութիւններն խտրանելով : իր բանակին պաշարը կտրելով, մեր ամուր տեղուանքը պաշարու մէ տղատ չի պահելով, և զանոնք յարձակումներէ պաշտպանելու ձեռնհաս զօրքերն հեռո՛հեռո՛ վրտելով, կրքնար մեր արշառող զօրարանակն խիստ դժուար կացութեան մը մէջ դնել և պատերազմին կերպարանքը փոխել :

« Շատ ճանախտ է որ այս ամենն մտաբերած չէ, որովհետեւ բնու իրոք փորձած չէ զանոնք բնելու համար :

« Վերջապէս, — որ ամենէն փափուկ կէտն է, — մեր կորուստներէն յառաջ գալիք վրդովումներն կը կանխատեսէր, և կը խորհէր որ կազմակերպեալ, վարժ և համառանակ զօրարանակ մը կրքնար ժամանակէն օգուտ քաղելով թշնամոյն հետ

խաղաղութիւն գտնադրել, և երկրին կենդանութեան միջնորդն ըլլալ :

« Արդարեւ դժուարն է հասկնալ թէ այս նկատումներէն որն Պարէն մարտական այս վարմունքին պատճառ եղաւ : Բայց եթէ իր դիտաւորութիւնն Մէջի մէջ կենալ էր, իր դիտաւոր հոգն կարելի եղածին չափ երկար ատեն հոն մնալն պիտի ըլլար : Արդ՝ այս նպատակին համեմու համար շատ դէպ զարմաններ խորհած և շատ դէպ միջոցներու ձեռնարկած է :

« Հոս տեղեկադիրն օգոստոս 18 էն ի վեր կատարուած զինուորական գործողութիւններն քննելով կուզէ գիտնալ թէ մարտական դիտաւորութիւնը ստուգիւ Մէջի մէջ մնալ էր թէ անկէ դուրս ելնել : Վերջը Պարէն մարտական իր զօրարանակն պիտոյքն լրացնելու համար ձեռք առած միջոցներն ճշդիւ կը պատմէ :

« Վերջապէս տեղեկադիրն կիմացնէ նաև որ սեպտեմբեր մէկէն մարտական կսկի իր յետոս դառնալուն հետեւանքն զպալ և սեպտեմբեր չորսին փարիզու մէջ տեղի ունեցած դէպքերն իր զօրքերուն կիմացնելէն վերջը, հայրենեաց նկատմամբ ունեցած պարտքերին անոնց կը յիշեցնէ :

« Եւ այն ատեն թշնամոյն հետ հաղորդակցութիւններ կը բանայ թէ իր միակ պարտաւորութիւնն է պատերազմիլ . զինուորը, գործակառար կըլլայ : » (Մեր ընթերցողներն կրնան միևնոյն ժանգօթութիւններն զօրպակտ ար Ռիլիէրի ծանուցադրոյն մէջ պարզուած գտնել) :

Այս տեղեկադիրն հետեւեալ կերպով վերջացաւ :

« Նկատելով որ Պագէն մարաշխտը՝ իր օգոստոս 19 ի և 20 ի հեռագիրներովն Մաք-Մահօն մարաշխտին զօրարանակին թէ յմէն Մէօղի վրայ երթալը վճուել տուած է, որ Մաք-Մահօն մարաշխտին Մէցի զօրարանակին օգնութեան երթալու համար իր զօրքերուն ճամբայ հանած ըլլալը իմացած է, որ օգոստոս 26 և 31 ի յարձակմանց փորձերն՝ Շարսի բանակին օգտակար նահանջում մը ըրած ըլլալու չափ խոհական չէին կրնար նրկատուիլ :

« Այս պատճառներով քննութեան ատեանն կը խորհի որ Պագէն մարաշխտը այս զօրարանակին ձախորդութեանցը նկատմամբ ըստ մեծի մասին պատասխանատու է :

« Ատեանը այնպէս կը կարծէ որ Պագէն մարաշխտն 150,000 զօրքերէ բաղկացեալ բանակի մը և Մէցին կորստեանը պատճառ եղած է, որ պատասխանատուութիւնը բողբոլիին իրեն կը պատկանի, և որ, իբր գլխաւոր հրամանատար, զինուորական պարտաւորութեան պահանջումներն կատարած չէ :

« Ատեանը կը կշտամբէ զմարաշխտն թշնամւոյն հետ այնպիսի յարաբերութիւններ ունենալուն համար, որք պատմութեան մէջ նմանը չի տեսնուած անձնատրութեան դաշնագրութեան մը պատճառ եղան :

« Եթէ ատեանը՝ ուրիշ անձնատրութեան դաշնաց վրայ ունեցած իր նախորդ կարծիքներուն մէջ միշտ կշտամբած է այն հրամանատարներն, որոնք անձնատուր ըլլալու ստիպուած՝ դաշնագրու-

թիւնն ստորագրելնէն յառաջ իրենց պատերազմական նիւթերն եղծած չեն, և այնպէս թշնամւոյն ձեռքն յանձնելու են բոլոր այն հանդերձանքներն՝ զորս թշնամին վերջէն պատերազմի մէջ խիտալու գործածած է. անոնցմէ աւելի կշտամբանաց արժանի է Պագէն մարաշխտն :

« Ատեանը կը կշտամբէ զանի դաշնաց թուղթն ընդունած ըլլալուն համար, որով պատերազմական պաշտօնեայք պատերազմի ատեն Գերմանիոյ ծառայութիւն չընելու համար գրով պատուոյ վրայ կերդնուն և այնպէս իրենց պաշտօնին վրայ կը կարգուին :

« Վերջապէս ատեանը կը կշտամբէ զանի դրօշակներն թշնամւոյն յանձնելուն համար զորս կըրնար և պարտաւոր էր եղծել, և այնպէսով քաջ զինուորներուն կատարեալ նուաստութեանը պատճառ ըլլալուն համար, որոց պատուոյն պաշտպանութիւնը իրեն յանձնուած էր :

« Բնագրին համաձայն ըլլալուն կատրագրեմ :

» Մարաշիքի Գալլի, Կարթաի Գալլի
բաժնաց Գալլի-Բաժնի
« ՊԱՐԱՆՈՒՅՑ-ՏՐՈՒՅՑ »

Պ. ՆԱՍՍՈՒՅՑԻ. — Պարոն մարաշխտ, ձեր հիմակուան լսելիքներուն աղէկ ուշադրութիւն ըրէք :

Դիւանապետ, ամբաստանող Պ. Սէրրէ աը Ռիվիէր զօրապետին ծանուցադիրը կարդացէք :

Պ. Ալա գիւանապետն հետեւեալ գրութիւնը կը կարդայ :

ՍԵՐՐԷ ՏԸ ՐԻՎԼԻԵՐ ԶՕՐԱՊԵՏԻՆ

ԾԱՆՈՒՅՆԳԻՐԸ

ՊԱՁԷՆ ՄԱՐԱԶԱԽՏԻՆ ԳՈՐԾՈՅՆ ՎՐԱՅ

Ներքո բերուող հրամանաց Հանդէս Բանակն, որ 1872 թիւ 7 ի պարտադր վեճ պատճենն ունի հրամանն հաշիւոր գեղեցիկն ունեան իրարմ է :

ՅԱՌԱՋԱԲԱՆ

1872 Մայիս 7 թուականի որոշմամբ, պատերազմի վեճմ. պաշտօնեայն, Հռենոսի բանակին և Մէջի անձնատուր ըլլալու դաշնագրութեան գործը քննելու յատկացեալ ատեանին տուած խորհրդոյն համաձայն, հրաման ըրաւ իմանալու այն բանակին զիտար հրամանատար Պաղէն մարաշխտին վրայօր թէ :

Պաղէն մարաշխտն, իրր Հռենոսի բանակին զիտար հրամանատար, պարտուց և պատուոյ պահանջումներն գործադրած է :

Ան աչա է լուծուելու խնդիրն, և ասոր համար անհրաժեշտ է մարաշխտին իր հրամանատարութեան ատեն կատարած բոլոր գործքերն յայտարարել : Այս յայտարարութիւնը երեք մասերու բաժնուած է հետեւեալ երեք թուականներուն համեմատ :

1. Ժիր գործողութիւնք, օգոստոս 3 էն մինչև սեպտեմբեր 1. — 2. Պաշարումն, սեպտեմբեր 1 էն մինչև հոկտեմբեր 10. — 3. Անձնատուր ըլլալու դաշինք, հոկտեմբեր 10 էն մինչև 27 :

Այս յայտարարութեան վերջը թէ հազրդակցութեանց, թէ թնդանօթներու և թէ ուսուստի վերաբերեալ խնդրոց քննութեան կարեւոր եղող զիտար բացատրութիւններն յաւելցուցած են :

Ընդհանուր քաղուած մը ի լրոյ առնուած զիտար արարքներն իր մէջ կը բովանդակէ, և ծանօցագրոյն վերջնական և գրականութիւններն յայտնի կը ջուշընէ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՄԷՅԻ ՊԱԶԱՐՄԱՆ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԺԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ ՆԱԽ ՔԱՆ ԶՊԱՇԱՐՈՒՄՆ
ՄԻՆՉԵՒ 1870 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԿԶԲԵՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐՍԱԶՄԻ

(ՊԱՏԵՐԱԶՄ ՏՕՐՊԱԽԻ)



ՀՌԵՆՈՍԻ ԲԱՆԱԿԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

1866 ի պատերազմէն վերջը, երբ հիւսիսային
Գերմանիոյ և Գաղղիոյ մէջ տեղի ունենալիք պա-
տերազմն հաւանական երեւցաւ, Նիէլ մարտիտն,
ուրիշ ամեն նախապատրաստական միջոցներէն
զատ, այս ծանր պարագային մէջ մեր զօրաց ինչ
կերպով կազմակերպուելիքն ու բաժնուելիքը ի-
մացուց, ինքը մեր զօրքերովն երեք բանակներ
ձեւացընել առաջադրած էր, երկուքն իրք առա-
ջին բանակ Լորէնի և Ալզասի մէջ, երրորդն պա-
հեստի բանակ Շալսնի մէջ: Ասոնցմէ զատ երկու

ուրիշ գունդեր ալ Պէլֆօրի և Լիօնի մէջ պիտի հաստատուէին, որոց պաշտօնն էր հետզհետէ պահեստի գունդեր ըլլալ: Նիէլ մարաշխանին խորհուրդին նայելով յիշեալ երեք բանակներն Պազէն, Մաք-Մահօն և Քանրօպէր մարաշխաններուն պիտի յանձնուէին:

Նոյն միջոցին երբ 1870 ի պատերազմը որոշուեցաւ, Գաղղիոյ կառավարութիւնն զգալով որ ի սկզբան պատերազմին մեր զօրքերն թուով թըշնամեոյն զօրքերէն քիչ պիտի ըլլային, այս պակասը չերեցընելու համար որոշեց թշնամեոյն վըրայ յարձակիլ: Ինչպէս որ 1866 ի առաջադրութիւնն կը պահանջէր, Ալզաս և Լօրէնի մէջ իբր առաջին գունդ երկու բանակ պիտի ունենայինք, որպէս զի թշնամին չկարենայ գիտնալ թէ գլխաւոր զօրութիւննիս որ կողմը պիտի ամրանայ:

Երկու ընտրական միջոց կար առնուին: Նախապէս կենթագրէինք որ եթէ նիզակակից ունենանք, պէտք էր Հռենոսէն անցնիլ և Հիւսիսային ու Հարաւային բանակաց վրայ յարձակիլ: Երկրորդապէս, եթէ մեր յուսացած նիզակակիցութիւնն չունենանք, առաջին պատերազմական դաշտն պիտի ըլլար Բալթիկինայի և Հռենոսի սահմանը գտնուած Բրուսիական սահանգին միջոցը: Որն ալ որ ըլլար, զօրախումբն Պալթիկի մէջ թըշնամեոյն վրայ յարձակում մը պիտի ընէր:

Իժարադարար այն միջոցին որ մեր բանակներն ճամբայ ելան, այս խոհական կարգադրութիւններն ալ չի գործադրուեցան, և ասոր պատճառը կերտի թէ ուրիշ բան չէր, եթէ ոչ սլարագաներ:

բուն համեմատ զօրքերուն ուղեւորութեանը աւելի դիւրութիւն մը աւել: Ուստի միայն բանակ մը կազմեցին ութը գունդերու բաժնուած պահապան զօրքն ալ մէջը դանուելով: Այս կարգադրութիւնը դիւրութիւն կուտար պէտք եղած տեւն մարաշխաներէն միոյն ձեռքը շատ գունդեր յանձնել: Իսկ ասոնց ամենուն առաջին հրամանատարութիւնն կայսրն իրեն վերապահած էր:

Եւ որպէս զի խաղաղութեան վիճակէն պատերազմի վիճակը անցնելու վտանգաւոր միջոցին յառաջ գալիք չվիթութիւնը կարելի եղածին չափ նուազի, յարմար դատուեցաւ որ կազմակերպեալ զօրաբանակներն սահմանագլխոյն երկու կողմերը և սահմանագլխոյն բաւական մօտերը բաշխուին, երկիրը թշնամեոյն բաղմամբիւ հեծելազօրաց յանկարծական յարձակումներէն պաշտպանելու համար: Այս զօրաբանակներն հետեւեալ հաւաքման տեղերը դրուեցան. առաջինը Սթրազպուրի, երկրորդը Սէնթ-Ավօլտ, երրորդը Մէց, չորրորդը Թիօնվիլ, հինգերորդը Պիլ, վեցերորդը Շալօնի բանակատեղին, եօթներորդը Պէլֆօր, և պահապան զօրքն ալ փարիզ:

Գունդերն այն ատեն ի կեդրոն պիտի հաւաքուէին, երբ իրենց կազմակերպութիւնը զանոնք ճամբայ հանելու չափ յառաջ գացած երեւէր: Այս ճամբորդութիւնն յուլիսի վերջերն կատարուելու յոյս կար, և այս նպատակաւ էր որ գլխաւոր սահմանագլխոյն վրայ, նա մանուսանդ Ֆորպալի և Սարէկմին պաշարն մեծամեծ պատրաստութիւններ եղած էր: Պահեստի զօրաց հաւաքման և կառա-

վարական պաշտօնէից միացման յապաղելուն պատճառն արդէն յայտնի է, յապաղումը զորն որ պարտաւոր էին կանխաւ դուշակել. այս պատճառն թշնամւոյն ինչ իրական առաջադրութիւններ ունեցած ըլլալն ճիշդ չգիտցուելուն հետ միատեղ, տեղի տուաւ որ գունդերուն ի կեդրոն հաւաքման մասին ընելիք առաջին շարժումներն երկարեցան մինչև օգոստոս 4, և թշնամին նոյն միջոցները մեր վրայ յարձակեցաւ: Եւ այսպէս թըշնամւոյն պատերազմի ճայն տալու պատրաստուած միջոցնիս ինքը մեր վրայ յարձակեցաւ:

Կայրը, ինչպէս ըսինք, զօրաբանակին հրամանատարութիւնը իրեն վերապահած էր, և որովհետև քաղաքական շահեր կը արհամարհէին որ ինքը փարիզ կենայ, Պազէն մարտական յուլիս 16 ին զօրաբանակին առժամանակեայ հրամանատար կարգեցաւ. ամեն պատերազմական դէպքերու մէջ պաշտպան կենալու համար:

Յուլիս 19 ի օրէնդրութեան համեմատ, Լը Պէօֆ մարտական բանակին գլխաւոր զօրապետ անուանեցաւ, և յուլիս 24 ին Մէյ գնաց իրեն վերաբերեալ կառավարական ծառայութեանց համեմատ գունդերն կազմակերպելու համար, որով կայսեր հոն երթալէն քանի մ'օր յառաջ ինքն հոն դանուեցաւ, վասն զի կայրը յուլիս 28 ին Մէյ գնաց:

Կայրը հրամանատարութիւնը ձեռք առնելով յարմար դատեց որ, մինչև որ թշնամւոյն առաջադրութիւններն ճշդիւ իմանան, զօրաբանակն Մէյէն Սարէպրիւք չհնուած երկաթուղւոյն մե-

տեցընէ, զանի սահմանազիտոյն աւելի մօտ տանելով: Այս կարգադրութեան համեմատ զօրաբանակն յուլիս 31 ին հետեւեալ տեղերն հաստատուեցաւ:

Չրդ. գունդն՝ Ֆորպալս. Յրդ. ն՝ Մէնթ-Ալօլտ. իրդ. ն՝ Պուլէյ: Իսկ Յրդ., Վրդ. և Դրդ. գունդերն և Մէյ նոր եկող պահապան զօրականներն իրենց անդուանքն չի փոխեցին:

Քանի որ պաշտպանողական յարձակում չկար, ստուգիւ թշնամին պիտի ընէր այս յարձակումը: Այս յարձակման դիմադրելու համար Սարէպրիւքէն Մէյ և Սալէրէն Նանսի չհնուած երկաթուղիներն նշանակուած էին: Ասկէջ կը հետեւի, որ Գաղղիական խումբերն որք թուով թշնամւոյն խումբերէն նուազ էին, այս երկաթուղեաց վրայէն ի մի խմբելու համար ամեն միջոց կար, և այն ալ պաշտպանողական պայմաններով:

Ալզասի մէջ այս կերպ կարգադրութեան համաձայն բան մը չեղաւ, և Լօրէնի մէջ՝ սահմանադիտոյն դուրս ցցուած մէկ մասին վրայ կատարուած հաւաքման սկզբնաւորութիւնն ալ բոլորովին վատնուար էր, վասն զի անով թշնամւոյն յանկարծական յարձակման ենթակայ պիտի ըլլային: Այս ըսածնիս դէպքերն հաստատեցին:

Օգոստոսի առաջին օրերն սոյսպիսի վտանգաւոր դիրքով անցան: Օգոստոս 12 ին Սարէպրիւք գանուող Չրդ. գունդէն տնտուած տեղեկութիւններն թշնամւոյն պատրաստութեանց վրայ որոշ բան մը չէին յայտնել. բայց հետեւեալ օրերն իր պատրաստութեանց նկատմամբ անուած տե-

ղեկութիւններն յայնմ պէս իմացուցին որ թշնամուցն ի կեդրոն հաւարումը մտալուտ է: Եւ յիշուալի նոյն միջոցին եկաւ հասաւ առաջին զօրաբանակ մը Սարէպրիւքի և Սար-լուիի մէջ տեղ Սթայնմէջ զօրապետին հրամանատարութեան ներքեւ: Երկրորդ բանակ մը Ֆրէտէրիք-ճարլ իշխանին հրամանատարութեան ներքեւ: Վերջապէս երրորդ գունդ մ'ալ Լօթէրմի հիստիակողմը Հոեւնտի սահմանակից եզրը Պալիէրի մասին մէջ կը կազմուէր արքայորդւոյն հրամանատարութեան ներքեւ:

ԼՕՐԷՆԻ ԵՒ ԱԼԶԱՍԻ ԶՕՐԱԲԱՆԱԿԱՅ Ի ԿԵՌՈՅ ՀԱՒԱՔՈՒՄԸ

Վերջիջեալ պատրաստութեանց նկատմամբ ընդհանուր բանակէն հասած տեղեկութեանց վրայ յօք, կայսրն օգոստոս 5 ին իր զօրքերն երկու գլխաւոր մասերու բաժնելը անհրաժեշտ դատեց: Ասոնցմէ մին որ 1 ըր 5 ըր և 7 ըր գունդերէն կազմուեցաւ, Մաք-Մահօն մարալախտին հրամանատարութեան ներքեւ գրուեցաւ Ալզասի մէջ և երկրորդն որ 2 ըր 3 ըր և 4 ըր գունդերէն կազմուեցաւ, Պաղէն մարալախտին հրամանատարութեան ներքեւ գրուեցաւ: Իսկ ղինուորական գործողութեանց ընդհանուր տեսլութիւնն և պահանջան զօրաց ուղղակի հրամանատարութիւնն կայսրն իրեն կը վերապահէր:

Մի և նոյն օրն, օգոստոս 5, Լօրէնի զօրաբանակն ըստ հրամանի կայսր հետեւեալ տեղերը գրուեցան. սյսինքն՝ 4 ըր գունդն, որ զօրաբա-

նակին ձախ թեւը կը կազմէր, եկաւ հաստատուեցաւ ի Թէթէրղէն, ի Պուլէյ և ի Պուլբօրն. 3 ըր գունդն ի Սէթ-Ալլօտ, ի Մարիէնթալ, ի Ռիթէլանտ և ի Սարէկմին, ուր կը գտնուէր 5 ըր գունդի Լարասէ զօրապետին վաչտն: 2 ըր գունդն, որ առաջապահ էր, Սարէպրիւքէն յուշիկ Սարէպրիւքի ետեւը եղած լեռանց վրայ դարձաւ: Պահանջան զօրքն Մէջի ճամբուն վրայ աստիճանաբար յառաջ կերթար. հետեւեալ օրերուն համար 6 ըր գունդին ժամանումն ալ իմաց տրուած էր. իսկ 5 ըր գունդն Պիլ պիտի երթար Ալզասի բանակին ձախ թեւը կազմելու համար:

Օգոստոս 5 ին, Պաղէն մարալախտն իր հրամանատարութիւնն ձեռք առաւ: Նիէլ մարալախտին ձեռնարկած զօրաբանակի կազմակերպութեան առաջադրութեան օր ըստ օրէ կարգաւորուած ըլլալուն համաձայն, Պաղէն մարալախտն Լօրէնի զօրաբանակին բացարձակ գլուխ ըլլալով, և այդ պատճառաւ, նախապէս նանսի մեծ հրամանատարութիւնն իրեն յանձնուելով ինքզինքը գունդի մը պարզ հրամանատարութեան կարգ դասած կը կարծէր, բայց և այնպէս ծանր սխալանաց մէջ կը գտնուէր:

Օգոստոս 5 ի որոշումը, որ իրեն երեք գունդի հրամանատարութիւն կը յանձնէր թշնամուցն դիմացը, մասամբ իւրիք իր ուզած բարձր դիրքն տուաւ իրեն: Հիմա նայինք թէ ինչ կերպով գործածեց իրեն յանձնուած հրամանատարութիւնն. հետեւեալ օրուան (օգոստոս 6) պատերազմը մարալախտը կենդանացնող զգացումներն յատկապէս

երեւան կը հանէ, որն որ մանրամասն քննութեանց ենթակայ ըլլալու արժանի է :

ՅՕՐԳԱԽԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սոյն պատերազմին կատարուելու տեղը՝ Սարէպրիւքի, Սէնթ-Ալօլտի և Սարէկմինի մէջ տեղը եռանկիւնի ձև մ'ունի դէպ ի Գերմանական երկիրը դուրս ցցուած . իր գաղաթն է Սարէպրիւք, որ թշնամոյն համար դուրս խուժելու հաւանական տեղ մ'է, որուն ետեւի կողմը կը դըտնուէր Չրգ. գունդն : Սոյն եռանկիւնի 'խարխիւն' Սէնթ-Ալօլտէն Մարիանթալ, Բիւթէլանտ և Սարէկմին վարող ճամբէն ձեւացած էր :

Ֆորպախի և Սարէպրիւքի մէջ տեղը, և գրեթէ յիշեալ եռանկեան խարխիւն զուգահեռական կերպով ֆատէնպրօնի լեռանց գեղեցիկ գիրքն կը տեսնուի, որն որ Սար և մեծ Ռոզէլ գետերուն վրայ կը բարձրանային, և այս լեռներն ալ Պագէն մարալխտին զորաբանակին յառաջապահն կողմ Չրգ. գունդին, և ուղղակի իր հրամաններուն ներքև գտնուած և ինչպէս ըսինք բաշխուած Յրգ. գունդին աչքին գէմը կը գտնուէին հաւասարապէս :

1867 ին Ֆրօսար զօրապետն մանրամասն տեղեկութիւն բնդունած ըլլալով ֆատէնպրօնի այս գրիցը վրայօք, իր առած տեղեկութիւններն զբոսով մարալխտին հաղորդած էր : Այս դիրքն սոյն միջոցին մասնաւոր օգուտ մ'ունէր, այն է՝ որ եթէ պաշտպանողական յարձակում մ'ըլլար, Ֆոր-

պախի և Սարէկմինի մէջ պատրաստուած ուտեստի մեծամեծ համարանոցներն վնասէ ազատ կը պահէր, և եթէ եա դառնալու ամենափոքր շարժում մ'ըլլար, այդ դիրքը կրնար թշնամոյն ձեռքը անցնիլ :

Թշնամեաց զօրքերուն ի կեդրոն հաւաքման և մեր բանակին մօտենալուն նկատմամբ հաստժ տեղեկութեանց վրայօք, Ֆրօսար զօրապետն՝ Սարէպրիւքի մէջ թշնամոյն վրայ յառաջանալու դիրք մը ունենալուն համար իրաւամբ անհանգիստ ըլլալով, օգոստոս 5 ին կայսեր կը հեռագրէր որ քիչ մը թշնամոյն մօտ կը գտնուի, և թէ երկրորդ խումբին Սարէկմինէն աւելի Ֆորպախի դաշտերն դանուիլը շատ աւելի աղէկ է : Կայսրն ալ իրեն պատասխանեց որ հետեւեալ օրն իր ընդհանուր բանակն Ֆորպախ տանի :

Նոյն օրն (օգոստոս 5) էր որ կէս օրէն վերջը յիշեալ զօրապետն Պագէն մարալխտին հրամանատարութեան ներքև դրուեցաւ, ուստի և անմիջապէս հաղորդեց անոր իր ընդունած հրամանն :

Օգոստոս 6 ին, առաւօտեան ժամը չորսը քառասուն վայրկեան անցած, մեծ զօրապետն Պագէն մարալխտին և Ֆրօսար զօրապետին նոր հեռագիր մը քաջեց, որ մի և նոյն օրը ըլլալիք յարձակման մը պատրաստ գտնուին . երկու ժամ վերջը, պահապան զօրքն, ինչպէս նաև Ֆորթուի զօրաբաժինն մարալխտին հրամանատարութեան ներքև դրուեցան :

Օգոստոս 5 ին առաւօտուն, Չրգ. գունդին գէպ ի յետս երթալու համար ըրած պարտի շար-

ժու՛մը դիչեր ատեն լրացած էր և զօրախումբերն իրենց նոր դիրքերուն վրայ հաստատուած էին . այսինքն՝ Լավօքուբէի զօրաբաժինն ի Սբիքիրէն , Վէրժէի զօրաբաժինն Աթրիվի առջևը ձորին մէջ , և պահեստի Պաթիլլի զօրաբաժինն յԱթիփնփէա , երբ օգոստոս 6 ին առաօտուն թշնամւոյն պատերազմական շարժումը յայտնուեցաւ : Հոյն առաօտուն ժնմը ինը տասը վայրկեան անցած Ֆրօսար զօրապետն հետեւեալն հեռադրեց առ Պաղէն մարաշախտն .

« Մօտերս թնդանօթի ձայներ կը լսեմ , հոն սիտի երթամ . աղէկ չըլլա՛ր որ Մօնթօտօնի զօրաբաժինն Սարէկվինէն վաշտ մը զօրք լսրկէ դէպ ի հրօսպիէտէրոթօֆ . և Տէվաէնի զօրաբաժինն դէպ ի յառաջ ի Սէրլէպախ և ի Ռօսպրիւք երթայ : »

Ժամէ տասը վեց վայրկեան անցած , Ֆրօսար զօրապետն հետեւեալն եւս հեռադրեց .

« Թշնամին Սարէպրիւքի լեռներէն դէպ ի մեզ զօրաորդունդեր իջեցուց . բայց դեռ յարձահողական շարժման նշան տուած չէ : Մենք պատրաստուած ենք դաշտին և ճամբուն վրայ : »

Ասկից դրեթէ անմիջապէս վերջը , յիշեալ զօրապետը՝ թշնամոյն Բօսպրիւքի վրայ յարձակում մ'ընելու դիտաւորութիւն ունենալն կիմաղքնէ մարաշախտին . մարաշախտն ալ իրեն կը պատահախանէ որ ժիւնիտքի հրացանակիր հծեւաղօրաց վաչան հոն կը դրկէ :

Եկաւ հասաւ այն վայրկեանը ուր պէտք էր համ ամենայն համարձակութեամբ պատերազմել ,

և կամ ետ դառնալ և Քատէնպրօնի դրից վրայ երթալ թշնամոյն սպառել : Ֆրօսար զօրապետն՝ Ֆօրպախն ու հոն նաւահանգիստը դիտուած խել մը պաշարներն առանց պատերազմ ընելու ձգել երթալու խորհուրդէն ետ կը կենայ , և փոխանակ յետս նահանջելու , հոն կը մնայ և թշնամւոյն կրպակէ :

Մարաշախտն , ինչպէս որ հարցաքննութեան ենթակայ եղած ատեն ըսած է , Քատէնպրօնի լեռներուն վրայ կենայն իր կողմանէ օգտակար կը համարէր : Եւ որովհետև Ֆրօսար զօրապետն կը տարակուսէր այսպիսի որոշում մը գործադրելու , ուստի պէտք էր որ մարաշախտն հրամայէր որ անմիջապէս երթան այն տեղ հաստատուին : Բնդհակառակն զանի՛ վտանգին ստուգուած ժամանակը իբր ընդհանուր կեդրոնական հաւաքման տեղ մը նշանակելով գոհ կըլլայ : (Հեռադիր ժամը տասը քառորդ անցած)

Բայց և այնպէս Ֆրօսար զօրապետին յանհարինս նեղուած ըլլալն զգալով , և զգուշութիւններ ձեռք առնելու և Յրգ գունդի զօրաբաժիններն պատերազմին տեղը բերելու պէտքն իմանալով՝ ժամը տասը քառորդ անցած Լօքմարիա դնդապետն կը դրկէ առ զօրապետն Մէթման պատուիրելով որ Մարինթալէն ելնէ ու Պէնիկ երթայ Մէրզէպախի անցքին հսկելու համար , իր գունդերուն մէկ մասն Սէնթ-Ավրտի ալ կողմն ի Մարէրէն ձգելով : Ասի գիտողութեան արժանի բան մ'է . վասն զի Լօքմարիա դնդապետին եղած յանձնարարութեան մէջ , Ֆրօսար զօրապետին և

նոյն միջոցին տեղի ունեցած պատերազմական դէպքերուն նկատմամբ բնաւ խօսք մը չկայ: Մէթման զօրապետին զրկած երկու նամակներն ալ իր դերը ճշդիւ կը յայտնեն, այսինքն թէ՛ յիշեալ զօրապետն իր դրիցը մէջ հաստատ պիտի մնայ և երկաթուղւոյն ու սահմանազիւսոյն մէջ գտնուած երկիրն պիտի պաշտպանէ: Ըսել է որ իր պաշտօնը պիտի ըլլայ նոյն իսկ մարտիական իր Սէնթ-Ավօտի դրիցը վրայ պահպանել: Զօրապետն այս հրամանը կը կատարէ և կէս օրէն վերջը ժամ երեքին կը հասնի ի Պէնինկ: Եթէ իր դէպի Ֆօրպախ ընթացքն շարունակած ըլլար, ժամ չորս ու կէսին հոն կը հասնէր:

Լօքմարիա գեղապետն Մէթման զօրապետին այս հրամանը տանելէն վերջը՝ ֆատիմանի զօրապետին քով կերթայ, որն որ Սրիբէրէնի կողմէն առած թնդանօթի ձայնին վրայ դէպ ի կէպէն հայրէն երթալու համար ճամբայ ելած էր. և հրաման կը տանի անոր որ վաշտ մը զօրքով ելնէ Ֆարչվիլէր երթայ և երկրորդ վաշտն ալ Քատէնպրօնի ձախակողմն ի Թէրինկ զրկէ: Այս հրամանին վրայ զօրապետն թէեւ պատերազմի տեղւոյն պիտի մօտենայ, բայց Ֆրօսար զօրապետին տրամադրութեան ներքև գտնուելու հրաման մը չընդունիր: (Լօքմարիա գեղապետին վկայութիւնն է այս): Նոյն միջոցին ժամը մէկն էր, և երկրորդ վաշտն կընար ժամ չորս և հինգին մէջ տեղը իրեն սահմանուած տեղն հասնիլ, եթէ մարտիական հրամաններն կատարուէին:

Զօրապետն փոխանակ մարտիական հրամանը

կատարելու իր ընթացքը կը շարունակէ. բայց բան մը չի լսելով այն անտառապատ ձորին մէջ ուր իր զօրաբաժինն վարած էր, չուտով ետ կը դառնայ ի Բիւթէյանօ, ուսկից նորէն թնդանօթի որոշ ձայներ առնելուն վրայ. իրիկուան ժամը վեցին մարտիական հրամայած տեղն երթալու համար ճամբայ կընէ: Բայ տակէ, մարտիական հրաման ալ կընդունի որ Ֆրօսար զօրապետին տրամադրութեանը ներքև գտնուի (հեռադիր մարտիական առ կայսր, երեկոյեան ժամ եօթնին) բայց ալ անոր ամենավտար օգնութիւն մ'ընելու ժամանակն անցած էր:

Մօնթօտօնի զօրաբաժինն դալով, որն որ իր ընդունած հեռադրոյն վրայ ընդհանուր բանակատեղին դարձած և Չրգ գունդին աւելի մօտ գտնուած գունդն էր, այս զօրաբաժինն Չրգ գունդի ուրիշ զօրաբաժիններուն հրահանգ և հրաման զրկուած միջոցին բնաւ հրահանգ և հրաման չընդունիր:

Եթէ սոյն զօրաբաժինն ալ առաւօտեան ժամը իննին միւս զօրաբաժիններուն նման դէպ ի Չրգ գունդն ճամբայ ելած ըլլար, քանզի այսպէս կը պահանջէր ամեն ինչ, այսպէս խնդրած էր նաեւ նոյն ինքն զօրապետն Ֆրօսար, եթէ անոր օգնութեան երթալու հրաման ընդունած ըլլար, այս զօրաբաժինն կանուխ ժամանակաւ հոն կը հասնէր, և հաւանական էր որ գործերն ուրիշ դարձուածք մը կառնուին: Բայց այս հրամանն ժամը երեքին պիտի հասնէր առ զօրապետն Մօնթօտօն:

Ուստի, նոյն միջոցին որ մարտիական իր զօրաբաժնական յառաջապահ գունդին կաջութեան

ճանրութիւնն ստուգելով իր զօրաբաժիններուն հրամաններ կուտայ, աւելի հեռուն գտնուած զօրաբաժինն (ֆասթանեիի զօրաբաժինը) Ծրօսար զօրապետին կը դրկէ, և ինքզինքն պահպանելու համար Մէթմանի զօրաբաժինն օգնութիւնն ալ կընդունի, և իր Պիլի բանակները երկու զօրաբաժին միայն կը թողու, մին Մօնթօտօնի զօրաբաժինն և միւսը իր հրամաններն կարճատեւ միջոցի մէջ ընդունելու կարող զօրաբաժին մը:

Բայց և այնպէս Ծրօսար զօրապետն մեծ վրտանդի մէջ գտնուելուն համար, ժամը մէկը քրտանը հինգ վայրկեան անցած հետեւեալն հեռագրեց.

« Յանհնարինս նեղուած եմ որչափ ճամբուն վրայ և անտառայ մէջ, նոյնչափ և եւս Սրիքերէնի լեռանց վրայ, պատերազմ կըլլայ: Կողաչեմ որ չուտով ձեր Մօնթօտօնի զօրաբաժինն ճամբայ հանէք դէպ ի կրօսպիլեաէրթօֆ և՛ ձեր հրացանակիր հեծելազօրաց վաշտն դէպ ի Ծորպախս: »

Մարաշխանս վերջապէս ժամը երկու քը երեսուն վայրկեան անցած այս կերպ հրաման կուտայ, ոոյն միջոցին իր դունդերն ճամբայ կըսծ են. կը մտայ միայն անոնց ընթացքը արգեամբ ի գլուխ հանել. չկայ բան մը որ զմարաշխանս Մէթմ-Սվօլա կենալու ստիպէ: Երկաթուղին կընայ զինքը քսան վայրկեանէն Ծորպախս տանիլ: Պատերազմի անակնկալ դէպքերուն և ձեռք առնուելիք միջոցներուն կարգադրութեանն համար պատերազմի դաշտէն աւելի յարմար տեղ մը կընտր գտնել, եթէ ուրիշ կերպով վարուէր, չէր վախճուեր որ

փոխանակ այդ անակնկալ դէպքերուն առաջին առնելու, յանկարծակի այդ դէպքերն իրեն պատահէին: Այս խնդիրներուն նկատմամբ մարաշխանս կը պտտասխանէ թէ Մէթմ-Սվօլա իր գործողութեանց կեզրոնն ըլլալուն համար. իր հոն ներկայ գտնուիլն աւելի օգտակար դատած է:

Էս այսպէս Ծրօսար զօրապետն, որուն դիրքը երթալով ալ աւելի ծանրացած էր, իր յատուկ թելադրութեանց անստով Մօնթօտօն զօրապետն առ իւր կը կոչէ: Այն ատեն միայնիկ կուգայ պատերազմին տեղը իր զօրքերուն կազմութիւնն անձամբ խմանալու, որոնք առտուքնէ ի վեր յամառութեամբ կատարած մէկ պատերազմներուն մէջ ներուած էին: Զօրապետն նախ Սթերինկ կերթայ, Պաթայլ զօրապետին հրամանատարութեան ներքև գտնուած իր մնացած պահեստի զօրաբաժինըն հոն կը կոչէ, բայց այս զօրաբաժինն ալ միսին պէս կը նեղուի:

Բայց և այնպէս բնաւ տեղէ մը օգնութիւն չգար. ընդհակառակն թշնամին որ միշտ օգնութիւն կընդունէր, անտառներէն մեր ձախակողմք կը խուժէր և իր զօրքերն կերեւցնէր Սարուիէն Ծորպախ տանող ճամբուն վրայ, և այսպէս Չըդդունդն մէկ կողմը առնելով ձախ թեկն վերջնապահներն ալ կը նեղէր: Ծրօսար զօրապետն քաջ դիտնալով որ երկար դիմադրութիւնէ մը կընտր ձախորդութիւն մը ծագիլ, հրաման ըրաւ դիմադրող դունդերուն որ լեռներուն վրայ քաշուին: Անոնք ալ, թշնամին նուաճելով, Սթերինկի հրիզութեան և Ծորպախի առաջին տուններուն մէջ

տեղէն տնցներով լերանց վրայ քաշուեցան, ուր
դիչերը կրցան հասնիլ:

Մարաջախտին և Ֆրոսար զորապետին մէջ տեղ
փոփոխակի քաշուած հետեւեալ հեռադիրներն
յիշեալ դէպքերն որոշ կերպով կրնան բացայայ-
տել:

Հոգ ԺԳ 45 Էջ 11-12

« Լերանց վրայ գտնուած անկողնայն պարտաւո-
րեցաւ ետ դառնալ: Երանր վտանդի ենթակայ ե-
ղած եմ: Շուտով ինձի զորք զրկեցէք ամէն մի-
շոցներով: »

ԺԳ 46 Էջ 2 Էջ 11-12

Մարաջախտը կը պատասխանէ.

« Զորադանակին ճորդ դուռնն երկաթ ուղեա-
տա ձեզ կը զրկեմ: պէտքը ըննալուս պէս շուտով
տա իս վերադարձուցէք: »

ԺԳ 6 Էջ 12-13

« Երկաթ ուղեաւ վաշտ մը զորք կը լարկեմ ձեզ
Քասթանեի զորապետն ուղեւորեցաւ դէպի ձեզ:
ձեզի հետ միանալու հրամանն ընդունած է: Մ՛օն-
թօտօն զորապետն ժամը հինգին Մարէկմինը թո-
ղուց, և դնաց դէպի կրօսպիէտէրթթօթի: Մէթ-
ման զորապետն Պէնինի է: Միւսիսք զորապետին
դուռնն պիտի ընդունիք: »

Ֆրոսար զորապետն ժամ վեցը երեսունը հինգ
վայրկեան անցած կրկին իրեն կը դրէ այսպէս.

« Բրուսիացիք բաւական զօրք յառաջ կը վա-
րէն. ամէն կողմէն կը յարձակին վրաս: — Կարեղի
եղածին չափ շուտով իմ խումբերուս ուղեւորու-
թիւնը փութացուցէք: »

Վերջը ժամ եօթը քաններկու վայրկեան ան-
ցած. « վէրտէմի ճամբով դարձանք. բոլոր զօր-
քերըս լերանց վրայ տարած եմ: »

Մարաջախտը կը պատասխանէ. « Ինչ որ կըր-
ցայ զրկել ձեզ, զրկեցի. քովս միայն երեք վաշտ
զօրք ունիմ Մէնթ-Ալօլտի դիրքը պահպանելու
համար: Հաճեցէք նշանակել ինձ այն դիրքերն ուր
կը կարծէք թէ պարտաւոր էք հաստատուիլ: »
Որպէս թէ, իրը գլխաւոր զորապետ իրեն չէր
պատկաներ հրամաններ տալ: Սոյն միջոցին հեռա-
դիրը կը կտրուի, և ամէն հազարդակցութիւն կը
դադրի:

Ֆրոսար զորապետն Սարուիի ճամբով ետ դառ-
նալու համար միտքը դրած ուղեւորութեան դըժ-
ուարութիւնը նկատելով առանձին դէպի Քա-
տէնպրօնի դիրքը յետ դառնալու տեղ, որպէս
զի Մ՛օնթօտօն և Քասթանեի զորապետներուն զօ-
րաւածիներուն հետ հոն հաստատուի, և այդ
դիրքն ալ մարաջախտն առաւօտուն իրը ընդհա-
նուր հաւաքման կեդրոն ցուցուցած էր, իր դուռն-
դովըն դէպի Մարէկմինն ուղեւորել յարմար կար-
ծեց: Իր նպատակն էր, ինչպէս ինքն ըստ, Յրդ-
դուռնին խումբերուն աջ կողմը երթալ պատե-
րադմական տեղ մը բռնել:

Գիչերը հասած էր. դժբաղդաբար ետ դառ-
նալու տտեն իրեն օգնութեան կանչած դուռնե-
րուն ոչ հրահանգ մը տուեր, և ոչ ալ իր ուղեւո-
րութիւնն անոնց իմացուցեր է: Իսկ ինքը Սթե-
ֆերէնէն գրէթէ 800 մեթր անդին գտնուած և
իր ազմամթերից սպառելուն չի նայելով դեռ պա-

տեղադնական դաշտին վրայ կեցող Լավօքուբէ զորապետին զորաբաժնին իր ետեւէն գալու հրաման զրկելէն վերջը դէպ ի Սարէկմին կուղեւորի, որուն մէջէն կանցնի Բիւթէլանժ երթալու համար:

Ահա այն ատեն մարաթախին ձեռնարկած միջոցներուն և իր զորաց ընթացքին նկատմամբ տուած անադան և անկատար հրամաններուն և Յրօսար զորապետին իրեն օգնութեան եկած զօրաբաժնիներուն առջև պահած ընթացան մահախիժ հետեւանքներն երեւան կըլնեն:

Մտնածոն զորապետին զօրաբաժնին որ իր ուղեւորութեան հրամանն առածին պէս ճամբայ ելած էր, հակառակ մեծ զորապետէն ընդունած անմեկնելի հեռադրոյն որով կիմացընէր իրեն թէ թշնամոյն կողմէն յարձակում պիտի կրէ, ժամը հինգին Սարէկմինէն դուրս կ'երնէ, գլխըրը Պուսպախ կը հասնի և շրդ գունդն բոլորովին ետ դառնալու վրայ գտնելով ժամ մէկ ու կէսին նորէն Բիւթէլանժ կիջնէ:

Քասթանեի զորապետն ժամ վեցին երկրորդ անգամ Բիւթէլանժէն ճամբայ ելնելով Յօրպախի վրայ կերթայ. հոն կիմանայ որ Յօրպախն պարսպուեր է և արշալուսին նորէն կը դառնայ իր Բիւթէլանժի բանակատեղին:

Գալով Մէթման զորապետին, որ Յրօսար զորապետին զինքը կանչելուն ժամ եօթնին պատասխանած է, իրիկուան ժամ քննին Յօրպախ կը հասնի, ուրի՛ք Սարէկմինի ճամբով հետեւեալ առաջօտուն կը մտնէ Բիւթէլանժ:

Ահա այս դժբաղդ զօրաբաժնիներն Յրօսար զորապետին երթալ ամենափոքր օգնութիւն մը քնելու համար շատ ուշ ճամբայ ելնելուն համար, բնաւ մէկէ մը հրաման չընդունելով բոլոր զիջեր դաշտերուն վրայ թափառեցան, և հետեւեալ առտուն ամենքը մէկանց և կան Բիւթէլանժ և շրդ գունդին հետ միացան:

Թէոր մարաթախն շրդ գունդին ետ դառնալու համար քնելիք ուղեւորութիւնն կանխատեսելով կըր իր զօրաբանակին միացման կէտ փատէնպոնի դիրքը ցուցնէր, որուն քովերը պիտի երթային իր գունդերն ալ իր հրամանին համեմատ, Սրիքերէնի կորստեան թշուառ հետեւանքներն, որոնք դժբաղդաբար պատերազմէն վերջը ծագած չիթութիւնէն յառաջ գալով զօրաբանակն մեծ վրդովման մէջ ձգեցին, դիւրութեամբ կըլնային անհետանալ:

Այս առաջին պատերազմը, որ մեր գունդերուն ստուարութիւնը այսչափ բարձր կերպով կը յայտնէր, չէթէ մեր զօրաբանակին բարոյականն չէր եղծեր, այլ և իր քաջութիւնն ալ կը կենդանացընէր. կարեղի էր որ պատերազմը հետեւեալ օրն վերստին կսկսէր, և այս երկրորդ պատերազմին մէջ նոր գունդեր ամենազօրաւոր դիրքի մը վրայ ամրացած և կրդ գունդն ու օգոստոս 7 ին առաւօտուն Սէնթ-Ալօրաէն դալիք պահապան զօրքն իրենց հետ ունենալով բաւական զորք կը տեսնէին:

Ահա ասի թշնամոյն վրայ տպաւորութիւնըրած բլլալու է որ խոհեմութիւն բանեցընելով,

հետեւեալ օրն ճամբայ ելեր է : Օղոստոս Ե ի պատերազմէն վերջը ծագած ընդհանուր խանդարման վրայ, հետեւեալ օրերն իր շահուն առաւելութիւնն իմացաւ :

Կարճ խօսելով, Պաղէն մարաշխտան յարմարատնն իր հրամանատարութեան ներքեւ գտնուած դունդերուն հրամաններ չընելով, պատերազմական դաշտէն հեռու գտնուելով և հետեւաբար պատերազմին վարչութիւնն ընելու անկարելիութիւն ծագելով, իր զօրաբանակին միացման կէտ չորոշելով Սրբիբէրէնի պատերազմի կորստեան հետեւեալ աւուրց մէջ անդի ունեցած խառնաշփոթութեան, մեր դունդերուն վրայ տիրած խորին վհատութեան, և այս դէպքերէն թշնամոյն ըստացած արտաքոյ կարգի բարձրութեան կատարեալ պատասխանատու է :

Մարաշխտին վարմունքին նկատմամբ գովութեան արժանի մեկնութիւն մը միայն այն մասին կրնանք տալ, երբ ուղղակի իր հրամանատարութեան ներքեւ գտնուած դունդերն չտղաւելու և զանոնք անեղծ պահելու միջոցն դործադրեց : Մեր այս կարծեաց ճշդութիւնը մարաշխտին պատեբազմին իրիկունը բրած մէկ խօսքէն կրնանք հետեւեցընել : Արձանագրուած վկայի մը ըսածին նախելով մարաշխտան Ֆրօսար զօրապետին այնքան վտանգաւոր կացութիւնը խմանալով ըսած է թէ՛ « զօրապետին զօրաբաժիններուն վնասուելէն ետքը իրեններն ալ վնասելու միտք ունեցած է : »

Եղական բան մ'ալ սա է որ մարաշխտան ինքզինքը պատասխանատուութենէ բոլորովին ազատ

կարծեր է այդ պարագայիս մէջ, ինչպէս որ բնածէ արձանագրուած սպային մէկուն « Երեք տարի է որ Ֆրօսար զօրապետան Ֆրօսպախի դիրքն կը զննէ, և զայն պատերազմի յարմար կը դատէ : ուրեմն հիմայ թող երթայ այդ պատերազմն ընէ : »

Այս պատերազմին հրամանատարն ս'վ էր : չէ՛ որ Պաղէն մարաշխտան էր :

Պաղէն մարաշխտան յիշեալ երկու խօսքերէն առաջինը յայտնապէս կուրանայ : Գաղով երկրորդին, անոր համար ալ կըսէ թէ՛ կարելի է իր մէկ շփոթութեան միջոցը ըսած ըլլալով ոյդ խօսքին ինչպէս բռնը չը յիշեր : Բայց ինչ որ ալ ըլլայ, մարաշխտան կը յայտնէ թէ ոչ իր խօսքերուն մէջ և ոչ իսկ իր մտքէն Ֆրօսար զօրապետին գէժ թըշնամական զգացում մը կամ անցած դէպքերուն պատճառ եղող դործ մը գտնուած է :

ԶՕՐԱԲԱՆԱԿԻՆ Ի ՄԷՅ ՆԱԼԱՆՁՈՒՄԸ

Այն միջոցին որ Ֆրօսպախի պատերազմին տըխուր վախճանը կայտնական ընդհանուր բանակատեղին հասաւ, հոն իմացուեցաւ նաև Ռոյալօֆէնի կորուստը և Մաք-Մահօն մարաշխտին ըստապաւ ետ քաշուիլն : Կայսրը վօսժ լերանց բըռնարարուիլն ու Լօրէնի զօրաբանակին հոնկէ դուրս խուժելն կանխաւ գուշակելով որոյնց Մէջէն և վէրտիւնէն յետս մինչև Եսալն երթալ փարիզու ճամբան յաղթողին դէմ դոցելու համար : Այս ետ քաշուելու որոշումը բնականաբար շատ տարակոյններով տիտի դործադրուէր : Յիրաւի պատե-

բազմի գրգռելու պատճառ. ըլլայէն վերջը, առան-
ջին կորուստներուն վրայ երկրին մինչև ներքը հե-
ռանալն ու գրեթէ առանց պատերազմի Լորէնն
ու Շամբաներն թշնամեոյն թողուլը խելացիի
գործ չէ:

Զորարանակն ուղեւորեցաւ ի Մէջ օգոստոս
7ին. փանրօպէր մարալախտին դունդը որ արդէն
Նանտի երթալու վրայ էր, և ուր իր զորաբաժին.
ներուն առաջինն հասած ալ էր, նորէն Շալօն եր-
թալու հրամանն ընդունեցաւ, ուր պիտի միանա-
լին իրեն Զրօսար և Զայելի զորապետաց դուն-
դերն և ընդհանուր սմբաձիգ պահեստի զօրքն:

Բայց այս որոշումն ալ մինչև նոյն վայրկենին
հետզհետէ եղած որոշմանց նման անմիջապէս ետ
ձգուեցաւ. և օգոստոս 8ին Պ. Էմիլ Օլիվիէի յա-
նուն պաշտօնէից խորհրդոյն ետ քաջուելէն յառաջ
գալիք քաղաքական վտանգներուն նկատմամբ
ներկայացուցած դիտողութեանց վրայ, նոր որո-
շում մը երեւան ելաւ: Զբո. 3բո. 4բո. գունդերն
և պահապան զօրքն Մէջի մէջ զօրաւոր բանակ
մը կազմելու յատկացան, որոնք հօն ամրանալով
Ֆրէտէրիք-Շարլ իշխանին բանակն յետս մղելու
պիտի աշխատէին, և կամ Մայլերնէն ներս խու-
ժելու բանակին մէկ կողմը կամ ետքերը պիտի
յարձակէին: Մաք-Մահօն մարալախտն ու Զայելի
զորապետը կայսրէն հրահանգ չառած Նանտին չի
պիտի դառուէին: Վերջապէս փանրօպէր մարա-
լախտը փարիզ երթալով, նոր զօրաբանակաւ մը
հօն ամրանալու պաշտօնն պիտի ունենար:


Օգոստոս 9ին, 2բո. 3բո. 4բո. գունդերն ու

պահապան զօրքը Պաղէն մարալախտին հրամանա-
տարութեան ներքեւ. Նիէտ և Մէլլ գետոց երկու
կողմերուն վրայ ամրացան, և կայսրն մեծ պա-
տերազմ մը գուշակելով պահեստի ընդհանուր
սմբաձիգ զօրքն և Պառայլ զօրապետին զօրաբա-
ժինըն իր քովը կանչելով զանոնք ալ մարալախ-
տին հրամանատարութեանն յանձնեց:

Օգոստոս 10ին, կայսրն կայսրուհիէն իմանա-
լով որ երկու ֆրուսիական բանակներ միանալով
300,000 հոգիէ բաղկացեալ մեծ բանակաւ մը իր
վրայ պիտի գան, որոշեց փանրօպէր մարալախտն
Շալօնէն բերել տալ. անոր հետ պիտի գար նաև
ժովպին հետեւակազօրքն, և Զայելի զօրապե-
տին գունդն ալ Մէջի վրայ ուղեւորելու հրամա-
նըն ընդունեցաւ:

Այս նոր խումբերն մօտ ժամանակէն ձեռաց
ներքեւ ունենալու յարկ կայսերական ընդհանուր
սպարապետին վստահութիւն կուտայ, և նոյն օրն
մեծ զօրապետն այսպէս կը հեռագրէ. « կայսրը
կը յուտայ քիչ օրէն թշնամեոյն վրայ յարձակիլ: »

Օգոստոսի տաներորդ օրն, կարելի եղածին
չափ յիշեալ ուղեւորութիւններն կը վաթացընեն:
Բայց որովհետեւտեւ այլ և այլ կողմերէն հասած տե-
ղիկութիւններուն բարբն ալ թշնամեոյն զօրաբա-
նակին թուով առաւելութեան մասին համաձայն
էին, կայսրը Օգոստոս 11ին որոշեց Մէջի աւելի
մօտ գտնուած գիրքերըն, Մօղէի ալ ակնանց վրայ
եղող ամրոցներուն թնշանօթին ներքեւ դալ հաս-
տատուիլ:



ՊԱՅՆ ԾԱՐԱՔԱԹՅԵ ԳԼԽՈՒՈՐ ՀՐԱՄԱՆԱՑՈՐ
ԿԱՆՈՒԱՆԻ

Մեր վրայ եկած անտինկալ ձախորդութեանց
և կայսեր շարունակական տարակուսանաց վրայ
որոնք բացարձակապէս իր բանակաց վարչութեան
նկատմամբ ունեցած անփորձառութիւնը երեւան
կը հանէին, և այս անփորձառութեանէն յառաջ
եկած ձախորդութեան վրայ, հասարակութիւնն
զայրացած ուղից որ զօրաբանակն կարող և ան-
կախ հրամանատարի մը յանձնուի:

Թէպէտ օգոստոս 6 էն ի վեր լորէնի միացեալ
չորս բանակներն Պաղէն մարաշխտին հրամանա-
տարութեան ներքեւ դնելու վճիռ տրուած էր,
բայց դիմուորական դործողութեանց ընդհանուր
վարչութիւնն կայսեր յանձնուած ըլլալուն հասա-
րակութեան այս խնդիրն կիսով չափ կրցաւ կա-
տարուիլ: Բայց կայսրն թէ հասարակութեան եւս
առաւել թախանձելէն և թէ իր քովն դանուած
մարդոց տուած խրատներէն ստիպեալ, պաշտօ-
նական կերպիւ ամէն իշխանութենէ հրաժարե-
լով օգոստոս 12 ին որոշեց որ Պաղէն մարաշխ-
տին Հռենոսի բանակին զլխաւոր հրամանատարն
ըլլայ, և Մաք-Մահոն մարաշխտին հրամանա-
տարութեան ներքեւ Շաթնի բանակատեղին միա-
նալիք գունդերուն վարչութիւնն ալ իրեն յանձ-
նեց:

Այս որոշումը հետեւեալ գէպքով անշուշտ
իւրութով կատարուեցաւ:

Պ. տը ֆէրաթըի՝ Աղգային ժողովոյ կողմանէ

աղգային Պաշտպան անուն ընկերութեան կառա-
վարութեանը դործողը վրայ քննութիւն մը բանա-
լու համար կազմուած յանձնաժողովոյն առջեւ
վկայութիւն տուաւ, վկայութիւն մը որ տպագ-
րուեցաւ ալ, թէ՛ Սեպտեմբեր 20 ըսի յուզմուն-
քէն տասն և ութը կամ քսան օր առաջ Պաղէն
մարաշխտին աիկինը մարաշխտին կողմանէ ե-
կաւ զինքը գտնելու և բնաւ որ կայսեր զօրաբա-
նակին մէջ դանուիլը զինուորական դործողութիւն-
ներըն կը փնտէ, և մարաշխտն պատասխանա-
տուութիւնն իր վրայ չառնիր, և ետ քաշուիլ
կուղէ: Պ. Տը ֆէրաթըի յաւելցուց նաեւ որ Բա-
լիքաս կոմսն շարունակ Պ. Պ. Ժիւլ Ֆալթի և Բի-
քարի հետ պատերազմի վսեմ. պաշտօնէին կեր-
թար այս բանը իրեն յայտնելու, և վսեմ. պաշ-
տօնեայն ալ պատասխաներ էր որ խորհրդարանի
բաղձանաց համաձայն Պաղէն մարաշխտն գըլ-
խաւոր հրամանատար կարգուած է:

Բալիքաս կոմսն՝ օգոստոս 10 ին պատերազմա-
կան պաշտօնեայ տնուանուած և մարաշխտն ալ
12 ին գլխաւոր հրամանատար կարգուած ըլլալէն
կը հետեւըրնենք թէ: Պ. տը ֆէրաթըի պատմած
տեսակցութիւնն օգոստոս 11 ին եղած ըլլալու է:

Պ. տը ֆէրաթըի յանձնարարական մասնաժողո-
վոյ միջոցաւ այս այլ և այլ արարքներն հաստատած
և յաւելցուցած է թէ մարաշխտին աիկինը իր
տուած վկայութիւնն իմանալով՝ 1872 փետրվար
28 ին Մարտիլիա եկեր զինքը գտեր ու բնորէ թէ
մարաշխտն ընտ. երբէք իր տուած վկայութեան
համաձայն բան մը յայտնած չէ, և թէ իր սեպ-

տեմբեր և էն առաջ ըրած այցելութիւնը հոստի-
տայ Կոնստանտինոպոլ քաղաքի Կոնստանտինոպոլ քաղաքի Կոնստանտինոպոլ քաղաքի
այցելութիւն մ'էր :

— Ե Մարաշխտան տիկինը միտքը աղէկ հաս-
կըցուցած է՛ր, կըտէ Գ. տը ֆէրաթի, միթէ խոր-
հէլու կարողութիւնը վրան չէր : Ես իր անձնա-
կան միջամտութեանը վրայ այնպիսի յաւելում
մ'ըրի՞ որ կարենայ հերքել : Ես կը հաստատեմ որ
իր խօսքին թարգմանն եղած եմ, և համադրած
եմ որ, որովհետեւ մարաշխտան զատի կը հաստա-
տէ, այս ընթացքին կատարելագէտ հակառակ
վարուած է :

Գ. Գ. Ժիւլ Ֆայրը և Բիքար այս դէպքին նը-
կատմամբ վիայութիւն տարու կանուելով՝ ասոնք
հրամանատարութիւնը յաղողակ մէկու մը յանձնե-
լու խնդրոյն լուծմանն համար պատերազմական
պաշտօնէին քով միջնորդելին խոստովանեցան :
Գ. Բիքար Գ. ֆէրաթիի մարաշխտան կողմանէ
ըրած հաղորդակցութիւնը և այս հաղորդակցու-
թեան ատեն պատահածներն յիշեց . իսկ Գ. Ժիւլ
Ֆայրը ըսաւ թէ այդ մանրամասն իրողութիւն-
ներն կատարեալ կերպով միտքը պահած չէ : Գ.
կոմս տը Բալիքա՞ չ'աւետի բանակին հրամանա-
տարութեան խնդրոյն համար թէպէտ պատերազ-
մական պաշտօնէին քով երթալն յիշեց , բայց մի-
անդամայն յայտնեց որ մարաշխտան հոստի անու-
նը այս գործոյն մէջ չ'իտանուի և չ'ըսուի որ մա-
րաշխտան ուզեց իր հրաժարականն տալ : Այս
խնդրոյն նկատմամբ մարաշխտան հարցաքննուե-
լով պատասխանեց թէ երբ Գ. ֆէրաթիի գործն

տպագրուեցաւ , մարաշխտան հոստի քաղաքա-
կան նպատակու մը սոյն երեսփոխանին ըրած այ-
ցելութեան տարրեր կերպով պատմուելուն վրայ
խիստ յուզուած էր, և տիկին Պաղէն որչա՞ծ էր
Մարաշխտան երթալ զՊ. ֆէրաթի իր փոփոխու-
թիւնն ուզողու հրաւիրելու համար, որն որ իր
կողմանէ յայտնի հնարք մ'էր :

Մարաշխտան ուզողակի կամ անուղղակի միջ-
նորդութեան վախճանն ինչ որ ըլլայ, իր դիմաւոր
հրամանատար անուանիլը որ ներհակութեամբ ե-
ղած բան մ'ալ էր, կայտեր դիմացը ամենադժ-
ուարին կացութիւն մը կը պատճառէր իրեն : Միւս
կողմանէ մ'ալ, որչա՞ն որ ինքք նոր դիքք մը ըս-
տացած էր, տակայն և այնպէս կայտեր վեհապե-
տութիւնը կարողիլէր զինքը որ իր վախճաններն
առանց անկէ հրաման մ'ընդունելու գործողի-
ք և այսպէսով այնպիսի ծանր պարագայի մը մէջ ի-
րեն այնպի կարեւոր եղած գործելու ազատու-
թիւնէն ալ զինքը կը գրկէր : Այս երկու պատ-
ճառներով, մարաշխտան ալ մի միայն մէկ շիտադ-
մ'ունենալ կը պարտաւորէր . այն է՝ այնպիսի
չփոթ կացութիւնէ մը և այսպիսի վտանգաւոր հը-
պատակութենէ մը ազատիլ :

Տեսնենք հիմա թէ մարաշխտան այս վախա-
դք հետեւեալ օրերուն մէջ ինչ վարմունքով գոր-
ծադրեց , զայս միայն քննելով կրնանք մարաշխտ-
ան սոյն միջոցին մէջ գործած մեծամեծ յանցանք-
ներն իմանալ :

ՅՕՐԱԲԱՆԱԿԻՆ ՇԱՂՈՅԻ ՎՐԱՑ ՆԱԱՆՔՈՒՄԸ
ԿՈՐՈՇՈՒ

ինչպէս որ վերը բնիք, օգոստոս 12 ին, մա-
րաշխիան գլխաւոր հրամանատարութեան պաշ-
տօնին վրայ հաստատուած օրն, զօրաբանակն Մօ-
ղէլի ալ ախանց վրայի ամրոցներուն առջևը, Սէյ-
լի և սասրին Մօղէլի մէջ տեղուանքը կեցած էր :
Շալօնի վրայ նահանջուող նոր որոշուած էր, և
մարաշխիան զայն դարձադրելու հրամանն ընդա-
նեցաւ :

Հոս մարաշխիան գլխաւոր հրամանատարու-
թիւնն ընդունեած ըլլալու մասին քանի մը մանրա-
մասն տեղեկութիւններ տանք : Երբ իրեն հարցը-
ւեցաւ թէ՛ :

« Ինչ պայմաններով ընդունեցաք հրամանա-
տարութեան պաշտօնն . կանոնաւոր պատերազմի
խորհուրդ մը եղա՞ւ . Հռենոսի բանակին ընդհա-
նուր կացութեան և անոր ալ թեւին գտնուած
դրիցը վրայօք տեղեկութիւն մ'ունեցա՞ք » ,

Մարաշխաւը պատասխանեց .

« Օգոստոս 12 ին կէս օրէն վերջը իմ պաշտօ-
նակալութիւնս իմացայ, և անմիջապէս ելայ կայ-
սեր գացի իրեն իմացընելու որ այդ պաշտօնն մեր
գտնուած դժուարին կացութեան մէջ ինձմէ ա-
ւելի փորձառու և յաջողակ մարաշխիաներու պէտք
է յանձնել : Այս միջոցին ոչ պաշտօնին վերաբեր-
եալ խօսք մ'եղաւ, ոչ ուրիշ առաջադրութիւն-
ներու վրայ, ոչ Վրէ՛ Յրէ՛ Դրէ՛ գունդերուն նա-
հանման վրայ, և ոչ ալ թշնամոյն նկատմամբ տե-

ղեկութիւններ տանելու վրայ : Մեծ զօրապետն
խակ, որ հոն ներկայ էր, այդ մասերուն համար
խօսք մը չբարա : Այս տեսակցութեան ատեն,
գունդերուն Շալօնի բանակատեղին կեդրոնանա-
լուն վրայ ալ բնաւ խօսք մը չեղաւ, և այս մասին
Մաք-Մահօն մարաշխիանի գրկուած հրամաններն
մեծ զորապետէն ըլլալու են . բայց ևս բնաւ
տեղեկութիւն չունին այդ մասին : »

Մարաշխիան այսպէս խօսած ատեն կերելի
թէ չի խորհիլ որ իբր գլխաւոր հրամանատար ան-
հոգութեան մէջ գտնուած ըլլալն իր խոստովանի :

ԱՅՅԻ ՄՕՁԵԻՆ

Նահանջման համար ըլլալիք առաջին շարժու-
մը օգոստոս 7 ին որոշուած էր . այն օրն ֆօֆիլի-
էր զօրապետն Մէջի կառավարիչ անուանուած
էր . օգոստոս 8 ին իր տեսչութեան տակ սկսան
չինուիլ Սէյլի և Մօղէլի այլ և այլ կողմերուն վրայ
գտնուած երեք կարգ կամուրջներն քաղքին եր-
կու . քարէ կամուրջներովն, որպէս զի զօրաբանակն
չուտով անոնց վրայէն անցնի : Այս կամուրջներն
օգոստոս 12 ին իրիկուան գէմ բնացան, և արդէն
քանի մը վաշտ զօրք անցած էին Մօղէլէն, երբ
օգոստոս 12 էն 13 լուսնալու գիշերը դեռին ճուրջ
ածելով կամուրջներուն տախտակաչարքն ու վտն-
դակասիւններն որդոյնց և անոր մէկ քանի կտոր-
ներն ալ քշեց տարաւ : Ուստի մինչև հետեւեալ
օգոստոս 15 ի առաւօտուն կրցան այդ կամուրջ-
ներուն վնասը նորոգել, և զօրաբանակն կէս օրէն

վերջը իր ճամբան շարունակել սկսաւ : Պէտք է ըսել որ այս կամուրջներն բնութիւն անհրաժեշտ չեն, և զօրարանակին, եթէ պարտաւորուած էր իր ուղեւորութիւնը փութացընել, կրնար քաղքին երկու կամուրջներուն և երկաթուղւոյն միջոցաւ ուղեւորիլ :

Մնաց որ, փոխանակ անանկ երեք կտրդ կամուրջներ չիսելու, որոնք հազիւ թէ ջուրին երեսէն վեր կը գտնուին, եթէ երկու կամ մէկ կարգ չիսուեր հաստատուն և բարձր, օգոստոս 12-13 ի ջրոյ աճումը զօրարանակին անցքը չէր խափաներ Այս թերի արամադրութիւններն թէև մարաշխասին վրայ պատասխանատուութիւն մը չեն հրաւիրեր, բայց օգոստոս 11 առաւօտուն քաղքին երեք կամուրջներէն և երկաթուղիէն օգուտ չի քաղելուն և այսպէս իր զօրարանակին ուղեւորութիւնը շարունակելու համար առանց ամենափոքր կարեւորութիւն մ'ըլլալու մինչև օգոստոս 13 ի կէս օրէն վերջը սպասելուն համար ծանր պատասխանատուութեան ենթակայ է :

Քանզի իր Մօղէլի ավափանց վրայ սպասելովը ժամանակ տուաւ թշնամւոյն, որ մինչև այն օրը բաւական հեռուէն մեր զօրարանակին ետեւէն կուգար առանց սակայն զանի անհանգիստ ընելու, որ իր զօրութիւններն հաւաքէ և գայ մեր վրայ յարձակի այն միջոցին ուր մեր զօրարանակին ամենամեծ մասն արդէն Մօղէլէն անցած էր :

Մարաշխասին անգործութեանը որչափ որ գոհացուցիչ մեկնութիւն մը չի կրնար տրուիլ, սակայն նոյնչափ ալ կայտեր անհանգստութեանը մեկ-

նութիւն չենք կրնար տալ, որն որ այս անգամ իր անհանգստութենէն խիստ նեղուելով կըստիպէր զմարաշխասին որ իր ընթացքը յառավ վարէ :

« Քանզի որ մեր զօրարանակին գրիցը վրայ կը խորհիմ, կը գրէր նա առ մարաշխասին, այնչափ վտանգաւոր կը գտնեմ. վտանգի եթէ մէկ մասն փութացընելով խառն ի խառն ետ քաշուին, ամբողջներուն մէջ ամենատակալի շիտթութիւն մը պիտի պատահի : Բան մը կայ ընելիք, եթէ թշնամին վաղը մեր վրայ չի յարձակի, ուրիշ որոշում չ'ընեն : »

Կայտն նորէն կը գրէ իրեն օգոստոս 13րդ օրը « Վայրկեան մը պէտք է կորնցընել դադարեալ ընթացքն յարատեւելու համար : »

Մարաշխասին իրեն կը պատասխանէ :

« Քօֆիլիէր զօրապետն, որ այն վայրկեանին ինձի հետ է, զիս կը հաւատէ թէ որչափ որ փութալնու թեամբ ետ ալ աշխատինք, կամուրջներն վաղն առաւօտ հաղիւ կը ըննան : »

Մոյն վայրկեանին, մարաշխասին գետին ձախ ամփանցը վրայ անցնելու յանդգնութեան մասին տարակոյս կը ցուցնէ : Մի և նոյն օրը ժամը երեկոյեան ինն ու կէսին կայտեր այսպէս կը գրէ :

« Թշնամին մօտեցած է և կուզէ մեր շարժումներն դիտել այնպէս որ եթէ գետին ձախ ամփանց վրայ անցնինք, կրնայ մեզի համար անյալող պատերազմ մը ծաղիլ. ուստի աւելի աղէկ է կամ մեր գտնուած տեղն թշնամւոյն սպասել, և կամ ընդհանուր զօրարանակի յարձակմամբ մը անօր վրայ երթալ : Այս մասին կը ջանամ անդեկութիւններ ընդունիլ, և վերջը զօրարանակին ընելիք ընթաց-

քին համար իմ հրամաններս կուտամ և անմկապէս
ընր վեհախոտութեան կիմացընեմ :

Կայսրը երեկոյեան ժամ տանըմէկին իրեն կը
պատասխանէ .

« Կայսրու հւոյն կողմէն առ ձեզ յուղարկած
ձեռագիրս յայտնի կը ցուցընէ թէ թշնամին որչափ
կարեւորութիւն կուտայ մեր ձախ ավանց վրայ
չանցնելուն . ասոր համար պէտք է ամեն բան ը-
նել : Թշնամայն վրայ պատերազմական շարժում
մը ընել պէտք է որ մեր ձախ ավանց վրայ անց-
նիլը արգելելու կարող չըլլայ :

Մարտիական անմկապէս իր որոշումը կը թու-
ղու և ձախ ավանց վրայ անցնելու հրաման կու-
տայ . բայց այն միջոցին երբ իր զորքերուն ամե-
նամեծ մասն Մօզէլէն կանցնի , թշնամին , որ մեր
կորսնցուցած ժամանակէն օգուտ քաղած էր , մեր
վերջնատաշնորհուն վրայ կը յարձակի , սակայն ա-
մենամեծ սաստկութեամբ ետ կը մղուի :

Պարսիկ պատերազմը Պագէն մարտիական հրա-
մանատարութեան մեծ փայլ տուաւ . ասի խիստ
լաւ կը ճանչենք : Մեր զորարանակին պատիւը
բարձրացուց , բայց մեր ընթացքը յապաղեցուց .
և նայն միջոցին , որովհետեւ Մէյը թողուլ կու-
ղէին , աւելի կարեւոր էր ժամանակ շահիլ քան
թէ պտտերազմը , վասն զի թշնամին մեր յա-
պաղումներէն օգուտ քաղելով աճապարանօք
պտուտաւոր շարժում մը կընէր և մեր նախնյ-
ման տեղն երթալով հաստատուելով ներքին հա-
ղորդակցութիւննիս բոլորովին կը խախտէր :

Հրամանատարն ինչ միջոցներ հրամայեց մեր

դունդերուն ընթացքը փութացրելու և թշնամ-
այնը յապաղեցընելու համար . տիրալի իրողու-
թիւն . այն վայրկենէն երբ ժամելու խնդիր մը
Գաղղոյ բաղդը պիտի որոշէր , ամենակարեւոր
զգուշութիւններն զի դորժապուեցան :

Քաղքին երկու կամուրջներուն և առժամա-
նակեաց երկու կարգ կամուրջներուն ծայրերը ,
զուգահեռականաբար Մօզէլի ընթացքին մօտը
դանուած վէրախնի ճամբուն կը հասնէին : Եթէ
անդամ մը կամուրջներն անցնէին , պէտք էր գե-
տին ձախ ավանց ընրանցը վրայ ելնել : Շատ ճամ-
բայներ կային այդ լեռները երթալու համար :

Աւալինը , որ վէրախնի ճամբան էր , լօնտ-
վիլէն և Մուլէնէն կրավթ կը հասնէր դէպ ի
վէրախն երթալու համար , երկու ուղիղ գծէ
անցնելով , որոնցմէ մին Ռըզոնվիլ ու Մար-լա-Թու-
րի , և երկրորդը Տօնքուրի և Էթէնի գծերն են :

Այս ճամբաներէն զատ կրնային նաև Լէս-
սիի կիրճերէն Բլարվիլի ճամբան անցնելով , Շա-
թէլէն , Արմանվիլէրի Մուլօ ձորէն յեկեալ լեռ-
ներն ելնել :

Այս վերջին ճամբուն ծայրը կը դանուէր նաև ,
Մէյէն դալով , Լօրիէն անցընող ամենազեղեցիկ
ճամբայ մը , որուն ուղղութեանը վրայ կը դանուէր
Սէն-Գանթէնի դըբակին պատը :

Վերջապէս կրնային Մէյէն Պրիէյ տանող մեծ
ճամբէն ալ օգուտ քաղել Վօարբիէն , Սօլիէն և
Սէն-Բրիվա-լա-Մօնթաններէն :

Յիշեալ լեռներն երթալու համար չորս ծանօթ
ճամբաներ որոշելէն ամենազիւրիս բան չկար :

Գլխազգարար, այս մասին բնառ մէկ մը բան մը հրամայուած չէ, և բոլոր զօրաց ընթացքին համար Մարտի-Յուրէն և Էթէնէն վէրտիւնի երկու ճամբայներն միայն ցուցուեր են. և որովհետեւ այս երկու ճամբաներուն երկուքին ալ ծայրը մէկէն Մէջի և Կրավթի մէջ տեղը կը հանէ, ուստի զօրաւանակն կամուրջներէն անցնելուն պէս կուգայ միահամուռ այս միակ ճամբուն վրայ կը խոնի :

Կայսեր կայսրուհիէն առնելով օգոստոս 13 ի իրիկունը մարաշխանը զրկած և ֆարիզէն եկած ազդարարութեան վրայ, որն որ թշնամոյն ի թիօնվիլ ընելիք մէկ հաւանական շարժումը կլիմացընէր, գլխաւոր զօրապետն վտանգաւոր դատեց վօտրիի ճամբէն անցնիլն. սակայն այս մասին մէջ խիստ սխալեցաւ, վասն զի բնառ տեղէ մը թշնամոյն ընելիք շարժումը իրականացընող տեղեկութիւն մը եկած չէր, և Արտէնի երկաթուղին, ինչպէս նաև հեռագիրն իրենց պաշտօնն աւարդել կը շարունակէին, հետեւաբար այդ ճամբէն անցնելու ատեննին բնառ յարձակում մը կրելու վախ չունէր :

Այս սոսկի արգելքներուն վրայ, արդելքներ որոնց վտանգները թարրա զօրապետին գրով հազարդուած էին, դունդերուն մէկ մասը հետեւեալ օրը, օգոստոս 15 ին, Լէսօի կիրճերէն ճամբայ ելաւ : Եւ այն միջոցին մարաշխան ալ հրաման տուաւ որ զօրաց պահետի պաշարն անմիջապէս բախուի, թէև պաշարն վերակացուն այս հրամանին հետեւանքներէն իրաւամբ սոսկալով խնայուց իրեն որ զօրաբանակն իր ընթացքին ժամա-

նակ կարեւոր եղած ուտեստէն կը զրկուի : Այս հրամանին կատարումն յառաջ եկած նիթական պահասութիւններն պատճառ եղան որ Պան-Սէն-Մարթէնի մէջ միայն երեք դունդերու համար տեղիք մնաց : Իսկ ընդհանուր մեծ զօրապետին դունդը, որ արդէն ճամբայ ելած էր, պարտաօրեցաւ իր ընթացքը շարունակել և հասաւ խմբովին այն լեռներն ուր Ջրդ դունդն իրմէ յառաջ հասած էր :

Հետեւեալ օրն, օգոստոս 16, Լէսօի ճամբան ալ նոյնպէս խախտուած էր : Կրդ դունդն, առ հարիէ ստիպեալ, իր ընդունած հրամաններուն չի նայելով Սօնիի ճամբան ձեռք առնուլ պարտաւորեցաւ, և այսպէս կրցաւ ժամանակին հասնիլ Ռըզօնվիլի պատերազմին մէջ փառաւոր մաս մ'ունենալու համար : Սակայն իր զօրաբաժիններէն մին որ օգոստոս 15 ին Լէսօի ճամբուն վրայ կը գըտնուէր, օգոստոս 16 ին երեկոյեան ժամ տասնին կրցաւ լեռներն հասնիլ : Կրդ դունդն ալ բոլորովին այս վիճակին մէջ պիտի դառնուէր, եթէ իր զօրապետն բարեազդաբար իր յատուկ թերտդուութեանն անայտով՝ հետեւեալ օգոստոս 16 րդ օրն Պրիէյի ճամբէն անցնելու որոշում չընէր :

Պաղէն մարաշխան իր զօրաբանակին ընթացքին նկատմամբ ձեռք առած միջոցներուն պատասխանատուութիւնը պարապ տեղը իր մեծ զօրապետին վրայ ձգել կը լնայ : Մարաշխան օգոստոս 14 ի ուղեւորութեան համար տուած հրամանաւր՝ իր զօրաբանակն Մէջէն դուրս հանած միջոցը միայն մէկ ճամբայ մը կը ցուցընէ անոր,

մինչդեռ անդին ուրիշ երեք ճամբուներ ալ կա-
մին : Ահա հոս կը յանդի ամեն ինչ :

Ահա այս առթիւ մարաջախտին և մեծ զորա-
պետին մէջ եղած անհամաձայնութիւնն խիտա ա-
ղէկ երևւան ելաւ , անհամաձայնութիւն մը որ պա-
տերազմական գործողութեանց ընթացքին նկատ-
մամբ պաշտօնի լաւութեան համար աղետալի հե-
տեւանք մ' ունեցաւ : Մարաջախտն , ըսաւ ժար-
բա զորապետը , սիիզդէն ի վեր ամէն օր զիս իր
քովէն հեռու պահեց , և այն միջոցին միայն իր ա-
ռաջողութիւններն ինձի յայտնի եղան , երբ այն
առաջադրութիւններն կատարելու համար ինձի
հրամաններ կուտար , անանկ որ ժամանակ չունէի
զանոնք հասկրնալու և վերջը մանրամասն միջոց-
ներ առաջարկելու : Մեծ զորապետն , աւելցուց
նա , հաստատապէս իր պաշտօններն անթերի կա-
տարելու տրամադրութեան մէջ գտնուելու հա-
մար , հրամանատարի մը պէտք ունի որոյ համար
մարաջախտէն զատ ուրիշ մէջու մը վրայ վստա-
հութիւն չի կրնար ունենալ : Առանց իր գլխառու-
րին հրամանին կամ կառավարութեանը բան մը չի
կրնար ընել : Եթէ պատասխանատուութիւնն իր
վրայ ըլլալով իր պաշտօնն վարէ , այն ատեն ա-
մենայն ապահովութեամբ անոր դիտաւորութեանց
կը նդաստէ : Այս պատճառաւ պէտք է որ հրա-
մանատարին և մեծ զորապետին մէջ կատարեալ
և յարատեւ համաձայնութիւն ըլլայ : Առանց այս
համաձայնութեան , որ կատարեալ վստահութիւն
մը կը պահանջէ , մեծ զորապետն բարորդին հաշմ
կը մնայ :

ձիշդ ալ այնպէս եղաւ . և անկարելի է հասկը-
նալ թէ Պաղէն մարաջախտն ու ժարբա զորապե-
տը իրարու քով իրենց գտնուած այս անհաւատա-
րիմ կացութեանը համբերելու կարող եղած ըլլան :

Երբ Գաղղիական բանակն դժուարութեամբ
լեռներն հասաւ , թշնամոյն ընթացքը դադրե-
ցրնելու կամ լաւիանելու համար պէտք եղած մի-
ջոցներն գործադրուած էին , Մէջի անդիի կողմը
չհնուած կամուրջներն , ինչպէս նաև Սէյլի և Մօ-
զէլի կամուրջներն ալ խորտակելով :

Այս տեղի ունեցած գէպքերուն առաջը առ-
նելու համար , Սէյլի վրայ եղած Մանեի և Մարլի
կամուրջներուն , Առի երկու կամուրջներուն և Մօ-
զէլի վրայ եղած Բօնթ-ա-Մուսօն կամուրջին վրայ
սկանի պատրաստութիւններ տեսնուած էին . սա-
կայն այս կամուրջներէն միայն Առի մէկ կամուրջն
ընցուած էր : Վերջապէս Նօվէանի մէջ օդային կա-
մուրջ մը կար , որ քանի մը վայրկեանի մէջ կրնար
քանդել :

Երբ թշնամոյն լրտես հեծելազորաց Պէրնիի
առջև գալը իմաց տրուեցաւ , օդառատ լճին մին-
չեւ իրիկուն և Վլին առաւօտուն Նօվէանի և Առի
ընակիչներն մեծ զորապետին քանի մ' անգամ
հեռազրելով խնդրեցին որ իրենց հրաման տայ
կամուրջներն քանդելու : Սակայն առջի երկու հե-
ռազիրներուն պատասխանուեցաւ , « գո՛ւցէ՛ » եր-
րորդ մ' ալ ~~անորոք~~ ճօղ : Միւս կողմանէ , զին-
ուորական գործողութեանց վերաբերելով չհնուա-
ծոց տեղական պաշտօնեայք ալ Գօֆինիէր զորա-
պետին երթ ալով նոյնպէս կը խնդրէին որ Առի կա-

մուրճն քանդեն . սակայն խնդիրքնին մերժուեցաւ :

Ֆրուարի և Մէջի մէջ զանուած Մօզէլի կամ մուրճներն խորտակելու պիտանութեան վրայ հրամանատարն պարտաւոր էր խորհիլ այն միջոցին , երբ զօրաբանակին յետս նահանջման շարժումը որոշուեցաւ : Յիտաւի , անկէջ վերջը Շալտի երկաթուղիով Ֆրուար և Մէջ ըլլուելիք անցքը ապահովելու պէտքը շատ հարկեցուցիչ կըլլար . այդ ճամբէն պիտի դար Երգ . դունդն ալ , որն որ սահմանագլխոյն խիստ մտոր դանուող Արտէնի ճամբէն ետքը Գաղղիոյ ներքին կողմերուն հետ հազորդակցելու և զօրաբանակին պաշար յարդարելու միակ ապահով ճամբան է : Ամեն ինչ կը հրամայէր վաշտ մը զօրք հաստատելի Ֆրուար և Թուլի ճամբուն բերանը և կամուրջներն խորտակել : Այսպէսով թշնամոյն լրտես հիծելազօրաց արշաւանքն ու ճամբան աւերելու ճիգերն կ'արդիւուէին , ճիգեր , որոնցմով Նրդ . դունդին այլ և այլ դիրքերն իմացան , և զորս հրամանատարն զանրօպէր մարտախտէն իմացաւ : Մարկրիթ զօրապետին Բօնիթ-ա-Մուսօնի վրայ ըրած յարկարժական յաճող յարձակումը կ'իմացընէ : որ զօրապետն իր ուշադրութիւնն այդ ստիպիլի անդոյն վրայ հրակրօն է . դժբաղդաբար ասոր միակ դարմանն , այն է կամուրջներուն խորտակումը հրամայուած չէ :

Որչափ որ մարտախտն մինչև օգոստոս 12 կայսեր իշխանութեան ներքև էր , սակայն դիտելարժան է որ զօրաբանակին յետս նահանջումը որոշուելէն ի վեր անդի ունեցած դէպքերուն նը-

կատմամբ չի կրնար բոլորովին պատասխանատուութենէ ազատ ըլլալ . վասն զի , օգոստոս 6 էն Մէջի մէջ կեդրոնացած շարս դունդերուն հրամանատարութիւնն իր վրայ էր . ուստի իշխանութիւնունէր իրեն անհրաժեշտ դատած միջոցներն ձեռք առնուլ , կամ դոնէ իմացընել . այս մասին նոյն միջոցին իր վրայ տիրած զանցառութիւնը կ'ապահովուէր արժանի է :

Վերոյիշեալ դէպքերուն պատճառաւ , Նրդ . դունդն չի կրցաւ խմբովին Մէջ հասնիլ . սակայն օգոստոս 13 ին ճամբան բոլորովին խախտնուած ըլլալով իր վերջին զօրաբաժնին երեք քառորդ մասերն , երկու զօրաբաժնի ումբաձիգներն , պահեստի ումբաձիգներն , պատերազմական մթերք , և այս դունդին զինուորական գործաւորներն չի կրցան միանալ , և Շալտի վրայ ինկան , ինչպէս նաև իրենց ետևէն եկող խել մը պաշարներ :

Այս պակասութիւնն առանց ջաւ մը զգալու օգոստոս 18 ին պիտի կրնային ընուլ , պակասութիւն մը որ Նրդ . դունդն իր քառորդ մասէն , իր թնդահօթներուն երեք քառորդ մասէն , իր պահեստի ուղղամթերքներէն և իր զինուորական գործաւորներէն զրկեց , ինչպէս որ վերջէն խիստ ջաւ զգային բոլոր այս պաշարներուն վրայ , որոնք եթէ ուղէին կրնային քաղաքն հասնիլ :

Այս մասին բնաւ միջոց մը ձեռք չառնուելուն համար , թշնամին մեր անհոգութենէն ծագած դիւրութիւններէն ամենայն ապահովութեամբ կրցաւ օգուտ քաղել :

Չինք կրնար առանց պատմելու անցնիլ մեր

անհոգութենէն յառաջ եկած ուրիշ մէկ ցաւայի արարք մ'ալ, եթէ Մէջի մտ կողով կամուրջներն քանդուէին, հաւանական էր որ օգոտառո Վճի առաւօտուն Մօնթիլինի դիւղաքաղաքը յարձակող թշնամւոյն նիղակաւորներն և այն լճնգանթներն որք լճնծվիլ դիւղաքաղաքին վրայ մի քանի ուռմբեր արձակելով կայսերական բանակին ուղիւսրութիւնը փութացուցին, մեզի խիստ մտ գտնուած չէին ըլլար:

Այս անյաջող եղքն մարալխասին վրայ տպաւորութիւն ընելով անհրաժեշտ դատեց, ինչպէս կըսէ ինքը իր յիշատակարանին մէջ, երկաթ ուղւոյն կամուրջին մէկ կամարին կրակ տալ վերջնապահներուն վրայ ըլլալիք մէկ նոր յարձակման առաջին առնելու համար: Սակայն մէկ կամարին քանդումը բաւական չի համարելով հետեւեալ օրը ուրիշ կամար մ'ալ քանդեց. բայց և այնպէս թէ նոյն տեղէն և թէ Մէն-գրանթէնէն այն կամուրջին տակ ական դանտուելուն ամեն յարձակումէ ապահով էր: Վէրջէն շատ ցաւեցան այն կամարներն քանդելոյնին զօրբանակին ճիւղերուն հետ ունեցած թանկադին հաղորդակցութիւննին խափանելուն վրայ, և պաշարման ժամանակ ախտեցան զանոնք նորէն շինելու: Բայց այս շինութենէն թշնամին միայն օդուտ քաղեց անձնատուր ըլլալու դաշնագրութենէն վերջը, և այս կամուրջին միջոցաւ էր որ թիօնվիլի վրայ Մէջի նաւարանէն շինութեան նիւթեր գնաց և այդ քաղաքը նորոգելու ծառայեց: Այս մասին վրայ նորէն պիտի խօսինք:

Արդարև խիստ կը ցաւինք երբ կը մտածենք որ Մէջի քովերը շինուած բոլոր կամուրջներուն մէջէն բուն մեր օգտին ծառայող կամուրջներն միայն քանդուեր են:

Պաղէն մարալխասն, կամուրջներուն քանդուելուն համար ձեռք առնուելիք բոլոր միջոցներուն պատասխանատուութիւնը յայտնապէս կը մերժէ, բայց ի լճնծվիլի կամուրջէն: Կըսէ նաև թէ, դիւսուոր զօրապետն և զինուորական գործաւորաց ընդհանուր հրամանատարն, որոնք իր սահմանագլխոյն վրայ եղած առն Մէջ կը գրտնուէին և կոյրեր առաջագրութիւններն կատարելու յատկացած էին, այդ կամուրջներուն վրայ հովելու պարտաւոր էին: Կը յաւելցընէ նաև թէ ինքը հրամանատարութիւնը ձեռք առած առն, այսպիսի պաշտօնի մը վրայ ընտրին խօսք մ'եղած չէր, և թէ պարտաւոր է ինքը խորհիլ որ այս մասին կարեւոր միջոցներ ձեռք պիտի առնուէին: Իսկ Նովլանէն և Աւէն եկած հեռագիրներուն համար ալ կըսէ թէ առոնցմէ բնու տեղեկութիւն ունեցած չէ:

ՋՕՐԱՐԱՆԱԿԻՆ ԼԵՌՆԵՐԸ ՀՅՅՅՈՒՐ

ՈՒ ՌԸՋՕՆՎՈՒԻ ՊԱՏԵՐԱՊԵՐ

Զօրարանակին Մօղէլէն անցնելու և անոր ձախտիանց վրայ եղած լիւններն կընելու համար տրբուած գէշ հրամաններն ցաւայի հետեւանքներ ունեցան: Պահապան զօրաց 2 բր. և 6 բր. գունգերն և Ֆօրթուի ու Պարայի զօրաբաժիններն օ.

դոտոս 15 ին կրցան լեռներն հասնիլ : 3 րդ. դուն. դին երկու զորաբաժիններն 'սոյն օրն իրիկուան դէմ հոն հառան : իսկ 3 րդ. դունդին մնացեալ զօրաբաժիններն ու 4 րդ. դունդն ամբողջ, հաղիւ թէ հետեւեալ օգոստոսի 16 րդ. օրն կրցան հոն հասնիլ :

Թշնամին իր ժամանակը խիստ աղէկ գործածած էր . ուստի երբ Զորթուի զորաբաժինն՝ որ վէրտիւնի ճամբուն վրայ զորաբանակին յառաջապահը կը կազմէր, ճամբայ ելաւ, իր ընդունած հրամաններուն համեմատ Թրօնովիլ երթալու համար Մար-լա-Թուրէն անցնելէն վերջը՝ Շամպլէյի առջև ամբացած մաս մը զօրաւոր թշնամեաց պատահեցաւ : Բիւրդիէօի լեռան վրայ պզտիկ պատերազմ մ'ըլլալէն վերջը, Զրօսար զօրապետին ազդարարութեան համեմատ վիճակիլ դարձաւ, և Զրօսար զօրապետն ալ 6 րդ. դունդին հետ պարտաւորեցաւ Ռըզօնովիլ մնալ :

Թշնամին աւելի զօրաբանակին ձախ կողմը կը դռնուէր : 2 րդ. և 6 րդ. դունդերուն հրամանատարներն թշնամեոյն 30,000 մարդու չափ ունենալն իմացուցած էին, և հետեւեալ օրը իրենց վրայ յարձակելնին կը յուսային (Թուրիթ մարաշախախն առ զօրապետն Պուրպարի օգոստոս 15 թուականնա) :

Պաղէն մարաշախախն այս ողբարարութեան վրայ ինչո՞ւ համար Առի և Կօրդի խրամներէն մինչև Մօզէլի վրայօք կատարեալ տեղեկութիւն մ'ընդունիլ չի հրամայեց : Այս պահասութիւնը ժամանաւելին վրայ չէ, որովհետև 2 րդ. դունդն առաւօ

տեան ժամը իննին Ռըզօնովիլ հասած էր : Ահա հոն ալ զանց առնուեր են ամենապարզ զգուշութիւններն :

Քննութեան ատեանին մէջ առնուած գլխաւոր սպայի մը վկայութիւնն ալ հաւասարապէս կը հաստատէ որ մարաշախախն օգոստոս 15 ին, ինչ որ ալ ըլլայ, վէրտիւն երթալն բնաւ որոշած չէ. իր միակ փափաքն էր կայսեր հպատակելէն ազատիլ :

« Մարաշախախն, ըսաւ, ընտաներար ինձ հետ խօսելով իր բանակն տեղափոխելու համար իրեն եկած հրամաններուն առջև անհնարին չի թուած ինչ կերեցընէր : Ինձի ըսաւ թէ աւելի աղէկ կըլլար որ կայսրն Մէօզէն գիւրութեամբ անցնելու համար իր հետը տարած կամուրջներուն տեղ ուրիշ բան մը տանէր, վասն զի, ըսաւ, Մէօզէն անցնելու պէտք մը չկայ բնաւ :

« Մարաշախախն այսպէս խօսելով, ըսաւ յիշեալ վկայն, կայսեր երթալէն վերջը Մէջ դառնալ կուզէր, թէ դէպ ի հարաւ երթալ գործել, ասի չէի կրնար ճշգրի իմանալ : »

Այսպէս մարաշախախն Մէօզէն անցնելու պէտք չէր զգար . և իր դէպ ի հարաւ ուղեւորութիւնն ալ որոշելն ու հերքելը մէկ եղաւ : Ասկէց ի՞նչ կըրնանք հետեւցընել, ո՛չ այլ ինչ եթէ ո՛չ Մէջէն հեռանալ ուզած չէր :

Զօրաբանակն հետեւեալ օգոստոսի 16 րդ. օրն իր ընթացքը պիտի շարունակէր, և ուղեւորութիւնը առաւօտեան ժամը չորս ու կէսին սրոյնած էր : Զրօսար զօրապետն իր ընթացքին նկատմամբ

մանրամասն հրամաններ չընդունելով՝ օգուտս 15
ին կէտ գիշերուն մարաշախտին կը դրէ որ ուր եր-
թալուն և ինչպէս վարուելուն նկատմամբ հրա-
մաններ ապ իրեն : Կիմացընէ նաև որ թշնամին
կորզի քով կը գտնուի :

Օգոստոս 16 ին առաւօտուն էր որ կայսրը թո-
զուց զօրաբանակն անկէ յառաջ Շալոն երթալու
և հոն վիճակին ծանրութեան պահանջած միջոց-
ներն ձեռք առնելու համար :

Կայսեր այս ուղեւորութեան վրայ մարաշախտն
իր դիտաւորութիւններէն բոլորովին ետ կիցաւ :

Նոյն առաւօտուն զինուորական զլխաւոր տե-
տուչն վօլֆ՝ վէրտիւնէն ընդհանուր բանակառե-
ղին դալով՝ զօրաբանակին վէրտիւնէն անցնելու
ատենը անոր պաշար պատրաստելու համար ձեռք
առած միջոցներն իմացուց և առաջարկեց նաև
որ Արտէնի ճամբուն վրայ ալ նոյնպէս պաշար պատ-
րաստէ : Մարաշախտն անոր այս առաջարկութիւնն
ընդունեցաւ և հրամայեց որ անմիջապէս ճամբայ
եյնէ սլլ և այլ միջոցներուն դարձադրութեանն
հսկելու համար, իմացընելով նաև որ վէրտիւն եր-
թալու համար ճամբայ եյնելէն առաջ Բոնիթ-ա-
Մուսնի վրայ ցոյց մը պիտի ընէ և քիչ օրէն ալ
վէրտիւն կը հասնի : Մարաշախտին այս խօսքերը
յայտնի կիմացըննն որ ինքք անմիջապէս վէրտիւն
երթալու նպատակ չունէր, և իր ետքէն ընկիր
որոշումներուն վրայ յատակ լոյս մը կարձակեն :

Օգոստոս 15 էն 16 լուսնալու զիշերը Լը Պէօֆ
մարաշախտին երեկոյեան ժամ տասնըմէկ օրս-
դըրեալ մէկ նստակն ընդհանուր բանակատեղին

դալով կ'իմացընէր որ իր գտնուած տեղն իր զօ-
րաբանակներէն միայն երկուքն և մաս մը տկար
թնդանօթ կը գտնուին, և կը յաւելցընէր որ 300
գունդն դեռ եկած չըլլալով կարելի է աւելի ա-
ղէկ կրլայ, եթէ մեր այս զորուալ վիճակին մէջ
թշնամեցն սպասնք քան թէ մեք անոր վրայ եր-
թանք : Մարաշախտն այս դիտողութիւնն յարգե-
լով կայսեր երթալէն վերջը հրամոն տուաւ որ
մինչև կէս օրէն վերջը զօրաբանակին ուղեւորու-
թիւնը դադրեցընեն, մինչև որ 300 և 300 գուն-
դերն ալ հոն հասնին :

Մարաշախտն այս հրամանը տուած ատեն զօ-
րաբանակին կացութեան վրայ ճիշդ տեղեկութիւն
ունէր : Առանց մանրամասնաբար այս կէտն քնն-
նելու կրնանք ջառիլ որ իր զօրաբանակն այսչափ
ուշացընելով անոր ձախ թեւին գտնուած վիճա-
կին վրայ տեղեկութիւն մը չէ աւեր :

Լը Պէօֆ մարաշախտին առաւօտեան ժամհին-
գը քառսրդ անցած դրած մէկ նստակին մէջ յի-
շուած մէկ խօսքը յայտնի կիմացընէ որ այս զգու-
շութեանց ձեռք չառնուելուն պատճառը զօր-
բանակին կացութիւնը չգիտնալէն յառաջ եկած
չէ : « Մեզի համար կորզի կողմէն վտանգ կայ, 200
և 600 գունդերուն ձախ թեւին վրայ, » դրուած
է յիշեալ նստակին մէջ : Մինչդեռ վտանգը այն
կողմն է, ինչո՞ւ համար այն կողմը ապահովելու
լանք եղած չէ : ինչո՞ւ համար տուի օրուրնէ,
թշնամեցն յարձակելու դիտաւորութիւնը կատա-
րելապէս իմացուելուն վրայ, Մօզէլի այրանցը վրայ
ի՞նչո՞ւ խրամներուն բերանը զօրք դրուած չէ, որմէ

Գերմանացիք պարտաւորուած էին անցնիլ լինե-
ներն երթալու համար :

Կարճ խօսելով, եթէ Պաղէն մարաթախան հաս-
տատ միաքր դրած էր յէրտիւն երթալ, ինչո՞ւ
համար թշնամեոյն թոյլառութիւն ըրաւ որ դոյ
յէրտիւնի ճամբան խափանէ : Ինչո՞ւ համար թէ
անմիջապէս և կամ թէ դոնէ օգոստոս 16 առա-
ւօտուն Ֆրոսար զօրապետին հրաման չըրաւ որ իր
գունդերուն գանուած տեղերուն լերանց կիրճե-
րը կատարելապէս քննէ, և ընդհատկաւ ինչ-
պէս բոլոր ուրիշ հրամանատարներուն նոյնպէս և
իրեն անորոշ հրամաններ կուտայ ամենօրեայ ծա-
նօթութիւններ առնելու համար : Ինչո՞ւ համար
Ֆրոսար զօրապետն որուն գիրքը բոլորովին զօ-
րաբանակին ձախ կողմն ըլլալով ամենէն աւելի
թշնամեոյն յարձակմանցը ենթակայ գտնուած և
անոր ներկայութիւնն իր ձեռքովը իմացուցած ալ
է, թշնամեոյն դուրս խուժելիք լերանց կիրճե-
րուն վրայ մանրամասն տեղեկութիւն ունենալու
է : Ինչ և իցէ, մարաթախան՝ որոյ ընդհանուր բա-
նակատեղին կրայթթ է, պատերազմի սկզբնառու-
թութիւնը՝ յայանող և անոր արդիւնքը վտանգի
ենթարկող յանկարծական յարձակման մը պատաս-
խանատուութիւնը չի կրնար ժխտել : Մարաթախան
այս մասին թէեւ իր կամքը կատարեց, բայց զիւ-
նալու ենք որ թշնամեոյն յանկարծակի 2րդ գուն-
դին վրայ յարձակած վտանգաւոր վայրկեանին մէջ
իր պաղարիւնութիւնն ու անվախութիւնը խիստ
չատ գովութեան արժանի եղան : Քիչ ժամանա-
կէն իր իմաստուն տրամադրութիւններն արդէն

եղած կորուստը նորոգելէն վերջը՝ նոյն օրուան
էրդ գունդին բանակատեղին մտնելովը սահման-
եալ յաջողութիւն մը արտադրեցին :

ՉՕՐԱՐԱՆԱԿԻՆ ՅԵՏԱԿԱՐԶ ԵԱՐԺՊԵՔ

Գիշերը վրայ հասած էր, պատերազմին տեղը
կեցած էինք. մեր ըրած կորստեան մեծութիւնը,
այսինքն տասնընթեք հազար մարդ, որոնցմէ հինգ
հազարականէն աւելի անձինքն 2րդ և 3րդ գուն-
դերը իրենցմէ կորսնցուցած են, մեր ձեռնար-
կած պատերազմին որչափ ծանր ըլլալն կիմացընէ :

Թշնամեոյն ըրած կորուստը մերինէն ալ աւելի
է. իր բոլոր յարձակումներն իրեն համար անյաջող
եղան : Իր հետզհետէ յարձակած գունդերուն մէջ
մեծ շփոթութիւն պիտի տիրէր : Այս վիճակին մէջ
զօրաբանակին ներքին հաղորդակցութիւններն վե-
րատին հաստատելու համար երկու միջոց կար ձեռք
առնելու, կամ թշնամեոյն վրայ յարձակիլ և զանի
Մօզէլի միւս կողմէն յետո մղել, և կամ վրոթով
դէպի Պրիէյի հիւսիսակողմը խոյ տալ : Այս մա-
սին եթէ տարակոյս մը կամ յառազուրմ մ'ըլլար,
կրնար գէշ ըլլալ մեզի համար. վասն զի թշնամին
ան ատեն կուդար զօրութեանակին ետ քաշուելու
տեղը կամրանար : Ահա առիկ այս եղաւ պատե-
րազմը որոշող կէտը :

Յիշեալ միջոցներուն առաջինը բնաւ մարա-
թախան միտքը չեկաւ. անոր վրայօք երբէք բան
մը չխօսիր ոչ իր յիշատակարանին մէջ, և ոչ ալ
իր օգոստոս 16 ի իրիկունը առ կայր յուղարկած

ծանուցադրոյն մէջ: Ասանց մէջ բնաւ խօսք մ'եւրած չէ նաև իր Պրիէշի վրայ ընկելք ընթացքին առաջադրութեանը վրայ:

Ահա առիկ մարտիտիս նոյն իրիկունը առկայսր դրկած ծանուցադիրը, որուն մէջ յայտնի կը տեսնուին իւր բոլոր դիտաւորութիւններն:

« Կրօնէի », 16 հոկտեմբեր 1911 թ. 11

Տէր Արքայ .

Այս առտու ժամ իննիկ թ չնամին ի Ուրզճակի մեր բանակատեղւոյն վրայ յարձակեցաւ: Պատեւրազմը տեսց առտու ընէ վինչև երեկոյեան ժամութիւր: Այս պատերազմը խիտ սաստկացաւ . և մենք մեծամեծ կորուստներ ընելէս վերջը դիրքերնուս վրայ մնացինք: Այս օրուան դժուարութիւննիս գլխաւորագէտ մեր պահեստի զինուց և պատեւրազմական միջերկց նուազման վրայ է . ուստի մեծ նեղութիւն պիտի կրենք, եթէ մեր զինարաններուն մէջ գտնուած միջերքներովը մնանք: Միւս կողմանէ ուտելիքնիս ալ ուազմամիջերկց նման նուազ է . ուստի վիճեցէօլի ճամբով Լէսի երթալ պարտաւորած եմ պաշար ճարելու համար: Վիւրաորեալներն այս իրիկուն Մէջ զրկուեցան: Արքայորդւոց զօրարանակներուն կեդրոնացման վրայ առնելիք լուրերուս նայելով հասնական կերեւեկ որ պարտաւորիմ Հիւսիսակողմէն վէրտիւնի ճամբան ձեռք առնուլ:

Ուտելիքնիս ալ ուազմամիջերկց նման նուազ է . ուստի վիճեցէօլի ճամբով Լէսի երթալ պարտա-

ւորած եմ պաշար ճարելու համար, կրնէ իր ծանուցադրոյն մէջ:

Եւ թէ հասնական կերեւեկ որ առնելիք լուրերուս նայելով պարտաւորիմ Հիւսիսակողմէն վէրտիւնի ճամբան ձեռք առնուլ:

Ըսել կրլայ թէ իր խօսքին նայելով Մէջ պիտի վերագառնայ և զօրաբանակին պաշարը ճարելէն վերջը ճամբայ պիտի ելնէ:

Մարտիտիս դիտաւորութիւնը՝ մի և նոյն իրիկունը կէս գիշերուն առ Պուրպաքի զօրապետն դրած իր մէկ նամակին մէջ աւելի յայտնի կերպով կը տեսնուի . « Ինչպէս որ որոշած ենք ձեզ հետ, ժամը տասնիկ կը պարտաւորիք ձեր բանակատեղիներն դառնալ զանոնք ամբողջներով: Այս օրուան թէ ուրաքսիք և թէ հետեւակ զօրաց ուազմամիջերկց սպաւուրը, ինչպէս նաև ուտելեաց պահասութիւնը չեն ներեր մեզ մեր որոշած ուղեւորութիւնն շարունակելու: Աւտի Բլաթվիլի լեռանց վրայ պիտի դառնանք »:

Ըսել է որ վէրտիւնի ճամբուն արգիլուած ըլլալուն վախը չէ զմարտիտիս կասեցընողը, այլ միայն ուտեստի և ուազմամիջերկց նուազութիւնը: Արգքններք թէ մարտիտիս այս կրիկն հաստատութեանը մէջ ճամբորտութիւն կայ:

ՌԱԶՄԱՄԹԻՅԻ ԵՒ ՌԻՏԵՍ ԿՐԲԱԻԿԵ ՌՊԵՆՈՐՈՒԹԻԻԵՐ
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ: — ՌԱԶՄԱՄԹԻՅԻՅ ՎԻՃԱԿԸ

Օգոստոս 16 ի իրիկունը՝ զօրարանակին ուրաքսիք մասին հրամանատար Սօլէյլ զօրապետն իր մեծ պաշտօնեայն մարտիտիս գրկելով բաւական

ուսումնասիրութիւնը սպառած ըլլալն անոր իմացուցեր է, յաւելցնելով նաեւ որ այդ սպառումն կրնայ մէկ երրորդ կամ կէս մասին վրայ եղած ըլլալ, և թէ աղէկ կըլլայ որ նոյն գիշերը Մէջ մարդ զրկուի նոր պատերազմական միջերջ բերելու համար: Յաւայի է որ Սօլէյլ զօրապետն ուխտաւոր զօրապետին այսպիսի խոսիլը ծանուցադիր մը զրկելէն առաջ, զօրարանակին ումարձիգ մատին հրամայող զօրապետներուն քով իր սղայներէն տեղեկութիւն առած չէ՝ թէ նոյն օրն որչափ ուսումնասիրութիւնը ըսպառեր է: Եթէ անոնցմէ իմացած ըլլար, այն ասան բոլորովին տարբեր տեղեկութիւններ պիտի զրկեր մարտավարին: այս ըստմենիս շատ դիւրին է հասկընալ:

Զօրարանակն օգոստոս 16ի պատերազմէն վերջը, ուր այնչափ շատ ուսումնասիրութիւնը ալ չսպառեցաւ, իր սպառածներուն տեղ նորէն ամբողջ միջերջը առած ըլլալով կրնար հրավորթի վրայ ուղեւորիլ: Իր ուսումնասիրութիւնն էին իննսուընէնդ հազար չորս հարիւր վաթսուս ու մը չորսէն, և տասնըմէկ հազար երեսուս երեք ու մը տասներկու քէն, ընդամէնը հարիւր վեց հազար չորս հարիւր իննսուս երեք ու մը: Թող թնդանօթիներն լեցնելու ծառայող երկաթի կտորներն ու գրնատակներն, որոնք խիտ առատ էին:

Կրավորթի պատերազմին մէջ յիշեալ երկու տեսակներէն ալ սպառուածներն քսանը վեց հազարի չի հասան: Ըսել է որ զօրարանակն օգոստոս 16ի իրիկունը առ նուազն ութսուս հազար չորս հարիւր իննսուներեք ու մը ունէր: Ուստի անկա-

րելի է ըսել որ բոլոր ուսումնասիրից մէկ երրորդն կտամ կէսն սպառած է: Մինչև անգամ քսուորդն ալ սպառած չէր:

Եթէ վերոյիշեալ ութսուս հազար չորս հարիւր իննսուս երեք ու մըներն չէին բաւեր մարտավարական իր վերտիւնի վրայ ընելիք ընթացքն չարունակելու համար, ուր նորանոր միջոցներ կըսպասէին իրեն, կրնար նոյն գիշերը քանի մը ժամուան մէջ Մէջի զինարանէն ինը հազար ու մը չորսէն և երեք հազար հինգ հարիւր ու մը տասներկու քէն անմիջապէս բերել տալ արկղերով կառքերու բեռնաւորած: Այս աւելորդ միջերջն եթէ նոյն տեղը գտնուած զինարաններէն ալ մաս մաս առնուած ըլլար, օր մը չէր տեսեր բոլորն ալ յիշեալ զինարանէն կրնար բերուիլ, ինչպէս որ օգոստոս 19ին, 20ին և 21ին քսանընէնդ հազար ու մըներէն աւելի յանձնուած էր զօրարանակին:

Այս ըստմեներնիս աւելի ճշուութեամբ բացայայտուած են զատ գլուխի մը մէջ հրազնուց վերաբերեալ ծանուցագրովն: Հոն պիտի տեսնուի որ Սօլէյլ զօրապետին նշանակած թիւերն բոլորովին տարբեր են, այն պատճառաւ որ յիշեալ զօրապետն Մէջի զինարանէն օր ըստ օրէ յանձնուած հրազնիքը չէ համրած, որոնք օգոստոս 18ին քսանը մէկ հազար յիսուսը ինը ու մըի կը հասնէին, և օգոստոս 25ին յիսուսը չորս հազար տասն և եօթը կանցնէին:

Գալով հետեւակազօրաց միջերիցը, ունի զօրքերը վերտիւնի համար ուղեւորած ժամանակնին իրենց մակազներուն մէջ իննսուսական փամ-

փուշտ ունէին, որ մէկն ալ մինչև հարիւր ութա-
կան փամփուշտ, որոնց ամենը տասը միլիոնի կը
հասնի: Իսկ ի պահէտի գտնուածներն ալ հինգ
միլիոն հինգ հարիւր հազարի չափ կրնային մատա-
կարարել: Ըսել է որ տասնըհինգ միլիոնի չափ
փամփուշտ ունեցած են պատրաստ: Սօլէյլ զօրա-
պետը այս գումարը հինգ միլիոնի կիջեցրնէ, ու
բոլորէն առ զօրականաց մախաղներուն մէջ գլու-
նուածներն ի հաշիւ դնելն զանց կընէ: Արդ յիշ-
եալ զօրապետին ըսածին նայելով մինչև սեպ-
տեմբեր 19 եղած բոլոր պատերազմներուն մէջ
ընդ ամենն հաղիւ երեք միլիոն հինգ հարիւր հա-
զար փամփուշտ սպառած է:

Ասիէց կրնանք խիստ լաւ ասպարոզանել որ
օգոստոս 16 ին կրիկունը զօրարանակն իր ընթաց-
քը շարունակել կրնալու չափ մթերք ունէր իր
քովը:

Մարաշախան որ պատերազմի փորձառու մէկն
էր, Սօլէյլ զօրապետին իրեն զրկած անզեկութիւն-
ներըն ընդունած ատեն պէտք չէր ամենեւին
յուզուիլ, գլտէր որ իր զօրարած իններէն շատե-
րըն խիստ քիչ նեղուած էին և կարելի էր գիշեր
ատեն իր սպառած մթերից տեղ մթերք մատա-
կարարել:

Ինչ և իցէ փոխանակ Սօլէյլ զօրապետին խընդ-
րանացը համեմատ Մէյէն անսկիւպէս մթերք բե-
րել տալու, հետեւեալ օրուան ձգեր է: Ըսել է
որ պէտքին խիստ տախտոզական ըլլայն չէ դա-
տեր:

ՊԻՃԱԿ ՈՒՏԵՍՏԻ

Անճնատուր ըլլալու գաշնադրութեանց քըն-
նութեան ատենին նախագահ Պարակուէյ Տիլիէ
մարաշախտէն ստորագրուած 1872 ապրիլ 12 ի գա-
տատանագրոյն մէջ կարդացինք որ զօրարանակն
բնաւ ուտեստի պակասութիւն չունէր: Ուտտի
այս մասին նորէն երկար խօսքեր և կրկնութիւն-
ներ չընելու համար թիվիէր զօրապետին քանի մը
խօսքերն հոս համառօտի կը յիշենք:

Թիվիէր զօրապետին ծանուցազիրը անհերքե-
լի կերպիւ կը յայտնէ որ ուտեստի պակասութեան
նկատմամբ մարաշախտին ըսածներուն բոլորն ալ
անտեղի են: Զօրարանակն առատ պաշար ունէր:
Սա եւս ամենէն աւելի կը յայտնէ որ ենթադրենք
թէ Պաղէն մարաշախտն ուտեստի պակասութեան
մասին երկիւզ ունենար. ապի աւելի մեծ պատ-
ճառ մը պիտի ըլլար իր վէրտիւնի վրայ ընելիք
ուղևորութիւնն փութացընելու. վասն զի բանա-
կաց ընդհանուր տեսաւ Պ. Վօլֆի վէրտիւնի բարը
ճամբուն վրայ բաւական պաշար մատակարարած
էր, և որ Մէյը իր ետեւը թողով պէտք էր այս
քաղաքը իր ուտեստի պաշարէն չի զրկել:



ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ Պ. ԳՈՒՊՍ ՏՕՄԱԻ
ԶՕՐԱԲԱՃՆԻ ԶՕՐԱՊԵՏԻՆ

Արեւիկայի Գրքեր 71

Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. — Երանուցադիրներուն ընթերցանութիւնը պէտք է շարունակել: Պ. Դիւանապետն նախ երեկուան չեկող վիճակներն թող կանչէ, և անկէ ետքը եթէ Պ. դիւանոր պաշտօնէին կողմէն հակառակութիւն մը կամ արդեւ մը չըլլայ, այս վիճակներէն շատերուն դուր հարգողած բացակայութեան պատճառներուն օրինաւորութիւնը թող ստուգէ:

Դիւանապետը առջի օրը չեկող վիճակներն կը կոչէ. ոոյն օրն ալ բացակայ գտնուողներուն պատճառները կը կարդացուին: Մօլէյլ զօրապետին առունը հիւանդ եղողներուն կարգը կը կարդացուի:

Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. — Այս վիճակներուն նոր այցելութիւն մը ըլլալու է իրենց վիճակը ստուգելու համար:

Մ. ԱՅԾ. — Վկայ մը կայ որուն այս ատեալին ներկայ գտնուելը խիստ օգտակար է, և այն է Պ. Մօլէյլ զօրապետն. եթէ իր առողջութիւնը կը ներքէ, շատ փափաքելի է որ զանի մտիկ ընենք և այսօր անոր նկատմամբ վճուական արձանագրութիւն մը չըլլայ:

Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. — Չեր խնդրոյն վրայ կը հրամայեմ որ նոր այցելութիւն մ'ըլլայ իրեն, և արձանագրութենէն յառաջ իմանանք թէ իր առողջութիւնը կը ներքէ գալու:

Մ. ԱՅԾ. — Իմ ըսածս այս է որ այսպիսի այցելութիւն մը կարելի է շատ խիստ միջոց մը երեւայ. բաւական է իրեն հարցընել թէ կրնայ յառաջիկայ շարժուման ատեանին ներկայանալ:

Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. — Զինուորականներու համար այցելութիւնն ալ, փոխադարձ այցելութիւնն ալ կանոնաւոր կերպիւ կըլլան. անոնք վարժուած են: Մի և նոյն եղանակը պիտի գործադրուի միւս վիճակի համար ալ. և եթէ իրենց հարցաքննուելու օրը եկած ժամանակ ներկայ չի գտնուին, ընթերցանութիւնը իրենց յայտնած օրը պիտի ըլլայ:

Դիւանապետը վիճակները կը կանչէ:

Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. — Պ. Դիւանապետ, հաճեցէք հիմայ ծանուցադրոյն ընթերցանութիւնը շարունակել:

ԶՕՐԱԲԱՆԱԿՆ ՌԹՁԻՐԻՅՈՒԻ ԵՒ ՍԷՆ-ԲՐԻՎԱՅԻ
ՄԷՋ ՏԵՂԸ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ

Մարտիտան իր վիճակէօրի և լէսի մէջ տեղը հաստատուին կայսեր լմացընելէն վերջը՝ ետ դառնալու համար ընելիք այսպիսի ուղեւորութեան մը վրայ տարակուսելով հետեւեալ օրն օգոստոս Ա7 որոչեց Մօնթօրի ձորին յառաջն Ռօդէրլէօրի և Սէն-Բրիվայի մէջ տեղը հաստատուիլ: Բայց և այնպէս իր Մէջ դառնալու դիտաւորութիւնը հաստատ էր, որովհետև մարտիտան զօրաբանակը իր նոր դիրքերուն վրայ տանելու հրամաններն տալէն յետոյ իր սպայներուն երթալով ըսու անոնց:

« Թէ որ ձեզմէ մին աւելի աղէկ միջոց մը կը տեսնէ՝ ձեռք առնելու, պատրաստ եմ իր խօսքը

մտիկ ընելու : Բայց պէտք է զօրաբանակն աղաւտել, և ասոր համար Մէջ վերագաւանալ :

Այս խօսքը որ իր դիտաւորութեան խորը կը յայտնէ, գրեթէ համաձայն չէր հետեւեալ 3428 թուահամարու հեռագրոյն հետ, զոր օգոստոս 17 ին կէս օրը չորս ժամ քսանըհինգ վայրկեան անցած դրկեց առ կայր :

ՊԱՂԷՆ ՄԱՐԱԶԱԹՅՆ ԱՌ ԿԱՅՈՐ, Ի ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆ
ՇԱՂՕՆԻ

Մէջ, 17 Օգոստոս

« Պատիւ ունեցայ երէկ իրիկուն Զեր վեհափառութեանն իմացընելու այն պատերազմն զոր առաւօտեան ժամ իննէն մինչև երեկոյեան ժամ ինը ըրինք Բրուսիական բանակին հետ, երբ նա ի վիճակի մեր Տօնքուրի դրիցը վրայ յարձակեցաւ : Մոյն պատերազմով թշնամին ետ մղուեցաւ, և դիչերը մենք մեր նախկին դրիցը վրայ անցուցինք : Թէ ոմբաձիգ և թէ հետեւակի զօրաց յիշեալ պատերազմին մէջ բրած մթերքի սպառումը և թէ ընդ հանուր զօրաց մնացած միայն մէկ օրուան ուտելիքն զիս պարտաւորեցին Մէջի մօտե՛նալ մեզի ազգմամթերք և ստեստ մատակարարելու համար :

« Հռենոսի բանակն Սէն-Բրիվա-լու-Մօնթանի և Ռօզէրիէօյի մէջ տեղը գտնուած դիրքերը հաստատեցի : Կը խօրհիմ որ պիտի կրնամ վաղը չէ միւս օր ուղեւորիլ ճամբաս աւելի հիւսիսակողմը ուղղելով, և դալ Օտիօմօնի գրից ձախ կողմին վրայ հաստատուիլ, ուր թշնամին կրնայ իր բա-

նակը ամրացընել, վէրաբունի ճամբան վակելու և մեր ուղեւորութիւնը յապարեցընող անօգուտ պատերազմներէն ևտ կենալու համար :

« Արաէնի երկաթուղին միշտ ազատ է մինչև Մէջ . սակեց կիմացուի որ թշնամոյն միտքը Շալօնի և Փարիզու վրայ յարձակիլ է : Երկու արքայորդւոց զօրաբանակացը միութեան վրայ միշտ խօսքեր կըլլան : Երէկ Ֆրեսէրիք-Շարլ իշխանն ու Սթայնմէյ զօրապետն մեր աչքին առջին էին :

Մի և նոյն միջոցին մարալախան պատերազմի պաշտօնէին ալ հետեւեալն հեռագրեց . « Օգոստոս 14 ին թշնամին Պորնիլ առջև մեր վրայ յարձակեցաւ . այն վայրկենին երբ մեր զօրաբանակին մէկ մասն արդէն Մօզէլի ձախ ավանց վրայ հասած էր : Երէկ, օգոստոս 16, առաւօտեան ժամ իննէն մինչև երեկոյեան ժամ ինը Տօնքուրի և վիճակի միջոցը մեր գանուած դրիցը վրայ Ֆրէտէրիք-Շարլ իշխանին և Սթայնմէյ զօրապետին միացեալ գունդերուն դէմ պատերազմեցանք :

« Թշնամին մեծ կորուստներ ընելով ետ մղուեցաւ : Մերիններն ալ բաւական կորուստ ըրին :

Մարալախան հաստատ միտքը դրած որոշումը իր կայսեր հաղորդած ուղեւորութեան առաջադրութեանը կատարումը խիստ պիտի դժուարացընէր : Մարալախան իր զօրաբանակը առջի օրը ամենայն փառաւորութեամբ պահպանած դիրքերնին վերադարձընելով՝ դիւրութիւն կուտար թըշնամոյն որ դայ էթէնի և Պրիէյի ճամբայներուն վրայ ամրանայ : Աւելի զարմանալին սա է որ, փոխանակ պատերազմական դէպքերն պտիւնցընե-

լու, այս կերպով անհրաժեշտ պատերազմ մը պիտի ընէր դէպ ի հիւսիսակողմը իրեն ճամբայ բանալու համար: Օգոստոս 17 ի ուղեւորութիւնը զօրաբանակին ի Մէյ վերադառնալու նախապատրաստական մէկ ձեռնարկն չէր, կամ, ինչպէս մտաւորականն ալ կրէ իր յիշատակարանին մէջ, Արման վիւէրի դրեցը վրայ ամբանալով թշնամոյն մեծամեծ կորուստներ կրել տալէն վերջը անկէ դուրս ելնելու համար զինուորական վարժ պայմաններուն երբեւ պաշտպանողական պատերազմ մ'ընել առաջադրած էր: Ահա այս երկու քէն մին ընտրելու վրայ է ինգիլը:

Եթէ օգոստոս 17 ին իրիկուան դէմ Մանեան հրամանատարին ձեռքով կայսեր ուղղած ազդարարութեանցը, և կամ, ինչպէս վերջէն պիտի տեսնենք, մի և նոյն ատեն իրէ վալի զինուորական տեսչին՝ երթալ Լօնկոյսն և Արդէն ուտեստ պատրաստելու համար տուած հրամանին որ նայինք, կրնանք իր Մէյէն հեռանալու դիտաւորութիւն ունենալը վկայել. իսկ թէ որ ասոնցմէ զատ ըրածներուն որ նայինք, չենք կրնար բնաւ ասանկ վճիռ մը տալ: Ուստի այս մասին եթէ միայն իր օգոստոս 17 ի և 18 ի օրերուն հրամանացը որ նայինք, կրնանք իր ճշմարիտ դիտաւորութիւնն իմանալ:

Եթէ մարաշխտան ճշմարտապէս մտադիր ըլլար դէպ ի երկրին ներսն ուղեւորելու, բարձր ուշադրութիւնն իր զորաբանակին ալ թեւէն վրայ կը հրաւիրէր. վասն զի իր ամենէն աւելի ակարգիրք ունեցողն ան էր, և պէտք էր որ իր լուսդոյն գունդերն, պահեստի զօրքերն և իր քաջ

ձիւորներն այն կողմը ամրացնէր: Արդ կր տեսնենք որ մարաշխտան փոխանակ այսպէս ընելու՝ Քանրօպէր մարաշխտան գունդը, որ օգոստոս 16 ի պատերազմին մէջ բաւական կորուստ ընելով խիստ քիչ հրազէնքով, առանց պաշարի և սուսնց իր դանուած տեղը հաստատապէս մնալու համար պէտք եղած գործիքներն ունենալու մնացած էր, այդ տկար դունդը Սէն-Քրիվայի լեբան վրայ իր զօրաբանակին գիրքին բերանը տարեր ամրացուցեր է:

Դպով պահեստի զօրաց, զասնք ալ իր զօրաբանակին ձախակողմը Մէն-Քանթէնի դժուարամտոյց լեբանց վրայ հաստատած է, որոց վրայ մշտտեւ ամրութիւնք կը գտնուին: Իսկ իր հեծելազօրքն, զորս Մօնլոյի ձորին խորը հաստատած էր, բռնի անգործութեան դատապարտած է. ինքն ալ իր ընդհանուր բանակատեղին Քլաթվիլ հաստատուած էր: Մարաշխտան այս տրամադրութիւններն Մէյէն հեռանալու նպատակ մը չի յայտնելէն զատ՝ թշնամոյն ջաղքին և զօրաբանակին մէջ տեղուանքը յարձակելու համար իր ունեցած դրեթէ անտեղի երկուղբ երեւտն կը հանեն: Այս մասին մարաշխտանն ունեցած վախը այնչափ մեծ ըլլալ կերելի որ օգոստոս 17 ին կէս օրէն վերջը վայրկեան մը խորհուրդ յայտնեց է իր զօրաբանակն նոյն իրիկունը կամ դիւրը օգոստոս 19 րդ օրը ամրացած գիրքերն տանիլ հաստատելու ամրոցներուն պատասպարութեան ներքեւ:

Որզօնիլի պատերազմին իրիկունը և հետեւ

եայ առ առտուն մարալախտին լուծենէն յառաջ եկած տառապանքը՝ օգոտտոս 17 ին կայսերական բանակատեղիէն առ զօրապետն ֆոֆինիէր քաչուած հետևեալ հեռագրոյն մէջ քաջ կը տեսնուի .

« Զօրաբանակին վրայօք լուրեր ունիք . շուտով իմացուցէք առ Նորին վեհափառութիւնն ի բանակատեղին Շալճի » :

Յիշեալ զօրապետն այսպէս կը պատասխանէ .

« Երէկ, օգոտտոս 16, կրավրթի կողմը մեծկակ պատերազմ մ'եղաւ . սոյն պատերազմին մէջ թէև յաղթեցինք, բայց մեծ կորուստներ ըրինք : Մարալախտն ի Մէջ կեդրոնացած և իր բանակատեղին Յլաթ վիլի լեբանց վրայ հաստատած է :

« Պարբիմատ և վառօք կուզենք . Մէջը զրեթէ պաշարուած է » :

Այս ցաւալի լուրերն՝ մարալախտին օգոտտոս 17 ին իրիկունը Մանեան հրամանատարին միջոցաւ զրկած ծանուցադրոյն մէջ հաստատուած են :

Մէջ, 17 (հետոս)

« Պատիւ ունիմ հաստատել կայսեր իմ այսօրուան թուականաւ հեռագիրս, և այս նամակին հետ զրկել նաև այն նամակին օրինակն զոր երէկ իրիկուն ժամ տասըմէկին զրկեցի առ Զերդ վեհափառութիւն » :

« Այսօր խօսք կայ թէ Բրուսիոյ թագաւորը Բանձ կամ Օսլինիի դղեակը պիտի դայ, իրեն հետ ունենալով հարիւր հազար հողիէ բաղկացեալ զօրաբանակ մը . և թէ՛ բազմաթիւ գունդեր տեսնուած են վէրախնի ճամբուն և Մօն-սիւր-

լէ-թօթի վրայ : Բրուսիոյ թագաւորին դաշնուեան լուրին աւելի հաւանականութիւն տալ կրցող բան մը եթէ կայ, այն ալ սոյն վայրկենիս մէջ՝ ուր ևս Զեր վեհափառութեան պատիւ ունիմ զրելու : Բրուսիացւոց ֆէօլճօյի ամբողջն վրայ յարձակում մ'ընեղին է : Անոնք թնդանօթներ հաստատեցին Մանեիկ, Մէրոն-լը-Հօյի և Բույեիլի անտառին մէջ : Սոյն վայրկենիս մէջ բաւական սաստիկ թնդանօթ ալ կը նետեն :

« Պալով մեզի, մեր գունդերուն ուտեստը խիստ քիչ է : Պիտի ջանամ ուտեստ բերել տալ Արտէնի ճամբով որ տակտին ազատ է : Պ. Սթլէյ զօրապետն, զոր Մէջ զրկեցի, ինձի կիմացընէ որ հոն քիչ ուղմամթերք կը գտնուի, և միայն ութը հարիւր հազար վամփուշտ կրնայ մատակարարել մեզ, որն որ մեր զօրաց համար մէկ օրուան մթթեղք է : Նոյնպէս, կըսէ, չատ քիչ ուսմբ կայ հոս, և վերջապէս կը յաւելցնէ որ հարուստական գործարանն փամփուշտ չինելու կարեւոր նիւթերն չունի : Պ. Սթլէյ զօրապետն պարտաւորած է փարիզէն խնդրել ըտլոր պատերազմական պիտոյքներն . բայց միթէ ժամանակին պիտի կրքնայ հասնիլ : Ֆրոսար զօրապետին գունդերն իրենց բանակը տեղ մը հաստատելու համար կարեւոր եղած կա՛հարափքն չունին և չեն կրնար իրենց կերակուրներն եփել : Ամեն ջանք քնելու ենք մեզի ամեն կերպ պաշար հայթայթելու համար, որպէս զի, եթէ կարելի ըլլայ, երկու օրէն ճամբայկա շարունակենք : Պրիլի ճամբան ձեռք պիտի առնում . բնաւ ժամանակ կորսնցընելու չի-

գար, եթէ նոր պատերազմներ մեր այս որոշումները ի դերեւ չի հանեն :

« Օգոստոս 16 ի պատերազմին մէջ մեռնող Բրուսիացի գեղապետի մը վրայէն գտնուած պատերազմական հրամանի մը թարգմանութիւնն Ձեր վեհափառութեան կը խրկեմ :

« Այս օրուան թնամեոյն բոլոր չարժուածներն Ձեր վեհափառութեան շուտով կիմացընեմ :

« Սոյն դրութեանս հետ կը զրկեմ նաեւ բանասիրին թնդանօթածիդ զօրաց հրամանատար Պ. Սօլէյլ զօրապետին մէկ տեղեկագիրն, որով յիշեալ զօրապետը Մէջի մէջ թէ թնդանօթածիդ և թէ հետեւակ զօրաց համար ռազմամթերք պատրաստելու շատ միջոցներ չի գտնուիր կիմացընէ » :

Սոյն նամակը համառօտենք. հոս խիստ քիչ ռումբ կը գտնուի. փամփուշտներ, ինչպէս նաև դանոնք պատրաստելու միջոցներն կը պակօին : Մէջ ութը հարիւր հազար փամփուշտ միայն կրնայ պատրաստել, որն որ մեր զօրաբանակին համար օրուան մը մթերք է : Գունդերուն ուտեստը խիստ քիչ է, պիտի փութանք Արտէնի ճամբով ուտեստ բերել տալ որն որ տակալին ազատ է :

Ըսել կըլլայ որ Մէջի մէջ ո՛չ ուտեստ կայ և ո՛չ ռազմամթերք. վառօդն ու պարօրմատը կը պակսին. ահա այս է յիշեալ վերջին և տխուր հեռագրալրոց բովանդակութիւնը որք Գաղղիոյ մէջ ապշութիւն և յուզմունք պատճառեցին և ամենուն մտքին վրայայնպէս խորին զայրոյթ մ'ապաւորեցին որ սեպտեմբեր 4 ի փոթորկին առաջնորդն եղաւ :

Բայց սակայն ուտեստն որչափ որ փափագուա-

ծին չափ առատ ալ չէր, ի վերայ այս ամենայնի դարձեալ չէր ալ պակսեր, որովհետև Մէջի մէջ գտնուած պաշարոյն երկու հարիւր վաթսուէն հազար մարդ մինչև եօթանասուն օր կրնային ապրիլ : Նմանապէս ռազմամթերք ալ չէր պակսեր, որովհետև այս ցաւալի լուրէն վեց օր վերջը, այսինքն՝ օգոստոս 22 ին, Սօլէյլ զօրապետն պատուազով սկզբնաւորութեան ժամանակ ունեցած մթերքից չափ դարձեալ մթերք մատակարարելին յայտնած է :

ԳԼՈՒԽ Բ.

ՍԷՆ-ԲԲԻՎԱՅԻ ՊՍԵՆՐԱԶՄԸ

Օգոստոսի 17 րդ օրը՝ զօրաբանակն Մօնթոյի ձորին արեւմտեան կողմը գտնուած լեռանց դադաթներուն վրայ ի պատերազմ պատրաստուեցաւ : Իր ձախակողմը Թօղէրիէօյի լեռանց խոռոչները կեցած էր, և անկողմն ալ մինչև Սէն-Բրիվոյի գիւղաքաղաքին անդիւի կողմը Օրեի և Մօղէլի մէջ տեղը գտնուած երկրին բարձրութեանը վրայ տարածուած էր : Սէն-Քանթէնի ամրոցին պատը Սէն-Բրիվոյի ետեւը լեռնէն կը զատուի. և իր բոլոր տիրը կը գտնուին Մօնթոյի և Սօլէի ձորերը : Յիշեալ գիւղակին պատին սկսած տեղէն զօրք ամրացընելն խիստ ամենակարեւոր էր. որովհետև նոյն միջոցին մարալապտին ձեռնարկելիք կեդրոնացման չարժումը զօրաբանակն Սէն-Քանթէնի լեռանց

վրայ պիտի տանէր, և մեր դէպի հիւսիսակողմը երթալու համար ընելիք կրկին ուղեւորութիւնն ալ միայն յիշեալ լերանց միակ բերանը դտնուելովն ի կարելի կըլլար, այդ բերանը մեր ձեռքը մնալով: Այս ամենայայտնի նկատումներն մարտաջախտին փորձաւութենէն չէին կրնար սղորդիլ: Արդ եթէ իր հրամայած արամադրութեանց մէջ իր զորաբանակին ալ թեւէն դտնուած դիրքերն ամենէն աւելի պաշտպանելու յատուկ որոշում մը չի տեսնուի, իր այս վարմունքին ի՞նչ մեկնութիւն տալու է: Ըսել կըլլայ որ Մէջէն ընաւ չի զատուելու հաստատ որոշում մ'ըրած էր, որն որ արդէն իմացուած ալ է:

Բայց և այնպէս զորաբանակն իր դիրքերուն վրայ բարեկարգութեամբ ճակատուած էր. պահապան զօրքն ու պահեստի ումրաձիգներն Սէնֆանթէն խմբուած էին: Անշարժ կըսպասէին թըշնամուոյն որուն գունդերն առտուրէն սկսան երեւիլ: Պատերազմը սկսաւ ժամ տասնըմէկին և մինչև իրիկուն տեսց թշնամուոյն յաջորդական յարձակումներովն որոնք հետզհետէ միշտ զօրաբանակին աջակողմը տկարացընելու վրայ էին: Ինչպէս որ ամէն կերպիւ յայտնի ալ էր, թըշնամին միայն մեր զորաբանակին աջակողմը կը ջանար տկարացընել, վասն զի ուրիշ կողմէն չէր կրնար այնչափ դործ տեսնել: Ընտուհ հազար հոգիէ բաղկացեալ երեք գունդեր երկու հարիւր ութսուն թնդանթներով յարձակեցան Յր. գունդին վրայ, որն որ անոնց դիմադրելու համար քրտանը վեց հազար հոգի միայն ունէր եօթանասուն

թնդանթով, և զանոնք ալ դործածելու համար բուական մթերք չունէր իր քովը. զարմանալին սա է որ յիշեալ գունդին գտնուած տեղը *Հարմար* բուած թնդանթներէն գործածելու յարմար դիրք մ'ալ ունէր, սակայն իր քովը այս նոր տեսակ թըշնդանթէն գոնէ մէկ հատ մ'ալ չկար: Քանրօպէր մարտիտան դիւցազնաբար դիմադրեց. և արդարեւ թշնամին պիտի նուաճեր, եթէ պահապան զօրքը ու պահեստի ումրաձիգներն ժամանակին իրեն օգնութեան զրկուէին: Բայց զիսաւոր հրամանատարն՝ որուն արամադրութեանց ներքեւ կը գտնուէին պահեստի զորավաններն, պարտաւոր էր պատեհ առիթը ձեռքէ չի փախցընելու համար իր զօրաբանակին կացութեանը վրայօք ճիշտեղեկութիւն մ'ունենալ: Ասի ի՞նչպէս կրնար ըլլալ, մինչդեռ իր ընդհանուր բանակատեղիէն ժամ երեքին մեկնեցաւ և մինչև իրիկուն պատերազմի գալտին վրայ չերեցաւ:

Արդ՝ այն միջոցին երբ սաստիկ պատերազմ մը տեղի ունենալով Մէջի զօրաբանակին բազրը պիտի որոշուեր, մարաջախտին վրայ տիրած այս արտաքոյ կարգի վարմունքն խիտ մտանքընտուելու արժանի է: Այս մասին պատճառարան ետ ճշդութիւն մ'ունենալու համար պէտք էր իմանալ թէ նոյն միջոցին մարաջախտն ի՞նչ հազորագակցութիւններ ունեցաւ. գունդերուն այլ և այլ հրամանատարացը, հետ, և ինչ տեղեկութիւններ աուաւ կայսեր պատերազմական արկածից վրայ:

Առաւօտեան ժամ վեցին տեսնենքը՝ երրորդ գունդի ընդհանուր բանակատեղիէն բազմաթիւ

վաչտեր տեսնուեցան, որոնք կրտլութի ետեւը գտնուած գաչտավայրներուն մէջէն ցիրեւցան ուղեւորելով ձախ կողմէն ալ կողմը կերթային մեծ պտուտաւոր շարժում մ'ընելով: Լը Պէօֆ մարաշխան խիստ հեռուէն անոնց այս շարժումը տեսնելով չուարած գլխաւոր զօրապետին իմացուց, և նա ալ պատասխանեց որ իր գրիցը վրայ հաստատ կենայ, և զայն ամենայն զօրութեամբ և փութով պահպանէ:

Առաւօտեան ժամը իննին՝ երրորդ գունդին հրամանատարը գրով մարաշխանին կիմացրնէ որ երկրորդ և երրորդ գունդերուն ծիրը դէմը նորէն բաւական գունդեր երեւցած են: Պագէն մարաշխան կէս օրը կէս ժամ անցած ֆանրօպէր մարաշխանին կիմացրնէ զայս և պատուիրելով իրեն որ Սէն-Բրիվայէն չմեկնի, ռազմամթերք զըրկելուն ալ անոր կը ծանուցանէ:

Ժամը տասը քառորդ անցած՝ ֆանրօպէր մարաշխան կիմացրնէ գլխաւոր զօրապետին որ թըչնամուսյն քանի մը գունդերն երեւցած են ի վախիբի:

Կէս օրուան դէմ ալ կիմացրնէ որ բաւական ծանր պատերազմ մը կըլլայ և քովը խիստ քիչ ռազմամթերք գտնուելուն համար թնդանօթ չը պիտի կրնայ գործածել: Պագէն մարաշխանն իրեն պատասխան կը զրկէ որ հրաման կուտայ պահպան և թնդանօթաձիգ զօրաց մէյմէկ զօրաբաժիններուն որ իրեն օգնութեան երթան:

Ժամը մէկին Լը Պէօֆ մարաշխան կը հեռագրէ որ խիստ բազմաթիւ գունդեր ընդհանուր յարձակում մը կըսպառնան:

Ժամ մէկ ու կէսին՝ ֆանրօպէր մարաշխան Սէն-Բրիվայէն չմեկնելու համար իրեն հրաման բերող սպային ձեռքով կիմացրնէ որ կրցածին չափ և ունեցած ռազմամթերքից բաւելուն համեմատ դէպ պիտի դնէ: Բայց իր քովը գտնուածներն կըսպառին և աակաւին նոր մթերք ընդունած չէ:

Ժամ երկուք ու կէսին Շալիւ թնդանօթաձիգ զօրաց գնդապետը մարաշխանին կը հեռագրէ որ արդէն խնդրուած ռազմամթերքն չուտով զրկէ իրեն. և եթէ կարելի է, ինքն անձամբ կրկին մթերք բերէ: Այս սպայն մարաշխանին քովը երթալով ալ թեւին վիճակը թղթի մը վրայ մանրամասնաբար իրեն կը բացատրէ, և վեցերորդ գունդին գրից ծանուցութիւնն ու սոյն գունդին իր գլխաւորին պատճառած անհանգստութիւններն տեղն ի տեղը կը բացատրէ: Աոր վրայ չորս արկղ առումը առնելով կը մեկնի:

Ժամ հինգին Յրդ գունդին հրամանատարն հետեւեալ գրութիւնը կը զրկէ առ գլխաւոր զօրապետին:

«Թշնամին 3րդ գունդին վրայ յարձակելէ դադրելով աւելի յառաջ Յրդ գունդին աջկողմը դացած է. իր քովը բազմաթիւ հրադէնք գտնուելուն մերինը զրկէ սպառեցաւ: Ռազմամթերք չունինք »:

Վերջապէս, ժամը եօթնին՝ ֆանրօպէր մարաշխան կիմացրնէ որ Յրդ գունդն հարկադրուած է Սէն-Բրիվայէն մեկնելու. վասն զի կրակի արուած ըլլալուն հոն կենալն ալ անկարելի է:

Ինչպէս որ կը տեսնուի գլխաւոր հրամանատարը

կատարելագէտ և շարունակ թոյլտուութիւն ըրած է թշնամեոյն իր զորտրանակին ամ թեւ ին վրայ յարձակելու, Երբ դունդին հրազէնն տրկարացուցեր է, և անոր ռազմամթերք չի դրկելով՝ պարտաւորեր է զանի իր թնդանթներն չի գործածել:

Ատեանը՝ Պաղէն մարաշխտին օգոստոս 1877. օրը ֆանրօպէր մարաշխտին հետ ունեցած հաղորդակցութեանց նկատմամբ առած տեղեկու թիւններն մարաշխտին ներկայացուց. և երբ իրեն հարցուեցաւ թէ Երբ դունդին գտնուած կացութեանը երբէք դարման մը խորհած էր, հետեւեալ պատասխանն տուաւ.

« Առաւօտուն ֆանրօպէր մարաշխտին հրահանգ տուած էի, որով կը հրամայէի իրեն թէ երբ թշնամին Մէն-Բրիվայի վրայ յարձակի, զօրաբանակին անկողմն ետ քաշէ, և ինձմէ խնդրած բաները նոյն օրը դրկեցի »:

Ահաւասիկ այս մասին մարաշխտին Երբ դունդի հրամանատարին գրածն:

« Ենթադրենք որ թշնամին մինչև ձեր վրայ գալով ուղղակի Մէն-Բրիվա-Լա-Մօնթանըի վրայ յարձակի ուղէ, ամեն պաշտպանողական կարևոր միջոցներն ձեռք առէք հոն հաստատուն կենալու համար, և անկողմին թոյլ տուէք որ իր տեղն փոխելով երթայ զօրաբանակին ետեւի կողմի դիրքերը հաստատուի, գիրքերն զորս թշնամին կը լանայ զննել:

Պաղէն մարաշխտին ուղղակի Երբ դունդին զրկած օգնութիւններն էին երկու դունդ պահեստի զօրք և քանի մը արկղ ռումբ որոնք ֆանր

օպէր մարաշխտին խնդրանացը և բանակին կացութեան ծանրութեանը բնաւին չէին համապատասխաներ:

Գանք հիմա մարաշխտին նոյն օրը ըրածներն պատմելու: Առաւօտուն իր ընդհանուր բանակտեղիէն Վեկինի: Ժամ երկուք ու կէսին միջոցները ձի կը հեծնու, և փոխանակ բոլոր իր սպայները հեան առնելու, որոնք բազմաթիւ ըլլալով կրնային շարունակաբար պատերազմին վրայօք իրեն լուրեր բերելու, ժարրա զօրապետին առաջադրութիւններն կը մերժէ և միայն քանի մը բուսպ կառնու իր հետը: Նախ և առաջ Մէն-Քանթէն կերթայ և հոնկէ կրնայ տեսնել երկրորդ և երրորդ դունդերուն հաստատուած դիրքերն:

Պատերազմը սաստիկութեամբ տեղի կունենայ. միշտ թնդանթի ձայներ կը լսուին: Անկողմին վրայ ահագին մուխեր կը տեսնուին այն անտառներուն վրայէն որոնք այս կողմի հօրիզոնն սահմանափակած էին: Չափակողմը՝ դէպ ի ժիւտի, թըշնամեոյն գունդերն կը տեսնուին: Մարաշխտն այս կողմին ուղղութեանը վրայ քանի մը թընթանթ կը զընէ, որոնք բանի մը չեն ծառայեր: Ժամը գրեթէ չորսն է: Մէն-Քանթէնէն կը մեկնի, կիջնէ: Լէստիի կիրճը, ճամբան Պուրպաքի զօրապետին օգնական զօրաց հրամանատար Պօմօն գընդապետին կը պատահի, և կը պատուիրէ: անոր ըսել իր զօրապետին որ ֆանրօպէր մարաշխտին իմացընէ թէ ալ չի կրնար իրեն օգնել, և իր բանակը վերադառնայ: Անի քանի մը քայլ անդին իր ճամբուն վրայ Պուրպաքի զօրապետին հրաման

նատար սպայներն կը դանէ որոնք իր քովը կու գան . անոնց տլ կըտէ թէ ամեն բան լննցած է և ալ բանակին վերադառնան : Յետոյ կենէ Բլաթ վիլի մարտկոցին յառաջը՝ տեսնելու համար թէ ստորին Մողէլի դաշտալայրին մէջ ինչ կը դառնայ . հոն կը տեսնէ Սոլնիի ճամբուն վրայէն փոյի մը , և վախնալով որ չըլլայ թէ այն կողմը թըչնամուտն դունդերն գտնուին , քովը երկու վաշտ պահեստի զօրք կը կոչէ : Վերջէն իմանալով որ յիշեալ փոյին՝ փութով դէպ ի Մէջ երթալու վրայ եզոզ պատերազմական հանդերձանքներէն և առանձին դունդերէն պատճառած է , կը պուսայ . « ի՞նչ ընելու է այսպիսի դունդերուն » , և ժամը եօթնուկէսին նորէն կիշնէ ընդհանուր բանակատեղին :

Այն օրը մինչև իրիկուն , բնաւ մէկը լուր բերելու չի զրկեր . վեցերորդ դունդին պատահած և հետզհետէ ծանրացող վտանգներուն համար աղդարարութիւններ կընդունի ու երէք չի յուզուիր , և անոր օգնութիւն մ'ընելու նպատակաւ քսան արկղ ազդմամթերք զրկելն բաւ կը համարի , որոնցմէ տասներկուքն հրազէնք կը պարունակէին . ասոնք ալ պատերազմը լննելու վայրկենին տեղերին կը հասնին : Այս ազդմամթերքն քանի մը վայրկեան ալ կենդանի կը պահեն այն ահագին կրակն որ Քրուսի սահմաններուն բարձրերէն վրտանդաւոր ժամանակ թշնամուտն սպառնալից շարժումներն կարգիլէ :

Որոնք էին այն ատեն առ ձեռն գտնուած դունդերը և մարտիտաք անոնցմէ ի՞նչ օգուտ կրնար

քաղել . կը մնայ այս կէտը քննել : Պահապան հետեւակազօրքն հետեւեալ կերպով բաժնուած էր . առաջինն թեթեւազէն վաշտն Պրէնքուր զօրապետին հրամանացը ներքեւ ի Շաթէլ-Սէն-ժէրմէն : Չրդ վաշտն Պէլլենի զօրապետին հրամանացը ներքեւ Սէն-Բանթէն պահուած էր : Յրդ դունդին օգնելու համար վասն զի վախ կար որ չըլլայ թէ թշնամին զօրաբանակին ձախ թեւին վերջնապահներուն վրայ յարձակի , թէեւ անոնց գտնուած տեղոյն և Սէն-Բանթէնի մարտկոցին ունեցած այլ և այլ յարձակողական կողմերն այս վախը միայն կիտով չափ հաւանական կերեւցընէին . ուրախագորաց զօրաբաժինն միայն տեղ մը զրկուած չէր : Այս տրամադրութեանց վրայ Պուրպաքի զօրատետը մարտիտաքին կիմացընէ որ պահապան զօրքն այսպէս բաշխուելով՝ չի պիտի կրնանք ձեռք բերել այն ճշգրիտ արդիւնքն՝ զոր որչափ իր մեր զօրաբանակին մէջ գտնուելուն նոյնչափ իր մէջ եզած մարդոց քաջութեան պատճառաւ իրաւունք ունինք անկէ սպասելու :

Պահապան զօրաց պահեստի թնդանօթներն քսան և չորս թնդանօթներով և ընդհանուր պահեստի թնդանօթաձիգներն եօթանասուներկու թնդանօթներով՝ ընդամենը ինսուերկուց թնդանօթ , Սէն-Բանթէնի մարտկոցը ամրացած էին :

Օգտտուաի 18րդ օրը առաւօտուն , Պուրպաքի զօրապետն իր օգոտտու 2\ թուականաւ տուած ծանուցադրոյն նայելով՝ մարտիտաքին հրաման տուած էր որ ուղեւորելու պատրաստ գտնուի , և իշխանութիւն ընդունած էր յարմար դատած ժաւ

մանակ իր գունդերն ճամբայ հանելու : Ժամ եւ
բեքին միջոցները , Պուրպաքի զօրապետը իմանա-
լով որ պատերազմը հետզհետէ պիտի սաստկանայ ,
ուղղակի իրեն հրաման մը չի գալուն վրայ , որո-
շեց որ իր ումբաձիգներու զօրաբաժինն կրօ-Շէն
տանի , դէպ ի զօրաբանակին ա՛յակողմը : Ժամը
չորսին կը հասնի հոն , և վայրկեան մը ետքը քիչ
մը յառաջ Սէն-Ֆրիվայի ուղղութեան վրայ կեր-
թայ և կըսպասէ :

Ժամը վեցը քառորդ անցած՝ Լատմիրօյ զօ-
րապետին զրկած թուր ու՛-՛ Բէնի դեղապետն ու
Բէսմ հրամանատարը իրարու ետեւէ իրեն կու-
դան և կիմացընեն որ դայ Էրդ գունդին օդնե-
լու , որն որ կըսեն , թշնամեոյն հանդիպեր էր :
Զօրապետն ճամբայ կենէ , և Սէն-Քանթէն ամ-
բացած պահապան զօրաց պահեստի թնդանօթա-
ձիգներն ալ իրեն կը կանչէ : Արմանվիլէրի և Սէն-
Ֆրիվայի մօտը դանուած անտառներէն դուրս ել-
նելու ատեն՝ զօրապետն Կրդ և Յրդ գունդերուն
հաշանջումը տեսնելով իր գունդերն անոնց օղ-
նութեան կը դրկէ : Ժամ եօթը քառասուն վայր-
կեան անցած՝ պահապան զօրաց պահեստի թնդ-
անօթաձիգներն ալ չուտով կը հաննին :

Այս պատերազմին վերջերք Յրդ գունդին թնդ-
դանօթաձիգներն՝ օրք քանի մը թնդանօթ միայն
նետելու նիւթեր ունէին , Սոնիի ճամբուն վրայ
Սէն-Ֆրիվայի ճիւղ դիմացը անտառին մէջ կեցան ,
մինչդեռ պահապան զօրաց թնդանօթաձիգներն
ու երկու վաշտ պահեստի թնդանօթաձիգներ Ար-
մանվիլէրի դիմացը Շաթէի ճամբուն վերեւը կը

կենացին : Ասոնց ամենուն մէկէն ոտտակ կրակ
տալուն վրայ թշնամեոյն յարձակումը խկոյն ար-
դիլուեցաւ , և ժամ ութ ու կէսին պատերազմը
գագրեցաւ :

Այսպէս Պաղէն մարտնիտն նոյն օրը կէս օ-
րէն մինչև իրիկուն շատ անձանց միջոցաւ կիմա-
նայ իր զօրաբանակին ա՛յակողմը եղած մեծ վը-
տանդն , Քանթայէր մարաշխաթին ամենալուտան-
գաւոր կացութիւնն , իր հրազնուց անկարողու-
թիւնն , և մթերից պակասութեան պատճառաւ
պատերազմի սկզբնաւորութենէն ի վեր իր թնդ-
դանօթներն դործածելու անկարող դանուին , և
չէթէ միայն անձամբ պատերազմին տեղը երթա-
լով ի պահանջել հարկին իր պահեստի զօրքերն
ու մթերքը հոն չի տանիր , այլ և անշուշտ տա-
րակուտելի բլլալու կերպիւ Պուրպաքի զօրապե-
տին խնամցը կը յանձնէ : պահապան զօրաց զօրա-
բաժինն ճամբայ հանելն բացարձակապէս անօ-
գուտ եղող վաթսուն թնդանօթ Սէն-Քանթէնի
վրայ կը ձգէ :

Մարտնիտն՝ ինչպէս որ տեսնուեցաւ , պա-
տերազմի դաշտին վրայ չի գտնուելով և պատե-
րազմի ատեն տեղի ունեցած դէպքերուն վրայօք՝
իրենց նեղեալ գունդերն ձևաքովին կառավարող
հրամանատարներէն ճիւղ տեղեկութիւններ քն-
դուներով նոյն օրը կայտեր և Մաք-Մահօն մարա-
շխաթին շատ հեռագիրներ գրիեց :

Կէս օրէն երկու ժամ վերջը՝ Մաք-Մահօն մա-
րաշխաթին հետեւեալն կը հեռագրէ :

Օգոստոս 14 և 16 ին առած երկու պատե-

րազմներու պատճառաւ վէրտինի վրայ ընելիք ուղեւորութիւնս արդիւրեցաւ, և պարտաւորեցայ Մէջի հիւսիսային կողմը կենալ մասնաւորապէս մթերք և ուտեստ ճարելու համար: Առտուընէ ի վեր թշնամին զօրաւոր գունդեր կերևցընէ, որոնք Պրիէյի վրայ երթալ կը ցուցընեն, և կրնան մարերնին դրած ըլլալ յարձակելու ֆանրօպէր մարաշխտին վրայ, որ այժմ Մէն-Բրիվալա-Մօնթաներ կը գտնուի, և իր ճախակողմն հաստատած է յԱրմանիլիէր, որ հրդ գունդին աջակողման ամրացման տեղին է: Ուստի նորէն ըզգուշութեան մէջ ենք, մինչև որ մեր առջև գըտնուած գունդերուն ճշմարտապէս ուր երթալիքնին իմանամ, և մանաւանդ պահեստի զօրաբանակին, որուն համար կըսուի թէ Բանժ կը գըտնուի Մօզէյի աջ ակաւնց վրայ արքային հրամանատարութեան ներքեւ, որուն ընդհանուր բանակատեղին պիտի ըլլար յՕպլինէի:

« Այս հեռագիրս կայսեր և պատերազմի պաշտօնէին ալ ներկայացուցէք: Արտէնի երկաթուղւոյն համար վիտ ունիմ »:

Ժամ չորսին՝ հետեւեալ հեռագիրն ալ կայսեր զրկուած է.

« Հիմա, ժամ չորս, Բրուսիոյ թագաւորն անձամբ բաղնաթիւ դօրքերով մեր վրայ յարձակեցաւ: Գունդերնիս մինչև հիմա աղէկ դէմ կը դնեն. բայց թնդանթածիգներն կրակ տալէն գաղրիլ պարտաւորած են »:

Վերջապէս ժամ եօթը յիսուն վայրկեան անցած հետեւեալը կը հեռագրէ կայսեր.

« Պատերազմական դաշտէն կը դառնամ: Թըշնամոյն յարձակումը խիստ սաստիկ եղաւ. հիմա ժամ եօթը, կրակը դադրած է, և մեր գունդերն ալ հաստատապէս կեցած են իրենց դրիցը վրայ »:

Սոյն միջոցին թիտսլիլի ճամբէն Մէջը Շալօնին և ֆարիզին յարող հեռագիրն կը խզի:

Յիշեալ հեռագիրներէն ակնկերւ կը տեսնուի որ գլխաւոր հրամանատարն պատերազմին այլ և այլ երեսայթներուն վրայ տեղեկութիւն առած է. բայց իր զօրաբանակին կացութեան վրայ բնաբացայայտ խօսք մ'եղած չէ անոնց մէջ: Վեցերորդ գունդին վտանգաւոր դրիցը վրայօք երբէք յիշատակութիւն մը չկայ:

Այս հեռագիրներէն վերջինը՝ որոնցմով մարաշխտն պատերազմին ատենը հետդհետէ առած տեղեկութիւններն հաստատել կը ջանայ, նոյն օրուան պատերազմի արդեանց վրայ կայսրը խարած չըլլար, երբ մարաշխտն տնոր հաւատալ կուտայ թէ ինքը պատերազմէն վերջը պատերազմական դաշտը թողեր է:

Յայտնի է որ զօրտպետ մը եթէ պատերազմ մը կորսնցընելու ըլլայ. յանցաւոր չի համարուիր: Բայց երբ կը տեսնուի որ Պաղէն մարաշխտն հետդհետէ իրեն եկած խնդրանաց և առաւել եւս Բանրօպէր մարաշխտին խնդրանացը առջև անտարբեր կը կենայ, և կը թողու որ նորա գունդն կոտորի առանց տնոր ամենափոքր օգնութիւն մը ընելու, ինչպէս պատասխանատու չի համարինք զինքը իր մեղապարտ անդործութեան, անօգուտ

տեղը թափուած արեան և մեք զինուց ցաւալի կարտեան համար, որն որ վերջին ճախորդու թեան սկզբնապատճառն է: Ինչո՞ւ համար հեռու կեցաւ պատերազմական դաշտէն ուր նոր դարու մէկ ամենամեծ պատերազմն տեղի կունենար, այն միջոցին երբ Բրուսիոյ թագաւորն անձամբ յարձակած էր, ինչպէս կիմացընէր մարաշխտոն առ կայսր յաղարկած հեռագրով: Յայտնի է որ սովորական պատերազմի մը մէջ անգամ պէտք է որ դիմաւոր զորատեան պատերազմական դաշտը դանուի, որպէս զի իր տեղակալներն պատերազմի անտկնկալ արկածից մէջ կարենան իրեն հրամաններն խնդրել:

Բայց օգոստոս 18 ին տեղի ունեցած պատերազմի մը մէջ ուր Պագղիական զորաբանակն Մօնվոյի ձորին բարձանցը վրայ հաստատուած՝ իր տեղը անչարժ կենալ կը դատապարտուէր, մարաշխտին բնաւին անգործ մնալ ներքի չէր: Հնն ո՞չ իր զորաբանակին տարւ հրաման մ'ունէր, և ոչ աւանակալ գէպք մը կրնար պատահիլ: Ուստի մարաշխտան բոլորովին ազատ էր իր զորաբանակին որ և է մէկ դունդին քովը գտնուելու: և որովհետեւ վտանգն աւելի անոր աշակողմը կը տեսուէր, և նա միայն օգնութեան հրազենուց և ուղղամթերից կը կարօտէր, վասն որոյ իր ուշադրութիւնն մասնաւորապէս այն կողմին վրայ ըլլալու էր: Ինչն ալ ժամ չորսին կայսեր կիմացընէ որ իր հրազենուց մէկ մասն անգործ անելինն: Իր պահեստի հրազենն Սէն-Քանթէն կը տեղափոխէ, և չի խորհիր բնաւ այս անգործ անելի

հրազենուց պակասը պահեստի հրազենքով ւնուլ:

Մարտիական պարագ տեղը կը ջանայ ինքզինքը արդարացընել իր զորաբանակին ճախ կողմը անգործ կենալուն համար, այնպէս պատճառելով որ իր թէ վտանգներն աւելի այն կողմը կըսպառնային: Սմեն մարդ կրնայ խոստովանիլ որ այդ կողմը ընդհակառակն իր զորաբանակին ամենէն զորաւորն էր. վասն զի, ինչպէս որ արդէն ըսինք, այն կողմի դիրքերն որոց վրայ Չրդ գունդըն կը գտնուէր, ետեւի կողմէն Սէն-Քանթէնի լեռներով պաշտպանուած էին, որք տեսողական ամբութիւններ ունին: Վերջապէս, Սէն-Քանթէնի ստորտան և Մօղէի մէջ տեղը և զած այն նեղ միջոցն ալ, ուրկէ թշնամին թերեւս կարենար Մէջի և զորաբանակին մէջ տեղը մանել, Չրդ գունդին հրազենուքը կրնար փակուիլ: Ուստի մարաշխտան ունայն տեղը իր յիշատակարանին մէջ զինուորական ճարտարապետաց մէկ դիմաւոր պաշտօնէին տեղեկութիւնը կը յիշէ, որով Մօղէի ճախ ախանց մարտկոցներուն պակասութիւնը կը յայտնէ, բայց և այնպէս անոր ալ ինկատի առած ապացոյցներն կանոնաւոր յարձակու մենք կեղբրակացընեն, այնպէս ենթադրելով որ թշնամին Չրդ և Յրդ գունդերուն հաստատուած տեղոյն պիտի տիրէ: Այս մեկնութիւններն, այս պատճառներն ոչ կրնան զուրիշ համոզել, և ոչ ալ որ և է մտոյ մէջ տարակոյս ձգել: Այս, Պագէն մարաշխտան գրանրօպէր մարաշխտող առանց օղնութեան թողոյց այս, պատասխանատու է նա անձ

նապէս օգոստոս 18 ի պատերազմի վնասուց և նոսրա սոսկալի հետեւանաց համար :

ՋՐԱՐԱՆԱԿԻՆ ԵՐԿՐՈՐԳ ԵՎ ԱՆՁԱՆՁԱԿԱՆ ԵԱՐԺՈՒՄԸ

Օգոստոս 18 առաւօտուն Պաղէն մարաշխտան հրաման դրիկց այլ և այլ գունդերու երկրորդական սպայներուն դալ ի Շաթէլ-Մէն-ժէրմէն, և իմացուց անոնց թէ անկից վերջը ուր տեղունք պիտի հաստատուին լըվալ գնդապետին վարչութեան ներքեւ, երբ որ իրենց հրաման ըլլայ : Ահա այս պատճառաւ էր որ զօրաբանակին Մօղէլի ձախափանց վրայ երթալն ու հոն անմիջապէս ապաստան գտնելն արգիւրուեցաւ, որոց վրայ մարաշխտարն կը խորհէր երթալ օգոստոսի 17 ի իրիկունէն : Այս կէտին վրայ խիստ մանրամասն քընտրութիւններ ըլլալ պէտք է :

Յիշեալ իրիկունը, երբ հրդ. և Նրդ. գունդերու սպայներն շտապաւ ընդհանուր բանակատեղին եկան, որպէս զի գունդերն ուր հաստատելուն համար հրամաններ ընդունին, անմիջապէս մարաշխտան քովը տարուեցան նոյն օրուան վերջին դէպքերն իրեն հաղորդելու համար : Ասոնք երբ իրենց խօսքը լսեցուցին, մարաշխտան իրենց ըսաւ. « Բնաւ մի վշտանաք, ձեր այս չարժու մը վազը առտու պիտի ըլլար : Հիմա տաներու ժամ առաջ պիտի ընէք » : Ահա ասոնք եղան մարաշխտան թորը խորհրդածութիւններն երբ լուր առաւ թէ Պրիէլի ճամբան այսուհետեւ գոց էր մեղի համար, և թէ զօրաբանակն ամենազքժ

ուարին և ամենաարեւահեղ պատերազմէ մը վերջը Մէց վերադարձած էր :

Պատերազմէն վերջը Մէն-Քանթէնի մարտկոչին պատին սկսած տեղն ու Սօլնի ճամբուն վրայ բնու զօրք մը չկար : Թշնամին որ արդէն Մէն-Քրիվայի տիրած էր, չէր կրցած անկէ անդին անցնիլ : Բայց մարաշխտան հրամայած էր իր գունդերուն որ Սօլնի ճամբուն և անտառին խիստ ետեւի կողմերն երթան, և Չրդ. ու Յրդ. գունդերը որոնք նոյն օրն մինչև իրիկուն իրենց գիրքերը պահած էին, երեկոյին մարտկոչներուն տակ պատսպարուած զօրաբանակի մտացորդին հետ եկան միացան :

Այս անգամ վինիէօլ-Լէտիի դրիցը վրայ ադէկ հաստատուած էին, զիրք մը՝ որուն վրայ հաստատուին օգոստոս 16 ի իրիկունէն մարաշխտան միտքը իյնալը տեսանք : Հետեւեալ օրն, օգոստոս 17, մարաշխտան տեղեկագիր մը գրեց առ Պ. Տրպէն, որ դեսպանական քարտուղար ըլլալով՝ ընդհանուր մեծ բանակատեղին ալ պաշտօնունէր, պատուիրելով որ առանց բնադիրն երեւան հանելու Բաքէ 72 և Մաշէլ լրագրոյն հաղորդէ, որն որ հետեւեալ օրն, օգոստոս 20, հրատարակուեցաւ : Յիշեալ տեղեկագրոյն մէջ հետեւեալ խօսքերն կը կարդանք :

« Այսօր Գաղղիոյ զօրաբանակներէն մին ի Մէց կեղբոնացած է այն տեղուանքն զորս մարաշխտան օգոստոս 18 ի պատերազմէն վերջը որոշեց : Կրնանք ըսել որ թշնամայն օգոստոս 18 ի դադարած առաջադրութիւններն յաջողած են : Պա

դէն մարտավախն զորաբանակն Մէջ կենարով պատերազմական և քաղաքական մեծամեծ գործերու պիտոյքներն կը լրացրնէ ։

Ինչ կրնայլն ըլլալ այս պիտոյքներն , մինչև ևս Մէջի զորաբանակն հրաման առած էր Շալոն երթալու Փարիզը պահպանելու համար : Ասկից կը հետեւի որ մարտավախն իր հրամաններէն դուրս մէկ նպատակ մ'ունէր : Այս նպատակն օգոստոս 12 էն մինչև 18 տեղի ունեցած դէպքերէն կրնայ յայտնուիլ : Պազէն մարտավախն Մէջը թողուլ ուզած չէր :

Եթէ Մէջը թողուլ ուզած ըլլար , հրամանատարութիւնը ձեռք առած ատեն՝ երբ Օգոստոս 12-13 ին Մօզէլի ամմամբը առժամանակեայ կամուրջներն լրով ծածկուեցան , օգոստոս 13 ի առաւօտուն իր զորաբանակն քաղօրին կամուրջներէն անցընելու հրաման առած կըլլար :

Երբ Մէջը թողուլ ուզած ըլլար , փոխանակ բոլոր գունդերն միայն կրավորթի ճամբուն վրայ կուտելու միւս երեք ճամբաներն ալ կը դործածէր , որոնցմէ անցնելով կրնար չուտով լերանց վրայ ելնել :

Եթէ Մէջը թողուլ ուզած ըլլար , օգոստոս 15 ին պահեստի պաշարն ետ տանելու հրաման չէր տար , որով իր զորաբանակն ուտեստէ զրկեց և անոնց ընթացքը արդիւնց :

Եթէ Մէջը թողուլ ուզած ըլլար , օգոստոս 17 ին առաւօտուն կանուխ իրեն պաշար մատակարարէին վերջը՝ կամ պատերազմ կրուէր , կամ Պրիէլի ճամբան ձեռք կառնուր : Բնդ հակառակն

նախ և առաջ զորաբանակն տանել վինեկօյի և Վէսփի մէջ տեղը հաստատելն ուրիշ բան չխորհիր : Վերջը իր այս ընկեր նահանջական ուղևորութեան առջև տարակուսելով կողմայ կամբանայ Մօնիօյի ձորին բարձանցը վրայ , և ինչպէս որ տեսանք , օգոստոս 19 առաւօտուն ալ զորաբանակն անոնց ետևը տանել կը խորհի :

Ուրեմն եթէ մարտավախը Մէջը թողուլ չուզեց , առանց իրական պատճառ մը կարենալ գրտնելու , կը հարցընենք , ինչո՞ւ համար չի ժխտեց օգոստոս 18 ի այն անօգուտ պատերազմն , որուն մէջ իր զորաբանակն շատ մարդ կորսնցուց , և որով ամենավտանգաւոր կերպիւ Մէջի մէջ վիրաւորելոց թիւը աւելցընելով զորաբանակին բարոյականը եղծելու պատճառ եղաւ :

Պ. Տրպէն , որ այժմ Պերլինի Գաղղոյ դեսպանատան առաջին քարտուղաքն է , և պատերազմի ատեն Հռենոսի զորաբանակին ընդհանուր մեծ զորապետին քով պաշտօն ունէր , կը վկայէ թէ մարտավախն այնպէս կըտէր որ , որչափ զինուորական դործողութեանց , նայնչափ եւս երկիրն խարաղութեան մէջ պահելու համար պէտք է որ զորաբանակն Մէջը պահպանէ , մինչև որ երկիրը պահպանելու յատկացած չինութիւններն աւարտին :

Այս պատճառներն՝ մարտավախն հրամանատարութիւնը ձեռք տուած օրուրէն ի վեր կը ցուցուէին մի և նոյն հաստատութեամբ : Եթէ անհրաժեշտ պատճառներ էին , ինչ էին այն ցնորական ուղևորութիւններն : Մարտավախն իր այս

վարմունքը ուրիշ նկատումներով կուզէ արդարացրնել, որք մտալուտ աղէտք մը կը հետեւցրնեն : Եթէ իր այս կանխատեսութիւնն ընդունինք ալ, չենք կրնար այնչափ ներել իրեն որ պակասած զօրարանակաւ մը մտալուտ վտանգի մը ըսպասէ : Այդ վտանգին վախճանը ինչ որ ալ ըլլայ, առի Մէջի զօրարանակին գլխաւոր հրամանատարին հետ խորհորներ պիտի գտնուին . իր քաղաքական վիճակն անվիճելի է . որովհետեւ եթէ կայսրն զինքը գլխաւոր զօրապետ առնանեց, իր հրամանատարութիւնն մատմբ իւրք հակառակ կողմի անդամաց միջամտութեանը կը պարտաւորի :

Կը մնայ հիմա գիտնալ թէ մարտնչական իր զօրարանակին կացութեանը և իր առաջադրութեանցը վրայ ինչ տեղեկութիւններ պիտի հազորդեր : Թիօնվիլի հեռագրաթիւնն օգոստոս 18 ին խորած էր, երեկոցեան ժամ վեցին և եօթնին միջոցներն : Բուտի իր ծանուցագիրն օգոստոս 19 ին դրեց առ կայսրն, և հետեւեալ օրն օգոստոս 20 կէս օրէն երեք ժամ վերջը դրկեց զայն վէրտիւնի ճամբով Պրէտի պահնորդին ձեռքով, որուն ինքն անձամբ յանձնեց իր ծանուցագիրն, որ հետեւեալն է :

« Զօրարանակն երէկ մինչև իրիկուն ի Ռօզերիէօյ Սէն-Բրիլա-լա-Մօնթաների գիրքերուն վրայ պատերազմեցաւ : և զանոնք պահպանեց :

« Էրդ և Երգ գունդերն իրիկուան ժամ իննին միջոցները իրենց ճակատը փոխեցին, ալ թեւը դէպի ետեւ դնաց, որպէս զի թշնամեաց գուն-

դերուն մթութեան օգնութեամբ ալ կողմէն ընելիք պտուաւոր շարժման մը առաջն առնու :

Այս առաւօտ, 2րդ և 3րդ գունդերն իրենց գիրքերէն իջեցուցի, և զօրարանակն կրկին Մօզելի ձախ ափանց վրայ հաւաքուեցաւ, կոր գիծ մը ձեւացրնելով, և որոյ համար Սէն-Քանթէնի և Բլարվիլի մարտկոցներուն ետեւէն անցան : Գունդերը յոգնած են այն տներն հատ պատերազմներէն որոնք զիրենք նկատական պէտքերէ զըրկեցին, և անոնց երկու կամ երեք օր հանգիստ տալ անհրաժեշտ է : Բրուսիոյ թագաւորը այս առաւօտ Պ. ար Մօթքէի հետ Թրոնվիլ էր, և ամէն ինչ կը յայտնէ որ Բրուսիական բանակն պիտի դայ Մէջի վրայ յարձակելու : Ես որոշած եմ միշտ դէպի հիւսիսակողմը չտնուիլ և վերջը Մօնմէտիէն ի Շալօն Սէնթ-Մէնէհուլտի ճամբուն վրայ իջնել, եթէ թշնամին յիշեալ ճամբուն վրայ ամբացած չէ . ապա թէ ոչ, ճամբաս պիտի շարունակեմ Սէտանէն և Մէդիէրէն Շալօն երթալու համար » :

Համառօտենք . մեծ պատերազմ մը տեղի ունեցած է, բայց զօրարանակն դէպի ներս իր ընթացքը կրկին ձեռք առնելու վիճակին մէջն է :

Եթէ Շալօնի մէջ կարող եղած ըլլային խորհելու որ մարտնչական ձեռնարկած յիշեալ միջոցները օգոստոս 18 ի պատերազմին արդիւնքն էին, և զորս հեռադրաւորք անկատար կերպիւ կը ճըլմարտէին, նախապէս նշանակուած և օգոստոս 19 ի հեռագրալրով իմաց տրուած, բայց միայն օգոստոս 20 ին պատգամաւորին յանձնուած ա-

աւարդութեան հաստատութիւնը ամէն երկրա-
յութիւն պիտի անհետացնէր: Հնն աղէկ բա-
ցատրուած էր որ Մէջի զօրաբանակն իր ճամբան
դէպի հիւսիսակողմը ուղղելով Մօնմէտի վրայ
պիտի իջնէր:

Մարաշական յիշեալ ծանուցագիրը կայսեր
զրկելէն քանի մը ժամ վերջը՝ նոյն իրիկունը ժամ
եօթինն թիօնալիլի գծով երեք նոր հեռագրալու-
րեր ալ զրկեց:

Առաջինը՝ կայսեր, որուն օրինակը հետեւ-
եալն է.

« Իմ դունդերու միշտ առջի գիրքերնուն վրայ
են: Թշնամին միտք ունի իր պաշարունը զօրացը-
նելու համար գունդեր ամբարցնելու, և ասոր հա-
մար միշտ օգնութիւններ կընդունի: Մէջի մէջ
տանըրդեց հազարէն աւելի վիրաւորեալ ունինք »:

Երկրորդը՝ պատերազմի պաշտօնէին, այսպէս.

« Մէջի մէջ՝ ուտեստ և ուղղամթերք հայ-
թայթ երու վրայ ենք: Թշնամին միշտ իր դունդե-
րը կըտուարացնէ և կըսկսի զմեզ պաշարել »:

Յիշեալ հեռագրալուրերն իր օգոստոս 19 ի ծա-
նուցագրին չափ ապահով չին:

Վերջապէս երրորդն ալ՝ Մար-Մահօն մարա-
շական, որով Պազէն մարաշական աւելի յայանի
կը բացատրէ իր ընելիքը:

« Մէջի մօտ ամբացած եմ զօրքերուն հան-
դիստ տարու և ուտեստ ու ուղղամթերք հայ-
թայթ երու համար: Թշնամին իմ բոլորտիքս իր
գունդերն կըստուարացնէ, և շատ հաւանական
է որ դէպի հիւսիսակողմը ճամբայ ելինմ ձեր

քովը դարձու համար, իմ ուղեւորութիւնս առա-
ջուց ձեզ խնայքնելով, եթէ կարող ըլլամ այս ու-
ղեւորութիւնս կատարել առանց զօրաբանակիս
մնաց մը հասցընելու »:

Պազէն մարաշական ճամբայ ելնելէն յառաջ
Մար-Մահօն մարաշական պիտի ազդարարէ:
Ահա այս է յիշեալ կարեւոր հեռագրոյն մէջ ե-
ղած նկատողութեան արժանի կէտը, որ օգոստոս
տոս 22 ին իրիկուն դէմ Ռէյմս հասաւ, այսինքն՝
օգոստոս 19 ի ծանուցագրոյն օրը՝ որ Մար-Մա-
հօնի ուղեւորութիւնը որօջեց, Յիշեալ հեռագրոյն
զրկուելուն և հասնելուն նկատմամբ վերջերը մեծ-
բաման տեղեկութիւններ պիտի տանք:

Օգոստոս 20 րդ օրն՝ այն միջոցին երբ Պազէն
մարաշական Մէջի լրագիրներուն մէջ կը հրատա-
րակէր որ իր զօրաբանակն Մէջի մէջ ամբացած
էր քաղաքական և զինուորական պիտոյց համար,
կայսեր ալ իր ուղեւորութիւններն կիսմայրեկեր
(հեռագիր օգոստոս 19 ի, օգոստոս 20 ին զըր-
կուած). մի և նոյն միջոցին, կըսենք, իր տեղա-
կալէն կը ծածկէր իր ձեռք առնելիք ճիշդ միջոց-
ները, վասն զի իրեն կըսէր (օգոստոս 20 ին).

— « Իմ ուղեւորութիւնս կանխաւ ձեզ պիտի ի-
մացնեմ » . — և ասով իր ձեռք առնելիք միջոց-
ներն առաջուց երեւան կը հանէ, կամ թէ սանկ
ըսենք, մարաշական օգոստոս 20 ին իր դիտաւո-
րութիւններն ու կանխաւ ձեռք առած միջոցներն
երեք տարբեր կերպերով կը հաստատէ:

Օգոստոս 19 և 20 ի հեռագրալուրը մէջ գրու-
նուած հակասութիւններն մասնոց ասրակուսա-

նայ վրայ Պաղէն մարտիտն հարցաքննուած տանն հետեւեալ պատասխանը տուաւ :

« Իմ առաջադրութեանցս մէջ տարակոյտ չկար , և իմ կայսեր ըրածս պարզ ազգարարութիւն մ'էր առանց զայն կատարելու ժամանակն ճշդիւ իմացընելու , որովհետեւ կայսրն ալ չէր հրամանատարեր և իմ ընկիւք ընթացքս զմեզ պաշարող թըչնամուռն կամքէն և իմ գունդերուս վիճակէն կախում ունէր : Օգոստոս 20 ին , Մտք-Մահօն մարտիտին դրեցի իրեն ըսելու համար թէ՛ « Մէ-« ցի մօտը ամրանալու պարտաւորեցայ զօրքերուս « հանգիստ տալու և ուտեստ ու ռազմամթերք « հայթայթելու համար : Թշնամին մեր բոլորտիքը « իր գունդերն կըստուարացընէ , և շատ հաւա- « նական է որ դէպ ի Հիւսիսսահողմը ճամբայ ել- « նեմ ձեր քովը գալու համար , իմ ուղեւորու- « թիւնս առաջուց ձեզ խնայընելով , եթէ կարող « ըլլամ այս ուղեւորութիւնս կատարել առանց « զօրաբանակիս վնաս մը հասցընելու » :

« Այս հեռագիրը կայսեր զրկուած նախորդ հեռագրաց պէս միայն ազգարարութեան նպատակաւ զրկուած չէ , այլ ծառայութեան պաշտօնական հեռագիր մ'էր այս Մտք-Մահօն մարտիտին զրկուած , մինչդեռ նա իմ հրամաններուս ներքեւ էր » :

Յիշեալ հեռագիրներն դատողութեան արժանի կէտեր կը պարունակեն որոնց վրայ քիչ մը ետքը կրկին պիտի խօսինք :

Այս հեռագիրներն զրկուելէն վերջը՝ օգոստոս 21 ին վերախնի և Լիւքսեմպուրիի ճամբով ուրիշ

հեռագիր մ'ալ զրկուած է առ պատերազմի պաշտօնեայն , որուն օրինակը հետեւեալն է .

« Մինչև Օգոստոս 19 զրկած բոլոր հեռագիրներնից անընդհատ ընդունեցայ : Թիօնվիլի և վերտիւնի հետ խիստ դժուարաւ և հետեւակ թըղթատարներով կարող եմ հազորդակցել : Ձեզ զըրկած հեռագիրս անուշտ ընդունած էք . հեռագիր մը կայսեր , և ուրիշ մ'ալ Մտք-Մահօն մարտիտին ուղղած եմ : Զօրաբանակին առողջական վիճակն գոհացուցիչ է . բայց բարոյական վիճակը կիսով չափ եղծուած : Սոյն միջոցին , ժամտանըմէկ , մեր դիրքերէն քիչ մը հեռու՝ Սոլնիի և Լօրիի անտառաց վրայ բրուսիական ստուար բանակներ կը տեսնուին . ուրիշ բանակներ ալ Սոլնիի Հիւսիսսահողմը և Հիւսիսային արեւելեան կողմը գտնուած անտառներուն վրայ կը տեսնուին , այսինքն՝ Մէցի մօտ Պրիէյի ճամբուն միւս կողմը : Երջնպէս Վօարբիի միւս կողմն ալ ճրք և ճրք գունդերուն դիմացը Բրուսիական բանակներ կը գտնուին » :

Սոյն հեռագրոյն իր տեղը հասած ըլլալն ճանուցանող բան մը չկայ :

Օգոստոս 22 ին , Լիւքսեմպուրիի ճամբով հետեւեալ հեռագիրն ուղղուած է կայսեր . սոյն հեռագիրը իր տեղը հասած ըլլալու չէ :

« Դիրքերնիս ամենուին փոխած չենք . թըչնամին զմեզ պաշարելու վրայ է . գունդերն կը շատցընէ , ճամբայներն կը կտրէ , և բոլոր մեր հազորդակցութիւններն կարգելու :

« Մենք անոնց մարտկոցի շինութիւններն ու ու-

քի պատրաստութիւններն կը խափանենք : Մեր դիրքերն ալ պաշտպանուած են իմ շինել տուած բաղմամբիւ շէնքներով զորս աւելն օր կը հաստատենմ :

« Թշնամւոյն զրարանակին ճիշդ թիւք երեք հարիւր հազար մարդու կը հասցընեն : Բրուսիոյ թաղաւորք Պ. ար Պիղմարքի հետ Բոնիթ-ա-Մուսոն է ։ »

Օգոստոս 23 ին մարտիտոն կայտեր կը գրէ .

« Վերջին տեղեկութիւններն կը ծանուցանեն որ թշնամւոյն դունդերն դիտուար չարծում մը պիտի ընեն , և Մօշէլի երկու տիանց վրայ միայն Ֆրէտէրիք-Շարլ իշխանին և Սթոյնմէյ զօրապետին բանակներն պիտի մնան : Ականատես վիպաներ կը հաստան թէ Առի և կրտլթթի մէջ տեղը կամուրջներու շինութեան նխթեր տեսած են : Եթէ այս լուրերն ստոյգ ըլլան , կանխաւ ծանուցած ուղիւ որութիւնս պիտի կրնամ ձեռք առնուլ Հիւսիսակողման ամրոյներէն , որպէս զի զօրաբանակիս մնաս մը չի հասնի : Մեր դունդերն վերստին կազմակերպեցան և կրկին պաշար հայթայթեցին , ինչպէս նաեւ հետեւակազօրքն : Մէջի պատրաստութիւններն գրեթէ լրացան , և հոն երկու զօրաբաժին պիտի թաղում , որովհետեւ Մէն-Թիլիէնի և Քէօլէօյի շինութիւններն տակաւին չի լնացան : Գունդերուն բարոյական և առողջական փնտախն այնչափ դժուարացիլ չէ : Այնքան կորուստ ըրինք վերջին պատերազմներուն մէջ , որ բոլոր դունդերնիս ալ խիստ ակարացան . որչափ որ կտրելի է , առոր ճարք պիտի նայիմ » :

Յիշեալ հետազիրն կրցաւ բանակներէն անցնիլ . օգոստոս 31 ին Մէտան դանուեցաւ , և անկէ պատերազմի պաշտօնէին զրկուեցաւ :

Պաղէն մարտիտոն հաղորդակցութեան արձանագրութիւններն օգոստոս 24 ին զրկուած հետազիրներն չեն ծանուցաներ :

Օգոստոս 25 ին հետեւեալն կը հետազրէ առ կայսր (օգոստոս 20 էն վերջը) Մաք-Մաչօն մարտիտոն բնաւ հետադիր մը ուղղած չէ : ասի Պաղէն մարտիտոն մէկ յայտարարութիւնն էր զոր իբր մասնաւոր պարագայ մը հոս նշանակեցինք) .

« Մէջը ազատելու համար Բրուսիացի դերիները մերանց հետ փոխանակեցի , և անոնց երկու հարիւր դերի գրեկում փոխարէն երկու հարիւր Գաղղիացի դերի առի : Իմ վերջին հետազրէս ետքը թշնամին իր դունդերն ստուարացրնելու մտին բան մը չըբաւ : Արշախի որ կարելի եղած միջոցներն դարձադրեցինք և ամեն բանէ օգուտ ջաղեցինք ալ նէ , գարձեալ չի կրցանք բոլոր արկղերն սուսեխել լեցընել » :

Մէն-Բրիվոյի պատերազմի օրուան հետեւեալ օրներն , այն է օգոստոս 19 , 20 և 21 ին կը տեսնենք որ Պաղէն մարտիտոն զօրաբանակը պատերազմական դաշտին վրայ կամրադրնէ , զանի վերստին կը կազմակերպէ և հրազինուց մթերք մատակարարելով զանի կը վերահաստատէ : Մէջի զինարանին դորձնելութեան և նորա երկաթուղւոյ կայարանը ամեն կերպ նխթոյց հետ խառնի խուռն դրուած չորս միլիոն փամփուշներու դրու :

նուերուն շնորհիւ՝ զօրաբանակն օգոստոս 22 ին պատերազմի սկզբնաւորութեան ատեն ունեցածին չափ դրեթէ՛ ուղղմամթերք հայթայթեց։ Այս երջանիկ լուրն Սօլէյլ զօրապետն իմացուց Պաղէն մարաշախտին և խնդրեց նաև որ անպատճառ դօրաբանակին ալ իմացընէ։ Զօրապետին այս խընդիրքը չկատարուեցաւ․ բայց և այնպէս սա եւս կը յաւերուենք որ հետեւեալ օգոստոս 23 րդ օրն ճշմարիտ է որ անուղղակի կերպիւ զօրաբանակին իմաց տրուեցաւ թէ պատերազմի սկզբնաւորութեան ատեն ունեցածին չափ ուղղմամթերք հայթայթած է։

Յիշեալ ազդարարութիւնը՝ որ հեռագրոյ մը վերջը ձգուած էր, և կը պահանջէր որ մեծ ինամով հսկողութիւն ըլլայ ուղղմամթերից պահպանութեանը, բոլորովին իւր կարեւորութիւնը կորստնցուցած էր։ այս ազդարարութիւնը անուշտ պիտի քայալերեր բոլոր գունդերն․ որոնց վրայ գէշ տպաւորութիւն ըրած էին ուղղմամթերից պահպանութեան նկատմամբ արածուած լուրերն։ Մարաշախտն ոչ Սօլէյլ զօրապետին նամակին մէջ ցուցուած թիւերն երեւան հանեց, և ոչ տլ Մէջի երկաթուղոյն կայարանը չորս միլիոն փամփուշտ դանուին իմացուց։ Վասն որոյ այս հաղորդակցութիւնն դրեթէ՛ անծանօթ մնաց գունդերու հրամանատարաց, ինչպէս պիտի հաստատենք երբ նոցա օգոստոս 26 ի ժողովքին վրայ խօսինք։

Օգոստոս 25 րդ օրը, այն միջոցին՝ երբ մարաշախտն իր վերջիշեալ հեռագրաց վերջինն դրկեց, օգոստոս 26 ին Մէջէն դուրս ելնելու պատրաս-

տուեցաւ։ Մարաշախտն ինչո՛ւ համար այսպիսի պատրաստութիւն մը, կամ լաւ եւս է տակ, ասանկ ցոյց մը ըրաւ։ Ասի իմանալու համար, պէտք է Շալոնի և Մէջի զօրաբանակներուն գործողութեանցը և այս աւթիւ փոփոխակի եղած հաղորդակցութեանցը նկատմամբ մարաշախտին ըրած առաջադրութիւններն մանրամասնարար քննել։

Այս մասին հետեւեալ գլխոյն մէջ պիտի խօսինք։

ԳՂՈՒԽ Գ.

ՇԱՂՕՆԻ ԲԱՆԱԿԱՍՏԵՂՈՅՆ ՀԵՏ ԵՂԱԾ ՀԱՂՈՐԳԱՎՅՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Օգոստոս 18 էն մինչև 26 Մէջէն զրկուած լուղ մը հեռագիրներ նախորդ գլխոյն մէջ գըրուեցան, և Հուենոսի բանակին գլխաւոր հրամանատարին դուրսի հետ ունեցած հաղորդակցութիւններն այնպէս արժանի են դիտողութեան որոյ համար կարեւոր համարեցինք առանձին յաւերուածով մը անոնց կատարեալ ցանկն ի լոյս ածել։

Սակայն այս խնդիրն ուրիշ տեղ գրուած մանրամասնութիւններէն լուսարանուերուն համար պէտք է որ այն ծանուցազրոյն մէջ իր պարզութիւնն ունենայ․ ուստի ներկայ գլխոյն մէջ, օգոստոս 26 էն առավ տեղի ունեցած այս յարարերութեանց քննութեան մասին, դատաստանա-

կան ատենն հետեւեալ արարքներն կը յիշատակէ :

Պաղէն մարտիախախտի ղընուորական վերատեսուչ Բրէշլալի և Մանեան հրամանատարին յանձնած պաշտօնը :

Մարտիախախտի Մճմէտիի վրայ ընելիք ուղեւորութեան առաջադրութեանը պատերազմի պաշտօնէին և առժամանակեայ պետական խորհրդոյ առաջադրութեան հետ ունեցած համաձայնութիւնը :

Մէջէն եկած լուրերուն՝ վերջէն Շալօնի զորարանակին համար ձեռք առնուած որոշման վրայ ըրած ազդեցութիւնը :

Օգոստոս 19 ին Պաղէն մարտիախախտ ուղղած մէկ հեռագրոյն վրայ, Մաք-Մաճօն մարտիախախտի գէշ պիւրեւէք ուղեւորելու համար ըրած որոշումը :

Մանեան հրամանատարին վերադարձը, և այս դիտար սպային Մէջի հետ հազարդակցելու համար ունեցած դիտարութիւններն :

Երկու զորարանակաց միութեան համար Մճմէտի տեսնուած պատրաստութիւններն :

Օգոստոս 20 ին Պաղէն մարտիախախտ առ Մաք-Մաճօն մարտիախախտ ուղղած հեռագրոյն կտրուելին :

Օգոստոս 23 ին Շալօնի զորարանակին ընկացքը ազդարարող հեռագրոյ մը Մէջ հասնելը :

Այս հազարդակցութեան Պաղէն մարտիախախտ առած պատասխանը :

Մեր առաջին ձախարդութեանցը վրայ, Շալօնի բանակատնիսն նոր դուռեր հաստատելու

զբաղեցան : Մէնի շարժական պահպան զորքն հոն ղրկուած էին : 1207 դուռը՝ որ մեծ մասամբ հետեւիազորքէ կը բաղկանար, հոն կը կազմակերպուէր : վերջապէս 187. 307. և 707 դուռերն վերտին հոն հաստատուելու հրաման ընդունեցան : Պատերազմի պաշտօնեայ Բալիքաս զօրագեան կը խորհէր այս դուռերն ղրկել ի Մէջ որ երթան Մէջի զորարանակին վերստին զօրացընեն, և անոր հետ թշնամոյն պատերազմական շարժումը արդիւլու կարող զօրարանակ մը կազմեն : Բայց օգոստոս 17 ին կայսեր հետ եղած պատերազմական խորհուրդ մը որոշեց որ Մաք-Մաճօն մարտիախախտ որ այս նոր զօրարանակին դիտար հրամանատար անուանած էր, զանի վերտին փառիզ բերէ :

Պատերազմական պաշտօնեայն այս լուրն առնելով՝ նոյն իրիկունը (ժամ տասը քսանըեօթը վայրիկեան անցած) հետեւեալն հեռագրեց առ կայսր .

« կը խնդրեմ Ձեր վեհափառութենէն որ այս որոշումը չի դարձադրէք, վասն զի Մէջի զօրարանակն իր այս կացութեան մէջ չի կրնար այս միջոցիս վէրալու երթալ և հոն կը մնայ : Շալօնի զօրարանակն երեք օրէն 85000 մարդ պիտի ունենայ, առանց հաշուելու ճաւէ զօրապետին դուռն որ երեք օրէն Շալօն պիտի դայ և ունի 18000 մարդ : Եթէ այսպէս ըլլայ, մեր զօրարանակն արդէն չատ պատերազմներէ փաստած թշնամոյն դուռերուն վրայ զօրաւոր յարձակում մը չի կրնար ընել : կայսրուհին ալ իմ կարծիքէս է : »

Ասով պատերազմի պաշտօնեայն օգոստոս 17 ին կայսեր կիմացընէր որ զորարանակն երեք օրէն կամբողջանայ, և հետեւաբար օգոստոս 17 ին կրրեայ ճամբայ ելնէր:

Բախիքաօ զօրապետին նպատակը՝ որուն մեծ կարեւորութիւն կուտար, այսինքն՝ իր առաջադրած զօրաւոր յարձակումը՝ Շալօնի զօրաբանակն չորս օրէն վէրտիւնի բարձանցը վրայ հանելու հետեւանքն ունէր:

Այս կերպով եթէ զօրաբանակն օգոստոս 21 ին ճամբայ ելնէր, օգոստոս 25 ին վէրտիւնի չրջակայքը գանուելով՝ 26 ին կը պատերազմէր և Պաղէն մարաշախտին զօրաբանակին հետ կը միանար:

Կայսրը օգոստոս 18 ին առաւօտուն պատասխանեց առ պատերազմի պաշտօնեայն. « Չեր կարծեացը կը հետեւիմ: »

ՄԱՆԵԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ ՊԱՇՏՕՆԸ

Նոյն առաւօտուն՝ ժամ տանին միջոցները, Մանեան հրամանատարն Մէջէն Պաղէն մարաշախտին կողմանէ զրկուեցաւ առ կայսր անոր հեռագիրներն յանձնելու և զօրաբանակին կացութեանը վրայ բերանացի տեղեկութիւններ տալու համար:

Մանեան հրամանատարին այս պաշտօնը արուելուն պատճառը՝ օգոստոս 17 ին կայսեր և Պաղէն մարաշախտին մէջ փոփոխակի զրկուած հետեւեալ հեռագիրներն եղան:

« Կայսրն առ Պաղէն մարաշախտն: — Չեր կա-

ջութիւնն ճշմարտապէս յայտնեցէք ինձ, որպէս զի ես այլ հոս իմ վարմունքս կանոնաւորեմ: — Դաղանի իմացուցէք ինձ: »

« Պաղէն մարաշախտն առ կայսր: — Չեր հեռագիրն ընդունած կէտիս՝ Չեր վեհափառութեան գրեցի: Մանեան հրամանատարն այս իրթիւն կը մեկնի Չեղի նամակ մը բերելու և Չեղի իմ կացութեան վրայ մանրամասն տեղեկութիւններ տալու համար, որոնք նամակին մէջ յիշուած չեն: »

Երբ Մանեան հրամանատարին հարցուեցաւ թէ, կայսեր ինչ տեղեկութիւններ տարաւ և թէ ինչ էին Պաղէն մարաշախտին առաջադրութիւններն, հետեւեալ պատասխանն տուաւ.

« Մարաշախտը միշտ նոյն բանը կը խորհէր և կը ջանար իր վէրտիւնի վրայ ընկիւք նահանջումը իրականացընել, թէեւ այս դարձողութիւնն իրեն մնաստակար այլ երեւցաւ. . . մարաշախտն չի յանձնարարեց ինձ որ իր բռնկիւք ճամբած բացարձակ կերպիւ կայսեր ծանուցանեմ: Այս մասին հաստատ որոշում մ'ըրած չէր. այլ յանձնարարեց ինձ, ինչպէս նաեւ զինուորական վերատեսուչ Պ. Բրէվալի որ կարելի եղածին չտի դէպ ի Մօմեաթի յառաջ վարենք բոլոր այն պաշարի կառքերն որ զօրաբանակին պիտոյիցը համար կրնային Արտէնի ճամբուն վրայ դանուիլ: »

Այս խօսքերն բնաւ բացայայտութիւն չունին, և մեք աւելի ճիշդ բացատրութիւններ կը տեսնենք զինուորական վերատեսուչ Բրէվալի վկայութեանց մէջ, որ նոյն միջոցին Մանեան հրամանատարին հետ էր և անոր ներկայութեանը

մանաւոր հրահանգներ ընդունած էր Պաղէն մարտիտարն . « Մարտիտարն , կրակ , իր դէպ ի Հիւսիսաւորմը երթալու առաջադրութիւնն ինծի յայտնեց . և ինծի հրաման ըրաւ որ թիօնվիլի ճամբով Շալօն երթալով հոն գտած հացս ու պղպիմաստ ամենայն արագութեամբ Մէջ դըրկեմ , այնպէս որ զօրաբանակն առանց Մէջը թողալու կարենայ պաշար ունենալ : Միանդամայն ծանոց ինձ որ Լօնկիւսոնէն կրնամ այդ պաշարն հայթայթել և պատուիրեց ինձ որ հոն պաշար հաւաքելու հրամաններ տամ : »

Ինչպէս որ յիշեալ խօսքերէն կիմացուի , զօրաբանակին բուն երթալիք տեղն եղող վէրտիննի վրայ բնայ յիշատակութիւն մը չկայ , այլ Լօնկիւսոնի մէջ պիտի պատրաստուի ուտեստն : Ուրեմն մարտիտարն ալ հոն երթալու դիտաւորութիւն ունենալու է : Ուսկից կը հետեւի որ մարտիտարն Մանեան հրամանատարին ըսածին պէս երթալիք ճամբան ընտրելու մասին բնաւ տարակոյս մը չունէր . և եթէ այն նատեն Մէջի բանակատեղին ձգելու հաւատաւ խորհուրդ մ'ալ ըրած էր , այն ալ Մօնմէտի ճամբով կրնար ըլլալ : Չինուորական վերատեսուչ Բրէվալի տրուած հրամաններուն մէջ կը տեսնենք որ մարտիտարն Մօնմէտի վրայ երթալու առաջադրութիւնն ալ Մանեան հրամանատարին ձեռքով Շալօնի բանակատեղին իմաց տրուիլն կապազուցուի : Ուր թողունք որ մարտիտարն այս առաջադրութիւնն իր օգոստոս 19 ին առ կայսր ուղղած հետեւեալ հետադրոյն ալ կրնայ հաստատուիլ .

« Կը խորհիմ միշտ ճամբաս դէպ ի Հիւսիսաւորմը չտիկել և Մօնմէտի երթալ : »

Արդ այս առաջին անգամն է որ Պաղէն մարտիտարն իր թղթակցութեան մէջ Մօնմէտի տնունը կը յիշէ : Այս հարաբար կը յայտնէ նաև որ մարտիտարն Մօնմէտի երթալու առաջադրութիւնն կանխաւ կայսր ծանուցուեր է : Այս հարդակցութեան համար ալ միայն Մանեան հրամանատարն յատկացած է :

Օգոստոս 17 ի իրիկունն , երբ զինուորական տեսուչ Բրէվալ Մանեան հրամանատարին հետ զօրաբանակէն մեկնեցաւ , զօրաբանակն Մօնվոյլի ճորին բարձանցը վրայ հաստատուած էր պաշտպանողական պատերազմ մը տալու համար : Մարտիտարն որչափ որ յիշեալ պատերազմին մէջ յաղթելու հաստատ յոյս մ'ալ չունէր , վստան զի , ինչպէս որ տեսանք , մի և նոյն օրն մարտիտարն իր զօրաբանակը անցապաղ Մօղէլի ձախ արանց մարտկոցներուն պաշտպանութեանը տակ տանելու միտք ունէր , չատ բնական էր որ պատերազմը յաջող վախճան մ'ունեցած տանն անկէ օգուտ քարելով անմիջապէս դէպ ի Հիւսիսաւորմը ուղեւորելու միջոցներ դտնէր : Ահա այս էր Բրէվալի ըրած յանձնարարութեան նպատակը :

Այսպէս Մանեան հրամանատարն որչուած էր Շալօն երթալ իմացընել որ զօրաբանակն Մօնմէտի կուղեւորի , և զինուորական վերատեսուչ Բրէվալ ալ Մօնմէտի ճամբուն վրայ պաշարի կեդրոն մը պիտի հաստատէ : Յիշեալ վերատեսուչին տրուած պատուէրներուն մէջ կը տեսնենք

անշուշտ աւելի նախաձայնցութեան միջոց մը քան ՚է ճամբորդութեան խիտ հաստատ առաջադրութեան մը նշանակին, ինչ որ պատահի այս ճամբորդութենէն: Որ և իցէ, պարագայներն՝ թէ Մանեան հրամանատարին և թէ Բրէվալ վերատեսչին եղած յանձնարարութեան ուրիշ կերպով ճշգրիտ կարեւորութիւն մը պիտի տային:

Վերը տեսանք որ Պաղէն մարաշխաթի օգնական զորավարն այն միջոցին հաստ. ի Շալօն, երբ կայսրն պատերազմի պաշտօնէին ազդարարութեանցը զիջանելով, կարուէր Շալօնի զօրարունակն Պաղէն մարաշխաթին օգնութեան զրկել: Յիշեալ զօրավարն կայսեր հետ երկարօրէն տեսակցելէն վերջը ուղեւորեցաւ գէպի Մէջ: Այս գըլխաւոր պաշտօնէին անմիջապէս մեկնելուն պատճառը յայտնի է որ ուրիշ բան չէր, եթէ ո՛չ կայսեր նոր դիտարութեանց գազանիքը և մարաշխաթին համար իր ընդունած հրահանգներն երթալ իր գլխաւորին ծանուցանել: Մանեան հրամանատարին վկայութեանը նայելով այս հրահանգներն՝ մարաշխաթին իր զօրարանակին պաշտօնէիցը մէջ փոփոխութիւններ ընելու համար արուած լիազօր իշխանութիւններէն զատ ուրիշ բան չէին:

Բայց այս վկայութիւնը այնչափ շատ սխալներ ներ կը պարունակէ իր մէջը, որմէ կրնանք հետեւցնել թէ Մանեան հրամանատարին յիշողութիւնը խիտ չլիտ է: Ուստի աւելի աղէկ է մարաշխաթին ընդունած հրահանգներն Մանեան հրամանատարին եղած յանձնարարութենէն ետքը

ձեռք առնուած միջոցներովն հաստատել, քան թէ յիշեալ հրամանատարին վկայութեանը հաստատ: Մանեան հրամանատարին ինչ կերպով վերագտնուող մարաշխաթին իմաց տրուելէն յայտնի կիմացուի թէ անոր կայսրէն ընդունած յանձնարարութեանը որչափ կարեւորութիւն արուած է:

« Մանեան հրամանատարն՝ Ռէյմոն Թիօնովիլը կրթալով այս կրկուան պիտի գայ. » գազանի հետագիր առ մարաշխաթն, զոր կուղղէ կայսեր քարաուղար Պ. Ռիէթրի:

Մանեան հրամանատարն Մէջ ուղեւորելէն յառաջ՝ Մաք-Մահօն մարաշխաթին հետ տեսակցութիւն մ'ըրաւ. իր ըսածին նայելով այս տեսակցութեան պատճառը յիշեալ մարաշխաթին յայտնել է եղեր, որ Մէջի զօրարանակին ի վէրտիւն ուղեւորութիւնն շատ դիւրին պիտի ըլլայ, եթէ Շալօնի զօրարանակն մինչև յիշեալ զօրարանակին քով կարենայ գալ:

Սեպտեմբեր 4 ի քննութեան յանձնաժողովոյն առջև Պ. Ռուհէրի տուած վկայութենէն կրնանք որ օգոստոս 21 ին Մաք-Մահօն մարաշխաթին իրեն իմացուցեր է թէ Պաղէն մարաշխաթն ոչ ուտեստ ունի և ոչ սաղմամթերք, և պարտաւորած է անձնատուր ըլլալու գաշնադրութիւն ընել, և Շալօնի բանակը շատ ուշ պիտի գայ:

Այս ըսածներն իս՝ որոնք մարաշխաթին ուղղած ցաւալի հետագիրներն կը հաստատեն, միայն Մանեան հրամանատարէն կրնան ստուգուիլ. վասն զի ատեանը իմացած է որ յիշեալ հրամանատարն քանի մ'օր վերջը Մօնմէտի զանուեղով Նօի ա-

անուն նաուն երկրորդ նաւադետին նկարագրեր է Մէցի զորաբանակին մէջ տիրած չափազանց սու վր: Իր ըսածին նայելով հայ ամենեւին չից կեղեր, և միայն ձիւ միս և դեանախնձոր ունին եղեր ուտելու, և այն ալ շուտով լմննալու վրայ է եղեր:

ՄԱՔ-ՄԱՀՕՆ ՄԱՐԱՊԱԽՅԻՆ ՌԵՅՄՍ ԵՒ ՎԵՐՁԸ
ՄՕՆՄԵՅԻ ԵՐԹԱԼԸ

Յիշեալ տեղեկութեանց Շարժի զորաբանակին ուղեւորութիւնը որոշելու մասին որչափ ազդեցութիւն ունենալն կրնայ գիւրաւ իմացուիլ:

Օգոստոս 18 ին՝ Մաք-Մահօն մարաշխտան առ ժամանակեայ պետական խորհրդոյ առաջնորդութեանն յարեցաւ, ինչպէս որ կայսրն ալ օգոստոս 18 ին այնպէս ըրած էր, և հետեւեալն հեռագրեց առ պատերազմի պաշտօնեայն:

« Հաճեցէք ըսել պաշտօնեայն խորհրդոյն որ ամեն ջանք պիտի ընեմ Պաղէնի երթալու համար: »

Այլ սակայն Մաք-Մահօն մարաշխտան տուած այս ապահովութիւնն իր տարակուսանացը վախճան մը չի առաւ, և առաւելն երեք օր այս ցաւալի տարակուսանաց մէջ մնաց:

« Պաղէն մարաշխտան առանձին թողուլը, զոր կը յուսայի մէկ վայրկեանէն միւսը Մէօզի վրայ տեսնել, ինձ ճշմարիտ վիշտ կը պատճառէր », ըսաւ նա սեպտեմբեր 4 ի քննութեան յանձնաժողովոյն առջև:

« Բայց միւս կողմանէ ալ՝ կարևոր կը թուէր

ինձ զփարիզ պաշտպանել և տակաւին Գաղղոյ ձեռքը պատրաստ գտնուած մէկ զորաբանակն ալ անփութս պահել: Ուստի Պաղէն մարաշխտան հետեւալը հեռագրեցի:

« Եթէ իմ կարծեացս համեմատ մտերս և տրաչուիլ պարտաւորած էք, ձեզմէ շատ հեռու գտնուելու համար, չդիտեմ ինչպէս ձեզ օգնութեան գամ վասն զի փարիզ ալ առանց պահպանութեան կմնայ: Եթէ ուրիշ որոշում մը կընէք, շուտով ինձ իմացուցէք: »

Օգոստոս 20 ին՝ Մաք-Մահօն մարաշխտան, առաւօտեան ժամ ութը քառասունըճինգ վայրկեան անցած հետեւեալը կը հեռագրէ առ պատերազմի պաշտօնեայն:

« Մեզ հասած տեղեկութեանց նայելով թըշնամեաց երեք զորաբանակներն այն կերպով ամրացած են որ Պրիէյի, Վէրտիւնի և Սէն-Միհիէլի երեք ճամբայներն ալ վտակած են Պաղէնի դէմ: որչափ որ այսօր ճամբայ ելնելու ալ պատրաստուած եմ, բայց և այնպէս Պաղէնի որ կողմնահանջելը չդիտնալուս համար կը խորհիմ որ մինչև որ Պաղէնի կամ Հելախախտակէն և կամ Հարաւախտակէն բնելիք ուղեւորութիւնը իմանամ, այն բանակատեղիս կենալ կը պարտաւորիմ: »

Ելէս օրուան դէմ լուր կը հասնի թէ Գերմանական զորաբանակին յառաջնութեանն բանակատեղիէն միայն 40 քիլոմէթր հեռու կը գըտնուին: Մարաշխտան դատելով որ հետեւեալ օրն կրնար թշնամեայն հետ ձակատ առ ձակատ գալ, կորոչէ Ռէյմս երթալ, և երեկոյեան ժամ չորս

քառասուն վայրկենին հետեւեալ հեռագիրն կուղ-
ղէ առ պատերազմի պաշտօնեայն :

« Վաղը Ռէյյան պիտի երթամ : Եթէ Պաղէն
հիւսիսակողմէն ուղեւորի, կրնամ անոր օգնութեան
հասնիլ : Իսկ եթէ հարաւակողմէն ճամբորդէ,
այնչափ հեռու պիտի գտնուիմ իրմէ, որ, ինչ
որ ալ բնեմ, չի պիտի կրնամ իրեն օգտակար ըլ-
լալ : »

Եւ յիրաւի հետեւեալ օրն, օգոստոս 21, զօ-
րաբանակն ուղեւորեցաւ ի Ռէյյան :

Մտք-Մահոն մարտիական կրակ թէ զօրաբանակն
օգոստոս 21 Ռէյյան հասաւ : Երեկոյեան դէմ՝ դուն-
դերուն հաստատուած տեղուանքը այցելելէ՝ վեր-
ջը, դարձայ իմ ընդհանուր բանակատեղիս ի Բուր-
սէլ : Հոն գտայ զՊ. Ռուհէր, որ ինծի իմացոյց թէ
ինչ պատճառներով Շալոնի զօրաբանակն Պաղէնի
օգնութեան համար ճամբայ պիտի ելնէ : Ես ալ
իմ կողմանէ իրեն իմացոյցի որ չեմ կարծեր թէ
Շալոնի զօրաբանակն թշնամոյն բազմաթիւ զօ-
րաբանակներուն մէջ տեղը փոխաւերալ վիճակի մը
մէջ ըլլայ, թէ՛ Մէյի մօտ Պաղէն մարտիական
դէմը գտնուած զօրաբանակն երկու հարիւր հա-
զարէն աւելի մարդոցմէ բաղկացած ըլլալու է,
թէ՛ ութսուն հազար հոգիէ բաղկացեալ և Սար-
սոնիայ իշխանին հրամանատարութեան ներքե
դրուած զօրաբանակ մը Վէրտիւնի վրայ կուղեւո-
րի . վերջապէս, թէ՛ Բրուսիայ արքայսրդին հար-
իւր յիսուն հազար հոգուով վիթրի կուգայ . ուս-
տի եթէ ևս Արեւելեան կողմն երթամ, կրնամ
փաստ մը կրել : Պաղէնի զօրաբանակն կրնար զար-

նուիլ, հետեւաբար, իրատ ամենակարեւոր էր
պահել Գաղղոյ Շալոնի զօրաբանակն որ տակաւին
բաւական պաշտօնեայնք ունէր երկու հարիւր յի-
սուն կամ երեք հարիւր հազար հոգիէ բաղկաց-
եալ զօրաբանակ մը կազմելու համար : Ի վերջ
բան՝ ամենաճշդիւս կերպիւ իմացոյցի իրեն որ
եթէ վաղը՝ օգոստոս 22, Պաղէն մարտիական
հրահանգ չընդունիմ, փարիզ պիտի երթամ : Կայս-
րը՝ որ կը յուսամ թէ իմ կարծիքէս է, բայց ա-
ղաատութիւն տուած է ինձ յարմար դատած միջոցս
ձեռք առնելու, ամենեւին դէմ չկեցաւ այս մա-
տին : Այն առեւ Պ. Ռուհէր համառօտիւ իմացոյց
ինձ որ Շալոնի զօրաբանակին մօտերս փարիզ եր-
թալն վճառելու և ազդարարուելու առաջադու-
թիւն մ'եղած է : Այս հրահանգներով Պ. Ռուհէր
երեկոյեան ժամ տասնըմէկին Շալոնէն մեկնեցաւ :

« Օգոստոս 22 ին, երբ փարիզ երթալու հրա-
ման ցրեած էի դունդերուս, և ահա առատօտ-
եան ժամ տասնին միջոցները՝ կայսրն Պաղէն մա-
րտիական Պան-Սէն-Մարթէնէն օգոստոս 19 ին
իրեն ուղղած հետեւեալ հեռագիրն հաղորդեց
ինձ . (որ ժամը 25 վայրկեան անցած ընդհանուր
բանակատեղին հասած էր) :

« Զօրաբանակն մինչև իրիկուն ի Ռօզելլիէօլ
Սէն-Բրիսիայի դրիցը վրայ պատերազմեցաւ, և իր
դիրքերն պահպանեց : Այս առաւօտ զօրաբա-
նակն դարձեալ Մօզէլի ձախ արանց վրայ իջեցաւ-
ցի . . : Միշտ նպատակս Հիւսիսակողմը երթալ և
վերջը Մօնմէտիէն ի Շալոն Սէն-Մէնէ հուլիս ձախ
բուն վրայ իջնել է, եթէ թշնամին այն ճամբուն

վրայ ամրացած ըլլայ : Եթէ այնպէս ըլլայ, Մե-
տանէն ու Մէլիքէրէն անցնելով Շալոն պիտի եր-
թամ :

« Յիշեալ հեռագիրն ընդունելուն պէս՝ հե-
տեւեալ առաօտուն դէպ ի Արեւելեան կողմը
երթալու հրաման տուի : »

Այս հեռագրոյն դալէն ժամ մը վերջը՝ այ-
սինքն առաօտեան ժամ տասը քառասունը հինգ
վայրկեան անցած՝ Շալոնի զօրաբանակին հրամա-
նատարն հետեւեալն կը հեռագրէ առ պատե-
րազմի պաշտօնեայն .

« Պաղէն մարաշխտան օգոստոս 19 ին դրեց որ
ինքը միշտ մտադիր է իր նահանջումն Մօնմէտի-
էն ընել : Հետեւաբար, ես ալ էան երթալու տը-
րամադիր եմ : »

Ժամ մէկը քառասունը հինգ վայրկեան ան-
ցած՝ Բալիքաս կաման հետեւեալ հեռագիրն կուղ-
ղէ առ կայսրն .

« Պաղէն մարաշխտէն եկած լուրերն ամբողջ
խորհրդոյն վրայ անտնի զգացում մը տպաւորե-
ցին որ չի կրնար ըլլալ : Երէկ իրիկուան եղած ու-
րուշումներն ետ պիտի թողուին : Ո՛չ վճիռ, ո՛չ
նամակ և ո՛չ ալ ասոնց նման բան մը չի պիտի
հրատարակուի : Պաղէնի օգնութեան չեղձան
Փարիզու համար աղէտալի հետեւեանքներ պիտի
ունենայ : »

« Այս ձախորդութեան առջեւ, պէտք է
վախնալ որ մայրաքաղաքը չի պիտի կրնանք պաշտ-
պանել : Չեր առ կայսրու հին ուղղած հեռագի-
րը զմեզ կը համոզէ, որ դուք ալ մեր կարծիքէն

էք : Հեռագրաւ պատասխանի մը կը տպանք : »

Կայսրն անմիջապէս ժամը չորսին հետեւեալ
պատասխանն կը գրիէ .

« Չեր հեռագիրն ընկալայ : Վաղը Մօնմէտի
կերթանք : »

Բայց սակայն օգոստոս 22 ի այն տրամութեան
օրն դեռ լրացած չէր : Օգոստոս 19 թուականաւ՝
առաօտուն ընդունուած հեռագիրն օգոստոս 20
Մէլէն դացած էր : Սոյն օրը մարաշխտան երկու
պաշտօնէի ձեռքով երեք հեռագիր գրկած էր ի
Թիօնվիլ, մին՝ կայսր, միւսը՝ պատերազմի պաշ-
տարազմի պաշտօնէին, և երրորդը՝ Մաք-Մահօն
մարաշխտին : Մի և նոյն ատեն քօֆիլիէր զօ-
րապետին մէկ նամակն ալ գրկուած էր : Քիչ մը
ետքը այս հեռագիրներուն վրայ պիտի խօսինք :
Հիմայ Մանեան հրամանատարին՝ կայսր հետ տե-
տակցելէն վերջը Շալոնի բանակատեղիէն մեկնե-
լուն վրայ դառնանք :

ՄԱՆԵԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ ԳԵՐԱԿԱՐԵՐ

Յիշեալ հրամանատարն օգոստոսի 18 ին կէս
օրը քառասուն վայրկեան անցած Շալոնէն մեկ-
նելով՝ երեկոյեան ժամ իննին միջոցներն հասաւ
ի Հայանժ որ 7 քիլոմէթր հեռու է Թիօնվիլէն :
Հոն խնացաւ որ ճամբան ապահով չէր, և հրա-
ման եղած էր որ ամեն հոն հասնող՝ ալ առաջ
չերթալով հոն մնայ : Ուստի յիշեալ հրամանատա-
րն՝ 132 քիլոմէթրի չափ ետ երթալով՝ օգոստոս
19 ին ժամը չորսը հինգ վայրկեան անցած Շալո-
վիլ կը հասնի, հոնկէ առաօտեան ժամ տասնըմէ-

կին կը մեկնի զինուորական վերատեսուչ Բրէվայի հետ, զոր առջի օրը հոն թողած էր, և ժամ երկուքը քառասուն վայրկեան անցած կը հասնի ի թիօնվիլ: Հոն կիմանայ որ թիօնվիլէն Մէյ տանայը երկաթուղին առտուընէ մինչև կէս օր ազատ բլլալէն վերջը՝ կէս օրը մէկ ժամ անցած Մէյդիլը-լէ-Մէյը ըսուած տեղը կարուեր է: Մանեան հըրամանատարն յիշեալ քաղաքին կառավարիչ թիւրնիէ գնդապետն իր քօլը կը կանչէ, և անոր հետ տեսակցելէն վերջը՝ ժամը վեցը քսան վայրկեան անցած կը վերադառնայ ի Մօնմէտի:

Մանեան հրամանատարն իր այս երթեւեկու-թիւններովն կրցաւ Շալօնի բանակատեղիէն ընդունած հրահանգներն մարաշախտին հասցընել:

Երբ յիշեալ հրամանատարին հարցուեցաւ թէ հեռագիրներն թիւրնիէ գնդապետին յանձնած չէ՞ր զաննք Մէյը զրկելու համար, պատասխանեց թէ՛ ո՛չ, և թէ օգոստոս 22 կամ 21 ին միայն թիւրնիէ գնդապետին հետ բանակցութեան մտած է մարաշախտին հեռագիրներ հասցընելու և անկէ Մէյցէն ընդունած լուրերն իրեն հաղորդել խընդ-րելու համար:

Այս այլ և այլ պարտղայից նկատմամբ երբ թիւրնիէ գնդապետն վկայութիւն տալու կանչուեցաւ, պատասխանեց թէ չի կրնար հաստատել թէ Մանեան հրամանատարն մարաշախտին համար իրեն հեռագիր յանձնած է թէ ոչ:

Ատեանը ամեն կերպիւ կրցաւ հաստատել թէ այս մասին առիթ չէր պակսեր:

Պ. Մէյրսիէ օգոստոս 19 ին առաւօտեան ժամ

եօթնին թիօնվիլէն մեկնելով՝ իրեն յանձնուած հեռագիրներն Մէյ տանելէն վերջը երեկոյեան ժամ չորս ու կէսին հասաւ ի թիօնվիլ:

Անտառապահ Տէչիւ օգոստոս 19 ին երեկոյեան ժամ եօթնին միջոցներն թիօնվիլէն մեկնելով՝ հետեւեալն օրն, օգոստոս 20, առաւօտեան ժամ տասնին հասաւ ի Մէյ, և մի և նոյն օրն իր պաշտօնատեղին գնաց:

Ոստիկանութեան գարձակալ Ֆրանսօ օգոստոս 20 ին առաւօտեան ժամ ութին թիօնվիլէն մեկնելով՝ ժամ երկուքին հասաւ ի Մէյ տանց մէկու մը հանդիպելու: Հետեւեալ օրն օգոստոս 21, քանի մը Գերմանական նիզախարներու հարածանքներէն խոյր տալով՝ դարձաւ ի թիօնվիլ:

Նոյն օրն՝ տիկին Խմպէր իր կառքովն անարգել Մէյցէն թիօնվիլ գնաց:

Վերջապէս՝ Պ. Բընու, օգոստոս 20 ին առաւօտեան ժամ իննին կառքով Մօնմէտիէն մեկնելով՝ երեկոյին հասաւ ի Մէյ:

Ուստի՝ Մանեան հրամանատարն օգոստոս 19 ին երեկոյին Հայտնիէն Շարլիլը դաւանալէն առաջ՝ թիօնվիլի հեռագրական կայարանը՝ սրով միայն կը հաղորդակցուէր, կրնար հեռագիր մը զրկել զսր Պ. Մէյրսիէ հետեւեալ առաւօտուն իր հետը կը տանէր:

Օգոստոս 19ին, Մանեան հրամանատարն թիօնվիլ կուգայ յիշեալ կայարանը թիւրնիէ գնդապետին հետ տեսակցելու համար:

Այս տեսակցութենէն վերջը՝ երկու պաշտօնեայ կը զրկուին ի Մէյ: Խեղբ ունեցողը կրնայ ըն-

դունիլ որ յիշեալ պաշտօնեայք հետերնին մարա-
 թախտին համար հեռագիր մը տարած չըլլան :
 Մանեան հրամանատարն զայս կը հաստատէ . բայց
 նոյնպէս կը հաստատէ նաև որ օգոստոս 18 էն 19
 լուանալու գիշերը Մէջի բոլորտիքը պատնիշա-
 փակուած էր . և ամենէն քաջ մարդն անգամ չէր
 կրնար Բրուսիական դունդերէն անցնիլ . այս հաս-
 տատութեան ինչ արժէք ունենալն իմացանք :

Մանեան հրամանատարին վկայութեանը մէջ
 գտնուած օտարոտի սխալմունքներն հաղորդակ-
 ցութեանց վերաբերեալ հաստատման մէջ երեւան
 հանել պէտք ըլլալուն , հիմակու հիմա կը թողունք
 զայն :

Դարով թիւրնիէ գնդապետին , որն որ իր յի-
 շողութեան տկար ըլլալն խոտտովանելով ինքզինքն
 արդարացընել կը ջանայ , անոր ալ ատեանին առ-
 ջեւ ունեցած կացութիւնն ու գիրքը նոյնպէս այս
 դիտոյն մէջ պիտի ստուգենք :

Հիմայ զարմանալի բան չէ որ մարաթախտն
 մինչդեռ օգոստոս 18 ին Մանեան հրամանատարին
 դարձը Պ. Բիէթրիէն կիմանայ և օգոստոս 20 ին
 թիւրնիէ գնդապետին առ զօրապետն Գօթիսիէր
 ուղղած մէկ նամակն ալ կը ցուցընէ թէ իր օդնա-
 կան զօրախարն Մօնմէտի գտնուելով իր հրահանգ-
 ներուն կտպառէ , ինքը օգոստոս 18 էն մինչև 21
 բնաւ անոր լուր մը չի գրիւեր այն այլ և այլ պաշ-
 տօնէից միջոցաւ որք իր հեռագիրներն իրեն բե-
 րին :

Այսպիսի կացութեան մը վրայ , ատենը չի
 կրնար ընդունիլ որ Պագէն մարաթախտն ու Ման-

եան հրամանատարը իրարու հետ հաղորդակցած
 չըլլան : Կրնանք նաև հաստատել որ եթէ Ման-
 եան հրամանատարն , որուն քաջութեանն ու խոհա-
 կանութեանը վրայ բնաւ մէկը չի կրնար տարա-
 կուտիլ , այնչափ դիւրութիւններ ունեցած ատեն
 իր պաշտօնատեղին դարձած չէ , պատճառն այն
 է որ ինքը ուղղած չէ :

Մարաթախտին օգնական զօրախարն միթէ իր
 Մօնմէտի գտնուիլն աւելի օգտակար դատած է ,
 ուր մեծամեծ պատրաստութիւններ կըլլային երկու
 բանակաց միացման համար :

Կամ թէ միթէ մարաթախտն իրեն իմացուցած
 է որ իր քովը չգայ : Այս երկրորդ ենթադրու-
 թիւննիս այնչափ աւելի հաւանական կերելի , որ
 այսպիսի որոշում մը կրնար մարաթախտին դիւրու-
 թիւն տալ , եթէ ի վերջոյ պէտք ըլլար , որ իրեն
 զրկուած հրահանգներն չիմանալուն և որով իր
 յատուկ որոշմանցը անալուն համար ինքզինքը
 արդարացընելու իրաւունք մ'ունենայ : Այս աւե-
 լի աղէկ կրնանք հաստատել , երբ կը տեսնենք որ
 մարաթախտն վերջէն օգոստոս 23 ի հեռագրոյն
 իրեն հասնիլը յամառաբար կուրանայ : Գաղղոյ
 ներքնոյն և նոր կառավարութեան հետ հաղոր-
 դակցելու մասին մարաթախտին անկարելիութիւն
 ցուցընելու համար ի վերջոյ ըրած ջանքերն յայտ-
 նի կտպացուցանեն մարաթախտին այն կերպ մէկ
 վարմունքն որ այն պարագայիս մէջ խիստ աղէկ
 կը նշմարուի :

Առանց վերոյիշեալ ենթադրութեան չենք կըր-
 նար երեւան հանել այն խորամանկութիւններն ,

որք պաշարման առաջին օրերն Մէջի և Թիօնվիլի հաղորդակցութիւններն խափանեցին, խորամանկութիւններ՝ որք մինչեւ անձնատուր ըլլալու դաշնագրութեան օրը ի գործ դրուեցան :

Այս կէտը աւելի մանրամասնութեամբ բացատրուած է հաղորդակցութեանց վերաբերեալ հատուածին մէջ :

Ատեանը կրնար այսպիսի ենթադրութեան մը բնաւ հաւատք չընծայել, եթէ իր ըրած բոլոր քննութեանց առնել մարաշխատին վրայ՝ իր հրամանատարութեան պատասխանատուութենէն ազատելու համար միշտ սուտ ու փուտ պատճառներ յառաջ բերելու յայտնի սովորութիւն մը չի տեսներ :

ՀԱԼՕՅԻ ԵՒ ՄԷՅԻ ԶՕՐԱՐԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՄՕՆՄԷՏԻ ՄԷՋ ՄԻԱՆԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ ԵՂԱԾ ՊԱՏՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընթերցողք կը յիշեն որ Մանեան հրամանատարն օգոստոս 19 ին իրիկունը Մօնմէտի հասած էր : Օգոստոս 19 էն 20 լուսնալու գիշերը՝ զինուորական գլխաւոր վերատեսուչն Վօլֆ և Տէժէան զորապետն որ Մէջի զօրաբանակին գործաւորացը հրամանատար անուանած էր, Վէրտինէն վերադառնալով հոն եկան և իրենց պաշտօնատեղին երթալ կուղէին : Յիշեալ երկու անձինք տեսնելով որ թշնամոյն հեծելազօրքը Վէրտին ամբարացած են, Վէրտինէն մեկնած էին : Գլխաւոր վերատեսուչն՝ Բրէվալ վերատեսուչին և Մանեան

հրամանատարին հետ բանակցելէն վերջը՝ ժամատանը մէկը աասնըտոս վայրիկան անցած ի վէրտինն գլխաւոր հրամանատար զօրապետին հետեւեալ հեռագիրն կուղղէ, զոր նոյն ինքն զօրապետն Տէժէան ալ կրտարագրէ աւելի հաստատութիւն տալու համար :

« Ուտեստի կառքերն ու ոչխարաց հօտը շուտով Մօնմէտի զրկեցէք . Հոններու մէջ բեռցրուած ուտեսաներն ու բոլոր ազդեամթերքն դէպ ի Ռէյմս ճամբայ հանեցէք : Մեր առած տեղեկութեանց նայելով՝ այս բաժնեկրկա կատարելու մասին բնաւ տարակուսելու չենք : »

Առաւօտուն ալ վերատեսուչն Բրէվալ Շարլը վիլ պատուէր զրկած էր որ խիստ շատ հաց չի հեն : Միով բանիւ, ամեն բան կը պատրաստուէր բանակաց ընդհանուր միութեան մը համար :

Պատերազմի պաշտօնեայն ալ իր կողմանէ, զօրաբանակին Արտէնի ճամբով ետ քաշուելուն համար հրամաններ կուտար :

Յիշեալ պաշտօնեայն օգոստոս 19 ին երեկոյեան ժամ եօթնին Թիօնվիլի հրամանատարին հետեւեալն կը հեռագրէ :

« Զուշացէք որ Մէջիէրէն Թիօնվիլ տանող երկաթուղոյն վրայ ակոսներ չի գտնուին, որպէս զի չըլլայ թէ Բրուսիացիք խմանալով անոնց կրակ տան : Պէտք է միայն ապահով տեղ մը և յիշեալ երկաթուղոյն մօտերը վառօդ, պատրոյգ և ուրիշ հրազինաց նիւթեր պահել, որպէս զի եթէ զօրաբանակն այն ճամբէն ետ քաշուի, իր պիտու յեցը գործած է : »

Պատերազմի պաշտօնէին յիշեալ գրութենէն կիմացուի որ այս ուրեմն վէրտիւնի վրայ ետ քաջուելու ալ խօսք չկայ եղեր: Օգոստոս 20 ին պատերազմի պաշտօնեայն քանի մը ժամ վերջը (տասներկու քը յիսուն վայրկեան անցած) Արտէնի ճամբուն նկատմամբ եղած այս արամադրութիւններն Պաղէն մարտնչախօսին իմացուց, և յանձնարարեց իրեն որ այդ արամադրութիւններն իրեն ծանուցանող հեռագիրներն կարելի եղած միջոցներով իրեն կը հասցնէ:

Արդ՝ օգոստոս 20 էն գլխաւոր զինուորական վերատեսուչն վօլֆի գլխէր որ Պաղէն մարտնչախօսն վէրտիւն չի պիտի ուղեւորի, և Մօնմէտի պիտի վերադառնայ, վասն զի հրաման ըրած էր որ մարտնչախօսին հրամանաւր վէրտիւն հաւաքուած ուտեստն Մօնմէտի տեղափոխուի: Յայտնի է որ այս միջոցներն չէ թէ կամօք գործադրուած են, այլ Մանեան հրամանատարին իմաց տալովք, որն որ Պաղէն մարտնչախօսէն ու կայսրէն ուղղակի հրահանգներ ընդունած է:

Յիշեալ հրահանգաց համեմատ գործադրուած միջոցներուն վրայ՝ Մօնմէտի զօրբանակին գալլատեանը սպասող զինուորական պաշտօնէից միտքը դրաւուելով՝ օգոստոս 20 էն 21, իւրաքանչիւրն իր կողմանէ հեռագիր հեռագրոյ վրայ դրկից Պաղէն մարտնչախօսն յիշեալ գործադրուած միջոցներն իրեն ծանուցանելու համար:

Զինուորական գլխաւոր վերատեսուչն վօլֆի չի կրցաւ ըսել, թէ ինքը ուսիկց տեղեկութիւններ ընդունելով՝ այնպէս իշխանաբար անանկ հրաման

տալ համարձակած էր, որով Պաղէն մարտնչախօսն առաջագրութեանցը կերպով մը տեղեակ ըլլան կ'ապացուցանէր:

Ատեանը կրցաւ հաստատել որ յիշեալ վերատեսուչն այս տեղեկութիւնները Մաք-Մաճոն մարտնչախօսէն ընդունած չէր: Հետեւաբար, կրնանք ըսել որ կամ իրելվալ վերատեսուչն և կամ Մանեան հրամանատարէն իրեն հաղորդուած ըլլան: Այս ըսածնիս անհերքելի կերպիւ հաստատելու համար պէտք է դիտնալ որ Մօնմէտի մէջ եղած ամէն պատրաստութիւնք Մէցի զօրբանակին վերակացուացը և Պաղէն մարտնչախօսն օգնական զօրախօսին թեղադրութեանքը եղած են:

Այս ըսածնիս կրնանք նաև ապացուցանել այն հեռագրով՝ զոր ներքին գործոց պաշտօնեայն օգոստոս 22 ին (ժամ 10, 20) ուղղած է առ քաղաքապետս, որոյ օրինակն հետեւեալն է:

«Կառավարութիւնը երկու օրէ ի վեր է հեռագրական յարաբերութեանց ընդմիջման պատճառաւ: Հանտի զօրբանակին վրայօք լուր մը շտնելուն վրայ իրաւունք ունի խորհելու որ Պաղէն մարտնչախօսն գաղափարած յատակագիծը դեռարդիւնք մ'ունեցած չէ:»

Ասիկց յառաջ տեսնաք որ պատերազմական պաշտօնէին գլխաւորութիւնը՝ օգոստոս 23 ին Շալոնի զօրբանակն վէրտիւնի բարձանցը վրայ տանկէր, որպէս զի օգոստոս 26 ին վէրտիւնի և Մէցի մէջ տեղը պատերազմի: Պաղէն մարտնչախօսին Մօնմէտի նահանջելու ազդարարութիւնը կը յայտնէր որ Մաք-Մաճոն մարտնչախօսն նոր

ուղեւորութիւն մը ընելու պիտի հարկադրի, ուղեւորութիւն մը որ յատկապէս այս եղանակաւ պիտի զիւրանար:

Իրաց այս վիճակին մէջ, օգոստոս 26 ին երկու զորաբանակաց ընելիք միութիւնը Մօնմէտիի մէջ պիտի ըլլար, ու չեթէ վէրտիւն:

Գլխաւոր վերատեսուէն վօլօֆ ոյս մտաին հետեւեալ ամենակարեւոր անզեկութիւններն կուտայ:

«Չեմ մոռնար երբէք յիշելու, ըսաւ նա իր վկայութեանը մէջ, որ օգոստոսի 26րդ օրն մինչեւ իրիկուն ամէն գործերէ ետ կեցած միայն զորաբանակին գալտեսներ կրպակէի: Պազէն մարտիական ուղղակի իրէլլալ վերատեսուէն զրկած էր Արտէնի ճամբան Մօնմէտիի բարձանը զրոյ ուտեստ պատրաստելու, և Շալօնի բանակատեղիէն ալ ինծի իմաց տրուած էր որ ես ալ օգոստոս 26 ին մի և նոյն տեղը Մաք-Մաճօն մարաջախտին զորաբանակին համար ուտեստ պատրաստեմ. ասիկց կրցայ հետեւցընել որ օգոստոս 26 ին երկու զորաբանակներն պիտի միանան:»

Ի հաստատութիւն վօլօֆ վերտեսուին յիշեալ վկայութեան, զատուտանական արձանագրութեանց հաւաքածոյից մէջ հեռագիր մը կը տեսնենք, զոր օգոստոս 23 ին՝ ժամը եօթը տասն և եօթը վայրիկան անցած կուղղէ առ երկրորդ վերատեսուէն Սթէնէյ, և որոյ պարունակութիւնն մտալուտ պատերազմ մը կիմայրնէր:

«Չեր և չրկակայից տեղափոխութեան յոտակացեալ բոլոր միջոցներն ի մի հաւաքեցէք: կառ-

քերը յարգով լեցուցէք և պատրաստ ըրէք զանոնք երթալ վիրաւորեալներն բերելու: Բնակչաց պատուիրեցէք որ արդանակ պահեն քովներնին:»

Աստամայն Մօնմէտիի քաղաքապետի երկրորդն չրկակայից քաղաքապետներուն հետեւեալ խօսքերով տեղեկութիւններ կը զրկէ. «Տեղի ունինք վախնալու որ մեզի մօտ սա օրերս պատերազմ մը պիտի ըլլայ:»

Ուստի թէ Մօնմէտի և թէ չրկակայքը երկու դաղըխական բանակաց միութեան համար օգոստոս 19 էն մինչև 26 շարունակ ամէն օր պատրաստութիւններ կը տեսնուին:

ՊԱՋԷՆ ՄԱՐԱԶԱՍԻՅԻՆ ՕԳՈՍՏՈՍ 20 ԻՆ ԴԲԱՍԾ
ՀՆՌԱԳԻՐՆԵՐԻՆ

Ինչպէս որ յայտնի է մեր ընթերցողաց, օգոստոս 20 ին երեկոյեան գէմ մարաջախտն երեք հեռագիր զրկած էր, մին՝ առ կայսր, միւսը՝ առ պատերազմական պաշտօնեայն, և երրորդն՝ առ Մաք-Մաճօն մարաջախտն: Ատնցմէ վերջինն՝ այն է Մաք-Մաճօն մարաջախտին զրկուածն ամենէն կարեւորն ըլլալուն՝ հոս կը կրկնենք:

«Չորաց հանգիստ տալու և ուտեստ ու ուղեւորութեան հայթայթելու համար պարտաւորեցայ Մէյի մօտ հաստատուիլ: Թշնամին բոլորաբար միշտ ստուարանալու վրայ է, հաւանական է որ գէտ ի Հիւսիսակողմը դամ ձեզ հետ միանալու համար, եթէ ասով զորաբանակս զնստելու առիթ տուած

չբլամ՝ բայց ճամբաց ելնելէս առաջ ձեզ կիմա-
ցընեմ :

Յիշեալ հեռագիրը միայն Մաք-Մաճօն մարտ-
նախին ընթացքը արգիլելու և Մօնմէաի եղած
պատրաստութիւններն դադրեցընելու կամ ուշա-
ցընելու բացայայտ առիթ մը կը պարունակէ :

Պաղէն մարտնախան իր հարցաքննութեանց
ատեն, Մաք-Մաճօն մարտնախան հետ ունեցած
այլ և այլ հաղորդակցութեանց գլխաւոր կարեւո-
րութիւն մը տալու ջանքեր կընէ . այն հաղորդակ-
ցութիւններն գլխաւորի մը իր իշխանութեան տակ
գտնուած մէկու մը տուած հրահանգներն են .
միւս տեղեկութիւններն ալ պարզապէս արդարա-
բութիւններ են : Ուստի Մաք-Մաճօն մարտնա-
խան զրկուած հեռագիրն նշանաւոր օգուտ մը կը
ներկայացընէր :

Դժբաղդարար Մաք-Մաճօն մարտնախան այն
հեռագիրն ընդունած է, վասն զի արդիւուեցաւ :

Ատենը տեղեկացաւ որ տիկին Լուիզ իմպէր
այն օգոստոս 20 ի հեռագիրներն Մէյէն թիօնվիլ
տարած է, և անոնց պատճէններն ալ նայնպէս
ճշտօ անուն ստիկանութեան պաշտօնէի մը յանձ-
նուեր են :

Յիշեալ հեռագիրներն օգոստոս 21 ին կէս օր-
ուան դէմ հասան ի թիօնվիլ : Հեռագրական թե-
լը երկու ժամէ ի վեր կարուած ըլլալուն (առա-
ւօտեան ժամ 10, վայրկեան 15) թիւրնիէ դնդա-
պեան զանանք Լօնկվիլ տեղական ոստիկանու-
թեան դորձակաաար Պ. կիւյարի ձեռօք անմիջա-
պէս զրկեց : Միանգամայն այն հեռագիրներուն

օրինակներն՝ բազմաբուեատական դպրոցի աշա-
կերտ Պ. ար Պազըլէրի յանձնեց, որ կուղևորէր ի
Փարիզ : Սոյն երկտասարդն ալ հետեւեալ օրն զա-
նանք թիվէի հեռագրական կայարանին զրկեց :

(Հաղորդակցութեանց վերաբերեալ յաւել-
ուածոյն մէջ օգոստոս 20 ի հեռագրաց զրկուե-
լու մասին խիստ շատ մանրամասն տեղեկութիւն-
ներ կան, զորս հան յիշատակել պարտաւորե-
ցանք, որպէս զի իրաց ընդհանուր գիլքը չընդմի-
ջենք :

Կայսեր զրկուած հեռագիրն՝ կէս օրէն վերջը
ժամ երկու քը տասնեկու վայրկեան անցած, Լօնկ-
վիլի տեղական հրամանատարին, Մասարօլի գըն-
դապետին միջոցաւ իրեն հասաւ : Պատերազմա-
կան պաշտօնէին զրկուածն ալ ժամ երկու քը քսան
վայրկեան անցած մի և նոյն եղանակաւ հասաւ ի-
րեն :

Սոյն վերջին հեռագիրն Լօնկվիլի հրամանա-
տարէն կարգուած տեսուչներուն ձեռօք կայսեր
զրկուեցաւ . կայսրն ալ երեկոցեան ժամ 8. 35
վայրկեան անցած պատերազմական պաշտօնէին
ձեռքը հասուց :

Մասարօլի դնդապետն իրեն յանձնուած հե-
ռագիրն ուղղակի Մաք-Մաճօն մարտնախան չի
զրկեց . այլ այն հեռագիրն վերոյիշեալ տեսուչ-
ներուն ձեռքն անցաւ, և անանք ալ զայն Մաք-
Մաճօն մարտնախան պաշտօնատարին տեղեկու-
թիւններ հաղորդելու յատկացած պաշտօնէից գըլ-
խոյն՝ Սթօֆէլ դնդապետին յանձնեցին : Ահաւա-
րիկ այս մասին պաշտօնտեղական գրութիւն մը :

« Լօնկվի, 22 օգոստոս 1870, Երեկոյեան Ժամ 4, 50 վայրկեան: »

« Պատճէն գրոյն: — Նորին վեհմութեան Մագ- Մահօն մարաշախտին քով պաշտօն ունեցող Սթօ- Ֆէլ զնդապետին զրկուած տեսուչներն: »

« Զօրաց հանգիստ աալու և պաշար մատակա- րարելու համար, պարտաւորեցայ . . . ևն . . . — Հրամանատար Թիօնկիլ քաղաքին, ստորագրու- թիւն. Թիօնկիլ: »

« Բնագիրն ստացանք. Լօնկվի քաղաքին հը- րամանատար Մտարօյի զնդապետն ալ Նորին վե- հափառութեան կայսեր հեռագիրներն ուղղած էր, որոնցմով Պաղէն մարաշախտին գտնուած դիր- քերն կիմացընէր: « Տեղերնիս դառնանք: Շու- տով պատասխան: Ստորագրութիւն. Բագու և Միս: »

« Ընկալեալ ի Լօնկվի (Ժամ չնկնանկուած), Բէամն: Գործադրուած: »

Այս հեռագիրն բնա-Մագ-Մահօն մարաշախտին չի գրուէր:»

Այս մտին մարաշախտին հարցուած ատեն սա պատասխանը տուաւ. « Սոյն հեռագիրն բաւա- կան կարեւոր է իմ միտքս գրաւելու համար, ե- թէ ատոր վրայօք տեղեկութիւն մ'ունենայի. բայց ամենեւին միտքս չգար: » Մարաշախտին պէս՝ իր սպայներն ալ և Ապտօք ու Պրօյ զնդապետներն ալ յիշեալ հեռագիրէն բնաւ տեղեկութիւն չու- նին: Արդ մինչդեռ օգոստոս 20 ին Մագ-Մահօն մարաշախտին զրկուած հեռագիրն իրեն չի հա- տաւ, մի և նոյն թղթատարի ձեռքով կայսեր զըր- կուածն իրեն կը հասնի: Երբ հարցուեցաւ մարա-

շախտին թէ օգոստոս 20 ին կայսեր զրկուած հե- առադրոյն վրայօք տեղեկութիւն մը չառաւ, այս- պէս պատասխանեց .

« Կը յիշեմ՝ որ կայսրն ինծի կիմացուց Մարինա զօրապետն սպաննուած էր. բայց չեմ յիշեր որ ամբողջ հեռագիրն ինծի հաղորդած ըլլայ: »

Բայց և այնպէս մարաշախտին ուղղուած հե- առագիրն՝ Լօնկվիի հրամանատարէն կարգուած տեսուչներուն, այն է Պ. Պ. Բապասի և Միէսի ձեռօք Սթօֆէլ զնդապետին զրկուած էր, ինչ- պէս որ վերը յիշեցինք:

Ո՛վ էին յիշեալ հրամանատարէն կարգուած տեսուչներն: Ասոնք ստիկանութեան գործակալ- ներ էին, զորս օգոստոս 12 ին Սթօֆէլ զնդապե- տըն Պ. Բիէթրիէն ուղած էր: Սոյն զնդապետն օգոստոս 20 ին պատուէր տուած էր յիշեալ գոր- ծակախնդրուն որ ջանան մինչև Պաղէն մարաշախ- տին քովն երթալ և իր հեռագիրներն ընգու- նիլ. միանգամայն պատուիրած էր իրենց որ ա- ուած տեղեկութիւններնին անձամբ իրեն հաղոր- դեն:

Գործակալներն Լօնկվի ուղևորեցան, և իրենց հետ միատեղ հան հասաւ նաև Պ. Կիյար իրենց պաշտօնակիցը, որ Թիօնկիլէն կուդար օգոստոս 20 ի չորս հեռագիրներն իր հետը ունենալով: Գործակալներն յիշեալ հեռագիրներն առնելով՝ անոնց օրինակը Սթօֆէլ զնդապետին կը զրկեն, և սոյն դիւսաւօր պաշտօնեացէն հեռագրաց հաս- նելուն լուրը և վերստին զօրարանայն դառնալու հրամանն կընդունին: Օգոստոս 26 ին հասած զօ-

բարանակը ի թէթէլ և հեռագրաց բնագիրներն գնդապետին կը յանձնեն :

Ուրեմն յիշեալ հեռագիրն առ նուազն երկու անգամ Մթօֆէլ գնդապետէն խափանուեր է . մէյ մը՝ օգոստոս 22 ին , երբ հեռագրաթերով իւրեն հասաւ . և մէյ մ'ալ օգոստոս 26 ին , երբ գործակաղներն բնագիրը իրենց յատուկ ձեռքովըն իրեն յանձնեցին : Առ նուազն երկու անգամ ըսինք . որովհետեւ Պաղքէր երիտասարդին յանձնուած հեռագիրն ալ իր տեղը չէ հասած , և նոյնպէս Մթօֆէլ գնդապետէն խափանուած է :

Այս կէտին վրայ երբ Մթօֆէլ գնդապետն հարցաքննուեցաւ , նախ և առաջ պատասխանեց թէ ատանկ բան մը ամենեւին չիլեր , և վերջէն այնպիսի իրողութեան մը կարելիութիւնը հաստատեց : Երբ հետզհետէ ներուեցաւ , ուրացաւ , բայց խիստ չիտթ դէմքով մը : Քայց և այնպէս խել մը անհերքելի փաստեր կրտառուեն առանց որ և է տարակոյս մը ձգելու . որ Մթօֆէլ գնդապետն մարաշխտին զրկուած հեռագիրն արգիւլեր է : Հիմա կրնանք ընդունիլ որ գնդապետն ըստ ինքեան ազանկ բան մը ընելու համարձակած ըլլայ : Այս կէտին վրայ վայրկեան մը չենք կրնար տարակուսիլ : Յայտնի է որ ինքը այդ մասին հրամաններ ընդունած ըլլալու է . այդ հրամաններն ուսիկն առած է . ս'վ կրնայ ըսել : Ինչ և իցէ , Մթօֆէլ գնդապետն՝ մինչդեռ իր մարաշխտին մասնաւոր մէկ պաշտօնեացն և պէտք եղած տեղեկութիւններն հաղորդելու յատկացած մէկ անձ մը ամենէն աւելի իր գլխաւորին հետ ձյնորտու-

թեամբ վարուիլ պարտաւորած էր , զանկ խաբելու մտօք սցապիսի խորամանկութիւն մը ըրած է : Ըլլալուն համար անլուր գործողութիւն մ'ըրած է :

Այս իրողութիւնն հակաձառութեամբ կրնայ բաւական մեծ կարեւորութիւն մ'առնուլ , վասն զի ստուգիւ առով միայն պիտի կրնանք Մէտանի աղետից նկատմամբ մարաշխտին վրայ ինկած պատասխանատուութիւնն հաստատել : Մարաշխտան որչափ որ օգոստոս 20 ին Մաք-Մահճն մարաշխտին զրկուած հեռագրոյն արգիւլուելու խորամանկութեանը բնաւ գործակից դանուած չէր ալ նէ , բայց և այնպէս նոյն օրը իր զրկած հեռագրաց մէջ կայսեր և պատերազմական պաշտօնէին դէմը լուութիւն պահելով վերջէն Մէցի զօրաբանակին ընկեացքը ազդարարող լուր մը չի տալուն և այնպիսի կարեւոր կէտի մը նկատմամբ զանցառութիւն ընելուն համար պատասխանատու է : Ինչո՞ւ համար այս ամենակարեւոր լուրն անոնց ալ չի յազրոյցեց , մինչդեռ իր Մաք-Մահճն մարաշխտին զրկած հեռագրոյն մէջ յիշած էր : Միթէ վիհապետին ու պատերազմական պաշտօնէին ալ մի և նոյն հաւատարմութիւնը չէր պարտաւորեր : Պէտք է յաւելուլ նաև որ երբ Մաք-Մահճն մարաշխտին հարցուեցաւ թէ՛ « Իմ ուղեւորութիւնս յառաջուց ձեզ պիտի իմացընեմ » խօսքերով վերջացած հեռագիրն ընդունած ատեն՝ ճամբոյ ելած ըլլար առանց Պաղէն մարաշխտէն մէկ նոր ազդարարութիւն մ'ընդունելու պէտքն զգալու , Ինչո՞ւ պատասխանեց որ յիշեալ հեռագիրն ընդունելէն վերջը հաւանական է որ իր ուղեւոր-

բութիւնն շարունակէր դէպի Մէօզ, առանց հոն հասնելէն վերջը ինչ ընկելիքն գիտնալու :

Ատեանն այս վնհանձն յայտարարութեան առ վե կը խոնարհի : Բայց թէ որ օգոստոս 20 ի հեռագրոյն արգիլուիլը Մաք-Մահօն մարալխատն նորանոր տարակուսանայ մէջ չի ձգելու պատճառեղաւ, սակայն չի կրնար Մէտանի աղետից նկատմամբ զմարալխատն իր առաջին պատասխանատուութենէն ազատել : Պաղէն մարալխատն իր Մէցէն դուրս ելնելու առաջագրութիւններն կառավարութեան խնայողութիւնով, և անգամ մ'ալ Մէցի մէջ յայտնի աղէտք մը ծագելու վախ մը ցուցրնելու չափ, ուտետի և ռազմավորից պակասութենէն գանդատելով և իր առաջին դիտարութեան իրեններն չիրակնացընելով կը պարտաւորէր վերջապէս Մաք-Մահօն մարալխատին օգնութեան հասնելու յուսահատ ջանքեր ընել : Եթէ այդ ջանքերն աղէտք մը ծնան, պատճառն ինքը եղած ըլլալուն համար ինչպէս կրնայ պատասխանատուութենէ ազատիլ :

Մակայն այս պատասխանատուութիւնն մասնաորապէս այն ատեն կը ծանրանայ, երբ Պաղէն մարալխատին Մաք-Մահօն մարալխատին ուղեորութեան լուրն առնելով ինչ վարմունք ունենան ի նկատի առնունք :

Մարալխատն յիրաւի այդ ուղեւորութիւնն իմացաւ, և սակայն անչարժ մնաց, և իր տեղակալն իր գտնուած խիտ մեծ վտանգէն գալ աղատելու նպատակաւ բնաւ փորձ մը չի փորձեց :

ՅԱԼՕՆԻ ԶՕՐԱԲԱՆԱԿԻՆ ՌԻՎԵՆՈՐՈՒԹԻՒՆՆԸ ԱԶԳԱՐԱՐՈՂ ՄԷԿ ԷՆՌԱԳՐՈՑՑ ՕԳՈՍՏՈՍ 23 ԻՆ ՄԷՑ ՀԱՍՏԵՆԸ

Պաղէն մարալխատին կացութիւնն իմանալու համար բաղմամբիւ պաշտօնեայնէր զրկուած էին ի Մէց : Կայտուհին և պատերազմական պաշտօնեայն ալ զրկած էին ատանկ պաշտօնեայնէր : Նոյնպէս Տէժէան զօրապետն, ղինուորական գլխաւոր տեսուչն վօլքի, վերատեսուչն Բրէվալ, Մանեան հրամանատարն և զօրագլուխն վօտէօր ալ Արտէնի ծամրուն այլ և այլ կողմերն պաշտօնեայնէր զրկած էին :

Ատեանը հաստատեց որ օգոստոս 23 ին պաշտօնեայ մը կէս օրէն վերջը հասաւ ընդհանուր բանակատն ղին : Ահաւասիկ ոյս մասին Լուլալ դընդապետին տուած վկայութիւնը :

« Օգոստոս 23 ին, կէս օրէն վերջը ժամ երկու կամ երեքին քաղաքական սուրհանդակ մը գլանիկի պէս բոլորուած հեռագիր մը բերաւ յանձնեց ինձ, և ես ալ զայն ըստ սովորութեան Պ. Պաղէն մարալխատին յանձնեցի : Երբ հարցուցի իրեն թէ սուրհանդակին հետ զրկելիք բան մ'ունի, ո՛չ պատասխանեց ինձ և պատուիրեց որ մարդը վար դնեմ : Ողջունելով զինքը մեկնելու վրայ էի, և ահա մարալխատն ըսաւ ինձ. « Մպասեցէք, նայինք սո հեռագրոյն մէջ ինչ գրուած է : » Բացաւ զայն և կարդաց բարձր ձայնիւ. Մաք-Մահօն մարալխատն իր Մէօզի վրայ ընկելք ընթացքը կազդարարէր : Նոյն միջոցն, գրեթէ թշնամոյն զօրաբանակացը գիրքը իմանալով

Շալոնի զորարանակին ինչ վտանգի ենթակայ
դանուած ըլլալն անմիջապէս մտաբերեցի, որուն
վրայ գլխաւոր գունդեր կրնային յարձակել, և
պոռայցի, և Պ. մարալախտ, պէտք է որ առժա-
մայն ճամբայ ելնեք: Վարալախտն ըսաւ. « Առ-
ժամայն, քիչ ատենէն. » — « Ըսել կուզեմ՝ թէ
վաղը, ըսի: Վարալախտն ուտեստ և սաղմա-
միներք հայթայթելու պէտքն պատճառ բերաւ,
որով կրնար բաւական ժամանակ անցնել:

Այս մասին թախանձեցի զինքը որ այս գործու-
ղութիւններն խիստ շուտով լինեան, և ջանացի
ճամբայ ելնելու. անհրաժեշտութիւնն իրեն իմա-
ցրենէ: Խնդրեցի մարալախտէն որ բարեհաճի բու-
լոր պաշարներն կատարելապէս գաղտնի պահել:
Այս մասին վէճ մ'ալ բացուեցաւ. մէջերնիս: Խօս-
սակցութիւնն վերջացաւ և մարալախտն ըսաւ ինձ.
« Ես ձեզ կանչել կուտամ, երբ Մէջէն գուրս ել-
նելու շարժումն իմացընելու տեղի ըլլայ: »

Երբ Լըվալ գնդապետին հարցուեցաւ թէ օ-
գոստոս 23 ի թուականն իր միտքը ուրիշ պարտա-
դայներ չէր բերեր, սոյն գլխաւոր պաշտօնեայն
պատասխանեց. « Ես ինչ մը հրամաններ գործա-
դրելու վրայ էի. բայց պարտաւորեցայ այս մասին
Անտլո գնդապետին խօսիլ, որ շարժական զօրաց
հասուածին գլխաւորն էր: »

Այս մասին Անտլո գնդապետն հարցաբնուե-
լով՝ հետեւեալն պատասխանեց:

« Օգոստոս 23 րդ. օրը՝ պատեհութիւն ունե-
ցայ իմանալու որ Լըվալ գնդապետն Մօզէի ալ-
ափունքէն Մէջէն գուրս ելնելու առաջարկու-

թեան մը լուրն առած էր: Այս առաջարկութիւնն
ինձ հարողեց: Զորարանակն, ինչպէս յայտնի է,
օգոստոս 26 ին ճամբայ ելաւ: Երբ պատերազմի
դաշտն հասանք, մարալախտն գունդերուն հրա-
մանատարները իր քովը կանչեց գունդերուն վի-
ճակին վրայօք անոնցմէ լուրեր ատենելու համար:
Այս մասին տեղի ունեցած խորհրդով մը որոշուե-
ցաւ որ նոյն օրն որոշուած ընթացքը երկարա-
ձգուի. ուստի պարտաւորեցանք մեր բանակա-
տեղիները վերագաւնալ:

« Ամեն մարդ այս անցքերուն վրայօք խիստ
յուսահատած էր, և այս դժացումը Լըվալ գըն-
դապետին յայտնած ատենն, նա ըսաւ ինձ. « Այս
անցքերն ձեր խորհածէն աւելի ցաւալի են. վառն
ղի մարալախտն օգոստոս 23 ին ընդունած հեռա-
դրով մը իմացած է որ Մաք-Մահօն մարալախտն
ճամբայ ելած է իրեն դալու համար: Սյն ատեն
ինձի պատմեց որ օգոստոս 23 րդ. օրն պաշտօն-
եայ մը եկած և դըննիկի պէս բոլորուած հեռա-
դիր մը բերած էր. և յաւելցուց նաև որ յիշեալ
հեռագիրն մարալախտին տարած և նա ալ զայն
բանալով իր առջև բարձրածայն կարդացած է.
սոյն հեռագիրն Մաք-Մահօն մարալախտին դէպ
ի Մէջ ուղևորութիւնը կիմացրենէ: »

Պազէն մարալախտն բացարձակապէս կուրա-
նայ թէ ինքը երբէք ընդունած չէ Լըվալ և Անտ-
լո գնդապետաց յայտնած հեռագիրն: Կապահովէ-
նաև որ յիշեալ պաշտօնեայներն կը սխալին և ի-
րենց յայտնած իրողութիւնն օգոստոս 19 ին կը
վերաբերի և ոչ թէ 23 ին: Բայց և այնպէս օգոս-

տոս 22 կամ 23 ին հեռագիր մ'ընդունած ըլլալն կը խոստովանի, սակայն կը յաւելու որ Մաք-Մահօն մարաշխտին օգոստոս 19 ին իրեն զըրկած հեռագիրն է այն, որուն պարունակութիւնը այս է. « Եթէ իմ կարծեացս համեմատ մօտ օրերս ետ քաշուելու պարտաւորած էք, իմ գըտնուած հեռագրութենէս չդիտեմ ինչպէս օգնութեան դամ՝ ձեզ առանց փարիզն թափուր թողլու: Եթէ ուրիշ որոշում մ'ընէք, շուտով ինձ իմացընէք: »

Մարաշխտն այս կէտք չատ անդամներ հաստատելու ջանաց: Կը տեսնենք որ իր շարժումն էր անուն գործոյն մէջ ալ յիշած, և թէ քրննութեան ատենին առջեւ տուած վկայութեան, թէ իր յիշատակարանին և թէ իր հարցաքննութեանց մէջ ալ կրկնած է:

Պ. Մօրնէյ-Սուլթ զօրազուխն, իր հրամանակատարը, մարաշխտին խօսքերը հաստատելու եկաւ: Այս մասին գրեց առ Պ. մարաշխտն Պարակուէյ-տ'իլիէ, քննութեան ատենին առջեւ վկայեց, և վերջն ալ ամբաստանողին առջեւ: Սա աւելի մանրամասնօրէն կը պատմէ. օգոստոս 22 կամ 23 ին ընդունուած հեռագիրն Մաք-Մահօն մարաշխտին օգոստոս 19 ի հեռագիրն է, և ուրիշ մը չի կրնար ըլլալ. յերաւի կը հաստատէ որ հեռագրութեան խղուելէն վերջը պաշտօնէի ձեռքով եղած առաջին հաղորդակցութիւնն է այն, որ մինչեւ այն ատեն մէջ հատ մ'անգամ եկած էր:

Գիւրա կրնայ իմացուիլ թէ մարաշխտն Պ.

Պ. Լըվալի և Անտոյի այս վերջնական վկայութիւններն եղծելու համար ներկայացուցած բացատրութենէն որչափ կօդտաւորի. այլ սակայն այս բացատրութիւնը, որ այնչափ խնամով եղած բան մ'է, ակամար արարքով մը վճռաբար կեղծ ըլլալն կապացուցուի:

Մաք-Մահօն մարաշխտին օգոստոս 19 ի հեռագիրն օգոստոս 22 կամ 23 ին չի բերուեցաւ, այլ օգոստոս 20 ին Տէշիւ անտառապահին ձեռքով հեռագրատունն յանձնուելով՝ անկէ ալ անմիջապէս հեռագրաց տնօրէն Պ. տըլա վասըլէյի միջոցաւ մարաշխտին զրկուեցաւ: Մնաց որ մարաշխտն հեռագրաց տնօրէնին միջոցաւ իրեն զրկուած բնագրոյն վրայ իր ձեռքովը իր պատասխանին օրինակը գրած է օգոստոս 20 թուականաւ, որ թղթակցութեան արձանագրութեան մէջ օրինակուած է, և մի և նոյն օրն Յլաճօ պաշտօնէին ձեռամբ թիօնվիլ զրկած է: Այս մասը դատաստանական արձանագրութեանց հաւաքածոս յից մէջ կը գտնուի:

Չի մտնանք նաեւ յիշելու որ Մաք-Մահօն մարաշխտին հեռագիրն թուանշաններով գըրուած ըլլալուն չի կրնար այն հեռագիրն եղած ըլլալ զոր մարաշխտն ընդունելուն պէս բացած և Լըվալ գնդապետին առջեւ բարձր ձայնիւ կարդացած է:

Մարաշխտն՝ թէ իր և թէ իր հրամանակատարին այս մասին տուած վկայութեանց անստուգութիւնը յայտնի ազդեցոյցներով հաստատուելուն վրայ, վերջին հարցաքննութեանց ատեն իր

նախորդ հաստատութիւններն դարձեալ մէջ բերելով՝ հետեւեալ խօսքերն կրնէ.

« Գերմանիա հասնելուս պէս լսեցի որ այնպէս կենթադրէին թէ օգոստոս 23 ին Մաք-Մահօն մարալախտէն հեռագիր մ'ընդունած եմ, որով յիշեալ մարալախտն օգոստոս 23 ին դէպ ի Արեւմտաք ընելիք ուղեւորութիւնն ինծի կիմացընէր: Հարցուցի ես ինծի թէ չըլլայ որ միտքէս ելած ըլլայ, որովհետեւ դիւանը իմ արամագրութեանս ներքեւ էր, և մտաբերեցի որ ձեր օգոստոս 20 ին հասաւ բնելով նշանակած հեռագիրնիդ օգոստոս 22 կամ 23 ին ինծի եկած հեռագիրն էր: Այս մասին երբ քովս դանուած պաշտօնէից խօսք բացի, անոնք ալ ինծի պէտ հաստատեցին որ ատի նոյն հեռագիրն էր, վասն զի կը կարծէինք որ հետեւակ մը այն հեռագիրն բերած էր, կամ վերտիւնէն և կամ լօնկիւյնէն: »

Այս պատասխանին վրայ հետեւեալ դիտողութիւններն եղան.

« Պատիւ ունիմ ձեզ նկատել տալու որ շատ անգամներ և երկար խօսքերով յայտնեցիք, թէ օգոստոս 22 կամ 23 ին հեռագիր մը հասած էր ձեզ: Միւս կողմանէ ալ լրջալ գնդապետին ամենաբաղայայտ մէկ հաստատութեան վրայ, որ օգոստոս 23 ին ձեր հեռագրոյն կարդացած ատենը հոն ներկայ ըլլալն կիմացընէ, կ'եղրակացընենք որ դուք նոյն օրը Մաք-Մահօն մարալախտին ընթացքը յայտնապէս իմացած էք նոյն հեռագրով: Լրջալ գնդապետին ըսած հեռագիրը չի կրնար օգոստոս 19 ի հեռագիրն ըլլալ, որովհետեւ այս

վերջինը թուանշանաւ գրուած ըլլալուն չի կրնար արագութեամբ կարդացուիլ: Արդ ուրեմն լրջալ գնդապետին առկու օգոստոս 23 րդ օրը կարդացած հեռագիրնիդ ո՞րն կրնայ ըլլալ, օգոստոս 23՝ որուն ճշդութիւնը ուրիշ եղանակներով ալ կարելի է ապացուցանել: Այս մասը ինչպէս կրնաք բացատրել: Երբ այս պարագայներուն վրայ յաւելցընեք նաեւ թէ օգոստոս 19 էն ի վեր քառասուն պաշտօնեայներ զբիւրած են ձեզ զօրաբանաւ կին կացութիւնն իմացընելու համար, խիստ հաւանական կը գտնեմ որ դուք իմացած էք պատերազմի պաշտօնէին այն առաջադրութիւնը թէ Մաք-Մահօն մարալախտին զօրաբանակն օգոստոս 26 ին Մէօղի վրայ պիտի բերուէր, և որով կենթադրուէր թէ զօրաբանակն օգոստոս 20 ին ճամբայ պիտի ելնէր: »

ՊՏԱՄԻԱՆ. — « Վերջ տուած պատասխանս կը կրկնեմ, օգոստոս 22 կամ 23 ին Մաք-Մահօն մարալախտին ընելիք ընթացքը ազդարարող հեռագիր մ'ընդունած ըլլալս բնաւ չեմ յիշեր, և այնպէս կը կարծեմ որ Պ. Լրջալ գնդապետն օգոստոս 19 ի հեռագրոյն հետ չկոթած է: Այս առթիւ կիմացընեմ նաև որ եթէ տյապիտի ազդարարութիւն մը ընող հեռագիր մ'ալ եկած ըլլար, որովհետեւ Մաք-Մահօն մարալախտին բնագիրը չէր այն, ինծի համար բաւական մեծ գրգռու մը չէր կրնար ըլլալ որ պատերազմներու մէջ խիստ զգալի կտրուածներ կրելէն վերջը նորէն կազմակերպուելու վրայ եղող զօրաբանակ մը վերստին գործելու պարտաւորեմ, ասանց Մաք-Մահօն

մարալատին գործարած չարժու մեներն դրական
կերպիւ իմանալու : Այս ըսածս խորհրդածութիւն
մ'է , և ոչ ուրիշ բան :

Ատեանը ամենէն առաջ կը յայտնէ որ մարա-
լատն իր այս պատասխանին մէջ չի կրնար հաս-
տատել թէ՛ ինչպէս թէ՛ ինքը և թէ՛ իր պաշտօն-
եայներն թուանչանաւ գրուած հեռագիր մը գրով
գրուած հեռագրոյ մը հետ կը շփոթեն , և այս աս-
մենաիրական պարագային նկատմամբ կը լռէ :

Աւելորդ է դիտել թէ՛ թէ՛ մարալատին տուած
պատասխանին վերջին խօսքերն խոստովանութեան
մը նմանութիւնն ունին : Լրվալ գնդապետին յայտ-
նած հեռագրոյն եկած ըլլալը կապացուցուինաւ
այն միջոցներով՝ զորս մարալատն զորարանակին
մտապուտ ուղեւորութեանն համար կը գործադրէ :

Օգոստոս 23 ին , մարալատն կը հրամայէ որ
պաշարներն փոխադրեն պատճառելով որ կարելի
է զորարանակն մտերս ուղեւորելու կը կոչուի :
Օգոստոս 23 ին այս կերպով նոր հրաման մ'ալ ե-
ղաւ : Տրդ. գունդին համար պաշար որոշեցին :
Վերջապէս Տրլժօ զօրապետին հրամանատարու-
թեան ներքեւ ձիաւորաց գունդ մը կազմեցին և
հետեւեալ օգոստոս 26 ի օրուան համար ուղեւո-
րութեան հրամաններ տրուեցան :

Բոլոր այս ապացոյցներուն , բոլոր այս զուգա-
գիպութեանց առջև , ատենը իրաւունք ունի
հաստատելու որ Պաղէն մարալատն Մաք-Մահօն
մարալատին իրեն օգնութեան դալն հաւանակա-
նարար օգոստոս 20 էն և ստուգիւ օգոստոս 23
էն ի վեր իմացած է :

ՇՅԱՍՏԻ ԶՕՐԱՐԱՆԱԿԻՆ ԻՐԵՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳԱԼԸ
ԻՄԱՅ ՏՐՈՒԱԾ ԱՏԵՆ ՊԱՁԷՆ ՄԱՐԱԶԱԻ.
ՏԻՆ ՏՈՒԱԾ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Այս խնդրոյն նկատմամբ Պաղէն մարալատին
խօսքերը տկարացընող ուրիշ ապացոյց մ'ալ կայ :

Օգոստոս 27 ին՝ թիւսնիլին հետեւեալ հեռա-
գիրն զրկուեցաւ :

« Թիւրնիէ գնդապետն կլմացընէ՝ որ եթէ
կարելի է , Գաղղիական զօրարանակին յանձնուե-
լու համար Մէցէն սա հեռագիրն ընդունած է :

« Մեր հաղորդակցութիւններն խաղանուած
են , բայց տկար կերպով . եթէ ուղենք , կրնանք
դարձեալ ըստ կարելոյն հաղորդակցիլ , և կըսպա-
սենք ձեզ : »

Ասի օգոստոս 23 ին Մէց բերուած հեռագրոյն
պատասխանն էր :

Սոյն հեռագրոյն՝ ո՛չ Մէցէն որ թուականէն
զրկուին ճշդիւ կըցանք իմանալ , և ո՛չ ալ զայն
թիւսնիլ բերող պաշտօնէին անունը :

Բայց օգոստոս 27 ին՝ թիւրնիէ գնդապետն՝
ղայն Սարէկմիսի Դատատանական Ատենի կայսե-
րական գործակատար Պ. տը Լալմանի յանձնեց , որ
իր ապարանքին մէջ փախստական զօրքերէն գէշ
վարմունքներ տեսնելուն վրայ ստիպուած էր խոյս
տալ :

Յիշեալ դատաւորին աղաչած էին որ առաջին
անգամ ո՛ր դաղղիացի զօրապետին հանդիպի ,
զանի անոր յանձնէ :

Օգոստոս 29 ին ժամ ութին ինիին միջոցները

Պ. Տը Լալման յիշեալ հեռագիրն՝ զոր իր յատուկ թերագրութեանն անուարով կարգացած ալ չէր, յանձնեց ընդհանուր հրամանատարին ի Սէտան:

Սէտանի կայսերական գործակատարին փոխանորդ Պ. Պուչօն-Կարնիէ՝ Պ. Լալմանի ըսածին ճշմարտութիւնը հաստատելու կը հրաւիրուի, և հեռագիրն անմիջապէս կը յանձնուի Մուզօնի մէջ մետաքսի գործարանատէր և նոյն քաղաքին կառավարչի օգնական Պ. Հիւլմի, որ զայն Մաք-Մահօն մարաշլիստին տանի ի Բօքուր:

Պ. Հիւլմ քանի մ'օրէ ի վեր Սէտանի մէջ գըտնուած զինուորական իշխանութեան կատարեալ տեղեկութիւն տուած էր յիշեալ քաղաքին վրայօք, բաց ասկէց իր անձը և իր ձեռքը գտնուած բոլոր միջոցներն յիշեալ իշխանութեան արամադրութեան ներքեւը դրած էր, որպէս զի լրտես զինուորներն դիւրութիւն ունենան իրենց պաշտօնը կատարելու: Զրահաւորաց 3 բրգ վաշտի քանի մը հեծելազորքն իր հրամաններուն ներքեւ գրուած էին: Իր տուած վիպութեամբը կատարելապէս յայտնուեցաւ իր գործադրած պաշտօնին հանգամանքներն:

« 1870 օգոստոս 29 ին Սէտանի ամրոցն էի առաւօտեան ժամը ութին, երբ Սէտանի հրամանատար Պ. Մէլիօն տ'Արք զնգապետն ինձի իմացուց որ ինքը Պէօրման զօրապետին տեղը դրուած էր: Նոյն միջոցին երբ քաղքին պաշտօնատեղիէն դուրս կենիւնք Պէօրման զօրապետին ներկայանալու համար, և ահա Սարէկմիսի կայսերական գործակատար Պ. Լալման եկաւ, և Պ. Մէլիօն

տ'Արքի հեռագիր մը յանձնեց, և նա ալ անմիջապէս բացաւ և տուաւ Պէօրման զօրապետին: Սոյն միջոցին յիշեալ զօրապետն երբէք հրամանատարի նշան մը չէր կրեր վրան, քանզի դիւղացիի պէս հագուած էր և անցած դէպքերուն երբէք վոյթ չէր ընէր:

« Երբ կամօքս անկէ կը մեկնէի, Պ. Մէլիօն տ'Արք զիս կանչելով՝ զօրապետին դիմացը հարցուց ինձ թէ այս հեռագիրը կուղէի կայսեր և Մաք-Մահօն մարաշլիստին տանի: Պէօրման զօրապետն որչափ որ անտարբեր կերպարանք մ'ունէր, այլ սակայն Պ. Մէլիօն տ'Արքի յիշեալ խընդիրը կրկնեց: Ես ալ ընդունեցայ . . . Կէս օրին հասայ ի Բօքուր:

« Անմիջապէս հեռագիրն հաղորդեցի կայսեր, որ իմ գացած ժամանակս Բօքուր հասած էր:

« Երբ կայսրը հեռագիրը կարդաց, բնաւ ինձ որ զայն տանիմ Մաք-Մահօն մարաշլիստին, որ ժամ երկուքին միջոցներն Բօքուր հասնելով յանձնեցի զայն իրեն:

« Մարաշլիստն դիտնալով որ հեռագրաց պաշտօնն ես ստանձնած էի, ճամբայներուն և Մօնմէտիի կողմը գտնուած պաշարներուն վրայ շատ հարցումներ ըրաւ ինձ: Ըսի իրեն թէ Մօնմէտի բոլոր իր զորաբանակին համար երկու օրուան պաշար կը գտնուի: Վերջէն արտնջաց ինձի Բօքուր բաւական պաշար չի գտնուելուն համար, և ինձի հարցուց թէ հետեւեալ օրուան համար Մուչօն ուզած պաշարն կրնայ գտնուիլ: Պատասխանեցի իրեն որ եթէ ինձի իր անուամբը հրամաններ

տալու իշխանութիւն տայ, Մուզօնի մէջ իր գորարանակը մինչև երկու կամ երեք օր պահելու չափ պաշար կրնայ գտնուիլ: Ինծի հրաման տուաւ իր անուամբը գործելու. գործեցի, և պաշարներն պատրաստ էին երբ գորարանակն հասաւ ի Մուզօն . . . »

Ահաւասիկ յիշեալ հեռագրոյն իմաստը:

« Թիւրնիէ զնդապետն կիմացընէ՝ որ եթէ կարելի է, գաղղիական բանակին զրկուելու համար Մէջէն հետեւեալ հեռագիրն ընդունած է. « Մեր հաղորդակցութիւններն խախտուած են, բայց տկար կերպիւ. ուստի ուզած ժամանակնիս կրնանք հաղորդակցիլ, և իրապատենք ձեզ: »

Գնդապետ Պ. Մէլլին տ'Արք, որուն իմաց տրուեցաւ Պ. Հիւլմի յիշեալ վկայութիւնը, հետեւեալն յայտնեց:

« Պ. Հիւլմի տուած այս ճիշդ մանրամասն տեղեկութիւններն իմ յիշողութիւնս զարթուցին. յիշաւ ի կը յիշեմ որ Մէտանի ամբողջ տեսայ զՊ. Լալման կայսերական գործակատարն, որ Պէօրման զօրապետին հեռագիրն մը յանձնեց զոր թիօնվիլէն կը բերէր: Այս հեռագիրն Պաղէն մարաշխտի զորարանակին կացութեան վրայ կը խօսէր: Սոյն հեռագիրն մարաշխտէն կուգար, և պաշարման երկիրդէն ազատ մնալու կարելիութիւնն կը յայտնէր: Կը յիշեմ առ որ Պ. Հիւլմի հրաման ըրի այս հեռագիրն փութով տանելու, և կարելի եղածին չափ խիստ զգուշութիւն ընելու, որովհետև կղզայի թէ որչափ կարեւոր հեռագիր մ'էր այն: Ասկէ առիթ գտայ, յաւեցուց յիշեալ զնդապետն,

յայտնելու թէ Պ. Հիւլմի՝ իրեն յանձնած վտանգաւոր պաշտօններուս կատարման մասին որչափ անձնուիրութիւն, սրչափ խոհականութիւն և որչափ գործնէութիւն ցոյց տուաւ, և հաճեցաւ անմիջապէս զանոնք ընդունիլ: »

Երբ յիշեալ վկայութիւններն Մաք-Մահօն մարաշխտին հաղորդուելով իրեն հարցուեցաւ թէ այսպիսի հեռագիր մ'ընդունած է, հետեւեալ պատասխանն տուաւ:

« Չեմ յիշեր ամենեւին որ Բօքուր ինծի այդպիսի հեռագիր մը յանձնուած ըլլայ: Կրնայ մըտքէս ելած ըլլալ, այլ սակայն հաւատի եմ որ յիշեալ իմաստով հեռագրի մը վրայօք բնաւին տեղեկութիւն չունիմ: Շէն-Բօքիւլէօ եղած ատենս, հակառակ կայսեր զխտողութեանց, դէպ ի Մէջ ուղևորելու որոշումն ըրած էի. եթէ յիշեալ հեռագիրն ընդունած ըլլայի, իմ կատարած գործողութեանցս համաձայն իմաստ մը պարունակելուն համար ստուգիւ իմ ուշագրութիւնս պիտի դրաւէր: »

Պ. Հիւլմի, Մաք-Մահօն մարաշխտին հետ դէմ առ դէմ գալով իր տուած վկայութեան ճիշդ ըլլալն յայտնեց:

Ատեանը՝ ըստ ամենայնի Մաք-Մահօն մարաշխտին ըսած խօսքերուն առջև զիջանելով կը պարտաւորի դիտել տալ որ օգոստոս 29 րդ օրը կէս օրէն վերջը Բօքուր հետզհետէ պատահած դէպքերուն վրայ կրնայ ըլլալ որ յիշեալ մարաշխտին միտքը չիթութիւն մ'ինկած ըլլայ, որով կիմացուի թէ ինչպէս յիշեալ հեռագրոյն իրեն եկած ըլլալը մտքէն ելած է. այլ սակայն մեզի

արուած խել մը մանրամանն և ճիշդ վկայութեանց վրայ չենք ալ տարակուսիր որ յիշեալ ամենակարեւոր հեռագիրն օգոստոս 27 ին թիւրնիէ գընդապետէն Պ. Լալմանի յանձնուեր, և այս վերջինն ալ օգոստոս 29 ին Սէտանի հրամանատար Պ. Մէլսփօն տ'Արքի տարած է :

Միւս կողմանէ, յատկապէս հաղորդակցութեան վերաբերեալ ծանուցագրոյն մտին մէջ պիտի տեսնենք որ յիշեալ հեռագիրն օգոստոս 26 ին Մէցէն գացած է : Այս թուականին Պաղէն մարաշխան ինչ կարեւոր լուր կրնայ տալ : Ինչպէս որ յաջորդ գլխոյն մէջ պիտի տեսնենք, նոյն միջոցին իր զորարանակը ճակատած էր : Թշնամին, ըսաւ ինքնիրեն, կերեւի թէ պատերազմն ընդունլ չուզեց : Նոյն ատենը, կրիմնի խորհրդոյն մէջ իր տեղապահներուն Մէցի մէջ սպասելու որոշումն ընդունել տուաւ որ թշնամոյն զորարանակն քաղաքը խիտ սաստիկ զօրութեան մը մէջ տեսնելով որոյէ ևտ քալուիլ : Իրաց այս վիճակին մէջ, Մաք-Մահօն մարաշխանին ինչ կրնար իմացընել, եթէ ոչ Պ. Հիւլմի ըսածը, թէ՛ « Հաղորդակցութիւններն խախտուած են, բայց տկար կերպիւուստի ուղած ատեննիս կրնանք հաղորդակցիլ, և կըստեսնենք ձեզ : » Այլ սակայն գնդապետ Պ. Մէլսփօն տ'Արքի վկայութիւնը այն հեռագրոյն կատարեալ իմաստը հետեւեալ կերպիւ կը բացատրէ . « Այս հեռագիրը, կըսէ, Պաղէն մարաշխանին զորարանակին կացութիւնը կը նկարագրէր, իրմէ կուգար և պաշարման երկիւղը վտրատելու կարելիութիւնը կը ծանուցանէր :

Համառօտիւ խօսելով հետեւեալ իրողութիւններն տեսնեք թիւ կերպիւ պայտուցուած են :

Պաղէն մարաշխան իր զորարանակին Մօնմէտի տաները որոշումն ծանուցած է : Այս առաջադրութիւնը առժամանակիկայ պետական խորհրդոյ երեւան հանած գործողութեանց յատկազրծին հետ կը համաձայնի : Երկրորդապէս կը հաստատուի Պաղէն մարաշխանին օգոստոս 19 ի հեռագրովը, հեռագիր մը՝ որ Շալօնի զորարանակին գէպ ի Մէց ուղեւորին որոշած է :

Օգոստոս 20 ին Մէցէն զրկուած երկրորդ հեռագիր մ'ալ յիշեալ ուղեւորութիւնն կամ՝ գտընեցընելու կամ՝ գոնէ առկա թողլու որոշում մը կը պարունակէ : Սոյն հեռագիրն արգիլուեցաւ . և Մաք-Մահօն մարաշխանն զայն չընդունելով՝ կը շարունակէ իր ուղեւորութիւնն ի Մօնմէտի, ուր ամէն ինչ պատրաստուած է երկու զորարանակաց միութեան համար :

Օգոստոս 23 ին Պաղէն մարաշխանին եկած ազդարարութիւն մը կիմացընէ որ Գաղղիական երկրորդ զորարանակն զինքը դիմաւորելու կուգայ : Մարաշխանն այս լուրն առնելով՝ օգոստոս 16 ին կայսրէն ընդունած հրամաններուն նման անգործադրելի թողլով՝ Մէցի բանակատեղիէն հեռանալ չորոչեր, և գոհ կըլլայ պատասխանելով թէ՛ կըստատէ :

Բայց տեսնելով՝ որ եթէ անգործ մնայ, ամենուն արհամարհանքը իր վրայ պիտի հարկիլէ : մինչդեռ իր տեղական ալ իրեն օգնութեան գալով՝ ինքզինքը վնասելու վտանգէն կենթարկուի,

իր այս վարժունքին պատասխանատուութիւնը իր դունդերու հրամանատարներուն վրայ ձգելու ջանքեր կընէ : Հիմա պիտի տեսնենք թէ իր այս նպատակին հասնելու համար ինչ միջոցներ գործածեց :



ԳԼՈՒԽ Գ.

ԽՈՐՀՈՒՐԳԻ ՕԳՈՍՏՈՍ 26 Ի

ՅՈՅՅ ՕԳՈՍՏՈՍ 31 Ի ԸՆԴԳԻՒՄ ԹՇՆԱՄԻՈՅՆ

Նախընթաց գլուխներուն մէջ տեսանք թէ ինչպէս Պաղէն մարաշախտն իր զորաբանակն Շալօն տանելու համար կայսրէն հրաման ընդունելէն վերջը՝ այս դիտաւորութիւնէն ետ կենալու համար խել մը տրամադրութիւններ գործադրեց, և թէ ինչպէս Ռեզոնիլի և Մէն-Բրիտայի պատերազմներէն ետքը՝ առանց պէտք մ'ըլլալու Մէց վերադարձաւ թշնամոյն ձեռքը թողլով այն գիրքերն որոնցմով կրնար նորէն լեռներուն վրայ ելնել :

Մարաշախտն որչափ որ իր դէպ ի Մօնմէտի ընելիք ուղեւորութեան առաջադրութիւնն Շալօն ալ իմաց տուած էր, առաջադրութիւն մը որ իր օգոստոս 19 ի հեռագրոյն մէջ կրկին յայտնած էր, այլ սակայն էր կրնար բնաւին զայն իրականացընել :

Մարաշախտն Մէցի բանակատեղոյն ներսերը

ամեն յարձակումէ ազատ, կրնար ապագայ քաղաքական և զինուորական վտիճորդի մը տեղի ունենալուն սպասել, երբ օգոստոս 23 ի հեռագրին ձեռքը հասնելով այնպիսի պարտաւորութիւններ դրաւ իր վրայ զորս անկարելի էր չգործադրել :

Ոգնութեան զորաբանակին հասնելուն լուրը առնելուն վրայ, ի հարկէ պէտք էր կամ Մաքր-Մահօն մարաշախտին օգնութեան գալ, և կամ գոնէ անոր օգտին համար նահապման փորձ մը երկացընել :

Ահա այս վերջին դիտաւորութեամբ Պաղէն մարաշախտն օգոստոս 26 ին իր զորաբանակն Մօզէլի ալ ամանց վրայ հաստատել որոշեց, որպէս զի թշնամոյն զորաբանակին մէկ մասն հոն բերել տայ, և այնպէս դէպքերուն սպասէ առանց իր դունդերն և իր յատուկ կայրութիւնն վնասելու :

Միւս կողմանէ մարաշախտն պարտաւոր էր իր զորաբանակին կարծիքն ալ իմանալ որ ամեն օր կըսպասէր իր դէպ ի ներս ուղեւորելուն. պէտք էր խել մը զինուորական հնարքներու կեղծեաց տակ իր անգործութիւնն անոր ընդունել տալ, և իր տեղակալներն ալ համոզել որ իրենց երկար ատեն Մէց կենալը խիտ պատշաճ ձեռնարկ մ'է :

Ահա այս էր օգոստոս 26 ի խորհրդոյն նպատակը, որուն մէջ Պաղէն մարաշախտն իր դունդերուն հրամանատարացը այս կերպով որոշում մը ընդունել տուաւ չիմացընելով տնոց որ ինքը Քաք-Մահօն մարաշախտին Մօնմէտի ժամադրութիւն տուած ըլլալով յիշեալ մարաշախտն քիչ

ատենէն հոն պիտի դայ , և Մէջի մէջ ընելիք զինուորական գործողութիւններնուն համար ծրարազիր մը տալով անոնց , ծրարիք մը՝ որ գործողութեան սկզբնաւորութիւն մ'անդամ չի պիտի ընդունէր :

ՕԳՈՍՏՈՍ 26 Ի ՀԱՄԱՐ ՈՒՂԵՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆ

Օգոստոս 25 Է՛ն 26 լուսնալու գիշերն էր որ հետեւեալ օրուան համար ուղեւորութեան հրաման տրուեցաւ : Զորաբանակը ցորեկ ատեն ճամբայ պիտի ելնէր Մօղէլի ալ ափանց վրայ անցնելու և Սէն-ժիւլիէնի մարտիկոցին դէմը դանուած բարձանցք վրայ ելնել կարենալու համար :

Այս կերպով Պագէն մարաշլիտին միտք ունէր թշնամեոյն զօրաց մէկ մասը Մօղէլի ալ ափանց վրայ բերել տալ , և ձախ ափանց լեռներն այսպէս ազատ պահել , որպէս զի օգնութեան զօրաբանակը կարենայ հանդիստ այն լեռներէն անցնիլ : Այլ սակայն խիստ ծանր անպտտչածութիւն մը կար . վտան զի այս կերպով թշնամեոյն առանց Մաք-Մահոն մարաշլիտէն անհանդիստ ըլլալու իր գունդերն պիտի կեդրոնացընէր , և Մէջի զօրաբանակն ալ չի պիտի կրնար ուղղակի Շալօնի զօրաբանակին նայատեիլ : Այսպէսով ամենատկար զօրաբանակին , այն է՝ անօգնական և անապառի նման դաշտի մը վրայ դանուած զօրաբանակի մը ամենադժուարին դեղ մը պահուած էր : Մարաշլիտան թշնամեոյն դէմ այսպիսի ցոյց մը բնեղով իրեն օգնութեան դալու զօրաբանակին ձախարդութիւն մը պատճառելու աւիթ պիտի ըլլար :

Ինչ և իցէ , զօրաբանակն արդէն սկսած էր Մօղէլէն անցնիլ , երբ Քօֆինիէր ու Սօլէյլ զօրապետներն Պագէն մարաշլիտին ներկայացան զօրաբանակին կացութեանը վրայ իրեն դիտողութիւններն հրաւիրելու : Քօֆինիէր զօրապետը սոյն դէպքին նկատմամբ հետեւեալ վկայական խօսքերն կընէ :

« Օգոստոս 25 Է՛ն 26 լուսնալու գիշերը , հետեւեալ օրուան համար ըլլալիք ուղեւորութեան հրամանն ինձի հաղորդուեցաւ : Օգոստոս 26 առաւօտուն մարաշլիտին քովը դացի պաշտօնիս նկատմամբ քանի մը խնդիրներ առաջարկելու , և Մէջ դառնալու ատեն անցայ Սօլէյլ զօրապետին քով , որ մարաշլիտին մօտը կը կենար : Խօսակցութիւնս բնականաբար զօրաբանակին ուղեւորութեանը վրայ եղաւ , և երկուքս այնպէս խորհեցանք որ աւելի աղէկ կըլլար այս ուղեւորութիւնը քիչ մը ժամանակ ալ ետ ձգելով զօրաբանակին պիտոյքն հայթայթել , և մարտիկոցներուն պակաս և անկատար մասերն լրացընել :

« Մնաց որ Մէջի գիրքն զինուորական հնարից համար շատ յարմար կերեւէր ինձ , և զօրաբանակն ժամանակ մը հոն թողլով թշնամեոյն ճակատելու գործողութիւններն շատ դիւրաւ կրնանք ապարդիւն հանել : Խիստ հարկ է նաև դիտել տալ որ սոյն վայրկենիս մէջ երկուքս ալ Մաք-Մահոն մարաշլիտի զօրաբանակին ուր գտնուելը չէինք գիտեր : Ուստի զինքը դիմաւորելու երթալնէս առաջ պէտք է անոր գտնուած տեղն իմանալ Յիշեալ զօրաբանակն երկու կամ երեք տարբեր ճամ-

բայներով կրնար Մէջ գալ : Մեր այս դիտողութիւններն ինծի այնչափ ընդունելի և իրական կերեւէին որ Ֆորպախի պատերազմէն ի վեր մեր գունդերն ստուգիւ ետ դարձած կըլլային , որով իրենց բարոյական արժէքին վրայ կրնար ազդեցութիւն մ'ըլլալ :

« Մեր այս դիտողութեանց վրայ , ելանք մարալախտին քովը գացինք մեր դաղափարներն անոր յայտնելու համար : Չեմ կրնար ըսել թէ մեր դիտողութիւններն ինչ տպաւորութիւն ըրին մարալախտին վրայ որ իր տուած ուղեւորութեան հրամանին վրայ միշտ հաստատուն մնաց : »

Քօֆինիէր զորապետին տուած վկայութիւնը կը յայտնէ որ ինքը Մար-Մահօն մարալախտին ուղեւորութեանը տեղեակ էր : Ասոր վրայ խնդիր բացուեցաւ մարալախտին և երկու զորապետաց մէջ տեղը : Այս մասին երեքն ալ լուռ կեցան ի կրիմն տեղի ունեցած խորհրդոյն մէջ :

Ինչպէս որ հրամայուած էր , զորաբանակն Մօզէլի աջ ափանց վրայ Սէն-Ֆիլիքէնի և Քէօլէօյի մարտիոցներուն դէմ եկաւ խուսեցաւ : Ուղեւորութեան հրամանին նկատմամբ սահմանուած արամադրութիւններն խիստ լուր կապառուցանեն որ մարալախտին մտքին մէջ միայն պարզ ցոյց մը կար , ինչպէս որ վերջէն ինքն ալ խոստովանեցաւ :

Այս ուղեւորութեան պարզ փորձն միայն թըշնամւոյն վրայ յարձակելով կրնար յաջող ելք մը ունենալ : Այս մասին ձեռնհաս ըլլալու համար ամեն ինչ կը հրամայէր որ այս նախապատրաստական ուղեւորութիւններն գիշեր ատեն ըլլային , որ-

պէս զի առաւօտուն կանուխ լերանց վրայ հասնէին , և իրենց ճամբուն վրայ միայն սովորական պահապան զօրաց հանդիպէին : Գիտէին որ թըշնամւոյն զօրքերն Մօզէլի ձախ ափանց վրայ են , ուստի պէտք չէր ժամանակ տալ իրեն որ իր գունդերն ալ ափանց վրայ բերէ : Չորաբանակն առաւօտուն ճամբայ ելեր է . պարապ անդր կը հարցընենք թէ ինչո՞ւ համար այսպէս ըրած են :

Ամեն յանկարծական յարձակում պէտք էր սաստկապէս ետ մղուիլ , և եթէ արգելքներ պատահէին , դանոնք շուտով ոտնակոխելու միջոցներ պէտք էր ունենալ : Այնպիսի գունդերու պիտի մօտենային որոնց հրազէնքը ուղղակի մեր գունդերուն վրայ պիտի պարպուէին . պէտք էր այդ հրազէնքներն շուտով ջնջելու կարող ըլլալ , և անոր համար բոլոր պահետի հրազէնքն ձեռքի տակ ունենալ : Ինչո՞ւ համար ուրեմն զորաբանակն փոխանակ թշնամիէն վերջը լերանց վրայ երթալու , անկէ առաջ հոն չի գնաց :

Եթէ տեղի ունենալիք պատերազմը հաւատարմեղած ըլլար , արշալոյսը ծագածին պէս արդէն ալ ափանց վրայ գտնուած գունդերով պէտք էր պատերազմ սկսիլ , և հետզհետէ եկած այլ և այլ գունդերն ալ անոնց օգնութեան զրկել : Ասանկ բան մը ամենեւին չընելով սպասեցին որ բոլոր գունդերն գրեթէ լերանց վրայ կուտակուին :

Արդ՝ որովհետեւ այս միջոցն ընտրած էին , պէտք էր ուրեմն փութով Մօզէլէն անցնելու ճարը նայիլ քաղքին երկու կամուրջներն գործածելով : Ասի այնչափ կարեւոր էր որչափ զորաբա-

նակին նահանջման համար չինուած առ ժամանակեայ կամուրջներն օգոստոս 15 ին՝ այն է՝ զօրաբանակին անոնցմէ անցած օրուան հետեւեալ օրն, ֆոֆինիէր զօրապետին հրամանաւր՝ առանց բանաւոր պատճառներու աւրուելով՝ անոնց տեղ չուտով՝ նոր կամուրջներ շինելն կարեւոր համարուած էր: Բաց ի երկրորդ գունդէն՝ որ քաղքէն անցնելով Բժ՝ ՄԻ՞՞՞ կամուրջէն ուղեւորեցաւ, և երրորդ գունդէն՝ որ արդէն ալ ամիսնց վրայ հաստատուած էր, մնացեալ գունդերն պարտաւորեցան առ ժամանակեայ կամուրջներէն անցնիլ և եկան խոնկեցան Սէն-ժիւլիէնի միակ զառի վայրին վրայ: Այսպէս՝ օգոստոս 13 ին, մարալախարն զօրաբանակին նահանջումը քանդուրս ժամուշայուցած էր, որպէս զի կտրեանց ութը կամուրջէ միանգամայն անցնիլ, և օգոստոս 25 ին երբ իր արամադրութեան ներքեւ չորս կամուրջ ունէր, միայն երեք կամուրջ գործածեց, որոցմէ մէկն փութով շինուած ըլլալուն միայն հետեւաւ կազօրաց կրնար ծառայել: Թիֆլուա կամուրջն չի գործածեցին որով զօրաբանակին անցքն այնքան ուշացաւ: Վերջապէս այնպիսի միջոցներ ձեռք առնուած էին, որ զօրաբանակին առաջտեան ժամ հինգին իր ուղեւորութիւնն սկսած, և կէս օրը երեք ժամ անցնելով աւարտած էր:

Նոյն միջոցները՝ թշնամին, որ Մօղէլի ձախաւ փանց վրայի լեւեռէն մեր զօրաբանակին ետեւէն կուգար, ամենայն փութով մեր դտնուած տեղն հասաւ: Իր ամենազօրաւոր գունդերն Օսնի լեռանց վրայ հաստատուած ըլլալուն՝ մեր գէ-

մը դտնուածներն տկար գունդեր էին, որոցմէ կրնայինք առանց դժուարութեան անցնիլ: Ասոր համար է որ երրորդ գունդի յառաջապահներն որ քիչ մը յառաջ կը գտնուէին, Նեշյի, Նուասվիլ և ֆօլմպէյ մէկը չի գտան, որոնք այնպիսի գիրքեր էին սրոց վրայ քանի մ'օր ետքը կրնար շատ արիւն թափուիլ:

Ժամ երկուքին միջոցները վերջապէս բոլոր զօրաբանակն գրեթէ Սէն-ժիւլիէնի մարտկոցին առջև դիզուած՝ միայն յարձակելու նշանին կըսպասէր, և ահա, մարալախտն փոխանակ պատերազմի նշան տալու բոլոր գունդերուն հրամանատարներն կրիմնի գրեհակը կանչել տուաւ անոնց հետ զօրաբանակին կոցութեան վրայ խորհուրդ մ'ընելու:

Պօսյէ զօրապետը յիշեալ խորհուրդ մէջ խօսուածներն արձանագրեց զոր և Պաղէն մարալախտն իր յանձնած դատաստանական տեղեկագրոյն մէջ յիշատակած է: Այս արձանագրութիւնը որչափ որ վաւերական չէ, որովհետև խորհուրդայ անդամնց առջև կարդացուած չէ, սակայն առեանը միայն անոր վրայ տեղեկութիւն մը տալու նպատակաւ զայն հրատարակել պարտ կը համարի:

ԻՌԸՂՈՒՐԻ 1870 ՕԳՈՍՏՈՍ 26 Ի

«Օգոստոս 26 ին՝ ժամ երկուքին, երկրորդ, երրորդ, չորրորդ և վեցերորդ գունդերուն հրամանատարներն, կայսերական պահապան զօրաց զլաւոր հրամանատարն, զօրաբանակին թնդա-

նօթածիք մասին հրամանատար զորապետն և Մէ-
ցի գլխաւոր հրամանատար զորապետն կրիմնի
դղեակը գալով զորաբանակին կացութեան վրայ
իրենց կարծիքը տալու հրահրուեցան :

« Սիւլւս պարոնի կորիւր : — Հռենոսի զորաբա-
նակին ներկայ կացութիւնը իմանալ ուղած ատեն-
նիս նախ պէտք է ուշադրութիւննիս հրաւիրենք
հիմակուած զորաբանակին կացութեանը 1814 ի
գաղղիական զորաբանակին կացութեան հետ ու-
նեցած նմանութեանը վրայ : Յիրաւի ամեն ժա-
մանակ թշնամւոյն զորաբանակը վէրտիւնէն անց-
նելով փարիզու վրայ քալած է , ինչպէս կրնէ այ-
սօր գերմանական զորաբանակն :

« Նարսիէն Ա. կայսրը խորհեցաւ Հիւսիսակող-
մի քաղաքներուն պահպան զօրքերն միացնե-
լով դէպի սահմանադուրը , թշնամւոյն հաղոր-
դակցութեան տեղուանքը արշաւել , մինչդեռ
թշնամւոյն զորաբանակն՝ կայսեր փարիզու բոլոր-
տիքը կատարել հրամայած շինութեանց վրայ
յարձակիլ կըսպառնար :

« Այլ սակայն փարիզ ամրացած չէր , ուստի
կայսեր առաջադրութիւնը չի կրցաւ իրականա-
նալ . (Հիւսիսակողմի քաղաքներն ալ իրենց
պահպան դուռներն կորսնցուցին :)

Այսեր մեր կատարելիք գործողութեանց յա-
տակագիծը խիստ գործադրելի է : փարիզ մարտ-
կոցներու կրկին չըջապատով մը և պատնէշնե-
րով դուրսէն ամրացած է , և Հռենոսի բանակն
որ Մէցի պատերուն ներքեւ գտնուելով՝ կըր-
նանք ըսել թէ անվրէպ Բրուսիական զորաբա-

նակին հաղորդակցութեանցը կրնայ տեղեկա-
նալ , թշնամին պիտի կարենայ անշուշտ անհան-
գիստ ընել :

« Ասկից կը հետեւի որ Հռենոսի զորաբանակն
մեծ դեր մ'ունի կատարելու , և այս դերը՝ որ
այսօր զինուորական է , վաղը ստուգիւ քաղաքա-
կան կրնայ ըլլալ և պիտի ըլլայ ալ :

« Յիրաւի Մէց չէ թէ միայն պատերազմի
յարմար մեծ քաղաք մ'է , այլ և՛ ու մանաւանդ
Լորէնի մայրաքաղաքն ալ է : Եթէ մեր զորա-
բանակին վրայ դալիք խել մը ձախտողութեանց
հետ Բրուսիոյ հետ պատերազմուելու նկատմամբ
կառավարութեան ունեցած պարտաւորութիւն-
նիս ալ ընդունինք , Մէցի մէջ կենարնէս և զօ-
րաբանակին մեր գտնուած բանակատեղին մնա-
լէն՝ մեր առաջադրած որոշումներն մեծ կարե-
ւորութիւն մը պիտի առնուն և հաւանական է
որ Լորէնն ալ Գաղղիոյ վերապահնն :

« Բայց և այնպէս պէտք է յայտնել նաև որ
զորաբանակն միայն պատերազմի մը համար ուղ-
մամթերք ունի , և որ անկարելի է քաղքին մէջ
գտնուածներէն այդ պահանս լրացնել : Թըշ-
նամւոյն գունդերն թափանցելու համար պա-
տերազմ մ'ընելը , և փարիզ կամ ուրիշ մէկ տեղ
մը երթալու ուղեւորութեան մը ձեռնարկելը ու-
րիշ բան չէ , եթէ ոչ ուղմամթերք սպառելու
վտանգին ենթարկուիլ և անզէն գտնուիլ Բրու-
սիական զորաբանակաց մէջ տեղը սրբ ան ատեն
մեր ետեւէն պիտի իյնան , ինչպէս որսորդ շու-
ներն եզնիկի մը ետեւէն , և այսպէսով մեր զօ-

րաբանակն ալ պիտի մնասենք : Ընդհակառակն եթէ մեր գտնուած տեղուանքն մնանք, զօրաբանակն իր գործելու բոլոր միջոցներովն անգործ կը պահենք, թշնամոյն զօրաբանակին հաղորդակցութիւններն հաստատապէս կ'արգելունք, որ կրնայ հարուած մը կրելով կամ ետ քաշուելու պարտաւորիլ և կամ իր ընելիք գործողութիւններէն ետ կենալ :

« Բրուսիացիք ետ դարձած ժամանակնին կըրնանք իրենց գունդերն չիտթելով ցիրեցան ընել, և այսպէսով մեր բնագաւառին ամեն կերպիւ կարող երաշխաւորութիւն մը կը վերապահենք :

« Բայց զօրաբանակն ասոր համար անգործ թող չի մնայ . անի կրնայ ստէպ թշնամոյն գունդերուն շուրջ երթալ պտտիլ, որ ասիկց դրեթէ յիսուն վաթսուն քիլոմէթր հեռու է, զգալի հարուածներ տալ անոնց, զանոնք անհանդիստ ընել և իր շինութիւններն անգամ վեր ի վայր ընել, իր պաշարի բեռներն կասեցընել, և իր հաղորդակցութիւններն ալ արգելալ :

« Այս կերպով թէ իրենց բարոյականը կենդանի կը մնայ, թէ անգործ մնայած չեն ըլլար, և թէ իրենց առողջական վիճակն ալ անաղարտ կ'պահեն :

« Ֆրոսար զօրապետն — Ֆրոսար զօրապետն ալ բոլորովն Սօլէյլ զօրապետին կարծիքէն է : Բայց կը յաւելու նաև որ Հռենոսի զօրաբանակն իր կատարած խել մը գործողութեանց նայելով, և չէր ալ ուզեր որ այս կարծիքն ամբողջ զօրաբանակին հաղորդուի, աւելի յարմար է պաշտպանողական քան թէ յարձակողական պատերազմի :

« Այս զօրաբանակին մէջ տեսակ մը թուրու թիւն կայ, չըսեմ վհատութիւն, զոր դիւրին է իմանալ : Ուտտի եթէ անիկայ ըստ դիպաց ճամբայ հանուի, առաջին պատերազմէ մը ետև, թէ և յաջող ալ ըլլայ, ալ անկէ բան մը չի յուսացուիր : Թէսր զինուց բաղդը մեզի համար անյաջող ըլլար, անկարելի պիտի ըլլայ այդ բողդը հաստատուն պահել : այն ատեն լուծեալ զօրաբանակ մը պիտի ունենանք, որ տակաւին իր բոլորտիքն գտնուած պատիր երեւոյթներով բոլորովին պիտի վհատի : Ասով այնպիսի հարուած մը պիտի կրենք, որոյ հետեւանքներն անթիւ են :

« Ֆրոսար զօրապետը՝ իբր հակառակաման, կը յայտնէ որ եթէ բրուսիական զօրաբանակն ետ քաշուի, այն ատեն գաղղիացի զինուորին յատուկ եղած ձիրքն արդիւնաւոր կերպիւ երեւան ելնելով՝ անշուշտ թշնամոյն ետ քաշուելու առեւնը մեծ չիտթութիւն պատճառելով զանի ցիր և ցան պիտի ընէ :

« Ֆրոսար զօրապետն — Նորին վսեմութիւնն Քանրոպէր մարաշխտն ալ Սօլէյլ և Ֆրոսար զօրապետներուն յայտնած կարծեացը կը հետեւի, այսինքն՝ այսպիսի յարձակողական շարժմամբ մը բնական զօրաբանակն չի մնասելու պիտանութիւնը կը հաւաստէ : Բայց և այնպէս աս ևս կը յայտնէ որ զօրաբանակին բարոյականը ուրիշ կերպով չի պահպանուիր, և զօրաբանակն բարոյապէս անգամ ուրիշ կերպով չի կրնար ապրիլ, եթէ ոչ՝ զանի անգործ չի ձգելու պայմանաւ : Ամէն կողմէն միջոցներ հայթայթենք, ամեն

տեղ չարունակական կերպիւ հետադատենք :
« Մէջէն դուրս ելնել և անբաւ բեռներ , ու
տեստ և հրազէնք մեր հետն ունենալով՝ միայն
մէկ ճամբով երկրին ներսերն երթալ անկարելի
բան է :

« Վերջապէս պէտք է Մէջ կենալ , թշնամին
յոգնեցընել , զանի ամեն տեղ քալեցընել , և ե-
թէ որոշենք Մէջէն դուրս ելնել , ամեն միջոց
ձեռքէ թողուլ :

« Լապիւնի զբողոքին խորհիւրդ : — Անկարելի է եր-
կարատեւ գործոյ մը ձեռնարկել . վասն զի ուսու-
մամթերք չունենալով՝ առաջին օրը կրնանք միաս-
ուել :

« Երբն վերստինն լը Պեթի մարտիտի խորհիւրդ : — Մա-
րաջախտն նախ և առաջ խիստ բացայայտ խօսքե-
րով կը յայտնէ որ ինքը Հռենոսի զօրաբանակին
գտնուելիք կացութեանը բնաւին պատասխանա-
տու չէ : Մինչև ցայտօր իր վարիլին վրայօք եղած
ամբաստանութեանց ծանրութիւնը կրեց . բայց
ինքը կը յայտնէ որ բնաւ մէկը իրեն հետ չի խոր-
հրդակցեցաւ և ո՛չ ալ իր խօսքը մտիկ ըրաւ , երբ
ինքը կրտէր որ Մէջի նման բանակատեղի մը ու-
րիշ բանի համար հաստատուած չէր , եթէ ոչ իր
պատասպարութեան ներքև զօրաւոր և թշնամ
ւոյն նախնական շարժումէն յառաջ գալիք կացու-
թեանը պահանջմանցը պատասխանելու պատրաստ
զօրաբանակ մը վերակազմելու համար : Իրեն հետ
խորհրդակցած չեն , իրեն խօսքը մտիկ ալ ըրած
չեն , զօրաբանակին սահմանադիտոյն վրայ տա-
րածու ին ալ իր գործը չէ : Փոխանակ զանի սահ-

մանադիտոյն վրայ եղածին պէս ցիր և ցան բռ-
նելու կուղէր զանի պատերազմական դաշտին
սկսած տեղը կեդրոնացընել :

« Հռենոսի զօրաբանակը անգործ պահելը երկ-
րին ամենամեծ և ամենալուսադոյն ծառայութիւն
մը մատուցանել ըսել է : Բայց զանի ի՛նչպէս պի-
տի տարեցընենք :

« Պարտիտի զբողոքին խորհիւրդ : — Իմ ամենամեծ
փափաքս , ըսաւ զօրապետն , Շաթօ-Սալէնէն մե-
ղի ճամբայ մը բանալ և անկէ դուրս ելնել էր :
Բայց թէ որ ուղղամթերք չունինք , յայտնի է
որ բան մ'ալ չենք կրնար ընել :

« Քոֆինիլի զբողոքին խորհիւրդ : — Պ. Քոֆինիլի զօ-
րապետն Սօլէյլ զօրապետին համակարծիք է , և
կը յայտնէ որ Մէջն ու իր մարտկոցներն ըստ բա-
ւականին ինքզինքնին պաշտպանելու վիճակ մը
չունին և միայն խել մը խիստ սահմանափակ օրեր
կրնան կանոնաւոր յարձակում մը կրել և թէ զօ-
րաբանակն Մէջ մնալու է : Բաց ասկէ իմացուց
նաև որ զօրաբանակն Մօղէլի երկու ափանց վրայ
ո՛ր տեղուանքն պիտի կենայ և հոն տեղուանքը
հաստատուելու համար ի՛նչ շինութիւններ պիտի
կատարէ :

ԽՈՐՀՐԳՈՅՆ ՄԵՋ ՅԱՅՏՆՈՒԱՄ ԿԱՐԾԻՔՆԵՐՈՒՆ
ՔՆՏՈՒԹԻՒՆԸ

Պաղէն մարաջախտն իր յիշատակարանին մէջ
հետեւեալ կերպիւ կը համառօտէ սոյն խորհրդոյն
մէջ եղած որոշումներն :

« Զօրաբանակն Մէջ պիտի կենայ , որովհետև

հոն մնալովը իր դէմը միշտ երկու հարիւր հազարէն աւելի թշնամիներ կունենայ, որովհետեւ Գաղղիոյ ժամանակ կուտայ որ իր զորաբանակն կազմակերպելով՝ զանոնք դիմադրութեան վիճակի մը դնէր, և որովհետեւ թշնամեոյն ետ քաշուելու առտենը եթէ չի կրնար անոր մեծ վնաս մը հասցըցընել, գոնէ կը յոգնեցընէ զանի :

Միւս կողմանէ յիշեալ խորհրդոյն տեղեկագրէն և վկայութիւններէն կը հաստատուի որ զորաբանակն Մէջ պիտի մնար, որովհետեւ մէկ պատերազմի մը համար միայն ռազմամթերք ունէր, և դէպի ներսը ուղեւորութեան մը ձեռնարկելով թշնամեաց մէջ տեղը անգլէն գանուելու վտանգին կենթարկուէր. վերջապէս, որովհետեւ մեծ հրամանատարին ըսածին նայելով՝ Մէջ առանց զօրաբանակին պաշտպանութեանը չէր կրնար տասնըհինգ օրէն տւելի գիմանալ :

Այս որոշումներն եթէ միացընենք նոյն առաւօտուն Սօլէյլ և Քոֆինիէր զօրապետաց մարաթախին ներկայացուցած դիտողութեանցը հետ, նախ և առաջ Մաք-Մահօն մարաթախին զօրաբանակին նկատմամբ պահուած լռութեան և իր դէպ ի Մէջ ուղեւորելու հաւանականութեան վերայ մտքերնիս իր գրաւուի : Այս կարելու կէտին վրայ չէ թէ միայն մարաթախան այլ և Սօլէյլ ու Քոֆինիէր զօրապետներն անգամ բացարձակ լռութիւն մը կը պահեն : Խորհրդոյն միւս անդամներն համաձայն կը յայտնեն որ իրենց առջին ոչ Մաք-Մահօն մարաթախին վրայ խօսք եղաւ, և ոչ ալ իր զօրաբանակին վրայ :

Առաջին անգամը ըլլալով կրիսօնի խորհրդոյն մէջ մտածուեցաւ որ զօրաբանակը Մէջը չի պիտի թողուր : Մենք անոր սկզբնապատճառը օգոստոս 20ին Բեթլեհեմ լրագրոյն եղած թղթակցութեան մը մէջ հրատարակուած ակասանք, Բայց սակայն զօրաբանակին և երկրին առջև մինչև այն ատեն զօրաբանակին ներքնոյն հետ ունենալիք հաղորդակցութիւններն կրկին բանալու վրայօք միայն խօսք եղաւ : Դեռ օգոստոս 23 ին, մարաթախան իր Մէջէն դուրս ելնելու առաջադրութիւնն կայսեր կիմացընէր :

Ե զօրաբանակը, կըսէ մարաթախան, Մէջի մէջ մնալով երկու հարիւր հազար թշնամեաց շարժումները կարգիլէր : Իբր թէ Գաղղիոյ ունեցած միակ ամենազօրաւոր զօրաբանակին կը պատկանէր այսպիսի ծանր դեր մը կատարելը : Չենք կրնար այսպիսի ատեսութեան մը գէժ հակառակիլ, որն որ երեւոյթին նայելով ապագային մէջ զօրապետաց անգործութիւնն օրինաւոր պիտի երեւցընէր, և չէ թէ ճշմարիտ զինուորներուն այլ այլոց պիտի թողուր պատերազմական գաշար կենալու և պատերազմելու խնամքը :

Մէջ մնալով, կըտես, ժամանակ կուտան Գաղղիոյ դիմադրող գունդեր կազմակերպելու. և ինչ տարրերով, որովհետեւ զօրաբանակն գործող զօրաբանակի մը ամեն պաշտօնեայնեան գրեթէ իր մէջ կը պարունակէր :

Թշնամեոյն ետ քաշուելու առտենն եթէ չէր կրնար անօր մեծ վնաս մը հասցընել, գոնէ կը յոգնեցընէր զանի : Արդ՝ թշնամին երկրէն դուրս

հաներն չուտով կարմուած նոր զորարանակներու կը պատկանէր :

Ինչպէս որ ծանուցագրոյն հետեւեալ գլուխներէն մէկուն մէջ պիտի տեսնենք, քաջ գիտնալով որ Պաղէն մարաշխտն Սէտանի աղէտքէն վերջը՝ Մէջի բոլորտիքն ժիր գործողութիւններ կատարելով ամենահաւատի կերպիւ պիտի կըրնար երկիրն պաշտպանել, չի պիտի կրնանք ներել իրեն երբ կը տեսնենք որ Մաք-Մահօն մարաշխտին դէպի իրեն յառաջացած ատենը՝ ճամբան ա նոր հանդիպիլ կարծելով իր զորաբանակն պարզ գունդերու տեղ դնել ուզած է :

Հիմա մանրամասնաբար քննենք թէ օգոստոս 26 ի առաջագրութիւններն որոշող պատճառներն ինչ արժէք ունին :

Մէջ առանց զորաբանակին պաշտպանութեանը չէր կրնար տասնըհինգ օրէն աւելի դիմանալ, քօֆինիէր զորապետն՝ խորհրդոյ անդամոց ըսածին նայելով այս կարծիքը յառաջ վարեր է . հիմա կուրանայ և այդ կարծիքը խօսիւ կը կշտամբէ . բայց ինչո՞ւ համար իր կարծիքը այնպէս բացատրեր է որ իր անդամակիցներն խորհուրդէն դուրս ելած ատեննին այն մասին խիստ սաստիկ յուզուեր և վշտացեր են : Միթազպուրկ, որ միայն չրկապատով մը պաշտպանուած էր, քառասունըհինգ օր դիմացաւ . արդ՝ Մէջ որ մարտկոցներով չրկապատած է, ի՛նչպէս կրնայ տասնըհինգ օրէն աւելի չդիմանալ : Այս պարզ օրինակը բաւական է սոյն վիճակը լուսաւորելու համար :

Կըսենք նաև որ քօֆինիէր զորապետին դիտո-

ղութիւններն այնչափ անհիմն էին որ երբ օգոստոս 13 ին Մէջի պահապան զորաց ճիշդ թիւը խնդրեց, խնդիրքը կատարուեցաւ : Սոյն թրուականէն վերջը Մէջի պաշտպանութիւնն մասնաւորապէս խիստ աղէկ վիճակ մ'ունեցաւ, և պահապան զորքն ալ կրկնադատուած էր, որովհետև արդէն որոշուած էր որ փասթանեի զորապետին զորաբաժինն լալօքուբէ զորապետին զորաբաժինն հետ հոն պիտի թաղուէր : Մէջի գլխաւոր հրամանատարն պէտք չէր ամենեւին մտնալ որ զորաբանակին հոն մնալովը Մէջի պաշարներն ամենափնտաղար կերպիւ պիտի նուազէր և վերջապէս անձնատուութեան ժամը բռնի պիտի վուծայընէր : Վասնորոյ փոխանակ այսպիսի որոշում մը գործադրելու, պարտաւոր էր ամեն բան ընել անոր ընդունելութիւնն արգիլելու համար :

Լը Պէօֆ մարաշխտն իր վկայութեանը մէջ զորաբանակին կացութիւնը խիստ աղէկ նկարագրեց : Ըսաւ թէ երբ ինքը իր սպարապետութեան պաշտօնէն կը հրատարէր, խնդրեց քօֆինիէր զօրապետէն որ հաճի զորաբանակին գործաւորաց հրամանատարութիւնը կրկին ձեռք առնուլ և Մէջի կառավարչութեան պաշտօնն իրեն յանձնել : Լը Պէօֆ մարաշխտն Մէջի մարտկոցներուն պաշտպանութեան նկատմամբ ունեցած յատկութիւննին մանրամասնաբար նկարագրեցն վերջը՝ կը յաւելու նաև որ բնաւ չի տարակուսիր թէ ուտեստի խնդիրն մէկը ի դնելով գոնէ երեք ամիս կարենային կանոնաւոր յարձակմանց դիմանալ :

Վերջապէս զորաբանակն մէկ պատերազմի մը

համար միայն ռազմամերք ունէր : Այս փաստը Սօլէյլ զորապետին բերնին մէջ աւելի օտարոտի կերելի, վասն զի ինքը չորս օր առաջ Պազէն մարաշախտին կուգայ կիմացընէ որ զօրաբանակին պաշարներն ամբողջովին լրացած են և պատերազմի սկիզբը ունեցածին չափ ռամամթերք ունի : Եթէ զօրաբանակն իր օգոստոս Յին ունեցած պաշարովը՝ առանց իր արկիւրն պարպելու կրցաւ օգոստոս 6 ի, 14 ի և 18 ի և անկէ անդին տեղի ունեցած պատերազմներն կատարել, ինչպէս կրկայ որ նոր և կատարեալ պաշար մը մէկ պատերազմի մը միայն բաւական կրնար բլլալ : Այս ըսածնիս հաստատեն անկարելի է . ուստի յանցաւոր է յիշեալ զօրապետն, վասն զի իր առանձին կացութեամբը այսպիսի սխալանքի մը ճշմարտութեան երեւոյթ տալ կը ջանայ : Անկէ աւելի յանցաւոր է Պազէն մարաշախտն որ ամէն բանի տեղեակ բլլալէն և օգոստոս 22 ի նամակաւը զօրաբանակին ամբողջ պաշար հայթայթած բլլալն իմանալէն վերջը՝ յիշեալ զօրապետին հաստատութիւնը կրնդունի և իր լուութեամբն անոր ճշդութիւն կրնձայ :

Օգոստոս 26 ի խորհուրդը Մէջի պաշարման սկզբնապատճառն եղաւ : Նոյն միջոցին մարաշախտն իր զօրաբանակին վերապահած դերն անոր կը յայտնէ, և իր տեղակալներն իր նոր դիտաւորութեանցը հազարը ընելու ջանիւք՝ ճշմարտութիւնը անոնցմէ կը ծածկէ :

Շայտի մէջ զօրաբանակ մը կազմուեցաւ . իր կազմակերպութիւնն տակաւին անկատար է .

Մար-Մահճն մարաշախտն, որ սոյն զօրաբանակին հրամանատարն է, գիտէ զոյն . և սակայն վահանն անձնուիրութեան զդայմամբ մը ճամբայ ելած է գալ Մէջի զօրաբանակն աղատելու համար : Պազէն մարաշախտն գիտէ որ չաճմբան է : իր առաջին պարտաւորութիւնն՝ իր զօրաբանակին վիճակն իմանալով այս մտոն բարձր գիտցածներն իր տեղակալներուն հազարդել և իր դէպ ի ներս ընկիւք ուղեւորութեան առաջագրութեանց վրացք անոնց տեղեկութիւններ տալ չէր : իր զօրաբանակին վիճակին գլխաւոր կէտին նկատմամբ լուծիւն պահելուն ինչ բանք : Մութէ ասի ծածկելով օգտակար ազդարարութիւններ ընդունիլ կը յուսայ : Յոյտնի չէ որ սոյ կերպով ընդունուած ազդարարութիւններ չեն կրնար բնաւ իրեն օգուտ մ'ընծայել : Ատնք ընելով իր նպատակն ինչ կրնայ բլլալ, եթէ ոչ իր սրայ ծանրանալիք պատասխանատուութեան մէկ մասն իր իշխանութեան ներքե գտնուած անձանց վրայ բեռընէ :

Բայց մարաշախտն Մար-Մահճն մարաշախտին վրայ լուծիւն պահելն բաւ չի համարիր : Սօլէյլ զօրապետին ըսել կուտայ որ միայն պատերազմի մը համար ռազմամթերք կայ, այն ասին՝ երբ օգոստոս 22 ի նամակն, զոր միայն իրեն համար պահած է, կը հաստատէ թէ զօրաբանակն կատարելապէս պաշար հայթայթած է և շատ պատերազմներ ընելու միջոցներ ունի :

Ըսել կուտայ նաև որ Մէջ առանց զօրաբանակին օգնութեան միայն ասանք չինք որ կրնայ տոկոյ :

Բայց թէ որ պէտք է Մէջը պաշտօնանել, եւ թէ վտանգաւոր բան է երթալ անապատի նման դաշտի մը մէջ պատերազմիլ, ապա ի՞նչ դեր կորոյն զօրաբանակին: Սոյէլ զօրապետին կը յանձնէ որ որոյն զայն, առաջուց իմացընելով որ իր կարծեացը կը հետեւի: Եթէ երբէք մարալախտն զՄէջ գործողութեանց առանցքն ընելով հաւաստեալ գործելու փորձ փորձած ըլլար, այն ատեն այդ երեւան ելած պատերազմական մեծ գործողութեանց վերաբերեալ նկատողութեանց անկեղծ ըլլալուն կրնայինք հաւատալ: Արդ՝ որովհետեւ այնպէս չբրաւ, ատով միայն դրդուած եղաւ իր տեղակալներն ու զօրաբանակը, զորս խաբեց:

Այս երեւան ելած նոր արամազրութեան առջև անմիջապէս մեծ պիտոյք մը, մեծ վտանգ մը երեւան կենէ: Զօրաբանակն ի՞նչպէս կրնայ պահուիլ առանց քաղքին պաշարներն սպառելու և առանց դիմադրութեան տեսողութեանը վնաս մը հասցընելու: Պահէն մարալախտն այս մասին կը լռէ: Միայն իր Պէօֆ մարալախտն կը պոռայ. « ի՞նչպէս պիտի ապրինք: »

Բոլոր այս խորհրդածութիւններն, բոլոր այս առաջադրութիւններն մէկ չիտթ վիճաբանութեան մը մէջ տեղը յուզուած են զոր բնաւ մէկը չի կրնար համառօտել: Բայց խորհրդոյն տեղի ունեցած ժամանակը՝ Պահէն մարալախտին օգնական հրամանատար Պօսյէ գնդապետը առանձին անկիւն մը քաջուած ծանօթութիւններ առած է: Սոյն ծանօթութիւններն դրի առնուե-

լով յատուկ ծանուցագիր մ'եղած են, և խորհրդոյն անդամներն այն ատեն միայն պիտի վնասան որ այս մասին յատուկ ծանուցագիր մը կայ, և որոյ ճշտութիւնը բնաւ վաւերացած չէ իրենց ձեռքով, երբ պատերազմէն երկար ատեն վերջը մարալախտին գործը երեւի:

Մարալախտն իր օգոստոս 26 ին զօրաբանակին աչքին առջև իր տեղակալներուն յայտնած դիտաւորութեանց պատասխանատուութիւնն ալ ուզեց վերջէն հասարակաց կարծեաց առջև իր տեղակալներուն վրայ բեռցընել: Ահա ասոր համար էր որ Պօսյէ զօրապետն Անդրիա գացած ատեն նոյեմբեր 2 ին Մէջէն իր հետը բերած խորհրդոյ յիշեալ ծանուցագիրն տարաւ. Պ. Թաշարի յանձնեց:

Յիշեալ ծանուցագիրն Թուրի քննիչ Ժողովոյն պիտի հաղորդուէր: Մարալախտն արդէն կը պատրաստուէր դիմքը պաշտպանել իր տեղակալներն յանցաւոր դատելով զանոնք խաբած ըլլալէն վերջը:

Բայց և այնպէս ատենը իմացած է որ մարալախտն գունդերուն հրամանատարներն հաւաքելէն առաջ իր որոշումն ըրած էր: Իր օգոստոս 26 ի համար տուած ուղեւորութեան հրամանին մէջ կամուրջներու հանդերձանքին նկատմամբ բնաւ տրամադրութիւն չի յայտնէր, և կրկմեմի դղեակը հասնելէն առաջ արդէն կայսերական պահապան զօրաց ուղեւորութիւնը առ կախ թողած էր: Այս վերջին իրազուութեան վրայ Պուրպաքի զօրապետն հետեւեալ վիպյութիւնն տուած

է, և զոր մարալախտն իր հարցարքննութեան ատեն ընդունած է :

« Ամեն արդեւք մերժելու և միանդամայն ձախափանց վրայ մարդ ունենալու համար, բաւ նա, թիօնվիլի վրայ ուղեւորելու ատեննին պահապան զօրքն ու պահեստի թնդանօթածիղներն ձորէն պիտի անցնէին : »

Այսպէս մարալախտն՝ որ Մօզէլի աջ ափունքն անցնելով՝ պիտի հարկադրուի կրկին այն դեռէն անցնել, իր կամքովը այս կրկին անցքը ընելու միջոցներէն կը զրկուի, և իր տրամադրութեան ներքեւ միայն թիօնվիլի միակ կամուրջը պիտի ունենայ : Կը խորհի պահապան զօրքն ու պահեստի թնդանօթածիղներն ձախափանց վրայ թողուլ, և իր հետ չի պիտի տանի այն երկու կամուրջներն՝ որոցմով դիւրութիւն պիտի ունենայ իր զօրաբանակին երկու բաժիններուն իրարու հետ հաղորդակցելու միջոց ընծայել :

Մարալախտն՝ այս տրամադրութիւններն բացատրելու համար ճշմարտ խօսք մը ընելով՝ կրտէթէ, կը խորհէ՛ ի թէ յաջողէի, թշնամեօյն կամուրջներէն օգուտ քաղել. սակայն այսպիսի բան մը խորհած ատեն անտեղի դարման մը խորհած չըլլա՛ր :

Պ. Սօլէյլ զօրապետն՝ կամուրջներու հանդերձանաց վերաբերեալ որոշման նկատմամբ իւր վըկայութեան մէջ աւելի հաւատարմ պատճառաւորութիւն մը կը ներկայացընէ. սցփնքն թէ՛ թրնդանօթածիղներն նախորդ պատերազմներուն մէջ ձի կորսնցուցած ըլլալուն պատճառաւ՝ իրեն կար-

ծեայը համեմատ բաւական թուով ձի չէր գրտնուէր. ուստի աւելի աղէկ համարեր են ռազմամթերից պահեստի մասն տանել :

Այս պատճառին յարդ ընծայելու համար պէտք էր որ պահեստի փամփուլաներն ու կամուրջներու հանդերձանքն ընտրելու մասին իրական պարտաւորութիւն մ'եղած ըլլար : Արդ՝ նոյն միջոցին Մէցի մէջ պահուած դրեթէ տաններկու հազար ձի կար մթերից կառք վարող : Այս ձիոց մէջ լծուելու կարելոր յատուկ ձի չէր գտնուէր, եթէ քաղաքի բեռներ տանող ձիերու դիմել ուղած չըլլային. ինչպէս ըրած էր նոյն ինքն Սօլէյլ զօրապետն պահեստի ռազմամթերից տեղափոխութեանը համար :

Բայց և այնպէս հրազինուց պաշտօնէութեան վերաբերեալ ծանուցող իրն կը յայտնէ որ յիշեալ միջոցն անհրաժեշտ չէր, և զէնք ճարելու ատեննին անգամ կրնային բաւական ձի գտնել կամուրջներուն հանդերձանքն տանելու համար : Եթէ մարալախտն այս բանը ըրած չէ, անոր համար էր որ Մէցէն դուրս ելնել չէր ուզեր :

Վերը յիշուած բոլոր իրողութեանց մէջ մարալախտին Մէցէն դուրս ելնելու առաջադրութիւնը ո՛րը կրնար ըլլալ :

Ձինուորական դործողութիւնը երկարածուեց. կրտէթէ՛ օդը գէշ էր. որպէս թէ օդը թշնամեօյն համար ալ գէշ չէր : — Եւ գունդերն անբացատրելի շփոթութեամբ մը իրենց հանդստարանը մտան :

Հետեւեալ օրն՝ օգոստոս 27 Մաք-Մահօն մա-

րաջախտն Շէն-Բորիւլէօ էր: Մէջէն ամենեւին լուր մը չառնելուն վրայ կը տարակուսէր: Վերջը նորէն ճամբայ ելաւ Հռենոսի զօրաբանակին օգնութեան երթալու համար:

Պաղէն մարաշխտն իր թղթակցութեան արձանագրութեան մէջ կը յայտնէ որ նոյն օրն՝ օգոստոս 26, հետեւեալն գրած է առ պատերազմական պաշտօնայն:

« Միշտ Մէջ կը գտնուինք միայն մէկ պատերազմի մը համար ռազմամթերք ունենալով: Այս կերպով անկարելի է թշնամայն դուռներն իր պատնիչափակ գրիցը ետեւը յաղթանակել:

« Փարիզէն լուր մը չկայ, և ո՛չ ալ ազգին մեծ մասին կսրծեացը վրայ. պէտք ունիմ՝ լուր ընդունելու. զօրեղապէս պիտի գործեմ, և թէ Մէջի ներքնայն համար ընելիք յարձակողական շարժումն թշնամին ետ քաշուելու ստիպէ: »

Սոյն հեռագրոյն մէջ, մարաշխտն զօրաբանակին Մէջ կենայր արդարացնելու համար կը յայտնէ թէ անկարելի է թշնամայն դուռներն իր պատնիչափակ գրիցը ետեւը յաղթանակել:

Խորհրդոյն մէջ ոչ ոք այս կարծիքը ընդունած չէ: Գուռներու հրամանատարներն՝ երբ այս մասին հարցաքննուեցան, յայտնեցին թէ իրեն բուլրովին հակակարծիք էին:

Այն միջոցին երբ մարաշխտն կը գրէր թէ անկարելի էր Մէջէն դուրս ելնել, զօրաբանակն կրնար շատ գիւրութեամբ թշնամայն դուռներն թափանցել: Մէջը պաշարող գերմանական զօրաբանակներէն երկու դուռնդ զրկուած էին Մաք-

Մազօն մարաշխտին գէմ պատերազմող Գերմանական դուռներուն օգնութեան երթալու համար: Պաղէն մարաշխտն իր պաշտօնայններէն խմացած էր զայս, և թէ որ օգոստոս 26 ին պաշարումէն ազատելու անկարելիութեանը հաւատալու կարող եղած էր, անոր ալ պատճառը իր տեղակայներուն առկա իր անգործութեանը տալու զանց չէր ըներ, որուն համար ուրիշ պատճառներ մէջ բերելու պարտաւորեցաւ:

Խորհրդոյն ծանուցագրոյն մէջ՝ ինքն ալ այնպէս կը յայտնէ որ նոյն օրը թշնամին քիչ գուռներ ցուցուցած է, և իրեն ներկայացուած պատերազմն չէ ընդուներ:

Նոյն միջոցին՝ Հռենոսի բանակին գլխաւոր հրամանատարն միայն պատերազմական պաշտօնէին հեռագիր չէ զրկած:

Ինչպէս յայտնի է, օգոստոս 27 ին թիւրքիէ զնդապետն կայսերական դործակատար Պ. Լալմանի ձեռօք՝ Պաղէն մարաշխտին հետեւեալ մէկ հեռագիրն ալ զրկած է առ Մաք-Մազօն մարաշխտն:

« Մեր հաղորդակցութիւններն խափանուած են, բայց տկար կերպիւ. եթէ ուզենք կրնանք հաղորդակցիլ, և կըսպասենք ձեզ: »

Սոյն հեռագիրն օգոստոս 28 ին Մէջէն զըրկուած է:

Այսպէս՝ մինչդեռ մարաշխտն պատերազմական պաշտօնէին կը գրէ թէ անկարելի է թշնամայն դուռներն յաղթանակել, Մաք-Մազօն մարաշխտին ալ կիմացնէ թէ ու-

զած ատենն կրնայ զանոնք թափանցել, և կրնն կրպատէ :

Այսպիսի բացայայտ հակառակեանց առ Սե ամեն խորհրդածուծիւն աւելորդ կը համարուի :

Օգոստոս 27 և 28 թղ՝ օրերը բնաւ դէպք մը չի պատահեցաւ : Օգոստոս 29 ին թի՛օնվիլէն Պաղէն մարտիտիսն հետեւեալ հեռագիրն եկաւ :

« Տիւքրօ զօրապետն Մաք-Մահօնի գունդին կը հրամայէ . այսօր ոգոստոս 27, Մթէնէյ պիտի գտնուի զօրաբանակին ձափ կողմը . Տուէյ զօրապետն ալ Մէզղի վրայ ալ կողմը : Առաջին թընդանօթի ձայնին քալելու պատրաստ գտնուեցէք : »

« Ստորագրութիւն թի՛օնիլի : »

Յիշեալ հեռագիրն Տիւքրօ զօրապետը թի՛օն միլ զրկած էր իր Աթինէի բանակատեղիէն, և Պ. Լաիօս անուն անձ մը՝ որ ձեռակերտուածօց գործարանատէր և Մօնթիօնի քաղաքապետն էր, միանգամայն քաջատիրա մէկը, իր անձը վտանգի ենթարկելով՝ զայն տարած էր : Թիւրնիէ գնդապետը զայն չուտով մարտիտիսն զրկած էր Ֆրլաճօ տնուն դատիկանութեան գործակատարի մը միջոցաւ, որ Մէյ առաջին ճամբորդութիւն մ'ըրած էր :

Նոյն օրն՝ օգոստոս 29, օգոստոս 26 ի համար առաջադրուած գործողութիւնն հետեւեալ օրուան, այն է՝ օգոստոս 30 ին սիսելու համար հրամաններ արուեցան : Յիրաւի կարեւոր էր կորսուած ժամանակին տեղը լիցընելով՝ Մաք-Մահօն մարտիտիսն օգնութեան երթալ : Բայց և

այնպէս նոյն օրն առաջնոյն հակառակ հրաման արուեցաւ առանց այս մասին հաւաստի պատճառ մը գտնել կարենալու :

Մաք-Մահօն մարտիտիսն օգոստոս 22 ին թէյմէն զրկած հետեւեալ հեռագիրն օգոստոս 30 ին վէրտիւնի ճամբով հասաւ ի Մէյ :

« Օգոստոս 19 ին ձեռ հեռագիրն ընկալայ ի թէյմն . դէպ ի Մօնմէտի կուղեւորիմ . վաղը չէ միւս օր էան կը գտնուիմ, ուսկից պարագայից համեատ պիտի գործեմ՝ ձեզի օգնութեան գալու համար : »

Սոյն հեռագիրն նոյնպէս օգոստոս 22 ին թի՛օնվիլի ճամբով զրկուած էր, և օգոստոս 23 էն թիւրնիէ գնդապետին ձեռքն հասած էր : « Սոյն ամենակարեւոր հեռագիրն Պաղէն մարտիտիսն զրկեցէք : Հինգ կամ վեց տարբեր գործակատարայ ձեռօք իրեն հասուցէք, և որոց պէտք է զած գրամն ալ տուէք, որպէս զի իրենց պաշտօնը կատարեն : »

Այս ստիպողական յանձնարարութեան վրայ, Յլաճօ նոյն հեռագիրն օգոստոս 29 ին իր հետ չի տարաւ, ուստի ատեանն իրաւունք ունի եղբակացընելու որ եթէ թիւրնիէ գնդապետն այս առիթէն օգուտ չի քաղեց, պատճառն այն է որ նոյն հեռագրոյն արդէն իր տեղը հասած ըլլալը գիտէր :

Այս՝ « Մենք ձեզի կրպատենք » բառերը՝ որոնք թիւրնիէ գնդապետին օգոստոս 27 ին Պ. Լալմանի յանձնած հեռագրոյն մէջ յիշուած են, միւս կողմանէ կը յայտնեն որ Պաղէն մարտիտիսն

օգոստոս 26 ին իր անդակալին ուղեւորութիւնը իմացած էր :

Պաղէն մարաշխանս՝ Մաք-Մաճօն մարաշխանին հեռագիրն ու թիւրնիէ գնդապետին Տիւքրօ զօրապետին յանձն հեռագիրն իրարու քով բերելով՝ կը պարտաւորէր հետեւցընել որ հաւանական էր թէ Շալճնի զօրաբանակն օգոստոս 30 ին Մէջէն քսան կամ գոնէ տասնըհինգ մղոն հեռու գտնուէր : Հետեւաբար օգոստոս 30 ի առաւօտուն առ Նի օրուան տուած հրամաններն նորէն ձեռք առնելով և Սէնթի-Պարպի լեւոք երթալն իրեն նպատակ ունենալով՝ զօրաբանակն ֆէօլէօյի և Սէն-ժիւլիէնի մարտիոցներուն առ Նի հանեց :

Դժբաղդաբար, օգոստոս 26 ի ուղեւորութեան հրամանին հեռաբնաւ Էական միջոց մը չի գործադրուեցաւ, և եթէ Սէն-ժիւլիէնի միակ զառիվայրին տակը երրորդ կամուրջ մ'ալ չ'նստեցաւ, քաղքին երկու կամուրջներէն բնաւ մէկը չի գործածեցին : Իսկ կամուրջներու հանդերձանքն հետ տանելու հրաման եղած չէ զօրաբանակն Մօզէլի ձախ ափանց վրայ անցնելու համար միայն թիւօնվիլի կամուրջն պիտի ունենայ : Վերջապէս, բուր այն տրամադրութիւններն որոց անպատշաճութիւններն ու վտանգները օգոստոս 26 ի ցոյցին փորձառութեամբ ճանչուեցան, կրկին գործադրուելով մի և նոյն արդիւնքն ունեցան :

Գրեթէ ժամը երկու քն էր երբ զօրաբանակն լեռան վրայ խոնեցաւ : Թշնամին ամէն կողմէն կը դիմէր : Մայր եկեղեցոյ դիտարանը՝ թշնամոյն գործադրած կեղբոնացման շարժումներն ամեն

վայրկեան մարաշխանին կիմացընէր : Սոյն միջոցին շարունակ իրարու ետեւէ եկած հեռագիրներուն ընթերցումէն աւելի գրաւիչ բան մը չկար սակայն այդ հեռագիրներն ամենեւին չէին վերդովեր զմարաշխանս :

Երբ զօրաբանակն միացաւ, մարաշխանս գունդերու հրամանատարներն կանեց, իրենց հրահանգներ տուաւ, վերջը միաքը ինկաւ որ Սէնթի-Պարպի ճամբուն վրայ կարգ մը խոշոր բերնով թնդանօթ հաստատէ թշնամոյն թնդանօթածիղներուն հետ դէմ առ դէմ զարնուելու համար : Սէն-ժիւլիէնի դղեակը մարդ զրկեց որ երթան անկէ նիւթեր բերեն, որոնցմով կարելի եղածին չափ չուտով յիշեալ թնդանօթներն պատսպարելու համար պատուարներ չինեցին : Սոյն միջոցին թշնամին վերստին զօրացաւ, շատցաւ և օգոստոս 26 ի ցոյցէն լուսաւորուելով՝ նոյն օրէն ի վեր ամբարացուցած և ամենայն զօրութեամբ քինած դիրքերուն վրայ եկաւ հաստատուեցաւ : Վերջապէս ժամ չորսին նշան տրուելով՝ պատերազմն սկսաւ :

« Յայտնի է թէ օգոստոս 26 ին երրորդ գունդին յառաջապահներուն առանց պատերազմ բռնելու հաստատուած Նէօյլի և Նուասվիլի դիրքերը հասնելու համար յիշեալ յառաջապահներն ինչ ջանքեր բրին, և թէ ինչպէս Սէրվիլիէնի դիւղաքը միայն հասած էին, երբ գիշերը վրայ հասնելով՝ ստիպուեցան պատերազմը վերջացընել :

Մեր գունդերն գիշերը պատերազմի դաշտին վրայ անցուցին : Սեպտեմբեր 1 ին առաւօտուն կանուխ մարաշխանը երրորդ, չորրորդ և վեցե-

րորդ գունդերու հրամանատարներուն հետեւեալ խորհրդական հրամանն ուղղեց :

« Թշնամւոյն մեր առջեւը կտրենալ ընելիք տրամագրութեանց նայելով երեկուան ձեռնարկած գործողութիւնն շարունակել կը պարտաւորինք . այսինքն՝ Վ. երթալ Սէնթ-Պարպ հաստատուել, և Չ. դէպի Պէթէնվիլ մեր ուղևորութիւնը դիւրացընել : Եթէ այս ըսածս չըլլայ, պէտք է մեր գիւրքերուն մէջ հաստատուն մնալ, հոն ամբանալ, և այս իրիկուն Սէն-Ճիւլիէն և Քէօլէօ կը վերադառնանք : Այս տեղեկութիւնը ձեզ հաղորդող պաշտօնէին ձեռօք ձեր աչքին առջև տեղի ունեցած դէպքերն ինձ խմայուցէք : »

Այսպիսի հրաման մը չէր կրնար աննշան բան մ'ըլլալ, և միայն ետ քաշուելու նպատակ մը կը տեսնուէր անոր մէջ : Այս ըսածն իսկ եղաւ ալ . բարեկարգութեամբ ի գործ դրուեցաւ, և կէս օրէն վերջը զօրաբանակն դարձաւ իր բանակատեղիները :

Սոյն միջոցին Մար-Մահօն մարաշխանն՝ որ ամեն վտանգ աչքն առնելով իր գլխաւորին օդնութեան եկած էր, թշնամւոյն միացեալ զօրաբանակացը հարուածներուն տակ կընկճէր :

ՀԱՄԱՌՍՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՌՆ

Մէջի զօրաբանակին ժիր գործողութիւններն սեպտեմբեր 1 ին վերջացան :

Ինչպէս որ տեսանք, Յորպպիսի պատերազմին մէջ մեր զօրաբանակին կրած վնասը այն դատաճառաւ տեղի ունեցաւ, որովհետեւ մարաշխան

Յրօսար զօրապետը և անոր յատուկ զօրաբանակը ուղիղ ճամբէն հեռու ձգեն :

Անգամ մը եթէ զօրաբանակն Մէյ վերադառնար, դէպ ի Շալօն ետ պիտի քաշուէր . այս էր կայսեր բացայայտ հրամանը : Այս միջոցն անոր համար հրամայուած էր, որովհետեւ Հոսենտի զօրաբանակն պաշկասի գունդերուն հետ հաղորդակցութեան մէջ պահելու պէտք կար, վասն զի մեծաւ մասամբ այն զօրաբանակին մէջ կը գրտնուէին գաղղիական զօրաբանակին դիւաւոր պաշտօնատարներն :

Մարաշխան ան անոնց այս հրամանն անյապաղ կատարելու բռնի իր զօրաբանակին ընթացքը ուշացընելու պատճառ եղող միջոցներ ձեռք կառնաւ, և թշնամւոյն ամեն գիւրութիւն կուտայ որ իրմէ յառաջ լերանց վրայ հասնի :

Օգոստոս 16 ի պատերազմէն վերջը, այն միջոցին՝ երբ էթէնի և Պրիէյի ճամբայներն դեռ ազատ են, մարաշխան իր ուղևորութիւնը առկախ կը թողու և նորէն ետ կը դառնայ պաշար հայթայթելու պատրուակաւ : Օգոստոս 17 ին իւրիկուան դէմ, Մանեան հրամանատարն կայսեր զրկելով կըսէ որ միշտ իր ետ քաշուելու համար առած հրամանին հետեւիլ կը խորհի : Վերջը՝ հետեւեալ օրն՝ օգոստոս 18, ետ քաշուելու նոր հրաման մ'ալ տալու կը պատրաստուի, երբ նոյն միջոցին կըսիսի պատերազմն, անօգուտ պատերազմ մը, որովհետեւ մարաշխան արդէն որոշած է Մէյի բանակատեղին վերադառնալ, և այս ալ պատերազմական գաշտին վրայ իր գունդերն կար-

գաղութիւնն և Գանրօպէր մարախախտին տուած հրամաններէն կատարելագէտ կրնայ հասկցուիլ :

Ան-Բրիտանիոյն պատերազմն ալ գլխաւոր հրամանատարին պակասութեամբ կորսուեցաւ , վասն զի այն պատերազմին մէջ անկատար և ամենատկար գունդ մը իր զօրաբանակին առջեւի կողմէր ճակատից , և պատերազմին գալտէն հեռու մնալով իր տեղակալին ստիպողական և կրկնակի թախանձանայք դէմ լուռ կեցաւ :

Զօրաբանակին լեւանց ետեւը տարուեցաւ և վերջը խիստ մեծամեծ ջանքերով կրցաւ անկէ դուրս ելնել . բայց և այնպէս հետեւեալ օգոստոս 19 րդ օրն Պաղէն մարաջախտը կայտեր կը գրէ որ միշտ դէպ ի Հիւսիսակողմը երթալ կը խորհի :

Օգոստոս 18 ին իրիկունը Մանեան հրամանատարն Շալօնէն կը վերադառնայ լուր բերելով թէ Մէջի զօրաբանակին օգնութեան գալու որոշմամբ երկրորդ զօրաբանակ մը կը կազմուի : ճամբայներն որչափ որ բաց են , սակայն Մանեան հրամանատարն չ'անցնիր : Ասի խորհրդաւոր պարագայ մ'է , որով մարաջախտն իր գիտաւորութիւններէն ազատ պիտի մնայ :

Օգոստոս 23 ին՝ օգնութեան զօրաբանակին մօտալուտ դալուստը ազդարարող հեռագիր մը գլինքը կըստիպէ ուրիշ միջոց մը ձեռք առնուլ : Պաղէն մարաջախտն փոխանակ Մօսմէտի Մաք-Մահօն մարաջախտն գիտաւորել երթալու համար իր բոլոր ջանքերն ընելու , ինչպէս որ միշտ ազդարարած ալ է , ճամբան այն կողմէն կը գարծը :

նէ , իր գունդերն ալ փոխանց վրայ կը տանի , և իր զօրաբանակաւը միայն պարզ ցոյց մ'ընելով գոհ կըլլայ , այնպէս միաքը դնելով որ պարտաւորած է չթողուլ զՄէջ , որոյ պաշտպանութեան ներքեւ ապագային մէջ զինուորական և քաղաքական վրդովման մը խաղաղութիւնը կ'ակնկալէ :

Այս ամէն բաներէն զատ , կրիմեոնի խորհրդոյն մէջ իր զօրաբանակին վիճակը հնարքով իր տեղակայներուն յայտնելով , Մաք-Մահօն մարաջախտին ընթացքին վրայ լռելով , միայն մէկ պատերազմի համար ուզումս թերք գտնուիլն իմացնելով , մինչդեռ իր ուզումս թերքն ամբողջովին հայթայթուած է , այնպիսի հրաման մը կընէ որով զօրաբանակն կը պարտաւորի Մէջ մնալ , և կը մերժէ Գաղղիոյ ներսը երթան :

Մի և նոյն օրը պատերազմական պայտօնէին կիմացրնէ թէ անկարելի պաշարող գունդերն թափանցել : Մի և նոյն ատեն Մաք-Մահօն մարաջախտին ալ կը գրէ թէ՛ հաղորդակցութիւնն խափանուած է , բայց տկար կերպիւ , բայց և այնպէս ուզած ատեն կրնայ թափանցել , և իրեն կըսպասէ :

Պաղէն մարաջախտն՝ Մաք-Մահօն մարաջախտին մէկ նոր ազդարարութեանը վրայ , օգոստոս 31 ին նոր ցոյց մը կընէ , որոյ համար կանխաւ տըուած հրամաններն ապարդիւն կը մնան :

Այս էր ահա Պաղէն մարաջախտին վարմունքն ձեր գործողութեանց ատեն : իր զօրաբանակն՝ անհրաժեշտ եղած վրդովումներէն ազատելու խորհուրդով իր գիտաւորութիւնները գործադ-

րնց : իր անձնահասակն անստորաշարմունքներն տա-
կաւին պաշարման ատենն ալ իր վրայ պիտի տի-
րնն : Մէկ նոր կառավարութիւն մը երեւան կե-
նէ : Փարիզ ամէն վտանգի դէմ կը դնէ : ազգն իր
պաշտպանութիւնը ձեռք կը բերէ : Մարտիական
այնպիսի դիմադրութեան մը առջեւ , որուն տեւա-
դութիւնը ստուգիւ պաշարի դիմադրութեան տե-
ւողութենէն պիտի գերազանցէ , իր այս վիճակէն
ազատելու հնարք մը պիտի որոնէ , չէթէ թշնամոյն
հետ պատերազմելով , այլ անոր հետ դաշինք գնե-
լով : Ինչպէս իր պարտաւորութենէն դուրս ելող
այսպիսի ճամբու մը մէջ կրցաւ դնել նաեւ իր տեղա-
կալներն և իր քով զօրաբանակը , որոց օրինաւ-
րութիւնը միայն ճակտորութեան օրն կրցաւ այդ-
պիսի դաւադրութեանց իրենց հաւատք ընծա-
յել տալ : Ահա կը մնայ մեզի հիմա զայս քննել :

Ժամը չորսը յիսուն վայրկեան անցած՝ Պ . նա-
խագահը ծանուցագրոյն ընթերցումը ընդմիջե-
լով կազդարարէ որ զօրծը հետեւեալ չորեքշաբ-
թի օրուան ժամը մէկին ըլլալիք աստանին թող-
ուած է :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՃԱՄԱՆԱԿ ՊԱՇԱՐՄԱՆ ՄԻՆՁԵՒ
1870 ՀՈԿՏԵՄԲԵՐ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԵՑ ԳԱՂԱՔԻՆ ԳԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ Պ . ԴՈՒՐՄ ՏՕՄԱԼԻ ,
ԶՕՐԱՐԱՃԵՆ ԶՕՐԱԳԵՏԻՆ

Ատեան նոկտեմբեր 8 ի

Սեպտեմբեր 4 ԻՆ՝ ՄԱՐՏԻՍԵՆԵՐՈՒՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԵԱՆՔ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԳՐՈՒԱԾ
ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՔ ՎԻՃԱԿ

— Մեպտեմբեր 4 Էն սկսեալ մարտիտն ա-
մէն կարեւոր գործադրութենէ կտ կնցաւ : Ուստի
ալ այնուհետեւ զօրաբանակին բազըք Մէջի վի-
ճակէն կախում ունէր :

Ժամանակն է ուրեմն հիմա քննելու թէ յիշեալ
բաղաժն ի՞նչ վիճակի մէջ կը գտնուէր , և դի-
մադրութեան ի՞նչ պայմաններ ունէր :

1865 ին՝ այս քաղաքին ամբողջութեամբ կա-
տարելապէս պաշտպանեալ վիճակի մը մէջ գնե-

լու համար կարեւոր աշխատութեանց ձեռնարկուած էր:

1868 ին՝ որոշուեցաւ որ առաւել ևս պաշտպանեալ գրից մէջ գրուի, քաղաքն ու մբակոծութեան դէմ պաշտպանելու հինգ մարտկոցներ ևս շինուելով և պատնիշափակ բանակատեղի մը հաստատելով որուն մէջ մեր զորաբանակներն կարող ըլլան պատսպարուիլ և պաշտպանուիլ: Սոյն հինգ մարտկոցներն դեռ լմնցած չէին, երբ պատերազմը երեւան ելաւ. սակայն որչափ որ թերի ալ էին, այսու ամենայնիւ Ռուսաց Մէպաթօրօյի առջեւ շինած գործ քերէն տարբեր զիմադրութեան պայմաններ ունէին, և յայտնի է թէ Մէպաթօրօյի առումը որչափ ջանք և զոհողութիւններ ընել տուաւ մեզ:

Բլաբփիլի և Սէն-Քէօլէօյի մարտկոցներուն խրամները ժայռի մէջ փորուած էին. սոյն խրամներուն ներքին երկու որմերն աւարտած էին. պատնէշներն 1869-1870 ի ձմռան ի վեր մարդ կը դըտնուէին. պատուարներն ինչպէս նաև զառիվայրերըն կրկնապատկուած էին. կը մնար միայն թումբերուն և պարիսպներուն վրայ հողով ծածկել: Իսկ հրազէնքն սեպտեմբեր 1 ին Բլաբփիլի մարտկոցը եօթանասունըհինգ և Սէն-Քէօլէօյի մարտկոցը քառասունըչորս թնդանօթի կը հասնէր:

Սէն-ժիւլիէնի մարտկոցն ալ չորս գլխաւոր ճակատներով երկու հարիւր յիսուն մէթր երկայնութիւն և հինգ հարիւր մէթր պարանոց ունեցող մեծ հնդանկիւնի ձեւով շէնք մ'է. իր գլխու չորս պատերն ու պարանոցի կէս պատը գրեթէ կատա-

րեղտպէս լմնցած և անկաաար մասերուն ալ ցից զարնուած էին: Իր ձախ կողմը դտնուած և պարանոցին մօտը եզոզ մարտկոցին պատին փրայի խրամանն ալ հաստատուն ցիցերով փակուած էր: Խրամներն քիչ խորութիւն ունէին, և լայնութիւնն ինն ալ գլխոյ ճակատներուն մարտկոցներուն առջեւ կը հասնէր. խրամներն ներքին երկու կողմի պատերն չունէին: Կեդրոնական մեծ զորանիստին կամարներն շինուած չէին. ուստի ատաղձով ծածկուեցաւ: Վառօդի երկու մեծ շտեմարան, ետեք հարիւր մէթր երկայնութեան վրայ շինուած թնդանօթ նետելու կամարաձև բերաններ, մեծ և ընդարձակ դադանի դռներ, ասոնք ամէնքը մարդոց և նիւթեղինաց պատսպարութեան համար թռնկաղին միջոցներ էն: Քաղքին մէջի պարիսպներն ալ գրեթէ կրկնապատկուած էին. բայց թնդանօթ դնելու համար շինուած թումբերն դեռ պակաս ունէին: Սեպտեմբեր 1 ին բոլոր հրազէնքն եօթանասուններեք թնդանօթի կը հասնէր:

Սէն-ժիւլիէնի յառաջը զօրաւոր ամրոցներ շինուած էին Շաթիլյանի և Կրամօնի գրից վրայ:

Քէօլէյի մարտկոցը՝ Սէն-ժիւլիէնի մարտկոցին ձեւոյն նման հնդանկիւնի շէնք մ'է, բայց երեք հարիւր յիսուն մէթր երկայնութեամբ ճակատներ և եօթը հարիւր մէթր երկայնութեամբ պարանոց մ'ունի: Երեք ու կէս ճակատներուն պատերն լըմնեցած, և պարանոցի պատերուն մեծ մասն ալ լմնալու վրայ էր: Գրեթէ չորս հարիւր յիսուն մէթր տեղ մնացած էր: Երկու ճակատներուն

խրամներն բաւական խորութիւն և լայնութիւն ունէին, իսկ մնացեալ ճակատներունը գրեթէ եօթը մէթր խորութիւն, բայց ՚ի աջ կողմի կողմնակի ճակատէն, որուն խորութիւնը չորս կամ հինգ մէթրէն անդին չէր անցնէր: Թնդանօթ դնելու համար շինուած թումբերուն մօտ զօրանիստ մը շինուած էր որ հազար վեց հարիւր մարդ կրնար պարունակել: Ասոնցմէ զատ բազմաթիւ պատասպարաններ կային, առանձինն պարանոցին թնդանօթ պարպելու կամարներուն մէջ:

Հրազէնք դնելու համար շինուած մեծ թումբըն ալ բոլորովին աւարտած էր: Սեպտեմբեր Վին ամբողջ հրազէնքն իննսուներհինգ թնդանօթի կը հանէր, բոլորն ալ լաւ տեղաւորուած ու պատրու պարաններով ամրացած: Թնդանօթներուն ամենամեծ մասը քսանըչորս դնտակ նետելու չափ բերնի մեծութիւն ունէր:

Պորտի գիրքերուն վրայ՝ Պէլքրուայի մարտկոյնին դէմը՝ բոլոր միւս չէնքերը պատասպարող գործ մը շինուած էր:

Իսկ Սէն-Բրիվայի մարտկոցը՝ միայն աւարտած էր, բայց պատասպարան չունէր Սակայնիւր ետեւը երկաթուղւոյ գիծը կար, որուն հողով բարձրացած կեդրոնական մասն անմերձենալի էր: Յիշեալ գիծը սպասազինեալ պատուարներով և երեք դղեակներով ամրացած ըլլալուն՝ այնպիսի հաստատուն շինուած մը կը կազմէր որուն վրայ թըշնամին յարձակելու համար շատ դժուարութիւններ պիտի կրէր, և կամ թէ Սէն-Քանթէնի և Քէօլէյի ամէն կողմէն ունեցած յարձակողական

գիրքերուն առջեւ չի պիտի կրնար ամրանալ:

Համառօտիւ խօսելով, սեպտեմբեր Վին Սօղէլի ձախ աղանց մարտկոցներն կատարեալ կերպիւ պաշտպանողական վիճակ մ'ունէին: Իսկ աջ ափանց մարտկոցներն ալ ստուգիւ ամենազօրաւոր յարձակումէ մը պատասպարուելու և կանոնաւոր պաշարման մը դիմադրելու չափ ամրացած էին, վասն զի նոցա կազմակերպութեանը համար ամեն օր նորոգութիւններ կը լայային:

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՆԴԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՄԸ

Վերը յիշուած մշտատե ամբուլթիւններէն և հաստատուն պատուարներէն զատ՝ զօրաբանակին բանակուած տեղուանքը թնդանօթներով պաշտպանուած էին, որոնք մարտկոցներուն և պատուարներուն վրայ դրուած ըլլալով՝ կանոնաւոր պաշարման մը ատեն հոն գտնուած պաշտպանողական դունդերն քաղաքն արտաքին կերպով կրնային երկար ատեն պաշտպանել:

Այլ սակայն սոյն գունդերն որչափ որ այս նըպատակաւ հոն ամրացած էին, ի վերոյ այսր ամենայնի ժիր և հետաւոր պաշտպանութեան մը պայմաններուն գրեթէ չէին համապատասխաներ. ասի մեծ զօրաբանակ մը միայն կրնար ընել:

Եթէ Սէն-Քանթէնի մարտկոցին պատին սկրսած տեղոյն ձախ կողմին վրայ, Սոնիի ու Ֆէվի անտառներուն վրայէն, և Լադնէքսիի ձամբով Մերսիէն մինչև Պէլքրուա երկնցոյ ձամբուն ալ կողմին վրայ գունդեր դրուած ըլլային, թշնամ-

ւոյն պաշարող գունդերն ետ կը մըրուէին և մեր բանակատեղիքն անոնց աչքերէն կը ծածկուէին : Քայց իրենց հաստատուած տեղուանքն այնպիսի դիրք մ'ունէին , որ եթէ թշնամին բանակատեղիքը ումըակոծելու միտք ունենար , բնաւ արդելքի մը չը պիտի հանդիպէր :

Այս դիրքը՝ որ չէր կրնար մարտխառնին կոչուովամտութենէն սպրդիլ , մեծ մասամբ՝ ի սկզբանէ անտի զօրաբանակին բախտին վրայ ծանրացած անսառուգութենէն պատճառեցաւ : Ուստի , օդոստոս ՁԵ ին , երբ ֆոֆլինիէր զօրապետն՝ որ միանգամայն Մէցի գլխաւոր հրամանատարն ու զօրաբանակին ճարտարապետացը հրամանատարն էր , բնդունուելու պաշտպանողական դրութեան վրայտալիք գիտողութիւններն ունեցաւ , շատ բնական էր որ այդ գիտողութիւններն վերջէն կազմուելիք պաշտպանողական զօրաց քաջութեանը յատկացընէր : Իբր զօրաբանակին ճարտարապետացը հրամանատար պարտասոր պիտի ըլլար ուրիշ կերպիւ լուծել այս պաշտպանութեան խնդիրն . բայց իբր Մէցի գլխաւոր հրամանատար զօրաբանակին հեռացած ատենն քաղաքը պաշտպանելու պարտասոր ըլլալուն , իր գիտողութիւններն պահապան զօրաց գունդերուն նկատմամբ պիտի ըլլային , և ո՛չ թէ զօրաբանակին գունդերուն :

Ինչպէս որ կը տեսնուի , Մէց քաղաքը , մարակոցներն ու զօրաց գունդերը ամենքը մէկտեղ զօրասոր պահպանութիւն մ'ըլլալու ամեն յասկութիւններն ունէին , և զօրս մինչև վերջը պաշտպանելու համար արի և հայրենասէր հասարակու-

թիւն մ'ալ կար պատրաստ : Ուստի պաշտպանողական սովորական պայմաններով դէմ դնելու տեւողութիւնը պաշարներուն որքան ժամանակ դիմանալէն կախում ունէր :

ԶՕՐԱԲԱՆԱԿԻՆ ՄԷՑԻ ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆ ՄԵԱՆՈՎԸ
ԿԱՏԱՐԵԼԻՔ ԺԻՐ ԴԵՐԸ

Զօրաբանակին Մէցի պարխպներուն ներքև մնալովը պաշտպանութեան պայմաններն բոլորովին կերպարանախոխ եղան :

Այլ ևս չէր կրնար խնդիր բացուիլ յարձակողական գիմադրութեան և դէմ առ դէմ պատերազմելու վրայ : Ուստի ինչպէս որ օգոստոս ՁԵ ի խորհրդոյն մէջ խօսուած էր , պէտք էր որ զօրաբանակն մերթ ընդ մերթ խումբ խումբ Մէցէն գուրս ելնելով անդադար թշնամին յոգնեցընէր , և գիշերային կամ գաղտնի յարձակումներով անոր հանդիստը վրդովէր , վերջապէս այնպէս յոգնեցընէր զանի՝ որ անկարելի ըլլար իրեն պաշարումը յարատեւել :

Մէցի այն դիրքը՝ որ թշնամւոյն գունդերուն Գերմանիոյ հետ հաղորդակցութիւն ըրած միակ ուղիղ ճամբուն մօտը կը գտնուէր , թշնամւոյն համար մտալուտ կորուստ մը կրնար արտադրելուստի պէտք էր այդ ճամբէն օգուտ քաղել թշնամւոյն գլխաւոր գործողութեան գիծը արելու համար :

Ուստի Մէցի պաշտպանութիւնը իրացնոր կացութեամբը պէտք էր ըլլալ , և Մէցի բանակա-

տեղին խմբուած հարիւր յիսուն հազար հողիէ
բաղկացեալ զօրաբանակէ մը օգուտ քաղելու էր :

Մարտիական փոխանակ Մէտանի և Փարիզու
դէպքերէն վերջը թմբուածեան մէջ կ'յնալու , վը-
տանգին մեծնալուն համեմատութեամբը իր քա-
ջութիւնը կրկնապատկելով՝ պիտի կրնար իր երկ-
րին միլիոն ըլլալ , մինչդեռ անհերքելի կերպիւ-
նորա կորստեան ամենագլխաւոր գործիքներէն մին
եղաւ :

Բայց պաշտպանութեան խնդիրն կազմակեր-
պելու համար բան մը չի գործադրուեցաւ , պարզ
տեղերու պաշտպանութեան համար պահանջուած
ամենադիւրին զրուարթիւններն անգամ մոռցը-
ուեցան :

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԸՆԹԱՐ ՊԱՆԱԶՈՒՄ ԿԱՆՈՆԱԿՈՒ
ՏՐԱՄԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՅՆ ՄԷՋ ԶԵ ԳՈՐԾԱԳՐՈՒՆԵԱՆ

Քաղաքաց պաշտպանութեան պաշտօնէու-
թեան վրայ՝ 1863 հոկտեմբեր 13 ի կանոնադրու-
թեան 245րդ յօդուածը բացայայտ կը ցուցնէ
թէ պատերազմական պաշտօնեայն կամ զօրաբա-
նակին ընդհանուր հրամանատարն ինչ միջոցներ
կը հրամայեն այն քաղաքին հրամանատարին
որ պատերազմական վիճակի մէջ գտնուելով՝ պա-
շարու մէ մը բռնուելու սպառնացեալ կը դատուի :

Երբ օգուտու Յին Բոֆինիէր զօրապետը Մէ-
ջի գլխաւոր հրամանատար անուանուած էր , զօ-
րաբանակին գլխաւոր հրամանատարութիւնը կայ-
սեր վրայ էր , ասոր համար միայն կայրն հրամա-

յելու պաշտօնն ունէր : Բայց սա ևս յիշուած է որ
երբ հրամանատարին յատուկ և ուղղակի որոշմամբ
բը տրուած հրամաններ չըլլան , քաղքի մը ընդ-
հանուր հրամանատարն այն քաղաքը պաշտպա-
նելու համար կարևոր դատած միջոցներն հրամա-
յելու պաշտօնն պիտի ստանձնէ : Արի այնչափ
ճշմարիտ է , որ յիշեալ յօդուածով որոշուած մի-
ջոցներուն մէկ մասն Մէջի գլխաւոր հրամանա-
տարէն ինքնաքերարար գործադրուած է :

Ասկից կը հետեւի որ յիշեալ կանոնադրու-
թեան պահանջումներն կատարելու ապահովու-
թիւնը ինքը միայն ստանձնելու պարտաւոր էր :
Ուստի բուն հրամանատարին բացակայութիւնը
պատճառ բռնելով՝ նշանակեալ բոլոր միջոցներն
գործադրելու մասին ցոյց արուած անհոգութիւնն
չի կրնար եւրելի ըլլալ :

Ե անուշագրոյն շարունակութեանը մէջ պիտի
տեսնենք թէ Պաղէն մարտիական այս կէտին նը-
կատմամբ պատասխանատու դանուելու պարտա-
ւոր պիտի ըլլայ :

Կանոնաւոր միջոցներն մտցուելով՝ Մէջի
պաշտպանութեան և զօրաբանակին վիճակին վը-
րայ տխուր աղբեցութիւն մը պիտի յառաջ գար :

Հետեւեալ գլխոյն մէջ պաշարներու հայթայթ-
մանմասին ալ մի և նոյն անհոգութիւնը ցոյց արը-
ուած պիտի տեսնենք , և պիտի հաստատենք թէ
ինչպէս եղաւ որ պաշարման ժամանակ Մէջի քա-
ղաքական հատարակութիւնն զինուորական իշխա-
նութեան թողլուութեան պատճառաւ քսան հա-
զար մարդու չափ աւելցաւ , մինչդեռ օրէնքը կը

պահանջէ որ քաղքի մը պաշարման ժամանակը՝ նոյն քաղքին մէջ գտնուած անօդուտ մարդիկն պէտք է քաղքէն դուրս հանել: Այս թոյլտուութիւնն թէեւ ուտեստի խնդիր ալ չըլլայ, կրնայ իրական վտանգ մը յառաջ բերել: Պաշարեալ քաղաք մը միշտ ումբակոծուելու վտանգին ենթակայ է. անոր համար պէտք է զգուշանալ որ այն քաղաքը խիստ շատ բնակիչ չի գտնուի, որպէս զի թշնամւոյն ռմբակոծութեան հետեւանքներն նշուազին:

Ըստ օրինաց՝ զինուորական իշխանութիւններն պարտաւորութիւն ունին պաշարման ենթակայ գտնուած ամէն քաղքէն օտարազգիներն դուրս հանել. Գօֆֆինիէր զորապետին այլ մասին բրած որոշումն բարոյիկն անօդուտ եղաւ: Մէջի գըլխաւոր հրամանատարն բնիկ թշնամւոյն դաւառներէն եղող օտարազգիներն ստիպեց որ հոն կենալու հրաման խնդրեն, առանց որոյ բռնուելու վտանգին ենթակայ չըլլալու համար երկրէն պիտի մեկնէին:

Այս արտաքսման հրամանին ձեւն անգամ, որուն մէջ զայն կատարելու միջոցն ի սկզբան յիշուած է, ինչ պատճառաւ և որչափ խնամով հաստատուած ըլլալն կը յայտնէ:

Բազմաթիւ Գերմանացիք թոյլտուութեամբ Մէջի մէջ բնակելու հրամանն ստացան: Ասով պաշարման ատեն եղած լրտեսութեամբ որչափ ինչ երեւան ելնելն կրնայ բացատրուիլ:



ԳԼՈՒԽ Բ.

ՊԱՇԱՐՆԵՐՈՒՆ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ

Մէջի հետոյ պաշարման պայմանն է ոչ ոքի որոշումն չի հայտնուիլ: — Մէջի զօրաբանակն մինչև հացին վերջին պատուաբ մնալուն չափ ղ իմադրեց: Այս կէտը ուստախ խնդրոյն զխտուր կարեւորութիւն մը կուտայ, այսինքն թէ՛ ժամանակին պէտք եղած միջոցներն ձեռք առնուեցան բաւական ըլլալիք պաշարներն հայթայթելու համար, և թէ՛ Մէջ պաշարուելուն պէս՝ գտնուած ուտեստն՝ զիմադրութեան տեւողութեան ատեն բաւելու համար կանոնաւոր կերպիւ կարգի զըրուեցան:

Այս երկու խնդիրներն մանրամասնաբար բացատրուեցան ծանուցադրոյն չարորդ մասին մէջ. բայց անոր մէկ համառօտութիւնը կը յիշենք հոս, որն որ անհրաժեշտ է դէպքերուն պատմութեան կարգը ըստ օրինի յարատեւելու համար:

Նախ և առաջ պաշարներն հայթայթելու համար ձեռք առնուած միջոցներն քննենք:

Երբ պատերազմը որոշուեցաւ, Մէջի ինչպէս նաև Էիւսիւտային-Սրեւելեան սահմանադիտողութիւնը բոլոր քաղաքներուն մէջ՝ միայն նոյն ատենուան ըլլալիք զինուորական ծառայութեան համար պաշար կը գտնուէր: Ուստի այստեղ պաշարով զօրաբանակն չէր կրնար հիմնական գործողութիւններ կատարել ու իրեն ուտեստ հայթայց-

թել. և ամեն ինչ կը պահանջէր պաշար հայթայթել: կառավարութիւնը այս մասին որչափ ալ ջանք ըրաւ, իր ջանքերն ի գերեւեւ կենելով՝ վերջու մն, արգելք և շիտութիւն ծագեցաւ:

Հրամանատարին զիտաւորութիւնը յարձակուողական պատերազմ մ'ընելէր: Այս խորհրդով, պաշարներուն մէջ մասն դործողութեանց հիմը բռնուած սահմանադրութեաւ քաղաքներուն այն է Թորպախի և Սարէկիմինի մէջ դուռեցան: Նոյնպէս Մէջ և Սթրազուրի ալ շատ պաշարներ պահուեցան: Այսպէս բաց քաղաքներու մէջ պաշարի համբարներ հաստատելով՝ ետ քաշուելու ամենափոքր շարժմամբ մը ամենքն ալ կորսնցնելու վրտանդին կենթարկուէին: Այս ըսածնիս ստուգուեցաւ, բայց խիստ վերջը, երբ Թորպախի կուրուստն զօրաբանակը ետ քաշուելու ստիպեց:

Զօրաբանակին օդուստոս Ղին Շարօնի վրայ նահանջելու համար առած հրամանն պատճառ պիտի ըլլար որ Մէջ պաշարուի: Այսպիսի պարագայի մը մէջ զօրաբանակին և քաղաքի հրամանատարաց զինուորական օրինօք ձեռք առնելիք միջոցներն անհրաժեշտ պէտք մ'ունէին:

Ուտեստի պաշտանէութեան վերաբերելու մասն 1862 ի կանոնադրութեան մէջ աւ խօսքերով բացատրուած է թէ՛ առաջինի մը այս միջոցները հրամայել կը պատկանի, երկրորդի մըն ալ զանոնք դործագրել. ուրեմն պէտք էր պաշարման համար պաշար հայթայթել, աւելորդ մարդիկն քաղաքէն դուրս հանել, հրաւիրել քաղաքական իշխանութիւնը որ բնակչաց ուտեստը և գոտտին պա-

հասան զօրաց պիտոյիցը համար հայթայթել կրցած բոլոր դարձաններն աղահոլելու մասին պէտք եղած միջոցներն ձեռք առնու, — հունձքերն ու արջառները քաղաքը առնուլ, — պաշարներուն հոկելու համար յանձնաժողով հաստատել: Պատերազմի պաշտօնեայն, օդուստո Ղին, քաղաքին պաշարման ժամանակի պաշարներուն հայթայթումը պահանջած էր, սակայն այս հրամանը կատարուած էր: Խիստ վերջը՝ միայն Մէջի համար պաշարման ժամանակի խիստ շատ ալիւր և ուրիշ ուտեստներ հայթայթուեցաւ, զորս կառավարութիւնը բուն զօրաբանակին պիտոյիցըը համար հան հաւաքած էր:

Մէջը արեւոյտը ետև գործից պաշարներ Մէջ չէր ստանալ: — Զօրաբանակն ետ քաշուելու ատենը՝ թշնամեայն բերրի և բիկիներ թողած էր: 1870 ի հունձքն հաւաքուած էր, և բոլոր գիւղերուն մէջ խիստ շատ ուտելիք, խոտ և բազմաթիւ արջառ կը գտնուէր: Ամէն ինչ կը հրամայէր որ այս պաշարներն առանց յապաղելու թէ՛ գնելով և թէ՛ խնդրելով Մէջ մտցընելու ճարը նայուէր: Ասով կրկին շահ յառաջ կուգար. մէյ մը որ ուտեստ ունեցած կըլլայինք, և մէյ մ'ալ որ թշնամի զօրաբանակն ուտեստէ կը զրկուէր: Գծրապաղաբար այս մասին բնաւ հրաման մը չի տրուեցաւ ո՛չ զօրաբանակին հրամանատարէն և ո՛չ ալ Մէջի զըլխաւոր հրամանատարէն:

Գիւղերն ելլալ տան հաւոր բողոքականաց Մէջ տալը բողոքականութեալ: — Չէ թէ միայն պաշար հաւաքելու մասին որ և է միջոց ձեռք չառնուեցաւ, այլ և փո-

խանութի անօգուտ մարդիկն Մէջէն գտնու հանելու գիւղերէն եկող հասարակութեան ալ դռները բացուեցան :

Օգոստոս 10 ին ֆոֆինիէր զորապետին տուած մէկ պատուէրը՝ օրինաց յայտնապէս զնաս բերող այս իրողութիւնն կրցաւ կանոնաւորել, այնպէս պահանջելով որ Մէջ չի պիտի ընդունուի այնպիսի մէկն որ գոնէ քառասուն օրուան համար ուտելիք չունենայ : Ինչպէս որ յայտնի է, պաշար հայթայթելն խիստ դժուար բան մ'էր. ուստի դադարականաց հետըհետէ աճող բազմութեան մ'առնել թէպէտ օգոստոս 12 ին պարտաւորեցան յիշեալ հրամանը յիշեցընել, սակայն ալ ժամանակն անցած էր, վասն զի արդէն քսան հազարէն աւելի մարդիկ Մէջի քաղաքական հասարակութիւնն եկած շատուցած էին, որով յիշեալ քաղաքին բնակիչներուն թիւը յիշուան հազարէն եօթանասուն հազարի ելաւ :

Պաշտօնաւորներն իրենց հրամանատարներէն որոշեց ընդունած որոնք Մէջի մէջ հարկերու գումարն իջնուց :

— Օգոստոս 12 ին երբ Պաղէն մարաշխան գլխաւոր հրամանատարութեան պաշտօնն ընդունեցաւ, արժանահաւատ անձանց ըսածին նայելով Մէջի մէջ բուն քաղաքին բնակչացը համար վաթսուս կամ եօթանասուն օրուան ուտելիք կար հոն պատասխարուող անձինքն ալ հաշուելով թող յիշուան օրուան ըլլայ : Իսկ զօրաբանակին վերաբերեալ պաշարներուն միճակը՝ համբարանոցներուն մէջ տիրած անկարգութեան պատճառաւ գիտցուած չէր. այլ սակայն սոսկ զինուորական

եղող երկու 100000 անձանց համար քաններեք քսաննութ օրուան ուտելիք հաշուած են, և յիշուան հազար ձիու համար ալ տասներկու տասնըհինգ օրուան խոտ :

Մարաշխան իրաւամբ ըսած է թէ զինուորական իշխանութիւններն ուտեստներն ապահովելու համար կարելոր միջոցներն ձեռք առած չէին. բայց ասոր հետ մէկ տեղ իրաւունք չունի քաղաքական իշխանութիւններն յանդիմանելու, որոց պարտքն է միայն քաղաքին գլխաւոր հրամանատարին հրահանգացը հետեւել, եւ որք ամենայն անձնուիրութեամբ և հայրենասիրութեամբ իրենց ընդունած հրամաններն կատարած, և դիմադրութիւնը երկարաձգելու մասին եղած առաջադրութիւններն առաջին անգամ հաստատապէս իրենք խորհած են : Պաղէն մարաշխան իր կողմանէ Մէջի պաշարման նկատմամբ կանխաւ հրաման մը տուած չէ բնաւ : Եթէ կրնար ենթադրել որ ասի եղածին պէս է, ապա պարտաւոր էր գոնէ այս մասին ապահով ըլլալով պաշարման ատեն պէտք ըլլալիք բաներուն վրայօք տեղեկութիւններ ընդունիլ :

Կրնանք ընդունիլ որ՝ մարաշխանն՝ Շայճի զօրաբանակին Մէջի զօրաբանակը աղատելու համար ընելիք ջանքերուն վրայ, մինչև սեպտեմբերի վերջին օրերը իր Մէջի պարիսպներուն ներքև մնալը իրր առժամանակեայ նկատելու կարող եղած ըլլայ : Այլ սակայն Մէտանի քանդումը իմանալէն վերջը չէր կրնար այսպէս խորհիլ, որովհետեւ ալ անկէ վերջը անկէ դուրս ելնէն անկարե-

ի զատեց, ինչպէս որ իր խօսքերն արդէն յայս-
նեցին զայս :

Պատմեցան մէնչք բարոտեա հետք բնա Էրջ զժ
Էրջնա՞ն զժ : — Մէջի պաշարումէն առաջ՝ մարա-
ջական անհրաժեշտ կերպով պարտաւոր էր ողն
քայլքին պաշարներն աւելցնելու ճարը մտածել,
մինչդեռ իր զորտրանակին հոն մնալովը պիտի
նուազէր, և պաշարման առաջին օրերն թշնամ
ւոյն զորտրանակին Մօղէի ձախ ավանց լերանցը
վրայ կեդրոնանալովը՝ նորա տկար դռնդերուն
ստորին Մօղէի դաշտակայքին և անոր ալ ավանց
վրայ ամրացած ըլլալէն օգուտ քոչելով պարտա-
ւոր էր Մէջի չրժակայից ոյն մասէն պաշար մըտ-
ցրնել ի Մէջ : Մակայն այս մասին բնաւ փորձ մը
չի փորձուեցաւ :

Գլխաւոր զօրապետէն առնուած ծանօթու-
թեանց և մեծամեծ անձնաց տուած տեղեկու-
թեանց նայելով զօրաբանակին ինչպէս նաեւ քա-
ղաքացւոց ուտելիք հացը սեպտեմբեր Աին կրետուն
և ութը կամ երեսուն և ինը օրուան կայ է եղեր ՚ճ՝
կրամ՝ բանակութեամբ : ձիւն միւս ուտել սկսած
էին : Ազն ալ կը պակսէր : Իրաց այս վիճակը կը
պահանջէր որ որչափ ուտելիք հայթայթելու նոյն-
չափ եւս զանոնք աւելցնելու համար անյապազ
արագ և կարեւոր միջոցներ գործադրուէին :

Ուտելիք հայթայթելու համար՝ պէտք էր ա-
մենայն արթնութեամբ գտնուած պաշարներն հա-
ւաքել, և անոնցմով առանց յապաղելու բնակ-
չաց և զօրաբանակին համար կարեւոր եղած ու-
տեսան հայթայթել : Վերջապէս ամէն մէկ զօրաց

բաժինն սաստիկ պիտանաւորութեան հետ հաւա-
սարակչուել, և ամեն շապուութենէ զգուշութեամբ
հեռի կենալ :

Գծադրաբար այս տրամադրութեանց և ոչ
մէկը չի գործադրուեցաւ, և մարաջական վեր-
ջէն պահանջած մի քանի միջոցներն խիստ ուշ հրա-
մայուեցան, և անով պատրոզական ըլլալին ալ
կրեւան ելաւ :

Համառօտիւ խօսելով, եթէ ֆօֆինիէր զօրա-
պետն իր Մէջի գլխաւոր հրամանատար ան-
ուանուած օրէն Մէջի չրժակայից մէջ գտնուած
ցորենը, խտան ու արջառները Մէջի բանակատե-
ղին բերելու համար պէտք եղած միջոցներն գոր-
ծադրելու մասին անհոգութիւն ըրաւ, Պազէն
մարաջական բոլոր զօրաբանակին հրամանատա-
րութիւնն ընդունած օրը Մէջի համար կարեւոր
ըլլաւ պաշարներն հայթայթել չի հրամայեց :
Վերջէն, երբ Մէջի բանակատեղին վերադառնա-
լով իր գունդերն ոյն քոչքին համաբանոցներէն
կերակրելու պէտքն զգաց, ո՛չ իր բանակատեղ-
ւոյն մօտերը գտնուած պաշարներն հաւաքելու
համար որ և է միջոցի մը ձեռնարկեց, և ոչ ալ
իր ձեռքը գտնուածներն կարգադրելու հոգ տա-
րաւ : Պաշարներու խնդրոյն վերաբերեալ յատուկ
մէկ մասամբ մը պիտի հաստատենք որ մօտ տե-
ղերէն ամնուան մը համար ուտեստ կրնար հայ-
հայթուել, և արդէն համաբարանոցներուն մէջ
գտնուած ուտեստն ալ օրինաւոր խնայողութեամբ
մը գործածուելով զօրաբանակն կրնար բաւական
ատեն անոնցմով կերակրուիլ :



ԳԼՈՒԽ Գ.

ԶՕՐԱԲԱՆԱԿԸ ՍԷՏԱՆԻ ԴԵՊՊԵՐՆԵ ՈՒ ՍԵՊՏԵՄԲԵՐ 4 Ի
ՅՈՒԶՄՈՒՆՔԸ ԿԻՄԱՆԱՅ. ՄԱՐԱԶԱԿՏԵ Խ ԳՈՒՆ-
ԳԻՐՈՒՆ ԿԻՄԱՅԸՆԷ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՆՏՊԱՆ ԱՆՈՒՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Սէտանի աղետից լուրը սեպտեմբեր 4 ին մա-
րաշախտին հասաւ : Նշյն օրը՝ սպայից հրամանա-
տար՝ և տեղեկութիւններ ընդունելու պաշտօնն
ունեցող յատուկ խումբին անդամ Պ. Սամուէլ՝
սեպտեմբեր 1 ի պատերազմին վիրաւորեալներն
փոխադրելու համար ի պաշտօնէ՛ դրկուած Ըլա-
լով՝ գլխաւոր սպայ Պ. Մանթէօֆէլ զօրապետէն
խմացաւ Սէտանի անձնատուութիւնը և կայսրը
գերի իյնալը : Այս նոր աղետից հետեւանքն ինչ
կրնար ըլլալ : Այս աղէտքին վրայ կայսերական
իշխանութիւնն կրնա՞ր յարատեւել, և կամ Գաղ-
ղիոյ գինուորական վիճակն՝ որ արդէն շատ կու-
րուսաններ կրած էր, մէկ յուզմունքով աւելի վը-
տանգաւոր դրութեամբ չի՞ պիտի ծանրանար :

Սոյն սոսկալի խնդրոց վրայ մարաշախտն միայն
սեպտեմբեր 10 ին հաստատուն եղաւ : Սոյն օրը՝
հետեւեակազօրաց սպայ Պ. Լըփօէնտր զօրագլուխն
հասաւ զօրաբանակին թշնամւոյն աւելի մօտ եզոզ
գիրքերն, որն որ Սարէպրիւքի պատերազմին մէջ
վիրաւորուելով՝ թշնամւոյն ձեռքն ինկած և դարձ-
եալ զօրաբանակը վտաւորուած էր : Յիշեալ ըս-
պայն մինչև սեպտեմբեր 5 ի գաղղիական լրագիր-

ներն և գերմանական վերջին լրագիրներն կարդա-
լով տեղեկութիւններ ընդունած էր :

Երբ մարաշախտին քովը տարուեցաւ, և սեպ-
տեմբեր 4 ի դէպքերն, և թրօշիւ զօրապետին
նախադաճութեան ներքև հասարակապետութեան
յայտարարութիւնը և Աղղային Պաշտպան անուն
կառավարութեան հաստատութիւնը անոր իմա-
ցուց, մարաշախտն հրաման բրաւ իրեն որ այս մա-
սին բացարձակապէս լուսթիւն պահէ :

Սամուէլ հրամանատարն հետեւեալ սեպտեմ-
բեր 11 րդ օրն ի պաշտօնէ՛ զօրաբանակն գալով՝
յիշեալ լուրերն հաստատեց, զորոնք կ'ընէ՞ րաւ
Քրոս անուն գերմանական լրագրէ՛ մը ընդունած
էր, և սոյն լրագիրն Լըփօէնտր գերապետին ա-
ռած լուրերուն ճշգրութեանը վրայ բնաւ տարա-
կոյս չէր յայտնէր :

Սոյն ծանր լուրերն յայտնի է որ պիտի տարած-
ուէին : Մարաշախտն ուղեց զանոնք անձամբ իր
դունդերու հրամանատարներուն և զօրաբաժնի
զօրապետներուն հաղորդել, և որոյ համար սեպ-
տեմբեր 12 ին զանոնք իր ընդհանուր բանակա-
տեղին կոչեց :

Այս ժողովքին մէջ մարաշախտն բոլոր տեղի
ունեցած դէպքերն յայտնեց, և այնուհետև զօ-
րաբանակին կատարելիք գերն անոնց իմացրնե-
լով՝ ծանոցց միանգամայն որ Սէտանի զօրաբաժնա-
կին այս աղետիցը վրայ, պէտք չէ ալ մեծամեծ
պատերազմներու ձեռնարկել, և սակայն զօրաբա-
նակն միշտ արթուն բռնելու համար մանր մուր
պատերազմներով դո՛չ ըլլալ, և այս պատերազմնե-

րուն կարգադրութեան համար ալ կառավարութեան հրահանգներուն սպասել: վերջապէս դըլխաւոր սպայներուն ալ պատուիրեց որ լսածնին երթան իրենց գունդերուն հաղորդեն. ասոր վրայ ամենքն ալ լուութեամբ տեղերնին դարձան:

Երբ մարտախտին հարցուեցաւ թէ կառավարութիւն ըսելով ո՞ր հասկըքնելիւղէր, պատասխանեց թէ՛ թէ և այս խօսքս աղէկ մը չեմ յիշեր, բայց ատով Աղգային Պաշտպան կառավարութիւնը իմացընել կուզէի:

Պ. Տըպէնի հետո՞ս Գրեգորիանի և ունոյ Գրեգորիան հրահանգներով հասարակել: — Եոյն օրը՝ սեպտեմբեր 12, գեսպանատան քարտուղար մը Պ. Տըպէն անուն, որ պատերազմի սկզբնաւորութենէն գլխաւոր զորաբանակը պաշտօն ունէր, այնպէս դատելով որ ուրիշ տեղ աւելի օգտակար կերպով կրնայ իր պաշտօնն գործադրել քան թէ Մէջ, մարտախտին հրաման խնդրեց որ կեղծ անուան մը տակ երթայ բրուսիական գունդերն աչքէ անցընէ: Ճանքան բռնուելով Արտարուեցաւ և նոյն օրը հոն անցուց գերմանացի սպայից հետ, սպասելով թէ Ֆրէտէրիք-Շարլ իշխանը իրեն համար ինչ որոշում կրնէ: Յիշեալ սպայներն ըսին իրեն որ Գաղղիոյ վիճակը խիստ ցաւալի է. քանի մը լրագրիներ տուին իրեն որ կարգայ ու տեղեկանայ, և սեպտեմբեր 9 Սթրազպուրիի անձնատուութեան աղետալի լուրը հաղորդեցին իրեն:

Պ. Տըպէն Բրուսիական գունդերն աչքէ անցընելու հրաման չընդունելով դարձեալ Գաղղիական զորաբանակն դարձաւ: Հետեւեալ օրն, սեպ-

տեմբեր 13, ինքնաբերաբար գաղտնի տեղեկագիր մը գրեց առ մարտախտն, որուն մէջ իր Գերմանացի սպայից հետ ըրած խօսակցութիւնն ու Գերմանական լրագրիներէն առած տեղեկութիւններն համառօտիւ պատմեց: Սոյն տեղեկագրոյն վերջին խօսքերը քսածնուս ստուգութիւնը կը հաստատեն:

«վերջապէս, կըսէր Պ. Տըպէն, վեց հարիւր հազար Գերմանացի կայ գաղղիական երկիրներուն վրայ: Գաղղիոյ մէջ Մէջի զօրաբանակէն զատ կանոնաւորապէս կազմակերպեալ զօրաբանակ չկայ: Եռանկալ գաւառներուն համար յանուն աղբիւն զօրաւոր կարեկցութիւն չի պիտի ըլլայ: — Բոլոր Գերմանացիք պիտի միանան աղբն յաղթանակելու համար — ինչ կերպով կառավարութիւն հաստատելու վրայ պատերազմէն վերջը պիտի խօսուի. — Աւստրիոյ զօրաբանակն բնաւին չի պիտի միլամտէ. Աւստրիա և Բուսիա որչափ սր խաղաղութեան համար ջանք կընեն, սակայն Բրուսիա առանց պայմանադրութեան չի պիտի կրնայ ընդունիլ. — Թշնամոյն զօրաբանակը փարիզու վրայ յարձակելու համար մեծ ջանքեր կընէ. — Մէջի վրայ յարձակելը վերջին գործ պիտի ըլլայ. Մօտ ատեններ, այսինքն՝ վեց կամ ութ օրէն պաշարում կայ, երբ գլխաւոր հրազէնքն դայ:»

Մարտախտն յիշեալ տեղեկագիրը կարդալուն պէս հրամայեց որ շուտով անոր օրինակն զրկեն գունդերու հրամանատարներուն: Բայց և այնպէս բանականութիւնն ու զինուորական օրէնքներն տուտիսի տեղեկագիր մը գաղտնի պահելու

մասին իր վրայ բացարձակ պարտաւորութիւն մը կը դնէին : Այս մասին 1863 ի կանոնադրութիւնն այսպէս կը գրէ . պաշտեալ քաղքի մը հրամանատարն՝ թշնամոյն կողմէն իրեն հասած լուրերուն խուլ ըլլալու է . եթէ այսպիսի օրէնք մ'ալ չըլլայ, դարձեալ այդպիսի լուրերն իր զօրարանակին հազորդերու չէր, որովհետեւ իր առաջին պարտաւորութիւնը իր զօրարանակին բարոյականը պաշտպանել և անոնց բարոյականին վնաս բերելիք բռնորդ իրողութիւններն անոնցմէ ծածկել է :

Այս զգացումներն իր սպայից մէջ ինքնաբերաբար յայտնուեցան : Այս մասին թողունք որ Սիււկի դնդապետն խօսի, որն որ յիշեալ տեղեկագիրը տարածելու պատճառն ստանձնած էր .

« Քաջ զխոնարով որ սոյն տեղեկագիրն գաղտնի է, դունդերու սպայներն կանչեցի որ ես անձամբ զանի անոնց գրել տամ : Քանի որ տեղեկագիրոյն վերջերը կը կարդայի, չի կրցայ իմ դրացած ծանր զգացումս բռնել տեսնելով որ տեղեկագիրոյն մէջ պարունակուած այս տեսակ լուրեր զօրարանակին դունդերու հրամանատարներուն կը հազորդուի : Յիշեալ տեղեկագիրը դրող սպայներն իմ կարծիքէս էին և իրենց այս կարծիքը անխափան կը յայտնէին . երբ աւելի վերջերն հասայ, ըսի այս պարոններուն . հոս կենանք, երթամ ժարա զօրապետին քով, և սոյն տեղեկագիրոյն հրատարակութեան վնասակարութիւնը իրեն իմացընեմ : Յիշեալ զօրապետին երթալով իմացուցի որ խիտ վնասակար և յանցաւոր բան է հրատարակել այսպիսի տեղեկագիր մը որ զօ-

րարանակն վհատութեան մէջ ձգելու համար չինուած է : Ժարա զօրապետն որ Պ. Տըպէնի տեղեկագիրը կարդացած չէր, տեղեկագիրոյն վերջին խօսքերն կարդալով ինծի ըսաւ . « Երթամ այս մասին մարալախտին հետ խօսիմ » : Քանի մը վայրկեան վերջը եկաւ և ինծի հրամայեց որ գունդերու հրամանատարացը զրկուելիք տեղեկագիրներուն մէջ այդ վերջին խօսքերն չյիշուին : Աւելցուց նաև որ գունդերու հրամանատարներուն իւրաքանչիւրին զրկուելիք տեղեկագիրներն միայն անոնց կարդացընելով գոհ ըլլան և վերջը պատուեն : »

Այս որոշումը այնպիսի գաղտնի նպատակ մը ունէր որ կրնար աւելի օտարտախ շշուկներ յառաջ բերել :

Այս դէպքին ստուգութիւնն կարելի եղածին չափ հաստատելու պարտաւոր համարեցանք, վասն զի ասով մարալախտն իր առաջին քայլն առած կերելի իր այն ընթացքներուն մէջ որք ամբողջ զօրարանակն անհանդիստ ընելու և վհատեցընելու պատճառ եղան :

Ատեանը այս մասին մարալախտէն բացատրութիւններ խնդրած ատեն՝ պատասխանեց թէ Պ. Տըպէնի իրեն հազորդած լուրերն տարածելը՝ իր զէնքնկերներուն նկատմամբ օրինաւորութեան զգացում մը արտայայտելու, և իր առած տեղեկութիւններն անոնցմէ գաղտնի չի պահելու նպատակաւ ըրած էր . և թէ՛ եթէ այնպէս չընէր, կանոնադրութեան պահանջած օրինաւոր դրութեան և իր գանուած բացառիկ պարագայնե-

րուն մէջ չէր կրնար համաձայնութիւն գոյանալ :

Մարաշխտին ցուցուցած յիշեալ պատճառներն կրնային յարգ ունենալ, եթէ Պ. Տրպէնի բերած լուրերն անհերքելի ճշմարտութիւն մ'ունենային . բայց ո՞վ կրնար անոնց ճշութիւնը երաշխաւորել : Պէտք է բնել որ Սթրազպուրկ անձնատուր եղած չէր : Այս դէպքը կատարելապէս կը հաստատէ թէ զօրաբանակի մը հրամանատարի մը համար որչափ կարեւոր է կը վարմունքը զինուորական օրինաց անխափան գործադրութեան համաձայն կանոնաւորել :

Մարաշխտին ինչո՞ք Սթրազպուրկ անձնատուր արեւելի հատուցի : — Մարաշխտին յիշեալ ցաւալի լուրերն գունդերու հրամանատարաց հազորներն բաւ չի համարելով ինքն անձամբ գնաց այն լուրերն անոնց հազորներու և Սթրազպուրկի անձնատուրներն յատկապէս անոնց լուսացընելու :

Նոյն օրն՝ սեպտեմբեր 13, զօրաբանակին թշնամոյն աւելի մտքը գտնուած գիրքերն այցելեց : Երբ հասաւ Սէն-Բրիտայի մարտկոցը, հոն պահպանութիւն ընող գլխաւոր սղայն զմարաշխտը մինչև Սէն-Լադրի աղարակը տարաւ : Ճամբան մէջերնին խօսակցութիւն մը բացուեցաւ : Մարաշխտին իրեն ընկերացող սղայն բնատեսած չըլլալուն՝ զանի իբր կը խորհրդակիցը համարելով ըսաւ անոր թէ՛ « Այս անդամ՝ մեզի համար յալոզութիւն չկայ . պէտք է խաղաղութիւն ընել վերստին կարգադրուելու համար, և երկու տարիէն կրկին պատերազմ սկսիլ : »

Երբ թշնամոյն հրազնուց մեր հրազէնքէն

աւելի զօրաւոր ըլլալու մասին մարաշխտին գիտողութիւն եղաւ, սա աւելցուց թէ՛ սեպտեմբեր 9 ի ռմբակոծութեան ատեն մինչև Պան-Սէն Մարթէն ռմբակը նետուած էին . և թէ Սթրազպուրկի անձնատուրներն լուրն առած էր, և այս քաղաքը պաշարող մեծամեծ թնդանօթներն Մէջի վրայ բերուելով՝ քիչ առնէն այս քաղքին վրայ ալ պիտի յարձակին, և ոչէտք է վախնալ որ եթէ Մէջի նման վիրաւորեալներով լեցուն քաղաք մը ռմբակոծուի, « ճշմարիտ մեռելոց քաղաք մը պիտի դառնայ : »

Այս ցաւալի խօսքերուն ծանրութիւնը կրնայ արկայուցուիլ . բացատրութիւնն անօգուտ է :

Գաղթական լրտեսներն ընդհանուր : Արեւելի Պաշտպան Կառնալիտին հասարակութեան զբոստանին կողմէն : — Հետեւեալ օրն՝ սեպտեմբեր 14, զինուորական փայտատուարաց դնդապետ մը և զինուորական ճարարապետաց առաջին վաչտին առաջնօրդ Պ. Բէնէթիէ անուն, որ Սէտանէն փախելով Սը դացեր և անկէ Մէջ եկած էր, Սիսէյ զօրավետին զօրաբանին յառաջապահ գիրքերը եկաւ :

Սրի վերակացու Պ. Անդրէաս, որ այժմ՝ Տրօմի քաղաքապետն է, յիշեալ դնդապետին խել մը լրագիրներ յանձնեց մարաշխտին տանելու համար : Այս լրագիրներուն մէջ՝ սեպտեմբեր 8 ին նոր կառավարութենէն առ Գաղղիացիս ուղղուած յայտարարութիւնն և հոկտեմբեր 16 ին աղքային ժողով մը ընտրելու համար ընտրողաց ի ժողով հրաւիրուելը հրատարակուած էր : Պ. Անդրէաս այս

յրագիրներուն հետ զրկեց նաև Պ. Ժիւլ Ֆալրէ սեպտեմբեր 6 ին հանած մէկ շրջաբերականին իր ձեռքովը գրած մէկ օրինակն ալ. « Որովհետև, քսա Պ. Անդրէաս իր ատենին առջև տուած վկայութեանը մէջ, այս գիրը այն ատենի կառավարութեան տրամադրութիւններն կը պարունակէր և վերջին աստիճան դիմադրութեան հրուէր կը կարդար, խորհեցայ որ կրնար Պաղէն մարաթախտին օգտակար ըլլալ, մինչդեռ այս մասին բնաւ տեղեկութիւն մ'ունեցած չէր: »

Փարիզ կրնայ երեք ամիս դիմանալ: Նոր կառավարութիւնն կը պատրաստուի խիստ մեծ պատերազմի մը ձեռնարկելու: Ահա՛ ասոնք էին այն պաշտօնական շրջաբերականին մէջ պարունակուած տրամադրութիւններն զորս քօֆինիէր զօրապետն կը հաղորդէ Մէջի լրագիրներուն և անոնք ալ սեպտեմբեր 16 ին կը հրատարակեն:

Նոյն օրն՝ սեպտեմբեր 16, այսպիսի ամենակարեւոր գէպքերու նկատմամբ զօրաբանակին դէմ լուծիւն պահելն անկարելի ըլլալն իմանալով՝ հետեւեալ ընդհանրական գիրն կը հրատարակէ:

ԶՕՐԱԲԱՆԱԿ ԼՈՒՆՈՍԻ ԸՆԳԷՆՆՐԱԿԱՆ-ԳԻՐ Թ. 9

« Առ զօրաբանակ հռենոսի

« Թշնամեցն դունդէրուն ձեռքէն ազատող Գաղղիացի գերիլի մը ընդհանուր մեծ բանակատեղին բերած սեպտեմբեր 7 և 10 թուականներով երկու Գաղղիական լրագրաց քսածին նայելով՝ նարօյէօն

կայսրն Սէտանի պատերազմէն վերջը Գերմանիա տարուեր է, և կայսրուհին ինչպէս նաև կայսրուհին սեպտեմբեր 3 ին փարիզէն մեկնած ըլլալուն համար՝ Ազգային Պաշտպան կառավարութիւն անուն գործադրիչ իշխանութիւն մը հաստատուած է ի փարիզ:

« Որոց անդամներն են .

« Զօրաբանի զօրապետ Թրօշիւ, կառավարիչ փարիզու, նախագահ՝ Ժիւլ Ֆալրէ, կարնիէ-Ֆաժէ, կամպէթթա, Գրէմիէօ, Է. Արակօ, Բէլէթան, Ժիւլ Սիմօն, Էրնէշթ Բիբար, տը Բէրաթըրի, Ֆէրէ, Բօշֆօր, Կլէ-Պիզօէն, անդամք:

« Զօրապետք, սպայք և զօրականք հռենոսի զօրաբանակին:

Մեր վտանգի ենթակայ եղող հայրենեաց նրկատմամբ ունեցած դիմուորական պարտաւորութիւններնիս մի և նոյնը կը մնան: Շարունակենք ուրեմն ծառայել անոր անձնուիրարար և մի և նոյն արիութեամբ, պաշտպանելով իր երկիրներն ընդդէմ թշնամեցն, և ընկերական վիճակն ընդդէմ չար կրից: Ես համոզուած եմ որ ձեր բարոյականք, ինչպէս նաև դուք և աս այնչափ փորձերով հաստատած էք, ամէն դէպքերուն պիտի յաղթէ, և որով Գաղղիա կրկին անդամ Երախտապարտ պիտի ըլլայ ձեզ և պիտի զարմանայ ձեզ վրայ:

« Դրեալ ի մեծ ընդհանուր բանակատեղին Պան-

Սէն-Մարթէնի, 1870 սեպտեմբեր 16 ին:

« Մարաթախտ Գաղղիայ գլխուոր հրամանատար

« Ստորագրութիւն ՊԱՉԷՆ:

« Բնագրին համաձայն ըլլալուն համար կըստո՞
րագրեմ՝

Ձօրաբաժնի զօրապետ զուլի բնոգ: սոյախոց

(Լ . ԺԱՐԲԱ .)

Յիշեալ հրամանագրոյն հաստատութիւնը սա է
թէ հին կառավարութիւնը Գաղղիայէն մեկնած է,
իրերն նոր կարգ մը ստացած են, Ազգային Պաշտ-
պան կառավարութիւնն հաստատուած է: Իր ան-
դամոց անունը հրատարակուած է: Վերջապէս
սոյն հրատարակութեան ընդհանուր իմաստն տեղի
ունեցած դէպքերուն նկատմամբ կատարեալ հա-
ւանութիւն մը ցուցնել է: Անոր մէջ բնաւ անհա-
ւանութեան երեւոյթ մը չի տեսնուիր:

Մարաշխտան այս տրամադրութեանցը մէկ
ուրիշ ապացոյցն ալ իր մէկ նամակին մէջ յիշուած
կը տեսնենք զոր սեպտեմբեր 14 ին ուղղեց առ
զօրապետն Քօթլինիէր լրագրաց այն յօդուածնե-
րուն վրայ որք անկեալ կառավարութեան նախա-
տական երեւցանք. « Ամենուին ներելի չէ, կըսէ
մարաշխտան յիշեալ գրութեան մէջ (և իրաւամբ),
թոյլ տալ որ այսպիսի դժբաղդութիւն մը թշնա-
մանուի, և մեր զինուորներն ծաղրեն զանանք որոնց
երբեմն կը հնազանդէինք: »

Մի և նոյն օրն՝ սեպտեմբեր 16, մարաշխտան
պատերազմի պաշտօնէին ուղղուած յայտնի
հեռագիր մ'ալ կը յանձնէ զսահաւորաց 7 ըգ-
վաշտի երկու ձիաւորաց. այս հեռագիրը նոր
կառավարութեան պաշտօնէին զրկուած ըլլա-
լու է, որոյ հրամաններուն կըստուէր սեպտեմ-

բեր 12 էն: Վերջը սոյն հեռագրոյն վրայ պիտի
խօսուի:

Վերջապէս, սեպտեմբեր 16 էն անմիջապէս
վերջը՝ մարաշխտան սոյն ընտրութեան վրայ կայ-
սերական դէնքերն ու կայսերական կառավարու-
թեան վերաբերեալ խօսքերն անհետ ընել կու-
տայ:

Իրաց այս առաջին վիճակու ըստ ամենայնի
կիմացուի որ մարաշխտան նոր կառավարութեան
յարած էր:

Մարաշխտան այս խորհրդածութեանց դէմ՝
սաստիկ կը բողոքէ իր հարցաքննութեանց ատեն
ըսելով. « Ես Ազգային Պաշտպան կառավարու-
թիւնը՝ իբր երկրին դիմագրութեան կազմակեր-
պութեանը յարող գործադրիչ իշխանութիւն մը
նկատեցի, և ոչ թէ իբր քաղաքական կառավա-
րութիւն մը, և առժամանակեայ պետական իշխա-
նութիւնն ալ՝ ըստ 1870 ի կանոնադրութեան, միշտ
իրաւասութեան տէր: Ուստի կը խորհէի որ կըր-
նայինք երկրին պաշտպանութեանը շարունակ ձե-
ռընտու ըլլալ, առանց գմեղ կայսերական իշխա-
նութեան հետ կապող երգումնիս ոչնչացընելու
կամ գոնէ ստորնացընելու: Իմ մտքէս անցածնե-
րը միշտ ասոնք էին, քանզի համոզուած էի որ
այս զօրաբանակն կրնայ Գաղղիոյ ծառայութիւն
մ'ընել: »

Մարաշխտան այս խօսքերը բոլորովին հակա-
ռակ են իր սեպտեմբեր 12 էն մինչև 23 կատա-
րած գործողութեանց հետ: Նոր կառավարու-
թեան անդամոց անուններն իր զօրաբանակին ի-

մացուցած ատենը, իրեն եկած խել մը հարսնախանութի մէջ Մէջի լրագիրներուն կը հաղորդէր, որոց մէջ կը դանախն հետեւեալ խօսքերն որ ըստ ամենայնի հակառակ են իր տուած բացատրութեանցը. « Իշխանութիւնն անկաւ յերկիր. այն որ անիրաւութեամբ սկսած էր, անկմամբ վերջացաւ: Մենք անկարող ձեռքերով կորսուած կառավարութիւնն միայն վերստին ձեռք բերինք: »

Ասկէց զատ Պ. Ժ. Ֆավրի յրճաբերականին մէջ ալ հետեւեալը կը կարդանք.

« Փարիզու հասարակութիւնը Նաբոլէոն Գ. ի և իր իշխանութեան կորուստը չի հրատարակեց, այլ զայն արձանագրեց յանուն իրաւանց, արդարութեան . . . »

Առանց երբէք այս մասին քաղաքական կարծեաց վճիռն ընդունելու, յայտնի է որ մարաշխատին այս օրուան օրս բռնած դիրքը չի կրնար քնդունուիլ այն պաշտօնական հրատարակութեան վրայ որոց մէջ յիշեալ անցքերն խիստ յայտնի կերպիւ հասցուցանեն նոր կառավարութիւնն կայսերական կառավարութեանէն անջատող վիճք:

Այսպէս մարաշխտան սեպտեմբեր 12ին խորհրդակցութեամբ իր զօրաբանակին գունդերու հրամանատարներուն և զօրաբաժնի զօրապետներուն հաղորդեց կայսրութեան անկման լուրը սեպտեմբեր 16ին իր զօրաբանակին իմացուց, թիւ 9 ընդհանրական դրոշմ, Ազգային Պաշտպան կառավարութեան կազմութիւնը հետեւաբար անկարելի է ընդունիլ որ ինքը այսպիսի բացայայտ կերպիւ ծանուցած իրողութեանց վաւերականութեան վրայ

նորակոյս մը ունեցած ըլլայ: Բայց և այնպէս սեպտեմբեր 16ին դեռ լուրեր կը խնդրէ: Եւ որո՞ւ կը դիմէ, — թշնամոյն զօրավետին:

Այս մտքէ շնեցած ընթացքը, և Պաղէն մարաշխտին ու թշնամոյն մէջ տեղի ունեցած առաջին յարաբերութիւններն հետեւեալ գլխոյն մէջ պիտի բացայայտուին:

ԳԼՈՒԽ Գ.

ՊԱՊԵՆ ՄԱՐԱՍՃԱՅԻՆ ՖՐԵՏԷՐԻԲ-ՇԱՐԼ ԻԵՒԱՆՆԵ ՆԵՏ ԸՐԱՅ ԹՂԹԱՆՑՈՒԹԻՒՆՆ

Պաղէն Իսթաբուլ Թրեզոր-Շարլ Իշխան Մարաշիւն: — Իշխանի հարսնախանութիւնը: — Պաղէն մարաշխտին դրած յիշատակարանին մէջ հետեւեալը կը կարդանք այն յարաբերութեանց նկատմամբ զորս ունեցաւ Ֆրէտէրիբ-Շարլ իշխանին հետ, նոյն միջոցին տեղի ունեցած դէպքերուն վրայօք իրմէ լուրեր խնդրելու համար:

« Ազգային Պաշտպան կառավարութեան կազմութիւնը և Փարիզու մէջ յայտարարուած հասարակապետութեան լուրը՝ Մօզէլի վրայէն անցնելով Արէն մեր կողմի վախճող դերի մը ձեռքով մեզ հասաւ: Այս դէպքերն զօրաբանակին վրայ դէշ ազդեցութիւն ըրին: Կը կարծուէր որ թշնամին իրենց բարոյականը եղծելու համար յարձակում մը պիտի ընէ, և զօրավետը, սպայք, զօ-

բանք՝ թշնամեոյն Գաղղիոյ հողը ստք կոխելով յուզմունք մը ծագելն կեղտկարծ բլլալը դատելնուն տակաւին սահմանադրեալոյն վրայ կը կուռէին: Մեր գինեւորական օրինաւորութիւնն չէր կրնար հաւատալ որ քաղաքական մասին կուսակից եղողներուն փառափրութիւնը կարենար երկրին ամենանուիրական շահերն զոհել փափաքուած իշխանութեան հասնելու համար:

Նոր գործադիր իշխանութեան հաստատութեանը վրայ պաշտօնական ճշգրիտ տեղեկութիւն մը չընդունելու համար, Ֆրէտէրիք-Շարլ իշխանին գրեցի որպէս զի տեղի ունեցած դէպքերուն նշանակութեանն ու կարեւորութեանը վրայօր ազատօրէն լուրեր հազարդէ ինձ: »

Այսպէս մարաշլիստն այն միջոցին երբ կը խորհի թէ իր ճշգրութիւնը հաստատել ուղած լուրերն միայն թշնամեոյն մէկ յարձակումը կրնար բլլալ, զանոնք ստուգելու համար թշնամեոյն կը դիմէ: Մարաշլիստին առ Ֆրէտէրիք-Շարլ իշխանն ուղղած գրութեան օրինակն իր թղթակցութեանց արձանագրութեանցը մէջ յիշուած չէ: Մարաշլիստն այսպէս պարտաւոր էր ընել այսպիսի փափուկ դէպքի մը մէջ: Մնաց որ իր և իշխանին մէջ փոփոխակի եղած թղթակցութեանց գրեթէ բոլորն ալ չէ յիշուած, որոց ինչ պատճառաւ բլլալն չի գիտցուելուն համար խիստ արտաքոյ կարգի կերելին:

Ֆրէտէրիք-Շարլ իշխանն սեպտեմբերի 19 ին երեկոցեան ժամ ութնին կը պատասխանէ իրեն իր սեպտեմբեր 16 ին դրած հետեւեալ նամակաւ.

Ֆրէտէրիք-Շարլ ԻՇԽԱՆՆ ԱՌ ՊԱՐԻՆ ՄԱՐՁԱԳՅՆ

« Բնդհանուր բանակատեղի Մէցի առջև . 1870 սեպտեմբեր 16 .

« Կը ցաւեմ որ արշաւանք մը բրած բլլալու համար միայն այսօր կը ցայ Ձեր վսեմութեան նամակին պատասխանել: Գաղղիոյ դէպքերուն հաստատութեան նկատմամբ ինձմէ տեղեկութիւններ լինողրած էք. ահա ապիկ կամաւ հետեւեալ լուրերն կը հաղորդեմ ձեզ:

« Մար-Մահօն մարաշլիստի զորաբանակին Սէտանի մօտերը անձնատուր բլլալէն ետքը, երբ Ն. Վ. Նարօլէոն կայրը անձամբ Ն. Վ. իմ տիրոջ ու թաղաւորիս անձնատուր եղաւ, կայրը յայտնեց որ ալ չի կրնար քաղաքական գործաւնութեանց միջամտել, վասն զի քաղաքական վարչութիւնն ի փարիզ առժամանակեայ պետական իշխանութեան յանձնած էր:

« Վերջը կայրն իբր իբրուսիոյ պատերազմի դեռի անձնատուր եղաւ, և իր բնակութեանն համար ֆատէյի մօտ վիլհէմհօհի դղեակը ընտրեց:

« Այս անձնատուութեանէն երկու օր վերջը աւազ, փարիզու մէջ վրդովում մը ծագելով աւանց արիւնհեղութեան յիշեալ պետական իշխանութեան տեղ հասարակապետութիւնն հաստատուեցաւ:

« Այս Հասարակապետութիւնը իր ծագումը օրէնադիր ժողովէն չառաւ, այլ յՈթէլ-աբ-Վիլ և տակաւին ամբողջ Գաղղիա ընդունած չէ զայն:

Միապետական տէրութիւնք եւս բնաւին ճան-
չած չեն զայն :

« Կայսրուհին ու կայսրորդին Մեղղիա ուղեւո-
րեցան :

« Եւ Վ. Թագաւորն Բրուսիոյ շարունակեց իր
ընթացքն Մետանէն ի Փարիզ, առանց գաղղիա-
կան զինուորական զօրութեանց պատահելու :

« Մեր զօրաբանակներն այսօր սոյն քաղքին
առջև հասան :

« Իսկ ի Փարիզ հաստատուած նոր կառավա-
րութեան կազմութեանն ու ընելիք գործողու-
թեանց մասին կրնաք դրոյս հետ առ ձեզ զրկը-
ւած լրագրէն պէտք եղած տեղեկութիւններն
ընդունիլ :

« Ձեր վսեմութիւնն կրնայ զիս պատրաստ
գտնել ուզած տեղեկութիւններնիդ ձեզ հաղոր-
դելու, որոյ համար հրաման ալ ընդունած եմ :

« Մտորագրութիւն. Ֆրէճիթիֆ ՇՄՐ. : »

Իշխանին յիշեալ նամակին վերջին տողերը ու-
շաղբութեան արժանի են. « Ձեր վսեմութիւնն,
կրտէ, կրնայ զիս պատրաստ գտնել ուզած տե-
ղեկութիւններնիդ ձեզ հաղորդելու, որոյ համար
հրաման ալ ընդունած եմ : — Ըսել կըլլայ թէ Իշ-
խանն այսպիսի հրաման մը խնդրեր է իր Թագա-
ւորէն, և այն ալ մարաշախտին մէկ ընթացքին
համար անշուշտ խնդրած ըլլալու է :

Մարաշիտի իր յետադարձի մէկէ զետեմալին զ-
բողիքներն հասարակ իտալական նկարագրի զբառ օրոյնդ :

— Մարաշախտին յիշատակարանին մէջ կը կար-
դանք որ մարաշախտն Ֆրէտէրիք-Շարլ իշխանին

յիշեալ պատասխանն ընդունելուն պէս իր զօրա-
բանակին գունդերու հրամանատարներն ու զօրա-
բանի զօրապետները ընդհանուր բանակատեղին
հրաւիրեց իր առած տեղեկութիւններն անոնց
հաղորդելու համար : Հոս յայտնի սխալմունք մը
կայ : Չօրաբանակին գունդերու հրամանատարներն
ու զօրաբանի զօրապետներն սեպտեմբեր 12 ին
և չէ թէ 17 ին Պան-Սէն-Մարթէն հաւաքուեցան,
ուրեմն Ֆրէտէրիք-Շարլ իշխանին նամակը անոնց
չի կրցաւ հաղորդուիլ : Չօրաբանակին գլխաւորա-
յը համար վտանգաւոր եղող այս շիթութիւնն ե-
րեւան հանել պէտք էր, շիթութիւնն մը՝ որուն
այսպիսի նշանաւոր կարեւորութիւն մ'ունեցող
դրութեան մը մէջ գտնուիլն զարմանաց արժանի
է, և ուրիշ բան չի կրնար ըլլալ, եթէ ոչ՝ հաշույ
մը արդիւնք : Յիշատակարանին այս մասը բոլորո-
վին լի է այնպիսի լուծիւններով որք խիտ աղէկ
կը համապատասխանեն մարաշախտին միտքը վրդ-
վող այն տարակուսանաց՝ այնպիսի ժամանակի մը
մէջ, երբ անսկսեց որ նա նոր կառավարութեան
մը հաստատութիւնը իր զօրաբանակին կիմացընէ,
կրտէ թէ զինուորական պարտաւորութիւններն մի
և նայնը կը մնան վասն հայրենեաց, և թէ՛ պէտք
է շարունակ Գաղղիոյ երկիրներն պաշտպանել ընդ-
դէմ օտարին, և սակայն գերմանական բանակին
գլխաւոր զօրապետին հետ յարաբերութեան մտնել :

Թէ ինչպէս վերջացան այս տարակուսանքն և
թէ ինչպէս մարաշախտն պարտաւորեցաւ ի նամ-
ւոյն հետ թղթակցել, յաջորդ դէպքին մէջ պիտի
բացատրենք :

Պերմանական կառավարութեան ինչո՞ք լրացուցած է՞ յարտաճը : — Սեպտեմբեր 11 Էնթեթանտան ինչո՞ք լրագրոյն մէջ գերմանական կառավարութեան մէջ յօդուածը տեսանք որ գերմանական կառավարութեան Գաղղիոյ համար ընդունելիք կացութիւնը խիստ յայտնի կերպիւ կը բացատրէր : Սոյն կարևոր յօդուածը ամբողջ հոս կը հրատարակենք :

« Բէյմն հրատարակուող լրագիրներն Հասարակապետութեան յայտարարութիւնն և ի փարիզ հաստատուած նոր իշխանութենէ մը խմբագրուած օրէնքներն հրատարակեցին : Որովհետև փարիզ գերմանական գունդերով պաշարուած է , յիշեալ լրագրաց մէջ գրուածներն կրնան ենթադրել տալ որ իրենց այս լուրերն գերմանական կառավարութենէն արուած ըլլան կամ անոնց հրամանաւր հրատարակուած ըլլան : Գերմանական կառավարութիւնն՝ մամոյ ազատութիւնը յարգելուն համար ինչպէս իր երկրին լրագրացը նոյնպէս և յիշեալ լրագիրներուն ազատութիւն կուտայ որ իրենց կարծիքներն հրատարակական թերթերու միջոցաւ յայտնեն : Սակայն և այնպէս մինչև զայսօր Նաբօլէոնի կառավարութենէն զատ ուրիշ կառավարութիւն մը ճանչցած չէ , և մինչև որ իրերն նոր կարգադրութիւն մը ստանան , իր առջեւը կայսերական կառավարութիւնն իրաւունք ունի ազգային լրութեան կողմանէ հաղորդակցութիւններ բանալու : Այս առթիւ կը յիշեմք նաև՝ որ գրեթէ բոլոր օտար տէրութեանց խաղաղութեան համար միջնորդութեան փորձեր ընելու մասին փարիզու մէջ համբաւուած լուրը բոլորովին անհիմն

է : Մինչև այսօր ընաւ մէկ տէրութիւն մը միջաւմը տած չէ , և այսպիսի միջամտութիւն մ'ալ ըլլալն այնչափ ճշմարտանման չի կրնար ըլլալ , վասն զի եթէ ըլլայ ալ , չի կրնար յաջողիլ , մինչև որ որ և է կարգադրութեան հիմունքն Գերմանական կառավարութենէն չընդունուին , և մինչև որ Գաղղիոյ մէջ երկրին ճանչցուած և իբր իր ներկայացուցիչը նկատուած կառավարութիւն մը չի գտնուի : Գերմանական կառավարութիւնը՝ որուն նպատակը պատերազմիլ չէ , չի պիտի մերժէ Գաղղիոյ հետ խաղաղութիւն հաստատելն , եթէ ստուգիւ երկիրն զայն խնդրէ :

« Այս պարագային մէջ միայն գիտնալ պէտք է թէ որու հետ պիտի դաշնագրուի խաղաղութիւնն :

« Գերմանական կառավարութիւնը կրնայ հաղորդակցութեան մասնէլ Նաբօլէոն կայսեր հետ , որուն կառավարութիւնը միայն մինչև զայսօր ճանչցուած է , կամ անոր ձեռքովը հաստատուած առժամանակեայ պետական իշխանութեան հետ : Ասոնց պէս կրնայ նաև դաշնադրել Պառլէն մարալխախին հետ , որ իր հրամանատարութիւնն կայսրէն ընդունած է : Բայց անկարելի է իմանալ թէ գերմանական կառավարութիւնն ինչ իրաւամբ պիտի կրնայ հաղորդակցիլ այնպիսի իշխանութեան մը հետ որ մինչև հիմայ նախկին օրէնադրական ժողովոյ ճախակողմանց մէկ մասը կը ներկայացընէ : »

Համառօտունք . գերմանական կառավարութիւնը մտադիր է Գաղղիոյ հետ դաշնագրուելու ,

բայց միայն կամ կայսեր, կամ կայսրուհւոյն ե կամ Պաղէն մարավախտին հետ կրնայ հաղորդակցութեան մտնել: Կայսրը դերի վարուած է, կայսրուհին Գաղղիայէն մեկնած է, ըսել է որ դաշնադրութիւնն միայն Պաղէն մարավախտին հետ պիտի ըլլայ. ինքն է որ ըլլալիք հաղորդակցութիւններն երաշխարեւրու համար պէտք եղած զբոլութիւններն պիտի տրամադրէ:

Բէյմսի լրագրաց այս հրատարակութիւնը մարավախտին վրայ խիստ աւելի կարեւոր դիրք մը յառաջ կը բերէր: Աղգային պաշտպան կառավարութիւնն իր հաստատութեան ժամանակը ամենեւին չէր խորհէր որ այն ատենուան ամենէն աւելի զօրաւոր գաղղիական զօրաբանակի մը զօրապետն իրեն խորհրդակից ունենայ: Ահա այս առիթէն թշնամին իր քաղելիք օգուան շուտով իմացած էր: Մարավախտն խաղաղութիւնը դաշնադրելու իրաւանց տէր ճանչելով՝ զանի իր զինուորական պարտաւորութեանց կատարումէն պիտի հեռացընէր և հաղորդակցութեանց ասպարէզը պիտի նետէր, և անկէ վերջը իր ուղածին պէս խաղաղութեան հաստատութիւնը պիտի փութացընէր կամ երկարածէր: Ինչպէս որ կը տեսնուի, Բէյմսի լրագրաց հրատարակութիւնը լծակ մը պիտի ըլլար այս կերպով մարավախտին դիտաւորութիւններն փութացընելու համար: Պ. Թը Պիամարք յիշեալ հրատարակութիւնը երբ զրկեր է մարավախտին, մարավախտը կըսէ թէ՛ սեպտեմբեր 22 ին Մէյ եկող վալտէժօ անուն տեղակալէն իմացած է զոյս: Հուանական է որ աւելի

կանուխ իմացած ըլլայ, սակայն տուեանը չի կրբոյաւ զայն ստուգել, այլ իր հաւատով կրցածն այսչափ է որ սեպտեմբեր ամսուն մէջ Ֆրէտէրիք-Շարլ իլլիանին և Պաղէն մարավախտին մէջ տեղ ուղղակի հաղորդակցութիւններ տեղի ունեցան:

Սեպտեմբեր 23 էն առաջ քաղղիական զօրութեան հրահրման հարցումը: — Այս մասին Պ. Արնու-Ռիվիէրի վկայութիւնն զմեզ պիտի լուսաւորէ: Պ. Արնու-Ռիվիէր՝ նախկին հրաժարեալ սպայ, Պաղէն մարավախտէն յանձնարարութիւն ընդունած էր դունդ մը՝ նոր իրողութիւններ երեւանածող զինուորներ կազմակերպելու: Պ. Արնու-Ռիվիէր՝ որ ի սկզբան օգոստոս ամսոյ տասնըհինգէն վերջը ընդհանուր մեծ բանակատեղին պաշտօնի վրայ կարգուած էր, սեպտեմբեր ամսոյ սկիզբը յառաջապահ գունդերուն հրամանատարութեան պաշտօնն ստանձնեց ի Մուլէն:

Ուստի զլիսաւոր զօրապետաց մէջ եղած փոփոխակի հաղորդակցութիւններն իր միջնորդութեամբ կը ըլլային. ինքն էր որ պատգամաւորներն ընդունելով զանոնք կառքով ընդհանուր մեծ բանակատեղին կը տանէր: Այսպիսի փափուկ պաշտօն մը ի՛նչպէս կրնար յանձնուիլ այնպիսի սպայի մը որուն օտարոտի անցեալն ամենուն և նոյն իսկ մարավախտին յայտնի էր: Ատենան չուղէր զայս բացատրելու դժուարութիւնն յանձն տունու: Կը տեսնեմք որ Պ. Արնու-Ռիվիէր իր առաջին վկայութեանը ատեն յայտնեց որ ինքը սեպտեմբեր 11 ին մէկ պատգամաւորէ մը Ֆրէտէրիք-Շարլ իլլիանին մէկ նամակն ընդունած էր առ

Պագէն մարաշխանն ուղղեալ : վերջը նոյնը կրբի-
 ներով ըստ թէ նոյն օրն ինքն ալ մարաշխանին
 իր յատուկ ձեռքովը իրեն յանձնած մէկ նամակն
 ալ գերմանական յառաջագահ գունդերուն տա-
 րած է : Այս երկու վկայութեանց միջոցին մէջ Պ.
 Արնու-Ռիվիեր մարաշխանն իր բանտին մէջ տես-
 նելու գնաց . իր առաջին վկայութենէն յառաջ և
 մարաշխանին ալ խնդրանքը անոր առաջին այ-
 ցելու թիւն մը ընելու դացած էր : Անկարելի ե-
 դաւ հաստատել թէ յիշեալ վկային երկու հատ
 տատութեանց ո՞րը ճշմարիտ է , վասն զի սեպ-
 տեմբեր 11 ի հեռագիրն թղանալէն հետ փոփո-
 խակի եղած բազմաթիւ հարորակցութեանց մէկն
 է , որոց հետքն անգամ չի գտնուիր հաւաքածու-
 յից մէջ :

Պ. Արնու-Ռիվիէր զասնք յայտնելով իմացուց
 նաև որ սեպտեմբեր 17 ին Ֆրէտէրիք-Շարլ իշ-
 խանին մէկ հեռագիրն բերող նոր պատգամաւոր
 մ'ալ եկած էր , զոր յիշեալ պատգամաւորն իր
 ձեռքովն Պոպէ զօրասպետին յանձնեց ի Լօնտէվիլ
 և որոյ հետ մասնաւոր տեսակցութիւն մ'ալ ու-
 նեցաւ : Յիշեալ հեռագիրն հրատարակուեցաւ մա-
 րաշխանէն , զոր արդէն ծանուցինք ալ :

Սեպտեմբեր 22 ին՝ վոխանակեալ գերիներն
 ու մարաշխանին համար երկու հեռագիր բերող
 նոր պատգամաւոր մ'ալ եկաւ : Յիշեալ հեռագիր-
 ներէն մին նոյն առնետան ըլլաւիք գործողու-
 թեանց նկատմամբ էր , միւսոյն հետքը գրա-
 նուած չէ :

Սեպտեմբեր 23 ին՝ մարաշխանին համար նոր

հեռագիր մը բերող պատգամաւոր մ'ալ եկաւ ,
 զոր Պ. Ռէնիէ տարաւ ընդհանուր բանակատեղին ,

Մենք այս վկայութեանը մէջ չենք տեսներ
 այն պատգամաւորին խօսքը՝ որ սեպտեմբեր 17 և
 23 ին միջոցը՝ այսինքն Պ. Ռէնիէ եկած օրը՝ ուղ-
 զակի Պան-Սէն-Մարթէն տարուեցաւ , այն պատ-
 գամաւորն՝ որոյ համար սպայից գլուխ Պ. Կարսէն
 կրօն թէ հետը ընկերացած էր : Պ. Կարսէնի ըսա-
 ծին նայելով յիշեալ պատգամաւորը Ֆրէտէրիք-
 Շարլ իշխանին մէկ մասնաւոր սպայն էր Պ. Տիս-
 քան անուն , որուն բոլոր հոկտեմբեր ամսուն մէջ
 խիստ շատ անգամ մարաշխանին քով դալն տես-
 նուած էր :


Արդեօք Պ. Արնու-Ռիվիէրին և Կարսէն զօրա-
 դիւին յայտնած պատգամաւորներէն զատ ուրիշ
 պատգամաւոր չկայ , ո՞վ կրնայ զանի հաստատել :

Հապա ո՞ր պաշտօնեայն է այն որ Ռէյմի Լը-
 բադրաց հրատարակութիւնն մարաշխանին բե-
 րաւ . անկարելի է ըսել զայս , բայց այնչափ ստեղ-
 և նպատակին միայն քաղաքական եղած խօսակ-
 ցութեանց միջոցը չէ մտաջուած նաև այն գրու-
 թիւնը որուն մարաշխանին տեղեակ ըլլալն գեր-
 մանական կտաւարութեան համար մեծ օգուտ
 մ'էր , և այն գրութիւնն ալ մասնաւորապէս մա-
 րաշխանին յատկացած էր : Միթէ չէնք կրնար
 իմանալ որ մարաշխանին գիրքն արդէն փոխուած
 է , երբ կը տեսնենք որ սեպտեմբեր 19 ին Ֆրէրիէր
 կազմուած խորհրդոյն մէջ Պ. ալ Պիամարք Պ.
 Ժիւլ Ֆարլի ստ կերպ կը խօսի . « Որովհետև Մէ-
 ցի վրայ կը խօսի՞ , արժան է դիտել տալ ձեզ որ

Պաղէն ձեզի չի պատկանիր: Խիտ շատ վաստեր ունիմ հաւատաւոր որ նա կայսեր հաւատարիմ կը մնայ և որով կը մերժէ ձեզ հնազանդիլ:»

Համառօտենք. Պ. տը Պիտմարք գերմանական կառավարութեան իրեն հետ հաղորդակցութեան մաներու դիտաւորութիւնն Պաղէն մարաթախին իմացընելով զորապետ մը հաղորդակցողի մը հետ կայլայլէ, նորա հրամայած զօրաբանակն կանդամալուծէ, և երկար ատեն անվերջանալի խօսակցութիւններ բանալով առանց պատերազմելու կըսպատէ այն դեռ անժանօթ եղող վայրկենին երբ սոյն այս զօրաբանակը իր տրամադրութեան ներքև պիտի դնէր:

Հետեւեալ գլխոյն մէջ պիտի յայտնենք այն գործական որ այս մահառիժ ժամանակակէտին դաղտնիքն մարաթախէն պիտի իմանայ:



ԳԼՈՒԽ Ե.

ԲԵՆԻԿԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ: — ՊՈՒՐՊԱՔԻ ԶՕՐԱՊԵՏԻՆ ՄԵԿԵՆԻԸ: — ԲԱՅՈՒԱԾ ՀԱՂՈՐԴԱՅՈՒԹԵԱՆՑ ՎՆԱՍԸ

Ասոյն գլխոյն մէջ Պ. Բէնիկ ընդ Պաղէն հարաւորութիւն: — « Սեպտեմբեր 23 ին, կէս օրէն վերջը, — կըսէ Պ. Արնու-Րիվիէր, — պատգամաւոր մը ներկայացաւ յառաջագահ գունդերը, որ Ֆրէտէրիք-Շարլ իշխանին առ Պաղէն մարաթախտն ուղղեալ մէկ նամակն կը բերէր: Սոյն պատգամաւորէն

քսան քայլ հեռու մարդ մը կայնած էր, որ ձեռքը գաւազան մ'ունէր ծայրը ձերմակ թալկինալիով մը: Յիշեալ պատգամաւորն նամակը մարաթախտին յանձնելէն վերջը երբ մեկնելու կը պատրաստուէր, հարցուցի իրեն թէ այս հետի մարդն ո՞վ էր. « Հեմ գիտեր, » ըսաւ նա և մեկնեցաւ: Այն ատեն այդ մարդուն քոյն երթալով ըսի իրեն. « ո՞վ էք դուք » — « Յանձնարարութիւն մը ունիմ, ըսաւ նա, Պաղէն մարաթախտին և հիմա պիտի խօսիմ: »

Պ. Բէնիկէ դաղղիական դաւնդերը այս կերպով միջամտեց:

« Պ. Բէնիկէ, կըսէ Պ. կարսէն, իրիկունը՝ գիշերը վրայ հասած միջոցին Պ. Արնու-Րիվիէրի առաջնորդութեամբ Սիսէյ զօրապետին ընդհանուր բանակատեղին տարուեցաւ, ի լճածէվիլ: Սիսէյ զօրապետն՝ Պ. Բէնիկէի կառքէն վար իջնելէն առաջ, իմանալով որ պատգամաւոր մը կար Պաղէն մարաթախտին հետ տեսութիւն ընել ուզող, հրամայեց ինձ որ զանի իր քովը տանիմ: Երբ Պան-Սէն-Մարթէն մտեցայ, հարցուցի պատգամաւորին թէ իր դալը մարաթախտին ինչ կերպով իմացընելու եմ, ըսաւ ինձ թէ՛ « Հասթինիէն պատգամաւոր մ'է եկեր, կըսէք: » Այն ատենը Մէջ գտնուողներն բնառ չէին գիտեր որ կայսրուհին իր բնակութիւնը Հասթինիկ հաստատած է:

Ահաւասիկ Պ. Բէնիկէ այս ամենատարուտի միջոցը գործածեց մարաթախտին քոյն երթալու հրամանն առնելու համար:

Մարաթախտն կարսէն զօրապետին ըսածը կը

Հաստատէ յայտնելով որ Պ. Բէնիէի դատարար իբր կայսեր կողմանէ զրօնած սուրհանդակ մը իրեն իմաց տրուեցաւ : Մարաշխտոն անմիջապէս զՊ. Բէնիէ իր խուցք տարաւ :

Պ. Բէնիէ սկսաւ խօսակցիլ մարաշխտին հետ յայտնելով որ ինքը Ֆէրիէրէն կուգայ ուր կը գտնուէր թշնամոյն ընդհանուր բանակատեղին. և թէ ինքը յատկապէս հոն երթալով Պ. տը Պիսմարքի հետ խօսակցելու հրամանն ընդունած է իմանալու համար թէ կայսերական կառավարութեան հետ անմիջապէս խաղաղութիւն հաստատելու կը փափաքի: Վերջը շուշուջ մարաշխտին կայսրուհւոյն Համթիեի բնակարանին լուսանկար պատկերը, որուն ներքև կայսրոջին իր հօրը հասցէովը քանի մը սիրալիր տողեր նշանագրած էր: Պ. Բէնիէ դըռտը հրամաններ չունի, և երբ այս մասին զխտորութիւն եղաւ իրեն, պատասխանեց թէ այդ կարեւոր գրութիւններն ճանապարհորդութեան գիւղաց վտանգներուն չենթարկելու համար առած չէ: Մարաշխտին և Պ. Բէնիէի իրենց նախնական խօսակցութեանց նկատմամբ տուած վկայութիւններն իրարու համաձայն են, բաց ի մէկ կարեւոր կէտէն, այսինքն թէ՛ մարաշխտը կըսէ որ Պ. Բէնիէ ինծի ըսաւ թէ Պ. տը Պիսմարքի հաւանութեամբ կայսրուհւոյն կողմանէ իրեն կուգայ. Պ. Բէնիէ ալ կըսէ թէ՛ ես չքոյ մարաշխտին որ կայսրուհւոյն կողմանէ յանձնարարութիւն ունիմ:

Այսպէս սկիզբէն ի վեր Պ. Բէնիէ ինչ պաշտօնով եկած ըլլալուն վրայ իր և մարաշխտին մէջ

կատարեալ հակառակութիւն կայ: Սա կէտն միայն անտարակուսելի է թէ Պ. Բէնիէ Պ. տը Պիսմարքի հաճութեամբը վարուեր է: Աւելի բացայայտ զանազանութիւններ կան այն պատմութեանց մէջ զորս մարաշխտն ու Պ. Բէնիէ իրարու հետ բացած խօսակցութեան նկատմամբ ըրին:

Այս զանազանութեանց համար ատենանը պարտաւորեցաւ Պ. Բէնիէի վկայութիւնը բառ առ բառ մարաշխտին հաղորդելով անոնց ամեն մէկ բառին նկատմամբ իր բնիքը սառուել: Այս մասին մարաշխտին իր հարցաքննութեան ատեն տուած տեղեկութիւններէն աւելի ճիշդ տպաւորութիւն մը ներդործող բան մը չի կրնար ըլլալ:

« Հ. Պարոն մարաշխտ, Պ. Բէնիէի ձեզ խօսածն հաճեցէք իմացնել ինձ :

» Պ. Բաւ ինձ որ ինքը մտադիր էր առաջարկել կամ Գանրօպէր մարաշխտին և կամ Պուրպաքի զօրապետին որ Անդղիա երթան կայսրուհւոյն տրամադրութեան ներքև գտնուելու համար Պատասխանեցի իրեն թէ՛ « կրնաք դուք այդ պարոններուն հետ այս մասին խօսիլ, և զանոնք ալ ազատ կը թողում ու զածնին որոշելու : »

« Ասկէց զատ յայտնեց նաև որ իսկայի բան է է Սէաանի պատերազմէն վերջը խաղաղութեան մը չի գտնուողութիւն, և թէ Գաղղիական երկիրներուն վրայ Գերմանական դունդերուն մէջ բացուած խօսակցութիւնն երկրին համար աւերակ մը կըստառնան. և թէ մեծ ծառայութիւն մը ըրած պիտի ըլլայ իրեն եթէ խաղաղութիւն հաստատելու համար զինադադարման հրաման մը ընդունի :

և տար համար պէտք է որ Գաղղիոյ միակ զօրանաւոր զօրաբանակն եղող Մէջի զօրաբանակը Գերմանիոյ երաշխարորութիւն տայ, եթէ ինքը դործելու ազատութիւնն ունի. և որոյ համար անշուշտ Մէջ իբր պատանդ պիտի պահանջուի :

« Պատասխանեցի իրեն թէ եթէ ստուգիւ մեր առեղծիքն քերականութիւնն ու բռնակերպիւ մեր գտնուած արդեւանէն դուրս ելնելու կարող ըլլանք, ներքին կարգաւորութիւնը հաստատուն կը պահենք և դաշնագրութեան պայմաններն յարգել կուտանք. բայց ինքիբը չի կրնար Մէջի վրայ ըլլալ, որուն կառավարիչը կայրէն կարգուած ըլլալով միայն անկէ կախում կրնար ունենալ :

« Բոլոր այս խօսածներնիս պարզ բաներ էին, որոնց չուզեցի առաջին կարգի կարեւորութիւն մը տալ, որովհետեւ Պ. Բէնիէի գրաւոր հրաման չունէր : »

Մարաշխանի հարցաքննութեան վրայօք սկընած պատմութիւննիս շարունակելէս առաջ հարկ կը համարինք յիշել այն խօսակցութիւնը զոր մարաշխան ըրաւ Պ. Բէնիէի հետ, և որ նախորդ պատասխանին մէջ բնաւ յիշուած չէ :

Պուրպաքի զօրապետին վկայութեանը մէջ հետեւեալ անցքը կը գտնենք :

« Մարաշխան Ֆրէտէրիք-Շաբլ իշխանին նամակները ցուցուց մեզ, որոնք մեծ նշանակութիւն չունէին, և ըսաւ Պ. Բէնիէի որ իշխանին իմացընէ թէ զօրաբանակն պատերազմական բռնակերպիւ դուրս կ'ելնէ, բայց Մէջի համար չի կրնար գտնուողքել, քանզի նա զօրաբանակէն անկախ պիտի

մնայ. թէ Պաղէն մարաշխան իր զօրաբանակաւք Գաղղիա պիտի երթայ մինչև ի խաղաղութիւն հոն չէզոք դիրք մը բռնելու համար : »

Ասի յիշելէս վերջը՝ դառնանք հարցաքննութեան շարունակութեանը :

« Հ. Բէնիէ յայանց որ ինքը կը խորհէր թէ Գաղղիոյ համար մնացած Մէջի միակ զօրաբանակը մեծ դեր մը խաղալու կոչուած կերեւէր. թէ Պ. աբ Պիսմարք իրեն յայանած էր որ Պ. Ժիւլ Ֆավր Մէջի զօրաբանակին վրայ ապահով կերեւցընէր զինքն. և թէ ինքը աւելի զատի իմանալու համար եկած էր : Եւ թէ Գերմանական կառավարութիւնը՝ ազգային պաշտպան կառավարութիւնն ընաւ. դաշնագրելու իրաւանց տէր չէր ճանչէր. և թէ՛ այն կառավարութիւնն իմացուցած էր որ ինքը հաստատուած մտադիր է սատիկ պատերազմ մղել և յաղթող թշնամոյն բնաւ չի զիջանիլ : Յաւելցուց նաև որ դուք իրեն պատասխանած էք թէ զօրաբանակն Պ. Ժիւլ Ֆավրի տրամադրութեան ներքեւ չէ. և թէ՛ քիչ օր յառաջ ալ առիթ ունեցած էք այս մասին դուռըբերու հրամանատարայ կարծիքն իմանալու, որոյ վրայ կատարելագէտ վստահութիւն ունիք. և թէ՛ դուք ինչպէս նաև անոք ալ կը յայտնեն թէ Պ. Ժիւլ Ֆավրի իմացուցածներն ճշմարտութենէ բոլորովին հեռի են : Արդ Բէնիէի այս ըսածներուն ո՞րը ճշմարիտ է :

« Պ. Եւ Պ. Բէնիէ ըսածներն հաստատելու կամ հերքելու չափ անոր հետ ըրած խօսակցութիւնս մանրամասնօրէն չեմ կրնար յիշել. բայց սա աղէկ

կը յիշեմ որ ես իրեն ըսի թէ Պ. Թիւլ Պատրի առաջա-
դրութիւնն չի գիտեր. և թէ ինքը չէր կրնար
Մէյի մէջ անցած գէպքերն գիտնալ, որովհետեւ
միմեանց հետ պաշտօնական յարաբերութիւններ
չունէինք. և թէ՛ զօրաբանակն զաղղից առաջին
զօրաբանակն էր որ իր երդմամբը կայսերական իշ-
խանութեան յարած էր :

Է. Պ. Բէնիէ սա ևս կըսէ. թէ՛ ձեր խօսքե-
րէն կը հետեւցընէր որ դուք խիտ աղէկ կը հաս-
կընայիք թէ՛ զօրաբանակն Մէյի առջեւ ապագա-
յին մէջ դործողութիւններ պիտի կատարէր, ինչ
որ ալ ըլլային անոնք. բայց այս դործողութիւն-
ներն կատարելու համար նախ և առաջ պէտք է
որ կերակրուի. և թէ՛ քիչ ատենէն վերջը՝ նոյն
վայրիկնին մէջ տեղի ունեցած ծանր իրողութիւն-
ներէն փեստուելով դժբաղդաբար կերակուր չի
պիտի կրնայ դոնէլ. և թէ՛ այն ատեն զօրաբա-
նակին ապրուստի նկատմամբ ունեցած կացութեան
վրայ մանրամասնօրէն խօսակցելով՝ դուք իրեն
յայտնած էք որ զօրաբանակն հաղի մինչև հոկ-
տեմբեր 18 կրնայ կերակրուիլ, և եթէ ուղու Մէ-
յի զօրաբանակն դործածել, պէտք է յիշեալ թը-
ռականէն յառաջ դործածել զանի. այս ըսածներն
ճշմարիտ են :

Պ. Ես ատենկ որոշ խօսքերով իրեն հետ խօ-
սակցած ըլլալս չեմ ընդունէր. արդէն քիչ մը ա-
ռաջ զօրաբանակին խաղաղութեան հասնելու հա-
մար կատարելիք դերը խօսեցայ. իսկ Պ. Բէնիէի
զօրաբանակին տպրուստին վրայօք տուած մանրա-
մասն անդեղութիւններուն նման անդեղութիւն-

ներ ընաւ տուած չեմ իրեն, մանաւանդ որ
դժուար ալ է ինձ այդպիսի ճիշդ հաշիւներ ներ-
կայացընել :

Հ. կը տեսնեմ որ Պ. Բէնիէ իր վկայութեանը
մէջ՝ որոց համառօտութիւնն ներկայացուցի ձեզ՝
հետեւեալ մանրամասնութիւններն կը յիշէ. « Մա-
րախաւսոն, կըսէ, ինձի իմացուց որ արդէն սկսած
էին զօրաց խրաբանչիւրին հացի բաժինն նուա-
զեցընել, և այսպէս ընելով՝ տակաւին քանի մը
օր ալ պիտի դիմացընէին. և թէ՛ ձիերն խոտ
չունին, և ձիերու միսն սկսած էին ուտել. և
թէ՛ այս կերպով և զօրաբանակին ուտելիքն չորս
հինգ օր աւելի զիմացընելու պէտքն զղալով և
թնդանօթ ու աղմամթերք քաշելու կարող լսել
մը ձիեր ալ պահելով՝ հազիւ թէ կրնանք մինչև
հոկտեմբեր 18 դիմանալ. - Պ. Բէնիէ՛ իրաց վի-
ճակին հետ համաձայն եղող այս անդեղութիւն-
ներն ուսկից առած է :

Պ. Պ. Բէնիէի հետ այդպիսի մանրամասնու-
թեանց մտած չեմ :

Հ. Բէնիէ այսպէս կը շարունակէ իր պատ-
մութիւնն. պարտաւորեցայ իրեն դիտել տալ որ
ինքը ինձմէ աւելի աղէկ գիտէր որ պէտք էր
փութով թնամոյն դաշնագրութեան մասին ցու-
ցուցած վախաքէն օգուտ քաղել. և թէ՛ ըստ
խօսակցութեան, կարելի է որ Մէյի զօրաբանակին անձնա-
տուութենէն օգուտ քաղելով՝ քաղաքականու-
թեան նկատմամբ աւելի շահաւոր պայմաններ ըն-
դունիմ. և թէ՛ այս պայմաններն ինչ որ ալ ըլ-
լան, սոյն զօրաբանակին նկատմամբ՝ խիտ մեր-

Վէն ընդունուելիք պայմաններուն չափ անշահաւոր չի պիտի ըլլան . և թէ՛ անպարելու է օգուտ քաղել թշնամոյն ուտեստի մասին ունեցած անգիտութենէն :

Այս խօսքերուն մէջ ի՞նչ կայ ճշմարիտ :

Պ. Այս դիտողութենէն ամենեւին տեղեկութիւն չունիմ, և չեմ կրնար ըսել թէ հիմնական եղած ըլլայ, որովհետեւ գլխաւոր զօրապետներէն մին կայսրուհւոյն զրկուելով միայն կրնար կայսրուհին հաղորդակցութեան մտնել :

Հ. Մէջի զօրաբանակին դաշնակցութեան մտնելը ամեն հաղորդակցութեան առանցքն է . դուք միայն կրնաք նորա անուամբն խօսիլ և շատ բնական էր որ Բէնիէ Վանար ձեր հաւանութիւնն ըստանայ : Բէնիէ կը յաւելու որ դուք իրեն պատասխանած էք որ ամեն յապաղում անշահաւոր պիտի ըլլայ, և ձեր կարծ միջոցի նկատմամբ ունեցած յուսահատական գրութեան մէջ՝ դուք պիտի ստորագրէք այն դաշնայ թուղթն որով Մէջի զօրաբանակն Պաղղիոյ երկիրներուն մէկ չէրք մասը պիտի քաշուի, և իր պատերազմական բեռներովն իր բանակատեղիէն դուրս ելնելու արտօնութիւն պիտի ունենայ, այն պայմանաւ որ պատերազմի ժամանակ Պերմանայոյ դէմ զէնք չի գործածէ . բայց և այնպէս Մէջ ձեր դաշնադրութիւններէն դուրս պիտի մնայ . այս կերպ խօսքեր ընելիք ճշմարիտ է :

Պ. Այս մասին տուած պատասխանս կը կրրկնեմ : Բէնիէ՛ չէզոքութեան և դերմանական զօրաբանակայ հետ չի պատերազմելու մասին ա-

նանի վկայութիւն մը կուտայ որ ըստ իս բողոքովն անստոյգ է : Չէնիք կրնար հաճութիւն ցուցրնել այնպիսի կարգադրութեան մը որ ազգային պաշտպան կռաւորութեան մէջ բաժանում պիտի ձգեր :

Հ. Բէնիէի վկայութիւնը այսպէս կը վերջանայ . « Հասթիւնիի պատկերը ներկայացուցի իրեն որուն ետեւը կայսրորդուոյն ստորագրութիւնը կայ և աղաչեցի իրեն որ իր ստորագրութիւնն ալ գնէ հոն, որպէս զի զայն Պ. ար Պիսմարքի ցուցնելով կարող ըլլամ ապահովել որ իր հաւանութիւնն ստացած էի : Բէնիէի խնդրած ստորագրութիւնն գրիք . այս խօսուածներն ճիշդ են » :

Պ. Ես լուսանկար պատկերն չունիի, և անտե՛ն աղաչեց նա ինձ որ կայսրորդուոյն ստորագրութեան քով իմ ստորագրութիւնս ալ դրնեմ, զորն որ ստորագրեցի առանց վերջը մտածելու :

Սոյն հարցաբնութիւնն լինդմիջու համար Պաղէն մարալատին և Պ. Բէնիէի՝ մէջ տեղը եղած այս օտարօտի խօսակցութեան նկատմամբ ամեն խորհրդածութիւն առ կախ կը թողունք : Ուստի՛ մարալատին իր զօրապետներէն մէկը Մէջէն դուրս հանելուն նկատմամբ ըրած հարցաբնութիւննիս շարունակենք :

Հ. Դուք կրնէք որ Պ. Բէնիէ նախ և առաջ իմացուցած էր ձեզ թէ կայսրուհին կը խնդրէր որ Քանրօպէր մարալատն կամ Պուրպարի զօրապետը իր քովը երթան : Բէնիէ կրտէ թէ անոնց ուղեւորութեան մասին հետեւեալ օրը խօսք եղաւ :

իր յաւելու նաև որ ձեր քովէն մեկնած ատեն այլ եւս դառնալու միտք չունէր :

Պ. կը հաստատե՞մ որ երեկոյեան դէմ իր առաջին այցելութեան ատեն զօրապետի մը ուղեւորութեան վրայ խօսք բացուեցաւ :

Մարաշխան Պ. Բէնիէի առաջին այցելութեան ատեն զօրապետի մը կայսրուհւոյն քով դրկուին կը հաստատէ, իսկ Պ. Բէնիէ հակառակը կը կը պնդէ : Ինչ և իցէ, մարաշխան կայսրուհւոյն խնդրածը ի դորձ դնելու համար պէտք եղած միջոցներն հետեւեալ օրը կը գործադրէ :

Պ. Բէնիէի տրամադրութիւնն էր զօրապետի մը (Ստամբուլի 24) . Պ. Բէնիէի խօսակցութիւնը : — Երբ մարաշխանն ու Պ. Բէնիէի խօսակցութիւնը վերջացաւ, ժամանակը անցած ըլլալուն Բէնիէ չի կրնալով գունդերուն մէջ անցնելու հետեւեալ սեպտեմբեր 23-ին օրն հասաւ ի Քօրնի, ուր գտաւ Պ. տը Պիսմարքի մէկ հեռագիրն որ զօրապետի մը Մէջի զօրաբանակէն դուրս ելնելն կը հրամայէր : Եւ որովհետեւ յիշեալ զօրապետին այս ուղեւորութիւնը դաղանի պիտի մնար, Սթիէլ զօրապետն, կըսէ Պ. Բէնիէ, զասի դաղանի պահելու համար, Լիւքսեմպուրկի օգնութեան յանձնաժողովոյն կողմանէ իրենց հայրենակիցներըն եղող և Մէջի մէջ արգելուած եօթը բժիշկներուն իրենց հայրենիքը վերադառնալու համար պաշարման զօրաբանակին ամբողջ սպայիցը եղած հաշտութեան խնդիրքն գործադրելու մտադիր եղաւ : Սոյն յանձնաժողովը դեկտեմբեր 20-ին այս կերպ խնդրադիր մ'ալ Պաղէն մարաշխանին

ուղղած էր : Այս գիրը Գերմանական ընդհանուր բանակատեղին դրկուեցաւ : Ուստի Սթիէլ զօրապետը սեպտեմբեր 23-ին դրեց առ Պաղէն մարաշխանն որ Լիւքսեմպուրկի բժիշկներուն ազդեցութեամբ իշխանին անուանը դարձրնէ աղաչելով անոր որ բարեհաճի հրաման ընել որ այս քննութիւններն Մոլէիի ճամբով արատօրէն Մէջին դուրս հանուին : Արդ՝ բժիշկներն միայն եօթնէին, իսկ իշխանը այս հրամանաւ զօրապետին և Բէնիէի համար ալ բացարձակ արտօնութիւն կուտար, որք այն բժիշկներուն հետ խառնուելով դաղանի Մէջին դուրս կրնային ելնել :

Պ. Բէնիէ սեպտեմբեր 24-ին առաւօտեան ժամ տասնըմէկին դարձաւ դաղիլիական բանակատեղին, և կրկին անգամ մարաշխանին հետ տեսակցելով անմիջապէս հրաման տրուեցաւ ֆանրօպէր մարաշխանն ու Պուրպաքի զօրապետը ընդհանուր բանակատեղին կանչել, և Լիւքսեմպուրկի բժիշկներն ալ հոն հաւաքել : Պաղէն մարաշխանը զֆանրօպէր մարաշխանն ու Պուրպաքի զօրապետը հետզհետէ Բէնիէի հետ տեսակցուց : Ֆանրօպէր մարաշխանն իր առողջութեան վիճակը պատճառելով իրեն առաջադրած պաշտօնէն հրաժարեցաւ . իսկ Պուրպաքի զօրապետն պարտաւորեցաւ ընդունել : Մենք սոյն զօրապետին այս մասին առած վկայութիւնն հոս կը հրատարակենք :

1870 սեպտեմբեր 24-ին ժամ հինգ ու կէսին ձիւն վար իջնելուս պէս մարաշխանին քով գացի : Նոյն օրն երկու անգամ ղիս փնտուել տուած

էր, բայց չէր կրցած զիս դանել: Ես Մէն-ժիւ
 լիէն էի իւր Պէօֆ մարալատին քով: Ընդհանուր
 բանակատեղին դալով պատահեցայ Պօայէ գրն-
 դապետին: որ ինծի ըսաւ. « Մարալատն հիմա
 կուգայ ». վերջը՝ զիս պորտէղի վրայ նայող պա-
 տուհանի մը քով տանելով՝ ըսաւ ինձ. « Մարա-
 յատին հետ պատող մարդը կը ճանչնաք. — Ոչ,
 ըսի իրեն. — Ի՞նչպէս, միթէ զանի թիւյրի տե-
 սած չէք. — Ոչ. երբեմն տեսած մարդոցս ա-
 նուններն կը մոռնամ, բայց ոչ դէմքերնին: Այս
 մարդը երբէք տեսած չունիմ: Ասի ո՛չ թիւյրիկի
 մարդոցմէն է, և ոչ ալ պաշտօնակալ մը: » —
 Նոյն միջոցին մարալատն ներս մտաւ, և զիս Պ.
 Բէնիէի ներկայացընելով ըսաւ. « Պարոնք ձեզ
 խօսելիք ունի, մտիկ ըրէք »:

« Պ. Բէնիէ խաղաղութեան կարեւորութեան
 վրայ խնդրէ քաղաքական նկատմանը ընելէն
 վերջը՝ յարեցուց նաև որ գերմանական կառա-
 վարութիւնն փարիզու կառավարութեան հետ չու-
 ղեր դաշնագրէ: և թէ՛ կայսրուհւոյն կառավա-
 րութիւնն միայն օրինաւոր նկատելով եթէ անոր
 հետ դաշնագրէ, պայմաններն այնպիսի ծանր լին-
 ըլլար. և թէ Մէյի զօրաբանակին այս գործոյն
 մէջ մտնեն անհրաժեշտ էր, ուստի պէտք էր որ
 իր զօրապետներէն մին կայսրուհւոյն երթայ զօ-
 րաբանակն անոր քով ներկայացընելու համար. և
 թէ կամ՝ Քոնրոյէր մարալատն կամ ես յար-
 մար ենք այս պատճեն վարելու: Ես այս խօսքե-
 րուն միջին դանկիցրութիւն մ'ըրի, և ուղեւոր
 անոնց եզրակացութիւնն իմանալ, ելայ մարա-

լախտին քով գացի լսածներուս համար բացատրու-
 թիւն խնդրելու: Մարալատն նրբաբարձր-ճարլ
 իլխանին նամակներն ցուցուց ինձ, որք մեծ նը-
 շանակութիւն չունէին, և ըսաւ Պ. Բէնիէի որ ի-
 մացընէ իլխանին թէ զօրաբանակն պատերազմա-
 կան բեռներովը Մէյէն գուրս կելնէ առանց Մէ-
 ցի համար դաշնագրելու: որն որ զօրաբանակէն
 անկախ պիտի մնար, և թէ՛ Պաղէն մարալատն
 իր զօրաբանակաւը Գաղղիա պիտի քաշուի մինչև
 խաղաղութիւն հոն չէզոք դիրք մը բռնելու հա-
 մար: Ահաւասիկ այսքան կը յիշեմ երկուքին մէջ
 եղած խօսակցութիւնը: Մարալատն իր զօրա-
 բանակին մէկ զօրապետն կայսրուհւոյն քով դըր-
 կելով՝ որ դեռ կառավարութեան ներկայացու-
 ցիչն էր, վասն զի փարիզու մէջ անցած դէպքե-
 րուն զիս բնաւ մէկը ճիշդ գաղափար մը չունէր,
 կարծեմ իր նպատակը իմացընել էր որ եթէ այս
 զօրաբանակն ազատել կուզեն, պէտք է դաշ-
 նագրել: Վերջապէս ըսի Պաղէն մարալատին,
 Պարոն մարնխախտն, զիս ինչո՞ւ ուղեցիք. « Ինծի
 պատասխանեց թէ՛ « Լիբիա վախճիմ որ դուք կայս-
 րուհւոյն քով երթաք. » « Շատ աղէկ » ըսի,
 « բայց պայմաններ կառավարիմ. ինծի գրաւոր
 « հրաման մը տալու էք, որպէս զի իմ ուղեւոր
 « բութիւնս զօրաբանակին հրամանաւը եղած ըլ-
 « լայ իմ տեղս ուրիշ հրամանատար չի պիտի կար-
 « դէք, և պիտի խոստանաք ինձ որ մինչև որ ես
 « վերադառնամ, պահպան զօրքն չի պիտի աշ-
 « խատցընէք: Ըսաւ ինձ թէ՛ « Շուտով ձամբայ
 « պիտի ելնէք: » Ես ալ իմ բնդհանուր բանա-

կատեղիս գացի պատրաստութիւն տեսնելու
համար :

Անակ որչափ էր որ զորապետին ուղեւորութիւնը գաղտնի պիտի մնար որևէ լուր մը չի համբաւելու համար : Զորապետն զիւղացիի զգեստ շունենալուն մարաջախտը իրենները տուաւ անոր : Դ՛րէնիէ ալ լիւ քսէնպարկցի բժիշկներէն մէկուն ճէնովայի խաչով կարծ գլխարկն ու զելով՝ տուաւ զորապետին, որով անոր կերպարանքն ամբողջացաւ :

Ատենը ջանաց իմանալ թէ Պուրպաքի զօրապետն Պ. Բէնիէէն իմացած էր որ եթէ անգամ մը Մէցէն դուրս ելնէր, ալ չիպիտի կրնար հոն մտնել : Պայէ զորապետը կը վկայէ թէ Բէնիէ այս պայմանն բրեր է, բայց ո՛չ մարաջախտն և ո՛չ ալ Պուրպաքի զորապետն բնաւ չեն յիշեր զայս : Մնաց որ Պուրպաքի զորապետին՝ իր բացակայութեան ատեն պահապան զօրքն չտխաւացընելու համար ըրած պայմանադրութիւնէն կը հետեի որ առժամանակեայ կերպիւ դուրս պիտի ելնէր :

Գժուար է իմանալ թէ Պաղէն մարաջախտն ինչպէս անհող վարուեր է այն պայմաններն հաստեղլու մասին որովք իր տեղակալն Մէցէն դուրս ելնելով քիչ ժամանակէն պիտի վերադառնար : Միւս կողմանէ ալ թէ Պուրպաքի զօրապետն որ կը խորհէր թէ իր դուրս ելնելը թ՛նամիէն դադատուկ պիտի մնար, ինչպէս կրնար իր մտքէն անցընել որ այսպէս տեսակ մը փախուստով իր պաշտօնը լրացընելէն վերջը ստուգիւ պիտի կրնար իր պաշտօնատեղին վերադառնալ և երբ թ՛նամ-

ւոյն դուռերէն անցնելու ժամանակ ճանչցուէր, ինչպէս կրնար իր կացութիւնը վտանգի չենթարկել, դերմանական ընդհանուր բանակատեղին անցնելով :

Այս մտօնն լոյս մը տալու համար կարևոր կը համարիմք Պուրպաքի զօրապետին ֆօրնի անցնելուն նկատմամբ Բէնիէի տուած վկայութիւնը մէ՛ջ բերել :

Գերմանական յատաճապահ գունդերը Պուրպաքի զօրապետն՝ առջի օրուրնէ ի վեր մեզ ըստպատող և իշխանին սպայից զլուխն եզող զընդապետէ մը ճանչուեցաւ :

Ընդհանուր բանակատեղին հասնելով՝ գլխաւոր զօրապետ Վօն Սթիւէ հարցուց ինձ թէ կրնար իր յարգանքն մատուցանել զօրապետին՝ որուն նշանաւոր քաջութեանը վրայ կը ըլլարմանար : Պատասխանեցի իրեն որ զօրապետն այս մասին իրատ հպարտ սիրտ մ'ունի : Ինձի ըսաւ թէ այս զգացման խիստ տեղեակ է ինքը և հարցուց ինձ թէ կը խորհէի որ զօրապետն իշխանին հետ տեսութիւն մ'ընելու դիտաւորութիւն ունենար : Պատասխանեցի իրեն որ կը կարծէի թէ իր ըսածին հակառակը ուղած ըլլար, բայց և այնպէս կերթայի իր դիտաւորութիւնն իմանալու :

Այս մասին երբ զօրապետին խօսեցայ, ինձի պատասխանեց որ ինքը ո՛չ անոնցմէ մէկը տեսնել կուզէ, և ո՛չ իսկ անոնց հացն ուտել, որ զինքը կըսպաննէ : Կէս ժամ վերջը մեկնեցայ քովէն, որ առեն լիւ քսէնպարկցի բժիշկներուն հետ ճամբայ ելաւ : Եթէ իր վերագարձին վրայօք խօսք

մը ունեցած ըլլար, կրնար կամ զխաւոր զօրապետին և կամ նոյն ինքն իշխանին ընել :

Գալով այն նպատակին որով մարալախան Նաւաղեր էր հեռացընել իր քովէն Պուրպաքի զօրապետն, որուն ներկայութիւնը կրնար իր քաղաքականութեանը համար չփոթուիլուն մ'ըլլալ իրեն, այս մասին յիշեալ զօրապետին հետեւեալ հարցումն եղաւ :

« Հ. Դուք երբէք խորհած էիք որ զձեզ Մէցէն հեռացընել ուզած էին : Այս մասին կը տեսնեմ որ պահապան զօրաց սպայներն ձեր քովն եկած են այս կէտին վրայ ձեր ուշադրութիւն խորին կերպիւ հրաւիրելու թէ դուք ձեր գունդին համար մտալուտ անձնատուութիւն մը պիտի ընդունէիք : Դուք ալ այս առթիւ ըսած էք որ պահապան զօրքն այս պարագային մէջ կրնար վաթէրլոյի նախկին պատկերը կենդանացընել :

« Պ. Ձեմ կարծեր որ զիս հեռացընելու ջանք ըրած ըլլան : Իս ջանասէր և կիթ պաշտօնեայ մ'էի : Ձեմ դիտեր թէ մարալախան ինչու համար զիս հեռացընել պիտի ուզէ : Միայն կը կարծեմ որ այս կերպիւ իր զօրաբանակն անօթութեան պտտճառաւ անձնատուր ըլլալու տխուր պարտաւորութենէն ազատելու պիտի ջանար : Սակայն այն որ կըսէք թէ պահապան զօրաց սպայներն ամբողջովին քովս դալով այսպիսի անձնատուութեան մ'առջև ինչ ընելիքս հարցուցեր են ինձ, ատանկ բան մը ընաւ տեղի ունեցած չէ :

« Բայց և այնպէս սա կը յիշեմ որ այս մասին անգամ մը Տէլինէի զօրապետին և ուրիշ անգամ

մ'ալ Տիւմոն գնդապետին հետ խօսակցելով իմացուցի իրենց որ եթէ անձնատուր ըլլալ հարկ ըլլայ, վաթէրլոյի նախկին պահապան զօրաց թուղուցած յիշատակը երեւան հանելով զօրքերուն պիտի հարցընէի որ եթէ իրենց մէջէն բազմութիւ մարդիկ ալ հոն մնալ պարտաւորէին, կուզէին իրենց բազը վորձել զօրաբանակին պատիւն պահպանելու համար :

Պարագայ մը կայ նշանակութեան արժանի զոր անկարելի եղաւ գոհացուցիլ կերպիւ բացատրել : Երբ Պուրպաքի զօրապետը որոշեց իր պաշտօնն ընդունել, մարալախան անոր ուղեւորութիւնը իր ձեռքովը փոխանակ սեմտեմբեր 24 նշանակելու, վասն զի այն օրը դացած էր սեպտեմբեր 25 նշանագրած է, բայց կը սխալի : Պ. Բէնիէ կը հաստատէ որ անոր ուղեւորութեան օրն նշանակելու դադարաւ ինքը խորհած էր, և ըստ նաև թէ իրեն համար փախաքելի էր որ զօրապետն Մէցէն դուրս ելնելով ընդհանուր բանակառեղին երեւէր, որ վերջէն յօգուտ կայսերական կառավարութեան քաղաքականութեան և իր ունեցած առաջադրութեանցը, չըստի թէ անոր ուղեւորութիւնն գերմանական իշխանութեան հետ միաբանութեամբ տեղի ունեցած ըլլայ : Այս բացատրութեան մէջ բնութիւ ստուգութիւն չկայ, որովհետեւ անկարելի է որ վերջէն ճշմարտութիւնն այս զուգարկիւթիւնն չի լուսաւորէ :

Այս պարագայի սեմտեմբեր 16 ին հաստատուած նոր կառավարութիւնն աղբարարութիւ 9

բնդհանրագրոյն հրատարակութեան թուականին չի համապատասխաներ : Միթէ պարզապէս չլիութեամբ մը պատահելով մարտիտան սեպտեմբեր 23 ի տեղ 15 գրած է : Այս կէտին վրայ Պուրպաքի զօրագետն հոկտեմբեր 8 ին Պրիւսէլէն անցած տանը խորհեցաւ : Պէլճիքայի գաղղիական դործակատար Պ. Թաչարի վկայութիւնը այս մասին բնաւ տարակոյս չի ձգեր :

Առաջին հարցը այն էր : Պէլճիքայի զօրագետն ինչպէս կ'ընդհատուէր իր զօրագետն ինչպէս կ'ընդհատուէր : Երբ Պուրպաքի զօրագետն դէպ ի Անգղիա յառաջ կերթար, ուր կայսրուհիէն պիտի իմանար որ Պ. Բէնիէի կողմէն իրեն նկատմամբ խաղ մը խաղացուեր է, Բէնիէ հասաւ ի Ֆէրիէն : Պագէն մարաջական ու Պ. Բէնիէ այնպէս որոշեր էին որ առտուաւեջն մինչև վեց օր՝ այսինքն մինչև սեպտեմբեր 30, Պ. Բէնիէ Պ. ալ Պիսմարքի պատասխանը իրեն պիտի զրկեր : Բայց թէ որ մինչև ութ օր իր վրայօք լուրեր չի հաղորդէ իրեն, հասկրնալու է որ հաղորդակցութիւններն արդիւնք մը ունեցած չեն :

Մարտիտան մինչև սեպտեմբեր 29 Բէնիէն լուր մը չառնելով նոյն օրն հետեւեալ անտորագիր հեռագիրն հասաւ ի Պան-Սէն-Մարթէն, որն որ առջի օրը Ֆէրիէրէն զրկուած էր :

• Մարտիտան Մէջի առջև գտնուած զօրաբանակին անձնատուութեանը համար Պ. Բէնիէն բռնալարկուած պայմաններն պիտի ընդունէ : Պ. Բէնիէ այս մասին Պ. Մարտիտան հրահանգացը կրողատէ :

Այս գրութեան մարտիտան կողմանէ հետեւեալ պատասխանն գրուած կը գտնենք արձանագրութեանց հաւաքածոյից մէջ :

• Մէջ, 29 սեպտեմբեր 1870 .

• Պարոն զօրագետ

• Ի պատասխանի այս առաւօտ ձեզմէ ընդունած գրութեանս՝ կիմացընեմ ձեզ որ Նորին վրտեմութեան Պ. կոմս ալ Պիսմարքի առաջգրած խնդրոյն հաստատողական պատասխան մը չեմ կրնար տալ : Չեմ ճանչնար բնաւ զՊ. Բէնիէ, որ Պ. ալ Պիսմարքի կողմանէ արտօնութիւն մ'ունեցածի պէս ներկայացաւ ինձ, և ըսաւ թէ Նորին վեհախառութեան կայսրուհւոյն կողմանէ զըրկուած է, առանց գրաւոր իշխանութիւն ունենալու : Պ. Բէնիէ ինձի իմացոց որ ես իշխանութիւն ունիմ կայսրուհւոյն քով զրկելու թէ Ն. վեմ. Գանրուպէր մարտիտալ և թէ Պուրպաքի զօրագետը : Միանգամայն կը հարցընէր ինձ թէ արդեօք կրնար առաջադրել այն պայմաններն՝ որովք կարելի կըլլար ինձ անձնատուութեան համար Մէջի առջև գտնուած դերմանական զօրաբանակին զլիսաւոր հրամանատարին հետ հաղորդակցութեան մտնել :

• Պատասխանեցի իրեն որ իմ ընկերքս միայն պատերազմական բռններով անձնատուութեան դաշնագրութիւն մ'ընդունել պիտի ըլլայ . բայց չէի կրնար Մէջ քաղաքն առաջադրուած պայմանին մէջ զնեղ : Արդարեւ մինակ այս պայմաններն են զորս զինուորական պատիւն ինձ կը ներէրնդու .

նիլ, և զորս Պ. Բէնիէ կրցաւ ինձ առաջադրել :
 Եթէ այս մասին իմ և Պ. Բէնիէ մէջ տեղ
 խօսուածներուն վրայօք Նորին Բարձրութիւնն
 Ծրէտէրիք-Շարլ իշխանն ուղէ աւելի կատարեալ
 տեղեկութիւններ ընդունիլ, Պ. Պօպէ զօրապետն
 իմ առաջին օգնականս Նորին Բարձրութեան ու-
 զած օրն ու ժամը պատու պիտի ունենայ իր ընդ-
 հանուր բանակատեղին երթալ :

Մարաշխտին Պօպէ զօրապետը Ծրէտէ-
 րիք-Շարլ իշխանին քով զրկելու հաճութիւնն
 անպատասխանի մնաց : Միւս կողմանէ ալ Բէնիէ
 իր վրայօք լուրեր չէր տար : Վերջապէս Պուրպա-
 քի զօրապետն ալ մարաշխտին բնաւ նամակ մը
 չէր զրկեր : Բէնիէի բռածին նայելով այս բա-
 ժանու՞ր այնպիսի սխալ հատկացողութիւններէ
 պատճառաւ է զորս դիւրին է փարատել : Եթէ
 այս պարագային մէջ Պ. Թր Պիամարք բան մը չը-
 բաւ, պատճառն այն է որ յարմար չի դատեց :
 Մարաշխտին քաղաքական դիրքն իրեն յայտնի
 էր : Մէջի զօրաբանակին ու ազգային զօրաբա-
 նակներուն մէջ հաստատուած գործողութեան
 վախճ բողբոջիլին կանհետանար : Մէջի զօրաբա-
 նակը մինչև հոկտեմբեր 18 ուտելիք ունէր . անի
 իր ձիերը կուտէր, ուստի քիչ օրուան մէջ բոլո-
 բովին պիտի տկարանար : Պ. Բէնիէ թղթակցու-
 թեանց ընդ մի ու մը Պագլէն մարաշխտին իմացը-
 նել չուղելով դանի նոր պատգամաւորութիւններ
 ընդունելու ակնկալութեամբ կրտսեացիներ և
 ասանկով յուսահատ գործողութեան մը առաջին
 առնել կամ լաւ եւս ոչայլն կը խորհէր, և

որով Բրուսիական բանակն ալ զօհողութիւններ
 կընէր, զորս չընէն աւելի աղէկ կըլլար :

Այս խորհրդաւոր դէպքին պարագաները
 պատմելնէս վերջը՝ որով կարելի եղածին չափ
 յստակ կերպիւ յայտնեցինք անոնց շարայարու-
 թիւնը, ալ ժամանակն է երեւան հանել մարա-
 շխտին վարմունքը իր Պ. Բէնիէի հետ ունեցած
 վերաբերութեանց մէջ :

Թէ ո՞վ էր այս անձը որ այս ծանր դէպքե-
 բուն մէջ այսչափ անակնկալ կերպիւ երեւան ե-
 լաւ, և որուն ջաւալի միջամտութեամբ մարա-
 շխտն աւելի յանցաւոր գիտաւորութիւններ ու-
 նեցաւ, պատմենք :

Պ. Բէնիէ 1822 ին փարիզ ծնած ըլլալով բո-
 լորովին պակասաւոր դաստիարակութիւն մ'ըն-
 դունած էր, ինչպէս որ իր օտարոտի ոճէն ու
 մնիլ դրուածքէն ալ յայտնի է : Բայց և այնպէս
 դրագէտի վիպագիր ընդունեցաւ, և իրաւագի-
 տութեան ու բժշկականութեան ուսմանց պա-
 րագեցաւ առանց զանոնք պրելի առաջ տանե-
 լու : Վերջէն մագնիսեան զօրութեան արուեստին
 զբաղեցաւ : 1818 մայիս 15 ի և յունիս ամսոյ դէպ-
 քերուն մէջ ամենապլանդակ դեր մը խաղաց .
 ամուսնացաւ, զնայ Ալճէրիա և հոն օգնական
 վիրաբոյժի պաշտօնով գործածուեցաւ : Նորին
 եկաւ Գաղղիա, սալաքարի հանք մը հանելու պա-
 րագեցաւ, և երկիրը անգամ ամուսնացաւ :
 Ո՞նց դիւր այսպիսի մէկ կնոջ մը հետ որ իրեն
 աղէկ հարստութիւն բերաւ :

Բէնիէ խորամանկ և ժպիլո՞ճ մարդ մ'է, իր

ձեւերը ռամկական են . վերջին աստիճան սնան-
պարծ է , ինքըինքը խորին քաղաքագէտ կը կար-
ծեր : Բազմաթիւ գործեր ալ ունի հրատարակած :

Այս գէպքերուն մէջ ալ միթէ այն կերպ
խելագարութեանց մէկովը վարուեցաւ որք խոռ-
վութեանց և ապտամբութեանց դարեր կը ծնին
թէ պարզապէս իր ձեւերն գործածող գաւաճա-
նի մը նման գործ տեսաւ : ասի դժուար է որո-
շել : ինչ և իցէ , մեր առած տեղեկութեանց նա-
յերով սեպտեմբեր 13 էն ի վեր Անգղիա կայս-
րուհւոյն քով իր առաջադրութիւններն յայտնե-
լու վրայ է եղեր : Անգամ մըն ալ չատ մը թա-
խանձանքներ ընելով իր խորամանկութիւնները
ժածկելու յատուկ եղող և կայսրողին ստորադ-
րութեամբը վաւերացեալ լուսանկար պատկերն
առածին պէս կուղեւորի ի Բաղդիա :

Ա՛ր երթալ է իր բուն նպատակը . — Բրու-
սիական դեպտանատուներ , Սեպտեմբեր 18 ին Լոն-
տոնէն կը մեկնի , 20 ին առաւօտուն կը հասնի ի
Ֆէրիէր և անմիջապէս Պ տը Պիտմարքին հետ
տեսակցելու հրամանն կընդունի : Նոյն միջոցին
Պ Պիտմարքի և Պ ժիւլ Ֆալրի մէջ տեղը խոր-
հուրդներ տեղի կունենային , որք ինչպէս յայտնի
է ապարդիւն մնացին : Այս զուգարիսութիւնը
Պ ժիւլ Ֆալրի վկայութեամբը հաստատուեցաւ ,
որն որ մանրամասնաբար պատմեց մեզ թէ ինչ-
պէս Բէնիէ կայսրական իշխանութեան վտահա-
թեանն ամենէն աւելի արժանի եղած անձն է :
Պ տը Պիտմարք Բէնիէի իրեն յանձնած մէկ լու-
սանկար պատկերն ցուցուց Պ ժիւլ Ֆալրի , որուն

մէջ ծովու բազանիք մը նկարագրուած էր , և
որուն ներքեւ այս բառերն գրուած կային . « Սոի
Հաստինքի տեսքն է , զոր ընտրեցի իմ բարի
Լուդովիկոսիո համար » : Ստորագրութիւնն : Լ.Օ.
ժէնի :

Յիշել արժան կը համարինք նաև որ սեպ-
տեմբեր 26 ին Բէնիէ Պարուլ-Տեօքեն անցնելով
և հոն զՊ Պոմպարի տեսնելով այս վերջինը կը-
վկայէ որ Բէնիէ վիշնմահօնի մէկ տեսքն իրեն
ցուցուցած է որուն վրայ կայսրն իր ձեռքովն
քանի մը բառ գրած էր :

Բէնիէի և մարալախտին տեսակցութիւնը և
Պուրպաքի զորապետին Մէջէն դուրս ելնն
մանրամասնաբար պատմեցինք : Երբ Պուրպաքի
զորապետն դէպի Լոնտոն ուղեւորեցաւ , Բէնիէ
Ֆէրիէր դարձաւ : Անմիջապէս վերջը կը տեսնենք
որ նա Լոնտոն երթալով կայսրական քաղաքա-
դէտ անձանց հետ խառնուեր է . Պոյն զորապե-
տն որ զանի կայսրողուցն քով տեսնը էր , կը-
վկայէ թէ հոկտեմբեր 28 ին կայսրողին զայն
ընդունը է , անկէջ կերթայ Քասէլ , ուր կը
տեսնենք որ նա քանի մը դերի սոյայներ իրեն
քաղաքական խորամանկութեանցը հաղորդը ընե-
լու փորձ փորձած է : և վերջը կը դառնայ ի
Պրիւսել :

Յետոյ կը տեսնենք որ վէրսայլ երթալով
Մոսկէ : Բէնիէ անուն լրագրոյն խմբագրացը մէջ
կը խառնուի և ժամ Պոստ ստորագրութեամբ
իւր մը յօդուածներ կը հրատարակէ : — Չինացա
դարձնել միջոցին Բէնիէ վերստին Պրիւսել կեր-

թայ, հոն կը հանդիպի Պայէ զօրապետին, որն որ կը վկայէ թէ՛ Բէնիէ ինծի ըսաւ որ ինքը վերսայլ կերթայ կայսերական անձանց բնակութեան մը նկատմամբ հաղորդակցութիւններ բանալու նալ ջանալու համար » : Պ. տը Պիսմարքի իրեն զրկած ապահովագիրն ալ ցուցուց ինձ, և անկէ դատ Հալթաֆէլտի կոմսին մէկ նամակն ալ որով վերսայլ կերթալու հրովմանն առած էր : վերջապէս փետրվար 10 ին հառաւ այս քաղաքն, ուր որ իր ծանօթներէն մէկն պատահելով այս խօսքերըն ըսաւ անոր. « Չեմ գիտեր թէ Պ. տը Պիսմարք այս իրիկուսն զիս ճամբու պիտի դնէ » :

Ահաւասիկ այնչտի տեղեկութիւն հաւաղած է ատեսանն Բէնիէի ինքորոյն նշխարմամբ, Պ. Բէնիէ զօրապետին կողմէն ըստ : Չեմ գիտեր թէ Պ. Բէնիէի վկայութեան մէջ ուշադրութեան արժանի երկու գլխաւոր կետեր կան, մէկը այն է թէ մարալխտոն առաջին անգամ իրեն ներկայացող և թշնամուոյն հետ յայտնի վերաբերութիւն ունեցող և իր քովը գրաւոր իշխանութիւն չունեցող անձանցով մէկու մը իր ապրուստին որ թուականին սպասելը կիմացնէ, մէկ մ'ալ որ մարալխտոն ինքնին կիմացնէ որ ինքը պատրաստ է անձնատուր ըլլալու պատերազմական բեռներով դուրս ելնելու պայմանաւ : Պաղէն մարալխտոն Ազգային Պաշտպան կառավարութիւնն ճանչելէն յետոյ անոր կաղմութիւնը իր զօրաբանակին իմացընելով կայսերական կառավարութեան բնակութեան տեղոյն նկատմամբ հաղորդակցութիւններ կը բանայ, և այն ալ իր տե-

ղակալներէն գաղաուկ, որոց հետ չուզեր խորհրդակցել, զանոնք ամենքն ալ իր զգացմանցը համաձայն զգացումներու տէր ներկայացընելով :

« Մարալխտոն, կրնէ Բէնիէ, ինծի իմացուց որ արգէն սկսուած է զօրաց հացի բաժինն նուազիլ, և թէ այսպէս խնայողաբար զանոնք քանի մ'օր աւելի դիմացընելու հարկ տեսնուած է, և թէ՛ ձիերը խոտ չունէին, և անոնցմէ շատերն իրրև ոչխարի միս պիտի ուտուէին, և թէ՛ այս կերպով և զօրաբանակին ուտելիքն չորս հինգ օր աւելի դիմացընելու պիտանութեամբ և միայն բազմամթերք և պաշար կրելու կարող քանի մը ձիեր պահելով հազու թէ մինչև հոկտեմբեր 18 պիտի կրնանք դիմանալ » : - Բէնիէ՛ որ զինուորականութեան բնաւ հմուտ չէ, այս մանրամասն ճշտութիւններն ուսկից առած է : վերջապէս, հոկտեմբեր 18ի ճիշդ բացայայտութիւնը Պ. Բէնիէի երեւակայութեանը տանք, ասի խիստ օտարտի դէպքի մը իրողութիւն կը համարուի, վասն զի այս հոկտեմբեր 18ի թուականը՝ որ ատեն զօրաբանակին ուտեստն պիտի լմնար, ճիշդ այն թուականն է որ մարալխտոն ու Պ. Բէնիէի սեպտեմբեր 21ի տեսակցութենէն առաջ զինուորական վերատեսչութեան կողմանէ հաւաքուած վիճակագրաց վերջնոյն մէջ ալ կը գտնուի, զոր մարալխտոն ալ հարկաւ իր խօսակցութեան ատեն իր սեղանին վրայ ունենալու էր :

Այս մտախն Պաղէն մարալխտոն օտուգիլ յանցաւոր ըլլալը կայսերապուն իշխանին տանը պատշոնեայ լամէյ հրամանատարին վկայութեամբ

րին ալ յայտնապէս կիմացուի : որուն Լօստօնի մէջ հոկտեմբեր 19ին յայտնեց Քէնիէ, երբ Պօպէ զօրապետն դեռ յիշեալ մայրաքաղաքը հասած չէր : որ մարաշխատէն իմացած է թէ զօրաբանս կլին ու տեսար մինչև հոկտեմբեր 18 կը դիմանայ :

Ով կերպախառութի մարաշխատին որ առաջին անգամ իրեն ներկայացող մէկու մը յայտնած այս Տէրութեան գաղտնիքը անմիջապէս թշնամոյն չի տրտի հաղորդուի, և որով ինքն ալ անոր իշխանութեանը տակ գնաուի, Վախճալու չէր որ չըլլայ թէ այն հաղորդակցութիւններն որոց վրայ խօսք կըլլայ իր մտաճութիւնը հրաւերու և զօրաբանակին ու Մեցիկ մահառիթ անկումը իմանալու համար գործադրուած գրգիւ մը ըլլան :

Մարաշխտան՝ Քէնիէի տուած ինչը և մանրաման անդեկութեանց և վերատեսութեան ծանուցադրոյն մէջ ուսեստի քանակութեան նըկատմամբ յիշուած ճիշդ թուականը յայտնելուն վրայ անկարելի է որ ինքզինքը արգարացրնէ : իր վիպութեան մէջ ուսեստի տեսութեան ճիշդ ժամանակը յուշընելուն և զայն Դամէյ հրամանատարին ալ հաղորդելուն համար կրնանք բտել որ իր ըսածներն անհերքելի համարութիւններ են :

Իսկ զօրաբանակին անձնատուութեան վրայ յօք երբ մարաշխտան հարցաքննուեցաւ, իմացուց թէ ինչպէս կը հասկընայ և ինչ իմաստ կուտայ իրեն ուզված սա առաջարկութեանցս : Պ. Քէնիէի պատասխանեցի որ եթէ ստուգիւ մեր զինքերս մը ու բեռներս մեր զանուած արդիւանէն գուրս կարենանք կշիւել, ներքը կարող ապահովեան մէջ

կը թողունք, և դաշնադրութեան պայմաններն կը յարգենք :

Ըսել է որ եթէ զօրաբանակն իր պաշարուած տեղէն դուրս ելլելու ազատ թողուի պատերազմին մնացեալ միջոցը բնաւ չենք չի կրնալ բացայայտ պայմանաւ մը միայն պիտի ըլլայ : Այս պայմանին վրայ ալ այնուհետև պաշարման գունդն կազմ և պատրաստ կըլլար և թշնամին ազգային զօրութիւններն ընկճելու ազատութիւն կունենար երբ Մեցիկ զօրաբանակն ալ չնզոք երկրի մը մէջ երթար փակուեր : Արդ՝ Գերմանացիք որ Մեցիկ զօրաբանակն պնդապէս պաշարեր էին, ինչպէս կընային մարդասիրաբար դուրս թիւն ընծայել իրեն որ ուրիշ քաղաք երթայ :

Այլ սակայն մարաշխտին բռնելու զամ գիրքն յայտնապէս ակնկալու գիրք մը չէ : — Նա կը պարտաւորէր, — ինչպէս որ ինքն ալ կը յայտնէ թշնամոյն հետ ընելիք դաշնադրութեան պայմաններն ալ յարգել, այսինքն ի հարկին ազգային զօրաբանակաց դէմ զօրութիւն գործածել, և այս ալ այն միջոցին երբ իր ձեռքովն իսկ հրատարակել տուած պաշտօնական հրատարակութիւններն իրեն կիմացընէին որ նոր կառայարութեան դիտաւորութիւնը ամենաստտիկ պատերազմ մ'ընել էր, և թէ՛ փարիզ երէք ամիտ ալ կրնար գիտմանալ, և թէ՛ ազգային ժողով մը երկրին ձայնը լսելի պիտի ընէր : Ուստի ժամանակն չէր աւելի ազգու դիտաւորութիւններով ազգային ջանադրութեանց համաձայնիլ, մարաշխտան թշնամոյն հետ պատերազմելու անդ անոր հետ

Հաղորդակցելու մասին պաշտօնէի մը իրեն ըրած առաջարկութիւններն մոտիկ ընելէն աւելի պատե- բազմական տեսիլ մը քննութեանը յանձնելու պարտաւոր չէ՛ր :

Պոլսի հարկերի սեպտեմբեր 23 ին միւլտիպլիկացի- րութեան բեռներով սեպտեմբեր 23-ին հարկերը կը դր- նէ : — Մարաշխան ֆերիէի մէջ այսպիսի կարևոր դաղտնիքներ տարածելու պատճառ ըլլալն բա- չի համարելով՝ հինգ օր վերջը Սթիէլ զօրապետին օտարօտի նամակ մը կը գրէ որուն մէկ օրինակն ալ անհասկանալի բարոյական ղեղձմամբ մը գեր- մանական կառավարութեան կը յուղարկէ : Սոյն նամակին վերջին տողերն յիշենք հոս . « Պ. Բէնիէ ինձի հարցուց թէ արդեօք կրնայ առաջադրել ինձ այս պայմաններն որովք կարելի պիտի ըլլար ինձ անցնատուութեան համար Մէջի առջև գրա- նուած գերմանական զօրաբնակին գլխաւոր հրա- մանատարին հետ հաղորդակցութեան մտնել : Պատասխանեցի իրեն թէ իմ ընելիքս միայն պա- տերազմական բեռներով անձնատուութիւն մը ըն- դունիլ կրնայ ըլլալ , բայց չէի կրնար Մէջը առա- ջարկեալ գաշնադրութեան մէջ դնել : յիշաւի ասոնք են այն միակ պայմաններն զորս զինուորա- կան պատիւն կը ներէ ինձ ընդունիլ և զորս Պ. Բէնիէ ալ կարող կըլլայ բերել ձեզ » :

Այսպէս Պաղէն մարաշխան՝ իր ըսածին նա- յելով , սեպտեմբեր 23 ին այսինքն իր Պ. Բէնիէի հետ տեսակցութիւն ըրած օրը պատրաստ էր անձնատուր ըլլալ , եթէ պատերազմական բեռ- ներըն իրեն չնորհուէին :

Սեպտեմբեր 29 ին իր ձեռքովը իր զօրարա- նակըն թշնամոյն ձեռքը կը յանձնէ , այն միջ- ցին երբ տակաւին Մէջի մէջ ուտելիք և ռազ- մամթերք կը գտնուիէն , և երբ գրեթէ ամսէ մ' աւելի միջոցի մէջ պաշարման գոնդերուն դիրքը իմանալու համար բնաւ որ և է ջանադրութիւն մ'եղած չէր :

Պաղէն մարաշխան՝ թշնամոյն առջև այս- պիտի դիրք մը բռնելով , և իր օգնականն բա- ցադրութիւններ տալու համար անոր քով զրկել ուղղելով , և խօսակցութիւններ ընելու համար հա զորդակցութիւններ բանալ տալով իր ղէն 'ի ձե- ուին դուրս ելնելու բողոքակապէս անկարող ըլ- լալն բացէ 'ի բաց կը խոստովաներ : Ուստի պէտք է ըսել , որ այսչափ անգործ մնալէն վերջը՝ այս- պիտի վարմունք մ' ունենալն զինուորական պատ- մութեան մէջ չի լրտուած պակասութիւն մ'է :

ԳՂՈՒԽ 2.

ՓՈՒՐԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Մարտի 21-ին սեպտեմբեր 20-ին Բուրսայի և Բաթումի միջև գործարարական շահերը : — Մէջի պաշարման պատ մութեան մէջ զարմանալի գէպք մը կը պատմուի զօրաբանակն օդատու 6 էն մինչև սեպտեմբեր 1 տեղի ունեցած պատերազմերուն մէջ քառասուն

հաղար մարդ կորսնցընելէն վերջը, նոյն ժամանակէն մինչև հոկտեմբեր 29 պատերազմի պաշտին լրաց միայն երկու հաղար մարդ կորսնցուցած էր: Այլ լրան կըլլայ որ մարալխտն առանց որ և է շանադրութեան վտրճ մը վորճելու անճնատուր լլլալու պիտանութիւնն լատ ինքնան խորհր է:

Յշուտոս 23 ին այնպէս որոշուած էր որ զորաբանակին թշնամին յոգնեցընելու պատճառ եզող խել մը գործողութիւններ կատարել տալով հանգիստ պիտի տային: Մարալխտն վոխանակ հետնելու այս որոշման որ սահմանադրեալ ալ էր կատարելապէս անգործ մնաց: Եւ ահա այս կերպով թշնամին առանց բնական արգիլուելու կարող եղաւ թէմիլիէն ի Բոնթ-ա-Մուսոն ճիւղ մը կառուցանել, որ առանց Մեցի մտտեալու Մարիպրեքի գիծը նանսիի դժին հետ կը միաորէր:

Զորաբանակին անգործութեանը պատճառաւ ելած արտունջներուն վրայ, մարալխտն վերջապէս սեպտեմբեր 20 ին հրամայեց որ խել մը ղինուորներ կարգաւ բանակատեղոյն մօտը գտնուած գիւղաքաղաքներն երթան պաշար հաւաքելու համար: Բայց և այնպէս իւրաքանչիւր գունտերուն իրենց յատուկ բանակատեղիները կազարելիք գործողութեանց ինչ կերպով կարգադրուելը դունդերու հրամանատարներուն որոշմանը յանձնեց:

Այս գործողութիւններն որք տուանին և ամենուն համաձայն վարչութեամբ մը պիտի կատարուէին, ազարպիւն մնալու վտանգիս երթալիս էր և զամ էին:

Մարալխտն իր յիշատակարանին մէջ դարեւնապէս կը արտնայ, որպէս թէ իր տեղակալներն իրենց պաշտօնը ըստ արժանւոյն կատարած չէին: Անոնք ալ կը յանդիմանեն օրենց զլիարհ հրամանատարը ըսելով թէ իրենց բնական բացայայտ և ճիշդ հրամաններ տուած չէ:

Չորեքշաբթի Մեցի մեջ Բոնթ-ա-Մուսոն գործողութիւնը — Եթէ մարալխտն սեպտեմբեր 15 ն անմիջապէս վերջը իր պաշարներն աւելցընելու և թշնամին յոգնեցընելու համար իր որոշած գործողութիւններն կատարելու կրնար անոնցմով իր զորաբանակին գունդերն ընդարձակել, և աննց բանակատեղոյն մօտը զլուտուած գիւղաքաղաքներուն պաշարներն ու պատասպարանները Մեցի բերել տալ: Այսպէսով պաշարեալ գունդերն շտոցընելով անոնց զօրութիւնը կաւելցընէր, որով աւելի զիւրութեամբ կը դործէին: Այս գործողութեանց ետ մնալը ընդհակառակն թշնամւոյն բոլորովին օգտակար եղաւ. վասն զի անով կարող եղաւ իր զտնուած տեղն աւելի զօրութեամբ հաստատուիլ, պաշարման գունդերն շտոցընել և Մեցի մէջ գտնուած զօրութիւններն կամ իր օգտին ծառայեցընել, և կամ աւերել:

Այլ սակայն մարալխտն որ իր դլուխը հարիւր քառասուն հազար մարդ ունէր, միայն պարզ զինուորներու ձեռօք եղած գործողութիւններն կատարելու հարկադրուած չէր: Յաճախ յանուկընկալ ժամու ձեռքը ղէնք առնելով և զիշերային կրկնակի յարձակու մներով մէջ մը մէկ կողմ

մէյմ' ալ միւս կողմ՝ երթալով՝ մարաշխտան կրնար, պաշարման զօրաբանակն յողնեցընել, և այս կրկնակի երեւոյթներով եթէ հիմնական յարձակում մը ալ ըլլար, յաշնոյեւրու բաղքն կունենար, երբ թշնամին իր գունդերուն յողնութեան պատճառաւ իր բանակատեղին գտնուած տեղէն չի վտարադրեր: Գաղղիական զօրաբանակն պատնիչափակ բանակատեղոյ մը մէջ և կանոնաւոր յարձակումէ պատսպարեալ գտնուելով՝ ամենանշտանաւոր շահ մը կրնար ունենալ:

Մարաշխտան՝ իր անդրաշտանն ուղարկելու համար մէջ բերած պատճառները. — Երբ մարաշխտան հարցուեցաւ թէ ինչո՞ւ համար իբր գլխաւոր հրամանատար այնպիսի կեդրոնական դրութենէ մը օգուտ քաղելով իր զօրաւոր գունդերովն յանկարծակի թշնամւոյն վրայ յարձակած չէ, որուն գունդերն թեպէտ ընդարձակ չըլլապատի մը վրայ տարածուած էին, բայց և այնպէս դետի մը ջուրին երկու կողմերը երեք մասերու բաժնուած ըլլանուն զանոնք իրարու քով բերելու համար բաւական ժամանակ պէտք էր, հետեւեալ պատասխանն տուաւ:

« Թշնամին Մօղէլի երկու ամիսնց վրայ զբտնուած դիրքերը հաստատուած ըլլալով՝ մեր գունդերն այդ ամիսնց վրայ տաներն ղենուորական կրթութեան նկատմամբ կեդրոնական դիրք մը չի կրնար համարուիլ: Ասկեց զատ Մէջի բանակատեղոյն գործքերը պահպանելու համար հոն ալ մարդ թողուլ պէտք է: Ուստի անկարելի մէկ կէտի մը վրայ թշնամին ընկճել և զանի զօրաւոր

գունդերով տկարացընել, Մէջի նման քաղաքի մը և իր պատնիչափակ բանակատեղոյն մէջ: Միւս կողմանէ ալ, Մէջի զօրաբանակը կազմող գունդերն նախորդ պատերազմներու մէջ մեծամեծ կորուստներ կրած էին, գլխաւորապէս իր սպայից մէջ: Ուստի, ինչպէս որ քիչ մը յառաջ ալ ըսի, պէտք էր զօրաբանակն դէպքի բերմունքներէն բուրոյժին զգուշացընել: Իսկ Մէտանի աղէտքէն վերջը Մէջէն գուրս ելնելն բոլորովն անկարելի դատեցի, այն պատճառաւ որ կրնար ըլլալ թէ զօրաբանակն իր ուղեւորութեան երկրորդ օրն ցրուէր կամ թուլանար, թշնամւոյն զօրաց թիւըն ի նկատի առնելով »:

Մարաշխտան յառաջ բերած պատճառներն աւելի վերերեւոյթ են քան թէ հիմնական: Նախ և առաջ՝ օգոստոս 8 էն մինչև 12 շինուած և անմիջապէս ետքը դժբաղդութեամբ աւերուած կամուրջներն չինելէն աւելի պտղը բան մը չկար: Այս կերպով մարաշխտան կարող պիտի ըլլար ամենայն դիւրութեամբ իր գունդերն շուտով իր բանակատեղոյն որ և է կետին վրայ համախմբել: Եթէ թշնամին Մօղէլի ձախ ավանց լերանցը վրայ հաստատուած ըլլալուն անկարելի կըլլար այն կողմէն անցք մը բանալ, այդպիսի արգելք մը չկար Մօղէլի ալ ավանց վրայ, ուր թշնամւոյն հաստատուած դիրքերն գրեթէ մերկններուն հետ մի և նոյն ուղղութեան վրայ կը գտնուէին, Մնաց որ Մօղէլի ձախ ավանց պատնիչափակ բանակատեղին՝ որ քայքայ և մարդկոցներուն մէջ տեղը հաստատուած էր, մարդկոցներուն յաջպէսնու-

թեանք համար վայրկենական կերպիւ հոն թող-
լով երբէք վտանգի ենթակայ չէր կրնար բլլալ :
էրդ և Նրդ դունդերն ինչպէս նաև պահպան
զօրքը աւանց ամենախորք անպատեհութեան մը
կրնային ուրեմն ալ ավանց վրայ տարուիլ և
զօրաւանակն այս կերպիւ կեդրոնանալով՝ բնաւ
տարակոյս չկար որ իր առջին թուով իրմէ նուազ
զօրականներ պիտի ունենար : Հաւաստի եմք որ
այսպէս կարգադրուած դործողութիւն մը դոր-
ծադրուելու չափ բուական յաջողութեան բաղդ
կրնձայէր :

Մարաշտխան այս դործողութիւնն անկարե-
լի դատելով չէր ուզած դործադրել : Լաբասէլ
զօրապետին վկայութիւնը մեղի կը սորվեցընէ որ
մարաշտխան այս գործողութիւնը պայարման վեր-
ջին օրերը կը մտաբերէր :

Զօրաբանակն անդործ պահելով ինչ կրնար
յուսացուիլ . գործոյն մէջ ուտեստի խնդիր կայ
եթէ ուտեստն անգամ մը սպառէր , անձնատու-
ութիւնն անհրաժեշտ էր : Ուտտի պէտք էր ամեն
բան ընել այս ստուկալի հարկադրութիւնն իբաց
բառնալու համար : Մարաշտխանը կրտէ թէ պէտք
չէր բնաւ բան մը գէտքի յանձնել . աւելի աղէկ
էր որ և է փորձ մը փորձել քան թէ առաջին օ-
րէն կամաւ իր ճշմարիտ կործանմանը ետեւէն
երթալ :

Վայրկեան մը ընդունինք մարաշտխանն հետ
որ Մէջի մէջ գտնուած բազմաթիւ վիրաւորեալք
չիոթութիւններ կը պատճառէին , և վտանգ կար
աւելցընելու , բայց և այնպէս չենք ալ կրնար

ծխտել , որ վերը յիշուած գործողութեան նման
գործողութիւն մը անտարակոյս կրնար յաջողու-
թիւն ունենալ : Մարաշտխան գիտեր որ Գաղղիա
մեծ ջանադրութիւն կը նէր : Իր փորձառութիւնը
իրեն կապացուցանէր որ եթէ Մէջի զօրաբանա-
կին և անոր նոր զօրաբանակներու կազմակերպու-
թեանը համար հայթայթելիք սպայից օժանդա-
կութիւնը չըլլար , հաւանականաբար իր բոլոր ջա-
նադրութիւններն ապարգիւն կը մտային : Զօրա-
բանակին Մէջէն դուրս ելնելն այնչափ կարեւոր
էր , որ այդ մասին եղած որ և է դիտողութեանց
ամենքն ալ մերժուելու էին :

Համառօտիւ խօսելով , առանձր իրաւունք ու-
նի նաև Պազէն մարաշտխանի հարցընելու թէ ին-
չո՞ւ համար իր տեղակալներուն կարգադրութեա-
նը յանձնէր է այն գործողութիւններն , որոց
յաջողութեան համար միտի վարչութիւն մը կա-
րելու էր . և թէ՛ այս գործողութեանց ձեւնար-
կելու համար ինչո՞ւ համար մինչև սեպտեմբեր 30
սպասեց . ինչո՞ւ համար այս գործողութիւններն
կատարելով իր դունդերն ընդարձակելու փոյթ
չունեցաւ , փոխանակ նուաճեալ երկիրն ալ թըչ-
նամուրջն ձեռքը ձգելու : և այսպէս հրկիզութեան
մատնեց այն դիւրաքաղաքներն , որոց մէջ դրո-
նուած նպաստներն վայրկենական բնակութեամբ
մը չէին կրնար հաւաքուիլ , վերջապէս ինչո՞ւ հա-
մար իր զօրաբանակին կեդրոնական հաստատու-
թեանէն օգուտ չի քաղեց թշնամուրջն դունդերն
յուղնեցընելու և զանանք կրկնակի յարձակումնե-
րով սկիւրացընելու համար մինչև այն վայրկենին

երբ իր զօրքերուն ամենքն ալ շուտ ժամանակի մէջ ի մի խմբելով կրնար թշնամոյն դունդերէն անցնել և յօսով լեռներէն Գաղղիոյ ներսերն երթալ : Պաղէն մարաշախտին սեպտեմբեր ամսոյն մէջ անգործ մնալը իր վրայ ծանր յանցանք մը կը դնէ : Վասն զի Մեցէն դուրս ելլելու համար բնաւ ջանք մը չընելով իր զօրաբանակին անձնատուութեանը պատճառ եղաւ :



ՅԼ ՈՒՆԻՍ

ՊԱՋԷՆ ՄԱՐԱՋԱԹԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՈՒՆԵՅԱԾ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Մարաշի տէր իսթրափի խաւարապետն սուլթան Վերէն անպաշտէն : — Պաղէն մարաշախտն քաղաքական խորամանկութեանց ձեռնամուխ ըլլալէն առաջինը կերպիւ ջանաց կառավարութեան իր կացութիւնն իմացընել և իր պիտոյքն անոր յայտնել :

Սէրվինիէի պատերազմէն անմիջապէս վերջը Պաղէն մարաշախտն սեպտեմբեր 1 ին հետեւեալ հեռաքիրն ղրկեց առ կայսր :

« Սէնթ-Պարպի շրջակայները երկու օր շարունակ սաստիկ պատերազմ մը ընելնէս վերջը քիչ բազմամթերքով Մեցի բանակատեղին վերադարձանք : ոչ միս ունինք, ոչ պարսիմատ, այլ հինգ շարաթուան համար ցորեն, վերջապէս ըսող

մաթիւ վերադրեալներ ունենալնուս պատճառաւ առողջական վիճակնիս ալ վնասու ետեմակայ եղած է : Թէև շատ պատերազմներ տեղի ունեցաւ բայց զօրաբանակին բարոյականը անարատ մնաց : Մեր գտնուած տեղէն դուրս ելնելու համար շարունակ ջանքեր կրնեմք, սակայն բոլորտիքնիս բազմամթիւ թշնամի կայ : Տէքաէն զօրապետն մեռաւ : Գրեթէ տասնևութ հազարի չափ վիրաւորեալ ու հիւանդ ունինք » :

Մարաշախտին թղթակցութեանց արձանագրութեան նայելով այս հեռագիրն սեպտեմբեր 1 ին, 3 ին և 7 ին ղրկուած է : Բայց և այնպէս առեանը հաստատեց որ անի Մեցէն սեպտեմբեր 8 ին և 10 ին գացած է :

Այլ տակայն միայն սեպտեմբեր 8 ին Մեցէն ղրկուածն գտնուած է որն որ տիկին Անթերմէի յանձնուած, և նա ալ նոյեմբեր 7 ին միայն Պ. Թաշարի, Պրիւսէլի գաղղիական պաշտօնէին տուած է : Այս հեռագիրն՝ որ թուանչանաւ գրուած է, իր երկու հատուածներուն մէջտեղը յայտնապէս գրուած հետեւեալ տեղեկութիւնն կը պարունակէ :

« Երէկ Սէտանի պատերազմներէն վերադարձած հինգ հարիւր գաղղիական գերի ընկալաց փոխարէն անոնց չորս արձակած էի : Բրուսիացիք այնպէս կը համբաւեն որ իբր թէ Մաք-Մահոն անձնատուր եղած և թէ կայսրն ալ գերի վարուած կամ Սէտանի մէջ արգիլուած ըլլայ » :

Յիշեալ հեռագրոյն թուականը կը յայտնէ որ անի կայսերական կառավարութեան պաշտօնէին

ըրկուած է, վասն զի առժամանակեայ տէրու թեան անկուծը, ինչպէս որ ըսուեցաւ ասկից յառաջ, սեպտեմբեր 10ին իմացուց մարաշխտին Լրժօէնտը զորպէս լուին:

Ինչպէս որ կը տեսնուի, յիշեալ հեռագիրն որ սեպտեմբեր 1ին և 13ին կայսեր զրկուած հեռագրոյն կրկնութիւնն է, զորարանակին կացութեան և իր սլաշարներուն վրայ քանի մը մանրամասն տեղեկութիւններ կը պարունակէ, և ասկից զատ սա լուին ալ կը հաղորդէ թէ զորարանակն կըրցած է Մեցի թանկատեղին վերադառնալ:

Սեպտեմբեր 10ին Լրժօէնտը Երազլուին Պաղէն մարաշխտին իմացուցած էր թրօյի զօրապետին նախադահութեան ներքև Ազդային Պաշտպան կառավարութեան կազմութիւնը:

Սեպտեմբեր 12ին, մարաշխտն գունդերու հրամանատարներն ու զօրարածնէ զօրապետները հաւաքելով այս լուրը անոնց կը հաղորդէ:

Սեպտեմբեր 14ին, Պաղէնէ լրագիրներ և գրութիւններ կը բերէ ի Մեց, որոց միջոցաւ Հեռնոսի բանակին գլխաւոր հրամանատարն նոր կառավարութեան կազմութիւնն ու անոր անդամները իր զօրարանակին կիմնցան:

Սեպտեմբեր 15 և 16ին (15 և 16 օգոստոսի): Սեպտեմբեր 15ին Պաղէն մարաշխտն ալ Ազդային Պաշտպան կառավարութեան կը դիմէ: Ինչպէս նա նոր պաշտօնէին որով իր նախկին հեռագրաց մէջ սրբութեան հետ տեղեկութեանց բոլորն ալ անպակի պիտի կրնայ երեւոյնել, ահա ասի:

« Բանակին համար խիստ կարեւոր է փարիզու և Գաղղիոյ մէջ անցած դէպքերն իմանալ, Գուրսի հետ ամենուին հաղորդակցութիւն մը չունինք, և թշնամոյն մեզի դարձուցած գերիներըն աւելի օտարոտի լուրեր տարածած են, և թշնամին ալ նոյնպէս գէշ լուրեր կը տարածայնէ: Մեզի համար հրահանգներ և լուրեր ընդունիլ կարեւոր է: Բողոտիքնիս մեծամեծ զօրութիւններ կան, որոցմէ ունայն տեղը վորձեցնիք թափանցել օգոստոս 21ի և սեպտեմբեր 1ի երկու անօգուտ պատերազմաց վրայ »:

Սոյն ձեռագիրն Մարկուս և Հէնրի զրահաւորաց յանձնուած է, որք իրենց յանձնուած պաշտօնին նկատմամբ խիստ գովելի ազդուութիւն կը յայտնեն, իրկու անդամ թշնամոյն ձեռքը իյնալով՝ որ զիրենք մահուան կը դատապարտէ, կարող կըլլան փախլի, և հոկտեմբեր 13ին Մոմէտի կը հասնին, ուր իրենց քովի գրութիւնը Բըզուլ հրամանատարին կը յանձնեն: Սա ալ զանի Օլիօ տեղակալին միջոցաւ Լիլ կը գրկի, և հետեւեալ օրն հոկտեմբեր 14նոյն քաղքին զինուորական դրասներով կը յանձնուի:

Յիշեալ գրութեան Լիլ հասնելէն վերջը ատուանը անօր հետքն անդամ չի դաներ, վասն զի թուրի յանձնարարական ժողովոյ անդամոց ձեռքը հասած է:

Սեպտեմբեր 23 և 24ին մարաշխտը զՊաղէնի տեսաւ: Իրենց տեսակցութիւններն մանրամասնարար պատմած ըլլալուս համար զանց ընելով միայն այցափ մը կը յիշենք որ մարաշխտը



առ իր քովը դանուած պաշարներուն վիճակը ճշդիւ անոր յայտներ է բնելով որ այս կերպիւ մրնչե հոկտեմբեր 18 էն անդին չի կրնար զիմանալ :

Միւլենոյն օրը՝ սեպտեմբեր 24, Տօնչերի գիւղէն մարդ մը՝ որ Սէտանի պատերազմէն վերջը Բրուսիացի վիրաւորեալ մը Մարէպրիւք տանելու յատկացած ըլլալով՝ գերմանական կառավարութեան կողմանէ անցազիր մը ստացած իր տեղը կը դառնար, մեր դռները բռն մէջ կիյնայ և կուգայ իր ծառայութիւններն մարաշխատին մատուցանելու : Մարաշխատն ալ հեռագիր մը կը յանձնէ անոր :

Այս վերջին հեռագիրն ուրիշ բան չէ, և թէ ո՛չ սեպտեմբեր 15 ին տրտերազմական պաշտօնէին զրկուած հեռագրոյն կրկնութիւնը, որուն մէջ հրահանգներ և լուրեր խնդրուած են :

Այսպէս՝ տակաւին սեպտեմբեր 25 ին, մարաշխատն որ պաշտօնական ընդհանրադրով մը Աղզային Պաշտպան կառավարութեան անդամոց անուններն իր զօրաբանակին իմացուց, պատերազմական պաշտօնէին կը դրէ թէ թշնամուոյն տարածած անօրոշ և յարալի լուրերէն զատ ուրիշ տեղեկութիւններ չունի : Բէնիէի հաստատագէտ իմացուց այն արեւալի օրը որ զինքը թշնամուոյն անձնատուր պիտի ընէ, իսկ պատերազմական պաշտօնէին իր զիմարութեան տեսողութիւնը ոչ կը յայտնէ, և ոչ իսկ անկէ ուսնիք կը խնդրէ :

Ատեանը չի կրցաւ վերստին դռնել այդ Տօնչերի զիւղէն եղող մարզն, և հեծելազօրաց սպա-

մից գլուխ Պ. Էիօթի վկայութեան նայելով՝ իրաւունք ունինք հաւատալու որ իր որդեալ տեղն հասած չէ :

Սեպտեմբեր 15 էն վերջը՝ մարաշխատին արձանագրութեանցը մէջ հոկտեմբեր 21 էն առաջ դուրսի հետ բնա հաղորդակցութեան մը հետքն անգամ չենք տեսներ : Հոկտեմբեր 21 ին, այսինքն՝ Պօսյէ զօրապետին Հասթինկի համար ճամբայ ելնելէն երեք օր վերջը, հետեւեալ հեռագիրն կը զրկէ ի թուր :

«Շատ անդամներ յաջողակ մարդիկ զրկեցի ի փարիզ (և ի թուր) Մէցի զօրաբանակին վրայօք լուրեր տալու համար : Այն օրէն մեր կացութիւնը աւելի վատթարացաւ, և երբէք ոչ փարիզէն ամենափոքր հաղորդակցութիւն մ'ընդունեցայ և ոչ թուրէն : Բայց և այնպէս շատ կարեւոր պիտի ըլլայ իմանալ թէ ինչ կանցնի մայրաքաղաքին մէջ՝ վասն զի քիչ օրէն սովը զիս պիտի ստիպէ որ և է միջոց մը ձեռք առնուլ յօգուտ Գաղղիոյ և սոյն զօրաբանակին » :

Այս հեռագիրը հոկտեմբեր 22 ին վեց պատգամաւորաց յանձնուած էր, որոց մէջ կը գրտնուկին վալքուր և Բրիէսքօյիլ թարգմաններն : Իրենց մէջէն երեքը ուղղակի թուր հասան, և իրենց քովը եղած հեռագիրը Պ. կամպէթթայի յանձնեցին, բայց այս հեռագիրն թուականեալ էր, և թուրի Յանձնարարական Ժողովոյ անդամները Հռենոսի զօրաբանակին ինձանչանին բանային չունենալուն համար, հոկտեմբեր 26 ին զայն թարգմանուելու համար փարիզ կը դրկեն :

Ժարրա զօրապետին այսպէս կը գրէ . « Պատիւ ու
նիւմ՝ ձեզի իմացընելու որ դաւառին մարդիկը ու
զածնուն պէս Մուշէն կը մտնեն ու կեննեն , և
անոնցմէ շատերն թշնամիէն գրաւուած մօտաւոր
գիւղաքաղաքներն կերթան : »

Այս հաղորդակցութիւններն սեպտեմբեր
ամսոյն մէջ ամենայն ապահովութեամբ կը կա-
տարուին , և կը շարունակուին , թէ՛ աւելի դժ-
ուարաւ , բոլոր հոկտեմբեր ամսուն մէջ մինչեւ
պաշարման վերջը : Ատենաք արդէն անոնցմէ
խիստ շատերն ապացուցած թլլալուն համար վայ-
րապար կրկնութիւններ չուզեր ընել :

Մէջի շրջակայքը գտնուող գիւղացիներն չէ-
ին միայն որ պաշարման գունդերուն հետ համար-
ձակօրէն կ'հաղորդակցէին : Մենք այս մասին սպա-
յից դիւաւորին տեղեկութիւններ տալու պաշտօ-
նին յատկացող Ստմուէլ հրամանատարին վկայու-
թեանը մէջ հետեւեալք կը կարդանք .

« Իմ գործակատարներս շատ գիւրութեամբ
կանցնէին գերմանական գունդերը և անոնց մէջ
օրերով կը կենային . անոնց մեզի բերած տեղե-
կութեանց շնորհիւն էր որ կըցանք Պ մարաշխա-
տին իմացընել պաշարման զօրաբանակի գուն-
դերուն բախումն ու ճիշդ թիւը :

Երբ յիշեալ անձին հարցուեցաւ թէ այս գոր-
ծակատարներն՝ եթէ հրաման ընդունած թլլային ,
կրնային ներսի հետ հաղորդակցութեան մտնել ,
պատասխան ընդունեցանք թէ՛

« Ատոր տարակոյս չկայ : Ամէն օր : »

Այսպէս վկայութիւն տուած է նաեւ Ստմուէլ :

էլ հրամանատարին իշխանութեան տակը գրա-
նուած Շարրէ տեղակալն ալ :

Ի հաստատութիւն յիշեալ վկայութեանց ,
ատենան ուղղակի ստուգած է որ պաշարման ժա-
մանակ Ալթէնպուրկէր անուն պաշտօնեայ մը շատ
անգամ Մէջէն դուրս ելած և մինչեւ թիօնվիլ
դացած էր . որ Մութ տեղակալն օդոստոս Չին
դուրս ելած մինչեւ Սէնթ-Ավօլտ դացած էր , որ
սեպտեմբեր ամսուն մէջ երկրորդ անգամ մի և
նոյն ուղղութեամբ համարձակ գերմանական
դունդերն դացած է , բայց այս անգամ չէ կըր-
ցած ետ դառնալ , որ Պ. Գրիստէմ՝ ձեռնհաս ե-
ղած է առաջին անգամ Գօրնի երթալ , երկրորդ
անգամ կրիթիի անտառէն անցնել , և երրորդ
անգամ ալ Մէն-Րէմիէն . և այս այլ և այլ ուղե-
ւորութեանց ժամանակ ձեռնհաս եղած է Մէջի
շրջակայքը պտտելու , և վերջին ուղեւորութեամբ
մ'ալ մինչեւ Լիւքսեմպուրկ դացած է :

Ասկից կը հետեւի որ երկրին ներքին կողմը
լուրեր ղրկելու համար երբէք առիթ պակաս ե-
ղած չէ . բայց այս գործակատարներուն ուրիշ
բան մը հրամայուած չէ , եթէ ոչ թշնամոյն շար-
ժումներն իմանալ : Միւս կողմանէ ալ , այս կերպ
ծառայութեան մը համար մի քանի սպայից և
պարզ քաղաքացւոց ցուցուցած անձնուէր ջա-
նադրութիւններն ալ անընդունելի եղած են :

Մուշէն հարցուցաւ ինչո՞ւ Մէջէն հարցա-
յալ Գրիստէմն չէր գրած . — Վերջապէս , մա-
րաշխան իր վրայօք կառավարութեան լուրեր
հաղորդելու համար չուզեր օգուտ քաղել նաև

այն օգտապարիկներէն որ ամիս մը չարունակ ամեն օր Մէջէն բաղմաթիւ մասնաւոր հեռագիրներ բերած են :

« Պազէն մարաշխտէն լուր մը չառնելու համար և իր լուսթեանը վրայ, կըսէ Պ. Լ. Բ. Ս. զօրապետն իր վկայութեանը մէջ, սյնալիսի տարտամ և ծանր անհանգստութեանց մէջ ինկայ, որոնք եւս առաւել ծանրացան երբ պաշարուէն քիչ օր յառաջ փարիզ պաշտօնական լուր մը եկաւ թէ Մէջէն ճամբայ ելած և կարծեմ թուրի շրջակայքը ինկած և վեց հազարէն աւելի զըրութիւն պարունակող օգտապարիկ մը ո՛չ մեր զօրաբանակին վրայ տեղեկութիւն մը կը հաղորդէր, և ո՛չ ալ Պազէն մարաշխտին վրայօք բառ մը կը պարունակէր » :

Ատենաշ իմացաւ որ սեպտեմբեր 16 ին երկրորդ օգտապարիկ մ'ալ գտնուած է Նէօ-Շաթօյի շրջակայքը, որուն մէջ թէպէտ խել մը գրութիւններ կան եղեր, բայց կառավարութեան համար ո՛չ յայտնի և ոչ թուանշանեալ հեռագիր մը չկայ եղեր :

Սեպտեմբեր 21 ին հարիւր երեսունըթեղ զըրութիւն պարունակող երրորդ օգտապարիկ մ'ալ էքինալի մօտերը գտնուած է, որուն մէջ ալ բնաւ պաշտօնական հեռագիր մը չկայ :

Վերջապէս ատենաշը կստուղէ որ պաշարման ժամանակ շատ անգամ պատահեցաւ որ Մէջի իսխանութեանց ձեռքը իրուսիական անցագիրներ ինկաւ, և սակայն չխորհեցան անոնցմէ օգուտ քաշել : Արշանպօ տեղաւային վկայութեանը մէջ

կը կարդանք որ կարող եղած է սեպտեմբեր 21 ին հետեւեալ գրութիւնն Մէջի բանակատեղին զըրկել . « Գիւրին կըլլար կօրղի ջրանցքէն հաղորդակցիլ, մանաւանդ իմ եկած օրս, որովհետեւ ժիւթիէն չըլլազայութեամբ Ար երթալու արտօնութեամբ ամբողջ օրուան մը համար յարգելի եզող անցագիր մ'ունէի քովս : Ինձմէ տեղեկութիւններ ինդընցին, բայց իմ տեղեկութեանցս տուած կարեւորութիւններուն նկատմամբ սխալեցայ, վասն զի սպայից դուռնդին ներկայացուցած անցագիրս չգործածուեցաւ : Սոյն անցագիրս իմ այս վկայութեանս հետ հոս կը յաւելում » :

Բսել կըլլայ թէ դուրսի հետ հաղորդակցելու միջոցներ չէին պակսեր, և եթէ Մէջի զօրաբանակին իր աշխատութիւններն ուրիշ գաղղիական զօրաբանակներու աշխատութեանց հետ զուգընթաց յառաջ վարելու չի կոչուեցաւ, պատճառն այն էր որ դիխաւոր հրամանատարն այն պէս ուզած էր : Պազէն մարաշխտն սեպտեմբեր 14 էն վերջէն արդէն դէմ առ դէմ կայսեր իրեն յատկացուցած անկախ դերը շարունակելով՝ անփոփոխ կերպիւ յառաջ վարեց այն զուտ անձնական քաղաքականութիւնը որմէ թշնամին մեծ օգուտ քաղեց :

Արշանպօ Պաշտօնական Կառավարութեան Երեսնուհինգ րօն հետ հաղորդակցելու գործը : — Մինչդեռ մարաշխտն այնպէս մեծ զգուշութիւն կը պահէր նոր կառավարութեան նկատմամբ, կառավարութիւնն օր բառ օրէ աւելի փորձ կը փորձէր Մէջի զօրաբանակին հետ հաղորդակցութեան մտնելու

և անոր իր գիմադրութիւնն երկարելու միջոցներ տալու համար : Պ. Պ. Լը Յլո զօրապետին , կամ պէթթալի , թաշարի , տը ֆէրաթրիի , և զինուորական տեսուչ Պ. Բիքարի վկայութիւններն յայտնի կիմացրնեն թէ այս նպատակաւ ինչ գովելի տեւադութեամբ Վանազրութիւններ ի գործ դրուեցան մինչև անձնատուութեան օրը :

Լը Յլո զօրապետն՝ նոր կառավարութեան պաշտօնատեղին մտած առաջին օրերէն , այսինքն սեպտեմբեր 6 էն ի վեր շարունակ յիշեալ կառավարութեան կազմութիւնը Մէյի զօրաբանակին իմացընելու զբաղեցաւ : Յայտնեց նաև որ Գաղաղիոյ քաղաքական և զինուորական կացութիւնն Պազէն մարալախտին՝ ծանուցանելու համար ամէն պատեհութիւն գործադրած է . բայց երբէք չէ ստուգած թէ արդեօք իր հեռագիրներն մարալախտին հասած են թէ ոչ :

Գաղղիոյ ներքին գործոց պաշտօնեայ Պ. կամ պէթթալ ալ իր կողմանէ սեպտեմբեր 4 էն մինչև անձնատուութեան օրը թէ փարիզէն և թէ դաւառէն պատգամուորներ կը ղրկէր որ կառավարութեան հրահանգներն երթան Պազէն մարալախտին հաղորդեն :

Հիւսիւոյ և Արտէի քաղաքապետներն , Նէօշաթօյի փոխ-քաղաքապետը և Պրիւսէի գաղղիական դեսպանն ալ միանգամայն հրաման կրնդունէին գաւառին և կառավարութեան կամայք վրայօք Պազէն մարալախտին լուրեր հաղորդելու համար :

Թշնամիէն պաշարուած ուրիշ քաղաքներու՝

մինչև իսկ Սթրազբուրկի հետ ալ այս կերպ շարորակցութիւններ եղած և յաջողած ալ էին : Պէթթօր իր անտական տեղեկագիրներն կառավարութեան ղրկած էր , Պիչկարոզ եղած էր իր պահապան զօրաց սահմանեալ ռաճիկն ընդունիլ և նոր զօրաբանակայ կազմակերպութեան համար սպայից դունդեր ղրկել : Միայն Մէյն էր որ մարալախտին ըսածին նայելով՝ երբէք բան մ'ընդունած չէր :

Թուրի յանձնարարական ժողովոյ անդամներն չի կրցան մարալախտին լուրեանը մեկնութիւն մը տալ . Պ. կամպէթթա իր վկայութեանը մէջ հետեւեալ խօսքերն կրնէ . « Սեպտեմբեր 4 էն մինչև անձնատուութեան օրը լրացած յիսուորչորս օրուան մէջ Ազգային Պաշտպան կառավարութիւնըն հոկտեմբեր 21 ի հեռագիրէն զատ ուրիշ բան մ'ընդունած չէ . . . այնպէս որ կը կարծուէր թէ մարալախտն միայն իր անձնատուութիւնը կառավարութեան իմացընելէն զատ ուրիշ բան խորհած չէ » :

Հաղորդակցութեան նկատմամբ սեպտեմբեր 4 էն ետքը եղած Վանազրութեանց մասին Պ. տը ֆէրաթրի մանրամասն վկայութիւն մը կուտայ զոր կարեւոր է յիշատակել : Յիշեալ անձը՝ որ սեպտեմբեր 13 ին պատերազմի պաշտօնէին մէկ հեռագիրն՝ որուն մէջ մարալախտին ընտանեացը վրայօք լուրեր կը հաղորդէր , Մէյ ղրկելու յատկացած ըլլալով՝ արկին Պազէնի Թուր ուղեւորիլը կիմացրնէր . Այս տոմսակը պաշտօնական հեռագրոյն հետ մէկտեղ Տօնգէլլա նաւատուոյն ձեռքով զրկուեցաւ :

Յիշեալ նաւատին սեպտեմբեր 18 ին նոյն հե-
ռագիրք կը յանձնէ թիւրնիլէ գնդապետին, որ
կը հաստատէ թէ զայն Մէջ զրկած է պաշտօնէի
մը ձեռքով, և այն պաշտօնեայն ալ ո՛չ կրկին տե-
սած է և ոչ ալ անոր վրայօք լուր մը կրնայ տալ :

Ինչ և իղէ ատենը ստուգած է որ քանի մը
օր վերջը Պազէն մարաշխտն իմացած է որ իր
ընտանիքը Փարիզէն մեկնած է թուր երթալու
համար : որովհետեւ տիկին Պազէնի յատկացեալ
նամակը թուր կուղղէ, և զայն սեպտեմբեր 25 ին
Տօնչէրի գիւղէն մարդու մը կը յանձնէ : Պազէն
մարաշխտն ինչպէս իմացաւ որ իր ընտանիքը
թուր քաշուած է : հոն ոչ կալուած մ'ունէր, և
ոչ ալ ազգային մը որ իր ընտանիքը ստիպէր
հոն բնակութիւն հաստատելու համար : Այս ի-
րողութիւնը ուրիշ բանով չի կրնար բացատ-
րուիլ, եթէ ոչ՝ այն պաշտօնէին Մէջ հասնելովը
որուն թիւրնիլէ գնդապետն յանձնած էր Տօնչէ-
լայի բերած հեռագիրներն : Այլ ստիպյն մենք
պիտի կրնանք հաստատել որ միևնոյն հեռագիր-
ները սեպտեմբեր 25 էն մինչև 30 երկրորդ ան-
գամ կրնային մարաշխտին ձեռքն հասնիլ իր
զօրաբանակին համար թիօնվիլ ուտելիք եկած ըլ-
լալը ազդարարող գրութեան հետ :

Պայարման ատեն՝ Մէջի զօրաբանակին պա-
շար հայթայթելու հոգը Ազգային Պաշտպան կա-
ռավարութեան համար ամենածանր զբաղմունք
մ'եղաւ : և այս ամենակարեւոր գործողութիւնն
ի գլուխ հանելու համար գովելի ջանադրութիւն-
ներ եղան :

Սեպտեմբեր 16 ին զինուորական վերատեսուչն
Քիքար որոշուեցաւ Հիւսիւսային սահմանադ լուխ
քաղաքներուն մէջ Պազէն մարաշխտի զօրաբա-
նակին համար խիստ շատ ուտելիք մտցընել :

Տեղակալ-գնդապետ Մասարօյի սեպտեմբեր
21 ին յիշեալ վերատեսուչէն հրահանգ ընդունե-
լով սեպտեմբեր 22 էն 23 լուսնալու գիւրբը՝ Ա-
րևմտեան ընկերութեան գլխաւոր վերատեսուչ
Պ. Պէլէյի ձեռքով վարուած և իրենց մէջը վեց
հազար եօթը հարիւր վաթսուներ հինգ կենդինար
ամեն տեսակ ուտելիք պարունակող հարիւր քսան
Վի՛ն Լօնվի քաղքին մէջ վար գրաւ :

Յիշեալ գործողութիւնը միայն թիօնվիլի հա-
մար պատճառեալ դժուարութիւններ ունեցաւ,
վասն զի յիշեալ քաղքին և Պէթէմպէրկի մէջ
տեղը յինուած երկաթուղին հինգ հարիւր մէթր
երկայնութեան վրայ արուած և երկաթները
վերցուած էր, և Բրուսիացիք ալ անոր մօտերը
հաստատուած էին : Քիքար վերատեսուչին տուած
հրահանգաց համեմատ՝ թիօնվիլի պահպան զօր-
քէն հազար մարդ սոյն գծին այլ և այլ կողմերը
զրկուեցան, և իրենց պաշտպանութեամբը երկա-
թուղոյ գլխաւոր տեսուչն սեպտեմբեր 21 էն 23
լուսնալու գիւրբը կըցաւ այն արուած ճամբան
նորոգել, և նոյն քաղաքը երեք չրճան ալիւր և
պարսիմատ հասցընել :

Թէպէտև հաղորդակցութեանց վերաբերեալ
հատուածին մէջ ուրիշ մանրամասնութիւններ
պիտի կրնանք գտնել այն խել մը ջանադրութեանց
նկատմամբ որ մինչև պայարման վերջին օրը ան-

դատար գործադրուեցան այս կարեւոր լուրն Պազէն մարաշխտին հաղորդելու համար, բայց մեզի բաւական է հաստատել որ այս պաշտօնը ստանձնող առաջին պաշտօնեայեանքէն մին այսինքն՝ Թիւրնիէ գնդապետէն զրկուած կարասեաց պահապան Պ. Քիս, կարող եղաւ դերմանական գունդերէն անցնելով՝ հոկտեմբեր 1 էն առաջ մարաշխտին յանձնել այն հեռագիրն որ թէ յիւեալ ուտելեաց գալը իրեն կիմացընէր, և թէ Տօնդէլլա նաւասոււոյն Լը Յը զորապետին և Պ. աբ Փէրաթրի կողմէն Թիւրնիէ բերած լուրերը կը հաստատէր :

Պ. Քիսի տարած յիւեալ նամակին պարունակութիւնը կրնանք հաստատել նաև դինուորական կրթութեան պաշտօնեայ Պ. Շարլանու առպետին վկայութեամբը որ անոր հետ մի և նոյն ատեն Թիւրնիէն մեկնած և նոյնպէս հրաման ընդունած էր Թիւրնիէի կարասեաց պահապանին գրով տարած լուրերը ինքն եւս Պազէն մարաշխտին բերնով հաղորդել :

Պ. Քիսի Մէց երթալը՝ հոկտեմբեր 8ին նոյն քաղքին քաղաքապետութենէն զօրաբանակին կէտք գնդին համար ընդունած յանձնառական հրամանաւն ալ կը հաստատուի : Կապացուցուի նաև Մարշալ և Յըսէօ վկայից վկայութեամբը : Այս վերջինը Մէց քաղաքը խել մը տեղեկութիւններ ընդունած է . Պ. Քիս իմացուցած է իրեն թէ ինչպէս ինքը կարող եղած էր զօրաբանակին ուտելիք հայթայթելու համար Թիւրնիէ խել մը տաշար բերելու . ըստ նաև որ ինքը Պազէն մարաշխտեան տեսնելով այս լուրը անոր հաղորդած էր :

Նոյնպէս Յըսէօ իմացուց նաև որ մարաշխտին հրամանին համեմատ ինքը հոկտեմբեր 3ին ժարրա զօրապետէն հրաման առած էր երթալ Թիւրնիէ գնդապետին իմացընելու որ զօրաբանակըն մօտերս Թիւրնիէ պիտի գայ հոն իրեն յատկացեալ ուտելիքն առնելու համար :

Յիւեալ վկայութեանց համաձայնութիւնը անհերքելի կերպիւ կապացուցանէ որ Պազէն մարաշխտին հոկտեմբեր 1 էն առաջ գէթ ընդունած է այն բազմաթիւ հաղորդակցութեանց մին զոր Ազգային Պաշտպան կառավարութիւնն իրեն ուղղեց, և իմացած է նաև այն միջոցներն որք իր զօրաբանակին դիմադրութիւնը երկարելու համար ձեռք առնուած էին :

Համառօտիւ ըսելով Ազգային Պաշտպան կառավարութիւնն չընդունեց երբէք որ դազդիական զօրաբանակի մը դիւսուոր հրամանատարն արշաւանքի մ'առջև իր երկիրը պաշտպանելէն զատ ուրիշ զբաղմունքներ կարող ըլլայ ունենալ : Փութաց Պազէն մարաշխտին իմացընելու իր իշխանութեան հասկը, և իր թշնամոյն դիմադրելու մասին ունեցած հաստատուն կամքը անոր յայտնեց :

Սեպտեմբեր 26 էն վերջը Մէցի զօրաբանակին համար պաշար հայթայթելու ամենակարեւոր պիտանութիւնը ձանջաւ, և Քիւքար վերատեսչին ձեռք առած միջոցներուն չնորհիւ և Արեւմտեան երկաթուղեաց Ընկերութեան հայրենանուէր օգնութեամբը սեպտեմբեր 23ին Թիւրնիէի և մօտակայ քաղաքաց մէջ զօրաբանակին ուտե-

իւք հայթայթելու համար խել մը պաշարներ հա-
ւաքեց :

Անկէ վերջը հաստատապէս հոգ տարաւ մա-
րաջակտին իմացնելու թէ իր բանակատեղիէն
քանի մը քիլոմէթր հեռու իրեն համար պաշար-
ներ պատրաստուած են : Ապահով կերպով գե-
տեր որ մարաջակտն գիտնալով որ իր զօրաբա-
նակին դիմագրութիւնը երկարելու միջոցներն ի-
րեն խիստ մօտը կը գտնուին , անխափան ջանագ-
րութիւն մը պիտի գործադրէր :

Այս նպատակաւ խել մը պաշտօնեաներ զըր-
կուեցան : Առաջին անգամ զրկուածներն անմի-
ջապէս յաջողութիւն գտան : Մարաջակտն՝ որ
արդէն փախստական գերիներուն ձեռքովը բեր-
ուած լրագիրներէն և քաղաքական գրութիւն-
ներէն լուրեր ընդունելով՝ Աղգային Պաշտպան
կառավարութեան դիտաւորութիւններն իմացած
էր , հաւատեալ սեպտեմբեր 23 էն առաջ՝ Լը Ֆլօ
զօրապետին և Պ. տը ֆէրաթիի նամակներն ըն-
դունած է : Սեպտեմբեր 23 էն մինչև 30 Պ. Րիսի
միջոցաւ այս առաջին պատգամաւորին հաստա-
տութիւնն ընդունելով՝ միանգամայն իմացած է
որ թիօնվիլի և մօտակայ քաղաքաց մէջ իր զօրա-
բանակին համար պիտի կրնայ ուտելիք գտնել :

Այս աղբարարութիւնը այն միջոցին հասաւ
իրեն երբ մարաջակտն Պ. Րէնիէի միջոցաւ բաց-
ուած հաղորդակցութեանց յաջող վտանան մը
ունենալուն վրայ յոյս ունէր : Ուտելի այս խո-
րամանկութեան ապարդիւն ըլլալէն վերջը՝ և թէ
Հռենոսի զօրաբանակն թշնամոյն հետ կը կեն սո-

տակցութիւններ ունեցած է , ինչպէս պիտի տես-
նենք երրորդ մասին մէջ , առանց իր գունդերուն
դիմադրութիւնը երկարելու համար վորձ մը փոր-
ձելու , իր այս վարմունքն արդարացընելու հա-
մար չի կրնար ըսել թէ ինքը կառավարութեան
տողու դիտաւորութեանց և իր զօրաբանակին
պիտայիցը համար պաշար պատրաստուած ըլլա-
լուն տեղեակի չէր :

ԵՐԿՐՈՐԳ ՄՍԱԻՆ ՀԱՄԱՌՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մտաջակտին ամբողջ սեպտեմբեր ամսուն
մէջ անդործ մնալը , այս է պաշարման միջոցին մէջ
տեղի ունեցած ուշադրութեան արժանի կէտը :

Երկու բուն պատճառ եղան այս մասին , նախ
Սէտանէն և փարիզէն առնուած լուրերուն նկատ-
մամբ յուցուած տարակոյտը , երկրորդ՝ թշնամոյն
հետ բացուած զադտնի խօսակցութիւններն :

Մտաջակտն Գաղղիոյ էպոյթիւնը տաղա-
լով և պատերազմի պայմաններն փոխող դէպքե-
րը իմանալով՝ ընական էր որ պիտի աշխատէր .
բաց իր դիմաւորական պարտաւորութիւններն ա-
մենէն աւելի ղինքը պիտի ստիպէին որ բոլոր սեպ-
տեմբեր ամսուան մէջ մէկգլխի թաղուր այն անդոր-
ձութիւնը որով թշնամին կարող եղաւ առանց
անհանդիստ ըլլալու իր պաշարման գունդերն ըստ
ամենայնի կազմակերպել :

Կառավարութիւնը ինչ եղանակաւ ալ որ ըլ-
լար , զօրաբանակն պէտք էր որ մնար ու պատե-
լալով :

Որովհետեւ մարալխան զիտէր որ իր պաշարը պիտի լմննայ, պարտաւոր էր ուրեմն զանոնք չատընելու մեծ հող տանիլ, մանաւանդ որ պարտաւորութիւն ալ ունէր զանոնք տնտեսելու. և թէ Մէցէն բնաւ չմեկնիլ որոշած էր, պէտք էր ուրեմն զօրաւոր պաշտպանութեան մը գլխք պատրաստել:

Ահա այս էր իր բռնելիք բնթացքը և թէ կուզէր որ թէ իր պատիւը չարատուօրի և թէ հայրենեացը օգուտ մ'ըլլայ: Ընդհակառակն կը տեսնենք որ մարալխան փոխանակ այս ընթացքին հետեւելու, նոր կառավարութեան կազմութիւնն իր դունդերուն իմացընելէն վերջը, առանց ամենափոքր դիտողութիւն մը յայտնելու թշնամւոյն տեսակցութեանցը ակնաջ կը կախէ, զՊ. Բէնիէ կը հիւրընկալէ, անոր բերած առաջադրութիւններն կընդունի, և անոր հետ անկեալ իշխանութեան վերահաստատութեանը նկատմամբ խորհուրդներ կընէ, և որ աւելի զարմանալին է, մարալխան իր կացութեան վախճանին հասնիլը տեսնելու ստիպուածի պէս, իր զօրաբանակին տակաւին քանի օր դիմանալու կարողութիւն ունենան իմացընելու չի վախնար, և իր կացութեան վերջին օրն որն ըլլալը ճշդութեամբ կը յայտնէ:

Մարալխան իրեն ունեցած ուտելիքն տրնտեսելով կրնար այդ պայմանաժամը երկարել. փոխանակ այսպէս ընելու, մի միայն քաղաքական դեր մը խաղալու որոշուած իր զօրաբանակը աղէկ վիճակի մէջ պահելու կղբաղի, և զանի առաջին նշանտուութեան դուրս ելնելու կը պատ-

րաստէ: Իր միտքը բոլորովին այնպիսի առաջադրութեանց ենթակայ կընէ, որոյ իր վստաւախութիւնն միայն զինքը կը վարէ, և հետեւաբար իրեն պատրաստուած որոգայթներն չի կրնար նշմարել:

Մարալխան անդամ մը թշնամւոյն հետ խօսակցելու սկսելէն վերջը՝ բնականաբար այնչափ չի վախաքելով յարաբերութեան մանել նոր կառավարութեան հետ որ իր անձնական դիտումները չէ ուզած ընդունիլ, Գաղղիոյ ներքնոյն հետ հաղորդակցելու համար իրեն ներկայացած բազմաթիւ առիթներն կը մերժէ, և իր զօրաբանակին վախճանը որոշելու համար թշնամւոյն իրեն տուած տեղեկութիւններն ընդունիլը նախապատիւ կը համարի:

Բայց և այնպէս ժամանակը կը լրանայ, պաշարներն կսկսին լմննալ, յանուն կայսրուհւոյն իշխանութիւն ունեցող գործակատարը վերադառն չեքելիք, Պուրպաքի զօրապետը լուութիւն կը պահէ, ուսկից կը հետեւի թէ կայսրուհին եղածն չընդունիր, և թշնամին մնացած պաշարին քանակութիւնը իմանալով՝ հաղորդակցութիւններն կը դատրեցընէ: Այս ամենաօրջ կացութեան առջև փոխանակ իր ճանչցած կառավարութեան մտադրած աղբու դիտաւորութիւններն իմանալ ջանալու իր արգելանքին մէջ առաւել եւս կամրանայ, և առանց թշնամւոյն լուութեան վրայ կասկածանայ և երկիւղի մէջ մանելու՝ կը ջանայ իր անոր հետ ունեցած յարաբերութիւններն նորոգել, և այս անգամ իր տեղակալներն ու զօրաբանակն ալ իրեն հետեւող ըլլալու կըստիպէ:

Բայց եթէ մարաշախտին զօրարանակն լիստ աղէկ կազմակերպեալ վիճակ մ'ունենալով՝ նորա ձեռքին մէջ ահագին զօրութիւն մը համարուած ժամանակ՝ մարաշախտին ձեռնարկած դաղանի փորձերն ապարդիւն մնացին, զօրարանակին հիմակուան տկար վիճակին մէջ մարաշախտն ինչ յաջողութիւն կրնար յուսալ անկէ :

Յաջորդ մասին մէջ պիտի տեսնենք թէ այն հաղորդակցութիւններն ինչպէս ի դերու ելան, և թէ ինչպէս մարաշախտն փոխանակ իրեն պաշտօնին վայելուչ պատուովը տկարանալու՝ անօգուտ ընթացքներով կորսնցուց այն ժամանակը զոր պարտաւոր եղած էր իր զօրարանակին նրութակներն եղծմանը զոհել :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՆՁՆ ԱՏՈՒՈՒԹԻՒՆ

(1870 ՀՈԿՏԵՄԲԵՐ 7 ԷՆ ՄԻՆՁԵՒ 29)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՏԵԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐ 10Ի

Կարգիւնն է պիտի հարկիւնն : Մարաշախտն այս անգամին համարեալ նրանտարածելէն իրենց կարծիքն ինչպէս :— Բէնիէ Պաղէն մարաշախտին քովէն մեկնած ասանն, խոստացեր էր անոր սեպտեմբեր 30 ին իսրեն պատասխան մը հասցընել : Այս պարագան Բէնիէի հրատարակած տետրակին մէջ կը կարգանք . վերջն ալ իր ձեռքովը հաստատեցինք :

Այս եղելութիւնը՝ որ ղինուորական փոխ-վերատեսուչ Պ. կաֆիօյի վկայութեանը յարմար կուգայ, բաւական է Պաղէն մարաշախտին հսկտեմբերի առաջին օրերուն մէջ ունեցած վարմունքը բացատրելու համար : Յիշեալ Պ. կաֆիօ յայտնեց թէ երբ ինքը սեպտեմբեր 28 ին մարաշախտին ուշագրութիւնն հրաւիրել ուզած է պաշարներու մօտալուտ սպառմանը և այս մասին վերջապէս որոշում մ'ընելու կարեւորութեանը վրայ, «Մարաշախտն, կրէ յիշեալ անձը : իր խորհրդարանի գլխաւոր Պօայէ զօրապետին հետ պիտի զօրնոր որ

ժամանակ դառնալը հաւանական երևելուն վրայ խորհրդակցեցին վերջը՝ Պոսյէ զօրապետին պատասխանին վրայ, ինձմէ հոկտեմբեր 1 ին զօրաբանակի ձեւերուն համար երկու օրուան դարձ հայթայթել խնդրեց : Հոկտեմբեր 3 ին, զօրաբանակին իր չորս օրուան պահեստի ուտելիքն լրացրին լու հրաման առաւ, և հոկտեմբեր 5 ին զօրաբանակի դուռերուն առժամանակեայ շարժական հիւանդանոցներուն մէջ գտնուած հիւանդներն Մէց տեղափոխել հրամայուեցաւ :

Սոյն վկայութիւնն երբ մարալախտին կարդալ տուինք, մարալախտն պատասխանեց, որ Բէնիէի վերադարձէն բնաւ տեղեկութիւն մը չունէր, և միայն Պուրպաքի զօրապետին վերադարձին կրօնատէր, և հաւանականաբար *Ալ-Կոնստանտին* ալ յիշեալ զօրապետին տուած կըլլայ :

Արդ՝ որովհետեւ Պոսյէ զօրապետն վկայեց թէ ինքը Բէնիէէն իմացած էր որ կայսրուհւոյն քով դրկուած զօրապետն ալ ետ չի պիտի դառնար, ուստի *Ալ-Կոնստանտին* ալ Պուրպաքի զօրապետին չէր կրնար վերաբերիլ, այլ Բէնիէի :

Բէնիէ ալ իր կողմանէ իմացուցած էր որ տեպտեմբեր 24 ին մարալախտին հետ ըրած երկրորդ տեսակցութեանը ատեն, անոր ըսաւ որ մինչև վեց օր Պ. տը Պիսմարքի պատասխանն իրեն իր դրկէ, և եթէ ութ օրէն վերջը բնաւ պատասխան մը չընդունի, անանկ պիտի համարուի, որ ինքը ամենեւին Մէց այցելութիւն չէ ըրած : Ուրեմն մարալախտը հոկտեմբեր 1 ին Բէնիէի պատասխանիմ կրօնատէր :

Հոկտեմբերի առաջին օրերը ձեռք առնուած միջոցներն չէթէ սաստիկ զօրութեամբ՝ այլ պարզ կերպիւ դուրս ելնելու պատրաստուելու նպատակաւ դործադրուած էին : այնպէս որ այս ելքը թշնամոյն հաւանութեամբն ու անոր հետ տեղի ունեցած հազորդակցութեանց համեմատ պիտի ըլլար :

Մարալախտին սաստիկ զօրութեամբ դուրս ելնելու ստոյգ առաջադրութիւն մը չունենալն կը յայտնուի նաև իր այն բացորոշ խօսքերովն զորս իր տանն և իններորդ հարցաքննութեան ատեն խօսեցաւ. « Սէտանի աղէտքէն ետեւ իմ դուրս ելնելը անկարելի դատեցի. վասն զի թըշնամին մեծ զօրութեամբ զմեզ պաշարած ըլլալուն համար կրնար ըլլալ որ զօրաբանակն իր ուղեւորութեան երկրորդ օրն կամ ցրուէր և կամ թուլանար » :

Մարալախտն Բէնիէի վրայօք լուրեր առնելու պէտք մը չունէր, և անոր նկատմամբ իր աչքին առջեւ դրուած ակնկալութիւններն պէտք էին ջնջուիլ և աւելի տխուր իրականութեանց փոխանակուիլ :

կայսրուհւոյն և Պ. տը Պիսմարքի լուրերն կը յայտնէր որ Բէնիէի միջոցաւ եղած հազորդակցութիւններն ի դերերս ելած էին : Այս միջոցին մարալախտն տակաւին կրնար ուղիղ ճամբան դտնել : Ամէն ինչ կը հրամայէր իրեն Ազգային Պաշտպան կառավարութեան հետ յարաբերութեան մտնել. խողովոյ միութիւնը մօտալուտ պէտք էր ճանչել, վասն զի ընտրելոց հրաւէր

կաղդացու իլը հովտեմբեր 10 ին իմացուեցաւ դա-
 , առին մէջ : Ժողովը միայն այս մեծ յուզման մէջ
 իրաւունք ունէր խաղաղութիւնն ու իր պայման-
 ները սրտել : Արդ՝ քանի որ կը տեսնենք թէ մա-
 բաւական աշխարհին ներկայացուցիչներուն դի-
 տատարութիւն յայտնելն առաջ , նոր հաղորդակ-
 ցութիւններ բանալու չորձ կը փորձէ : ուրիշ մեկ-
 նութիւն չենք կրնար տալ իր այս վարմունքին ,
 եթէ ոչ՝ բուն խի իր անձնական օգտին նկատ-
 մամբ հաշիւներ կընէր պիտի ըսենք : Բէյմսի
 լրագրաց յօդուածներն իրեն յայտնապէս իմա-
 յուցած էին թշնամի այն դէմ բուն իր քաղաքա-
 կան գիրքը , այդ գիրքը մտաւ լալտան չէր ուղած
 կըրանցընէ :

Հովտեմբեր 7 ին՝ մտաւ թատան Բոֆինիէր զօ-
 րապետէն հետեւեալ նամակն ընդունեցաւ :

« Իր պարտաւորիմ՝ ծանուցանել Ձեր վսեմաւ ,
 « թեան Մէջ քաղքին և անոր շտեմարաններուն
 « մէջ գտնուած ուտելեաց փիճակը :

« Վաղաքական իշխանութիւններն ինձ կիմտա-
 « ղընեն որ ասք օրուան համար միայն ցորեն
 « ունին :

« Բաղքին շտեմարաններուն մէջ ալ այս առ-
 « տուրնէ ի վեր ութը հարիւր երեսուներկու հա-
 « զար չորս հարիւր եօթանասուն և ինը հազի բա-
 « ժին միայն կայ , արդ՝ հարիւր վաթսուն հազար
 « զօրք ունինք , բռել է որ միայն հինգ օրուան
 « հաց կայ :

« Եթէ Ձեր վսեմութիւնն յարմար կը դատէ
 « հացի բաժինն երեք հարիւր կրամի իջեցընէլ ,

« կրնանք դեռ ութը օր ալ ուտել , բայց և այն-
 « պէս մի ըստ ինն ալ հաղար կրամ՝ ընելով : Ես
 « տոկաբաժ եմ՝ ի մեծ ցաւ սրտաւ , մարտիրոցնե-
 « րու պահեօտի պաշտին դորձածել :

« Պէտք է յաւելուլ նաև որ քաղաքը օրը
 « գրեթէ երեք հարիւր յիսուն կենդինար ուտե-
 « լիք կը սպառէ : Այս ուտելիքներն մերօնց հետ
 « միացընելով կրնանք առ առաւելն օր մ'ալ շա-
 « հիլ : Երրորդ գունդն գրեթէ երկու հարիւր կեն-
 « դինար ալիւր ունի :

Ասոր վրայ ալ ամենեւին տարակոյտ չէր մնար ,
 Հաղորդակցութիւններն դադրած էին , ուտելիքը
 կը պակսէր , զօրաբանակին վիճակը կը ծանրա-
 նար , ուտալի եթէ քիչ մը սղատուէր , յուսահա-
 տութիւնը պիտի տիրէր :

Այս սոսկալի պարագայիս մէջ , մարալտան
 անհրաժեշտ դատեց գունդերու հրամանատարնե-
 րուն ու գլխաւոր զօրապետներուն կարծիք խորհ-
 րել հետեւեալ գրութիւնն ուղղելով անոնց :

« Պան-Մէն-Մարթէն , 8 հովտեմբեր
 « Ահա կը մօտենայ այն վայրկեանն ուր Հու-
 նոսի զօրաբանակն այնպիսի դժուար փիճակի մը
 մէջ պիտի իյնայ որուն նմանք կարելի է մինչեւ
 յայտօր բնաւ դաղրիական բանակ մը ունեցած չէ :

« Մեզմէ հեռու տեղուանք տեղի ունեցած
 և մեզի ալ մեծ վիշտ պատճառած զինուորական
 և քաղաքական ծանր դէպքերն ոչ մեր բարոյա-
 կան զօրութիւնը սարսեցին , և ոչ ալ մեր զինուո-
 րական վարկը արատաւորեցին : Այլ սակայն քալ
 գիտէք որ արտաքին դէպքերու պատճառաւ մեր

մէջը տիրած չփոթութեանց վրայ օր ըստ օրէ ուրիշ կերպ չփոթութիւններ կաւելնան. այսինքն թէ՛ ուտելիքն կըստի պակսիլ, և խիստ կարճ ժամանակի մը մէջ բոլորովին պիտի լմնայ :

Մեր հեծնալու և բեռ կրելու ձիերուն կերակուրն ալ այնպիսի խնդիր մ'եղած է որուն լուծումը օր ըստ օրէ աւելի անհաւանական կըլլայ : Մեզ համար դարման մ'ընելու յոյս չկայ, ձիերն պիտի փաստուին ու մեռնին. այս ծանր պարադաներուն մէջ, ներկայ կայութիւնը ձեր աչաց առջև դնելով՝ կը հրաւիրեմ զձեզ որ իմ զգացմանս հաղորդ ըլլաք :

« Գիտաւոր զօրապետի մը պարտքն է այսպիսի վիճակի մը մէջ իր իշխանութեան տակը գտնուած դուռներու հրամանատարներէն բան մը չի պահել, և անոնց կարծիքն ու խորհուրդները իմանալ : Արդ դուք որ ինձմէ աւելի անմիջական յարաբերութիւն ունիք դունդերուն հետ, գիտէք անշուշտ թէ անոնցմէ ինչ կըսպասուի և ինչ կը յուսացուի. ուստի այս մասին որ և է որոշում մը ընելէս առաջ՝ ուզեցի ներկայ դրութիւնս առ ձեզ ուղղել, որով կը խնդրեմ՝ ձեզմէ որ ներկայ վիճակիս վրայ լաւ և խորին քննութիւն մը ընելնէք և ձեր զօրապետացը հետ խորհրդակցելնէդ վերջը ձեր անձնական կարծիքն ու պատճառաբանեալ որոշումն ինձ գրով հաղորդէք :

« Յիշեալ տեղեկագիրն ձեզմէ ընդունելէս վերջը՝ որուն որչափ կարեւոր ըլլաւ դիտէք, կըրկին զձեզ մեծ խորհուրդի մը պիտի հրաւիրեմ, և այս խորհրդով վերջնական որոշում մը պիտի

տամ Ն. Վ. կայսեր իմ հրամանատարութեանս յանձնած զօրաբանակին նկատմամբ :

« Կադաշեմ ձեզի որ ներկայ գրութիւնս ընդունած ըլլալնիդ ինձի իմացընելով հանդերձ՝ քառասուն և ութը ժամու մէջ իմ՝ ձեզմէ խընդրած գրաւոր տեղեկութիւններս հաղորդէք ինձ » :

Մարաշախտն յիշեալ գրութեան հետ զրկեց նաև Քօֆինիէր զօրապետէն ընդունած նամակն :

Մի և նոյն օրը՝ հոկտեմբեր 7, Մէջի խել մը բնակիչներն իմացընելով որ Մեծ և Փոքր Թաբրի տգարակներն, Մէն-Բէմի և Պէլլիլի ցորեքի և խոտի բաւական պաշարներ կը գտնուին, մարաշախտն հրամայեց որ զանոնք հաւաքեն : Թեթեւագէնք, հետի որսորդք և պահապան զօրաց ընչպէս նաև Յրդ գունդի զինուորներն սոյն պարագայիս մէջ խիստ նշանաւոր արագութիւն մը և քաջութիւն մը գործադրեցին : Մարաշախտն իր յիշատակարանին մէջ կըսէ որ այս պատերազմն աւելի զօրաբանակին պատուոյն քան թէ անկէ սպասուելիք արդեանց համար մղած էր. « Բայց և այնպէս, բնաւ, այս պատերազմէն օգուտ քաղելով կրնայի դաշտավայրը փակել, եթէ 3 ըրդ և 4 ըրդ գունդերն երկու ափանց վրայ գտնուած ըլլային : Կէտ օրէն վերջը՝ ընկերն ու պահապան սմբաձիդ զինուորաց առաջին վայտն բերել տուի, որպէս զի յառաջապահ գտնուած թեթեւագէն զինուորաց օգնական ըլլան : Անգամ մը վայրկեանք որոշածիս պէս՝ կրնայի բոլոր գունդերն առանց բեռի իրարու միացընել, վրաններն կանգուն մնալով, թշնամին խաբելու համար » :

Առանց յիշելու մարտիտիտին Մէջէն դուրս ելնելու նկատմամբ ցուցուցած անկարելիութեան համար յառաջ բերած յիշեալ բացօրոյ յայտնութիւնը, խիտ դժուար կըլլայ իմանալն թէ այսպիսի դուրս ելնելու դործողութեան մը զգուշաւոր անաջողութիւնն՝ դունդերուն իրենց մտխաղներն ձգելու համար տրուած հրամանին հետ ի նչպէս կը համաձայնի: 3րդ և 4րդ դունդերուն զրկուած հրամաններն՝ ստորին Մօզէլի գաշտովայրին մէջ բերուելիք խտրը պաշտպանելու նպատակաւ ձեռք առնուելիք տրամադրութիւններն միայն կը յայտնեն: 3րդ դունդն Նիւթիէն չի պիտի անցնէր, ոչլ հրաման առած էր անկէ Մապրօյ երթալ, որպէս զի արդիւ թշնամին հոն ամրանալէ և իր թնդանօթներովն միշտ դիմադրէ: Իսկ 4րդ դունդն՝ պարզապէս վերնիօլի և Ղէսիի անտառները կենալու հրաման առած էր. այս էր իրեն յատկացեալ պաշտօնն. վերջապէս պատերազմին վրայօք եղած տեղեկագրոյ մէջ՝ նոյն օրը զգուշաւոր կերպիւ Մէջէն դուրս ելնելու համար խնդիր բացուած ըլլալն յայտնող բառ մ'անդամ չկայ:

Հոկտեմբեր 7ի պատերազմը վերջին անգամ յայտնեց թէ մարտիտն ինչ արդիւնք կրնար քաղել իր զորականներուն կարծիքէն, եթէ զանոնք ի խորհուրդ կուէր: Այս վերջին անգամն եղաւ որ լաւագոյն վիճակի մը արժանի գըտնուող այս քաջ զօրաբանակն թշնամույն մօտեցաւ, և թէև պարագաներն անյաճող ալ էին, սակայն կարող եղաւ դարձեալ կոխոտել զանի

մինչև այն վայրիկներն, ուր իրեն հրաման և կա իր բանակաանդինները քաշուելու:

Ասկէց կը հետևի ոչ զօրաբանակն կարող էր մեծ դործ մ'ընելու. կրնար արդեօք թշնամույն դունդերէն անցնիլ Գաղղիոյ ներսերը երթալու համար: Այս մասին միայն ևն թաղութիւններ կրնանք ընել. այլ սակայն այսպիսի դործողութեան մը յաջողութիւնը թէև տարակուսելի ալ ըլլար, պէտք էր վորձ մ'ընել, որոյ հետև քանի մ'օր մնացեր էր որ զօրաբանակն իր ձիերն կորսնցնելով և իր կրելիք նեղութիւններովն պիտի տկարանար. ուստի չէ թէ միայն յաջողութեան ամեն բաղբ, այլ և պատուաւոր պատերազմի ամեն կարելիութիւն կ'անհետանային, այնպիսի որ ժամանակը ստիպողական էր:

Գոնդերու հրամանատարն զորանման իր զորանմանը: — Գեկտեմբեր 10ին մարտիտն իմանալով դունդերու հրամանատարները, զօրաբանակին գլխաւոր վերատեսուչ Պան-Սէն-Մարթէն հաւաքեց ի խորհուրդ:

Թէ ինչ պայմաններով բացուեցան յիշեալ խորհրդայ վիճաբանութիւնները, և ինչ կարծիքներ ու որոշումներ յայտնուեցան, պէտք է որ բացայայտենք:

Գոնդերու հրամանատարներն բոտ հրաւիրանայ մարտիտն զօրաբանակին կացութեան վրայ իրենց կարծիքն յայտնելին, զորո համառօտիւ կը յայտնենք հոս:

Լը Պէօֆի մարտիտն յայտնեց թէ պէտք է պատերազմիլ:

Լատմիրօլ զօրապետն յայտնեյ թէ իր գունդը մարալախտին ունեցած խիտ բարձր գիտաւորութիւններն գործադրելու պատրաստէ:

Քանրօպէր մարալախտն ու Տէվօ զօրապետը բախն թէ Մէջէն դուրս ելնելն անօգուտ փորձ մ'է, այլ մինչև որ ուտելիքը լմնայ, պէտք է դիմադրութիւնն երկարել. և եթէ անձնատուութեան պայմաններն զօրաբանակին պատուոյ բզգացումներն գոհ չընեն, այն ատեն պատերազմելով դուրս ելնել:

Քօֆինիէր զօրապետն կրտէ թէ զօրաբանակին ուղեորութիւնը աղէկ չըլլար. հեռաւոր տեղեր պաշար հայթայթելն անկարելի է:

Յիշեալ զօրապետն առանց Լը Պէօֆի մարալախտին նման ազգու կարծիք մը յայտնելու կիմաղքնէ որ անկարելի կը թուի քանի մը քաջասիրտ անձանց թշնամոյն հետ համաձայնիլ զօրեղ գործողութեան փորձ մը փորձելէ առաջ:

Իսկ Ֆրօսար զօրապետն կը յայտնէ որ անյապաղ հաղորդակցութիւն բանալ պէտք է այսպիսի կազմակերպեալ և ընկերական բարեկարգութիւնն պահպանելու պիտանաւորութեամբ իր միջամտութիւնը խնդրուած ժամանակ բոլորովին կազմ և պատրաստ գտնուող զօրաբանակ մը պահպանելու համար:

Ատեանը չուզեր գունդերու հրամանատարաց յայտնած այլ և այլ կարծեաց վրայ դիտողութիւններ ընելով վիճաբանութեան ներքեւ ձգուել. բայց և այնպէս կարծիք մը կայ որոյ նկատմամբ չուզեր լռութիւն պահել:

Ֆրօսար զօրապետն կրտէ որ Մէջ քաղաքը Մօնթինելի կողմէն պաշտպանելն այնքան անկարելի է որ սոյն քաղաքը օրինաւոր սպայից ըսածին նայելով՝ զօրաբանակին օգնութիւնը կորսնցուցածին պէս ութ օր չի կրնար տոկալ:

Այս մասնաւոր անձէ մը յայտնուած և իր վկայութեամբն ալ հաստատուած կարծիքը՝ ապագային մէջ զօրաւոր քաղաքներուն հրամանատարացը թուլութիւնը չմեղադրուելու համար կըրնար բուսական մեծ փաստ մ'ըլլալ:

Եթէ Մէջ, ինչպէս ըսաւ Ֆրօսար զօրապետն ութ օրէն աւելի չէր կրնար տոկալ, ուրեմն թող ջուրընէ թէ այսուհետև որ քաղաքէն կարելի կըլլայ երկարատև դիմադրութիւն մը սպասուիլ. հետեւաբար մեծ վտանգ կայ երբ թողունք որ անոնք յիշեալ կարծեաց ենթակայ ըլլալու դատասարտուին:

Այս մասին սոյն ծանուցադրոյն մէջ խրթին վիճաբանութեան մը մէջ մտնելու տեղը չըլլալով արդէն բացատրուած Սթրազպուրկի օրինակը յիշելով գոհ կըլլածք, որն որ առանց պատնիշափակ ըլլալու քառասունըհինգ օր դիմացաւ, և պաշտպանութեան սահմանը չի կրցաւ դանել:

Եթէ Պաղէն մարալախտն ու Մէջի գլխաւոր հրամանատարը ակիղբէն ի վեր իրենց պարտաւորութիւնը կատարէին, առաջինը իր զօրաբանակըն Գաղղոյ ներքերը տանելով, և երկրորդը՝ Մէջի չրձակոյքը գտնուած պաշարներն հաւաքելով, Մէջ քաղաքը կրնար մինչև դինազադարում

ասկալ, և հաւանական է որ Լօրէնն ալ գեա Ղաղղիայ ձեռքը կը մնար:

Մէջ քաղաքը՝ իր բաւական պարսպապատ շրորքը և իր պատերազմական և հայրենասէր բնակիչներովը պաշտպանուած, ուղղմամբ քրոյ լնցուն, և ի հեռու որ այնպիս մարտիցներով պահպանուած զորս քաղաքը ունեւորութեան ենթարկելէն առաջ պէտք էր բարձրացնել, վերջապէս իր շրջապատին տուրի նա մասնատուութեան ինքն իր կողմէն վտարան, Գորմմմմմմմմմ և ճարտօնի պէս անձանց կանխատեսութեամբ շինուած գործքերով ծածկուած բլալուն պատճառաւ կրնար Մթրաղպուրիի հաւատար գիւնադրութեամբ թշնամոյն կրակին դիմանալ: Կրնար նաև թշնամոյն ամեն յորձարիմանց ճակատ առ ճակատ դէմ դնել, եթէ այսպիսի ձեռնարկութեան մը մէջ որն որ տարակուսելի է, այնպիսի դիմադրութիւն մը բնել պէտք ըլլար որով իր ուսելիքն լիննային: Ահա այս կէտը պէտք է լաւ քննենք, վասն զի ճշմարտութիւնն հան է:

Գունդերու հրամանատարներն իրենց այլ և այլ կարծիքներովն անոնցմէ մէկն որոշելու ազատութիւնը իրենց չէին սահմաներ, ընդհակառակն անոր կը թողուին:

Իբր գլխաւոր զօրապետ՝ մարալախան և ոչ թէ իր խորհրդոյն կը վերաբերի այս այլ և այլ առաջադրութեանց մէջէն վիճակի պիտոյից աւելի լաւ յարմարածն ընտրել: 1863 հոկտեմբեր 13 ի կանոնադրութիւնն (յօդ. 256) աւելի որոշ խորհուրդ մը կուտայ այս մասին հետեւեալ խօսքն.

բով. « Գլխաւոր հրամանատարը ժողովոյ առաջարկութիւններն մտիկ ընելէն և ժողովը վերջանալէն ետեւ՝ երբ կը տեսնէ որ ժողովոյ մէջ յայտնուած ամենէն ազդու կարծիքն ալ բացարձակապէս անգործադրելի չէ, նոյն կարծեաց համաձայն՝ իր պարտաւորութիւնն ու իր անձնական պատասխանատուութեան իրեն առաջադրած գիտաւորութիւններն կը գործադրէ »:

Յիշեալ յօդուածը կ'պահանջէ ուրեմն որ այսպիսի խորհուրդներ միայն կարծիք յայտնեն: Մտաւախան՝ յանուն խորհրդոյ ընդունուած որոշումներն կարգադրելով՝ իր տեղակալներն ալ յայտնապէս իրեն անձնական պատասխանատուութեանը հաւատար պատասխանատուութեան ենթարկել կը ջանայ: Բայց ատենար բնաւ չընդուներ զայս, և յիշեալ խորհրդոյ մէջ կարգադրուած որոշմանց համարը միայն մարալախուն կը պահանջէ:

Այն վայրկեանէն ուր Պաղէն մարալախուն ձեռք առնուելիք որոշմանց ընտրութեան բնութիւնը վրայէն նետել կը ջանար, նոյն խորհրդոյ մէջ յայտնուած այլ և այլ կարծեաց համար վիճարանութեան չի մտած, ամեն ինչ կը հրամայէր գեթ իրաց ճիշդ վիճակը գունդերու հրամանատարներուն իմացընել:

Գլխաւոր զօրապետի մը պարտքն է, կրտէր նա իր հոկտեմբեր 7 ի գրութեան մէջ, այսպիսի պարագայի մը մէջ իր իշխանութեան տակ զբտնուած գունդերու հրամանատարներէն բան մը չծածկել: Բայց և այնպէս իր այս ըսածը կատարած չէր, և խորհուրդն իր վիճակէն վրայ կու-

տարեւապէս անգէտ էր, անդիտութիւն մը՝ որուն վրայ անկասկած ըլլալն մարաշլիստն ինք իր խօսքովը յայտնած էր:

Արդէն տեսանք որ մարաշլիստն օգոստոս 26 ի խորհրդոյն մէջ ալ իր տեղակալներէն ծածկած էր բոլոր այն կերպ պարագաներն որոնք կրնային պատերազմական դաշտը ելնելու մասին իրենց վրայ աշխոյժ մը բերել:

Հիմայ պիտի տեսնենք որ հոկտեմբեր 10 ի խորհրդոյն մէջ ալ մի և նոյն տրամադրութիւններն ունեցած է:

Խորհուրդ հոկտեմբեր 10 է: — Ժողովոյ տեղեկագիրը այս մասին զմեզ լուսաւորելուն համար՝ զայն ամբողջ հոս կը հրատարակենք:

Պատերազմական Խորհուրդ 1870 հոկտեմբեր 10 է

« 1870 հոկտեմբեր 10 ին կէս օրէն երկու ժամ վերջը՝ Հոնտոսի բանակին գլխաւոր հրամանատար մարաշլիստն՝ մարաշլիստներն ու զօրաբանակի դունդերուն հրամայող զօրաբանակի զօրապետներն, հրազինուց հրամանատար զօրապետը, Մէջի գլխաւոր հրամանատարը և զօրաբանակին գլխաւոր վերատեսուչը հաւաքեց:

« Քառասունեութը ժամ յառաջ՝ մարաշլիստը վերը յիշուած բոլոր անձանց չրջաբերական գիր մը զրկելով զօրաբանակին վիճակը անոնց իմացուց, և յայտնեց նաև որ մեր ունեցած հացն ութ օրէն աւելի չի կրնար գիծմանալ, և թէ՛ հեծնելու ու բնու կրելու ձիերն կերակուր չունենալ:

նուն համար պիտի կորսուէին: Հրաւիրած էր զանոնք որ իրենց իշխանութեան տակը գտնուած զօրաբանակի զօրապետաց կարծիքներն ընդունելով՝ իրենց անձնական կարծեացը հետ մէկտեղ գրով իրեն իմացընեն:

« Պաղէն մարաշլիստն զօրաբանակի վիճակին գլխաւոր պարագաները յայտնելէն վերջը յաւելցուց նաև որ թէպէտ ինքը մայրաքաղաքին հետ հաղորդակցութեան մտնելու համար փորձ փորձած է, բայց կառավարութեան վրայօք բնաւ պաշտօնական լուր մը հասած չէ իրեն, և թէ՛ Հոնտոսի զօրաբանակին օգտակար յարձակում մը ընելուն համար գործող գաղղիական զօրաբանակ մը գտնուիլն բնաւ իրեն ծանուցուած չէ:

« Մէջի գլխաւոր հրամանատար Պ. Քօֆինիէր զօրապետն ու զօրաբանակին գլխաւոր վերատեսուչն հրաւիրուեցան որ գտնուած ամեն կերպ ուտելեաց վերջնական հաշիւն տան: Այն ատեն իմացուեցաւ որ ամեն երեւակայելի ջանքերն ընելով, քաղքին բոլոր ուտելիքներն զօրաբանակին ուտելեացը հետ խառնելով, հացի առօրեայ բաժինն երեք հարիւր կրամի ինկցընելով, բնակիչներուն ալ օրական բաժին սահմանելով, մարտկոցներուն պահեստի ուտելիքն ալ սպառելով և ալիւրներու մաղուած քին ալ որոշեալ ամենատուրին գին մը յատկացընելով՝ առանց մարդոց առողջութիւնը վտանգի ենթարկելու կարելի է մինչև հոկտեմբեր 20 ալ ապրիլ, մարդոց մախաղներուն մէջ գտնուած երկու օրուան պարփմամբ ալ մէջը ըլլալով:

« Ձիւ մի բաժինն ալ նախ և առաջ վեց հարիւր կրամի պիտի բարձրանար, և մինչև եօթն հարիւր յիսուն կրամի ելնելով՝ բոլոր ձիերն իբր մորթուած պիտի նկատուէին, վասն զի անկարելի է զանոնք ուրիշ կերպով կերակրել եթէ ոչ գրեթէ երեւակայական արօտով մը, և որով մահը այս կենդանեաց վրայ զարհուրելի կերպիւ կը յառաջադիմէր:

« Պ. Քօֆինիէր զօրապետն վերջը յայտնեց որ քաղքին մէջ առողջական վիճակն ծաղրապէս փաստուած էր, որչափ տասներկինը հազար վիրաւորեալ կամ հիւանդ հոն դտնուելուն, նոյնչափ դեղորայք, պառկելու և պատասպարուելու տեղուանք, և բուական բժիշկ ալ չի գտնուելուն պատճառաւ: Գլխաւոր բժիշկներուն վկայադիրներն կը հաստատեն որ հիւանդանոցները գրլխաջեր մը, ծաղիկը, թանջախտն ու ուրիշ տարաւիտիսիկ հիւանդութիւններն մուտ գտնելով քաղքին մէջ տարածուիլ կը սկսին:

« Քաղքին բնակիչներն խնայողաբար կերուած կերակուրներէն տկարանալով՝ այս կերպ մահացու հիւանդութեանց ենթակայ կըլլան:

« Իր հաստատեն թէ բոլոր հիւանդանոցներն անհնարին կերպիւ լի են, և թէ երկու հազարի մօտ հիւանդ կամ վիրաւորեալ ալ տուններն ընդունուած են, և ասոր վախճանը այս է որ եթէ կրկին այսպիսի բազմաթիւ վիրաւորեալներ քաղաքը բերուին, անոնց համար պառկելու տեղ գրտնելն անկարելի ըլլալէն զատ հասարակաց առողջութեանն ալ անմիջական վտանգ յառաջ պիտի գայ:

« Պատերազմական Խորհրդոյ բոլոր անդամներն մեր ուտելեաց կացութիւնը և առողջական վիճակն խմանալէն վերջը՝ անցան զինուորական կացութեան քննութեանը:

« Կ. Վսեմ. զօրաբանակին վեցերորդ գնդի հրամանատար Պ. Քանթալէր մարալխտին, Մէցի գլխաւոր հրամանատար Պ. Քօֆինիէր զօրապետին, կայտերական պահապան զօրաց առժամանակեայ հրամանատար Պ. Տէլօ զօրապետին ծանուցագիրներն խորհրդոյն առջև կարդացուելով զինուորական կացութիւնն հետեւեալ խնդիրներով համառօտուեցաւ.

« 1⁰ Զօրաբանակն՝ մինչև որ ուտելիքները լըմնան, Մէցի պարիսպներուն ներքեւ պիտի մնայ:

« 2⁰ Մէցի չընկալայից մէջ գտնուած ուտելիքն ու խոտը Մէց մտոցընելու համար շարունակական ջանադրութիւններ պիտի ըլլան:

« 3⁰ Կարելի է թշնամոյն հետ բտնակցութեան մտնել զինուորական պատուոյն յարմար պայմաններ դաշնադրելու համար:

« 4⁰ Պէտք է զօրաբանակին բաղդը փորձելու համար թշնամոյն գունդերն թափանցել ջանալ:

« Յիշեալ խնդիրներուն առաջինը այո՛ պատասխանուով միաձայն հաւանութեամբ լուծուեցաւ, այն պատճառաւ որ զօրաբանակին Մէցի պարիսպներուն ներքեւ մնալը երկու հազար մարդոցմէ բաղկացեալ թշնամի զօրաբանակ մը կը պահէ հոն, զոր անկարելի է ուրիշ տեղ պահել, և թէ՛ Հռենոսի զօրաբանակին իր գտնուած պայմաններովն հայրենեաց մատուցանելիք ամենա-

մեծ ծառայութիւնն ժամանակ չափիլ և ի ներքուստ պաշտպանութեան համար զորարանակ մը կազմակերպելու պատեհութիւն տալն պիտի ըլլայ :

« Երկրորդ խնդիրն նոյնպէս համահասնութեամբ ոչ պատասխանուլ լուծուեցաւ : այն պատճառաւ որ Մէցի չըլակայքը քանի մ'օր աւելի ապրելու չափ բաւական ուտելիք գտնելն այնչափ հաւանական չէր, պատճառն որ այս կերպով կորուստներ պիտի պատճառէին, և եթէ անյալողութիւն մ'ալ պատահէր, գունդերուն բարոյականը ծանրապէս պիտի վնասուէր :

« Երրորդ խնդրոյն միաձայն հաւանութեամբ այո՛ պատասխանը տրուեցաւ, այլ սակայն այնպէս պայմանադրուեցաւ որ այս բանակցութիւնները միայն քառասունևութ ժամ անցնելէն ետքը վերջանան, որպէս զի թշնամին չկարենայ ըլլալիք դաշնադրութիւնն մինչև մեր պաշարներուն լմննալու օրը կամ կարելի է այն օրուրնէ ալ անդին երկարաձգել :

« Պատերազմական ժողովոյ բոլոր անդամները ազդու կերպիւ կը յայտնեն որ դաշնադրութեան պայմաններն մեր զինուոց և մեզի համար ալ պատուաւոր պիտի ըլլան :

« Զորորդ խնդիրէն հինգերորդ մ'ալ ծագեցաւ : Գ. Քոֆինիէր զօրապետն կը հարցընէ թէ յարաբերութեանց բացուելէն յառաջ աւելի ազել չըլլար մեր զինուոց բաղդը փորձել. քանզի կրնայ ըլլար որ եթէ այս փորձերնիս յաջողի, մեր թշնամոյն հետ ըրած խօսակցութիւններն անօգուտ կըլլան, և կամ թէ մեր ըրած ջանադ-

րութեանց անպտուղ հետեւանքը՝ կրնայ թրջնամուոյն մեր ձեռքով կրելիք կորուստներուն ծանրութեանը հաւասարակչիւս դալ :

« Այս խնդրոյն որոշումը մեծադոյն մաս չի կրցաւ գտնել, և միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ որ եթէ թշնամոյն դրած պայմաններն զինուոց և դրոշակի պատուոյն արատ բերեն, սովամահ ըլլալէ առաջ բունի ճամբայ մը բանալու փորձ փորձուի, մինչդեռ կարելիութիւն ալ կայ քանի մը թնդանօթ լծելու :

« Ուստի միաբանութեամբ որոշուեցաւ,

« 1⁰ Որ կարելի եղածին չափ երկար ատեն զօրարանակն Մէց մնայ :

« 2⁰ Որ քաղքին բոլորտիքը բնաւ որ և է դործողութիւն մը չըլլայ, մտադրուած նպատակին հասնիլն զբեթէ անհաւանական ըլլալուն համար :

« 3⁰ Որ թշնամոյն հետ բացուելիք խօսակցութիւններն քառասունևութ ժամու երկարաձգութենէն անդին չանցնին, որպէս զի զինուորակայել, և ամենուս համար պատուաւոր և բնագունելի պայմանադրութիւն մը հաստատուի :

« Որ եթէ թշնամին մեր պատուոյն և զինուորական պարտաւորութեան զգացման հետ անհամեմատելի պայմաններ դնել ուզէ, զինուորորութեամբ ճամբայ մը բանալու փորձ փորձուի :

« Այս որոշումներն վաւերացուցին և ստորագրեցին :

« Մարաջախտ Քանրօպէր, հրամանատար վեցերորդ գնդին :

« Մարաշախտ Լը Պէօֆ, հրամանատար եր-
րորդ գնդին » :

« Զօրապետ Լատմիրօլ, հրամանատար չոր-
րորդ գնդին » :

« Զօրապետ Ֆրօսար, հրամանատար երկրորդ
գնդին » :

« Զօրապետ Տէլօ, առժամանակեայ հրամա-
նատար կայսերական պահապան զօրաց » :

« Զօրապետ Սօլէյլ, հրամանատար թնդանօ-
թաձիգ զօրաց զօրաբանակին » :

« Զօրապետ Փօֆինիէր, հրամանատար ի Մէջ » :

« Սինուարական գլխաւոր վերատեսուչ Լէպ-
րէօն » :

« Մարաշախտ Պազէն, գլխաւոր հրամանա-
տար զօրաբանակին » :

Յիշեալ արձանագրութեան մէջ նախ և առաջ
ուշադրութեան առնելու արժանի գլխաւոր կէտ
մը կայ Մարաշախտ յիշեալ խորհրդոյ բնաւ չէ
իմացուցած իր Ֆրէտէրիք-Շարլ իշխանին հետ
ըրած փոփոխակի թղթակցութիւնները, Պ. Բէ-
նիէի՝ կայսրուհիին իշխանութիւն ունիմ՝ ըսելով
Պ. տը Պիսմարքի հաւանութեամբ իրեն հետ ըրած
տեսակցութիւնները, Պուրպաքի զօրապետին պաշ-
տօնն ու ուղեւորութիւնը, Աթիէլ զօրապետին
ուղղած գրութիւնը, և անկէ վերջը գերմանա-
կան կառավարութեան և կայսրուհւոյն պահած
լուրթիւնը, որն որ եղած յարաբերութեանց ա-
պարդիւն մնացած ըլլալուն մէկ յայտնի նշանն է,
վերջապէս մարաշախտն բացարձակապէս կը յայտ-
նէ որ ներքնապէս բնաւ հաղորդակցութիւն մը

ընդունած չէ, և թիօնվիլ ու Լօնվի ուտելեաց
մեծամեծ համրարներ գտնուելուն նկատմամբ
կը լուէ :

Գունդերու հրամանատարաց յայտնած դրա-
ւոր կարծեաց առջեւ տարակոյս չկար որ խորհրդ-
դոյ մեծամասնութիւնն կանխաւ իր ձեռքը դի-
մադրութիւնն երկարելու միջոցներ ունենալն կը
իմդրէր. միայն Լը Պէօֆ մարաշախտն անմիջա-
կան պատերազմ մ'առաջարկած էր. Լատմիրօլ
զօրապետն թէև զինուորի մը լեզու գործածած
էր, բայց Մէյյէն դուրս ելնելու փորձոյն մէջ յա-
ջողութեան մեծ վստահութիւն մը հաստատած
չէր : Այս կարծիքը՝ ինչպէս նաեւ Լը Պէօֆ մա-
րաշախտինն ալ, մարաշախտը խորհրդոյն յայտ-
նած չէր. դեռ ամեն վիճաբանութիւն չի բաց-
ուած յայտնի էր որ պէտք պիտի ըլլար յարա-
բերութիւններ հաստատել :

Եթէ Պազէն մարաշախտն նախ և առաջ իր
տեղակալներուն իմացուցած ըլլար որ իր անձամբ
ըրած յարաբերութեանց փորձերն յաջողած չէին,
կրնար ըլլալ որ անոնց միտքն ազդու դիտաւո-
րութեանց մը պէտք չէր : Կրնար ըլլալ որ ի-
մանային թէ միայն մէկ ձամբայ մը կայ փրկու-
թեան, և այն է անմիջական պատերազմ : Հոկ-
տեմբերի 7 րէ օրը զօրաբանակին ունեցած խրոխտ
դիրքը կը յայտնէր որ այսպիսի փորձոյ մը յաջ-
ողութիւնը անկարելի չի պիտի ըլլար. այլ սակայն
մարաշախտն՝ յարաբերութեանց կատարեալ կեր-
պիւ անօգուտ ըլլալն իր բերնէն դուրս ելած մէկ
խօսքովն յայտնելն ետեւ դարձեալ խորհրդօք

յարարեբութեանց մէջ մտնելու պարտաորելուն զբայ՝ խորհրդոյ որոշմանց մահաւիթ հետեւանաց պատասխանատուութիւնն իր վրայ հրաւիրած է :

Պէտք չէ ամենեւին երկարորէն խօսիլ այնպիսի պարագայի մը վրայ, որով կը տեսնուի թէ գլխաւոր հրամանատար մը իր պարտաւորութիւններէն կը շեղի իր իյնանութեան տակը գտնուած զօրաբանակի մը վիճակը որոշելու խնամքը իր տեղակալներուն յանձնելով, և զանոնք այնպիսի յարարեբութեանց պարտաւորելով, որոց պարագիւն ըլլան ինքը կանխաւ դիտէր :

Խորհրդոյ որոշման արդիւնքը : — Այլ սակայն պտեանը կը պարտաւորի խնամով քննել մի քստ միովէ բոլոր այն խնդիրներն զորս մարտավտան իր տեղակալներուն լուծմանն յանձնել է, և անոնց լուծումն որոշող պատճառներուն արժէքը :

Խորհրդոյ արձանագրութեան մէջ կը կարգանք որ զինուորական կացութիւնն հետեւեալ խնդիրներուն մէջ կը բովանդակուէր :

« 1^o Զօրաբանակն պէ՛տք է որ մինչև ուտելեաց ամբողջովին սպառած օրը Մէցի պարիսպներուն ներքեւ մնայ : Այս խնդիրը միաձայն հաւանութեամբ այս պատասխանելով լուծուեցաւ, այն պատճառաւ որ զօրաբանակին Մէց մտալովը հոն 200,000 մարդոցմէ բաղկացեալ թշնամի զօրաբանակ մը արգիլած կըլլանք, և որ Հռենոսի զօրաբանակին իր գտնուած վիճակաւ աշխարհին մատուցանելիք ամենամեծ ծառայութիւնն է ժամանակ չահիլ, և ի ներքուստ պաշտպանողական

բանակ մը կազմակերպելու համար պատեհութիւն տալ անոր » :

Մէցի զօրաբանակին իր երկրին մատուցանելիք ամենամեծ ծառայութիւնը՝ որչափ ալ դժուար ըլլար, թշնամոյն զօրաբանակին մէջէն իրեն ճամբայ մը բանալը չէ՛ր, մինչևեռ դադրիական նոր զօրաբանակներ կազմակերպելու համար սպայից անհրաժեշտ պէտք կար : Իրծաղաչարժ բան չէ՛ ժամանակ չահելու վրայ խօսք ընելը, քանի որ միայն քանի մ'օրուան ուտելիք մնացած է : Կերելի թէ ճշմարտութեան անսալ չէին ուզած, սակայն մարաջխտն՝ որ ամեն բան դիտէր և միայն ինքն էր պատասխանատու, պարտաւոր էր խորհրդոյն սխալմունքն յայտնել. քանի որ չըրաւ. ըսել է որ ճշմարտութիւնը իր ձեռքովը ծածկեց :

« 2^o Զօրաբանակին ուտելիք և ձիերուն խոտ ճարելու համար պէ՛տք է Մէցի չըջակայքը որ և է գործողութիւն մ'ընել : Այս խնդրոյն ալ միաձայն հաւանութեամբ ոչ պատասխանը տրուեցաւ, այն պատճառաւ որ տակաւին քանի մ'օր ալ աւելի ապրելու չափ բաւական պաշար գտնելն այնչափ հաւանական չըլլալուն համար՝ եղած գործողութիւններէն կորուստներ յառաջ կուգան, և այսպիսի անյախողութիւն մ'ալ կրնայ դունդերուն բարոյականին վրայ մեծ ազդեցութիւն ունենալ » :

Պէտք է գիտնալ որ Մէցի չըջակայներէն ուտելիք հաւաքելու ժամանակն անցած էր, քանզի մարաջխտն այս մասին իր ձեռքն ունեցած

պատեհ առիթն զանց ըրած էր : Այսպիսի գործողութեանց զիրութեամբ դործողընչի և արդիւնաւոր եղած ժամանակը անգործ մնացած ըլլալուն համար հինաց անոր հետեւանքը կը կրէր : Բայց և այնպէս գիտէր որ Ազգային Պաշտպան կառավարութիւնը իր զօրաբանակին համար թիօնվիլ խիստ շատ պաշար հաւաքած էր . ինչու համար չիմացուց իր տեղակալներուն . եթէ իմացենէր : Իրաւունք պիտի ունենար մեզի հաւատացընելու որ յիշեալ քաղաքը երթալու փորձ փորձել որոշած էր :

« 3⁰ կրնանք թշնամոյն հետ խօսակցութեանց մտնել զինուորավայել դաշնադրութեան մը պայմաններն հաստատելու համար : Այս երրորդ խնդիրն ալ միաձայն հաճութեամբ այո՛ պատասխանուով լուծուեցաւ , այլ սակայն այն պայմանաւ որ այս խօսակցութիւններն միայն քառասունևութ ժամ երկարած դրութենէն վերջը վերջանան , որպէս զի թշնամին չկարենայ դաշնադրութեան վախճանը մինչև մեր ուտելեաց սպառելու օրը կամ կարելի է այն օրուրնէ ալ անդին երկարած գել : Խորհրդոյ բոլոր անդամներն ազդու կերպիւ կը յայտնեն որ դաշնադրութեան պայմաններն մեր զինուոց և մեզի համար ալ պատուաւոր ըլլան » :

Արձանադրութեան մէջ յիշուած չէ թէ զինուորավայել դաշնադրութեան մը ընդունելի պայմաններն ինչ են . բայց և այնպէս Մէջի զօրաբանակին համար յայտնի է թէ չէին կրնար խորհիլ թշնամիէն խնդրել որ իր զէնքերոցն ու բեռ-

ներովը երթայ այնպիսի չէզոք երկրի մը վրայ քաշուի որով թշնամին կարենայ մեծ օգուտներ քաղել :

Պօսյէ զօրապետին Վէրսայլ բերելիք տեղեկութիւնները այս խնդիրը կատարեալ կերպիւ մեզ կը բացայայտեն :

4⁰ Պէ՞տք է զինուոց բազդը փորձել և թըշնամոյն դունդերէն ճամբայ մը բանալու ջանալ : Այս չորրորդ խնդիրէն հինգերորդ մը ծագեցաւ : Պ. Վօֆֆիլիէր զօրապետն կը հարցընէ թէ յարաբերութիւնները բացուելէն առաջ աւելի աղէկ չըլլար մեր զինուոց բազդը փորձել . քանզի կրնայ ըլլալ որ եթէ այս փորձերն յաջողի , մեր թշնամոյն հետ ըրած խօսակցութիւններն անօգուտ կըլլան , և կամ թէ մեր ըրած ջանադրութեանց անպտուղ հետեւանքը՝ կրնայ թշնամոյն մեր ձեռքով կրելիք կորուստներուն ծանրութեանը հաւասարակիւ զայլ : Այն խնդրոյն որոշումը մեծագոյն մաս չի կրցաւ ունենալ , և միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ որ եթէ թըշնամոյն դրած պայմաններն զինուոց և դրօշակի պատուոյն արատ բերեն , սովամահ ըլլալէ առաջ բռնի ճամբայ մը բանալու փորձ փորձուի , մինչդեռ կարելիութիւն ալ քանի մը թնդանօթ լծելու » :

Ամէն պատերազմական գործողութեան համար յարաբերութեանց վախճանին սպասելով մարտիստն կրնար անտարակոյս ըլլալ որ զօրաբանակին տակաւին մեծ գործողութիւն մ'ընելու կարող ժամանակն ապարդիւն պիտի անցնէր : Եթէ յարաբերութիւններն քիչ մը երկարէին ,

Թշնամին մեծ օգուտ պիտի քաղէր, ինչպէս որ եղաւ ալ, զորաբանակն ուտելիք չունենալուն բացարձակապէս տկարանալով չի պիտի կրնար Մէցէն դուրս ելնելու փորձ փորձել, և ահա այն ատեն անձնատուութիւնն անհրաժեշտ պիտի ըլլար: Այս կէտը միայն մարտնչական գիտէր. հետեւաբար խորհուրդն այսպիսի որոշումէ մը ետ չի կեցընելուն համար՝ տեղի ունեցած մահառիթ հետեւանաց պատասխանատու է:

Ուստի անմիջապէս յարարեցութիւններն պիտի սկսէին, և Ֆրոսար զորապետին առ Պաղէն մարտնչական ուղղած դրաւոր յորդորանաց համեմատ՝ զորաբանակն քաղաքական պարագայից յաջողութեան պատրուակաւ անդործ պիտի մնար, միևնչեռն նա միայն քանի մ'օրուան ուտելիք ունէր, և այն ալ յարարեցութեանց միջոցը պիտի լինար, յարարեցութիւններ՝ որոնք հաւանականաբար յաջող վախճան մ'ալ չի պիտի ունենային:

Կը հարցընենք թէ ինչպէս մարտնչական նման փորձառու մարդ մը չի կրցաւ միտքը բերել որ Թշնամին՝ որ ամեն օր զորաբանակին տակաւին քանի օր և քանի ժամ դիմադրելու կարող ըլլայն կրնար հաշուել, պիտի թողուր որ զորաբանակն իր պատնիշափակ բանակատեղիէն իր զէնքերովն ու բեռներովը դուրս ելնելով երթայ չէզօք երկիր մը քաջուի, մանաւանդ այնպիսի ժամանակ մը՝ որ խիստ նեղութեան մէջ էր և անձնատուութիւնն ալ անհրաժեշտ ու յայտնի էր:

Յիրաւի ո՞վ կերայնաւորէր իրեն թէ այս զորաբանակն իր դիմաւորներուն ձեռքին տակ

համախումբ պիտի մնար: Ընդհակառակն այնպէս հաւատալու չէր որ նորտեղում դարդիական զորաբանակներն երթալ զորացընելու համար անմիջապէս պիտի ջրուէր: Այս կացութեան մէջ կըրնա՞ր հաւանական ըլլալ, և ընդունուիլ իսկ որ Գերմանացիք կարենան հաւանութիւն ցուցընել այնպիսի դիպուածական պարագայի մը համար անանկ ստոյգ յաջթանակ մը փոխանակելու մասին, որ Գաղղիոյ այնչափ յախուռն ջանադրութիւններն ապարգիւն պիտի ընէր:

Այսպիսի թողտուութեան մը փոխարէն թըշնամոյն ինչ պիտի չնորհէին: Այս կէտը կրնանք բացատրել մարտնչական առ Պոպյէ զորապետն յանձնած հետեւեալ տեղեկութիւններովն, տեղեկութիւններ՝ որոնք իր յատուկ թեւադրութեանէն ծնած են և զորս մարտնչական յիշեալ զորապետին ուղեւորութենէն ետեւ իր տեղակալներուն ծանուցած է:

«Այն վայրկենին՝ ուր հայրենիք ամենածանր վտանգի սպառնալեաց ենթակայ եղած է, և որոյ հետեւանքն չի կրնար այնպիսի արդիւնք մը ունենալ որ ողջմիտ մարդոց ընդունելի ըլլայ, Հունոսի զորաբանակին հրամանատար մարտնչաբար իր երկիրը ազատելու, և իր անձնական ջանադրութիւններովն ազատելու փափաքով վառուած իր խղճին հետ կը խորհրդակցի և կը հարցընէ թէ արդեօք իր հրամանատարութեան ներքեւ դրսնուած զորաբանակն իր հայրենեաց փրկիլն ըլլալու սահմանուած է:

«Չինուորական խնդիրն լուծուած է, գեղ-

մանական զորաբանակներն յաղթող են, և Ն. Վ. Բրուսիլով թագաւորը չի պիտի կրնայ մեծ յարկ մ'ընծայել այն ամուլ յաղթութեանը զոր այսօր մեր դժբաղդ Երկրին մէջ տիրած անիշխանութեան պաշտպան կենալու և զԳաղղիա և զԻւրուպա խռովելու պատճառ եղող մեծամեծ խռովութիւններէն վերջը խիստ կարեւոր եղած խաղաղութիւնն վերահաստատելու կարող միակ զօրաբանակ մը նուաճելով միայն կրնայ շահիլ :

«Ստար զօրաբանակ մը՝ թէև յաղթող ալ ըլլայ, թէ որ Գաղղիոյ պէս տպաւորութեան ենթակայ դաւառի դոճմերուն և Փարիզու պէս կուրովի մայրաքաղաքի մը մէջ միջնորդէ, կրնայ իր նպատակին չի հասնիլ, մտքերը յանհնարինս դըրդուել, և անթիւ չարիք ծնանիլ :

« Իսկ տակաւին կանդուն վիճակ մ'ունեցող և բարի բարոյականութեան տէր և գերմանական զօրաբանակին հետ օրինաւորապէս պատերազմելէն ետեւ իր հակառակորդներուն արժանիքը յաղթանակելը գիտցած ըլլալուն նկատմամբ վստահութիւն ցուցնող գաղղիական զօրաբանակի մը ժրութիւնը ներկայ պարագաներու մէջ անսահման ծանրութեամբ մը պիտի կշռուի : Նա բարեկարգութիւն պիտի վերահաստատէ և հայրենիքը պիտի պաշտպանէ, որուն շահերն Եւրոպիոյ շահերուն հետ հասարակաց են : Այս ժրութեանը արդիւնքովն է որ ներկայիս մէջ Բրուսիոյ պահանջած պատանդներուն համար երաշխաւորութիւն մը պիտի տայ, և վերջապէս այն պիտի կանոնաւոր և օրինաւոր իշխանութիւն մը

պիտի հաստատէ : որով ամեն կերպ յարաբերութիւններու պիտի կրնանք ձեռք զարնել անխափան և բնականաբար :

« Պան-Սէն-Մարթէն, 10 հոկտեմբեր 1870 » :

Այս տեղեկութիւններն բնու չեն յիշատակեր հոկտեմբեր 10 խորհրդոյն մէջ համահաստատութեամբ ընդունուած այն պայմանը, որով գերմանական պատուոյն հետ համեմատելի դաշինքներ միայն պիտի ընդունուէին, ո՛չ ալ զէն ի ձեռին անցք բանալու համար փորձ վերստին դիտաւորութիւնը, եթէ թշնամին խտապահանջ գտնուէր :

Զօրաբանակն տակաւին իր վերջին ծայրը հասած չէր : Թշնամին դեռ համարում ունէր անոր վրայ, վասն զի մեծ պատերազմաւ մը կրնար անոյ մեծամեծ կորուստներ պատճառել : Այս կերպ գիտազբոյծեան մը հետքն անգամ այսպիսի կտրուկ գրութեան մը մէջ գտնուելն օտարութիւն բան մ'է :

Այսպիսի դրաւոր և այնչափ ճիշդ չեղող տեղեկութեանց հետ անշուշտ բերանացի տեղեկութիւններ ալ գտնուելու էին : Մարաշախտին բանալիք յարաբերութիւններն կարճ տեւողութեամբ պիտի աւարտէին : Այս մասին լիակատար իշխանութիւն ունեցող պաշտօնէն այն կը պարտաւորէր ուրեմն դաշնադրութիւն հաստատել Ստոյգէ որ եթէ թշնամին արդարեւ յարաբերութեան մտնել խորհէր, ուրիշ նպատակ մը չի պիտի ունենար եթէ ոչ իր յաջողութիւններն ու իր յաղթութիւններն մէկ դաշնադրութեամբ մը չնորհէ : Աւրեմն յարաբերութիւններն սկսուած օրէն իւ

րենց տու՛նու երկիր յանձնելու խնդիրներ պիտի ներկայանային. եթէ սչնպէս ըլլար, իբր սկզբունք ինչ զոչոզութեանց սահման պէտք էր ընդու- նել. այս ցուայի կէտին վրայ Պօսյէ զօրապետն ինչ տեղն կու թիւններ կը բերէր. ոչ ինչ, կը պատասխանէ մարտնաման. « Բարցուելիք յարաբե- բութեանց մէջ երկիր յանձնելու վրայօք » խնդիր մը չբացուեցաւ :

Զննք կրնար ընդունիլ որ այսպէս եղած ըլ- լայ : Աոր մէկ հաստատութիւնը՝ Պօսյէ զօրա- պետին տուած տեղեկութեանց վերջին հատուածին մէջ կրնանք գտնել :

« Իսկ տակաւին կանգուն վիճակ մ'ունեցող և բարի բարոյականութեան տէր և գերմանա- կան դորաբանակին հետ օրինաւորապէս պատե- րազմելէն ետև իր հակառակորդներուն արժա- նիքը յաղթանակելը գիտցած ըլլալուն նկատմամբ վստահութիւն ցուցնող դաղղիական զօրաբանա- կի մը ժրութիւնը ներկայ պարագաներուս մէջ անսահման ծանրութեամբ մը պիտի կլուուի : Նա բարեկարգութիւն պիտի վերահաստատէ և հայ- բենիքը պիտի պաշտպանէ, որուն շահերն Եւրո- պիոյ շահերուն հետ հասարակաց են : Այս ժրու- թեանը արդիւնքովն է որ ներկայիս մէջ Բրու- սիոյ պահանջած պատանդներուն համար երաշ- խաւորութիւն մը պիտի տայ, և վերջապէս այն- պիտի կանոնաւոր և օրինաւոր իշխանութիւն մը պիտի հաստատէ, որով ամեն կերպ յարաբերու- թիւններու պիտի կրնանք ձեռք զարնել անխա- փան և բնականաբար » :

Արդ՝ մինչդեռ Գաղղիոյ ասեն կողմերն ի զէն կը դիմէին, և ամեն անձնական շահ հասարակաց վտանգին առջև ոչնչանալով բոլոր քաղաքական կուսակցութիւններն վայրկենական կերպիւ կան- հետանային Աղղային Պաշտպան կառավարութեան օգնութեան հասնելու համար, գաղղիական դօ- րաբանակի մը գլխաւոր հրամանատար մը՝ Թըչ- նամուդն իր յաղթութիւններէն վերջը պահանջե- լիք պատանդներն երաշխաւորել կառավարիչ ա- նոր : Պագէն մարաթաստն բարեկարգութիւնը պիտի վերահաստատէ և կանոնաւոր ու օրինա-ւոր իշխանութիւն մը պիտի սահմանէ : Օտարի ձեռքով տեղի ունեցած պատերազմը բաւական չէր, մեր թշուառ երկիրը քաղաքական պատե- րազմներու սուսուռմներն ալ կրելու դատապար- տուած էր, և Մէջի զօրաբանակն իր այս ընթաց- քովը պիտի նանար թշնամուդն հետ աղղային ան- կախութեան համար պատերազմող կառավարու- թիւն մը տառալել :


Այսպիսի առաջադրութեանց հետեւանքներն տեսնելով քիչ մը կանկ տունելու պարտաւոր ենք : Ստուգիւ Մէջի զօրաբանակին կացու- թիւնը շատ ողորմելի էր, բայց իր գլխաւոր հրա- մանատարին անձնական թերազրութիւններէն իր հայրենասիրութեանը ծագած խել մը վտանգնե- րուն վրայ՝ պէտք է նորհակալ ըլլալ Աստուծոյ որ աւելի սոսկալի վիճակ մը ունեցած չէ :

Մարաթաստն իմացած էր որ սեպտեմբեր է ին հաստատուած կառավարութիւնը Աղղային ժողո- վոյ մը ընտրութիւնն հոկտեմբեր 16 ին համար ու-

որոչա՞ծ էր . խորհրդոյ հաւաքման ժամանակը չէր գիտեր որ այս որոշումը գործադրուեցաւ , ինչպէս որ ասկից յառաջ ըսինք :

Յիրաւի Պօայէ զօրապետին վկայութիւնը կը յայտնէ որ այս եղելութիւնն առաջին անգամ Պ. տը Պիամարք իրենց ազգարարեց ի վէրայլ : Ուրեմն Մէց այնպէս կը կարծուէր որ ժողովոյ հաւաքումը մտաւարտ էր : Թէ որ այսպիսի վայրկենի մը մէջ՝ մարտիական որ տակաւին քանի մ'օր սպասելու համար ուտելիք ունէր , այնչափ կը փութար որ դաշնագրութիւնն հաստատուի յայտնի է որ միայն իր չանձնականին ծառայել կը խորհէր :

Ամենեւին չի կրնար ներուիլ իրեն կայսերական կառավարութեան ծառայել ուղեւուն համար : Այն վայրկենին՝ երբ ոչ Պ. տը Պիամարքէն լուր կընդունէր , և ոչ ալ կայսրուհիէն , նշան էր թէ եղած առաջադրութիւններն յայնոլ վախճան մը ունեցած չէին : Իր պաշտօնին և իր իշխանութեանը ինչ միջոցներ ձեռք առնուլ կը վայլէր : Այնպիսի անխոհմտութիւն մ'ըրաւ որով խիստ ծանր զիտաւորութիւններ գործադրեց :



ԳԼՈՒԽ Բ.

ՊՕԱՅԷ ԶՕՐԱՊԵՏԻՆ ԸՐՈՒՍԻՈՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳՈՎ
ՎԱՐԱԾ ՊԱՇՏՅՈՒՆԸ

Պօայէ զօրապետին զորքն առաջին անգամ Պ. տը Պիամարքէն զօրապետը հոկտեմբեր 12 ին Յրուսիոյ թագաւորէն հրաման առած էր վէրայլ երթալու համար : Յիշեալ զօրապետն անմիջապէս ճամբայ ելաւ՝ նրէտէրիք-Շարլ իշխանին զլիսաւոր սպայներէն երկու սպայից հոկտեմբերան ներքեւ :

Պօայէ զօրապետն Պ. տը Պիամարքի հետ ըրած տեսակցութիւնն հետեւեալ կերպով կը պատմէ :

« Պ. տը Պիամարք՝ նախ և առաջ սեպտեմբեր 4 ի յեղափոխութենէն յառաջ եկած կացութեան վրայ քաղաքական նկատումներու մէջ մտաւ : Վերջը ինձի ըսաւ՝ որ կուզէր զիս անցած դէպքերուն բացարձակապէս տեղեակ ընել որպէս զի ես ալ կարենայի զիս զրկողներուն պէտք եղած տեղեկութիւններն հաղորդել , և Պ. թիէրի այնատեն Եւրոպայի մէջ կատարած պաշտօնն ինձի յայտնեց : Խօսակցեցաւ ինձ հետ իր և Պ. Թիւլ Փավլի մէջ տեղը ի Ծէրիէր տեղի ունեցած տեսակցութեան վրայ , ըսելով թէ որչափ համարում ունի այդ մարդոց , իրենց կատարած դերին և փարիզու կառավարութեան անգամոց վրայ :

« Խօսեցաւ ինձ հետ այն սյլ և այլ կուտակութեանց վրայ՝ որք տառնց կայսրութիւնն ու-

գելու ուրիշ իշխանութեան մը համար կը կռուէին և յաւելցուց նաև թէ՛ ինչ որ ալ պատահի, գերմանական կառավարութիւնն երբէք չի պիտի գործէ այն սխալանքն՝ զոր դաշնակիցք գործեցին 1815 ին Գաղղիոյ կառավարութիւն մը որոշած ատենին։ Պ. տը Պիսմարք՝ Գաղղիոյ ներքին կառավարեան վրայ խօսք բանալով՝ որքան քաղաքական նոյնքան զինուորական վիճակին նկատմամբ յայտնեց ինձ թէ՛ իր ընդունած տեղեկութեանց և գերիներուն իրենց բերած լուրերուն նայելով՝ Հիւսիսակողման խել մը գաւառներն գերմանական գունդերուն բնաւ բնդդիմութիւն չի պիտի ընեն։ Թէ՛ վաճառականական մի քանի քաղաքներու մէջ՝ ուր տիրող զգացումն անձնահաստատութիւնն է, կարելի է թէ գերմանական գունդերն չբնդունելու։ Նշաններ չի պիտի ցուցնեն։ Թէ՛ առանց պատերազմ ընելու Բուէն մտած են, և թէ՛ վայրկեան մը յուսացեր էր որ Հավր ալ պիտի մտնէ, բայց սխալած էր։ Քանզի այն մարդիկն՝ որ Գաղղիացի անուամբ ինչպէս Գերմանացուց նոյնպէս ալ իրենց հայրենակցաց չարիք կրնէին, հոն տեղուանքը որքան գերմանական դունդերէ նոյնքան գաղղիացի ժողովուրդներէ կը վրնատուին։

«Արեւմտեան նահանգներուն վրայ խօսելով՝ զանոնք այնպէս նկարագրեց ինձ, որպէս թէ կրօնական գաղափարներու ազդեցութեան տակ զիրար կոտորելու պատրաստ են։ Հարաւային նահանգներն ալ բացարձակ անիշխանութեան մատնուած են. վերջապէս Լուարի զօրաբանակն Օր-

էնանի մէջ զարնուեցաւ, և գերմանական գունդերն Պուրժի վրայ կը քայլեն։

«Այս վերջին լուրը իմ մտացս մէջ ճշմարտանման տպաւորութիւն մ'ըրաւ, երբ հոկտեմբեր 16 ին Մէյ վերադարձած ատենն Շաթո-թիէ-րի հանդիպելով՝ հոն Լուարի զօրաբանակէն վերադարձող խել մը գաղղիացի գերիներու գաղղիական թնդանօթներ տեսայ։

«Պ. տը Պիսմարք՝ այս ընդհանուր տեղեկութիւններն տալէն վերջը՝ առաջարկեց ինձ որ Պագէն մարալտիտին բաշտանքն ու իմ պաշտօնիս նպատակը իրեն յայտնեմ։ Իրեն իմացուցի որ Մէյի զօրաբանակն իր կրած պատերազմական դէպքերուն վրայ տակաւին կրնար դրօշակի պատուը ազնուականաբար պաշտպանած նկատուիլ, և իր այս ծայրալի կացութեան մէջ իրաւունք կունենայ չէ թէ անձնատուութիւն մը՝ վասն զի գեռ այն կէտին հասած չէր, այլ այնպիսի զինուորական դաշնագրութիւն մը ընդրելու որ պատերազմական բեռներն իրեն չնորհէ։ այսինքն՝ գիւրութիւն տայ իրեն իր զէնքերովն, իր նիւթերովն ու իր դրօշներովը ետ քաշուելու։

«Պ. տը Պիսմարք ինձի ըսաւ որ այս գործը իրեն չի վերաբերիր. թէ՛ այս գործը որ բոլորովին զինուորական է, թագաւորին, պատերազմական պաշտօնէին և Պ. տը Մօլթքէի կամքէն կախում ունի. և յաւելցուց թէ՛ «Չեր պաշտօն» նրն այս կերպ զինուորական դաշնագրութիւն «մը ընդրել ըլլալով՝ կանխաւ ձեղի կը պարտաւորիմ ըսել որ արքայական խորհուրդն Սէտա-

« Ինչ համար հաստատուած պայմաններէն տար-
« րեր պայմաններ չի կրնար չնորհել ձեզ » :

Պ. ար Պիամարքի : — « Երբ ես գլխ-
տողութիւն ըրի որ Հսկնոսի զօրարանակն չի կրը-
նոր այդ պիտի պայմաններ ընդունիլ , Պ. ար Պիա-
մարք ըստ . « Բայց ես կրնամ քաղաքական նը-
« կատու մներ ընել թագաւորին և իր խորհրդոյն ,
« և այսպէսով զազդիտական զօրարանակին համար
« պէտք եղած պայմաններն ընդունիլ , զորս վաղը
« ձեզ կը յայտնեմ : վասն զի այս իրիկուն թա-
« դաւորը պիտի տեսնեմ , և այս մասին լուծում
« մը պիտի խնդրեմ Նորին վիհափառութեան » :
Մոյն քաղաքական նկատու մներն իմանալու հա-
մար թ ախանձեցի զՊ. ար Պիամարք :

« Ինձի յայտնեց որ դաշնագրութիւնն Ազ-
գային Պաշտպան կառավարութեան հետ չի պիտի
հաստատէ : վասն զի չձանչը զանի . չի կրնար
կայսեր հետ ալ դաշնագրել , որ գերի էր և
արդէն Սէտանի մէջ ալ անոր հետ դաշնագ-
րելն մերժած էր : այլ կայսրուհւոյն հետ կրնայ
դաշնագրել . և կայսրուհւոյն հետ ալ դաշնագ-
րելու համար գերմանական կառավարութիւնը ի-
րեն այնպիսի շահեր վերապահել կը խորհէր , ո-
րոնք Մէջի զօրարանակին կացութեան պատճա-
ռաւ իր ներկայ դինուորական դրութեան ներկա-
յացուցած շահերուն հետ համադր էին իրեն հա-
մար : — Ազգային Պաշտպան կառավարութիւնը
ճանչած էք , յաւելցուց նա . — Ոչ , պատասխա-
նեցի իրեն , սեպտեմբերի չի կառավարութեան
վրա բնաւ լուր մ'ընդունած չենք :

« Սեպտեմբերի Աի ժամանակները մի քանի
փոխանակեալ պատերազմական գերիներու բա-
նակատեղին դարձած ատենն իմացանք նոյն օր-
ուան Սէտանի աղէտքն , կայսեր գերութիւնը և
Ազգային Պաշտպան կառավարութեան հաստա-
տութիւնը : Չեւրեւնիս քանի մը գերմանական
լրագիրներ անցան , որոնցմով բազմաթիւ կանո-
նագրութեանց խմբագրուին իմացանք , սակայն
այս մասին ոչ պաշտօնական տեղեկութիւն մը
հասաւ մեզ , և ոչ ալ որ և է պաշտօնեայ մեր
քոյն եկաւ : Մեզի համար ազգային պաշտպան
կառավարութիւն չկայ . մեր երդունցանք կայ-
սեր , և այս երգման վրայ հաւատարիմ պիտի
կենանք մինչև որ երկիրն ուրիշ կերպ որոշում
մը ընէ :

« Ռեբեմ , ըստ ինձ Պ. ար Պիամարք , կըր-
նանք իրարու հետ համաձայնիլ . ես չեմ առա-
ջարկեր ձեզ կայսեր հետ դաշնագրելու , քանզի
նա գերի է ի Բրուսիա , և կրնայ ըլլալ որ իր ըրած
որոշմանցը նկատմամբ բռնութիւն մը գործադ-
րուի : Բայց կայսրուհւոյն համար ասանկ չեմ կըր-
նար ըսել . նա չէղոք երկրի մը մէջ է և ազատ
մեր կողմանէ ըլլալիք ամեն ուղղակի գործողու-
թեանէ » : — Ես Պ. ար Պիամարքի նկատել տուի որ
իմ պաշտօնս այս կերպ հաղորդակցութեան մը
մէջ մտնելու , յատկութիւնն չունի բնաւ , և կաղա-
չէի իրեն որ իր դրութիւնն ինձ յայտնէ , որպէս
զի ես ալ երթամ Մէջ իմացընեմ : իր դրութիւնն
այն էր որ զօրարանակն կայսրուհւոյն հաւատար-
մութիւն խոստանայ , այնպէս յայտարարելով որ

որ իմ անկէ անցնելա իմանալով նոյն ժամուն հոն
կը գտնուէր, և քանի մը խօսք ըրի հետը: Ինծի
ըսաւ որ Պ. տը քէրաթրի առջի օրը օդապարի-
կով այն մօտերը ինկած և կրցած էր փախիլ, և
ես գգուչութեամբ անոր իմացուցի որ Մէջի զօ-
րաբանակն ուտելիք չունի ք:

Երբ Պօայէ զօրապետին հարցուեցաւ թէ
Պարլը-Տիւք հանդիպած դաղղիացիէն զատ,
վէրսայլ կամ ճամբուն վրայ բնաւ դաղղիացիի մը
հետ հաղորդակցութիւն մը ունեցած չէր, որով
կարող ըլլար նամակ և լրագիր ընդունիլ, պա-
տասխանեց թէ բնաւ մէկու մը հետ հաղորդակ-
ցութիւն չէր կրցած ունենալ, և բնաւ դաղղիա-
ցիէ մը նամակ կամ որ և է լուր մը ընդունած
չէր: այլ միայն Պ. տը Պիամարք իր երկրորդ տե-
ութեան ատեն՝ սեպտեմբեր 15 ին, Մոսկովի ք.
Կիւի և Ֆէրի: լրագրաց վեց կամ ութը թիւերն,
իրեն յանձնած էր:

Յիշեալ զօրապետն կը յաւելու որ սոյն լրագ-
րաց մէջ գրուածներն միտքը չեն դար, և թէ
Մէջ դարձած ատենն զանոնք մարաշախտին
յանձնեց, միայն սա կը յիշէ որ ընտրութեանց
երկարումը և Պ. համալէթ թալի ընտրութեանց
անպատճառ կատարուիլը պնդելու համար փարիզ
գացած ըլլալը յիշեալ լրագրաց մէջ գրուած էր:

Համառօտիւ ըսելով Պօայէ զօրապետին ը-
սածին համեմատ Պ. տը Պիամարքի առաջադրած
պայմաններն հետեւեալներն էին:

1⁰ Զօրաբանակին կայսրուհւոյն կառավարու-
թեան հաւատարիմ մնալը հաստատել:

2⁰ Զօրաբանակին այնպիսի յայտարարութիւն
մը պահանջել թէ որչաժ է կայսրուհւոյն հե-
տեւիլ:

3⁰ Հաշտութեան պայմաններուն ստորագրու-
թիւնը կայսրուհիէն ընդունիլ:

ԳՂՈՒԹ Պ.

ՎԵՐԱԴԱՐՁ ՊՅՅՈՒ ԶՕՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԺՈՂՈՎ
ՀՈՎՏԵՄԵՐ 10 Ի

Առէն Կոնստանտնուպօլիս 9 Ի

Վերադարձ Պօայէ Կոնստանտնուպօլիս — Իր Պ. Պօայէ գո-
րապետին թաշակայութեան ատեն՝ մարաշախտն հոկտեմբեր
12 ին զօրաբանակին գունդերու հրամանատար-
ներն, գլխաւոր զօրապետները և Շանկարնիէ զօ-
րապետը ի խորհուրդ կուած էր՝ այս խորհուր-
դին մէջ՝ քաղքին և գունդերուն ուտելեացը ի-
րար խառնուելուն նկատմամբ ձեռք առնուելիք
միջոցներն որոշուեցան: Մարաշախտն ալ նոյն-
պէս քանի մը պայմաններ դրաւ Մէջի խուռն
բազմութեան մասին:

Մարաշախտն իր յիշտակարանին մէջ իր
օգնական զօրապետին պաշտօնավարութեան ար-
դիւնքը հետեւեալ կերպիւ կը պատմէ:

« Պօայէ զօրապետը հոկտեմբեր 17 ին հասաւ

ի Թէց հետն ունենալով մի և նոյն սպայներն , որոց հետ ճամբայ ելած էր , և հոկտեմբեր 18 ին նոր խորհուրդ մը տեղի ունեցաւ : որուն Պ. Շանկար-նիէ զօրապետն ալ հաճեցաւ ներկայ գտնուիլ Պոսյէ զօրապետին ստանձնած պաշտօնին պատմութիւնը մտիկ ընելու համար : Պոսյէ զօրապետն իմացաւ զայն պարանոններն որով կրնար Մէցի զօրաբանակն իր զէնքերովն ու նիւթերովը Մէցէն դուրս ելնել : Այս պայմաններն՝ Հոկտեմբեր 20-ին զօրաբանակին չորհուրդու շահերն ձեռք տանուելիք քաղաքական գաշնադրութեանց կը հպատակեցընէին :

« . . . Պ. տը Պիամարք՝ ըլլալիք յարարեթութեանց իրր նախնական տեսակէտ , երկու կանխաւ երաշխաւորեալ պայմաններ կառաւարկէր :

« 1⁰ Զօրաբանակին մէկ յայտարարութիւնը յօդուտ կայսրութիւնն :

« 2⁰ Մէց քաղաքին յանձնուիլը » :
 Պոսյէ զօրապետին ըսածին նայելով իր և Պ. տը Պիամարքի մէջ տեղ յիշեալ երկրորդ պայմանին խօսքն անդամ եղած չէ :

Իայց և այնպէս չի կրնար ընդունուիլ որ մարտիական այսպիսի ծանր պարագայի մը մէջ սրբալանք մ'ըրած ըլլայ :

Արդէն տեսանք որ մարտիական օգոստոս 26 ի և հոկտեմբեր 10 ի խորհուրդներուն մէջ իր խորհրդակիցներուն կարծիքը խնդրած միջոցին իր զօրաբանակին կացութիւնը անօնցմէ ծածկեց : Ահա այս հոկտեմբեր 18 ի խորհրդոյն մէջ մի և նոյն է-

րորութիւնն անգամ մ'ալ պատահած կը տեսնենք :

Պոսյէ զօրապետն Գազզիոյ մէկ անստոյգ պատկերն պիտի ներկայացընէ խորհրդոյն , չի կրնար հաւանական ըլլալ որ այս պատկերն Պ. տը Պիամարք գծած ըլլայ իրեն , որովհետեւ նա յիշեալ զօրապետին այնպիսի լրագիրներ յանձնեց , որոց պարունակութիւնը՝ ինչպէս վերջէն պիտի տեսնուի , բորբոքին հակառակ է դանդաբուհրամանատարաց տրուած տեղեկութեանց :

Պոսյէ զօրապետն իր վկայութեանը մէջ յայտնեց որ ինքը իր պաշտօնավարութեան տեսն միայն Պար-լը-Տիւքի քաղաքապետին հետ հաղորդակիցեր է , որն որ հիմա Աղգային ժողովոյ անդամ է , և Փարիզէն օդապարիկով մեկնող Պ. տը Քէրաթիի հոն հասնիլն իրեն իմացուցած է :

Պ. Պամբարի-Վիայութիւնը՝ յիշեալ զօրապետին սոյն վկայութեան վրայ խիստ մասնաւոր լոյս մը կարձակէ . ահաւասիկ .

« Հոկտեմբեր 12 ին երբ տեսայ որ տուանձին էֆէֆէ մը գաղղիացի զօրապետ մը և երկու գերմանացի սպայներ Պար-լը-Տիւք հասան , դացի զօրապետին քով իմ ծառայութիւններս անոր մատուցանելու և Մէցի զօրաբանակը գտնուող ընկերակից սպայներու և մանաւանդ Մէցի մէջ անցածներուն վրայօք իրմէ լուրեր ընդունելու համար , եւ որովհետեւ սպայներն կը հսկէին իր վրայ , միայն սա խօսքն կրցայ իրմէ լուր . « Ընդհանուր բանակատեղին կը վերագոռնուի . համբերութիւնս հատած է » :

« Երկամուրջ կայարանը պատուիրեցի որ զօրացեալսն վերադարձը ինձի իմացընեն, յուսալով որ կրնամ ճիշդ և կարևոր տեղեկութիւններ ընդունիլ: Եւ արդարեւ եկան իմացուցին ինձ. երբ ես ալ գացի, տեսայ որ նա Պարլըմէնքի գատաւոր Պ. Հուզլոյի հետ կը խօսակցէր: Խիստ զգուշաւոր կերևւէր, որով երկրին վիճակին վրայ Պ. Հուզլոյի բան մը չի հարցուց: Կայարանը հասած ատենն Պ. Հուզլո նոր Էօնէն իջած էր, ես ալ առանց դժուարութեան հոն մտած էի: Պոսյէ զօրացեալսն ինձի ըսաւ որ Մէյ պարտաւորած էր հոկտեմբեր 22 ին անձնատուր ըլլալ, և անկարելի էր այն օրուընէ անդին տոկալ, որովհետեւ զօրաբանակն իր թնդանօթավար ձիերը կերած էր, և թէ պէտք էր որով կերպիւ և իցէ խաղաղութիւն ընել, և թէ ինքը ընդհանուր բանակատեղիէն կը դառնար այն պաշտօնով որ իրենց առաջադրուած պայմաններուն մեղձութեանն համար առաջարկութիւն ընէ: Բայց անկարելի եղած էր, և թէ՛ այսուհետեւ չենք ալ կրնար գիտագրել, և թէ՛ Լուարի զօրաբանակը իր գոյութիւնը կորսնցուցած, և բոլոր Գաղղիա անիլխանութիւն տիրած է, և թէ՛ նորմանտիոյ քաղաքներն գերմանական պարսպապահ զօրք յօգնութիւն կը կոչէին: Խիստ տղէկ կը յիշեմ որ զօրացեալսն Գաղղիոյ վիճակին վրայ դիտյածներնուս նկատմամբ ինձմէ բնաւ տեղեկութիւն չի խնդրեց: Բայց սա ստոյգ է որ իմ ունենալիք տեղեկութիւններս չէին կրնար զօրացեալսն ինձի ներկայացուցած պատկերին հետ

հաւասարել: Այն ատեն միայն դիմադրութեան վրայ կը խորհէինք, որովհետեւ տակաւին կը կարծէինք որ պատերազմի կարևորութիւն և յաղթելու կարելիութիւն կայ »:

Ինչպէս որ կը տեսնուի, Պոսյէ զօրացեալսն խիստ լաւ յաջողութիւն վայրկեան մը իր վրայ եղած անընդհատ հակադրութեանէն արձակուելով Գաղղիոյ վիճակին վրայ իրեն տեղեկութիւն տալու կարող երկու Գաղղիացոց հետ տեսնուելու, Նա բնաւ անոնց բան մը չի հարցըներ և այս պարագայիս մէջ թշնամիէն առած լուրերն կը հազորդէ:

Պ. Պոսյէ զօրացեալսն յայտնեց Պ. Պոմբարի որ իր վէրսոյլ ճանապարհորդելուն նպատակը՝ արդէն եղած պայմաններէն դուրս աւելի մեղմ պայմաններ խնդրել էր: Ատեանը այս պարագան պիտի յիշատակէ: Նա՛ Պոսյէ զօրացեալսն վկայութեանը մէջ կը տեսնէ որ Պ. տը Պիսմարք քանի մը լրագիրներ տուաւ իրեն զորս մարաշխաթին յանձնեց: Այս լրագիրներն Գաղղիոյ վիճակին վրայօք խիստ աղէկ տեղեկութիւններ կուտային, մարաշխաթին պարտաւորութիւնն էր սոյն տեղեկութիւններն, ինչպէս նաև Պարլըմէնքի պատահումը խորհրդոյն ծանուցանել: Ինչո՞ւ համար լուրք եթէ յիշեալ զօրացեալսն բերած չարաչար տեղեկութիւններն տարածայնող ամեն միջոցներէն զգուշանալու համար դիտաւոր պատճառ մը չկար: Մարաշխաթսն իր այս վարմունքը բացատրելու համար կըսէ թէ յիշեալ լրագրոց մէջ պարունակեալ լուրերն Պոսյէ զօրացեալսն խօսածներուն չէին հաւասարել: Յիրաւի Ք. Ֆիլիսիէր զօրացեալսն իր

վկայութեան մէջ այս մասին հետեւեալն կը յայտնէ. «Մարաշլախտին հետ առանձինն պնդեցի թէ խիստ արտաքոյ կարգի բան մ'է Պօայէ զօրապետին բնաւ լուր մը կամ գաղղիական լրագիր մը իր հետը չի բերելը. մարաշլախտն ժողովէ լրագրոյն հոկտեմբեր 3 և 6ի երկու թիւերն զրկեց ինձ: Սոյն լրագրաց մէջ պարունակուած լուրերն այնչափ քիչ համաձայն էին Պօայէ զօրապետին բերած լուրերուն հետ, որ մարաշլախտն նախ և առաջ թէպէտ զանոնք հասարակութեան ծանուցանել ուզած էր, բայց վերջը հակառակն հրամայեց »:

Այս դէպքը հոկտեմբեր 19ին տեղի ունեցաւ: Այն միջոցին խորհուրդն իր որոշումներն բրած և Պօայէ զօրապետն Լոնտրա երթալու համար ճամբայ ելած էր:

Պօայէ զօրապետն այնպիսի տխուր կերպիւ մը նկարագրեց խորհրդոյն առջև Գաղղիոյ կացութիւնը որ իր վկայութեանը մէջ յիշուած պատկերաւը այնպէս նկարագրած չէր:

Մի քանի գունդերու պատմութիւններն կը յայտնեն թէ Պօայէ զօրապետին բերած տխուր լուրերն ինչ աստիճան չափազանցութեան հասած էին, կը պատմեն որ այն ատեն կիմացըներն թէ նանթ և ուրիշ շատ քաղաքներ Բուէնի և Հալիի նման գերմանական պարսպապահ զօրք խրնդրած են. թէ կառավարութեան անդամներն կատարեալ անհամաձայնութեան մէջ ըլլալով իրարմէ բաժնուած և մէյմէկ կողմ քաջուած են. և թէ իտալիա՝ Նիսը, Սալուան և Քորսը կը պահանջէ:

և կրօնական խնդիրներն վանտէ և Բրիտանիա երկիրներն պիտի յեղափոխեն:

Պօայէ զօրապետին տուած լուրերուն ճշգրտութեանը մասին մանրամասն վիճարանութեան մէջ չի մտնելով՝ բառական կը համարինք յիշել որ գերմանական զօրքերն իմաց տրուածին չափ Գաղղիոյ մէջ տարածուած չէին բնաւ. Սեպտեմբեր 3 և 6ն ի վեր միայն երեք քաղաք՝ այսինքն Լաօն, Թուլ և Սլըրազպուրկ նուաճուած էին. թշնամոյն զօրաբանակին յառաջագահներն տակաւին Նորմանտիա մտած չէին, և վէքտիսի մէջ ամեն օր պատերազմներ տեղի կունենային, Բուէն՝ որուն առնուած ըլլալն ծանուցուեր էր, դեկտեմբեր 3 էն վերջը միայն Էքուէնի, Էլբրբանտիի և Պիւհիի պատերազմներէն վերջը պիտի յանձնուէր. իսկ Հալիքը բնաւ թշնամոյն ձեռքն անցած չէր:

Նոյնպէս ալ հարաւակողմը՝ Շաթօտէօն տակաւին փառաւոր դիմադրութեանէն ետ կեցած չէր: Հիւսիսակողմը՝ Գերմանացիք հոկտեմբեր 21ին կրցան Սէն-Քանթէն հասնիլ, Ամիէն նոյեմբեր 27ին միայն թշնամոյն ձեռքն ինկաւ:

Գաղղիոյ մէջ ամեն տեղ դիմադրութեան պատրաստութիւն կար: Սրեմուտք՝ առանձնանալ չուղեղէն զատ, իր կամաւորներն Լուարի յառաջագահներն կը դրկէր: Բրիտանիոյ չարժական պահապան զօրքն ֆարիզ կը պատերազմէր. հիւսիսակողմը՝ ուր կրսուէր թէ որ և է կերպիւ խաղաղութիւն կը խնդրուի, կառավարութիւնը այնչափ զօրաբանակ մը կը կազմակերպէր որ այլևայլ

ձիրքերով մինչև զինադադարում թշնամոյն պիտի դիմադրէր. վերջապէս Հիոնի և Թուլուզի շարժական պահապան զօրքն Պէլֆօուը պաշտպանելու կուղային :

Իրաց այս վիճակին և Պօայէ զօրապետին բերած լուրերուն մէջ գտնուած բացորոշ հակասութեան վրայ՝ չենք կրնար բնութել որ Պ. տը Պիսմարք այս լուրերը ինքը տուած ըլլայ : Թողունք որ վարպետութիւնն ալ իր սահմաններն ունի, ի՛նչպէս կրնանք հաւատալ որ Պ. տը Պիսմարք այնպիսի լուրեր տուած ըլլայ : մինչդեռ իր այս լուրերուն բռնորովին հակառակը պարունակող Գաղղիական լրագիրներ կուտայ յիշեալ զօրապետին : Ասկից դուրս կրնանք հետեցնել որ այդ լուրերն զօրապետը ինքն կերպարանափոխ ըրած է. այս այսպէս ըլլալն դիտնալնէս վերջը կրնանք նաև հաւատալ որ Պօայէ զօրապետն խորհրդոյն մէջ այսպիսի ինքնահնար լուրեր ներկայացրնէ առանց մարաջխտին հաւանութեանը : Այս մասին բնաւ վայրկեան մ'ալ չենք կրնար տարակուսիլ : Ատեանը ստուգեց որ Արնու-Քիվիէր հրամանատարն Պօայէ զօրապետին յանձնելիք նամակ մը ունէր իր գունդերը հասած արտին :

Մարաջխտն՝ Գաղղիոյ կացութիւնը բոլորովին կորսուածի պէս նկարագրելով : Պօայէ զօրապետին բերած լուրերուն մէջ գտնուած ամեն կարելի հակասութիւն չի մերժելով և զօրաբանակին գտնուած արգելանէն դուրս ելնելու համար միայն մէկ միջոց մը յուշընելով իր տեղակալները

միայն այս միակ լուծումը կամ որոշումը ընդունելու պիտի պարտաւորէր :

Այսպիսի կացութեան մ' առջև՝ հոկտեմբեր 18 ին ձեռք առնուած որոշմանց պատասխանատուութիւնը միայն իրեն կրնանք յատկացնել, թէև նա իր յիշատակարանին մէջ կը յայտնէ թէ խորհրդոյ մեծամասնութիւնը պէտք եղաւ որպէս զի Պօայէ զօրապետին ուղեորութեանը հաւանութիւն տրուէ :

Հոկտեմբեր 10 ի ժողովոյ մէջ բացարձակապէս որոշուած էր որ եթէ թշնամին կուղէր պատուոյ և պարտաւորութեան զգացման հետ անհամեմատելի պայմաններ առաջարկել զօրաբանակին, զէն ի ձեռին ճամբայ մը բանալու փորձ պիտի փորձուէր : Նախապէս ամեն յարաբերութեանց ատեն՝ Պ. տը Պիսմարք Մէյի յանձնուիլը պահանջելով՝ զմարաջխտն պարտաւորութեան և պատուոյ դէմ գործել կը պարտաւորէր, ուստի ալ պատերազմելէ զտու ուրիշ միջոց չէր մնար : Բայց եթէ այս միջոցին զօրաբանակն խիստ տկարացած ըլլալով չէր կրնար ձեռնամուխ ըլլալ այնպիսի պատերազմի մը որմէ այնչափ մեծ յաջողութիւն մը չէր յուսացուէր : մարաջխտն ի՛նչպէս չի կըրցաւ յիշել որ հոկտեմբեր 10 ին : այսինքն՝ այն միջոցին որ այսպիսի պատերազմի մը կարելիութիւնը հոկտեմբեր 7 ի պատերազմը հաստատած էր, անյաշող յարաբերութիւններ բանալու ձեռնարկած էր :

Հոկտեմբեր 18 ի խորհրդոյ արձանագրութիւնն մարաջխտին հրամանաւը կարգադրուե-

ցաւ, բայց այս գրութիւնն գունդերու հրամա-
նատարաց վաւերացմանը չի յանձնուելուն համար
թէպէտ վաւերական չի կրնար համարուիլ, այլ
սակայն զայն հոս հրատարակելն օգտակար է :

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ 1870 ՀՈԿՏԵՄԲԵՐ 18 Ի

ԽՈՐՀՐԴՈՅՆ

« Հոկտեմբեր 18ին՝ առաւօտեան ժամ իննին, »

« Պ. Պ. մտրաջախտ Գանրօպէր, մտրաջախտ
Լը Պէօֆ, զօրապետ Լատմիրօլ, զօրապետ Պրօ-
սար, զօրապետ Տէվօ, զօրապետ Պօթիկիէր, զօ-
րապետ Սօլէյլ, զօրապետ Շանկարնիէ, զօրապետ
Ժարրա, ընդհանուր սպայից գլուխն ընդհանուր
բանակատեղին հրաւիրուեցան, իմ օգնական-զօ-
րապետիս Պ. Պօյաէ զօրապետին վէրսայի ընդ-
հանուր բանակատեղւոյն քով վարած պաշտօնա-
վարութեան պատմութիւնը մտիկ ընելու համար :

« Յիշեալ զօրապետն իր պաշտօնավարութեան
նպատակը, իր ի վէրսայլ Պ. ար Պիսմարքի հետ
ըրած երկու տեսակցութեանց համառօտութիւնը
յայտնեց, և ի վերջոյ իմացուց այն պայմաններն
որովք իրուսիական կառավարութիւնն Մէցի կայ-
սերական զօրաբանակին կը չնորհէ իր գործելու
ազատութիւնը, որով յիշեալ զօրաբանակն զին-
ուորական դաշնադրութեամբ մը չէ՞ղք երկիր մը
պիտի քաշուի, որպէս զի 1870 մայիսի սահմանա-
դրութեան համեմատ կազմուած հասարակաց Իշ-
խանութեան աւանդապահներն հոն հաւաքէ, և
սոյն սահմանադրութեան համաձայն կայսրէն
կայսրուհոյն յանձնուած առ ժամանակեայ իշխա-

նութեան հրովարտակին շարունակութեանն հա-
մար նոյն սահմանադրութեան տրամադրութիւն-
ներն աչքէ անցընէ :

« Այս պայմաններն հետեւեալներն են . »

« 1⁰. Մէցի զօրաբանակն յայտարարէ որ ինքն
միշտ կայսեր զօրաբանակն է, և որոշած է կայս-
րուհոյն առժամանակեայ կառավարութիւնը
պաշտպանել :

« 2⁰. Զօրաբանակին այս յայտարարութեան
վրայ նորին վեհախառութիւնը կայսրուհին ալ
Գաղղիոյ ժողովրդեան յայտարարէ, թէ ի պա-
հանջել հարկին նոր հրաւէր մ'ալ պիտի կարգայ
աղգին՝ իր վավադած կառավարութեան եղանա-
կին վրայ խորհուրդ յայտնելու համար :

« 3⁰. Յիշեալ երկու յայտարարութիւններն
կայսրուհոյն կողմանէ կարգուած պաշտօնատարէ
մը փոխանորդաբար ստորագրուին որով Գերմա-
նական կառավարութեան և կայսրուհոյն մէջ
տեղ հաստատուելիք դաշնադրութեան մը հի-
մունքն ընդունուին :

« Յիշեալ պայմանաց առաջնոյն վրայ վիճա-
բանութիւն բացուելով պատերազմական խոր-
հրդոյ ներկայ անդամք յայտնեցին որ իրենք
կայսեր տուած երգումովնին կապուածի պէս
ըլլալով միշտ ինքզինքնին այնպէս կընկատեն
սակայն զօրաբանակին իրենց հետեւելուն վրայ
կը տարակուսին, քանզի կարելի է որ եթէ ան-
գամ մը Մէցէն դուրս ելնեն, իր այս շարժմանը
տրուած որ և է քաղաքական նկատում աղետալի
բացատրութեանց տեղի կուտայ և կը մերժուի :

« Երկրորդին վրայ բնաւ վիճարանութիւն
 չեղաւ . վասն զի Նորին վեհափառութիւնն կայս-
 րուհին միայն կրնար Գերմանական կառավարու-
 թենէն առաջարկուած այս պայմանին դէմ խօսիլ
 կամ ընդունիլ :

« Երրորդին վրայ վիճարանութիւն բացուե-
 լով՝ միաձայն հաւանութեամբ վճռուեցաւ որ
 Հռետտի զօրաբանակին գլխաւոր հրամանատար
 մարաշխտն չէր կրնար հաստատուելիք դաշ-
 նադրութեան հիմունքն կայսրուհւոյն կողմանէ
 փոխանորդաբար ստորագրել, երբ չէզոք երկրի
 մը վրայ քաշուիլ պայմանադրուի : Նոյնպէս ըն-
 դունուեցաւ որ ուրիշ որ և է պարագայիւ մա-
 յրաջխտն դաշնադրութիւնը ստորագրելու հա-
 մար բնաւ փոխանորդութիւն չի կրնար ընդունիլ,
 իր պարտաւորութիւնն սոսկ զինուորական ըլլա-
 լուն և ինքն ալ իր զօրաբանակին կացութիւնը
 պահպանելու յատկացած ըլլալուն համար :

« Այս երեք կէտերն լուծուելէն ետեւ, խըն-
 դիր բացուեցաւ քննելու թէ արդեօք զօրաբա-
 նակն կրնայ այս պահանջուածներէն ճողոպրիլ :

« Խորհրդոյ անդամներն միաձայնութեամբ
 կը յայտնեն որ թշնամւոյն գունդերէն դուրս ել-
 նելու համար եղած ամեն ջանադրութիւն հաւա-
 նականաբար անյաջող պիտի ըլլայ . բայց զինուց
 պատուոյ խնդիրն կը ներկայանայ միշտ, և են-
 թադրելով որ գունդերն իրենց չի պիտի հետևին
 կամ տկարութիւն պիտի ցուցնեն, և թէ ամեն
 միջոց ձեռք առնուի որ անգամ մը դուրս հան-
 ուին ու ցրուին, խորհրդոյ անդամներն կը խոր-

հին որ պէտք է զինուց բազմը փորձել, որչափ
 ալ այնտակ երևի այս փորձոյ արդիւնքը :

« Պրօսար զօրապետն որոշակի կը յայտնէ որ
 ինքը չի խորհիր որ այսպիսի փորձ մը ընել պէտք
 է :

« Լատվիթը զօրապետն կը յայտնէ որ դուրս
 ելնենք . և թէպէտ գունդերուն վրայ չի կրնար
 վստահիլ, բայց իր զօրապետաց հետ պատրաստ
 է հնազանդելու :

« Լը Պէօֆ մարաշխտն կըսէ որ թէ և ինքը
 յաջողութիւն մը չի յուսար, բայց և այնպէս
 պէտք է փառաւոր յիմարութիւն ըսուածն ան-
 դամ մը փորձել :

« Քանրօպէր մարաշխտն կը յայտնէ որ մեր
 ընելիք փորձն փախտի փորձ մ'է ու չէթէ Մէցէն
 դուրս ելնելու, և թէ մենք պիտի ցրուինք, և
 այսպէսով Բրուսիացոց աւիթ պիտի տանք որ
 մէկ յաղթանակ մ'աւելի սեպհականներ իրենց և
 այս յաղթութեան վրայ հպարտանան, որն որ մեր
 կրած ձախորդութեանց ցանկը աւելի մէկ աղէտ-
 քով մ'ալ ճոխացնելու պատճառ պիտի ըլլայ :

« Տէվօ զօրապետը կը յայտնէ որ մեր գուն-
 դերն Մէցի մէջ ձգելէն ետեւ պէտք է դուրս ել-
 նել, մինչև որ անոնք չի կարենան այլ ևս հոն
 մնալ, որովհետև կրնանք տակաւին անոնցմէ զո-
 հողութիւն մը պահանջել :

« Սթէյլ զօրապետն չուզեր դուրս ելնել, և
 այս դուրս ելնելու փորձէն յառաջ դալիք ան-
 հրաժեշտ աղետից հետևանացը և անկարգու-
 թեանցը խորհուրդէն զատ բնաւ բան մը զինքը

չի սոսկացներ, համոզուելով որ թէնամենայն առաջին գունդերէն անգամ անցնիլն անկարելի է :

« Քօֆինիէր զօրապետն կրսէ որ ինքը առաջին խորհրդոյ որոշմանը հետեւելով կը յայտնէ որ զինու զօրութեամբ ճամբայ մը բանալ պէտք է, եթէ թէնամին չուղէ պատուաւոր պայմաններով դաշնագրել :

« Ան ատեն կսկսին հաղորդակցութեանց շարունակութեան կարելիութիւնը քննել այն նպատակաւ որ զինուորական պատուաւոր դաշնագրութիւն մը հաստատուի, և թոյլ տրուի կառավարութեան հաստատութեանը, այնպիսի կառավարութեան մը՝ որուն հետ դերձմանական կառավարութիւնն կարենայ դաշնագրել :

« Սոլէյլ զօրապետն, Տէվօ զօրապետը, Լատմիրօլ զօրապետը, Ֆրօսար զօրապետը, Քանրօպէր մարաշախտն ու Շանկարնիէ զօրապետը այս խնդրոյն հաւանական պատասխան կուտան :

« Քօֆինիէր զօրապետն ու Լը Պէօֆ մարաշախտը բնաւ հաճութիւն չեն ցուցըներ :

« Հետեւաբար, Պօայէ զօրապետն Հասթինկ պիտի երթայ, տեսնելու համար թէ արդեօք կարելի է այս կերպ դաշնադրութիւն մը ընդունիլ, բայց այն պայմանաւ որ զօրաբանակի դիւաւոր հրամանատարն որ և է դաշնադրութեան մը ո՛չ հաւանութիւն տայ և ոչ ստորագրէ :

« Նոյնպէս զօրաբանակին կացութիւնը կայսրուհւոյն պիտի ներկայացընէ, և եթէ անկարելի ըլլայ փափագուած լուծմանն հասնիլ, Նորին Վեհափառութենէն նամակ մի պիտի խնդրէ որով

զօրաբանակն իր կայսեր տուած երդումէն լուծուի և իր գործելու ազատութիւնն ստանայ :

« Պան-Սէն-Մարթէն, 18 հոկտեմբեր 1870 » :

Վերոյիշեալ արձանագրութենէն խիստ յայտնի կիմացուի թէ մարաշախտն իր անձնական պատիւն որ աստիճանն նուաստացուցած է, կը տեսնենք թէ նա այնպիսի խնդիրներ մէջ կը բերէ, որոց ինքը անգամ մասնակից չըլլար, և վերջը յանուն խորհրդոյ այնպիսի որոշումներ կընէ որոնք միայն իր ձեռքովը ըլլալու էին և որոց պատասխանատուութիւնը սոսկ իրեն կը պատկանէր :

Պ. տը Պիսամբլի՝ Մէցի զօրաբանակին Մէցէն դուրս ելնելու թոյլտուութիւն ընելու համար առաջագրած պայմաններն Պօայէ զօրապետին վերակայութեանը, մարաշախտին հարցաքննութեանը և հոկտեմբեր 18ի ժողովոյ արձանագրութեանը մէջ խիստ տարբեր կերպով մը բացատրուած են :

Թիշեալ գրութիւններն իրարու հետ բաղդատելով կը տեսնենք որ զօրաբանակն յօգուտ կայսրուհւոյն յայտարարութիւն մը կը պարտաւորէր ընել, և այս յայտարարութեան հետ կայսրուհին ալ առաջըն հրաւիրանաց յայտարարութիւն մը պիտի ընէ : Սոյն երկու յայտարարութիւններն կայսրուհւոյն կողմանէ փոխանորդաբար մէկը պիտի ստորագրեր, և գերժանական կառավարութեան ու կայսրուհւոյն մէջ հաստատուելիք դաշնադրութեան մը հիմունքն պիտի ընդունուէր :

Վերջապէս թէնամին երաշխաւորեալ կերպիւ Մէց քաղաքին յանձնուիլը կը պահանջէր :

Պօայէ զգորպետիսն վկայութեան նայելով խաղաղութեան պայմաններն կայսրուհիէն պիտի ստորագրուէին :

Իսկ արձանագրութեան պարունակութեան նայելով Պ. տր Պիսմարք այս ստորագրութիւնը կայսրուհւոյն կողմանէ փոխանորդաբար ուրիշ մէկու մը կը յատկացնէր . չէին ըսեր թէ այդ փոխանորդը ո՛վ պիտի ըլլար , սակայն յայտնի է որ թշնամին կը խորհէր թէ այդ փոխանորդութիւնը Հռենոսի զօրաբանակին գլխաւոր հրամանատարին յանձնուելով միայն կրնար արժէք մ'ունենալ :

Կը տեսնենք որ այս պայմաններուն առջև խորհուրդն կը յայտնէ որ յօգուտ կայսրուհւոյն խնդրուած յայտարարութիւնը ստորագրելու պատրաստ է , բայց իր զօրաբանակին ալ նոյն ճամբուն հետեւելուն վրայ կը տարակուսի :

Կայսրուհւոյն յայտարարութեան վերաբերեալ խնդիրն իր կարողութենէն վեր է , և դարձեալ կը վիճաբանի :

Իսկ հաստատուելիք դաշնագրութեանց հիմանցը համար խորհուրդը կը խորհի որ Պագէն մարալախտն այս մասին որ և է գործ մը ստորագրելու համար բնաւ փոխանորդութիւն մը չի կրնար ընդունիլ , վասն զի պէտք է որ իր պաշտօնը բոլորովին զինուորական մնայ :

Վերջապէս Մէջ քաղաքին յանձնուելուն վըրայ ալ բնաւ յիշատակութիւն մ'եղած չէ :

Խորհուրդը՝ Պ. տր Պիսմարքի խնդիրներուն թէ և գոհացուցիլ պատասխաններ չտար , բայց և

այնպէս յարաբերութիւններն շարունակել կը խորհի , այն նպատակաւ որ այնպիսի զինուորական պատուաւոր դաշնագրութիւն մը հաստատուի որով կարենան գերմանական կառավարութեան հետ դաշնագրելու . կարող կառավարութիւն մը հաստատել , կը յայտնէ որ Պօայէ զօրպետն հասթիինկ պիտի երթայ տեսնելու համար թէ արդեօք կարելի է այս կերպ դաշնագրութիւն մը հաստատել , սա պայմանաւ մանաւանդ որ զօրաբանակին գլխաւոր հրամանատարն բնաւ որ և է դաշնագրութիւն ոչ ընդունի և ոչ ալ ստորագրէ :

Խորհուրդը այնպէս ըսած էր որ հաղորդակցութեանց իսկական կէտը միով բանիւ համառօտելու համար կայսրուհւոյն և ոչ թէ զօրաբանակի հրամանատարին կը պատկանէր խաղաղութեան պայմաններն ստորագրելը : Այս կերպով մարալախտն քաղաքական հատուցմանց նկատմամբ տարապայման շնորհ մը խնդրելով ամեն տեսակ երաշխաւորութիւն կը մերժէ :

Խիստ աղէկ ստուգուեցաւ որ մարալախտն չէզոք երկրի մը վըրայ քաշուիլ պահանջող խաղաղութեան պայմաններուն ներքև չէ հաճեր ստորագրել , բայց անկէ վերջը յայտնապէս անյաջող եղած խօսակցութիւններն ինչո՞ւ շարունակեր է :

Փոխանակ այնպիսի արդելանի մը մէջ փակուած մնալով իր զօրաբանակն իր վիճակին մէջ ձգելու և կամ թէ այս ու այն երկիրը ցրուելու հանութիւն ցուցնելու համար կայսրուհիին ընտրութեանը դիմելու , և փոխանակ անկէ խնդրելու որ դադարեալ յարաբերութիւնն վերստին

սկսուի և այդ յարաբերութիւնն անողոք թնա-
միի մը օգտակար եղած աղերսանաց զօհելու ,
աւելի աղէկ չէ՛ր ըլլար , եթէ անկարելի էր իրեն
Մէջէն դուրս ելնել , որ պատուով տկարանար ,
վառօղներն շուրջ նետէր , ուղմամթերքը եղ-
ծէր , նիւթերն ոչնչացընէր , պարիսպներն քան-
դէր , ստորերկեայ տեղեր պեղէր , միով բանիւ
թընամուտն աւերակաց կոյտէ մը զատ ուրիշ բան
չը թողուր : Յուսահատ վիճակները աւելի ազդու
որոշումներ կը պահանջեն : Միայն քանի մ' օր-
ուան ուտելիք մնացած էր , այսպիսի ժամանակէն
օգուտ պէտք էր քաղել ամէն ինչ եղծելու հա-
մար : Միթէ ստոյգ չէ՛ր որ Պոսայէ զօրապետին
երթալը ապարդիւն պիտի ըլլար , որ թնամին
անոր պատճառով թիւնը պիտի երկարածդէր ,
և անգամ մը ուտելիքն հատնելուն պէս պիտի
պարտաւորէր քաղաքն ու ուղմական նիւթերն
անեղծ իրեն յանձնելու : Երբ մարտախօսին հար-
ցուեցաւ թէ այս դէպքին մէջ խորհրդոյ առա-
ջարկած էր որ ուղմական նիւթերն եղծէ , հե-
տեւեալ պատասխանն տուաւ :

« Խորհրդոյն մէջ ուղմական նիւթոց եղծ-
ման վրայ խօսք չի բացուեցաւ . բայց ես երբ այս
մասին առանձինն Սոլէյլ և Քոֆինիէր զօրապետաց
հետ խօսակցեցայ , առաջինն ինձ պատասխանեց
թէ՛ ինքն այդպիսի եղծման մը թնամի է , և թէ
այս բանս դուռներուն մէջ խռովութիւն առաջ
բերելով՝ պատերազմական օրէնքէ դուրս դէպ-
քեր կը ծագին . և թէ շատ ստոյգ է որ թնամին
մեր այս յանձնառութիւնն իշարն պիտի դործա-

ծէ , մանաւանդ ի ներքուստ կատարած գործո-
ղութեանցը մէջ : Երկրորդը՝ այս մասին որչափ
ժամանակ պէտք ըլլալուն վրայօք հարցուցած ա-
տենս պատասխանեց թէ ասի այնպիսի մեծ գործ
մ' է որ երկար աշխատութեանց պէտք ունի :
Որովհետեւ ընաւ օրէնք մը այսպիսի միջոց մը չի
տրամագրէր , ուստի չուղեցի ընել , այլ միայն
ստուգեցի թէ դուռներու դիւարներէն մին
այսպիսի միջոց մը խորհած է : Այս մասին ուրիշ
գիտողութիւն մ' ալ եղաւ , այսինքն՝ թէ ամեն
ինչ կը յայտնէր որ Մէջ դարձեալ Գաղղոյ պիտի
վերադառնայ խաղաղութիւնն հաստատուելէն
վերջը , ինչպէս որ արչաւանօք դրաւուած միւս
քաղաքներն այնպէս եղան :

Երբ Քոֆինիէր զօրապետին հարցուեցաւ
թէ ուղմական նիւթերն եղծելու համար ինչո՞ւ
մարտախօսին հրաման տալ առաջարկած չէր ,
պատասխանեց թէ՛ « Երկու գլխաւոր պատճառի
համար ըրած էր զայս , առաջինը այն էր որ յա-
րաբերութեանց միջոցին միայն զօրապետակին վրայ
խօսք կար , և Մէջի համար կատարեալ կերպիւ
լուութիւն պահուած էր . երկրորդն այն է որ
մինչև վերջին վայրկեանը ազդու կերպիւ այնպէս
որոշուած էր որ եթէ թնամուտն գրած պայման-
ներն բուրրովին պատուաւոր չըլլային , մեծ պա-
տերազմ մը պիտի բանայինք : Ուստի մեր յար-
ձակման ու պաշտպանութեան միջոցներն զօհելը
վտանգաւոր համարեցայ : »

Վերջապէս Քոֆինիէր զօրապետն յաւելցուց .
« Վերջին վայրկեանն՝ մարտախօսն անձնատու-

թեան մանրամասն պարագայից ինքն անձամբ վարչութիւն ընելուն համար ինծի չէր պատկանէր բան մ'ընել. նա զիս իբր իշխան կը հեռացրնէր որ և է գործոյ մը ձեռնամուկ ըլլալէ . . . : Այլ սակայն տեղի ունեցած իրողութեանց նայելով շատ յայտնի է որ եթէ ես այս առտւարկութիւնն ալ ընէի, ապարդիւն պիտի ըլլար, և որովհետեւ գուք կը պնդէք այս կէտին վրայ, ես ալ կը պարտուորիմ ըսել որ այս համոզումը իմ մտքիս վրայ բացորոյց տպաւորութիւն մ'ըրաւ :

Երբ մարաշախտին Սոլէյլ զորապետին համար ըսածն սոյն զօրապետին հաղորդուեցաւ, նա հետեւեալ պատասխանն տուաւ :

«Այս մասին մարաշախտին հետ ըրած խօսակցութեանս ատեն խօսածներս չեմ յիշեր. կը մերժեմ նաև իրեն ըսելիս թէ ես եղծման թշնամի եմ և հաստատապէս հակառակ այդ կերպ ամեն մի ինքնեքու : Այս մասին ամեն զրուցումք կը հերքեմ, և մարաշախտին այս ըստններուն ստոյգ կամ անստոյգ ըլլալն որոշելը զինուորական կատարեալ յատկութեանը կընծայեմ » :

Որչափ բնական էր որ մարաշախտն թնթանօթաձիգ զօրաց և զինուորական ճարտարապետաց հրամանատարին կարծիքն ունէր գործոյն կատարման միջոցներն կանոնաւորելու համար, այնչափ անօգուտ էր իր առնելիք կարծիքն որով պիտի որոշէր թէ ռազմական նիւթերն եղծել թէ անեղծ թշնամոյն յանձնել պէտք կըլլար : Աւելի նախնական կանոն եթէ նկատողութեան առնուք, քիւրու թեամբ կրնանք հետևեցնել որ պէտք չէ

թշնամին ընդդէմ իր երկրին զինուորել : Եւ եթէ խաղաղութիւնը ստորագրուելէն ետև Մէջ Գողղիոյ վերադարձած տեսնելու գաղափարը կրնար նորա պարիսպներուն քանդումէն առաջ զմտալախտն տարակուսեցնել, ինչ պատճառ կրնար յառաջ բերել զէնքերն ռազմամթերքը, վաւօրներն ու թնդանօթները անեղծ թշնամոյն յանձնելու իրաւունք ունենալուն համար : զորս թշնամին ի հարկին մեր զօրաբանակներուն և մեր քաղաքներուն դէմ պիտի գործածէր : Բաւական է յիշել որ թիօնվիլը քիչ ատենէն վերջը Մէջի նաւարանին նիւթերովը պաշարուեցաւ :

Ռազմական նիւթերուն յատուկ եղած այսպիսի եղծումներ իրենց տարապայման կարեւորութեանը պատճառաւ բաւական ժամանակի կարօտ էին : Յայտնի էր որ եթէ կիկին յարաբերութեանց սկսուէր, այդ ժամանակն պիտի կորսնցընէին :

Մարաշախտն Պօայէ զօրապետին Լինտրա զրկուելուն վրայ խօսք բացուած միջոցին ռազմական նիւթոց խնդրոյն վրայ լուծիւն պահելով և զանոնք եղծելու համար պէտք եղած հրամաններն չի տալով իր վրայ ծանր պատասխանատուութիւն մը հրաւիրած է : Ատեննը այդ խրեղքոյն վերաբերեալ ամեն պարագաներն պարտաւորեցաւ ինամով քննել, և իրեն ներկայացած վկայութեանց մէջէն վիճուազիլ զնդապետին և Քօֆինիէր զօրապետին վկայութիւններն մասնաւոր նկատուելիքն արժանի են :

Յիշեալ զնդապետը յայտնեց որ ինքը Քօֆինիէր զօրապետին հրաման առնելով որ երթայ

Մէջի՝ զօրարանակին վիճակին նման վիճակի մէ
 քանուած ուրիշ զօրաւոր քաղաքներու պարսպա-
 պահ զօրքերուն ընդունած պայմաններն իմանայ ,
 այս առթիւ կրցաւ նաև ղինուց և վառօդներու
 եղծման վրայօք անոր հետ խօսակցիլ . « Երբ իմ
 պաշտօնս ըննցաւ , ըսաւ յիշեալ զնդապետն (հոկ-
 տեմբեր 21 ամսամբոյ) արձանագրութիւն տա-
 րի իրեն , և ինձի հրամայեց որ քաղաքական
 ժողովրդեան վերաբերեալ իրերն յողուած ի ձեռով
 գրի առնում : Զօրապետն տխուր և յուսա-
 հատ դէմք մ'ունէր : Միտակց դուրս ելանք , և
 ղինուց ու ռազմական նիւթոց եղծմանը վրայ
 խօսք բացի իրեն : Կա հետեւեալ որտաչարժ խօս-
 քերն ըսաւ . « Սիրելի ընկերս , թշնամին միտքը
 դրած է ամեն նիւթ անեղծ ընդունելու : — Բայց ,
 ըսի իրեն , մենք Գերմանացւոց շահը պիտի
 պաշտպանենք թէ Գաղղիացւոց : — Ասոր վտխա-
 րէն բան մը պիտի ընդունինք , ըսաւ նա , սպա-
 ներուն ձիերնու կարասիքը իրենց պիտի թողուն » :

« Յոյն խօսակցութեան թուականն չեմ կրը-
 նար ճշդիւ ըսել , խօսակցութիւն մը՝ որուն բոլոր
 կարեորութիւնն խիստ վերջէն իմացայ , բայց
 ստուգիւ Շանկարնիէ զօրապետին վերադարձէն
 առաջ ըլլալու է , որն որ հոկտեմբեր 23 ին էր ,
 և այնպէս կը կարծեմ որ մարտնախաղն ձեռքովը
 բացուած առաջին յարաբերութեանց թուակա-
 նէն առաջ՝ թշնամեոյն գրած պայմաններն Մէջ
 դանուողներուն ծանօթ էին » :

Երբ այս վկայութիւնն Քօֆինիէր զօրապե-
 տին հաղորդուեցաւ , « Յիրաւի , ըսաւ նա , կը

յիշեմ թէ Վիլհուպի զնդապետին հետ խօսած
 եմ . պաշտօնապէս և խորհրդակցաբար աղա-
 չեցի իրեն որ երթայ ուրիշ քաղաքներ խուղար-
 փէ , որպէս զի ի պահանջել հարկին քաղաքին շա-
 հերն պաշտպանելու կարող ըլլամ : Յիրաւի խօ-
 սեցաւ նա ինձ ռազմական նիւթոց եղծման վրայ » :

Երբ յիշեալ զօրապետին հարցուեցաւ թէ
 թշնամեոյն ամեն ինչ իրեն անեղծ յանձնուիլ պա-
 հանջէն ու այս պահանջման ալ Պազէն մարա-
 ջախտէն ընդունուիլը գիտէր , պատասխանեց թէ
 այս մասին կատարելապէս ճիշդ բան մը չի կրնար
 յիշել . միայն սա կրնայ ըսել որ հոկտեմբեր 20 էն
 մինչև 24 մարտնախաղն թշնամեոյն տարապայման
 պահանջումներն նկատողութեան տակ առաւ :

Ուրեմն անձնատուութեան պայմաններուն
 համար մարտնախաղն ու թշնամեոյն ընդհանուր
 բանակատեղեաց մէջ տեղը ուղղակի խօսակցու-
 թիւններ կը ըլլային : Այս խօսակցութիւններն հոկ-
 տեմբեր 10 ի թուականէն առաջ տեղի ունենալ
 սկսած են . և ասի՝ Պայէ զօրապետին Պ. Պոմբարի
 ըսած և արդէն ասկից յառաջ յիշուած սա խօս-
 քերէն ալ կրնայ տպադրուիլ , թէ՛ « Ընդհա-
 նուր բանակատեղիէն հոգի թշնամեոյն առաջադ-
 րած պայմաններէն առեւտրեղմ պայմաններ ընդու-
 նելու համար . բայց իր պաշտօնն յովողած չէր » :

Ըսել կը ըլլայ որ մարտնախաղն թշնամեոյն առա-
 ջադրած պայմաններն՝ երկու զօրաբանակաց ընդ-
 հանուր բանակատեղիներուն մէջ բացուած ստեպ
 յարաբերութեանց միայն միջոցաւ իմացած
 կը ըլլայ :

Ֆրէտէրիք-Շարլ իշխանն ու Պաղէն մարա-
շխարհ հաստատագլխ իրարու հետ կը թղթակ-
ցէին : Իրենց մէջ վտիտխակի դրուած գրութիւն-
ներէն ոմանք արձանագրաց մէջ կան , ոմանք ալ
չնշուած են :

Այս մասին երբ մարաշխտոն հարցաքննուե-
ցաւ , ըսաւ թէ այս տեսակ գրութեանց տես-
րակներն Պօպէ զորապետին քոջն էր , և երբ նա
Անգղիա ուղևորեցաւ , առանց իւր զիտութեանք
հրաման է ըրեր որ զանոնք այրեն :

Մեպտեմբեր 11 ին , նամակ մը յանձնուեր է
Մուլէնի յառաջագահներուն : Արնու-Յիվիէր հը-
րամանատարն իր առաջին վկայութեանը մէջ
յայտնեց որ այն նամակը Ֆրէտէրիք-Շարլ իշխա-
նէն եկաւ : Երկրորդ վկայութեամբ ալ յայտնեց
որ սոյն գրութիւնն մարաշխտոնէն եկաւ : Որ և
իցէ , այս գրութիւնն արձանագրաց մէջ չկայ :
Առաջն իրաւունքն :

Մեպտեմբեր 16 ին մարաշխտոն Ֆրէտէրիք-
Շարլ իշխանին նամակ մը կը գրէ աշխարհին կա-
ցութեան վրայօք իրմէն լուր խնդրելու համար :
այս նամակին հետքն տնգամ չկայ մարաշխտոն
թղթակցութեանց արձանագրութեան մէջ : Երկրորդ
իրաւունքն :

Սթիէլ զորապետն սեպտեմբեր 16 ին նամակ
մը կը գրէ Պօնի գնդապետին վերադարձը իմա-
ցընելու համար որուն վտխանակութիւն ին դրեց մա-
րաշխտոն գրով : Այս խնդրագրոյն հետքը չկայ ո՛չ
սպայից արձանագրութեան մէջ և ո՛չ ալ մարա-

շխտոն տուած գրութեանցը մէջ : Երկրորդ
իրաւունքն :

Մեպտեմբեր 16 և 23 ի միջոցը մարաշխտոն
Սամուէլ հրամանատարը կաննեց որ Ֆրէտէրիք-
Շարլ իշխանին Պօպէ զորապետին վէրսայլ եր-
թալու արտօնութիւն տուած ըլլալը ազդարարող
մէկ գրութիւնը թարգմանէ : Այս նամակն ալ
չկայ արձանագրութեանց մէջ : Երկրորդ
իրաւունքն :

Բէնիէ՛ մարաշխտոն ձեռքը իշխանին խել մը
նամակները տեսած է : Պուրպաքի զորապետն կը
հաստատէ զայս : Արձանագրաց մէջ այս թուա-
կանին համապատասխանող միայն մէկ նամակ մը
կայ որով իշխանն գէպքերը կը ծանուցանէ : Արդ-
հարկաւ դռնէ նամակ մ'ըլլալու է որուն հետքն
չկայ : Հինգերորդ իրաւունքն :

Բէնիէ մասնաւորապէս կը յայտնէ նաև որ
մարաշխտոն ձեռքը իշխանին ուղղուած խել մը
նամակներ տեսած է : Այդ նամակներուն միայն
մէկը կայ արձանագրաց մէջ : Արդ քանի որ շատ
նամակներ կան եզեր , դռնէ անոնցմէ մէկն պա-
կաս է , առանց հաշուելու անոր պատասխանն
որուն հետքը չկայ : Վերջորդ իրաւունքն :

Մեպտեմբեր 23 ին՝ մէկ պաշտօնկայ մը գեր-
մանական ընդհանուր բանակատեղիէն նամակ մը
կը բերէ : Յիբաւի այս թուականին Բուսիացուց
սպայից գլխաւորէն նամակ մ'եկած է Լիւքսէն-
պուրկցի բժիշկներուն վերաբերեալ : Սոյն նամա-
կին մէջ ինը Լիւքսէնպուրկցի բժիշկներու իրենց
հայրենիքը վերադառնալն յիշուած է , մինչդեռ

Մէջ նօթը բժիշկ կայ : Սթիէլ զօրապետը այս կերպով թէնիէի և Պուրպաքի զօրապետին համար անցազիր մը հայթայթած է . բայց այս վերջին նամակը թէնիէ հետեւեալ օրն սեպտեմբեր 24, բերած է իր մարաշախտին քով դառնալու ատենը, և պաշտօնէին սեպտեմբեր 23 ին բերած նամակն չկայ : *Սթիէլի գրած նամակը :*

Թէնիէի գէպըը Ֆրէտէրիք-Շարլ իշխանին և մարաշախտին մէջտեղը բացուած փոփոխակի թղթակցութիւններով աւարտած է . իշխանը մի և նոյն ատեն Պ. տը Պիմարքի հեռագիր մը կը գրէ և մարաշախտն ալ սեպտեմբեր 24 ին Սթիէլ զօրապետին պատասխան մը կը գրէ . յիշեալ հեռագիրը չկայ : *Սթիէլի գրած նամակը :*

Քանի մ'օր վերջը մարաշախտն Պուրպաքի զօրապետին Մէյ վերադառնալու համար ճամբայ երկնքը ազդարարող տեղեկութիւն մը կընդունի : Այս տեղեկութիւնն հարկաւ գրաւոր եղած ըլլալու է . Բայց որովհետեւ մարաշախտն կը պնդէ թէ ասի բերանացի տեղեկութիւն մ'էր պաշտօնեայէ մը իրեն հաղորդուած, այս մասին չենք ուզեր կասկածիլ :

Հոկտեմբեր 18 ին և 19 ին մարաշախտն երկու նամակ գրած է առ Ֆրէտէրիք-Շարլ իշխանն Պօսայէ զօրապետին վէրտալ գրիտելուն վրայ : Այս երկու նամակներն չկան արձանագրութեանց մէջ : *Սթիէլի գրած նամակը :*

Պօսայէ զօրապետն կայսրուհւոյն նամակ մը կը տանի, որուն պարունակութիւնը մարաշախտն չէ ուզած իմացընել, պատճառելով որ անոր մէջ

բաղաքական խնդրոյ վերաբերեալ բան մը չկայ : *Սթիէլի գրած նամակը :*

Անկից վերջը մարաշախտն Ֆրէտէրիք-Շարլ իշխանին կը գրէ որ իշխանութիւն տայ Շանկարնիէ զօրապետին իր ընդհանուր բանակատեղին դալու : Սոյն նամակը չկայ արձանագրաց մէջ : *Սթիէլի գրած նամակը :*

Հոկտեմբեր 28 ին, Ֆրէտէրիք-Շարլ իշխանն իմանալով թէ դրօշակներն եղծուած են, Սթիէլ զօրապետին կը հրամայէ որ մարաշախտին դանդատանաց գիր մը գրիէ (1) : Այս ամենակարևոր նամակը, կրօժ Ժարրա զօրապետն, ինքն անձամբ մարաշախտին գրասենեակը ձգած է : Այս նամակնալ չկայ արձանագրաց մէջ : *Սթիէլի գրած նամակը :*

Սոյն պաշտօնական գրութեանց անհետանալը բաւական է կասկածներն իրականացընելու համար, և քանի որ մարաշախտին օգնական-հրամանատար Պ. Պօսայէ զօրապետն Անդրիա երթալէն առաջ հրամայեր է որ զանոնք այրեն, տարակոյս չկայ որ այդ գրութիւններէն շատ փրաստակար եղած չըլլան :

Մարաշախտին ու գերմանական ընդհանուր բանակատեղւոյն մէջ բացուած յարաբերութիւններն միայն փոփոխակի թղթակցութիւններով չեն եղած :

(1) Սթիէլ զօրապետին հոկտեմբեր 29 ին առ Ժարրա զօրապետն ուղղած գրութիւնն ալ յիշուած չէ . ըսել կըլլայ որ այդ ալ միւսներուն պէս անհետացած է, պատճառն որ մարաշախտն այդ գործէն տեղեկութիւն չունի եղեր :

ինչպէս որ արդէն տեսանք, մարալխտն՝
 րէնիէի գալէն առավ և Լօնտվիլ Պօսյէ զորապե-
 տին ու Ֆրէտէրիք-Շարլ իշխանին մէկ օգնական-
 հրամանատարին մէջ տեղի ունեցած տեսակցու-
 թեանն անմիջապէս վերջը՝ ինքն անձամբ Բրու-
 սիացի սպայ մ'ալ ընդունած է :

Ասկէց զատ ատեանը ստուգեց նաև որ սեպ-
 տեմբեր 26 ու հոկտեմբեր 20 ի միջոցին մէջ թըշ-
 նամուշն և Պազէն մարալխտի բանակատեղիներ-
 րուն մէջ շարունակական երթիւկէտներ կե-
 ղած են : Մարալխտին բանակատեղւոյն յառա-
 ջապահներն եկող սպայներուն համար յատկաց-
 եալ կառքին կառավարին հետևեալ վկայութիւնը
 այս մասը սրտակի կապացուցանէ :

« Երբէք իրարու վրայ չորս օր շանցուցի ա-
 ոանց մարալխտին քով տանելու գերմանացի
 սպայներ ունենալու, իր յայտնեմ որ իմ երեսուն
 և վեց օրուան ծառայութեան միջոցը՝ այս եղև-
 լութիւնն առ նուազն տաներկու անգամ պա-
 տահեցաւ : Օր եղաւ որ Պան-Մէն-Մարթէն երկու
 անգամ երկու պաշտօնեայ տարիւն :

Երբ յիշեալ վկայութիւնն մարալխտին հա-
 ղորդուեցաւ, ըսաւ թէ իր ընդհանուր բանակա-
 տեղին միայն ութը պաշտօնեայ եկած է, և եղած
 յարաբերութիւններն ալ չէ թէ անձնական էին,
 այլ պաշտօնական ընդհանուր գործքերու կը
 վերաբերէին :

Ատեանը մարալխտին գիտել տուաւ, որ
 ինքը պատրաստ էր թշնամուշն հետ ուղղակի յա-
 րաբերութիւններ ունենալէ հրաժարիլ և այս

հոգը ընդհանուր սպայից յանձնել, վերջապէս
 թշնամուշն հետ յարաբերութիւններ ունենալու
 նման փափուկ խնդրոյ մը մէջ կանոնաւոր գոր-
 ծադրութիւններէ գուրս չենել :

Այս դիտողութեան մարալխտն բաւ համա-
 րեցաւ պատասխանել որ եթէ սկիզբէն ի վեր
 սպայից գլխաւորն եկող պաշտօնեայները փոխա-
 նակ իր մասնաւոր բանակատեղին բերելու ինքը
 ընդունած ըլլար, մինչև վերջը այնպէս կը
 շարունակուէր :

« Եթէ ինձի հարցուի, յաւելցուց մարալխ-
 տն, ասի պարզապէս սովորական բան մ' եղած
 է, և ես այս յարաբերութեանց մէջ ձեր են-
 թադրածին չափ ծանրութիւն չտեսայ, և այս
 մասին իմ խիղճս և իմ օրինապահութիւնս բող-
 րովին տանջանքէ ազատ են » :

Թէև մարալխտն ատեանին՝ այս դիտողու-
 թիւնը կը հերքէ, բայց և այնպէս չի կրնար այս-
 պիսի ապօրինի յարաբերութեանց համար կշտամ-
 բանքէ ազատ ըլլալ, մինչևեւ եկող պաշտօնեա-
 ներն յառաջապահները մնալով կրնար գլխաւոր
 սպային թղթակցութեամբն ու միջնորդութեամբը
 իր գործերն անենել :

Այսպէս կը տրամադրէ 1832 մայիս 3 ի օրի-
 նադրութեան 9-րդ, յօդուածը պատերազմական
 դաշար գտնուած զինուորականաց համար :

Նոյնպէս 1863 հոկտեմբեր 13 ի օրինադրու-
 թիւնն ալ հետևեալ որոյ տրամադրութիւններն
 կը հրամայէ թշնամուշն հետ յարաբերութիւն ու-
 նենալու մասին : « Գլխաւոր հրամանատար իր իր
 ներքին և արտաքին հարաբերութեան մասին » :

լ-ի մէջ յորհուրդովս անկողնու է ընկածսն զեքս) Ինչո՞ւ համար այսպիսի շարունակական երթիւններ թիւններ կը ըլլային, եթէ Ֆրէտէրիք-Շարլ իշխանին և Պաղէն մարաշախտին մէջ տեղ խօսակցութիւններ չէին ըլլար: Ատոնք հարկաւ պիտի իմացուէին: Այսպիսի յարաբերութեանց հետեւանքը չէ թէ միայն պաշտօնավարութեան նըկատմամբ դանդաւարութիւն մը կամ տեսակ մը լռելի դիտարարում պիտի ըլլար, այլ և այդ յարաբերութիւններն յաճախելով ի հարկէ դէմ առ դէմ թշնամոյն պատերազմական պահանջումներէ հրաժարելու նշան մը պիտի համարուէր: Այս բտածնիս կրնանք ասացուցանել մարաշախտին Արի կայարանին դէմ նետուած թնդանօթներուն նկատմամբ Սէն-Քանթէնի մարտկոցի հրամանատարին տուած հրամանաւն ալ, ուր զինուոց մեծամեծ շարժումներ կը գործուէին: Թըշնամոյն ընդհանուր բանակատեղիէն խնդրուցաւ որ իբր թէ գաղղիացի ծանր վիրաւորելոց առժամանակեայ հիւանդանոց եղած չէնքերուն վրայ թնդանօթ չի պարպուի, որն որ պարզապէս խնդրել է թէ զէնքերնիդ դադրեցուցէք, և այն ալ այնպիսի տեղոյ մը համար ուր բաւական մեծ հեռաւորութիւն մը (6,300 մէթր) գտնուելով գրեթէ կանոնաոր թնդանօթ նետելու կարելիութիւն չկար: Թշնամոյն այս խնդրոյն վրայ մարաշախտը անմիջապէս հրաման տուաւ որ քաշըին:

Արդ՝ շատ Գերմանացիք նոյն կողմը տեղի ունեցած խեղ մը ազգական շարժումներէ ասպահով

և ազատ տեսնելով՝ եկած Ար հաստատուած էին, և հոն հանդէսներ կը կատարէին որոց ձայնը մինչև մեր յառաջագահները կը հասնէր:

Վերջապէս Արի վերակացու Պ. Անդրէասի վկայութիւնն ալ կը հաստատէ թէ Սէն-Քանթէնէն քանի մը դաղղիացի վիրաւորեալներ պատասպարող հիւանդանոցներն չէին տեսնուէր: Մարաշախտին հարցուցաւ թէ այս իրողութեան մէջ թշնամին զինքը նեղող թնդանօթներն կերպով մը դադրեցընելու համար այնպիսի խորամանկութիւն մը բանեցուցած ըլլալը տեսած չէ՞ր, պատասխանեց թէ այսպիսի հրաման մը տարով թշնամոյն շնորհ մ'ընել չէր ուզած, այլ պատերազմական օրինաց հետեւող գտնուելու համար ըրած էր, որք կը հրամայեն հիւանդանոցներու վրայ թնդանօթ չի պարպել, մանաւանդ որ կը կործէր ալ թէ Արի հիւանդանոցներուն մէջ մեր վիրաւորեալներէն բազմաթիւ անձինք կը գտնուէին: Յայտնի է թէ մինչև զայսօր քաղաքականացեալ և քրիստոնեայ ազգաց մէջ գործադրուած այս կերպ խոհեմութենէն թշնամին իր կողմանէ որչափ օգուտ քաղեց:

Մարաշախտին ներկայացուցած յիշեալ մեկնութիւններն չեն կրնար զինքը արդարացունել, որովհետեւ գիտէր թէ Արի երկօթուղոյ կայարանը թշնամին խիստ շատ վտօօր և ռազմամթերք պահած էր. Բէնթիէ գնդապետը՝ որ սեպտեմբեր 14 ին Պ. Անդրէասէն զրկուած առաջին լրագիրներն իրեն բերած էր, այս բանը իրեն իմացուցած էր:

Այս կերպ իրողութիւն մ'ալ Լճի վրի կա-

մուրջին նկատմամբ անդի ունեցած է: Արդէն անասնք որ օգոստոս 16 ի առաւօտուն սոյն կամուրջին երկու կամարներն ձախող դէպքով մը քանդուեր էին: Սեպտեմբեր 20 ին երբ մտրախտարն հրաման րրաւ որ յիշեալ կամուրջնորդեն, մին հոկտեմբեր 8 ին և միւսը հոկտեմբեր 24 ին լմեցաւ: Այս տարապայման շէնքը թէ և ժիւսի և անոր չընկալարը գտնուած թշնամոյն դունդերուն ճիշդ դիմացը կ'իյնար, և Գօնիփիկը զօրապետն ալ անոր կատարումը անկարելի դատած էր, բայց և այնպէս թշնամին անոր նորոգուելուն բնաւ արգելք չնդաւ, վասնզի զիտէր որ Մէջ առնուելէն վերջը ինքը այդ շէնքէն մեծ օգուտ պիտի քաղէր, պատճառն որ թիօնվիլ քաղաքն ալ առնելու և Սարէպրիւքի գիծը Արտնի երկաթուղւոյ հետը միացընելու համար կարևոր եղած միջոցներն սոյն կամուրջին պիտի անցընէր:

Չենք հասկընար թէ մարախտարն ի՞նչ պատճառաւ այդ ճամբան նորոգել տուաւ, քանի որ դուրս ելնելու անկարելիութիւն կը ջուցընէր: Եթէ աղէկ խորհելու ըլլար, պարտաւոր էր կամուրջներն բոլորովին քանդել և աւանկով թըշնամոյն բոլոր անկալութիւններն ի դէրու հանել: Երբ հարցուեցաւ իրեն թէ դերմանական գունդերուն այն միջոցին պահած լուսութիւնք ի՞նչպէս զինքը չի խորհնցուց, պատասխանեց թէ այս ճամբան չինել տալուն պատճառը Չրդ, Յրդ և հրդ գունդերուն հաղորդակցութիւններն դիւրացընելու, և թիօնվիլ երթալիք չողեկառքերն անոր վրայէն անցընելու համար էր վերջապէս

պէտք չէր ամենեւին թշնամոյն գունդերուն լուսութիւնէն բան մը հետեցընել, վասն զի այս լուսութիւնը ընդհանուր էր: Կը խոստովանի որ երբէք խորհած չէ շնիւլ այս հաղորդակցութիւնն, որ կը տէրտէրէր: Այս մանաւանդ թէ թշնամոյն ծառայութիւններ մատուցած է, կամ լաւ և ս է ասել, սոսկ թշնամոյն:

Գ Լ Ո Ւ Խ Գ

ՊՕԱՅԷ ԶՕՐԱՊԵՏԻՆ ԿԱՅՄՐՈՒՂԻՈՅՆ ԲՈՎ ՎԱՐԱՅ
ՊԱՇՏՏՈՒՆ: — ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԳԼԽՈՎԻՆ
ԱՆՑԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ:

Հոկտեմբեր 19 առաւօտուն Պօսյէ զօրապետը Լոնտրա գնաց: Չենք ուզեր ներկայ ծանուցագրոյս մէջ յիշել այն ստիպողական խուզարկութիւններն զորս կայսրուհին րրաւ զօրաբանակին համար: Այս խուզարկութիւնները որք օգուտ մը չունեցան, որովհետեւ կայսրուհին չէր ուզած գերմանական կառավարութեան դրած խաղաղութեան պայմաններն ստորագրել, շարունակուեցան մինչև այն վայրկեանը ուր զօրաբանակին անձնատուութեան լուրը հասաւ ի Լոնտրա:

Իսկ Հոկտեմբեր 24 էն վերջը՝ Յրէտէրիքեարլ իշխանին ձեռքովը Պ. տը Պիամարքի մէկ հեռագիրն հասաւ առ Պոպէն մարախտարն, ահաւատիկ:

Մէջ ընդհանուր բանաձևով Մեղի օրէնքի 23 հոկտեմբեր 1870 :

« Պատիւ ունիմ Ձեր վսեմութեան գրկելու կէս դիւերուն հասած հեռագրոյ մը օրինակը որ հետեւեալն է .

« Առ Նորին վսեմութիւն Ֆրէտէրիք-Շարլ Իշխանն վասն Պօսյէ զօրապետն :

« Պօսյէ զօրապետն կը փախադի որ հետեւեալ հեռագիրն գրկեմ՝ ձեզ :

« Կայսրուհին՝ զոր տեսայ , խիտ մեծ ջանքեր պիտի ընէ մէջի զօրաբանակին օգնելու համար , և այս մասն իր խորին հոգատարութեան և հաստատուն դադմանցը նիւթ քրած է :

« Այլ սակայն կը պարտուորիմ՝ դիտել տալ ձեզ , Պ. մարմախտ , որ Պօսյէ զօրապետին հետ տեսակցութեան տեսնա կայսրուհւոյն հետ տակաւին յարաբերութեանց չի մտած իրեն իբր անհրաժեշտ ներկայացուցած երաշխաւորութեանցը և ոչ մէկը իրականացու , և կայսեր ասպազայն ալ ազգին և գաղղիական զօրաբանակին կացութենէն ընտան ապահովուած չըլլալուն՝ արքայն չի կրնար երբէք այնպիսի յարաբերութեանց պատրաստուիլ , որոց արդիւնքը Նորին վեհափառութիւնը միայն գաղղիական ազգին պիտի կարենայ ընդունել տալ : Լոնտրայէն առ մեզ հասած առաջադրութիւններն , ներկայ կացութեան մէջ , բացարձակապէս անընդունելի են , և ես զաւօք սրտի կը հաստատեմ , որ քաղաքական յարաբերութիւններով ալ որ և է արդիւնք մը ձեռք բերելու յաջողուած մը երբէք չեմ նկատեր :

ՊԻՍՍԱՆԳ

« Ստորագրութիւն . Ֆրէտէրիք-Շարլ »

Յիշեալ հեռագրոյն հասած օրը՝ խորհուրդը ընդհանուր բանակատեղին հաւաքուեցաւ անոր պարունակութիւնն իմանալու համար :

Յարաբերութիւններն ապարդիւն ըլլալուն պատճառաւ ալ ժամանակն եկած էր կատարելու այն վերջին պատերազմը՝ զոր խորհրդոյ բաւոր անդամներն հոկտեմբեր 10 ին կարեւոր կը դատէին զինուոց պատիւը պաշտպանելու համար : Քօֆինիէր զօրապետն թէ և հոկտեմբեր 19 ին այս տուալադրութիւնն կրկնեց , բայց ոչ մերժուեցաւ և ոչ ալ ընդունուեցաւ : Սա աղէկ դիտողուելու էր որ թշնամոյն խօստպահանջ ըլլալէն ստիպեալ՝ մեծ ջանադրութիւն մը , յուսահատական վորձ մ'ընել անհրաժեշտ էր : Այսպիսի պարագայի մը մէջ զօրաբանակին բարոյականը չի պաշտպանուեցաւ , ամէն ինչ կը հրամայէր մարմախտին որ իր զօրքերուն բարոյականը այսպիսի դիւցազնական որոշմամբ մը բարձրացընելու համար պէտք եղած բոլոր միջոցներուն ձեռնարկէր , թէ չէ՝ նոցոս վրայ տիրած ամենակերպ զրկումներ իրենց բարոյականը պիտի սարսէին :

Ձեռք բերուած զեղծութիւնը . — Այս մասին ընտու բան մը չի դորժադրուեցաւ : Ընդհակառակն՝ այս վերջին յարաբերութեանց ժամանակ , մարմախտն կարծես հասարակաց ոգին այսպիսի ազդու զգացումներէ չրկելու ետեւեղած է :

Հոկտեմբեր 18 ին , դունդերու հրամանատարներն հրաման ընդունած էին որ Պօսյէ զօրապետին բերած լուրերն իրենց զօրտրամիտ զօրապե-

տաց հաղորդեն, և ասոնք ալ ըստ օրինի դասապետութեան իրենց հրամանատարութեան տակ գտնուած գունդերուն պիտի հաղորդէին զանոնք:

Նոյն օրը՝ մարտիական թշնամեոյն իրենց ելքը արդիւիւում համարկատարած գործողութեանց նկարագիրը իր զօրաբանակին հաղորդեց: Յիշեալ նկարագրին մէջ՝ որնոր տասնհազար հատուածներու բաժնուած էր, ամեն գործողութիւն, երթեւեկութեան գիծեր, հրազինուց տեղումները, պատերազմ, կոտորած, ևն, մանրամասնաբար ցուցուած էր, որն որ Մէջի չրվակայից մէկ այլ խարհացոյցին վրայ գծուած բլլալով՝ բոլոր գլխաւոր սպայներն զայն ընդօրինակելու հրաւիրուեցան: Որդ՝ անձնատուութենէն վերջը՝ ուսումնական նիւթերն թշնամեոյն յանձնելու համար քաղաքը կեցող պաշտօնէից վկայութիւններէն կը հաստատուի որ յիշեալ թխր ու ոխալ նկարագիրն մեծ մասամբ չափազանցօրէն դժուարուած էր:

Մէջիէն, Սալանսօն, իրօջ գերապետաց վրկայութիւններն այս մասին բնաւ տարակոյս չեն թողուր:

Մի և նոյն օրն՝ հոկտեմբեր 10՝ Մէջի բոլոր տիրք գտնուած գունդերուն զօրապետացը և գլխաւորացը հաղորդակցութիւն մը տրուեցաւ պաշարման գունդերն կաղմող զօրաբանակին եօթը գունդերէն: Արդէն առջի օրու ընէ, հասարակութիւնն գունդերու հրահանատարաց հաղորդուած մանրամասն ծանօթութեան մէկ նախադրական համառօտութիւնը լրագրաց միջոցաւ իմացած էր:

1873 ի օրինադրութիւնն այս մասին որոշակի կը խօսի այսպէս. «Փառաքի մը գլխաւոր հրամանատարն պարտաւոր է թշնամեոյն որ և է համոզմամբ իրեն հասուցած լուրերուն ունկնդիր չլլալ և իր ու իր հրամայած պարսպապահ զինուորականաց քաջութիւնը դէպքերէն չի ստանեցրնելու համար ամեն լանք ի գործ դնել»:

Ուրեմն մարտիական թշնամեոյն իրեն հաղորդած տեղեկութիւններն իրը ճշմարիտ ընդունելով՝ յայտնապէս իր պարտաւորութեան դէմ գործած է: Գանոնք իր գունդերուն ալ հաղորդելով՝ այդ լուրերուն աւելի հաւանականութեան կերպարանք մը կուտայ քան թէ կասկածանոց: Եթէ փոխանակ ըջաղղիա իրը խանդարման վիճակի մը մէջ երկեցրնելու պատերազմի շարունակելու որոշում մ'ընէր, ըսելով թէ Գաղղիա թշնամեոյն դէմ յուսահատական գիմադրութիւն մը պիտի գործադրէ, այն ատեն փոխանակ իր զօրաբանակն վհատեցրնելու զանի աւելի ևս քաջաւերած չէր ըլլար: Յայտնի է որ գունդերուն բարոյականը՝ թշնամիէն ընդունած այդ կերպ լուրերն անոնց հաղորդելով և անոնց հետ մէկտեղ թշնամեոյն քով եղած զօրութիւններն և իրենց ելքը արդիւիւում համար կատարած գործողութիւններն մանրամասնաբար անոնց պատմելով չէին կրնար բարձրացրնել: Այս կերպիւ նոցա բարույականը նուստացրնելէ զատ ուրիշ բան մը չի կրցան ընել:

Եթէ այն հաղորդակցութիւններն գտնէ բոլորովին խորհրդաբար տրուած ըլլալին գունդեր:

բու հրաճանատարաց միայն, անանկ որ յաղթե-
լիք արդեւ լինելու կարենալ ունենալուն նկատմամբ
իրենց իմաց կը տրուին, բոլորովին բնական երե-
ցած կըլլային: Բնդհակառակն ամենուն տարու-
ձայնուած ըլլալուն պատճառաւ յառաջ եկած
հետեանքն խիստ վնասակար կրնային ըլլալ:

Հոս ուրիշ բան չենք կրնար տեսնել եթէ ոչ
զորաբանական անձնատուր ըլլալու ստիպել և զանի
այս նուազտ վախճանին պատրաստել:

Տեղիւն իմաց լըյո քորչարուած ուրիշսիննը: —
Մարաշախան իր զորականաց մտքերն չէր ուզեր
ասիկց յառաջ յիշուած հրապարակական թեր-
թերովն հանդարտեցընել. արդէն երկար ատենէ
ի վեր մամուլը վարչութիւնը այս կերպ հրահանգ-
մ'ընդունած էր: Երազբաց փորձերն ամեն օր
մեծ ընդհանուր բանակատեղին կը զրկուէին, և
հասարակութեան ծանուցուելիք լուրերն անկէ
կը հազարուէին:

Սեպտեմբեր 24 ին, հոկտեմբեր 5 ին և 16 ին
լրագրաց մէջ հրամանաւ Մէջի բոլորտիքը գրա-
նուած թշնամոյն զօրութեանց ճիշդ հաշոյն և
բաժանմանը վրայ տեղեկութիւններ հրատա-
րակուեցան:

Այսպիսի տեղեկութեանց հրատարակու-
թեան հետեանքը ինչ կրնար ըլլալ, եթէ ոչ
զորաբանական Մէջէն դուրս ելնելու փորձ փոր-
ձած ժամանակն անոր արդեւր ըլլալ:

Բնդհակառակն եթէ քննութեան ենթար-
կուած լրագրաց փորձերն պատեւաբար մը մղելու
համար զորաբանական խրանխոյս մը ասուլ յառ-

կութիւնն ունենային, մարաշախան անոնց հրա-
տարակութիւնը կարգիւէր:

Այսպէս ահա Մէջի ամբութեանց նախկին
տնօրէն Հիւմայէր զնդապետին մէկ յօդուածին
հրատարակութիւնը արդիւրեցցաւ, որուն մէջ
յիշեալ մեծ պաշտօնեայն պատմական դիտողու-
թիւններով կը ջանար հաստատել որ զորաբանա-
կին կացութիւնն յուսահատական չէ, և աշխար-
հին զորձադրած ջանքերն կրնան արդիւնաւոր
ըլլալ:

Մի և նայն կերպիւ արդիւրեցցաւ նաև Լեւո-
նիստի Մուրադի լրագրոյն մէկ յօդուածին հրա-
տարակութիւնն ալ, որուն մէջ անձնատու-
թեան գաղափարն բոլորովին մերժուած էր. կը
հարցընենք թէ ինչո՞ւ այսպիսի միջոց մը գոր-
ծադրուեցաւ խորհրդոյն հետեւեալ օրն, մինչդեռ
սոյն խորհրդոյ մէջ միաձայնութեամբ որոշուած
էր որ եթէ թշնամին պատուոյ և պարտաւորու-
թեան զղացման հետ անհամեմատելի պայմաններ
աստիճանէ զորաբանական, յուսահատական փորձ
մը ի գործ դրուի:

Գերմանական լրագրաց մէջ հրատարակուե-
լով մինչև մեր յառաջապահներն հասած վհա-
տեցուցիչ լուրերուն հրատարակութիւններն ան-
տեղութիւններէ զատ ուրիշ բան յառաջ չէին
բերեր, կը հարցընենք, մարաշախան ինչո՞ւ զա-
նանք յարգեց:

Սրբէն տեսանք որ Պօսայէ զօրապետն մէր-
սայէն գառնալու ատենն հետը լրագիրներ բե-
րաւ դուրս Պ ալ Պիսմարք իրեն յանձնած էր: Երբ

այն լրագիրներէն երկուքն Մէջի դիւար որ հրամանատարին դրկուեցան որ հրատարակել տայ, զօրտպետն անոնց մէջ հրատարակուած լուրերն Գաղղիոյ նոյն ասեմուան կացութեան հետ այնչտի անհամաձայն դատու, որ անոնց հրատարակութիւնն անպատեհ դատելով զանոնք կրկին մարտիախտին դրկեց:

Սոյն միջոցներն ինքեքորս զԷլ Միւլ լրագիրն երբ ուղեց Պոսյէ: զօրտպետին բերած լուրերն սուտ հանելու համար յօղուած մը հրատարակել, չի հրատարակելու հրաման ընդունեցաւ:

Այս իրողութիւնն յայտնի կը ցուցնէ Պագէն մարտիախտին մամուլ վրայ բանեցուցած աղղեցութիւնը և բոլոր մտքերն իր դիտաւորութեանցը յարմար ճամբու մը մէջ վարելու նպատակն, թէ և այս նպատակաւ ճամբառութիւնն ալ խափանել հարկ ըլլայ:



ԳԼՈՒԽ Ե.

ԽՈՐՀՈՒՐԳ ԼՈՒՍՏԵՐԵՐ 24 Ի. — ԱՆՁՆԱՏՈՒԹԻՒՆ ԳԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԵՂԱՍՏ ՎԻՃԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Խորհուրդ հոկտեմբեր 24 է: — Ծանկոթի վարչութիւնը: «Պէտք էր, կըսէ մարտիախտն իր յիշատակարանին մէջ, անձնատուր ըլլալ, վասն զի ներկայ պարագաներու մէջ ամենայն զօրութեամբ յարձակելու փորձ մ'ընելը կընար ճշմա-

րիւս կոտորած մը յառաջ բերել, և որով թշնամին տկարացած զօրաբանակ մը դիւրութեամբ յաղթելու առիթ կունենար: Հայրենեաց կողմանէ փորձ դիւտաւորաց յանձնուած հազարաւոր մարդիկն անօգուտ տեղը զոհելն ալ մեղք մ'է ք:

Յայտնի է որ հոկտեմբեր 24 ին պատերազմ բանալու ժամանակն անցած էր. ստիպյն ասի ընդունելով հանդերձ դառնանք հոկտեմբեր 10 թուականին, երբ պատերազմն տակաւին կարելի էր տեղի ունենալ: Եթէ այն օրը մարտիախտ թշնամոյն հետ բացած գաղտնի խօսակցութեանց ճշմարտութիւնը ծածկելով իր տեղակալներն բոլորովին անօգուտ յարաբերութիւններ ունենալու պարտաւորեց, զինուց պատուոյն պահանջած պատերազմը անկարելի ընելու պատճառ եղող որոշմանցը պատասխանատուութիւնը սոսկ իր վրայ հրաւիրած եղաւ:

Գերմանիա գերութեան մէջ մեռնող տասն և եօթը հազար գաղղիացի գերիներուն տասնըմէկ հազարը Մէջի զօրաբանակին կը պատկանէր:

Պատերազմին սկիզբէն ի վեր տեղի ունեցած բոլոր կռիւներուն մէջ Հունտսի զօրաբանակէն այնչափ մարդ մեռաւ որ երբէք ըլլալու չէր:

Պէտք է ուրեմն գիտնալ որ անձնատուութիւնը չէթէ միայն մէկ անձի մը կորստեան առաջին շառաւ, այլ և մեծ պատերազմէ մը յառաջ գալիք հետեանքներէն աւելի տխուր հետեանքներ ունեցաւ:

Եւ երբ այս բաժնուս սէն ալ եղած չլլար, հարիւր անդամ աւելի աղէկ չէր տեսնել

որ այս զօրքերն զօրաբանակին և հայրենեաց վերջին ծառայութիւն մը մատուցանելով պատեարողմի դաշտին վրայ փառաւորապէս մեռնէին, քան թէ երթային իրենց կեանքը հիւանդութեան տառապանաց մէջ թշուառութեամբ վերջացնէին:

Բայց եթէ հոկտեմբեր 12ին պատերազմելու ժամանակն անցած էր, տակաւին ժամանակ կար ռազմական նիւթոց ամենամեծ մասն եղծելու: Այս խնդիրը յուզուեցաւ հոկտեմբեր 24ի խորհրդոյն մէջ:

Քօֆինիէր զօրապետն այս մասին հետեւեալ միտայութիւնն տուաւ. «(Սոյն խնդրոյն մէջ) ռազմական նիւթերն եղծելու վրայ խօսք բացուեցաւ: Վիճարանութիւնը խիստ կտրճեցաւ. և անդամներէն մին սա կտրճիքն յայտնեց որ ռազմական նիւթերն եղծելը ընտ աղէկ ըան չէ, վասն զի կրնայ անկից ծանր անկարգութիւններ ծնանլ: Այս դիտողութիւնը վիճարանութեան վերջ տրուաւ: Երբ յիշեալ զօրապետին հարցուեցաւ թէ ինչ է այդ անդամոյն անուէր, պատասխանեց. «Ձեր այդ հարցման պատասխանելու համար յիշողութիւնս չեմ կրնար աղէկ մը վրայ բերել»:

Գերմանական կառավարութիւնը յարաբերութեանց շարունակութիւնը մերժելուն համար, դորձը կը մնար իր առաջդրելիք պայմաններուն վրայ տպահով ըլլալ: Խօսքուրդն Ֆրէտէրիք-Շարլ իշխանին քով վրտգը պատգամաւոր ըլլալու յատուկ անձ ուրիշ մէկը չի կարձեց ընտրել, եթէ ոչ հանկարծիք զօրապետն, այս մեր զօրաբանակացը

փառաւոր ըաղմամեաց պաշտօնեայն, որուն անվեհերութիւնը այժմեան պատերազմին մէջ ալ նոր փայլունութեամբ մը փայլեցաւ:

Սոյն զօրապետին պաշտօնն էր «չօրաբանակին և իր դանուած երկրին չեղօքութիւնը խնդրել այնպիսի տեղական զինադադարմամբ մը՝ որով կարող ըլլան պէտք եղած պաշարն հոյժայթել և երեսփոխանաց ու հաստատեալ իշխանութեանց հրաւէր կարդալ ըստ 1870 մայիսի սահմանադրութեան, որ երկու տէրութեանց մէջ խաղաղութիւնը պայմանադրեն»:

«Եթէ այս առաջին խնդիրքն չընդունուի, խնդրել որ Գաղղիոյ երկիրներուն մէկը երթուի միևնոյն դործն հոն կատարելու համար»:

«Վերջապէս, եթէ այս ալ չընդունուի, ուտելեաց պակասութեան պատճառաւ եղած անձնատուութեան մը պայմաններովն խնդրել որ զօրաբանակն կարենայ թունխտոն (ճէզայիր) զրկուիլ»:

Գժուար է ընդունել որ մարտիտուն վայրկեան մը խորհած ըլլայ որ այսպիսի խնդիրներ կրնային յաջող վախճաններ ունենալ: Անկէ վերջը ինչ հարկ կար անօգուտ աղբրանաց զիջանիլ: Ժամերն կանցնէին, վերջին ուտելիքներն կրսպառէին. և եթէ իրերն այսպէս անյաջող երթալէն վերջը՝ ուր ուրեմն ռազմական նիւթերն եղծել որոշէին, ժամանակ չի պիտի գրանէին:

Ինչպէս որ դիւրին ալ է գուշակել, Շանկարնիէ զօրապետն Ֆրէտէրիք-Շարլ իշխանին համակրանօք և յարգութեամբ հիւրընկալուէն վերջը բա-

ցորոչ և վերջնական մեծում մը բերաւ իւր հետն
Ռւբեմն ալ խնդիրը անձնատուր ըլլալու վը-
րայ էր :

Հոկտեմբեր 23ին զինուորական տեսուչ Լէպ-
րէտն խորհրդոյ մէջ յայտնած էր որ ինքը այլ ևս
գունդերուն օրական քիչ մը բրինձ և խահուէ
կրնայ տալ : Զօրաբանակին գունդերուն համար
մէկ կամ աւելի ևս երկու օրուան հաց միայն կը
գանուէր :

Ռւտելի բներն՝ մեծ հրամանատար զօրապե-
տին օգոստոս 9ի խորհրդական նամակին մէջ յիշ-
ուած ժամանակէն աւելի ըլմանցան :

Զօրականաց ուսուխոյ սպառու մը զինքը ըս-
տիպած էր հոկտեմբեր 13ին տեղական իշխանու-
թեան ղիմել, որպէս զի գունդերուն սննդեանը
համար հարկ եղած ցորեններն անկէ ընդունի :
Զօրապետն միանգամայն որոշած էր քաղքին պա-
շտներուն վրայ հսկող մասնաժողով մը կազմել :
Յայտնի է որ հիմայ ալ այնչափ հոգ չէր ընել
հսկող մասնաժողով մը կազմելու համար, վասն զի
ալ համբարանոցներն բոլորովին պարպուած էին,
և տնոնց հսկելու պաշտօնը բաւական ժամանա-
կէ հետէ գաղբած կը համարուէր :

Հոկտեմբեր 13ին տեղական իշխանութեան
տրուած լուրէն յառաջ եկած յուզմունքը ամե-
նէն սաստիկն եղաւ : Այս յուզման պատճառաւ
գլխաւոր հրամանատար զօրտեսան հասարակաց
կարծիքէն դրդեալ հոկտեմբեր 16էն քաղաքին
բնակչացը օրական հացը 400 կրամի իջցուց :
Վերջը հոկտեմբեր 19ին 350 կրամի :

Զօրաբանակին կերքընելու համար քաղաքա-
կան ժողովրդեան հացը կարելու վճիռը թէպէտ
հոկտեմբեր 9ին տրուեցաւ, բայց հոկտեմբեր 19
ին թուականէլ հրամայուեցաւ :

Սոյն միջոցներուն գործադրութիւնը, հոկ-
տեմբեր 12էն ի վեր քաղքին մէջ կատարուած
խուզարկութիւններն, զօրաբանակին գունդերուն
վերաբերեալ ցորեններն քաղքին շտեմարանները
պարպելն, վերջապէս այս գունդերուն պահեստի
հացն չէին ներքեր գուշակել որ ուտելիքներն կա-
րենան հոկտեմբեր 26էն անդին ղիմանալ :

Սիւնյ դոկտորի գրութիւնը : — Թոհոյի հոկտեմբեր
26ի : — Մարտիտան աղաչեց Սիւնյ զօրապետին,
որուն 1870ին պատերազմական դաշտը կատա-
րած վայուն ծառայութիւններն թնամեղն քով
միտաւոր հիւրընկալութիւն մը կը շնորհէին իրեն,
որ երթոյ գերմանական սպայոց գլխաւորին քով
և առանց Մէյ քաղաքին վրայ խօսք մ'ըլլալու
անձնատուութեան մը պարտաւային կատմամբ
զօրաբանակին ըլլալիք պայմաններն անկէ խնդրէ :

Յիշեալ զօրապետին պատասխան տրուեցաւ
որ առաջադրուելիք պայմաններն Մաք-Մահոն
մարտիտաի զօրաբանակին առաջադրուածներուն
համահաւասար պիտի ըլլան, և Մէյը վիճակն զօ-
րաբանակին վիճակէն չի կրնար որոշուիլ :

Սթիէլ զօրապետէն այս մասին պատրաստ-
ուած արձանագրութեան նախադրութիւնն Սիւնյ
զօրապետին միջոցաւ Պազէն մարտիտաի յանձ-
նուեցաւ : Այս կարեւոր գրութիւնն՝ զոր արձա-

նագրաց մէջ չենք տեսներ, հօկտեմբեր 26ին հաւաքեալ խորհրդոյն ներկայացաւ:

Ըստ վկայութեան ժարրա զորապետին գլխաւոր պայմաններն ասոնք էին, որ ամբողջ զորաբանակն պատերազմական քերի է. որ Մէջ քաղաքն ինչպէս նաև ուսղմական նիւթք, գրօշակք և այլն թշնամոյն պիտի յանձնուին: Այս պայմաններն, ըստ ժարրա զորապետը, խիստ չտփաղանց նկատուեցան: Ընտելարնիէ և Սիսէյ զօրապետներն ասոր համակարծիք էին, բայց յայտնեցին նաև որ թշնամոյն մեղի դէմ գործածած խտութեան վրայ ալ ընաւ չէին կրնար տարակուսիլ, և թէ պէտք էր սպանել որ յիշեալ արձանագրութեան մէջ ցուցուած պայմաններն խտութեամբ պահանջուէին:

Ժարրա զորապետին Ֆրասքաթի երթալէն առաջ՝ զորաբանակին գլխաւոր վերտոտեսուն եկաւ մարալախին իմացընելու որ երեք և կարելի է չորս օրուան համար ալ հաց դատած էր: Մարալախան այս ազդարարութեան ընաւ կարևորութիւն չտուաւ և իր լիազօր պատգամաւորին ուղևորութիւնն ետ չի ձգեց: Բայց և այնպէս իր պարտաւորութիւնն էր միշտ գործը յապաղեցընել, որովհետև յարարութեանց բացուիլը ուտելեաց սպառման պատճառաւ միայն որոշուած էր:

Մարալախն գործը այսչափ շուտով լմացընել ուղևորն համար յանցաւոր է, որովհետև կանոնագրութիւնն պարտք կը դնէ ամեն քաղքի հրամանատարաց վրայ որ մինչև վերջին կէտն ըս-

պատեն և ամենեկին մտքերնուն չի հանեն որ արդէն ինչ որ մտաւ կամ ետը յանձնուելն երկայ խիստ անկաշտութեան հիմարտի:

Կերևի թէ օրէնսդիրն այն միջոցին գուշակած ըլլալու է այն ժամանակ տեղի ունենալիք դէպքերն: Յիրաւի այն ժամանակն էր որ Լուարի զօրաբանակն գործողութեան կրակուէր, և Յրէտէրիք-Շարլ իշխանին գունդերուն պատճառաւ խաղանուած ընթացքը պիտի բանար դէպ ուղիղ 'ի փարիզ: Այն միջոցն էր որ Պ. Թիէր և Ազգային Պաշտպան կառավարութիւնն յարարեալութեանց մտած էին: Գիտեն որ այս յարարեալութիւններն՝ որք յապաղելու վրայ էին, Մէջի անձնատուութեան լուրով փարիզու մէջ ծագած յուզմանց պատճառաւ միայն ապարդիւն եղան:

Ուսկից դիւրաւ կրնանք մակարեւել թէ դիմադրութիւնն քանի մ'որ այ կրկարելով ինչ հետևանքներ կրնային յառաջ գալ:

Հոկտեմբեր 26ին Միլիտարի ժողովը որոշեց ինչպէս խորհրդակցեցան 'ի Ֆրասքայի: — Ժարրա զօրապետն համակրանք ընդունուեցաւ Սթիէլ զօրապետէն: Նախ և առաջ երկուքն առանձնակի խորհրդակցեցան: Ժարրա զօրապետն ուղեց իր արձանագրութեան գլխաւոր պայմաններուն վրայ վիճարանութեան մտնել. Սթիէլ զօրապետն անմիջապէս ըսաւ որ այդ վիճարանութիւնն արդէն առջի օրն եղած է, և չուզեր նորէն վիճարանիլ և թէ լիազօր պատգամաւորաց պաշտօնն է, ըստ իւր, Սիսէյ զօրապետին յանձնուած արձանագրութեան մէջ յիշուած պայմաններուն համաձայ-

առթիւնն իրեն ներկայացընել : Ժարրա զօրապետ
 տը այն ատեն ղ խոտի տուտ որ իրեն արուած
 հրահանգներն ասոնցմէ բոլորովին տարբեր էին :
 ուստի այս անհամաձայնութեան վրայ իրեն կա-
 րեոր կը թուի երթալ նոր հրահանգներ ընդու-
 նիլ : Սթիէլ զօրապետն այն ատեն թողուց որ իւր
 զխոտը թիւններն ընէ : Բայց սա ևս իմացուց որ
 արքայն արդէն ամեն ինչ որոշած է և ինքը չի
 կրնար ամենափոքր փոխադրութիւն մ'ընել : Ահա
 այս պատճառաւ է որ Սթիէլ զօրապետն չուզեց
 ոչ բոլոր ղէնքերն հետ առնուելու մասին բացա-
 ութիւն մ'ըլլալն ընդունիլ : և ոչ իսկ սպայնե-
 րուն սուրերն իրենց թողու պայմանը : Ժարրա
 զօրապետն այս վերջին կէտին վրայ ամենայն զօ-
 րութեամբ յամառեցաւ : Սթիէլ զօրապետն՝
 որչափ որ ժարրա զօրապետին ներկայացուցած
 փաստերէն քիչ մը համոզուած կերեւէր : այլ
 սակայն միշտ կը պատասխանէր թէ միայն ար-
 քային կամքէն կախում ունեցող չնորճի մը
 անկարելի է որ ինքը հաւանութիւն տայ :
 Ժարրա զօրապետն յայտնեց որ ինքը այնպէս
 հրամանդ ընդունած է որ եթէ պայմանադրու-
 թեան մէջ այս վերջին կէտը յիշուած չըլլայ, ին-
 քը անմիջապէս զայն պիտի ստորագրէ ու Մէց
 վերադառնայ : Միանգամայն աղաչեց Սթիէլ զօ-
 րապետին որ իր ազդեցութիւնն գործածէ Ծրէ-
 տէրի ք-Շարլ իշխանին քով, որ նա ալ վերջապէս
 արքայէն խնդրէ իր առաջին հրամաններն գոր-
 ծադրելու և յաւելցուց նաև որ ինքը այլ ևս
 իրեն հետ չի պիտի կրնայ խորհրդակցել մինչև որ

իր այս խնդրանաց պատասխանն չիմանայ : Այս
 վիճակին մէջ Սթիէլ զօրապետն առաջարկեց որ
 ժամանակ տայ իրեն խմբագրել այն պայման-
 ներն որոյ վրայ վիճաբանութիւն չի պիտի կրնայ
 ըլլալ : Սոյն միջոցին լիազօր պատգամաւորաց
 հետը գտնուող պաշտօնեայինն ներս մտնելով
 զօրապետն Ծրէտէրի ք-Շարլ իշխանէն ընդունած
 գրաւոր հրամաններն անոնց ներկայացուց : Ժարրա
 զօրապետն իր գրաւոր հրամաններն չուներ : Բայց
 չի տարակուսիր որ իր ստորագրութիւնն նոյն իրի-
 կունն ընդունուի, վասն զի ղ իւրին էր, կըսէ :
 տեսնել որ թշնամին կաճապարէր գործը լմնցը-
 նելու :

Ուստի պայմանադրութեան խմբագրու-
 թիւնն սկսուեցաւ և շարունակուեցաւ : Յըր յօդ-
 ուածին առթիւ Սթիէլ զօրապետը իր կողմանէ
 կըսէր որ արքայն զօրաբանակին յայտնած քա-
 ջուութիւնը ճանչելու համար իրեն իշխանութիւն
 պիտի տայ Գաղղիա դառնալու սուրերն և իրենց
 վերաբերեալ ամեն ինչ այն սպայներուն թողլով
 որք իրենց պատուոյն վրայ կերդնուն պատերազ-
 մի բալոր տևողութեան ատեն Գերմանիոյ դէմ
 ղէնք չի գործածելու համար : Տեղակալ-գնդա-
 պետն Գէյ յայտնեց այն ատեն որ այս պարա-
 դային մէջ ամենալաւ եղանակն է այս չնորճն
 ընդարձակելով բոլոր զօրաբանակին ալ յատկա-
 ցընել քան թէ մի քանի մասնաւոր անձանց : կը
 խորհէր ուրեմն որ հին ատենէն մնացած սովո-
 րութեան համեմատ պատերազմական պատիւնե-
 րն ինդրել հարկ էր, այսինքն թէ՛ յաղթեալ-

ներն յաղծողին առկէն զէնքով կարգաւ կանց-
նին և վերջը ինքզինքնին պատերազմական դերի
ճանչնալէ առաջ իրենց զէնքերն կը յանձնեն :
Աթիէլ զօրապետն նախ և առաջ մերժեց այս
խնդիրքն ընդունիլը այն պատճառաւ որ Ֆրէտէ-
րիք-Շարլ իշխանին հրահանգացը հակառակ էր :
Պատերազմական պատուոց այս խնդրոյն չուտով
ընականաբար սպայներէն խնդրուած սուրերու
խնդիրն ալ խառնուեցաւ . . . : Աթիէլ զօրապետն
երկար և դժուարին դիմադրութենէ մը ետքը
վերջապէս հաճեցաւ յանձն առնուլ որ ստիպէ
Ֆրէտէրիք-Շարլ իշխանն արքայն համոզելով բոլոր
սպայներուն իրենց սուրը թողլու խնդիրքը անոր
ընդունել տալու : Պատերազմական պատուոց վե-
րաբերեալ պայմանադրութեան յօդուածներն
երկու կերպիւ խմբագրուեցան երկու զօրաբանա-
կաց գլխաւոր հրամանատարացը քննողութեանն
յանձնուելու համար :

Ժորժ Գրոսմոնի Պալ-Ալե-Մարիէն Արտաբաշ : —
Աթիէլ Գրոսմոնի ներ ընկի : Ի երբորդ որտեղեւորն հա-
մար արտաբաշ : — Այս դժուարին և դառն
աշխատութիւնը առաւօտեան ժամ երեքին
կըցաւ աւարտի :

« Հսկտեմբեր 27 առաւօտուն , ըսաւ Ժորժ
զօրապետն , իմ բոլոր արարքս մարալախտին ներ-
կայացուցի պայմանադրութեան խմբագրութիւնն
ալ իրեն խմբցնելով : Այս մասին իր հաւանու-
թիւնն տուաւ և յայտնեց որ վէճի տակ դանուած
յօդուածոյն դադրիւրէն խմբագրութիւնն ալ
կընդունի :

« Գրեթէ կէս օրէն ժամ մը վերջը , Աթիէլ
զօրապետին մէկ նամակն հասաւ , որով կիմացը-
նէր թէ Ֆրէտէրիք-Շարլ իշխանն պատերազմա-
կան պատիւներն զօրաբանակին կը շնորհէ և ար-
քայն ալ հաճութիւն կուտայ սպայներուն սուրերն
իրենց թողլու :

« Ահա այն ժամանակն էր որ մարալախտն ա-
ռաջին անգամն ըլլալով իր պատերազմական պա-
տիւներն մերժելու դիտարութիւնը ինծի իմա-
ցուց :

« Իս պարտաւոր համարեցայ զինքը այսպիսի
դիտարութենէ մը ետ կեցընելու համար ամեն
բան ընել , ըսելով որ պատերազմական պատիւ-
ներն զօրաբանակին անձնատուութեան ստիպու-
ներուն մեղմութիւն մը կը պատճառեն , մեղմու-
թիւն մը՝ որ անտարալիցս կրնայ իրականանալ ,
բայց երբէք չի կրցայ զինքը համոզել :

« Աթիէլ զօրապետին յիշեալ նամակին հա-
մեմատ , մենք նոյն օրը երեկոցեան ժամ հինգին
իր քով պիտի երթայինք իրերուն որոշում մը տա-
լու և պայմանադրութիւնն ստորագրելու համար :
Ժամ չորսուկէսին միջոցներն մարալախտն զիս
կանչեց , և նախ և առաջ յիշեցուց ինձ որ պա-
տերազմական պատիւներովն անգամ զօրաբա-
նակին յաղծողին առկէն անցնելուն ընտել հա-
ւանութիւն չուզեր տալ , և յատկապէս յանձնա-
բարեց ինձ որ այս արամադրութիւնն պայմանա-
դրութեան մէջէն վերցրնեմ : Ես դարձեալ սկսայ
պնդել , բայց մարալախտն իր այս խօսքին վրայ
հաստատ կեցաւ : Ես զինուորական պատիւներն

էր մերժեր, կրտէր, բայլ զօրաբանակին յաղթողին առջևէն անցնիր. և յաւելցուց նաև որ պէտք է առաջարկել Սթիէլ զօրապետին. թէ գրուած պայմանադրութեան դադարէն իմբադրութիւնն կրնգունի, բայց այսու դաշտմբ որ զօրաբանակին յաղթողին առջևէն չի պիտի անցնի, և իրերն գերմաներէն իմբադրութեան համեմատ պիտի դորձագրուին: Երրորդ անգամ՝ յայտնեցի որ պատերազմական սրտիւններն չեն կրնար առանց զօրաբանակին յաղթողին առջևէն անցնելուն շնորհուիլ և պէտք չէ ամենեին յուսալ որ թշնամին պայմանադրութեան մէջ գրուածէն տարբեր եղանակաւ կարենայ վարուիլ: Ահա այն ատեն մարաշախան այս խնդրոյն վերջ մը տալու համար հրամայական կերպիւ առաջարկեց ինձ որ զօրաբանակին յաղթողին առջևէն անցնիր իր պարագաներով մերժէ, և յաւելցուց նաև որ նոյն օրը երկու դունդերու հրամանատարներ տեսած էր որոնք այս կերպիւ պատերազմական պատիւներուն իրենց շնորհուիլն բացարձակապէս մերժած, և զօրաբանակին յաղթողին առջևէն անցնիր ընդունած չէին:

«Անկէ անմիջապէս՝ վերջը մարաշախան պատուիրեց ինձ ըսել Սթիէլ զօրապետին որ Ֆրէտէրիք-Շարլ իշխանին իմացընէ թէ յեղախոխութենէ մը վերջը Գաղղոյ սովորութիւնն է անկեալ կառավարութիւնէն դունդերուն տրուած բոլոր զբօշակներն եղծել. և ահա այս սովորութեան համեմատ զբօշակներն այրուած են, Այս մասին քա ղիտողութիւնը ըրի որ թշնամոյն ուշադրու-

թիւնը զբօշակներուն վրայ հրաւիրեն խելացու թիւն չէ: Մանաւանդ որ Ֆրէտէրիք-Շարլ իշխանն իմ այս ներկայացուցած սովորութեանս չի հաւատար և չի ճանչնար ալ: Այն ատեն մարաշախան ինձ ըսաւ որ զբօշակներուն եղծուած ըլլալն գիտէ և չուզեր որ Ֆրէտէրիք-Շարլ իշխանն ենթադրէ որ իր զինուորական պարտաւորութիւնն զլացեր է:

Ինչ որ ալ ըլլար, մեր սոյսպիտի սովորութիւն մը ունենալը ըսել պատուիրեց ինձ, և դարձեալ իր առաջին հրահանգին գալով՝ վերջացուց խօսքըն ըսելով թէ՝ «Զօրաբանակին յաղթողին առջևէն անցնիր չուզեր մի մտնար»:

Երբ որ Գրեգորիոս Սթիէլ զօրապետին հետ առանձնակի երկրորդ խորհրդակցութիւն մ'ալ ըրի: Դրօշակներուն նկատմամբ ընդունած յանձնարարութիւնս յայտնեցի իրեն, և, ինչպէս որ այնպէս ալ կը յուսայի, Սթիէլ զօրապետն այնչափ չի հաւատաց սուգիւ այնպիտի սովորութիւն մ'ունենալուս. այս խնդրոյն վրայ երկարօրէն չի վիճելու համար իսկոյն երկրորդ ինդիւն բացի և իմացուցի զօրապետին որ մարաշախան ինձի տուած վերջնական հրահանգն զօրաբանակին յաղթողին առջևէն անցնիր չընդունելն էր: Սթիէլ զօրապետն զարմացու տեսնելով որ առջի օրը այնչափ եռանդեամբ ինդրուած տրամադրութիւն մը այն վայրկեանին կը մերժուի իրրեւ արժանաւոր պատիւ:

Ես այս մասին այնպիտի պատասխան մը տուի, զոր միայն կրնայի ասլ: Ըրի թէ այս մերժումը

զիս կը չխտացընէ, բայց իմ պարտաւորութիւնս է զայն ընդունել: որչափ ալ ծանրակշիւ ըլլայ, վասն դի ներքի չէ ինձ իմ ընդունած հրամաններէս դուրս բան մ'ընել: Յայանեցի իրեն որ այս մերժումը չէ թէ պատերազմական պատուոց այլ զօրաբանակին յաղթողին առջևէն անցնելուն նրկատմամբ է, և սասոր պատատեսան կառարկէին ինձ որ մին միւսոյն հետևութիւնն է և անկարելի է զանոնք իրարմէ բաժնել:

«Այս վիճաբանութիւնը անեց մինչև այն վայրկեանը՝ երբ կրկուքս ալ մեր սպայներն ներս մտցուցինք առջի զրուան սկսուած աշխատութիւնն աւարտելու համար:

«Այս անգամ՝ հետո Սթիլէլ զօրապետին ունեցած սպայներուն չափ սպայներ ունէի, և պայմանադրութեան խմբագրութեան գործոյն ձեռնարկեցինք: Երբ Յոգ յօգուածին գալով դրօշակներուն խօսքը բացուեցաւ, Սթիլէլ զօրապետին խնդրեց ինձմէ որ այս մասին ընդունած յանձնարարութիւնս կրկնեմ, և վերջը՝ արդէն եղծուած դրօշակներուն քանի հատ ըլլալուն վրայօք հարցումներ ըրաւ ինձ, որոց չի կրցայ պատասխանել: Պարտաւորեցայ նաև յայտնել որ ես մարտախափն ինձ ըրած յանձնարարութիւնը ամբողջապէս և գրեթէ բառ առ բառ կրկնած եմ և անկէ աւելի բան մը չեմ գիտեր:

«Գալով հոգ յօգուածին, առջի օրը՝ դունդերն կրննց բոլոր վէճքերէն մերկացընելու համար խնդրուած բացառութեան վերաբերեալ խնդրքն նորէն մէջ բերի: Այս խնդրքը դարձ-

եալ մերժուեցաւ: Բայց Սթիլէլ զօրապետն յաւայանեց զանի չի կրնալ ընդունելուն համար, և յաւելցուց նաև որ թէպէտ նախ և առաջ իմ առաջադրած խնդրքս յօտարակամ կատարել խորհուած էր, սակայն վերջէն մտածեր են որ Մէյքէն վերադարձող և Գաղղիայէն անցնող դադդիական դուռը մը արդէն խիստ շատ զայրացած հասարակութեան մը մէջ մեծ և սաստիկ յուզմունք մը հանելու պատճառ պիտի ըլլայ:

«Ուստի պարտաւորած են նախապէս եղած որոշումն դրժել: Այս հոգ յօգուածին նկատմամբ կրկին պարտաւորեցայ ըսել որ Պաղէն մարտախափն զօրաբանակին յաղթողին առջևէն անցնելի մերժած էր, և առանձնակի տեսակցած ատեննիկ բոլոր ըսածներս կրկնեցի: միայն թէ՛ մարտախափն խնդրոյն լուծմանը համար ինծի յուշուցած մէկ միջոցն զանց չառնելու համար, որուն յաջողութեանը բնաւ չէի կրնար հաւատալ, յաւելցուցի որ թերևս կարելի կըլլար պայմանադրութեան մէջ դադղելէն խմբագրութիւնն ընդունել, բանիս միայն որոշուելով՝ որ իրերն միւս խմբագրութեան մէջ յուշուածին նման պիտի դորժագրուէին: Բայց այս առաջարկութիւնն ալ չընդունուեցաւ առարկուելով թէ՛ դրուած տրամադրութիւններն իրօք կատարուելիք գործողութիւններն միայն կրնան ներկայացընել: Այսպէս պարտաւորած էինք բռնի դերմանական խմբագրութեան յարել: Ասանցմէ զատ խնդիրներու վրայ բնաւ չիտողութիւն մը և վէճ մը չեղաւ:»

ԳԼՈՒԽ Զ.

ԴՐՕՇԱԿ

Խորհուրդ Գլխի Գլխի 26 : — Շահկարհիկ զորապետին հոկտեմբեր 26 ի օրուան բրած փորձոյն անյաջողութենէն, և Սթիէլ ու Սիւէյ զորապետաց մէջ տնկի ունեցած խօսակցութիւններէն վերջը՝ մարաշխտան հոկտեմբեր 26 ի խորհրդոյն մէջ թշնամոյն առաջադրած պայմաններն գունդերու հրամանատարներուն հաղորդեց :

Ժարրա զօրապետին ըսածին համեմատ՝ Սթիէլ զօրապետէն Սիւէյ զօրապետին յանձնուած արձանադրութեան մէջ առաջադրեալ պայմաններն էին՝ ամբողջ զօրաբանակին գերութիւնը, Մէջի ինչպէս Գաւ աղմական նիւթոյ, դրօշակայէն, թշնամոյն յանձնուելը : Երկար և ծանրակշիռ վիճարանութենէ մը վերջը՝ խորհուրդը պիտի ջրուէր, երբ Տէվո զօրապետան Պագէն մարաշխտան մօտենայով ըսաւ, « Գրօշակներն ալ » — « Անշուշտ, պատասխանեց մարաշխտան, և շուտով բարձր ձայնիւ հրաման տուաւ, կրօն Տէվո զօրապետան իր վկայութեանը մէջ, որ բոլոր դրօշակներն նաւարան տարուելով հոն այրուին » :

Կերևի թէ նոյն միջոցին խորհրդոյն մէջ յու գծուէր մը ծագած ըլլալու է որ, ո՛չ լը Պէօֆ մարաշխտան և ո՛չ Լապիբոլ և Պրօսար զօրապետներն դրօշակայ այրուելու հրամանն չեն յիշեր, չոյնպէս Քանրօպէր մարաշխտան միայն սա կը

յիշէ որ դրօշակներն գունդերէն նաւարանը յանձնուելը կանոնադրելու մասին կարևորութիւն մը ըլլալուն վրայ խօսակցութիւն մը տեղի ունեցած է :

Գալով Սթիէլ զօրապետին՝ որուն պէտք էր յանձնուել դրօշակներուն վերաբերեալ միջոցներուն դործադրութիւնը, յիշեալ զօրապետն 1872 մարտ 2 ին քննութեան խորհրդոյ նախագահին գրեւէն վերջը թէ՛ « Ես բնաւին չեմ՝ յիշեր որ հոկտեմբեր 26 ին դրօշակայ այրուելու մասին ինծի բերանացի հրաման մը արուած ըլլայ », այս առաջին հաստատութիւնն ատենին քննութեան ժամանակն այլայլելով հետեւեալ խօսքերն ըսաւ. « Այսպիսի մը միայն կը յիշեմ », որ մարաշխտան հոկտեմբեր 26 ի խորհրդոյն մէջ դրօշակներն այրուելու դիտարկութիւն յայտնեց » :

Երբ յիշեալ զօրապետին հարցունցաւ թէ՛ մարաշխտան այս մասին իրեն հրահանգ տուած է, և յատկապէս իրեն հրամայած է որ նոյն օրը դրօշակներն հաւաքելով նաւարան զրկէ այրուելու համար, պատասխանեց. « Այո, մարաշխտան ինծի բերանացի հրահանգ տուաւ այս մասին և հրամայեց ինձ որ բոլոր դրօշակներն հաւաքելով նաւարան զրկեմ այրուելու համար » :

Սթիէլ զօրապետը երկրորդ անգամ հարցաքննուելով մի և նոյն խօսքն ըրաւ, որոնք այնչափ ճիշդ էին որքան որ կարելի. բայց ատենը կարևոր չի դատեց իր հակասութեանցը համար մանրամասն քննութեան ենթարկել զանի :

Այս մասին մարաշխտան հարցաքննուելով՝

յոյտեանց թէ ինքը դրականապէս հրաման տուած է Սօլէյլ զօրապետին հոկտեմբեր 26 ի խորհրդոյն մէջ որ դրօշակներն հաւաքելով նաւարան զրկէ այրուելու համար :

Այլ սակայն մարտիական բըշաի որ նոյն միջոցին Սօլէյլ զօրապետին այն հրամանը տուեր ալ է, գոնդերու հրամանատարաց ուղղակի բան մը հրամայած չէ, և առի անկից յայտնի է որ Տէվօ զօրապետն որ նոյն վէճը յարուցանողն իր, և հետեւաբար խիստ աղէկ լրաց տիրի ըլլար մարաշախտին խօսքերը, մինչև հետեւեալ հոկտեմբեր 27րդ օրն սպանեց այս մասին հրահանգ մ' ընդունելու համար, բայց նոյն օրն Սօլէյլ զօրապետէն թնդանօթածիգ զօրաց զօրապետներուն զրկուած հեռագրոյն համար հրամաններ կուտայ, որուն վրայ վերջը պիտի խօսինք : Ինքն ալ գունդերու միւս հրամանատարներուն պէս չէր տեսներ որ այս արամադրութիւնն մարաշախտին ուղղակի հրամանին ներքեւ եղած ըլլայ :

Հոկտեմբեր 26 ին ժարրա զօրապետն երթար Սթիէլ զօրապետին հետ անձնատուութեան պոյմանները պիտի ընէր, ուստի անհրաժեշտ կերպիւ պէտք էր նոյն օրը և յիշեալ զօրապետին ճամբայ ելնելէն առաջ զրօշակներն ամբողջովին եզծել : Բայց և այնպէս այս մասին բնաւ հրաման մը չի տրուեցաւ, ո՛չ Պաղէն մարաշախտին դունդերու հրամանատարացը, և ո՛չ ալ Սօլէյլ զօրապետէն թնդանօթածիգ զօրականաց :

Եթէ մարաշախտն ստուգիւ կուղէր որ այս եզծումն ըլլայ, այդպիսի ստիպողական պարա-

Պայի մը մէջ անդործ մնալուն նշանակութիւն մը չի կրնար արուել, Յիրաւի եթէ յուսացուածին համեմատ անձնատուութիւնը նոյն իրիկուեր ստորագրուած ալ ըլլար, հետեւեալ օրն դրօշակներն այրելու համար խիստ մեծ աճապարանք մը յառաջ պիտի դար, և կարելի չի պիտի ըլլար այնուհետեւ որ և է դործողութեան մը ձեւնարկել :

Պաղէն մարաշախտէն և Սօլէյլ զօրապետէն կատարելապէս որոշուած այսպիսի կացութեան մը մէջ իրենց այս վարմունքը հանելուկ մ' է :

Չգիտցուիր թէ արդեօք Պաղէն մարաշախտն ու Սօլէյլ զօրապետը մտածելով որ դրօշակաց եղծումը կրնայ յաղթողը զայրացընել և անկէ ընդունիլ յուսացուած խել մը չնորհներէն ալ զմեզ զրկել, անոր համար իրենց առաւօտուն որոշած այս եղծումը գործադրել չուզեցին :

Երբ մարաշախտին հարցուեցաւ թէ արդեօք Սօլէյլ զօրապետն հոկտեմբեր 26 ին իր քովը եկած էր զինքը դրօշակները եղծելու խորհուրդէն ետ կեցընելու համար, պատասխանեց, « Յիշողութիւնս ըստ բաւականին զայն հաստատելու չափ ճիշդ չէ, և այդ մասին բնաւ բան մը միտքս չի դար » :

Ինչ և իցէ, թէ և մարաշախտն ալ կշտամբանաց արժանի է հոկտեմբեր 26 ին դրօշակներուն նկատմամբ գունդերու հրամանատարաց հրաման չի տալուն համար, բայց յանցանքը Սօլէյլ զօրապետին վրայ կը ծանրանայ, վասն զինչ այս մասին հրահանգ ընդունած ըլլալով ամենասիւրբ յայտադում մը չի պահանջող կացութեան

մը մէջ բնաւ մէկ միջոց մը գործադրած չէր :

Սթիբէլ և Ճարրա զորապետաց խորհրդակցութեան ատեն ծագած դժուարութիւններն անձնատուութեան ստորագրութիւնն երկարաւ ձգելուն համար՝ հետեւեալ հոկտեմբեր 27րդ օրն կրնային իրենց առջի օրուան սխալանքն ճանշնալ և ուղղել :

Հոկտեմբեր 27ին Սթիբէլ զորապետը հրահրեց : — Ատենը չի կրնար հաստատել թէ Պաղէն մարալախանն ու Սթիբէլ զորապետը հոկտեմբեր 27 առաւօտուն ի՞նչ կրնէին : Բայց մարալախին ժանուցազրոյն վերջը՝ զոր Սթիբէլ զորապետն ատեն առաւօտ կը կարգար և հաւանութիւն կը ցուցընէր, սոյն զորապետին գրած երկու հրամանագրիներն կարդացուցան, մին թնդանօթածիզ զօրաց զորապետացը, և մյուսը՝ նաւարանի տեսուչ ժիրէլ գնդապետին ուղղեալ : Սոյն երկու հրամանագրիներն մի և նոյն ատենը գրուած են : Այս կէտը խիստ որոյ կերպով հաստատուած է, ժամ տասնըմէկ ու կէսին միջոցները՝ թնդանօթածիզ զօրաց սպայից գլխաւորն իր սպայներն հաւարած էր սոյն երկու հրամանագրիներն գրելու համար, և գրելէն վերջը զանոնք զորապետին ստորագրութեանը ներկայացուցած էր :

Քանի մը վայրկեան վերջը՝ միայն թնդանօթածիզ զօրացը ուղղեալ նամակն դառած էր, իսկ ժիրէլ գնդապետին ուղղեալ նամակին համար Սթիբէլ զորապետն հրամանի կըրողատէր :

Ահաւասիկ յիշեալ երկու հրամանագրիներուն օրինակը :

Ա՝ Կրտսէր զորապետ Սթիբէլի հրահրեց :
Հոկտեմբեր 27

« 27 հոկտեմբեր . Բէ - 1002 »

« Գլխաւոր հրամանատար մարալախին հրամանաւ այսօր բոլոր դրօշակներն Մէյի նաւարանը պիտի յանձնուին : Գրօշակներն իրենց պատեաններուն մէջ պատուած գոյ հրաղինուց կառքի մը մէջ պիտի վախադրուին . և հետեւ ալ՝ եթէ կարելի է՝ ձիով, մէկ տեղակալ մը և չորս երկրորդական սպայներէ բաղկացեալ խումբ մը պիտի երթայ : Հաճեցէք ձեր գունդերու հրամանատարին հետ համաձայնիլ, որ այլ և այլ վաշտերու ալ այս կերպ հրամաններ տրուին : Կազմեմ որ այսօր կէս օրն երկու ժամ անցած լինի հանուր բանակատեղիս գանուիք » :

Ա՝ Կրտսէր ժիրէլ

« 27 հոկտեմբեր . Բէ - 1003 »

« Գլխաւոր հրամանատար մարալախին հրամանաւ, զորաբանակին բոլոր գունդերն իրենց դրօշակներն նաւարան պիտի զրկեն : Կազմեմ որ զանոնք ընդունիք և դռնէ, վան զէ քաղաքէ և քաղաքէ մէջ գնդերն իւրաքանչիւր իւր տեղանքն իւր տեղանքն իւր տեղանքն իւր տեղանքն : » :

Մարալախին հրամանաւ այսպէս կըսուին այս երկու հրամանագրիներն, այս խօսքերէն կը հետեւի որ Սթիբէլ զորապետն գլխաւոր զորապետին հրամաններն հաղորդելու որոշում տուած է : Յիշեալ զօրապետն՝ անձնատուութեան պարագաներն քըն,

ներու յատկացեալ խորհրդոյն նախագահ Պարսօ կուէյ-տիլիէ մարաշխտախն զրկած գրութեանը մէջ յայտնած է որ հոկտեմբեր 27ին մարաշխտախն հրամանն պարտադրեցաւ ըստ սովորութեան դիւար որ հրամանատարէն եղած ուրիշ ամեն հրամաններուն նման գրի առնուլ . « Գրօշակներուն եղծումը այնչափ խիստ կարեւոր արարք մ'էր , կըսէ , որ այս ծանրակիւտ սրտումը հրամայող տրամագրութիւններն ինչ կերպիւ ալ որ ըլլար , չէի կրնար զանց ընել կամ չափադրել » : Այս հաստատութեան համեմատ մարաշխտախն կը յայտնէ որ յիշեալ երկու հրամանագրաց համար հրաման տուած ըլլան երբէք չի յիշեր : Այս մասին սպայից արձանագրութեանց մէջ ընտ յիշատակութիւն մը չի գտնուիր , բայց երբ մտածենք որ մարաշխտան հոկտեմբեր 27ի առաւօտուն տեսած է Սոլէյլ զորապետն , և սոյն զորապետն ալ իր քովէն մեկնելէն վերջը՝ յիշեալ երկու գրութիւններն գրած է , պէտք ենք գիտնալ որ մարաշխտախն սոյն յայտնութիւնն ամեն հաւանականութեանց դէմ կըլլայ : Յայտնի է որ Սոլէյլ զորապետն գրօշակներու գործոյն համար մարաշխտախն հետ բանակցած և իր հրահանգներն առած է :

Կրնայ ընդունուիլ որ Սոլէյլ զորապետն մարաշխտախն քովէն մեկնելէն վերջը՝ անկէ ընդունած հրամանացը հակառակ վարմունքի մը մէջ դատուած ըլլայ : Կրնայ հաստատուիլ որ յիշեալ երկու գրութեանց գլուխը գրուած հրահանգներն բառերն սուտ եղած ըլլան : Մնաց որ Սոլէյլ զորապետը յիշեալ հրամաններն անսովոր դա-

տած է , ինչպէս կարելի է որ անոնց կատարումն ու պատասխանատուութիւնը ինքը ստանձնէ : Ուստի՝ քանի որ հրաման տրուած է գրօշակներն այրելու , զանոնք թշնամեղն համար պահելու խօսքեր կըլլան :

Չօրարանակին թնդանօթածիգ դունդերուն հրամանատար զօրապետացը զրկուած հրամանագրոյն մէջ կը տեսնենք որ գրօշակաց այրուելու մասին բան մը գրուած չէ :

Պէտ է որ նախքան անկէ վերջը ինչ ըլլալիքնին զրուցուած չէ :

Իսկ ժիրէլ գնդապետին դրկուած հրամանագրոյն մէջ հրամայուած է անոր ընդհանուր գրօշակներն , կըսէ , բազում և բարձրագոյն սրտերէ կտրուած հրահանգուց քն յետոյ՝ ինչպէս անտեսելու բազմաթիւ յիշող կարգն ուրիշ անցին :

Ինչ կրնանք հետեցնել այս միևնոյն վայրկենին մէջ գրուած երկու հրամանագիրներէն՝ եթէ ոչ Սոլէյլ զորապետն հոկտեմբեր 27 առաւօտուն գիտէր որ դունդերէն առնուած գրօշակներն չպիտի այրուին :

Իսկ և այնպէս հոկտեմբեր 27ին տեղի ունեցած թնդանօթածիգ զօրաց զորապետներու հաւաքման ատեն՝ Սոլէյլ զորապետն որոշակի կը յայտնէ որ նաւարան զրկուած գրօշակներն պէտք չէ , և անոնց ինչ կերպիւ յանձնուելուն և այրուելուն վրայ մանրամասն պատմութիւններ կընէ : Սոյն միջոցին սեղանին վրայ՝ կերպով մը աչքի առջև կը տեսնուի ժիրէլ գնդապետին զըրկուելիք հրամանագիրն , որուն մէջ հետեւեալ խօս-

քը կը կարդացուէր . Երօջակներն գաղղիացի և բրուսիացի սպայներէ կաղմուած մասնաժողովոյ ձեռամբ ի հայի . առնելը ռազմական նիւթոց հարէն պիտի ածուին :

Հոգեւոր 27-ին Գրչակներն նորոշեցին հրաման կը պատճառէն — Նոյն առաւօտուն թնդանօթ աճիգ զօրաց զօրապետներուն զրկուած հրամանն՝ իրենց միջոցաւ զօրաբանակին գունդերու հրամանատարացը հաղորդուեցաւ : Բայց և այնպէս ամեն տեղ մի և նոյն ընդունելութիւնը չի գտաւ : Միևկեան Տէլօ զօրապետն առանց կասկածանաց յիշեալ հրամանին հետեւելով՝ գործադրութիւնն ապահովելու համար անմիջապէս հրամաններ տուաւ , գունդերու միւս հրամանատարներն՝ նա մանաւանդ Վրճօֆ մարտիտն , պատասխանեցին որ այս մտտին գլխաւոր զօրապետին հրաման մը դալ պէտք է : Բոչպուէ զօրապետն այս իրողութեան նկատմամբ երբ Սոյէլլ զօրապետէն տեղեկութիւն խնդրեց , այս վերջինը իմացուց իրեն որ ընդհանուր սպայից գլխաւորէն հրամաններ պիտի տրուին :

Երբ լուր տարածուեցաւ թէ գրչակներն պիտի առնուին , անմիջապէս գունդերուն մէջ սաստիկ խռովութիւն մը ծագեցաւ : Սոյն խռովութեան վրայ , պահապան ռմաճիգ զինուորաց կրդ գունդին զեղապետն Բէտն իր ձեռքովն իր գրչակը պատռելով՝ կտորները բաշխեց , վերջը իր այս ըրածն զօրապետ ժանկերոյի ալ իմացուց , որն որ ըրածին հաւնելով ինքն ալ անմիջապէս գունդերու գնդապետին հրամայեց որ նոյնպէս

ընեն : Զօրաբանի զօրապետ Բիքար այս եղածներն իմանալով եկաւ մարտիտն իմացուց և հարցուց թէ գունդերէն առնուած գրչակներն ինչ պիտի ըլլան : Ատր վրայ մտաշխտան չիտ թեցաւ , և վախնալով որ չըլլայ թէ այսպիսի իրողութիւն մը զօրաբանակին միւս գունդերուն մէջ ալ պատահի , որոյ հետևանքն զինքը անհանդիսա պիտի ընէ , իր սպայներէն մին սպայից գլխաւորին զրկեց և պատուիրոց որ գրչակներն գունդերէն առնուելու համար զրկուած չըջարեական գրութեանը յետ դրու թեոն մ'ըլլալու ձևով գունդերուն իմաւրէն թէ նուարան տարուած գրչակներն հոն պիտի ուղարկուին . Նիւկ գնդապետին վկայութեան նայելով՝ յիշեալ յետ գրութեանն այսպէս գրուած էր . Գրչակներն նորոշեցին հրաման հրաման որոնք պիտի տրուեն : Այս պարագան անգրծելի կերպիւ կը հաստատէ որ մարտիտն հոկտեմբեր 27 առաւօտուն Սոյէլլ զօրապետէն թնդանօթ աճիգ զօրաց զօրապետներուն գաղտնի հրամանն կատարելապէս գիտցած ըլլալով ինքն իր կողմէն բնաւ հրաման մը չէ տուած :

Նիւկ գնդապետն գրչակներու գործայն համար հրաման տրուիլն ամենեւին չդիտնալուն համար , այսպիսի կտորերու հրամանի մը առնակ յետ գրութեան նման պարզ և սուղին եղանակաւ մը տրուած ըլլալուն վրայ զարմացած՝ ելաւ մարտիտն թով գնաց այս գիտողութիւնն իրեն ալ ընելու համար , և իր հրամանաւր հետեւեալ թիւ 653

գրութիւնն զրիկց զօրարանակին գունդերու հրամանատարացը :

« Հաճեցէք հրամայել որ ձեր բոլոր հետեակ գունդերուն գրօշակներն վաղն առաւօտ կանուխ ձեր թնդանօթածիզ զօրաց հրամանատարին ձեռամբը ժողովուելով՝ Մէջի նաւարանը տարուին , ուր արդէն ձիաւոր գունդերն իրենցներն տարած են : *Ինչո՞ւն է քո՞ւրբերը քչիստորոց որ ո՞նչ հո՞ւրդի ունի :* Սոյն գրօշակներն իրենց պատեաններովը պատուելով՝ գոց կառքով պիտի տարուին . նաւարանի տեսուչն զանանք պիտի բնդունի , և անանց համար ընկալազիրներ պիտի տրուին գունդերուն :

« Ստորագրութիւն . **ՊԱՋԷՆ** »

Յիշեալ գրութենէն յայտնի կիմացուի որ գունդերն իրենց գրօշակները նաւարանը այրուելու համոզմամբ պիտի յանձնեն :

Նիւկ զնդապեան գունդերու հրամանատարաց ուղղուած գրութիւնն գրեւէն վերջը՝ մարտնջարտին յայտնեց որ այս բանը պէտք է Քօֆինիէր և Սօլէյլ զօրապետաց ալ իմացընել , առաջնոյն՝ իբր դիւտար հրամանատար Մէջ քաղաքին , և երկրորդին՝ իբր թնդանօթածիզ զօրականաց գըլխաւոր հրամանատար : Մարտնջարտն պատասխանեց թէ՛ « Այո , Քօֆինիէր զօրապետին իմացուցէք որ գրօշակներն նաւարանն ընդունուելու հրաման տայ : *Իբն զի զի քչիստորոց որ ո՞նչ հո՞ւրդի ունի :* » :

Ահաւասիկ իր հրահանգաց համեմատ յիշեալ զօրապետին ալ զրկուած գրութիւնը՝ որ նոյնպէս 553 թիւն կը կրէ :

« Հաճեցէք հրամայել որ Մէջի նաւարանն վաղն առաւօտ զօրարանակին բոլոր հետեակազօրացը գրօշակներն ընդունի : Սոյն գրօշակներն իրենց պատեաններովը պատուած և գոց կառքերու մէջ գրուած պիտի ըլլան թնդանօթածիզ զօրաց խնամքովն : Այս մասին զօրարանակին հրամանատար զօրապետներն հրահանգներ ընդունած են : » :

Սոյն գրութիւնն գրօշակներուն այրուելուն վրայ բնաւ բան մը չի խօսիր , ինչպէս որ մարտնջարտն ալ այնպէս ուղած էր : Նիւկ զնդապեան Քօֆինիէր զօրապետին զրկուելիք նամակն լինցընելէն վերջը՝ թնդանօթածիզ զօրականաց հրամանատար Սօլէյլ զօրապետին ինչ կերպով զրկուել պէտք ըլլալն հարցուց մարտնջարտին , « Սօլէյլ զօրապետին մի գրէք , պատասխանեց մարտնջարտն , նա կրնայ դժուարութիւններ յարուցանել : Ես իրեն կը գրեմ , երբ ժամանակիցայ » : — « Մարտնջարտն , կրէ Նիւկ զնդապետը , իր հրահանգէն յառաջ գալիք դժուարութեանց ինչ կերպ բան ըլլալն չի բացատրեց » :

Արդեօք ի՞նչ դժուարութիւններ կրնար պատճառել Սօլէյլ զօրապետին , սրն որ իր իշխանութեան տակն էր : Ընդհակառակն չէ՞ր վախնոր որ շարունակ իրենց մէջ խորհրդակցուած յիշեալ արամադրութեանց հակառակ եղող այս նոր հրամանան զանի պիտի խռովէ : Ի՞նչ կրնանակեն այս՝ Նիւկ զնդապետին : Այս ժամանակը երբէք չեկաւ , և մարտնջարտն այս մասին բնաւ բան մը չի գրեց Սօլէյլ զօրապետին : Ուստի՝ գրօ-

չակներու գործոյն համար մինչև հոկտեմբեր 27 ի իրիկունն տրուած բոլոր հրամաններէն կը հետեւի որ ի սկզբան անոնց համար պիտի այրուին կրսուի, և վերջը հրաման կը տրուի զանոնք Բրուսիացւոց յանձնելու համար միւս ռազմական նիւթոց կարգը անդրնել :

Մարտի 1-ին հրաման կը յայտնէ որ Երուսաղիմի 28-ին զինուորականներն — Նիւի գնդապետին գրած գրութիւններն կէս օրէն վերջը ժամ չորս ու կէս ու հինգին միջոցներն զրկուեցան : Իսկոյն պահապան զօրաց հրամանատարն իր առտուտն տուած հրամանն գրի կառնու, և խանիկո զօրապետն ալ իր ստորագրութեամբն հետեւեալ դիտողութիւնն կընէ անոր լուսանցքին մէջ :

« Իմ երկու վաշտերուս դրօշակներն իմ հրամանաւ պատուեցան և մնդիւններն ալ սպայուեցան : ու կտորներն իմ վաշտերուս բաժնուեցան . իմ գունդերուս դրօշակներն Պէլլին չի պիտի երթան » :

Ինչ ազնիւ աշղու մն, որուն ճշմարտութիւնը գէպքն պիտի արդարացընէր :

Կարևոր է դիտել որ թնդանօթածիգ զօրաց հրամանատար զօրապետներուն հաղորդուած հրամանին համեմատ՝ դրօշակներն հոկտեմբեր 27-ին պիտի յանձնուէին, մինչդեռ մարալխան վերջին հրամանաւ մը զանոնք հետեւեալ օրն հոկտեմբեր 28-ին հրամայեց յանձնել : Եթէ յիշուի դրօշակներն կուղէին այրել, ինչու համար անոնց յանձնուիլը օր մը ետ ձգուեցաւ : Ամենեւին անանկ ընելու հարկ մը չկար, վասն զի ժարրա զօրա-

պետն անձնատուութեան պայմանադրութեան վերջնական որոշումը տալու համար ճամբայ պիտի ելնէր, և խիստ կարեւոր էր որ երբ կարգը դրօշակներուն վերաբերեալ պայմանին գալու ըլլար, ամենայն անկեղծութեամբ Սթիէլ զօրապետն ապահովցընէր որ անոնք այրուած էին :

Այս մասին երբ մարալխան հարցաքննուեցաւ, պատասխանեց թէ՛ « Նիւի գնդապետն՝ գունդերու հրամանատարաց նամակին ներքեւ իր ստորագրութիւնը գնելով դիտողութիւն ըրած էր որ այս գործողութեան հոկտեմբեր 27 էն 28 լուսնալու դիւրը կատարուին խիստ դժուար է, և իր այս դիտողութեան վրայ ըսի թէ՛ Հոկտեմբեր 28 առաւօտուն գրեցէք : Չէի կարծեր որ այս յապարդումն՝ ժարրա զօրապետին տրուած հրահանգացը վնաս մը հասցընէր » :

Մարալխան այս խօսքը երբ Նիւի գնդապետին հաղորդուեցաւ, պատասխանեց, « Չեմ յիշեր թէ ես իրր առարկութիւն մարալխանին այսպիսի դիտողութիւն մ՝ ըրած ըլլամ, բայց խիստ կարելի և բնական է, որ գործողութեան երբ կատարուիլը հարցուցած ատենս այս զաղափարն յայտնած ըլլամ, և մանաւանդ միայն ասոր համար գացած ալ էի մարալխանին քով, սա դիտաւորութեամբ որ այս գործողութեան կատարուելուն վրայ ապահով ըլլայի . ինձ այնպէս կերելի որ նամակին խօսքերուն շատը գրեթէ ինքը գրել տուաւ . . . Ես միջոցին ես ժարրա և Սթիէլ զօրապետաց մէջ առջի օրը տեղի ունեցած անասկցութիւնն գիտէի, բայց անոր պատ-

ճառն ու ինչ վախճան ունեցած բլլալը բնաբն չէի գիտեր : վերջապէս բնաւ մտքէս չէր անցներ թէ անձնատուութեան պայմանադրութիւնն նոյն իրիկունը պիտի ստորագրուէր : Եթէ գիտնայի, ես առաջինը կրլայի չէ թէ միայն յապաղում մը չ'առաջարկելու մասին, այլ նաև պնդելու որ դործն անմիջապէս կատարուի :

Ժարրա զօրապետին դրօշակներու դործոյն համար ընդունած հրահանգներն ինչ էին : Ահաւասիկ այս մասին յիշեալ զօրապետին քննութեան խորհրդոյ առջև ըսածներն .

« Պաղէն մարաշխտան յանձնարարեց ինձ ըսել որ ամեն յեղափոխութենէ վերջը գաղղիական զօրաբանակին սովորութիւնն է անկեալ կառավարութենէն իրեն տրուած դրօշակներն այրել, և ահա այս սովորութեան համեմատ դրօշակներն այրեցան, առանց անոնց թիւը իմացընելու . և թէ ահա կանխաւ Ֆրէտէրիք-Շարլ իշխանին կիմացըն է որ վերջը պարտուց զանցառութեան ամբաստանութեան տակ չիլնայ : Ժարրա զօրապետն կը յաւելու որ իր Ֆրասքայթի հասած ապենն այս մասին Սթիէլ զօրապետին հետ առանձինն խօսակցած ժամանակ՝ այս վերջինը յայտնէր է թէ այս ըսած խօսքն բոլորովին տարօրինակ է : — Աղէկ իմացայ, կըսէ Ժարրա զօրապետն, որ Սթիէլ զօրապետն այս խօսքին բնաւ չէր հաւատար :

« Երբ պայմանադրութեան վիճարանութեան ատեն դրօշակներու խնդրոյն եկանք, Սթիէլ զօրապետին կրկին խօսք բանալուն վրայ ես ալ պարտաւորեցայ կրկնել մարաշխտան ըսածը : Այս անգամ ալ դարձեալ իրիտ յայտնի տարակոյս մը չուրցուց :

Ֆէյ դեղապետն՝ որ սոյն տեսակցութեան ներկայ էր, իր վկայութեան մէջ այս կէտը իրիտ որոշ կերպիւ կը բացայայտէ :

« Այնպէս թող ըլլայ, ըսաւ Սթիէլ զօրապետն բայց սա պայմանաւ որ սոյն վայրկենիւ մէջ չայբուածներն մերը ըլլան » :

Ինչ և իցէ Ժարրա զօրապետին ստորագրած պայմանադրութիւնն դրօշակներու դործոյն համար հետեւեալ պայմանն կը պարունակէր .

« Չէնքերն, ինչպէս նաև զօրաբանակին բոլոր ռազմական նիւթերն՝ այսինքն՝ դրօշակ, ևն. Մէջ կամ դրեակները Պաղէն մարաշխտան ձեռքովը կարդուած զինուորական մասնաժողովներու պիտի թողուին, անմիջապէս բրուսիական մասնաժողովներու յանձնուելու համար » :

Հոկտեմբեր 26ին՝ անձնատուութեան պայմանադրութեան նկատմամբ Սթիէլ և Ժարրա զօրապետաց մէջ՝ միայն զինուորական պատուոց և սպայից սուրբօուն համար բացուած վիճարանութիւնը դժուարութիւններ յարուցած էր : Այս վիճարանութեամբ դրօշակներն ռազմական նիւթոց կարգն համարուելով՝ պէտք էին թշնամոյն յանձնուիլ : Այս կերպիւ հոկտեմբեր 27ին վիճարանութիւնն միայն երկու կէտերու վրայ պիտի ըլլային : Մարաշխտան վստահ էր որ անձնատուութեան պայմանադրութիւնն նոյն իրիկունը պիտի ստորագրուէր : Արդ՝ ինչու համար նիւզ դեղապետին դրած հրամանին դործադրութիւնն հետեւեալ օրուան ձգեց, ասիից հետեւեալ մեկնութիւնն կրնանք հանել :

Գունդերու հրամանատարաց զրկուած ուղ-

զակի հրամանին համաձայն դրօշակներն նաւարանը պիտի հաւաքուէին. հոն այրուելու համար եղած արդարարութիւնն զանոնք յանձնելու մասին ամեն տարակոյս պիտի բառնար, և գունդերուն կողմանէ դրօշակներուն համար ձեռնարկուելիք որ և է զեղծում կամ պիտի արգիլէր կամ առաջին առնուր:

Բօթիկները զօրապետին հրամանին համեմատ ժիրէ զնդապետն այս դրօշակները պիտի ընդունէր, և Սոլէյլ զօրապետին հրամանացը համաձայն թշնամոյն յանձնուելիք ռազմական նիւթոց կարգը պիտի դասուէր:

Այսպէս մարաշխան ամեն նախադրուութիւն ձեռք առած էր որ դրօշակներն նաւարանը ամբողջութիւն, և անգամ մը հոն երթալէն վերջը բնաւ չեղծուին:

Այս պայմաններով Սթիէլ զօրապետն ժարրա զօրապետին առաջադրած հաստատութիւնը կամ կրնդունէր, կամ կը մերժէր: Եթէ ընդունէր, անկարելի էր անմիջապէս դրօշակներն եղծել. իսկ եթէ ոչ, անգամ մը անձնատուութեան դաշնադրութիւնն ստորագրուելէն վերջը՝ անոր պայմաններն գործադրելու համար ամեն բան պատրաստուած էր:

Եթէ մարաշխան զօրաբանակին իմացուցած չլլար դրօշակներն պիտի այլին, տարակոյս չկայ որ գունդերն իսկոյն զանոնք եղծելու պիտի ձեռնարկէին: Ինչպէս որ այս ըսածնիս արդէն սկսուած և մարաշխանին հաստատութեան վրայ ետ մնացած էր: Յայտնի է որ մարաշխան աս

եղծման խորհուրդն յղացած էր, բայց հոկտեմբեր 27ի հրամանին գործադրութիւնն հոկտեմբեր 28ին մնալուն ինքք ալ չէր կրնար զայն գործադրել, թշնամին այդ խնդիրը պիտի լուծէր, և այսպիսի պայմաններով եղած աւար մը որչափ ալ նուազ փառք յառաջ բերէ, այս մասին անտարակոյս կրնայ կարծիք յայտնուել. անգամ մը թշնամոյն ձեռքն անցնելէն վերջը՝ ալ անկարելի է որոշել թէ այդ դրօշակներն մթերանոցի մը պահապանէ՞ ընդունուած թէ պատերազմական դաշտին վրայ յաղթանակաւ ձեռք բերած էին: Պէրլինի մէջ ամեն բան յաղթութեան նշան կըլլար: Մէջը բոլորտիրքը տեղի ունեցած արիւնահեղ պատերազմներուն մէջ՝ օգոստոս 16ին Սիսէյ զօրապետին զօրաբաժնի 57րդ վաշտին սպայներէն մին Բրուսիացուց հետեակազօրաց 16րդ վաշտին 2րդ խումբին մէկ դրօշակն առաւ, որն որ նոյն պատերազմին յաղթանակն եղաւ:

Մնաց որ մինչդեռ մարաշխան ինքզինքը թշնամոյն տակաւին կայսերական զօրաց հրամանատար ճանցուցած էր, ժարրա զօրապետին թըշնամոյն ընդունել տուած փախուստէն ինչ արդիւնք կրնար յուսացուիլ:

Այս պարագայիս մէջ՝ քանի որ մարաշխանը ամսայ մը մօտ ժամանակէ ի վեր յանուն կայսրուհւոյն կը ջանար վարուել, կառավարութեան մը փոփոխութեանէն ինչ հետեանք կրնար գոյանալ:

Միթէ մարաշխանին միտքը դրօշակներն թշնամիէն պահել էր: Ժարրա զօրապետին հե-

տեւալ խօսքերն այս կէտին վրայ տարակոյժ մը կը ձգեն :

« Մարաշախտն ինձ ըսաւ որ գիտէր թէ դրօշակներ այրուած էին, և չէր սեզեր որ Տրէտէ-րիք-Շարլ իսխանն մտքէն անցընէ որ ինքը իր պարտեաց զանցառու դտնուած է » :

Որն էր մարաշախտին պարտքն, մինչդեռ տնձնատուութեան զտնչադուութիւնն դեռ ստորագրուած չէր : Այս խօսքերն կարծես մարաշախտին իր յայտնած նպատակէն տարբեր նպատակ մ' ունենան կը մտնեն : Աւանց մնացած դրօշակներն ազատելու սիոյթ և ջանք ունենալու զանոնք բոլորն ալ պտհած չըլլալուն համար իսխանէն ներողութիւն խնդրելու պէտքն կզգայ : (1)

Այս մասին ինչ որ եղած ըլլայ, գաղղիական զորաբանակին գլխաւոր հրամանատարն այսպիսի միջոցներու գիմած ատեն՝ ատենն կը հաստատէ որ զորաբանակին պատիւն պաշտպանելու

(1) Եթէ Պագէն մարաշախտին ըսած խօսքերն՝ զորս Ժարրա զօրապետը յայտնեց, հոկտեմբեր 28 առաւօտուն յիշեալ զօրապետին տուած այն հրամանին հետ համեմատենք, որով որչաժ էր դրօշակներն նաւարան տանելով հոն այրելու նպատակաւ՝ առջի օրուան՝ այոնքն հոկտեմբեր 27 ին օրուած հրամաններն պարունակող արձանագրութեան այն թուղթն խղել, մեր այս կարծիքն հաւանականութեան բարձր աստիճան մը կը շահի : Այս կերպով միայն կրնանք հոկտեմբեր 27 ին օրուած հրամանին անգործադրելի մնալուն համար հաւանական մեկնութիւն մը տալ, հրաման մը՝ որ անձնատուութեան պայմանադրութեանը ստորագրուելէն առաջ տրուած է :

ճացող լիազօր պատգամաւորին ուղևորութենէն տուալ կրնար հրաման մը տալ որ դրօշակներն գունդերու գլխաւորներէն եղծուին : Ոմանք այս ըսածնիս կատարելու խնամքն ունեցած են :

Ատենը երբ Լալօքուբէ զօրապետէն իր հրամանին տակ գտնուած զօրաբաժնին գրօշակներուն յանձնուելուն նկատմամբ տեղեկութիւն խնդրեց, նա հետեւեալ պատասխանն տուաւ :

« Դրօշակակիրներուն ըսի. նաւարան պիտի երթաք, և պիտի խնդրէք որ դրօշակներն ձեր գլխացը այրուին. եթէ այնպէս ըրին, ձեր ստորագրութեամբը տեղեկագիր մ' ընելով պիտի բերէք ինձ : Իսկ եթէ դրօշակներն ձեր գլխացք չայրին, դարձեալ հոս պիտի բերէք զանոնք, և հրամաններ պիտի ընդունիք :

« Դրօշակներն ետ եկան. ես ալ հետեւեալ հրամանն տուի :

« Գացէք ձեր բանակատեղիները, և կարելի եղածին չափ հրապարակաւ այրեցէք զանոնք : Ես իմ տուած հրամանիս պատասխանատուութիւնն իմ վրաս կառնեմ. օրն իրիկուն չեղած այրուելուն լուրը ինձ բերուելու է :

« Նոյն օրը ինձ լուր եկաւ որ զօրաբաժնիս գրօշակներն այրուեր են : Միայն պատճառը չըստուգուած պարագայի մը 63րդ վայտին դրօշակըն չէ այրուեր » :

Լաբասէ զօրապետին վկայութեանը մէջ ալ հետեւեալը կը կարդանք :

« Հոկտեմբեր 27 ին երեկոյեան ժամ 9 ին 2րդ գունդին սպայից գլխաւորէն 1243 թուով նշա :

նակեալ խորհրդական գրութիւնն ընդունեցայ, որուն մէջ կը հրամայուէր որ մեր վաշտերուն դրօշակներն թնդանօթածիզ զօրաց յանձնուին:

« Յիշեալ դրօշակներն Մէցի նաւարանը տարուելով՝ հոն պիտի այրուէին: Ես այս խորհուրդը չընդունեցայ քով դիտնալով որ դրօշակներն ինձ համար հայրենիքը կը ներկայացնէին. անոնք մեր պատուոյն ու մեր քաջութեանը յանձնուած էին. զանոնք յանձնելն անկարելի բան երեցաւ ինձ:

« Հետեւեալ օրն՝ հոկտեմբեր 28, առաւօտուն կանուխ գնդապետներս հաւաքեցի, և յիշեալ գրութիւնն անոնց առջև ալ կարդալով՝ այս մտտին իմ զգացածներս յայտնեցի՝ զանոնք ալ ինձի համամիտ դատելուս վրայ հրամայեցի որ դրօշակներն իրենց սպայներուն դիմացը այրին, և սոյն գործողութեան տեղեկագիրը բերեն ինձ:

« Գործը շուտով կատարուեցաւ, և ահա այն ատեն Չրդ. դունդի գլխաւոր հրամանատար զօրապետին հետեւեալ պատասխանն գրեցի:

« Զօրապետս, Գունդերս կը դիմագրեն, իրենց դրօշակներն բնաւ մէկու մը չեն յանձներ և զանոնք այրելու պաշտօնն ալ բնաւ մէկու մը չեն վստահիր, ուստի այս առտու իրենք իրենց ձեռքովը զանոնք այրեցին: սոյն տխուր գործողութեան տեղեկագիրն քովս պահած եմ»:

Պահապան թնդանօթածիզ զօրաց հրամանատար Բէ-Արքո զօրապետն ալ մի և նոյն զգացումներով զգածուած՝ իր գլխաւոր սպայն՝ գրնդապետն Մէլքիօր առաւօտուն կանուխ դրօշակ-

ներով նաւարանը զրկեց, մարախասին հրամանացը հակառակ պատուիրելով անոր որ զանոնք իր դիմացը այրել տայ:

Հոկտեմբեր 28 ին քանի մը վայրկեան վերջը հասաւ ժիրէլ գնդապետին դրօշակներն ընդունելու և զանոնք թնդամուտն յանձնուելիք ռազմական նիւթոց կարգը գնելու համար իրեն զրրկուած հոկտեմբեր 27 թուականաւ հրամանագիրը՝ զոր Սօլէյլ զօրապետն գրած էր: Սոյն նամակն ի՛նչ պատճառաւ 24 ժամ ուշ զրկուեցաւ:

Ժիրէլ գնդապետին զրկուելիք գրութիւնն որն որ ինչպէս ըսինք, Սօլէյլ զօրապետին ձեռքն էր երբ նա թնդանօթածիզ զօրաց զօրապետներն ընդունեցաւ, հոկտեմբեր 27 ին մինչև իրիկուն Սօլէյլ զօրապետին գրասենեակը պահուեցաւ: Հետեւեալ օրն՝ հոկտեմբեր 28, իր օգնականն զանի թնդանօթածիզ զօրաց սպայից գլխաւորին գրասենեակը յանձնելով՝ զայն արձանագրել ու ֆարաբան զրկել տուաւ:

Ատեանը պարտաւորեցաւ խորհել թէ Սօլէյլ զօրապետն յիշեալ գրութիւնը ի՛նչ պատճառաւ այդչափ ուշ զրկեց: Եթէ այս յապաղումը ժիրէլ գնդապետին զրկուած հրամանին բողոքովին հակառակ եզոզ թնդանօթածիզ զօրաց զօրապետներուն տրուած հրամանացը հետ բաղդատենք, հետեւեալ մեկնութիւնն միայն կըրնանք տալ:

Պէտք էր զգուշանալ որ դրօշակներուն համար եղած որոշումը նաւարանէն ելած մէկ յայտարարութեամբ մը չի հաշակուի, որով զօրա-

բանակն տրուած հրամաններուն հակասութիւնն իմանալով կրնար ամեն ձեւնադրութեանց արգելք ըլլալ : Ահա այս պատճառաւ էր նաև որ մարտնչական չիւկ գնդապետին միջոցաւ ֆոֆի-նիէր զորապետին դրկած նամակին մէջ ալ իմացուցած չէր որ զբռնակներն նաւարանը տարուելով պիտի այրին :

Սոյէլ զորապետն յայտնեց որ հոկտեմբեր 27ի իրիկունը ինքը գրոշակներուն այրուելու համար նաւարան դրկուիլն դուռը երուն ազդարարող մարտնչական ուղղակի հրամանագրէն բնաւ տեղեկութիւն չունէր, և գրոշակներուն յանձնուիլն ալ մինչև հետեւեալ հոկտեմբեր 28րդ օրն պիտի յայտարարէր :

Այս պարագայն անակնկալ կերպիւ յաջող հետևանք մ' ունեցաւ . քանզի ասով մի քանի սպայներ, մասնաւորապէս Մէլքիօր գնդապետն կրցան իրենց գրոշակներն այրել, և ժիրէլ գրնդապետն ալ կարող եղաւ իրենց պահպանութեանը յանձնուած գրոշակներն դեռ անձնատուութեան պայմանագրութեանը ստորագրուիլն չիւ մտցուած եղծել :

Հոկտեմբեր 28 առաւօտուն մարտնչական բոլոր գունդերու հրամանատարներն ու զորապետները ի խորհուրդ հասարեց : Ժարրա զորապետն իր Սթիւէլ զորապետին հետ ըրած տեսակցութիւնն պատմեց, և իր ստորագրած պայմանագրութեան պարտնակութիւնն անոնց հաղորդեց : Սոյն պայմանագրութեան 3րդ յօդուածն գրոշակներուն նկատմամբ նոր որոշում մ' ընելով որոշակի կը

յայտնէր որ անկարելի էր այլ ևս զանոնք եղծել :

Ֆրոսար զորապետն սոյն յօդուածին պարտնակութիւնը լսելով պուստ . « Բայց գրոշակներն այրեցան . հետևաբար այդ յօդուածն անգործադրելի է : Մարտնչական, յաւելցուց Ֆրոսար զորապետը իր վիշտութեանը մէջ, մեզի իմացուց որ ինքը պարտաւորած էր զանոնք այրելու համար տուած հրամանին գործադրութիւնը արգելելը :

Յիշեալ զորապետին պատասխանը ճշդ չէր, մարտնչական գրոշակներուն այրելը արդիւած չէ, որովհետև ատանկ բանի վր երբէք հրաման չի տուա :

Արդարև յիշեալ գործողութեան վրայօք մանրամասն տեղեկութիւններ ընդունելու պարտաւորութիւնը նաւարանի տեսչին կը պատկանէր, այլ սակայն ժիրէլ գնդապետին ընդունած հրամաններն միայն մէկ նպատակաւ մ' եղած էին, և այն է՝ ~~պահպանութեանը~~ :

Պահէն մարտնչական լանաց խորհրդոյն բացատրել որ գրոշակներն այրել չի տալուն պատճառն ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ դուռը երուն հրամանատարաց տարախուտանքէն յառաջ եկած յայտարարումն : Այս տխուր անցքին նկատմամբ բնաւ տեղէ մը բողբ չեղաւ, որուն վրայ միայն ճշմարտութիւնը երևան ելաւ :

Այս աղետալի գործողութեան կատարմանը համար տրուած վճարական հրամանին վրայ անշուշտ այս վերջին դառն զգացումն կ'անհետանայ : Բայց երբ զօրաբանակն և վերջն ալ աղբը

իմացան այս ազգմական նուիրական նիւթոց պահուած նուաստ որոշումը, զոր դրժեւն կարելի էր, հասարակութեան խիղճը իր ամենագնիւ զգացումներովը պաշարուած՝ Պաղէն մարտիկան տին թոյլ վարմունքին դէմ ամենայն զորութեամբ գրգռեցաւ, որն որ իր փախուստներովը թշնամին խաբել ջանալովը՝ միայն իր զօրականացը վստահութիւնը պատրած էր :

Սոյն միջոցին զօրաբանակին կենդանութիւն պատճառով զըացումները արժանաւոր թարգման մը պիտի դանէին : Մտիկ ընենք ժիրելէ գնդապետին հետեւեալ խօսքերը . խօսողը պատին է :

« Հոկտեմբեր 27 ին երեկոյեան, ժամ հինգին իմացայ որ Մէջ քաղաքն ալ զօրաբանակին համար որոշուած անձնատուութեան մէջն է : Շուտով նաւարան գացի հոն ինձ անհրաժեշտ եղած պարտաւորութիւն մը կատարելու համար :

« Չիաւորաց եօթը վաչտերէն՝ ութը, և թնդանօթածիգ զորքերէն ալ մէկ դրօշակ յանձնուեր էին ինձ : Գացի որ հրաման տամ զանոնք այրելու, բայց այն իրիկունը անկարելի եղաւ այդ գործողութիւնը կատարել ժամանակն անցած ըլլալուն համար, և հետեւեալ առտուն՝ դեռ զօրաբանակին դրօշակներուն համար բնաւ հաւ զորդակցութիւն մը չթնդուած կատարել տուի :

« Ես հարկ տեսած չէի այսպիսի գործ մը կատարելու համար հրամանի սպասել, քանզի մտածեցի որ գնդապետներն եթէ անդամ մը դրօշակներն ձեռք անցընեն, ալ անոնք իրենց իշխանութեան տակ համարուելով ուղածնին կընեն :

« Հոկտեմբեր 28 ին՝ առաւօտեան ժամ ութ և ութուկէսին միջոցները, և դրեթէ դրօշակներուն այրուելէն կէս ժամ վերջը հրամանագիր մ'ընդունեցայ որ գունդերու գլխաւորներուն կը հրամայէր իրենց դրօշակներն նաւարան խրկելու : Թնդանօթածիգ զօրաց գլխաւոր հրամանատար զօրապետն սոյն հրամանն ինձ հաղորդելովն հանդերձ՝ իմացուցած էր որ դրօշակներն ու մնացած բոլոր ազգմական նիւթերն պիտի պահուին ի հաշիւ առնուելու համար . . . :

« Գրեթէ ժամ իննին հետեւկազօրաց օդնական զօրապետ մը գրասենեակս գալով՝ իր դրօշակին ընկալագիրն ինձ ներկայացուց և ըսաւ . « Գնդապետս, Ես իմ դրօշակս յանձնած եմ՝ ահաւասիկ ընկալագիրս ալ . բայց լմ վաչտիս գնդապետն հրամայեց ինձ անոր այրուելուն ներկայ դանուիլ : Եոյն միջոցին ուրիշ հրամանագրի օրինակ մ'ալ ցուցուց ինձ, որ պարզ դասապետական կարգաւ տրուած էր գունդերու գլխաւորներուն որ դրօշակներն նաւարան զրկեն սա ևս իմացընելով որ հոն պիտի այրին : Այսպիսի հրամանի մը լուրն առաջին անգամն էր որ առի : Խիտտ խռովեցայ, և զանոնք պահելու համար ինձ եկած բոլորովին հակառակ հրամանագիրն սեղանին վրայէն առնելով՝ յիշեալ օգնական զօրապետին ցուցուցի, որուն վրայ սկսաւ լալ : Զեռքն բռնելով ըսի անոր . « Իմ սիրելի զօրապետս, այս իրիկու իրարու հակառակ հրամանագրաց վրայ, մեզի համար ամեն ինչ ընելու ազատութիւն կայ : Ահաւասիկ իմ ըսելիքս . դուք ընկալագիր մ'ու .

Յիք զոր պահպան մը ձեզ տուած է, նա մեզ
ընելիքին նկատմամբ բոլորովին պատասխանատու
ու թե՛նէ ազատ պիտի մնայ :

« Այս ընկալագիրնիդ տարէք նոյն պահա-
պանին, և ես կը հրամայեմ իրեն որ ձեր դրօշա-
կըն ձեզի յանձնէ, և դուք ալ ուղածնիդ ըրէք :
Իմ ետիս հետեւապարտաց սպայ մը կար, զոր
մինչև այն ատեն չէի կրցած տեսնել : Երկուքը
միաբան վայրկեան մը այս մասին խորհելու հրա-
ման ուղեցին ինձմէ : Գրասենեակէս դուրս ելան
և քանի մը վայրկեան վերջը կրկին ներս մտան :
Խնդրեցին ինձմէ որ երթան իրենց դնդապետէն
նոր հրահանգ ընդունին : Ուղածնիդ ըրէք, ըսի
իրենց և անոնք երթանէն վերջը տոյն տեսարա-
նէն յուզուած՝ հետեւեալն գրեցի առ զօրա-
պետն Սօլէյլ :

« Զօրապետս, Սպայներն իրենց դրօշակները
նաւարան կը բերեն պահանջելով որ իրենց ըն-
դունած հրամանագրին համեմատ հոն այրին :
Աօի՛ իմ ժամ մ՛ առաջ ընդունած հրամանագրիս
բոլորովին հակառակն ըլլալուն համար, կաղաչեմ
ձեզի որ կարելի եղածին չափ չուտով այսպիսի
դժուար կացութենէ մը դիտ ազատէք » :

« Յիշեալ գրութիւնն չուտով զրկեցի, բայց
զօրապետն Պան-Սէն-Մարթէն դանուելուն հա-
մար բաւական երկար ատեն պատասխանին սպա-
սելու էի. որով սառագիւ մեծ ցաւ պիտի պատ-
ճառեր ինձ : Սաստիկ չիտթութեամբ դրասենեա-
կէս դուրս ելայ, թէպէտ բոլոր դրօշակներն ալ
այրելու միտք չունէի, բայց այս երկու իրարու

հակառակ հրամանագրաց վրայ՝ այս որոշումը
մտքիս մէջ կը յուզուէր . . .

« Ժամ տանըմէկին Սօլէյլ զօրապետն անձամբ
եկաւ պատասխանեց, և այս երկու իրարու հա-
կառակ հրամանագրաց համար հետեւեալ բացատ-
րութիւնն տուաւ ինձ : Ըսաւ ինձ որ դաղըրիական
լիազօր պատգամաւորին ձեռամբ թշնամոյն ի-
մաց տրուեցաւ որ մեր քաղաքական կացութեան
փոփոխութեան վրայ հարկ եղաւ դրօշակներն այ-
րել, և ասանկով յոյս կար զանոնք ազատելու,
բայց թշնամոյն լիազօր պատգամաւորն այսչա-
ռարկութեան չի հաւատարմով ծիծաղեր ու այս-
պէս պատասխանէր է. Կարելի է որ քանի մը
դրօշակներ այրած ըլլան, բայց աղէկ գիտեմ որ
դուք փակաւին դրօշակներ ունիք, և պէտք է
զանոնք պահել : Թշնամոյն այս պահանջման վրայ
մարաջախտն ալ պարտաւորեցաւ առաջնոյն հա-
կառակ երկրորդ հրաման մը տալ, այսինքն՝ դրօ-
շակները պահել, Զօրապետն յաւելցուց որ թըշ-
նամին այս պահանջման վրայ հաստատ է, և այս
մասին շատ պայմանագրութիւն մ՛ քրպած է » :

Սօլէյլ զօրապետին յիշեալ բացատրութիւնը՝
դրօշակաց պահուելուն համար ժիրէլ գնդապե-
տին ուղղուած հրամանագրոյն բոլորովին անհա-
մաձայն է, վասն զի յիշեալ հրամանագիրն ժար-
բա զօրապետին ուղեորութենէն՝ և հետեւաբար
բրուսիական լիազօր պատգամաւորին տուած պա-
տասխանէն խիստ առաջ զրկուեցաւ : Ասկէց կրր-
նանք եզրակացընել որ դրօշակներուն եղծման
համար տեղի ունեցած յսպարումը պատպահական

չէր. վասն զի, եթէ այնպէս ըլլար, զօրապետն կըսէր զայն և յիշեալ բացատրութիւնն տալու պէտք չէր ունենար այնպիսի պատճառներ մէջ բերելով որոց անհերքելի ստուծութիւնը նաւարանի տեսչին զրկուած հրամանադրոյն թուականէն ալ կրնայ հաստատուիլ: Արդ՝ այնպէս խօստացուած էր որ անձնատուութեան ամենածանր պայմաններէն մին իր բոլոր ամբողջութեամբը կատարուի:

Դրանք մտնելու համար ինչո՞ւն անհրաժեշտ է: —

Սրբէկ՝ զօրապետին զբարձր: — Բայց, մինչդեռ անձնատուութեան պայմաններուն ըստ օրինի հետեւելու հոգ կը տարուէր, անդին թշնամին մարաջախտին մտահած վարմունքին վրայ կ'ակզածանօք լեցուած՝ վերջին անգամ ալ զանի նուատուութեան մը զիջանելու պիտի պարտաւորէր:

Նոյն օրը՝ հոկտեմբեր 28, կէս օրը երկու ժամ անցած՝ զօրապետուն նկատմամբ Սրբէկ զօրապետին մէկ գրութիւնն հասաւ. ընդհանուր բանակատեղին առ ժարրա զօրապետն ուղղեալ, և սա ալ զայն մարաջախտին տարաւ: Սոյն գրութիւնն անկէջ ի վեր աներևոյթ եղած է. ոչ մարաջախտն և ոչ ժարրա զօրապետն անոր ինչ ըլլալը չեն գիտեր: Ուստի չգիտցուիր թէ ինչ գրուած էր մէջը: Ինչևիցէ, այս գրութիւնը մեծ շիտթութիւն պատճառեց: Իսկոյն Սրբէկ զօրապետն կանչելու գացին, բայց իր բանակատեղին չէր, ինչպէս նաև սպայից զխաւօրն, ուստի իր օգնական-զօրապետ Սէր հրամանատարը փութակալէս ելաւ գնաց:

«Մարաջախտն, ըսաւ յիշեալ հրամանատար»

բը, ժարրա զօրապետին հետ իր սենեակը գասց, խիստ չիտթած կերեւէր: Թշնամոյն զօրաբանակին գլխաւոր զօրապետին մէկ նամակը կարդաց ինձ, որուն պարունակութիւնը հետեւեալն էր. «Գրօշակներուն նկատմամբ առարկած օրէնքնիդ երբէք տեղէ մը չի լսեցի: Ուստի չըլլայ որ զանոնք այրէք, և մնացեալ զօրաշակաց թիւը իմացուցէք ինձ: Եթէ սոյն թիւն ինձ գօհացուցիչ չերևի, պայմանադրութեան ընաւ մէկ յօդուածքն չի պիտի գործադրուի»:

«Մարաջախտն հրամայեց ինձ սոյն գրութիւնն անյաղ Սրբէկ զօրապետին զրկեմ, որ ձեռք առնուած միջոցներն և անոր հետ մէկտեղ մնացեալ զօրաշակաց թիւն թշնամոյն իմացընէ: Սրբէկ զօրապետն գտնելու գայի. գտայ զինքը, պատասխանեց ինձ. «Խիստ լաւ», և գնաց մարաջախտին քով»:

Սրբէկ զօրապետն ան ատեն մարաջախտին իմացուց որ գրեթէ քառասուն և մէկ զօրաշակ տարած էր նաւարան: Յիշեալ զօրապետին այս հաստատութեան վրայ՝ մարաջախտն դարձեալ խել մը գուշակութիւններ ընելով՝ հետեւեալ հրամանագիրն զրկեց թիրէլ գնդապետին.

« 28 Հոկտեմբեր 1870 .

«Երէկ՝ հոկտեմբեր 27, իրիկուան դէմ ստորագրուած զինուորական գաղնադրութեան համեմատ՝ ազգական բոլոր նիւթք, զօրապետ, ևն, ինձմով պիտի պահուին մինչև ի հատուծիւն:

հաշտութեան վճռական պայմաններն միայն անոնց
ինչ ըլլալիքը պիտի որոշեն :

« Հետեւաբար, զլիաւոր հրամանատար մա-
րաջախտն ամենաբայցորոշ կերպիւ կը պատուիրէ
Մէջի հրազինուց տեսուչ ժիրէլ գնդապետին որ
արգէն յանձնուած և սովէց վերջն ալ յանձ-
նուելիք գրօշակներն ընդունի և զոց տեղ մը
պահէ : Արգէն նաւարան յանձնուած գրօշակնե-
րը որ և է մէկէն եթէ ետ պահանջուին, ինչ պատ-
րուակաւ ալ որ ըլլայ, բնաւ ետ չի պիտի տրուի :

« Գլխաւոր հրամանատար մարաջախտն զժի-
րէլ գնդապետն պատասխանս տուաւ կը ճանչէ
այն տրամադրութեան կատարման մասին, որ
ստորագրուած պատուաւոր գաշնադրութեան մը
պայմաններն ամենաբարձր աստիճանաւ մը կը
գործադրէ և եղած խօստումներն բնաւ չի դրժեր :

« Գլխաւոր հրամանատար մարաջախտ, ՊՄ 243 :

Թիւեալ հրամանգիրն գրուած ին պէս՝ Սօլէյլ
զօրապետն զայն անձամբ ժիրէլ գնդապետին
տարաւ : Եւայտ գրօշակաց գտնուած սրահը եր-
թաղով զանոնք համբնց, որ 53 հատ էին :

Նոյն միջոցին՝ մարաջախտն գրօշակաց պահ-
ուելուն միայ ապահով եղած է ժարրա զօրապետին
միջոցաւ Սթիէլ զօրապետին զրկած գրութեան
ի պատասխանին՝ հետեւեալ գրութիւնն զրկեց .

« Փութաղի Նորին Վսեմութեան Պաղէն մա-
րաջախտին ներկայացընել այս առաջօտ ժամ 11 1/2
ին ձեզմէ ընդունած գրութիւնս : Գ. մարաջախ-
տըն յանձնարարեց ինձ կրկին գրել ձեզ որ

Գաղղիոյ սովորութիւնն է տնկեալ կառավարու-
թեանէն գունդերուն տրուած գրօշակներն նաւա-
րան զրկել հոն այրուելու համար : Մեր պատմու-
թիւնն այս մասին դժբաղդաբար խիստ բազմաթիւ
օրինակներ կը ներկայացընէ :

« Բայց և այնպէս Նորին կայսերազուն Բարձ-
րութեան յայնանձ վիտիաքն ալ դո՛հ ընելու
համար, Ն. Վ. Պաղէն մարաջախտն կը հրամայէ
ինձ իմացընել ձեզ, որ պայմանադրութեան ստու-
րագրութեան վերջը բնաւ գրօշակ մը այրուած չէ-
արդէն նաւարան յանձնուածներն, որ 31 հատ
են, մասնաժողովոյ պիտի յանձնուին :

« Կը պարտաւորիմ՝ յաւելլել որ շատ ձիւարք
և թնդանօթ աճիլք իրենց գրօշակներն չեն յանձ-
նած : Զիւարաց ոմանք ալ օգոստոսի առջի օ-
րերն իրենց գրօշակներն հրամանաւ նաւարան
յանձնած են, և ամենքն ալ պաշարումէն առաջ
Փարիզ զրկուած են :

Հետեւեալ հոկտեմբեր 29րդ օրն Սթիէլ զօ-
րապետն նամակ մը գրեց ժարրա զօրապետին, ու-
րով զանի յանուն Զրէտէրիք-Շարլ իշխանին կը
չնորհաւորէր անձնատուութեան պայմանադրու-
թեանը ռազմական նիւթոց վերաբերեալ պայ-
մաններն կատարուելուն համար : Սամուէլ հրամա-
նատարն կը վկայէ թէ յիշեալ նամակն հետեւեալ
բառերով կրօկոտէր. « Ուրիշ է Նուանոս », բայց
ժարրա զօրապետն ու կէտէն գնդապետը կը
պնդեն որ այսպիսի հեղեական և անարգական
խօսք մը չկար անոր մէջ : Սյս նամակն ալ անհե-

տացած էր. ուստի և անկարելի եղաւ այս կէտք
ստուգել :

Յիշեալ նամակին խօսքերէն անհերքելի կեր-
պիւ սա եզրակացութիւնը կ'ենէ թէ Պաղէն մա-
րաշխտան զօրաբանակին դրօշակներն ամենեւին
այրել ուզած չէ :

Հոկտեմբեր 26ին ուզած չէ, որովհետև նոյն
օրն՝ առաւօտուն տեղի ունեցած խորհրդոյն մէջ
եղած անզօր առաջադրութեանց նկատմամբ
պայտօրանողական հրաման չի տուաւ, և մանու-
ւանդ՝ որովհետև թող ասաւ որ նոյն օրն Սօլէյլ
զօրապետը մինչև իրիկուն անգործ մնայ ի վնաս
զօրաբանակին, իր ուզածն ընել տալու համար :

Հոկտեմբեր 27ին ալ ուզած չէ, մինչդեռ
նոյն օրն՝ բայերադրարար անձնատուութեան
պայմանագրութեան ստորագրութիւն քսանչորս
ժամու չափ ետ մնալուն կրնար իր առջի օրուան
անգործութեան թերութիւնն լրացընել, նոյն
առաւօտուն Սօլէյլ զօրապետը մարաշխտան քո-
վէն մեկնելէն վերջը միայն մէկ հրաման մը տուած
էր, այսինքն՝ դրօշակներն պահել :

Վերջապէս հոկտեմբեր 27ին կէս օրէն վերջն
ալ ուզած չէ, որովհետև գունդերուն այնպէս
կարծեցընելով որ դրօշակներն պիտի այրին, այս
հրամանին գործադրութիւնը հետևեալ հոկտեմ-
բեր 28րդ օրուան ձգեց, իսկ և այնպէս քով
գիտնալով որ դաշնագրութեան ստորագրութիւնն
նոյն միջոցին ալ իր ձեռքերը պիտի կապէր :

Եթէ պաղէն մարաշխտան դրօշակները այ-
րել ուզած ըլլաւ, այդ հրամանը նաւորանի տես-

ջին կը տրուէր : Աւելի պարզ միջոց մ' ալ կար-
և այն է՝ այդ հոգը գունդերու գլխաւորաց
յանձնել : Խօսք մը միայն բաւական էր արդիւել
որ դաղդիական զօրաբանակին դրօշակներն Պէր-
լին չերթային :

Արդ մինչդեռ մարաշխտան այդ խօսքն
ըրած չէ, ատենը այսպիսի ցաւալի պարագայի-
մը մէջ անտարակոյս ըլլալով կը յայտնէ որ Պա-
ղէն մարաշխտան իր պարտաւորութեանը և պատ-
ուոյն դէմ գործեր է :

ԳԼՈՒԽ Է.

ԱՆՁՆԱՏՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 28 առաւօտուն խորհուրդը հա-
ւաքուեցաւ անձնատուութեան դաշնագրութեան
պայմաններն կարգալ տալու և մտիկ ընելու հա-
մար : Խորհուրդն իր հաւանութիւնն տուաւ թէ
արձանագրութեան և թէ նորա յաւելածոյն,
սոյն արձանագրութեան պարունակութիւնն հե-
տևեալն էր .

« Յօդուած առաջին . — Պաղէն մարաշխտան
հրամանատարութեան ներքև գտնուած գաղղի-
ական զօրաբանակն պատերազմական գերի պի-
տի ըլլայ :

« Յօդ. 2 . — Մէջ քաղաքին ամրաբերդն իր
բոլոր բերդերովը, ռազմական նիւթերն, ամե-

կերպ պաշարք և տէրութեան բոլոր ստացուածքն՝ պայմանադրութիւնն ստորագրուած վայրկեանին ինչ վիճակի մէջ որ էին, այն վիճակաւ բրուսիական զօրաբանակին պիտի յանձնուին :

« Հոկտեմբեր 29ին չարաթ օրը՝ կէս օրին Սէն-Քանթէնի, Բլարվիլի, Սէն-Քլոյիէնի, Քէօլէօի և Սէն-Բրիվայի բերդերն, ինչպէս նաև (Սթրազպուրկ տանող) Մազէլ դուռը բրուսիական գունդերուն պիտի յանձնուին :

« Յիշեալ օրն առաւօտեան ժամ 10ին՝ հրազինուց և պատերազմական շինութեանց յատկացած զործաւորներն քանի մը երկրորդական սպայներով պիտի ընդունուին յիշեալ բերդերն վառօդի մթերանոցներն պահպանելու և ականներն փորելու համար :

« Յօդ. 3 : — Չէնքերն՝ ինչպէս նաև ռազմական բոլոր Նիւթերն, այսինքն՝ դրօշակք, թնդանօթք, Բլորյու, ձիք, ռազմական արկեղք զօրաբանակի կազմածք, մթերք, ևն. Մէջի և անոր բերդերուն մէջ՝ Պ. Պազէն մարտավատէն կարգեալ զինուորական յանձնաժողովոյ պիտի թողուին, անմիջապէս բրուսիական գունդերուն յանձնուելու համար : Անոցն գունդերն՝ իրենց վաշտին կամ խուժին կարգադր համեմատ և զինուորական կարգաւ իրենց համար յուշուած յատուկ տեղերն պիտի տարուին : Այն ատեն սպայներն կրկին Մէջի բանակատեղին պիտի երթան սա պայմանաւ որ պատիւուն զբայ երդնուն առանց բրուսիական հրամանատարէն հրա-

ման առնելու անկէջ գուրս չեղնելու համար :

« Գունդերն երկրորդական սպայներուն միջոցաւ պահպանութեան տեղերն պիտի տարուին : Զինուորներն իրենց մատակներն, գործիքները, վրան, վերմակ, լրաման, ևն. հետեւինն պիտի տանին :

« Յօդ. 4 : — Բոլոր այն զօրապետներն ու սպայները, ինչպէս նաև սպայի աստիճանաւ գործածուած զինուորական պաշտօնեայք, որ դրաւորացէս պատիւնուն վրայ կերդնուն երբէք Գերմանիոյ դէմ զէնք չի կրելու և մինչև ներկայ պատերազմին վերջը նորա չափուն դէմ բան մը չի գործելու համար, բնաւ պատերազմական դերի չի պիտի ըլլան և այս պայմանն ընդունող զօրապետք և սպայք ալ իրենց վերաբերեալ զէնքերնն ու ռազմական նիւթերնն պիտի պահեն :

« Բաց ասկէ, պատերազմի տեւողութեան ատեն զօրաբանակին և պահպան զօրաց գունդերուն ցուցուցած քաջութեան փոխարէն, դերութիւնն ընտրող սպայներուն ներուած է թուրերնին և իրենց վերաբերեալ բոլոր ռազմական նիւթերնին հետեւինն տանիլ » :

Ահա այսպէս վերջացաւ Հռենոսի զօրաբանակին գործք, իր գլխաւոր հրամանատարին ինքնայօժար բերմանցը զո՛ք երթալով, ահա այսպէս աւերեցաւ Մէջ քաղաքն ալ զօրաբանակին հետ, որ եթէ իր վիճակին մէջ մնար, կրնար զինադադարման վայրկեանին սպասելու չափ թշնամոյն դէմ իր դիմադրութիւնն երկարել : Ահա այսպէս լօրէնն ալ Բրուսիացուց ձեռքն անցաւ :

Մէջի պատերազմական դաշտը՝ որ ի սկզբանէ
երկու զօրաբանակաց համար հանդիտապատիւ
եղող խելմը պատերազմներով նշանաւոր եղաւ :
Սեպտեմբեր 1 էն վերջը ստորերկրեայ պատերազմ
ներ շարունակել սկսան : Այն որ զօրութիւնն
վեհանձնաբար սկսած էր , խորամանկութիւնն
եկաւ աւարտեց :

Վերոյիշեալ արձանագրութեան Յրդ. յօդուա-
ծին համեմատ ուղմական նիւթերն , զէնք ևն.
թշնամեոյն պիտի յանձնուէին : Ահա այս էր վեր-
ջին ժամու յարաբերութեանց հետեւանքը , որուն
անյաշնորթութիւնն իրատ հուատարի էր և այս մասին
տեղի ունեցած խօսակցութիւններով այնչափ
ժամանակ կորսուեցաւ , որ չէ թէ միայն ուղմա-
կան նիւթերն կրնային եղծել , այլ և քաղա-
քնն ալ աւերել :

Արդէն տեսանք թէ դրօշակներուն համար
ինչ որոշում եղած էր . դառնով զէնքերուն , ասոնց
համար պահուելու միջոցներ հրամայուեցան : Ամէն
եղծման փորձ արգիւտեցաւ , և Նրդ. գունդի
թնդանօթածիզ զօրաց հրամանատար Պերքեյմ
զօրապետն երբ վերջին օրերն իր հրաշքով ըս-
նակատեղիէն դուրս հանեց , խտիւ յանդի-
մանուեցաւ :

Անձնատուութենէն առաջ անանկ լուր տա-
րածուած էր թէ թշնամեոյն հետ անտնկ դաշ-
նադրուած է որ ըտրո ուղմական նիւթերն հաշ-
տութեան ժամանակ Գաղղիոյ պիտի յանձնուին :
Այսպիսի պաշտօնական յայտարարութեամբ հաս-
տատուած լրոյմը վրայ , որ թէպէտ անձնատու-

նութեան պայմաններուն վիճարանութեան ատեն
այդ մասին երբէք խօսք չի բացուելուն համար
չէր կրնար ստոյգ ըլլալ , ուղմական նիւթերն
ամենամեծ խնամով վերստին միջերանոցներն
դրուեցան :

Անզէն գունդերն թշնամեոյն պիտի յանձնու-
էին : Սէտանի մէջ , Եպայից և զինուորաց մէջ տե-
ղը , իրենց թշնամեոյն ձեռքը յանձնուելու նկատ-
մամբ բնաւ խտրութիւն մը եղած չէր , և այն
բոլոր սպայք՝ որ գերութիւնը իրենց վերստին
Գաղղիա երթալուն համար առաջադրուած պայ-
մաններն ընդունելէն աւելի նտխամեծար համա-
րած էին , մինչև իրենց ուղեորութեան վայրկեա-
նը նիւթապէս պահուեցան : Ընդհակառակն Մէջի
մէջ Պազէն մարտիվտան այնպէս դաշնադրեց որ
սպայք իրենց զօրքերն տանելէն վերջը համար-
ձակ Մէջի բանակատեղին պիտի վերադառնան
այն պայմանաւ որ երգնուն իրենց պատուոյն
վրայ առանց բրտօխական հրամանատարին հրա-
մանին անկէ դուրս չենլելու համար : Մարտիվտ-
անն սպայից փնձակը զօրքերուն վիճակէն որոշած
վայրկենին զոնէ պարտաւոր էր ամենայն ճշու-
թեամբ սպայից յայտանել իրենց սարտաւորու-
թիւններն և այդ խտրութիւնն բոլորովին արգի-
ւել : Սպայից վերաբերեալ պայմանագրութեան
խօսքերն մեր այս առարկութիւնն չի պարունա-
կելնուն համար , ասից բոլորովին ցաւալի շիտ-
թութիւն մը ծագեցաւ :

Բոլոր այն սպայներն որք մինչև պատերազ-
մին վերջը Գերմանիոյ դէմ բնաւ զէնք չի կրելու

և անոր շահերուն դէմ բան մը չի գործելու համար իրենց պատուոյն վրայ երդուրնցան, արտօնութիւն ստացան իրենց տեղը երթալու : 1863 ի օրինադրութեան 256րդ յօդուածն այս մասին հետեւեալ բացորոշ խօսքերն կընէ . Սպայ մը պէտք չէ որ իր վիճակը իր գունդին վիճակէն որոշէ : Մնաց որ Մէջի շորաբանակին սպայներուն դրութէ մեծամասնութիւնը ճանչցան զայս : Պայմանադրութեան կըր յօդուածն փոխանակ նկատողութեան առնելու այս փրկարար տրամադրութիւնն, որ դժբաղդութեան մէջ անդամ հաւասարութեան ամենափափուկ զգացման համաձայն ըլլալուն պատճառաւ գաղղիական վտեմ տրամադրութիւն մ'է, ամեն կերպ թուլութեանց առաջնորդ եղաւ . և ի՞նչ պայմանաւ, — Գերմանիոյ շահերուն դէմ բնաւ բան մը չի գործելու պարտադրութեամբ : Պսղէն մարաշխոտն իր սպայներուն հրամայեց որ հայրենասիրութեան և զինուորական պարտադրութեան հետ անհամեմատելի եղած այս պայմանն ստորագրեն : կը զաւինք որ թէպէտ պատերազմի բոլոր տեղութեան մէջ այս առաջինը չէր, բայց ասի ամենէն մեծն ըլլալուն համար խօտիւ կշտամբուելու արժանի է :

Պայմանադրութեան 3րդ յօդուածն կը հրամայէր որ ամեն ռազմական նիւթք Մէջի և անոր բերդերուն մէջ Պաղէն մարաշխոտէն կարգեալ զինուորական յանձնաժողովոյ պիտի թողուին անմիջապէս բրուսիական յանձնաժողովոյ յանձնուելու համար :

Անձնատուութեան պայմանադրութեանը ըս-

տորագրուելէն անմիջապէս վերջը՝ Մէջի գլխաւոր հրամանատարին ձեռքով Հէնրի զօրապետին նախագահութեան ներքեւ յանձնաժողովներ կազմուեցան : Յիշեալ զօրապետն իրեն առաջնորդունեցաւ միայն այն հրամանագիրն զոր Պաղէն մարաշխոտն հոկտեմբեր 28 առաւօտուն ռզդեց առ դեղապետն ժիւրէլ գրօշակներու գործոյն համար, և որուն մէջ հետեւեալ խօսքերն պարտէին . « Երէկ՝ հոկտեմբեր 27, երեկոյին ստորագրուած զինուորական դաշնագրութեանն համեմատ ռազմական բոլոր նիւթք, գրօշակք, ևն. մինչև ի հաշտութիւն անեղծ պիտի պահուին, և հաշտութեան վճռական պայմաններն անոնց ինչ ըլլալիքը պիտի որոշեն : »

« Մենք ամենքս ալ այնպէս համոզուած էինք, ըսաւ Հէնրի զօրապետը, որ հայրենեաց ամենամեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէինք թշնամոյն իմացընելով որ մենք ալ իրեն յանձնելիք ռազմական նիւթքը չունինք, որովհետեւ ալ անոնց տէրն ինքն էր, և այնպէս կը խորհէինք, որ դեռ չի լինցած պատերազմին երեւոյթներուն նայելով՝ զանոնք Գաղղիա պիտի վերագարձընէր :

« Այսպէս ցուցուած էր գլխաւոր հրամանատար Պաղէն մարաշխոտին հրամանագրոյն մէջ, և այս էր մեզի յանձնուած պաշտօնին հետեւութիւնը, վասն զի յանձնաժողովոյ կազմութիւնը բնաւ նպատակ մը չունէր, եթէ անոնց պատօնը թշնամիէն բռնի դրաւուած ռազմական նիւթքն անոր յանձնելէն զատ ուրիշ բան մը չըլլար :

« Այն պատուաւոր սպայք՝ որոնք բոլոր այժմ
 նիւթերն յազմողներուն յանձնելու մասին եղած
 զաւարի ջանադուրութիւնն իմացած էին, այնպէս
 հաւատացին: որ տակաւին զանոնք պատերազ-
 մաւ պաշտպանելու պարտաւոր էին: ստիպելով
 զթշնամին որ զանոնք մանրամասնաբար քննէ, և
 այնպէս կը յուսային որ օր մը կարելի է կը պար-
 տաւորի զանոնք անպակաս Գաղղոյ վերադար-
 ցընել կամ գոնէ անոնց գիրը վճարել: վասն զի
 անոնց արժէքը որոշելու չափ հող տարած էին:
 Շատեր այս կարծեացոյ համաձիտ գտնուեցան »:

Հէնրի զօրապետին սոյն զգաղմանցը մենք
 ալ կը մասնակիցինք: Գծրաղդարար ազգական
 նիւթոց ինչ ըլլալու որոշումը հաշտութեան պայ-
 մաններէն կախում չունէր, և թէ և մարալտտն
 այս կերպ յայտնութիւն մ'ալ կրնէ, սակայն այս
 մասին բնաւ նախազգուշութիւն մ'եղած չէր:
 Մարալտտին յիշեալ յայտնութիւնը ուրիշ ար-
 գիւնք չունեցաւ, եթէ ոչ երկու ամսու չափ եր-
 կարած գել այնպիսի գործողութեան մը դառնու-
 թիւնները որ անձնատուութեան դաշնադրու-
 թեանը խօսքերուն նայելով անմիջապէս պիտի
 գործադրուէր:

- Պաշտօնական տեղեկագիրներ կը հաստատեն
 թէ հետեւեալներն յանձնուած են թշնամոյն .
 1,665 թնդանօթ, որոցմէ 1,136 ին մէջի կողմը
 փապարուած (օլուգլու) .
 8,922 թնդանօթի սայլ .
 3,239,225 ուումը
 419,285 քիլ. վաւոյ

- 9,6967,63 զանազան տեսակ փամփուշտ
 13,288,096 Շարք տեսակէն փամփուշտ
 124,137 Շարք հրացան
 15,1152 զանազան տեսակ հրացան
 Յիշեալ ազգական նիւթոց և ուրիշ ամեն
 քերպ մանր մունր նիւթերու արժողութիւնն 36
 միլիանի կը հասնի:

Թշնամոյն յանձնուած վաւոյն մէկ մասը
 պաշտման տեսն չինուած է: վաւոյ արանը հոկ-
 տեմբեր 20 ին գործէ գաղղոցաւ:

Իսկ նաւարանի ախտաութիւնը բնաւ երբէք
 չի գաղղոցաւ: վասն զի նաւարանի տեսուչն երբ
 Մէյի զլիսաւոր հրամանատարին առաջակից թէ
 արդեօք նաւարանի ախտաութիւններն դաղը-
 ցընել պէ՞տք էր, այս վերջինը նաւարանի ըն-
 թացքը դաղըցընելու պատճառ մը չըլլալը իրեն
 իմացընելուն վրայ՝ նախնական նիւթոց վաճա-
 ումներն ու գործողութիւնք ամբողջ հոկտեմբեր
 ամսոյն մէջ շարունակուեցան:

Արդէն տեսնաք թէ պատերազմական պատ-
 ուոց խնդիրն ինչպէս վիճուեցաւ ու լուծուեցաւ:
 Խիստ լաւ վիճակի մը արժանի եղող և անձնատու-
 ութեան մը ամօթապարտութիւնը կրելու խոր-
 հուրդէն զորհուրող զօրաբանակի մը համար,
 գիտնալու ենք որ՝ չափ ծանր բան է բազմու-
 թեամբ և զէնքով թշնամոյ մը առջնէն անց-
 նիլը, որուն անօքը կրնար վայրկենական և ան-
 գիմաղբյի շարժում մը պատճառել: Բացայայտ
 բտենք. գաղղիական զօրաբանակին պատերազ-
 մական պատուոց շնորհուրը որչափ որ ամեն

կերպիւ հաստատուած ալ ըլլար, այնչափ այս միջոցը բոլոր զօրաբանակին մէջ տարածուելով դժուարութիւններ և վատնգներ կը ներկայացընէր: Կրնայ լաւ հասկցուիլ որ այդպիսի դառն պարագայներու մէջ մարաշխտոն իր բոլոր զօրաբանակին այս կերպ նկատողութիւն մը չընելով՝ զօրաբանակին միայն մէկ մասին համար ընդունելու պարտաւոր եղած էր: Եթէ զօրաբանակին յաղթողին առջևէն անյնիլը մերժած էր, միայն անոր համար էր որ ինքը իր անդործութիւնը և իր ինքնահաճ թելագրութեանց անյաշոյ վախճանը միտքը բերելով՝ ամօթապարտ պիտի ըլլար: Թէ որ սեպտեմբեր 1 էն ի վեր փոխանակ իր զօրաբանակն անտեղի ուղևորութեան մը ազդարարութեամբը պատրելու և խարբեայութեանց ու դաւադրութեանց ձեռնարկելու, պատերազմը շարունակած ըլլար, միով բանիւ, եթէ պարտուց և պատուոյ պահանջումներն գործադրէր, թըշնամուոյն առջևէն խիստ խորխտ կերպիւ պիտի անցնէր: Պաղէն մարաշխտոն՝ թշնամիէն իր զօրաբանակին չորհուրելիք զինուորական պատիւները մերժելով ինքզինքը դատապարտութեան ենթակայ ըրաւ:

Անձնատուութեան դաշնագրութեան խօսքերուն նայելով զօրաբանակը, Մէջ քաղաքը և Մէջի բերդերն հոկտեմբեր 29 ին կէս օրին թըշնամուոյն պիտի յանձնուին: Մարաշխտոն գունդերու հրամանատարաց յանձնարարած էր որ զօրքերն թշնամուոյն որոշած տեղուանքը տանելու համար քանի սպայ որ պէտք կըլլայ, իրեն որո-

շն: Գրեթէ բոլոր գունդերու սպայներն իրենց հրամանատարութեան տակ գտնուած զօրաց հետ ընկերակցելն իրենց անպատուութիւն համարեցան: Մարաշխտոն առաւօտուն իր ընդհանուր բանակատեղիէն մեկնած էր:

Ռոչափ որ մարաշխտին հրամանատարութիւնն իր զօրաբանակը թշնամուոյն յանձնելու վայրկեանը բարոյովն ոչնչադաւ, այլ սակայն իր պարտաւորութիւնն էր դարձեալ մինչև վերջը իր թշուառ զօրականաց մէջ գտնուիլ, որ եթէ թշնամուոյն հետ որ և է դժուարութեանց պատահին, ինքը ի հարկին աննոց համար բարեխօսէ: Աւելի ցաւալին սա է որ զօրաբանակին քովէն մեկնած ատեն գոնէ իր գլխաւոր սպայն ալ հոն չի թողուր որ իրեն յաջորդէ. հետեւաբար թէ իր և թէ իւր գլխաւոր սպային մեկնելուն վրայ մեծ չիտթութիւն մը կը պատճառի:

Գունդերն հոկտեմբեր 27 և 28 րդ օրերը՝ օրական միայն 250 կրամ հացի նուազ բաժին մը առեր էին, և գերի գացած ժամանակին ամենևին ուտելիք չունէին: Հետեւեալ օրն ու միւս օրերը, բրուսիական կաւքեր քաղաքը՝ անօթուութենէ ու թշուառութենէ մեռած կամ մեռնելու վրայ եղող գաղգիայի զօրքեր կը բերէին:

Տրէտէրիք-Շարլ իշխանն հոկտեմբեր 25 ին Եանկարնիէ զօրպետին իմացուցած էր որ երբ զօրաբանակն գերի ըլլայ, զանի կերակրելու համար ուտելիք պատրաստուած են: Մարաշխտոն մուցաւ բարոյովն պայմանադրութեան մէջ սակարկուր կէտը յիշեցընելու թէ զօրաբանակին

Թշնամուտն յանձնուելէն անմիջապէս վերջը՝ անոնց ուտելիք պիտի բաժնուին :

Ուստի՝ այն միջոցին որ մեր համբարանոցներն մինչև հոկտեմբեր 29ի համար ուտելիք կը գտնուէին . և թշնամին ալ իր կողմանէ զօրաբանակին կերողքնու համար ուտելիք պատրաստած էր : մեռ զօրքերն անօթի մնացին : Հետևաբար մարտիպետն սրտատխամտուութիւնը այս տխուր պարագային մէջ ալ կրկնակի կը ծանրանայ :

Եթէ Պաղէն մարտիպետն ուտելեաց համար կանոնաւոր վարչութիւն մը գործադրած ըլլար , այն ատեն գիմադրութեան տեսողութիւնն երկարելով մենք չի պիտի պարտաւորէինք այս ցաւալի պատմութիւնն ընելու :

Այս մասին այսչափ մը միայն յայտնենք , և արդէն ուտելեաց վերաբերեալ յատուկ տեղեկագրով մ'ալ պիտի հաստատուի , որ եթէ սեպտեմբեր 1էն սկսելով թէ զորաբանակին և թէ ժողովրդեան ուտելիքն ամենքը իրար խառնէին , հաւաքուած բոլոր ուտելիքն երեսուն օր աւելի կրնային գիմայրնել՝ իւրաքանչիւր մարդու 350 կրամ միս , 500 կրամ հաց , և իւրաքանչիւր ձիու 3 քիլօկրամ խոտ տալով : Եւ եթէ մարտիպետն պաշարման առաջին օրերը արդէն հաւաքուած ուտելիքն Մէջի բանակատեղին բերել տար , 33 օրուան ալ ուտելիք կը չափէր իւրաքանչիւր մարդու 400 կրամ միս , 500 կրամ հաց , և իւրաքանչիւր ձիու 4½ քիլօկրամ խոտ տալով , որն որ ընդ ամենը 63 օր կընէ 250.000 բամբի համար , և այսպէս փոխանակ հոկտեմբեր 29ին անձնատուր

ըլլալու , զօրաբանակն կրնար վերջ յիշած կերպերնուս առաջնովը մինչև նոյեմբեր 29 գիմանալ , և երկրորդով մինչև յունվար 1 :

Եթէ Պաղէն մարտիպետն սեպտեմբեր 1ին Մէջի բանակատեղին մեկնած ըլլար , Մէջ թողած ուտելիքն նոյն քաղաքը գտնուող 106.000 բաժանորդներու մինչև յունվար 31 կը բաւէր իւրաքանչիւր մարդու 350 կրամ միս , 500 կրամ հաց և իւրաքանչիւր ձիու 3 քիլօկրամ խոտ տրուելով : Իսկ եթէ օգոստոս 20էն մինչև 29 բանակատեղիներուն մօտակայ տեղուանքէն անընդհատ ուտելիք հաւաքուէր , գիմադրութիւնն մեր ըսածէն աւելի երկար ատեն կը տևէր :

Այն միջոցին երբ ուտելեաց պակասութիւնն որուն առաջը կրնար խիստ գիւրութեամբ առնուիլ , ստիպեց զՊաղէն մարտիպետն անձնատուր ըլլալու , Լուարի վրայ՝ Նրվէրի և Պուլայի մէջ տեղ գաղղկական զօրաբանակի հինգ դունդ կը խմբուէին : Մտուգիւ այս նոր դունդերն իրարու միացնող զօրութիւն մը չկար , բայց իրենց թիւը խիստ գոհացուցիչ էր , և Գերմանացիք որչափ որ անձկանօք կուղէին զճարիղ պաշարել , չի կրցան յիշեալ դունդերուն թուէն աւելի զօրք հանել անոնց դէմ :


Եթէ Ֆրէտէրիք-Շարլ իշխանին զօրաբանակը՝ որուն առաջին դունդերն հոկտեմբեր 25էն վերջը բաւական սարսեղնուն համար նոյեմբեր 25ին միայն կրցան Ֆոնթենայլօ և Ռիթիվիէ հասնիլ , Մէջի պարիսպներուն ներքե արդիլուէր , Օրլէանի առջև տեղի ունեցած պատերազմը բուլտովին կեր-

պարանափոխ կըլար : Այս մասին թէև կարծեօք միայն կը խօսինք , բայց Քուլմիէի առջև տեղի ունեցած պատերազմին մէջ երկու գաղղիացի դունդերու շահած յաջողութիւնն զմեզ կապահովցրնէ որ առանց Ծրէտէրիք-Շարլ իշխանին զօրքանակին միջամտութեանը կարելի կըլար զփարիզ ազատել :

Կրնանք ուրեմն հաստատել որ մարաշխտան Մէջի և իր զօրքանակին դիմադրութեան տեւողութիւնը երկարելու համար կարեւոր միջոցներն չի գործադրելուն պատճառաւ : Լուարի զօրքանակին կրած անտանելի աղետից պատասխանատուութեան մէկ մասն ալ իր վրայ կը ծանրանայ :

Սէտան , Մէջ , Օրլէան . 1870ի պատերազմին ժամանակ այս երեք քաղաքներուն կրած մեծամեծ աղետիցը հետ Պազէն մարաշխտան անունն ալ պիտի յիշուի :

Ատեանը՝ լրտեսներուն , հրաղինուց պաշտօնէից և ուտելեաց վերարեւել ալ և այլ ինդրոց քննութիւնը այս պատմութեան մէջ զանց բնել չուզելով՝ այս մասին մանրամասն բացատրութիւններ կը հաղորդէ : որք յետագայ Ընդհանր համարումներու մէջ պիտի տեսնուին :



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԹՕՏՈՒԹԻՒՆ (1)

1870ի պատերազմը՝ սկիզբէն ի վեր վարչական պակասաւոր նախազգուշութեամբ , զօրքանակին սահմանազ լիտյն վրայ սրուելով , և մասնաւոր գլխաւոր հրամանատարին տարակուսանօքը անյաշող վախճան մ՝ ունեցաւ : Համարձակ նախարարձակում մը կրնար պատերազմին պարագաները փոխել , եթէ յաջող ժամանակն ձեռք բերուած ըլլար : Թշնամին մեծ յարձակումը պիտի կրէր , բայց մինչդեռ մենք պիտի յարձակէինք թշնամույն վրայ , պարտաւորեցանք զմեզ անկէ պաշտպանել :

Իրերուն այս փոփոխութեամբը՝ որն որ մեր քաղաքական կայութեան հետ կատարելապէս անհամաձայն էր , եթէ ամեն ինչ վնասուէր , բան

(1) Ընթերցողք կը յիշեն անշուտ որ սոյն ծանուցագրոյս մէջ շատ անգամ խօսք եղաւ անոր յարակից եւ զող մասանց վրայ : Կիրսգազն յիշեալ ընդհանուր համատուութեան ընթերցումէն առաջ հրամայեց որ այդ մասունքն կարդացուին , որոց ընթերցումը հոկտեմբեր 10ի Նիսան ու 11ի Նաոին մէկ մասն զբաղեցուց : Նոյն միջոցին սոյն ծանուցագրոյն ամենամեծ զօրութիւն մը տուող խել մը գրութիւններ կարդացուեցան :

Սոյն գրութեանց մէջ յիշուած են .

1. Պազէն մարաշխտան կառավարութեան և գաղղիական զօրքանակին այլ և այլ գնդապետաց հետ ունեցած հարդրակցութիւնները :

2. Չօրքանակին և Մէջ քաղաքի՞ն ուտելեաց վիճակը :

3. Արչափ ազգամթերք գտնուիլը :

մ'ալ չի պիտի կորսնցընէինք : Մեր ղինուց վիճակն անարատ էր . զօրարանակն ալ թէ և սակաւաթիւ կատարելապէս կազմակերպեալ և քաջութեամբ լի էր . պատերազմական դաշտն շատ տարիներէ ի վեր վարժութեան ենթակայ եղած էր : Ուստի՝ երբ օգոստոս Յին երկրորդ , երրորդ և չորրորդ գունդերն Սարի ետեք տարուելով՝ Պաղէն մարաշխտին հրամանատարութեանը յանձնուեցան , ալ այն ատեն կարելի էր յաղթական յարձակում մը տեղի ունենայ . ասկէ աւելի դեղեցիկ պատեհութիւն չէր կրնար ըլլալ գլխաւոր զօրապետի մը համար :

Արդ՝ գաղղիական զօրաբանակն հետեւեալ օգոստոս 6րդ օրն փոխտնակ յաղթութիւն շահելու մեծ աղէտք մը կրելուն համար , պատասխանատուութեան ամենամեծ մասն Պաղէն մարաշխտին կը պատկանի , քանզի նա պատերազ-

Այս գրութիւններն թէ ընդարձակօրէն և թէ համառօտի սոյն ծանուցագրոյն մէջ յիշուած ըլլալուն համար աւելորդ կը համարինք հոս յիշել : Այս կրկնութիւնն ուրիշ արդիւնք չի պիտի ունենայ եթէ ոչ այնպիսի ջիւթութիւն մը ձգել ընթերցողին մտաջը մէջ , որմէ բարեբաղդաբար զգուշացած ենք սոյն ծանուցագրոյս մէջ մեր մանրամասն պատմութեանց եղանակաւ և շարադասութեամբ : Իսոյց և այնպէս պատեհութիւն պիտի ունենանք զանոնք զարձեւալ բացարեւել , թէ այն ատեն՝ երբ վկաներուն հարցաքննուած ատենը զանոնք վերստին հրատարակելու ստիպուինք , և թէ մեր այս գործոյն չորրորդ հատորը լմնալէն վերջը զանոնք մասնաւոր գլխով մը հրատարակելու ձեռնարկենք ի դիտութիւն ընթերցողաց :

ճական դաշտը չի գտնուելով՝ Ֆրոսար զօրապետն անօգնական թողուց հոն : Այս կացութիւնը խիստ ետքը իմացուեցաւ : Ատենը զայն ամենակատարեալ կերպիւ հաստատեց . բայց , հետեւեալ օրն՝ օգոստոս 6 , հասարակութիւնն այնպէս գիտնալով որ զօրաբանակին գլխաւոր հրամանատարութեան պաշտօնը վարելու կարող միայն Պաղէն մարաշխտն կրնայ ըլլալ , իր թախանձանօքը զանի օգոստոս 12 ին այս բարձր և դժուարին պաշտօնին բարձրացուց :

Պաղէն մարաշխտն իր այս պաշտօնին վրայ կարգուած օրէն մինչև զօրաբանակին անձնատուութեան օրը՝ պարտուց և պատուոյ պահանջումներն կատարեց : Արդէն քննութեան խորհուրդն այս մասին բացասական պատասխան տուած է :

Մարաշխտն պարտաւորութիւններ ունէր կատարելու առ հայրենիս և առ զօրաբանակըն իւր :

Իր հրամանատարութեան բոլոր տևողութեան մէջ երկու կառավարութիւն իրարու յախորդեցին . այս երկու կառավարութեանց նկատմամբ մարաշխտն ի՛նչ վարմունք ունեցաւ : Սէտանի աղէտքէն վերջը և Պաղէն մարաշխտին իր զօրաբանակին վիճակը Մէջ քաղաքին վիճակին հաւասարեցնելէն յետոյ՝ սոյն քաղաքին դիմադրութիւնն երկարելու համար պարազաներուն պահանջանքն զօրծաղբոց : Վերջապէս իր տեղակալներուն և իր զօրքերուն նկատմամբ ի՛նչ վարմունք ունեցաւ . ահա հիմայ այս խնդիրներն պիտի քննենք :

Խնդիր 1. Օգոստոս 16ին ժողովներ 1 է հ. Է. — Կայսրը հասարակութեան թախանձանայք վրայ հրամանատարութիւնը Պաղէն մարաշախտին յանձնելով անոր վերջին հրաման մը տուած էր որ զօրարանակն Շալոն տանի: Թշնամոյն զօրարանակին շատուածութեանը վրայ՝ որն որ մեր զօրաբանակէն խիստ աւելի էր, յանհետրինս կարեւոր էր զօրարանակն ետ տանիլ, որպէս զի կարենայ դրօշակաց ներքե կոչուած զօրականներովն իր զօրարանակը կաղմակերպել:

Կրկնութիւնին աւելորդ համարուող պտրագաններ և մանաւանդ զօրարանակին քիչուորութիւնը պարտաւորած էին դրսէ բոլոր գունդերն սահմանազուլը դրկել, և միայն սպայներով պատերազմ մղել: Յիշեալ գունդերուն միջոյաւ պատերազմական գունդերն ամբողջացնէն աւելի ստիպողական բան մը չկար, վասն զի եթէ այս պայմանն անգամ մը Մէլլի մէջ պաշարուէին, անկարելի կըլլար հասատակերպիւ նոր զօրարանակներ կաղմել: Դէպքերն զստի խիստ աղէկ պացուցին:

Այս կացութիւնը մասնաւորապէս կայսեր ուշադրութիւնը գրաւած էր, և անոր համար օգոստոս 13 և 14րդ օրերն զմարաշնան համոզել ջանաց որ իր նահանջման շարժումը դորձադռէ, և միայն այն ժամանակ զօրարանակը թողուց, երբ նա լեռանց վրայ հասնելով դէպ ի վերախն ոլիտի ուղևորէ:

Իսկ Պաղէն մարաշախտը՝ որ կայսեր տարակուսնօր ևս առաւել կը չլիտթէր, միայն մէկ

փափաք մ'ունէր, և այն էր, կայսեր հրամանատարութեանէն ազատիլ, և այս միակ փափաքովը սկիզբէն ի վեր ամենացաւելի որոշումներ գործադրելու վրայ ոլիտի բլլօր:

Ուստի՝ Պաղէն մարաշախտը՝ որ իր փորձառութեամբ պարտաւոր էր տեսնել թէ իր շուտով ետ քաշուելովը որչափ զօրաւոր շահ մը կար իր առջին, և զօրարանակին ուղևորութիւնը փութոյրնել, օգոստոս 13ին ճամբայ ելնելու տեղ, օգոստոս 14ին կէս օրէն վերջը ճամբայ ելաւ:

Մենն ինչ կը հրամայէր իրեն, որ թշնամոյն ընթացքը խափանելու համար Մէլլի և Մօղէլի կամուրջներն քանդել, և չի քանդելը:

Վերջուպէս փոխանակ Մէլլը լեռանց հետ յարող չորս ճամբաներէն օգուտ քաղելու, բոլոր զօրարանակն վերախնի մեծ ճամբուն վրայ դիզելով՝ անմիջապէս իր ուղևորութիւնը ուշացրնող անբաղատարելի յուզման մը պատճառ եղաւ: Մարաշախտն՝ այս շփոթութեան վրայ՝ փոխանակ զինուորական դիմաւոր վերապահին առաջարկութեանը անսալու, ապրուստ բերող կառքերուն ընթացքը դադրեցուց, և սակայն օգոստոս 16ին իրիկունը ուտեստի սրկատութիւն պատճառելով՝ որ թէպէտ այն ատեն չկար, բայց այս միջոցաւ կրնար ըլլալ, իր ուղևորութիւնն դադրեցրնելու առիթ մը գտաւ:

Օգոստոս 16ին՝ տուտուուն, կայսրը որ կառաւարութեան վերաբերեալ ստիպողական պարագաներու համար զազրիա երթալու հարկաբուած էր, տեսնելով որ զօրարանակն լեռանց

Վերայ խաներ է, և ալ վճռական կերպիւ դէպ ի վերտին ուղևորելու պատրաստուած է, ինքք անկէ յառաջ ճամբայ կերնէ: Անմիջապէս մարաջատան հրաման կընէ որ ուղևորութիւնն դադրի: Թէև այս հրամանն ամեն ինչ կրնար վնասել: Կայսեր մեկնելէն վերջը անկէ ընդունած հրամաններն ալ ևս վատարելու մտտի իր ունեցած դիտարութիւնը արդէն մարին մէջ գոյացած էր: Չնուորական ընդհանուր վերատեսուչն Վօլֆ որ օգոստոս 16 ին առաւօտուն կանուխ մարաջատան հրահանգ ընդունելու դադած էր, կը վկայէ թէ մարաջատան նոյն օրը իսնթ-ա-Մուսոն դործողութիւն մ'ընելու որոշում յայտներ է: Արդէն առջի օրունէն թնդանօթածիկ զօրաց դիվաւոր սղայ մը կերպով մը իմացրէ որ մարաջատան Մէօզէն անցնելու դիտարութիւն չունի:

Արդէն թշնամին առաջին սիւլանքներէն կըցաւ օգոստ քաղել, և յարձակեցաւ մեր վրայ: Բըզնվիկի պատերազմը բացուեցաւ, մենք գըտնուած տեղերնիս կեցանք: Ինթէն և Պրիէյի ճամբաներն ազատ են, մարաջատան հետեւեալ օգոստոս 17րդ օրն ճամբայ ելնելով և առջի օրը պատերազմին չի մասնակցող հինգ բաժին հետեւակազորաց միջոցաւ իր նահանջով ծածկելով կրնար թշնամիէն դէպի առաջ հիւսիստկողմը ուղևորիլ, վասն զի բրուսիական գունդերն միայն հետեւեալ օգոստոս 18րդ օրն կէս օրէն վերջը կը ցան արագ գնացքով Սէն-Ֆրիվա հասնիլ:

Արդէն տեսանք թէ օգոստոս 17 ին զօրաբանակին ուղևորութիւնը դադրեցուցած ըլլալուն նկատմամբ մարաջատան ցուցուցած պատճառ-

ներն արչափ անհիմն էին: Որպէս թէ ուտելիք և ազգամթերք հայթայթելու համար է եղեր, բայց ուտելիք և ազգամթերք չէին պակսեր, և թէև ասանկ կարևոր պատճառ մը եղած ալ ըլլար, դարձեալ ուղևորութիւնը դադրեցընելու հարկ մը չկար:

Մարաջատան իր դիտարութեան խորը կը յայտնէ, երբ օգոստոս 16 ին իրիկունը կայսեր կիմաղինէ որ ինքք վիինէօլ-Լէսսիի գծին վրայ պիտի երթայ հաստատուի, այսինքն՝ ձախ ամիսնց բեյրութուն զտարիւրներուն վրայ:

Անգամ մը իր ուղևորութիւնը դադրեցընել որպէս չէ ետև անհրաժեշտ պարտաւորութիւն մը կը հրահանգէր իրեն զայն կայսեր և պատերազմի պաշտօնէին իմացընել: Հեռագրական թերն իր տրամադրութեան ներքև էր, բայց ստիպան չուզեց անով իր ըրած պատերազմին վտանանը և իր զօրախանակին կաշտութիւնը յայտնել:

Պատերազմէն անմիջապէս վերջը տեղեկագիրն պատրաստելով՝ թղթատարի մը կը յանձնէ զայն որ վերտին պիտի երթար և միայն հետեւեալ օրն պիտի կրհար վերադառնալ, և այսպէս կայսրն օր մը ետքը որոշում մ'ընելու և իր ուղևորութիւնն շարունակելու համար անոր հրաման զրկելու կը ստիպուի:

Հետեւեալ օրն օգոստոս 17, կայսրը լուր մը չտանելով լուր կը խնդրէ, այսպէս գրելով իրեն. «Ճամբարը գրեցէք ինձ որ ես ալ իմ հօս ունեւնայիք վարմունքս կանոնաօրէմ:» Մարաջատան փոխանակ հեռագրական թերով անոր պատաս-

խանելու . այս անգամ ալ նոր թղթատարի մը՝
Մանեան հրամանատարին ձեռամբ երկրորդ տե-
ղեկադիր մը կը դրկէ , և այսպէս կայսրէն ընդու-
նելիք հրամաններն օր մ'ալ ետ կը ձգէ :

Արդեօք Մանեան հրամանատարին տարած
տեղեկագիրը կայսեր ուղածն էր . ամենին ո՛չ .
այլ անոր մէջ նկարագրուած էր Մէջի զորութեան
նակին դիրքը , և այնպիսի մէկ օր մը օգնութեան
պէտք ունենալը օր Մար-Մահօն մարտիտան,
ինչպէս որ Պ. Բուհէր ալ սեպտեմբեր չի քննու-
թեան մասնաժողովին առջև յայտնեց , ժամա-
նակ չունեցաւ . Պաղէն մարտիտան շուտով օգ-
նութեան հասնելու նպատակաւ ճամբայ ելնելէ
Մանեան հրամանատարն յայտնի է որ այս տեղե-
կութիւններն զինքը խրկողէն ընդունեցաւ : Արդ՝
օգոստոս 17ին իրիկունք սոյն հրամանատարին
ճամբայ ելած ասենք՝ մարտիտան եթէ ստու-
գիւ օգնութեան կարօտ ըլլալն քաջ գիտէր ,
պարտաւոր էր աստճով ըլլալ և գիտնալ որ իր
ուղևորութիւնն շարունակելու կարևոր միջոցներն
ընդործակորէն կը վայելէր :

Օգոստոս 18ին իրիկունք կրտսններք որ մա-
րտիտան նախ և առաջ վիճեցէ՛լ-լէստի գծին վը-
րայ քաջուիլ կոտչէ , վերջը այս խիստ համարձակ
եղադ նահանջման վրայ տարակուսելով՝ իր զորու-
բանտին Մօնթօյի հովտին բորձանցը վրայ հաս-
տատել կը խորհի : Օգոստոս 17ին , վկայի մը հաս-
տատութեանը նայելով՝ նոյն օրը դարձեալ վի-
նեցէ՛լ-լէստի երկմալու որոշում կընէ . և ուղևո-
րութիւնը հետևեալ օգոստոս 18ի առտուան կը

թողու , և նոյն միջոցին թշնամեոյն մօտեցած ըլ-
լալը փանրօպէր մարտիտանին իմացընելով՝ կը
հրամայէ անոր որ եթէ խիստ սասակապէս ըս-
տիպուած է , երթալ ետևի դիրքերը հաստատ-
ուելու համար դէպ ի ալ կողմը դառնայ իր գուն-
դերովը :

Մարտիտան ջանաց հաստատել որ օգոստոս
18ին պատերազմ մ'ընել կուղէր , որպէս զի եթէ
ժաջողի , կարող ըլլայ դէպ ի ներքեւն ուղևորիլ :

Այլ սակայն մարտիտան տուած վերոյի-
շեալ հրամանն յայտնի կը ցուցնէ թէ ինքը որ-
չափ հնաւի էր այս խորհրդէն : Եթէ ուղած ըլլար
դէպ ի հիւսիսակողմը իր ուղևորութիւնն շարու-
նակել , և չէ թէ առաջին պատերազմէ մը ետև
Սէն-Քանթէնի բերդին առջին քաջուիլ , իր լա-
ւագոյն գունդերն իր զորաբանակին ալ կողմը
դնելով՝ անոր քոյն ալ իր գեղեցիկ ձիաւորներն
ու ընդհանուր պահեստի թնդանօթածիզներն
պահապան կը կարգէր : մինչդեռ ասոնք ամէնքն
ալ պատերազմի տեսն անգործ կեցած էին , և
ասոնք պիտի ըլլային պատերազմին վիճակը որո-
շողը : Օգոստոս 18ին իրիկունք տուած հրաման-
ներն , որք առաջտուն մանրամասնաբար յայտ-
նուեցան , յայտնի կը ցուցնեն թէ որչափ քիչ
հոգ ունէր իր ուղևորութիւնը շարունակելու մա-
տին : Եթէ կրկին յարձակիլ ուղած ըլլար , պէտք
էր որ ջանար պահելու ան գիրքերն որք Սէն-
Քանթէնի դղևակն լերանց կը յարէին : Մարտ-
իտան՝ փոխանակ այսպէս ընելու , երբէք Սոլ-
նի անտառները երթալ հաստատուելու նպատակ

կառ բան մը չի տրամադրեց, և ասով ինքզինքը արդեւրանի մը մէջ դրաւ:

Իայց և այնպէս օգոստոս 19ին հետեւեալ գրեց առ կայսր:

«Կը խորհիմ միշտ դէպ ի հիւսիսակողմը ուղեւորիլ»:

Այս հաստատութեան վրայ՝ կայսրն կը տարտաւորի խորհիլ որ Պաղէն մարաշխտան դեռ ուղեւորութեան ձեռնարկած չէ, և Մաք-Մահօն մարաշխտան ալ արդէն ճամբայ ելած ըլլալով օգոստոս 22ին անոր օգնութիւն ընելու կերթայ:

Ոգոստոս 20ին, Պաղէն մարաշխտան Մաք-Մահօն մարաշխտանի կիսմայրնէ որ եթէ իր ընելիք ուղեւորութեամբը զօրաբանակին վնաս մը չի հասնի, իր ուղեւորութիւնն կանխաւ իրեն կազմարարէ, և այսպիսի կտրուոր մէկ ազդարարութիւն մը կայսրէնու պատերազմի պաշտօնէէն ծածկելով՝ երկուքն ալ այնպէս կապահովընէ որ իրենցմէ ընդունած հրամաններուն հետեւելու պատրաստ է:

Վերջապէս՝ օգոստոս 26ին, երբ ապահով կըլլայ որ Մաք-Մահօն մարաշխտան իր ուղեւորութիւնն սկսած է, և երբ իր տեղակալներէն՝ յայտնի է թէ ինչ կերպիւ, կիսմայ որ իր գաղտնի դիտարարութիւններն երևան ելած են, իր ինչ մտքի ծառայելն կը յայտնէ՝ պատերազմի պաշտօնէին իմացընելով որ անկարելի է թշնամայն գունդերն բանարարել, և այսպէս իր անգործութիւնը սուտ պատճառաւ մը կ'արդարացընէ. այլ սակայն հետեւեալ օրն՝ օգոստոս 27, Թիանպիլէն դէր կերթայ առ Մաք-Մահօն մարա-

շխտան, որոյ մէջ հետեւեալն գրուած էր. «Մեք պաշարուած ենք, բայց տկար կերպիւ, ուղած ատեննիս կրնանք թշնամայն գունդերն բռնարարել»:

Այսպիսի պարագաներու նկատմամբ՝ ատեանը կեղբակացընէ որ Պաղէն մարաշխտան չէ թէ միայն իր առ կայսր ունեցած պարտաւորութիւնները կատարած չէ, այլ զանի խտրած ալ է, և իր սուտ տեղեկութիւններովը դէպ ի Մօնմէտի ուղեւորիլ որոշելով՝ որմէ Սէտանի աղէտքն յառաջ եկաւ, Սէտանի աղէտից պատասխանատուութեան մեծ մասն ալ իր վրայ հրաւիրած է:

Թեոփիլ 2. Սեպտեմբեր 12 օրն հոկտեմբեր 29 եւ 20 օրն: Սէտանի աղէտից լուրը սեպտեմբերի առաջին օրերն Պաղէն մարաշխտան հասաւ: Ենայն միջոցին՝ մարաշխտան որ իր բանակատեղիէն դուրս ելնելու համար Մաք-Մահօն մարաշխտանի դաւուն սպասելն կարևոր դատած էր, Մէջը թողուն իր անկարելի կը նկատէ: Հետեւաբար՝ ալ այնուհետեւ իր զօրաբանակին կացութիւնը Մէջի կացութենէն կախում կունենայ:

Փանի մ'օր վերջը մարաշխտան Փարիզու դէպքերն իմացաւ, և Աղղային Պաշտպան կառավարութեան առաջին յայտարարութիւններն ընդունեցաւ:

Տարապայման պատերազմ մը որոշուած է. Փարիզ կրնայ երեք ամիս դիմադրել: Հոկտեմբեր 16ին Աղղային ժողով մը պիտի ընտրուի, և հայրենեաց ձայնը լսելի պիտի ընէ: Այս էր Բէնիթիէի բերած լուրերուն համառօտութիւնը: Մարաշխտան իրոց այս նոր կարգադրութիւնն կըն-

բունի : Սեպտեմբեր 12ին՝ Սէտանի և Փարիզու
դէպքերն իր զօրապետներուն իմացընելով՝ վեր-
ջացուց խօսքն ըսելով որ այսուհետև իրեն կը
մնայ միայն կառավարութեան հրամանացը սպա-
սել : « Ո՛ր կառավարութեան վրայ կը խօսէիք »
Հարցուեցաւ մարտիտիտին — « Ազգային Պաշտ-
ոյան կառավարութեան վրայ » , պատասխա-
նեց նա :

Սեպտեմբեր 16ին՝ Ռուսիոյ կառավարու-
թեան մէկ պաշտօնական յայտարարութիւնն կը
յայտնէր որ զերմանական կառավարութիւնն
խաղաղութիւնը կայտեր , կայտուհոյն կամ Պա-
զէն մարաթիտիտին հետ միայն պիտի կրնայ դաշ-
նագրել : Ատենը չի կրցաւ սուղել թէ այս
յայտարարութիւնն երբ հասաւ մարաթիտիտին
ձեռքը , բայց թշնամին մեծ հասմը կըսպասէր
զայն իրեն իմացընելովը , և խիստ մեծ գիւրու-
թեամբ իրեն կը հասցընէր սոյն յայտարարու-
թիւնը : որպէս զի իր հրատարակութենէն խիստ
չատ վերջը կարենայ Մէյ հասնիլ : Այս բաժնիտ
սա իրողութեամբն ալ կրնայ հաստատուիլ որ
սեպտեմբեր 11ին արդէն յարաբերութիւնք ըս-
կըսած էին Ֆրէտէրիք-Շարլ իշխանին և մարա-
թիտիտին մէջ տեղ : Սեպտեմբեր 16էն վերջը յիշ-
եալ յայտարարութեան ազդեցութիւնը զդալի
եղաւ : Նոյն օրը զլիսաւոր հրամանատարն որ
պաշտօնագէտ նոր կառավարութեան կազմու-
թիւնը արձանագրեց , Ֆրէտէրիք-Շարլ իշխանէն
կը խնդրէ որ ալխարհին կողմութեան վրայ հաս-
նալու ճշմարիտ տեղեկութիւններ հաղորդէ իրեն
նոյն օրէն սկսեալ՝ կամ քիչ մը ետքը՝ մինչև պա-

շարժան վերջը տեւելու պայմանաւ անձնական և
գաղտնի յարաբերութիւններ կը բացուին երկու
զլիսաւոր զօրապետաց մէջ , անհերքելի և ստոյգ
յարաբերութիւններ : որոց հետքն անգամ չի
կրցանք գտնել :

Սեպտեմբեր 23ին , ի տես կուգայ Պ. Ռէնիէ .
Հասիենկէն կուղեորի նա . կը տեսնէ զՊ. տը
Պիամարք . կիմացընէ Պազէն մարաթիտիտին որ
զերմանական կառավարութիւնը կը փոփոգի
կայտրութիւնը վերաբն հաստատել , և Ազգային
Պաշտպան կառավարութենէն դուրս՝ կանոնաւոր
կառավարութիւն մը կարգել , որոյ հետ կարենայ
հաշտութիւնը դաշնագրել : Ռէնիէ կուղէ իմանալ
թէ Մէյի զօրաբանակն այս նոր կառավարու-
թեան յարած է , թէ տակաւին աղտու է , և եթէ
աղտու է , նորա զլիսաւոր հրամանատարն կը հա-
հաճի՞ Պ. տը Պիամարքի բնդունած կառավարու-
թեան կազմութիւնն իրականացընելու համարանոր
հետ ավակցիլ : Մարաթիտին իրեն յայտնուած
այս փայլուն տեսութեանց վրայ չէ թէ միայն
յանուն իւր և յանուն իր տեղակալներուն Ռէնիէի
առաջարկութեանց անկասկած կը յարի , այլ և
տարօրինակ կերպիւ իր աւտելեաց որքան ժամա-
նակ տեւելու գաղտնիքն անոր կը հաղորդէ : Մա-
րաթիտիտին խորհրդայն վրայ՝ Պուրպաքի զօրա-
պետն ալ կայտուհոյն կերթայ :

Ռէնիէ կը մեկնի թշնամու ոյն սխալ տեղեկութիւններ
կը հաղորդուին : Մարաթիտին ի զուր կը ջանայ
Սթիէլ զօրապետին գրելով և պատերազմական
պատուոց հետ անձնատուր ըլլալու համար առա-

Ֆաղրութիւններ ընելով միշտ սխալ տեղեկութիւններն իրել:

Բայց Ռէնիէ այլ ևս լուր չի տար, և հոկտեմբեր 2էն վերջը իր լուսթեամբը կ'իմացընէ որ յարաբերութիւններն անյալող եղած են:

Այսպէս՝ Պաղէն մարտիտան առաջին անգամ իր քովը եկող այնպիսի մէկու մը հետ՝ որուն պաշտօնն որ և է արտօնագրով մը վաւերացած չէ, և թէնամուսն հետ միտքան ըլլալն ալ յայտնի է, նոր կառավարութեան տուպանը մասին քաղաքական խորամանկութեան մէջ կը մտնէ, կառավարութիւն մը՝ որուն հաստատութիւնը արդէն իր զօրաբանակին ալ իմացուցած է: Սեպտեմբեր 23 էն վե՛ր, երբ իր զօրաբանակն տակաւին կրնար պատերազմիլ, և դեռ ուտելիք և ռազմամթերք ունէր, և սեպտեմբեր 1 էն ի վեր պաշարման առաջին առնելու համար բնաւ ֆանաղրութիւն մը չըբաւ, անձնատուութեան կ'ընդունի, և կանոնաւոր կառավարութեան մը հաստատութեան համար բանակցութեան կը մտնէ, թէ և այս անձնատուութիւնն թէնամուսն գործելու ամեն աղատութիւնը չնորհելով միւս գաղղիական զօրաբանակներն ալ ընկճելու, և նոր կառավարութեան տուպանմբը քաղաքական պատերազմ մը յարուցանելու պատճառ և յառաջացուցիլ եղաւ:

Բայց և այնպէս մարտիտան պարտաւորութիւնն յայտնի էր, այսինքն՝ պարտաւոր էր պատերազմիլ, ի՞թէ պատերազմական դաշտն երեսուր անկարելիութեան մէջ կը գտնուէր, գոնէ Մէ-

ջի բուրբոթիքը գործելու, և անդադար յարձակումներով պաշարող զօրաբանակն քիչ քիչ կանգարելու էր: Այլ սակայն սեպտեմբեր ամիսն ամբողջ ջաւալի անգործութեամբ մ'անցուց, որ ատեն ուտելիքն սիսաւ սպառիլ, և զանոնք քիչ մը ատեն դիմացընելու համար բնաւ միջոց մը չի գործադրեց, և քանզի միտքը դրած էր երբէք Մէջէն չի մեկնիլ, քաջ գիտէր որ ուտելեաց խընդիլը ամեն բանի կը յաղթէ, որովհետև անոնց սպառման հետևութիւնը անձնատուութիւնը պիտի ըլլայ:

Պաղէն մարտիտան ինչո՞ւ համար փոխանակ թէնամուսն թելադրութեանցը տկանը դնելու, Ազգային Պաշտպան կառավարութեան հետ յարաբերութեան չի մտաւ, որովհետև իր թէնամուսն հետ ունենալիք յարաբերութիւններէն յառաջ եկած անձնական շահը այս մասին արդէրք եղաւ իրեն: Պաշարման առաջին օրէն մինչև անձնատուութեան առջի օրը պատերազմի պաշտօնէին զրկած երկու գրութեանց համար չենք կրնար ըսել թէ՛ ունայն ճիգեր էին: Նոյն վայրկենին (սեպտեմբեր 25) երբ իր ուտելեաց գաղանիքը Պ. Ռէնիէի հաղորդեց, իր դիմադրութեան որչափ ատեն տևելուն վրայ պատերազմի պաշտօնէին բան մը չի գրեց, և իր առաջադրութիւններն ալ անոր չիմացուց: Վերջապէս, մտնալով իր առհայրենիս ունեցած պարտաւորութիւններն չի խորհեցաւ պատուիրել Պաշտպանի զօրապետին որ երբ իր կայսրութեան քով վարած պաշտօնն անյալող վախճան մ'ունենայ, իր զօրաբանակին վը-

րայօք քաղաքական կառավարութեան շուրեր հաղորդէ :

Մնաց որ Գաղղիոյ հետ թղթակցելու համար ալ պատեհութիւններ չէին պակտեր : Քաղքէն շատ մարդիկ կուգային կերթային . սպայից լըրտեսներն ամեն օր դուրս կենէին , և պաշարման զօրաբանակին դունդերէն դուրս ինչ որ կր պատահէր , կուգային կիմացընէին . բայց Գաղղիոյ ներքնոյն համար երթալ լուր խնդրելու հրաման երբէք չէին ընդուներ : Օղտպարիկներն հաղաբաւոր նամակներ կը բերէին , բայց անոնց մէջ մարաշխտին մէկ նամակն չէր գտնուէր առ պատերազմի պաշտօնեայն ուղղեալ : Իրաց այս վիճակին մէջ իրաւունք ունինք հետեւընելու որ եթէ մարաշխտան պատերազմի պաշտօնէին հետ չի թղթակցեցաւ , պատճառն այն էր որ ինքը չուղեց :

Մինչդեռ մարաշխտան Աղգային Պաշտպան կառավարութեան կոտակցութենէն հեռանալ կուղէր , սա Մէցի զօրաբանակին գլխաւոր հրամանատարին հետ հաղորդակցելու վորձ կը տիրօձէր , և մինչդեռ նորա կողմանէ պաշարեալ քաղաքները՝ մանաւանդ Սթրազպուրիկ , Պէլֆօր և Պիչ անդադար լուրեր կը ըրկուէր , Մէցի Պաղէն մարաշխտին ըսածին նայելով ընաւ լուր մը չէր հասներ , և առեսնը հաստատած է այսօր որ թիօն վիլէն եկող լրտես մը՝ Պիչի անտուն սեպտեմբերի վերջին օրերը Մէցի գալով՝ մարաշխտին լուր բերած է թէ թիօն վիլ ու իօն վիլ լրտես շատ պաշար եղած է :

Մարաշխտան՝ Աղգային Պաշտպան կառավարութեան հետ հաղորդակցութեան չի մտնելով , այն ատեն որ կրնար , իր առ Գաղղիա ունեցած բոլոր պարտաւորութիւններն զանց ըրած է : Իր զօրաբանակն աղգին միակ յոյսն էր . անոր կանգուն եղած ժամանակը բան մը կորսուած չէր . ամէն օր կը յուսային որ մարաշխտան թշնամոյն զօրաբանակն աւերելով՝ Գաղղիա մտնէ զայն պաշտպանելու համար քանզի նոր զօրաբանակներն սպայներէ զուրկ ըլլալուն անկարող էին զայն պաշտպանելու : Այս կացութեան մէջ , եթէ մարաշխտան՝ երկրին պաշտպանութեանը ձեռնարկած կառավարութեան հետ թէ վօսթի կողմերը և թէ ուրիշ տեղ գործողութիւն մ'ընելու համար անոր հետ հաղորդակցութեան մտնէր , ո՞վ կրնայ ըսել թէ ի՞նչ արդիւնք պիտի յառաջ գար :

Այս վերջին կէտին կառավարութեան կազմութեան խնդիրն ի՞նչ կը պահանջէր : Մենք Աղլանն ու կարելի է լօրէնն ալ կորսնցընելու ենթակայ եղած էինք , և ահա այն միջոցին էր որ գլխաւոր զօրապետն ալ անդարձ մնալով թըշնամոյն հետ կը հաղորդակցէր : Արդէն կայսրուհին ալ իմացած էր զայս , երբ Պարպաքի զօրապետին իրեն հետ տեսակցելու հրաման տուած ատեն կը խրատէր զանի որ աղգային անկախութեան համար երթայ թուր և իր սուրը նուիրէ : Եթէ կայսրուհին՝ որ կրնար իր վշտացը վախճան տալ , այսպիսի պարտաւորութիւն մը կը դնէ , աւելի պարտաւոր էր մարաշխտան իր փառասեր հայրեններն բոլորովին մէկդի թողուլ , որոնցմով

իր հայրենեաց թշուառութեան ատեն միայն առ-
թի մը կըսպասէր իր բաղդէն աւելի ճոխացընե-
լու համար :

Կայսրուհին՝ այսպիսի խրատ մը տալով կրնայ
իմացուիլ որ Բէնիէի խորամանկութիւնն իմու-
նալէն վերջը ի՛նչ ոգուով մերժած էր այնպիսի
պայմանագրութիւն մը որուն առաջին յօդուածն
երկրին մահառիթ քայքայմանը պատճառ պի-
տի ըլլար :

Եթէ մարտիտան Բէնիէի լուծեան վրայ
այնպիսի հաղորդակցութեանց ձեռնարկեց որոց
անյաշուղ վախճանն կանխառ գիտէր, ասի իր հա-
ւատարմութեան առաւելութենէն յառաջ ե-
կած չէր :

Ռէյմոնի լրագրաց յօդուածն այնպէս կկմա-
ցընէր որ իր քաղաքական բազդուորութիւնը
թշնամուն յայտնած դիտաւորութեանց յաջո-
ղութենէն կախում ունի : Ահա հոս պէտք է վերն-
տուել իր այս վարմունքին շարժառիթը և ոչ թէ
այնպիսի գործողութեան մը շահերուն մէջ զոր
չէր ուղած կատարել, և հիմա ալ իր փառասի-
րութեան անձնահաճ դիտումներովն այդ գոր-
ծողութեան ձեռնհաս ըլլալ կը ջանայ :

Պարտաւորութիւնն Մէջի ինքնուրուի : — Երբ Պա-
ղէն մարտիտան Մէն-Բրիվայի պատերազմէն
վերջը իր զօրաբանակը Մէջի բանակաւորին բե-
րաւ, սոյն քաղքին պաշտպանութեան եղանակն
բարձրովն այլայլեց : Մէջի մէջ թողած պաշար-
ներն՝ սոյն քաղքին պահանջածին չտի երկար
դիմադրութեան մը բաւական ըլլալէ շատ հեռի

էին : Զօրաբանակին վերադարձն այս վիճակը
ըստ ամենայնի ծանրացուց, բայց և այնպէս մա-
րտիտան իր բանակատեղոյն մօտերը գտնուած
պաշարներն քաղաքը հաւաքելու, և այնպէս իր
զօրաբանակին կերած ուտելեաց պակասը լրացը-
նելու համար բնաւ միջոց մը չի գործադրեց :

Եթէ Սէտանի աղէտքէն վերջը անկարելի
դատեց Մէջէն մեկնիլն որն որ իր զօրաբանակին
ներկայութեամբը անուաճելի եղած էր, ամեն
ինդիր ուտելեաց վրայ էր : Սակայն տե-
սանք թէ պաշարներու հայթայթման մասին ի՛նչ
անհոգութիւն տեղի ունեցաւ, և ասոր համար
Մէջի զլլաւոր հրտմանատարն ի՛նչ պատասխա-
նատուութիւն հրահրեց իր վրայ, այս միջոցները՝
մարտիտանի առաջին դրաղմունքը պիտի ըլլար
նոր պաշար հաւաքել, կամ դռնէ անոնց տեսողու-
թիւնը երկարելու միջոցներ գործադրել, քաղա-
քին և զօրաբանակին ուտելիքն իրար խառնել :
և ընդհանուր բաժին տալու հրաման ընելով, Սա-
րայիտան՝ վտխանակ այսպէս ընելու, միշտ թը-
նամոյն հետ միարանած զօրաբանակին իր ամբող-
ջութեամբը Մէջի մէջ պահելով՝ սոյն գուրս ել-
նելը կը հրամայէին ամեն քաղաքական բերմունք-
ներ, իր ուտելիքը սպառեց միշտ այնպէս կար-
ծելով որ իր հաղորդակցութիւններն պիտի յաջո-
ղին, չէ թէ միայն ղինուորական համբարանոց-
ներն չի բարեկարգեց, սյլ և կուտախորութեան
և կամ մասնաւոր անձանց ձեռք ուտելիք վա-
ճառելով՝ իր զօրաբանակին պիտոյլը և մանա-
ւանդ իր ձիերը կերակրելու համար զորս վերջէն

անօթութենէ մնացնելու և կամ թշնամոյն յանձնելու պատճառ եղաւ, քաղքին ցորենին մէկ մեծ մասն ալ սպառեց: Այս կերպով սպառուած մասնաւոր պահետի ցորենին հացին քանակութիւնը Մէջի զօրաբանակին և ժողովրդեան համար քսանէն աւելի օրուան ուտելիք կը հայթայթէր:

Մարաշխտին վարմունքը վաղածաման անձնատուութեան մը դատապարտեց զՄէջ, որուն հրամանատարութիւնը ֆօֆինիէր զօրապետին յանձնուած էր: Այս զօրապետը՝ որ վերջին օրերն, թէև ժամանակն ալ անցած էր, մարաշխտին հրամաններուն դէմ բողոքեց, պատեհ ժամանակն լուռ կեցաւ: Պաշարներու պաշտպանութեան խորհրդոյն ու անոնց հսկողութեան մասնաժողովը՝ որ յիշեալ զօրապետին նման կրօնային իրենց ձայնը լսելի ընել, հակառակ 1863-ի օրինադրութեան բացորոշ տրամադրութեանցը՝ համբարանոցներուն պարտպ եղած տոնն կարգուեցան, այսինքն այն ատեն՝ երբ պաշար հաւաքելն ու դիմադրութիւնը երկարելը անկարելի դատուած էր: Օրինաց հակառակ եղած այսպիսի դործողութեան մը մէջ՝ որուն գործադրութիւնը մարաշխտին ձեռամբը տեղի ունենալու էր, ուրիշ բան չի տեսնուիր, բայց եթէ չիթիւն գանգատներ յարուցանելու պատճառ. բլլալիք կացութենէ մը որ և է կերպիւ ալձակուելու փայթ մը:

Զօրաբանակին և քաղաքացեաց ուտելեաց տեղութիւնը՝ 258-000 բաժնի համար, կրնար ու-

թիշ կերպի վերածուիլ, որն որ չեղաւ: Եթէ մարաշխտն իր պարտաւորութիւնը կատարած բլլալու տեղիքն է՝ թէ մինչև հոկտեմբեր 28 կը դիմանար, այլ մինչև յունվար 7:

Երբ Լուարի զօրաբանակին համար եղած ջանադրութիւններն և անոնց ամենէն աւելի ազդու կերպիւ արգատաւոր եղած ժամանակներն մտքերնիս բերննք, իրաւունք կունենանք եզրակացնելու որ մարաշխտին ուտելեաց խնդրոյն մասին ըրած անհոգութիւնը իր բոլոր ջանադրութիւններն մահառիթ կերպիւ ի դերու պիտի հանէր: Եթէ մարաշխտն՝ իր բանակատեղւոյն չորջակայքը գտնուած ուտելիքներն հաւաքելէն վերջը սեպտեմբեր 1-ին ճամբայ ելած բլլար, Մէջ կրնար պատերազմէն վերջն ալ իր դիմադրութիւնը շարունակել: Եւ եթէ այսպէս ըրած բլլար, Լօրէնը պահելու համար Պ. Թիէրի բրած հայրենասէր ջանադրութիւններն յաջողութեամբ կը պահուէին:

Պարտաւորութիւնն: — Կը մնայ հիմայ մեղքնեղ թէ մարաշխտն իր առ տեղակալս և առ զօրականս իւր ունեցած պարտաւորութիւններն կատարած է:

Ինչ կը պարտաւորի գլխաւոր զօրապետ մը իր տեղակալներուն: Ճամբատութիւն՝ երբ անոնց հետ կը խորհրդակցի, օգնութիւն՝ երբ անոնք կը պատերազմին, և օրինաւորութիւն՝ երբ հրաման մը կուտայ:

Պաղէն մարաշխտն ճամբատութիւնը բոլորովին իր տեղակալներէն ձած կեց, նաև այն ատեն

ալ, երբ հրամանատարութեան պարտաւորու-
թիւններէ դուրս եղող օտարոտի օրինազանցու-
ցութեամբ մը իր գործադրութեանց պատասխա-
նատուութիւնը դունդերու հրամանատարաց վրայ
ծանրացընել կը ջանար, գործադրութիւններ՝
զորս օրէնքն իր վրայ պարտք դրած էր անձամբ
կատարելու, երբ խորհրդականներուն կարծիքն
ընդունի ու նկատը ջրուի :

Օգոստոս 26ին, կրխօնի խորհրդոյն մէջ՝ մա-
րաջախտն Մաք-Մահօն մարաջախտին ուղևորու-
թիւնը չի յայտներ, և կըսէ թէ՛ զորաբանակն
միայն մէկ պատերազմի մը համար ազմամթերք
ունի, և այսպէս իր լուսութեամբը այս օտարոտի
հաստատութիւնը աղագոյնցանելու կարող կըլլայ :

Հոկտեմբեր 10ին՝ երբ խորհրդականաց դի-
տաւորութիւններն հաստատապէս զորաբանակին
բաղդը պիտի որոշէին, մարաջախտն իր միջտէ-
րիք-ճարլ իշխանին հետ բրած բանակցութիւն-
ներն չի յայտներ, ո՛չ ալ Քէնիէի հետ բրած տե-
սութիւնը, և Պարպաքի զորապետին պաշտօնը,
և ոչ իսկ իր ձեռնարկած յարաբերութեանց ան-
յաջող վախճանը :

Հոկտեմբեր 9ին՝ մարաջախտն կը ներքէր Պօպի-
զորապետին որ խորհրդոյն մէջ՝ Գաղղիոյ վիճակը
իրը յուսահատական նկարագրէ, որուն սուտ
ըլլալը ինքն ալ գիտէր, յիշեալ զորապետին բե-
րած ու Պաղէն մարաջախտին յանձնած լրագիր-
գիրներն կրնային Գաղղիոյ վիճակին վրայօք
գունդերու հրամանատարաց ստոյգ տեղեկու-

թիւններ տալ : Սակայն մարաջախտն այդ լրա-
գիրներն անոնց չի տուա :

Մարաջախտն՝ իրաց այլ և այլ կացութեանց
վրայօք իր գունդերու հրամանատարաց կարծիքը
խնդրած ատեն ամենակարևոր պարագաներն
զանց բնելով, և այսպէս այնպիսի դիտաւորու-
թիւններ յառաջ բերելով՝ որոնց ճշմարիտ ըլլալն
եթէ իր տեղակալներն դիտնային, անմիջապէս
միտքերնին կը փոխէին, մարաջախտն՝ որ հոկ-
տեմբեր 4ին անոնց գրեց թէ՛ « Գլխաւոր զորա-
պետի մը պարտաւորութիւնն է այսպիսի պարա-
դաներու մէջ իր հրամանատարութեան տակ
զանուած գունդերու հրամանատարներէն բան մը
չի ծածկել », և այս խօսքովը թէ՛ և ամեն ինչ կը
վտաճէր անոնց, այլ սակայն զանոնք խարելու
նպատակաւ, կը հաստատուի թէ՛ իր անոնց նկատ-
մամբ ունեցած պարտաւորութիւններն զանց
բրած է :

Պաղէն մարաջախտն պաշտպանեց իր տեղա-
կալներն, երբ անոնք թշնամւոյն հետ կը պա-
տերազմէին :

Արդէն տեսանք թէ՛ օգոստոս 6ին Պրօսար
զորապետին գունդերն իր հրամանատարութեան
տակ զանուած տաննէին՝ յիշեալ զորապետին ի՛նչ
օգնութիւն բրաւ :

Տեսանք թէ՛ օգոստոս 18ին Գանրօպէր մա-
րաջախտն իր բրած մէկ պատերազմին ժամանակ
իր զօրաց սակաւութեան պատճառաւ յաղթուե-
լու վրայ եղած ատեն՝ Պաղէն մարաջախտէն ստի-
պողական և կրկնակի կերպով օգնութիւն խնդ-

րելուն վրայ իր ձայնն ի՛նչպէս անլսելի եղաւ :
Տեսանք թէ մարաշխտան օգոստոս 26 և 31ին
Մաք-Մահօն մարաշխտանին Մօզէլի ձախ ավանց
վրայ գալու առենք , իր զօրաբանակը ի՛նչպէս
անոր աջ ավանցը վրայ տարաւ , և այսպէս կա-
տարուած պատերազմին բոլոր ծանրութիւնը
յիշեալ մարաշխտան վրայ թողուց :

Մարաշխտան վտանգաւոր պարագաներու
մէջ ի՛նչպէս կը հարողդէր իր հրամաններն : Ատի-
հաստատելու համար բաւական է յիշել սեպտեմ-
բեր 1ին առաւօտուն դուռըներու հրամանատա-
րաց տուած այն խորհրդական հրամանն , որով
որ և է որոշում մ՛ընելու հողը իրենց կը յանձնէր
կարծելով թէ ալ անոնց հետեանաց պատասխա-
նատուութիւնը իր վրայ չի ծանրանար :

Կայսերութեան անկման վրայ՝ եթէ զօրաբա-
նակի գլխաւորաց մէջ անձնական զգացումներ
յառաջ գալով իրենք ալ բնականաբար կայսեր
յարէին , և իրաց նոր կարգադրութեան հակա-
ռակելով զաւ յայտնէին , ամենևին զարմանքնիս
չի պիտի շարժէր :

Այլ սակայն այդպիսի իրողութիւն մը տեղի
չունեցաւ , և ամենքն ալ զինուորական պարտա-
ւորութեանց հաւատարիմ մնացին : Ի՛նչ պատ-
ճառաւ հարկ եղաւ որ իրենց գլխաւորն՝ որուն
պարտաւորութիւնն էր ի հարկին անոնց միտքը
քաղաքական իրաց վրայ խորհելէ զդուշադրնել ,
ջանաց ընդհակառակն զանոնք այնպիսի ճամբու-
մը մէջ վարել որն որ իր խօսքերուն նայելով իր

զօրաբանակին փրկութեան միակ ճամբան պի-
տի ըլլար :

Մարաշխտան թէև քանի մ՛անդամ իր տե-
ղակալներուն վրայօք գանդատներ ըրաւ , բայց
միշտ անոնց վրայ ժիր և անձնուէր հպատակու-
թիւն մը տեսնուած է : Ամենքն իրենց զինուորա-
կան պարտուց համեմատ հնազանդութեան օրին-
ակ եղան , իսկ մարաշխտան ասոր փոխարէն ջա-
նաց ամեն պատասխանատուութիւն անոնց վրայ
բեւեռուորել , ինչպէս որ իրենն ալ այնպէս
վկայեցին :

Պարսկական զօրքանակները : — Գլխաւոր
զօրապետ մը կը պարտաւորի անկասկած իր զօրաց
արիւնը թափել , երբ հայրենեաց փրկութիւնը
դայն կը պահանջէ : Բայց այսպիսի պարագայի մը
մէջ որչափ որ պարտաւոր է սուտ մարդկութեան
ձայնին բացարձակապէս չանտալ , այնչափ ալ
պարտաւոր է նոցա կեանքը խնայել , երբ ցաւալի
զոհողութիւն մը անօգուտ պիտի ըլլայ :

Մէջի զօրաբանակին տասնըմէկ հազար զի-
նուորներն Գերմանիոյ մէջ հիւանդութենէ և
թշուառութենէ մեռած են : Աւելի աղէկ չէ՞ր
ըլլար եթէ այդ զօրքերն զօրաբանակին ելքն ա-
պահովելու համար մեռնէին , որ մահն աւելի օ-
րինաւոր և աւելի փառաւոր կըլլար :

Ընդհակառակն՝ օգոստոս 18ին Մէջի բա-
նակատեղին մտնելու որոշում ըրած առեն ,
ի՛նչու համար այս որոշման գործադրութիւնը
հետեւեալ օրուան ձգելով Մօնթիոյ հովտին բար-
ձանը վրայ օր մ՛աւելի կենալու համար տաս-
ներկու հազար մարդ զոհեց :

Կլիսաւոր զօրագետ մը իր զօրաց պատուոյ պաշտպանն է : Եթէ փառաւոր զինագրութիւն մը անոր մասնակից եղողներուն վրայ փառաց լոյսեր կարձակէ, զօրագետը կը պարտաւորի միշտ յիշել որ իր անձնական տկարութիւնը կրնայ օր մը պատմութեան անիրաւութիւններն իր զօրքերուն դէմ արձակել : Զօրաբանակն մինչև սեպտեմբեր 1 ջրալուծեամբ պատերազմելով՝ քառասուն հազար մարդ կորսնցրնելէն վերջը՝ յիշեալ միջոցէն մինչև անձնատուութեան օրը ամենատխտուր անգործութեան մը մէջ մնալն իրեն համար կրկնակի ցուպի կղաւ : Լաւագոյն բարդ մը սրտուած էր այնպիսի զօրաբանակի մը՝ որ երբէք ոչ իր ջանքերն խնայեց, և ոչ ալ իր արխնը :

Զօրաբանակի պատիւը գրօշակաց վրայ կը յանդի : Զօրագետի մը պարտաւորութիւնն է, եթէ զինուոց բարդը անյաջող երթայ, զանոնք նուազ փիճակ մ'ունենալէ ազատ պահել : Պաղէն մարաշլախտն այս պարտաւորութիւնը կատարեց : Պատմութիւնը պիտի ըսէ թէ՛ երբ կրնար իր զօրաբանակին գրօշակներն եղծել, զանոնք թըշնամոյն յանձնեց :

Երկարատև պատերազմէ մը ետև, երբ թըշնամին զէնքերուն տէր ըլլալով յաղթութիւնը չահի, յաղթեալներուն պատիւը չարատաւօրիք : Իսոյց երկար ատեն անգործ մնալէն վերջը՝ անձնատուր ըլլալ և զէնքերը թշնամոյն ձեռքը յանձնելէն աւելի դառն վիճակ մը կրնայ ըլլալ զօրաբանակի մը համար : Պաղէն մարաշլախտն երբ ժամանակ ունէր զէնքերն եղծելու, պէտք էր

գոնէ այս վերջին նուազութիւնը իր զօրքերէն խնայել իրենց հրամայելով որ զանոնք ջրալուծեն : Մնացոր պարտաւոր չէ՛ր խորհիլ որ թշնամին այն զէնքերն առնելով՝ ուրիշ դադրական զօրաբանակներու դէմ պիտի գործածէր :

Զգացում մը կայ որ ամենատխտուր փիճակներու դառնութիւնը կը քաղցրացընէ, և այն է՝ գլխաւոր զօրագետի մը իր զօրացը ցուցնելիք խնամատարութիւնը : Զօրքերն պէտք ունին իրենց զօրագետը տեսնելու : Իր տեսքը անոնց հաստատամտութիւնը և յօյսը կը կենդանացընէ : Ամենէն աւելի վիրաւորեալներն կարեկցութեան նըշաններու պէտք ունին . արդ՝ ցաւօք սրտի կրտսենք որ մարաշլախտն երբէք օր մը այցելութիւն չըբաւ այն հիւանդանոցներն ուր Մէցի բնակիչներն ամեն կերպիւ մեր զինուորական բժշկաց ջանից և անձնատուութեանը կը մասնակցէին հիւանդներն ու վիրաւորեալները խնամելու համար :

Անձնատուութեան դաշնագրութեանը պայմաններէն մին այնպէս կը տրամադրէր որ պատերազմի տևողութեան ատեն Գերմանիոյ չահուցը դէմ բնաւ բան մը չի գործող սպայներն գերութիւնէ ազատ պիտի ըլլան : Ինչո՞ւ համար Պաղէն մարաշլախտն ընդունեցաւ այսպիսի պայման մը որ կրնար արհամարհելի թուել թիւններ յառաջ բերել : Ինչու համար զօրաբանակն թշնամոյն յանձնած ատեն՝ զօրաց փիճակը սպայից փիճակէն զանազանեց : Ինչո՞ւ համար ամեն չիտութիւնէ ըզգուշանալու նպատակաւ այս մասին սպայից պարտաւորութիւնն որոշ կերպիւ չի բացայայտեց : Այս

հարցումներուն գորհացուցիչ պատասխան մը չի կրցանք գտնել :

Անգամ մը անձնատուութեան դաշնագրութիւնն ստորագրուելէն վերջը, մարալխտն վերջին պարտաւորութիւն մ' ունէր կատարելու, և այն էր՝ մինչև վերջը իր դժբաղդ զօրականաց մէջ մնալ, որպէս զի եթէ թշնամուոյն հետ դըժուարութեանց պատահին, անոնց համար բարեխօսէ : Ասի կարեկցութեան վերջին նշանն ըլլալու էր, բայց Պաղէն մարալխտն՝ որ ամենէն վերջը քաղքէն մեկնելու էր, գեւ քաղաքը թշնամուոյն չի յանձնուած իր ընդհանուր բանակատեղին թողուց զնաց : Այսպիսի վարմունք մը կրնար ամենացաւալի չիթութիւն մը յառաջ բերել, և մինչդեռ Մէջի բերդերուն մէջ տակաւին օրուան մը ուտելիք կար, որն որ պաշտօնապէս թշնամուոյն յանձնուեցաւ, հոկտեմբեր 20 ըդ օրը զօրքերուն ուտելիք տալը մտցան :

Համառօտիւ, Պաղէն մարալխտն ընդդէմ կայսեր հրամանաց Մէջի բանակատեղին մնալով և սուտ տեղեկութիւններով Շարժի զօրաբանակին դէպի իրեն ուղևորութիւնը որոշելով՝ Մէտանի աղետից գլխաւոր պատճառն եղած է :

Ազգային Պաշտպան կառավարութիւնը ճանշնալէն վերջը՝ անոր կուսակից չըլլալով՝ պաշարման գունդերը բռնաբարել կարելի եղած ատեն անգործ մնալով, իր անձնական փառասիրութիւնը յազեցընելու նպատակաւ թշնամուոյն հետ քաղաքական դաւադրութիւններ ընելով, հակառակ իր ղեկավարական պարտույ՝ զանոնք յաջողընելու

համար երկրին աւերմանը պատրաստ դառուիլ զույրներով, իր տեղակալներուն հետ խորհրդակցած ատեն ամեն անգամ զանոնք խաբելով, թշնամուոյն յանձնուիլ որչափ զօրակներն զօրացը ձեռքէն խլելու համար անոնց վստահութիւնը նենգելով, և վերջապէս Մէջի գլխաւորութեան տեղութիւնը իր դաւադրութեանց յաջողութեանը զոհելով՝ Պաղէն մարալխտն իր առ հայրենիս և առ զօրաբանակն իւր ունեցած պարտաւորութիւններն բողբոջին գրծեր է :

ՎԵՐՉԱՐԱՆ

1870ի պատերազմը՝ երկար տարիներէ ի վեր մեղի հետ պատերազմելու պատրաստութիւն տեսնող և վարժութիւն ընող թշնամու մը դէմ՝ յանպատրաստից, առանց որոշ պլանմաներու և առանց պատերազմական օրինաւոր դաշտ մը սահմանելու տեղի ունենալուն համար աղետից շրջան մ' եղաւ :

Սոյն աղետից մէջ՝ Մէջի զօրաբանակին ազէտքը ամենամեծն է, վասն զի անոր աւերմամբը ազգային զօրաբանակներուն համար ամեն ինչ կորսուեցաւ : Եթէ պատերազմը անկէ վերջը շարունակեց, պատճառն այն էր որ Գաղղիացիք ամեն քաղաքական գլխաւորութիւնը մէկըլ թողլով՝ քաջ գիտցան որ այսպիսի անհրաժեշտ անկման մը վրայ մինչև անգամ իրենց զուակաց կրտսերներն ալ պէտք էր զոհել, որպէս զի իրաւունք ունենան ըսել

այն խօսքը զոր երբեմն մեր թուգաւորներէն մին այսպիսի դժբաղդութեան մը մէջ ըսեր է . « Ամենայն ինչ կորեաւ , բաց ի պատուոյ » :

Աւտի Մէջի զօրաբանակին պատերազմներն պատերազմական կապն աւ իր ողբալի վախճանը կը կազմեն : Այս զօրաբանակին վարչութիւնը Պաղէն մարալախտին յանձնուած էր , բայց նա այսպիսի յանձնարարութեան մը բնաւին չի պատասխանելով իր հայրենեաց վիճակը թշուառացուց :

Թշուառութիւնն երբ օրինաւորութեամբ գայ , նուիրական է , բայց երբ անձնական փառասիրութեան ցաւալի հալիւներ աղետաբեր դիտարութեանց տեղի տան , պէտք է որ արգարութիւնը վրէժխնդիր ըլլայ :

Պաղէն մարալախտին չէ թէ միայն իր զօրաբանակին հրամանատարութիւնը յանձնուած էր , այլ և Մէջի ալ :

Պաղէն մարալախտն իր զօրաբանակը Մէջի բանակատեղին պահելով իբր զօրաբանակի հրամանատար , Մէջի հրամանատարութիւնն ալ իր պարտաւորութեանց մէկ մասն եղաւ :

Մէջի և զօրաբանակին չահերը այսպէս սաստիկ կերպիւ իրարու հետ կապուեցան և դրեթէ միշտ չփոթուեցան : Այս վիճակը՝ վերջէն մարալախտին ձեռնարկած միջոցներուն վրայ կրկին հանգամանք մը տալաւորեց :

Ատեանը կը յայտնէ որ Պաղէն մարալախտն սկիզբէն ի վեր Զօրապալի պատերազմին կորստեանը քօտ մեծի մասին պատճառ եղաւ . վասն զի երբ իր հրամանատարութեան տակ գտնուած Զօրապար

զօրապետն իրմէ օգնութիւն կը խնդրէր , երրորդ գունդի զօրաբաժնի զօրապետներուն չի հրամայեց որ փութով յիշեալ զօրապետին օգնութեան հասնին :

Ատեանը հետեւեալ իրողութիւններն հաստատած է , որք Պաղէն մարալախտին հրամանատարութեան պաշտօնն ստանձնելէն վերջ տեղի ունեցած են , և որոյմէ կրնանք հետևողները որ դայնադրութենէն առաջ պարտուց և պատուոյ պահանջութեան գործադրած չէ :

Պաղէն մարալախտն խտրել է զկայսր , որ իրեն հրամայած էր փութապէս ետ քաշուիլ .

1⁰. իր զօրաբանակին ուղևորութիւնը մինչև օգոստոս 14 կէս օրէն վերջ ուշացրինելով .

2⁰. Թշնամուցն գործածելիք կամուրջներն չի քանդելով .

3⁰. Մէջէն գուրս ելած տանն՝ չորս դիւրին ճամբաներ դանուելուն վրայ , զօրաբանակին ուղևորութեանը համար միայն մէկ ճամբայ մը գործածելով .

4⁰. Զօրաբանակին ուտելիք բերող կառքերուն ընթացքը դադարեցրինելով .

5⁰. Օգոստոս 17ին իր ուղևորութիւնը չի շարունակելով :

Պաղէն մարալախտն՝ օգոստոս 19ին իր աւերակ զօրաբանակն անգործութեան մէջ պահելով և իր տեղակալներէն միոյն՝ Քանրօպէր մարալախտին ստիպողական և կրկնակի թախանձանացը վրայ անոր օգնութեան զօրք չի խրկելով՝ յիշեալ մարալախտին զօրացը վնասուելուն պատճառ եղած է :

Պագէն մարաշախտն՝ իր կաջութեան և իր առաջադրութեանցը նկատմամբ մինչև օգոստոս վերջ կայսրն ու պատերազմի պաշտօնեայն խաբեր է :

1⁰. իր ուղևորութիւնն շարունակելու համար ըստ բաւականին ուտելիք և ուղեւորութեանը հունենալ պատճառելով :

2⁰. Օգոստոս 19ին իմացընելով որ դէպ ի Մօնմէտի երթալու դիտաւորութիւն ունի, որով Սէն-Քրիվայի պատերազմէն վերջը այնպէս կը կարծեցընէր, որ միշտ դէպ ի այն կողմը պիտի ուղևորի, և այսպիսի լուր մը հանելով՝ Մաք-Մահօն մարաշախտին դէպ ի Մէօզ ուղևորելուն պատճառ եղաւ :

3⁰. Օգոստոս 26ին՝ Շալօնի զօրաբանակին ուղևորութիւնը իմանալովն հանդերձ, պատերազմի պաշտօնէին իմացընելով որ անկարելի է թշնամեայն գունդերը բռնաբարել, մինչդեռ Մաք-Մահօն մարաշախտին կը դրէ թէ ուղած ատեննիս կրնանք շանոնք բռնաբարել :

Պագէն մարաշախտն Մաք-Մահօն մարաշախտին ուղևորութիւնը խնդրելէն վերջը՝ յիշեալ մարաշախտին ամենեւին օգնութեան երթալու փորձ չի փորձելով և պատերազմին բոլոր ծանրութիւնը անոր վրայ ձգելով՝ Սէտանի աղետից պատճառ եղած է :

Պագէն մարաշախտն օգոստոս 26ին կրիմօն տեղի ունեցած խորհրդայն մէջ իր տեղակալներուն վստահութիւնը նենգեր է :

1⁰. Շալօնի զօրաբանակին ուղևորութիւնը անոնցմէ ծածկելով :

2⁰. կայսեր, պատերազմի պաշտօնէին և Մաք-Մահօն մարաշախտին զրկած գրութիւններն անոնց չի հաղորդելով :

3⁰. Այսպէս երկցընելով որ զօրաբանակն միայն պատերազմի մը համար ռազմամթերք ունի, մինչդեռ դիտէր որ օգոստոս 26էն ի վեր նոր պաշարներ հայթայթուած են :

Պագէն մարաշախտն՝ օգոստոս 12ին երբ Շալօնի զօրաբանակին նահանջումը որոշուելով՝ Մէցքաղաքը առանձին պիտի թողուէր, պաշարման դէպքի մը նկատմամբ 1863 հոկտեմբեր 13ի օրինարկութեան պահանջած արամադրութիւններն չի գործադրեց :

Պագէն մարաշախտն՝ Մէցի բանակատեղին մտած ատեն ըստ արամադրութեան յիշեալ օրինարկութեան իր զօրաբանակին սպառած ուտելեաց պակասը լեցընելու համար Մէցի չըլակայքը գտնուած ուտելիքը չի հաւաքեց :

Պագէն մարաշախտն՝ Մէցի բանակատեղիէն ամենեւին չի մեկնիլ որոշելովն հանդերձ իր զօրաբանակին համար յատուկ պաշար հայթայթելու նպատակաւ բնաւ հրաման մը չի տուալ :

Պագէն մարաշախտն թոյլ տուաւ որ պաշարներն սպառին :

1⁰. Չօրաբանակին օրական բաժինն անմիջապէս չի վճռելով :

2⁰. Քաղքին ժողովրդեան համար ալ օրական բաժին չորոշելով :

3⁰. իր զորացը թող տալով որ իրենց օրական բաժինէն զատ քաղքէն հաց և ուտելիք գնեն :

4⁰. Չիբրուն ցորեն և համար կերպընելով, մինչդեռ մարդոց կերակրոյն համար կարեօր եւ զած անասուններն կերակրելու չափ խոտ կը գտնուէր, մինչև որ հացը լմնցաւ :

Պաղէն մարաշխան թշնամուոյն Պ. Տրպէնի տուած լուրերն հուշակեց, որք զօրաբանակին բարոյականը փաստելու հանդամանքն ունէին, և որոցմէ ոմանք սուտ ալ էին :

Մարաշխանն թշնամուոյն գլխաւոր զօրապետէն խնդրեց որ Գողղիոյ կացութեան վրայօք տեղեկու թիւններ տայ իրեն, մինչդեռ 1863 հոկտեմբեր 13ի օրինադրութիւնն կը հրամայէ թըշնամուոյն տարածած լուրերուն ամենևին ականջ չի կատել :

Պաղէն մարաշխանն նոր կառավարութիւնը ճանչնալէն վերջը՝ Պ. Բէնիէի Ծէրիէրէն բերած առաջադրութեանց և տոյն պաշտօնէին անկեալ կառավարութեան կանգմանը մասին ըրած առարկութեանց ականջ կատել :

Պաղէն մարաշխանն յանձնարարեց Պ. Բէնիէի յայտնել որ ինքը պատրաստ է պատերազմական ստախներն ընդունելու սրայմանաւ իր զօրաբանակաւ անձնատուր ըլլալ, մինչդեռ ամեն մ'ուելի միջոցի համար ուտելիք և պէտք եղածէն աւելի ազգամովթերք ունէր :

Պաղէն մարաշխանն իմացուց Պ. Բէնիէի իր ուտելեաց որքան ժամանակ դիմանալը, և այսպէս Տէրութեան զաղտնիքն վստահեցաւ այնպի-

սի անհատի մը որուն պաշտօնը Պ. տը Պիսմարքի կողմանէ ստացած անցադրոջն միայն վաւերացած էր :

Պաղէն մարաշխանն սեպտեմբեր 29ին Սթիէլ զօրապետին հետ անձնատուութիւնը դաշնադրեւ սկսաւ :

Պաղէն մարաշխանն Աղզային Պաշտպան կառավարութեանէն անուղղակի հեռացաւ :

1⁰. Անոր հետ երբէք չի թողթակցելով, մինչդեռ բազմաթիւ պատահութիւններ ունէր թէ լրտեսներու ձեռքով, և թէ օղապարհիկներու միջոցաւ :

2⁰. Սեպտեմբեր 1 և հոկտեմբեր 20ին պատերազմի պաշտօնէին զրկած երկու դրութեանցք մէջ զօրաբանակին կացութեան վրայ բնաւ ճիշտ տեղեկութիւն մը չի հաղորդելով :

Պաղէն մարաշխանն անդործ մնաց այն միջոցին որ դեռ իր զօրաբանակին կրնար պատեւրազմիլ, և երբէք անձնատուութեան կարեօրութիւնը մերժելու համար ջանք մը չըրաւ, թէ թշնամուոյն գունդերն բռնաբարել փորձելով, և թէ պաշարման առաջքն առնելու համար քանի մը պատերազմներ ընելով :

Պաղէն մարաշխանն հոկտեմբեր 10ի խորհրդոյն մէջ իր գունդերու հրամանատարաց և զօրապետաց վստահութիւնը նենպած է :

1⁰. Թշնամուոյն գլխաւոր զօրապետին հետ ըրած դաղտնի լուսակցութիւնները, Բէնիէի տեսակցութիւնը, Պուրպաքի զօրապետին ուղեարութեան առիթները, և վերջապէս Լօնկվի և

Թիօնդիլ պատրաստուած պաշար ըլլալն անոնցմէ ծածկելով :

Տ⁰. Խորհրդոյն բանալ մտադրած յարաբերութեանց փորձերն ըլլալը և անյաշող վախճան մը ունենալնին գաղտ պահելով :

Պաղէն մարալախտն Պօսյէ զօրապետին Վէրոսայ ուղևորած ատենը սոյն խորհրդոյն յայտնած որոշումներէն տարբեր հրահանգներ տուաւ անոր :

Պաղէն մարալախտն այսպէս թշնամոյն հետ քաղաքական յարաբերութեանց մէջ մտաւ որք անչուշտ երկրին տւերում՝ յառաջ բերին՝ մինչդեռ դանաղութիւն ամենեւին պատճառ մը չկար, և գիտէր թէ քանի մ'օրէն Աղգային Ժողովն պիտի գումարի, որուն միայն կը պատկանէր հաշտութիւնն ու անոր պայմանները որոշելու իրաւունքը :

Պաղէն մարալախտն՝ հոկտեմբեր 18 ի խորհրդոյն մէջ իր տեղակալներուն վստահութիւնը նենգած է Պօսյէ զօրապետին բերած լրագիրներըն անոնց չի ներկայացընելով, և որով զանոնք իր տուած սուտ լուրերը արձանագրելէ արդիւնքով հետեցընել ուղեց որ Գաղղիտ կատարեալ անիշխանութիւն կը տիրէ, և միայն մէկ միջոց մը կայ ձեռք առնելու, այն է՝ կայսրուհոյն միջամտութիւնը խնդրել : Արդէն իր նպատակն ալ այս էր, և կուզէր որ անոնք ալ այս նպատակին հետեցընէ :

Պաղէն մարալախտն Պօսյէ զօրապետին բերած լուրերն զօրաբանակին մէջ համբաւեց, լուրերն որք ըստ մեծի մասին սուտ էին, և զօրա-

բանակին բարոյականը եղծելու հանգամանքն ունէին :

Պաղէն մարալախտն տեղական մամուլը վրայ բանեցուցած՝ աղբեցութեամբ և լրագրաց զըրկուած յօդուածներով միտքերը տկարացընելու և դիմագրութեան զգացումներն չիջուցանելու առիթ եղաւ :

Պաղէն մարալախտն սեպտեմբեր և հոկտեմբեր ամսոց մէջ թշնամոյն գլխաւոր զօրապետին հետ բանակեցաւ :

1⁰. Ուղղակի յարաբերութեանց վրայ պատգամաւորաց միջոցաւ, որոց նիւթը գաղտնի պահուեցաւ :

Տ⁰. Բաղմաթիւ թղթակցութեանց վրայ որոշ հետքն անգամ մնացած չէ :

Պաղէն մարալախտն անձնատուութիւնը որոշելէն վերջը՝ չի տարակուսեցաւ ժարրա զօրապետն թշնամոյն զրկելն յապաղեցընելու մասին, երբ գլխաւոր վերատեսուչն եկաւ իրեն իմացուց որ ինքը դեռ երկու երեք օրուան ուտելիք գըտած է, մինչդեռ գիտէր ալ որ թշնամին անմիջապէս քաղաքը պաշար պատրաստելու և գերիներն կերակրելու համար միջոցներ ձեռք առած էր :

Պաղէն մարալախտն անձնատուութիւնը դաշնադրել որոշելէն վերջը՝ թէ զօրաբանակին և թէ քաղաքին խել մը ռազմամթերքն եղծած չէ, զորս թշնամին պատերազմին շարունակութեան ատենը գործածեց :

Պաղէն մարալախտն իր զօրաբանակին դրօ-

չափերը թշնամոյն յանձնեց գունդերն զանոնք, եղծելէ արդիլելու համար վախուստներ զործածելէն վերջը :

Պաղէն մարտիախան իր զորաբանակին մէկ մասին համար ընդունած չէ պատերազմական պատիւներն զորս թշնամին հաճեցաւ իրեն չնորհել :

Պաղէն մարտիախան զորաբանակն թշնամոյն յանձնած ատեն սպայից վիճակը զբոսց վիճակէն զանազաներ է :

Պաղէն մարտիախան ընդունած է այն պայմանը որով պատերազմի բոլոր տևողութեան ատեն Գերմանիոյ շահուցը դէմ ընան մը չի գործել յանձն առնող սպայներն իշխանութիւն պիտի ունենային իրենց տեղերը դառնալու :

Պաղէն մարտիախան անհոգութիւն ըրած է դաշնադրելու որ զորաբանակն թշնամոյն յանձնուելուն պէս թշնամին անոնց ուտելիք բաշխէ :

Պաղէն մարտիախան իր զորաբանակն թշնամոյն յանձնելէն վերջը փոխանակ իր գունդերուն մէջ կենալու, որպէս զի ի հարկին անոնց համար բարեխօսէ, առաջին անգամ ինքը Մէլցէն դուրս ելեր է :

Պաղէն մարտիախան իր թիւ 12 ընդհանուր հրամանագրին և թիրէլ գնդապետին դրիած հրամանագրոյն մէջ սուտ հաստատութիւն մը յայտնած է թէ ռազմական նիւթերն վերտախն Գողդիա պիտի դառնան, հաստատութիւն մը՝ որուն հետեւանքն եղաւ զանոնք թշնամոյն յանձնելու նուաստութիւնն երկու ամիսէն աւելի միջոց մը երկարել, որպէս զի յիշեալ նիւթերն աղէկ վի-

ճակի մէջ պահուին և անարատ թշնամոյն յանձնուին :

Ատեանն վերայիշեալ եղելութիւններն հաստատելով կը վճռէ որ Պաղէն մարտիախան արժանի է դատաստանի ենթարկուելու :

Այնպիսի անձնատուութեան դաշնադրութիւն մը ստորագրելուն համար որոյ հետեւանքն եղաւ իր զորաբանակն ու Մէլց քաղաքը բոլոր ռազմական նիւթերովն թշնամոյն յանձնել, առանց յիշեալ դաշնադրութիւնն ընելէն առաջ պարտույ և պատուոյ պահանջումներն ի գործ դնելու :

Ասոնք զինուորական Գատաստանագրքին 209 և 210 յօդուածներուն մէջ նշանակուած ու պատիժնին ալ յուցուած յանցանքներ են :

Գրեալ ի վէրոյսյլ, 6 Մարտ 1873

Ձեռքովի ստորագրութիւն : Հիւսար Երեստան

Երեստանի Կրտսէր

ՏԸ ԲԻՒԼԵՏ

Գ. ՆԱԽԱՅԱՀՐ : — Ձինուորական Գատաստանագրքին 108րդ. յօդուածոյն ստահանված ծանուցագրոյն ընթերցումը լմնցաւ . հիմայ կը հրամայեմ որ Պաղէն մարտիախան քննութեան յանձնածողովոյ ներկայացուցած Թանուգրի Հոկտեմբեր

չորհանգիլն հորձանքներն և այնպիսիքն Մեղի վեր-
նադրով յիշատակագիրը կարդացուի: (1)

Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. Մասանց ընթերցումը ա-
ւարտեցաւ:

(Պ. Մարաշախան սրահէն դուրս ելնելու կը
պատրասուի:)

Պ. ՆԱԽԱԳԱՀՐ. Պ. Մարաշախտ, կեցէք: , ,
Ոտքի վրայ ելէք:

Դուք ամբաստանուած էք:

1⁰. Թշնամւոյն հետ անձնատուութիւն գաչ-
նադրելուդ և Մէջ քաղաքը թշնամւոյն յանձ-
նելուդ համար, որուն գլխաւոր հրամանատա-
րութիւնն ձեզ յանձնուած էք, առանց ձեր ձեռ-
քը գտնուած բոլոր միջոցներն սպառելու և ա-
ռանց պարտուց և պատուոյ ամեն պահանջում-
ներն գործադրելու:

2⁰. Իբր Մէջի բանակին գլխաւոր հրամանա-
տարը այնպիսի անձնատուութեան դաշնագրու-
թիւն մը ստորագրելուդ համար, որ կարևոր
չէր, և որոյ արդիւնքն եղաւ ձեր դունդերուն
իրենց զէնքերովը թշնամւոյն յանձնուիլը:

3⁰. Որոշակի և դրաւորապէս դաշնագրելէ

(1) Պ. Ալլա դիւանապետն այս գիրն ալ կարդաց,
որն որ կերէի թէ Պազէն մարաշախտին ի Փարիզ հրատա-
րակած և «Չորսբանակ ձաւնոսի» անուն գիրքն ըլլալու է:

Եթէ մարաշախտին ու վրայից հաստատութիւններն
յիշեալ գրքին հրատարակութեան հարկ մը ջուրքնէին, չոր-
բորդ մասը ըմենայէն վերջը՝ մանրամասն տեղեկութեանց
յատկացած գրութէն յետոյ դոյն ալ կը հրատարակենք:

առաջ պարտուց և պատուոյ պահանջումներն
չի գործադրելուդ համար:

Ասոնք զինուորական Դատաստանագրքին 209և
210 յօդուածներով ջուրցուած յանցանքներ են:

Պարոն մարաշախտ, կանխաւ կիմացընեմ ձեզ
որ ձեր պաշտպանութեան համար օգտակար կար-
ծած ամեն խօսքերնիր խօսելու մասին օրէնքը
ձեզի արտօնութիւն կուտայ: Պ. Պ. պաշտպանե-
րուն ալ կիմացընեմ որ ըստ 181 ըդ յօդուածոյ
զինուորական Դատաստանագրքին ամենեւին չեն
պարտաւորիր իրենց խոջին և օրինաց պարտե-
ղած յարգանաց դէմ բան մ'ըսել, և կը պարտա-
ւորին մեզմիւ և չափաւորութեամբ խօսիլ:

Պարոն մարաշախտ, կրնաք մեկնիլ:

Ատեանը ժամը չորսուկէօին զոցուեցաւ և
երկուշարթի ժամ մէկին ձգուեցաւ:

ՎԵՐՉ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

	Երև
Առ ընթերցողս	4
Իտտուորք պատերազմական առաջին ատենին :	6
Մանոթութիւն պատերազմական առաջին ատենը	
կազմող զօրապետաց վրայ	9

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՄԲԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Հրաման դատատանի : — Կոլումն վկայից . .	13
Յանկ ծառայութեանց Գաղէն մարտիտիւն . .	29
Բովանդակութիւն դատատանազրոյ 1872 ապրիլ 12ի	53

ՏՐ ԻՒՂԻՐ ԶՕՐԱԳԵՏԻՆ ԵՄԼՈՒՅԱԳԻՐԸ

Յառաջարան	31
---------------------	----

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ : ԺԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱԽ ԴԱՆ ԶՊԱՆՍՐՈՒՄԸ ՄԻՆՁԵՒ 1870

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1

Գլուխ ԱՌԱՋԻՆ : — « Աղղրնատրութիւն պատերազմի » : — « Պատերազմ Ծորպախի » : — Հսենոսի բանակին կազմութիւնը	55
Լորէնի և Ալզասի զօրարանակացի կեղրան հաւաքումը	58
Ծորպախի պատերազմը	60

	Երես
ԳԼՈՒԽ Բ. — « Զորաբանակին ի Մէջ նահանջումը »	75
Պաղէն մարաշխտն զլիաւոր հրամանատար կանուանի	76
Զորաբանակին Շալոնի վրայ նահանջումը կորուչուի	80
Անցք ի Մօզէլէ	81
Զորաբանակին լեռները հասնիրը. — Ռեզոնվիլի պատե.	95
Զորաբանակին յետադարձ շարժումը	99
Ռազմամթերք և ուտեստ կը բաւէին ուղևորութիւնը շարունակելու համար : — Ռազմամթերից և ուտեստի վիճակը	101
Զորաբանակին Ռօզէրիէօյի և Սէն-Բրիվայի մէջ տեղը կը հաստատուի	107
Սէն-Բրիվայի պատերազմը	115
Զորաբանակին երկրորդ նահանջական շարժումը	150
ԳԼՈՒԽ Գ. — « Շալոնի բանակատեղւոյն հետ եղած հաղորդակցութիւնքն »	143
Մանեան հրամանատարին պաշտօնը	146
Մաք-Մազան մարաշխտին Ռէյնս և վերը Մօնս մէտի երթալը	152
Մանեան հրամանատարին վերադարձը	157
Շալոնի և Մէջի զօրաբանակաց Մօնսէտի մէջ միանալուն համար եղած պատրաստութիւններն	162
Պաղէն մարաշխտին օգոստոս 20ին զրկած հեռագ.	167
Շալոնի զօրաբանակին ուղևորութիւնը ազդարարող մէկ հեռագրոյն օգոստոս 25ին Մէջ հասնիրը	175
Շալոնի զօրաբանակին իրեն սղտնութեան գալը իմաց տրուած ատեն Պաղէն մարաշխտին ստած պատասխ.	185
ԳԼՈՒԽ Գ. — ԽՈՐՀՈՒՐԴ ԹԳՈՍԱՐՈ 26 ի : — « Յոյս օգոստոս 31 ընդդէմ թշնամւոյն »	190
Սոգոստոս 26 ի համար ուղևորութեան հրաման :	192

	Երես
Խորհուրդ 1870 օգոստոս 26 ի	197
Խորհրդոյն մէջ յայտնուած կարծիքներուն վիճարաւ.	203
Նութիւնը	205
Համառօտութիւն առաջին մասին	220

**ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ: — ՃԱՄԱՆԱԿ ՊԱՇԱՐՄԱՆ
ՄԻՆՁԵՒ 1870 ՀՈԿՏԵՄԲԵՐ 7 :**

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ : — « Մէջ քաղաքին ղիմադրութեան պայմանները »	225
Սեպտեմբեր 1ին՝ մարտկոցներուն պաշտպանութեան և սպառազինութեանը համար դրոժադրուած աշխատութեանց վիճակը	225
Պաշտպանողական զուգներուն կազմութիւնը	229
Զօրաբանակին Մէջի բանակատեղին մատրոլը կտտարելիք ժիր զերը	251
Պաշտպանութեան համար պահանջուած կանոնաւոր արամազրութիւններն Մէջի մէջ չի գործադրուեցան	252

ԳԼՈՒԽ Բ. — « Պաշարներուն հայթայթումը : — Մէջի համար պաշարման պաշարներն ի սկիզբան պատերազմին չի հայթայթուեցան	255
Պաղէն մարաշխտին զլիաւոր հրամանատարութեան պաշտօնը ընդունած ատեն Մէջի մէջ գտնուած պաշարներուն վիճակը	258
Պաշարներուն վիճակը բարոքելու համար բնաւ փորձ մը փորձուած չէ	240

ԳԼՈՒԽ Գ. — « Զօրաբանակին Սէտանի դէպքերն ու սեպտեմբեր 4 ի յովմուները կիմանայ »	242
---	-----

Պ. Տրպեւնի Հաւաքած տեղեկութիւններն . . . 244
Մարաշախան Սթրաղարիքի առանձն շուրն տարածում
կը հաղորդէ : Գաղղիական լրագիրներուն ընդունուիլը . . . 249

ԳԼՈՒԽ Պ. — « Պաղէն մարաշախան Տրէտէրիք-Շարլ
ի խանին Հետ ըրած թղթակցութիւնն »
Գերմանական կառավարութեան Քլյմի լրագրոց
հաղորդած մէկ յօդուածը 260
Սեպտեմբեր 25ին առաջ գաղղիական զորարանակն
եկող գերմանացի պատրանաւոր սպայներն 265

ԳԼՈՒԽ Ե. — « Բէնիէի միջամտութիւնը : — Պար-
պաքի զօրապետին մեկնիլը
Առաջին տեսակցութիւն Պ. Բէնիէի ընդ Պաղէն
մարաշախան 266

Երկրորդ տեսակցութիւն Պ. Բէնիէի ընդ պաղէն մա-
րաշախան : — Պարպաքի զօրապետին ուղևորութ-
ւան 276
Առաջին հաղորդակցութիւններն արդիւնք մը չեն
ունենար : — Կամակ Պաղէն մարաշախան առ զօ-
րապետն Սթրէլ 284

Պ. Բէնիէ զօրարանակին կտրտութեանը վրայօր ներդ
տեղեկութիւններ տարաւ Մէջէն 290
Պաղէն մարաշախան սեպտեմբեր 25ին ինքզինքը
պատերազմական բեռներով անձնատուր ընելու
պատրաստ կը զայն 294

ԳԼՈՒԽ Չ. — « Փոքրիկ գործողութիւնք » : Մարա-
շախան մինչև սեպտեմբեր 20 անդործ մնալը . . . 295
Մարաշախան իր անդործութիւնն արդարապէս չլու
համար մէկ բերած պատճառները 298

ԳԼՈՒԽ Է. — « Պաղէն մարաշախան Աղգային
Պաշտպան կառավարութեան Հետ ունեցած լարա-
բերութիւններն » : — Մարաշախան կայտերական
կառավարութեան ուղղած վերջին հեռագիրներն . . . 302
Աղգային Պաշտպան կառավարութեան զրկուած
Հեռագիրք 304
Դուրսի Հետ հաղորդակցելու զիւրութիւնը 308
Մարաշախան Մէջէն ելած օդապարիկներն չի գոր-
ծածեր 311
Աղգային Պաշտպան կառավարութեան անդամոց
մարաշախան Հետ հաղորդակցելու փորձ փորձէն . . 313
Երկրորդ մասին համառօտութիւնը 321

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴԻ. — ԱՆՁՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ
(ՀՈՒՆՅԱՆՄԱՆԻՒ 7-29)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ : — « Խորհուրդ Հոկտեմբեր 10ի »
Կայտութիւն ի սկիզբն Հոկտեմբեր ամսոյ 323
Գունդեղու հրամանատարաց զօրարանակին կացու-
թեան վրայ տուած խորհուրդը 333
Պատերազմական խորհուրդ Հոկտեմբեր 10ի 338
Խորհրդոյ սրբանշնջ քննութիւնը 346

ԳԼՈՒԽ Բ. — « Պայէ զօրապետին ճրտակոյ թագա-
ւորին քով վարած պաշտօնը » : — Պայէ զօրապետին
ըրած առաջին տեսակցութիւնը Պ ար Պիտարքի Հետ . . 357
Պ. ար Պիտարքի զրած պայմաններն 360
Պայէ զօրապետին Պ ար Պիտարքի Հետ ըրած երկ-
րորդ տեսակցութիւնը 363

	Երես
ԳԼՈՒԽ Գ. — « Վերադարձ Պօսյէ դորապետին և ժողով հոկտեմբեր 10ի » : Պօսյէ դորապետին Պ. Պարսարի պատահիրը	565
Խորհուրդ հոկտեմբեր 18ի	574

ԳԼՈՒԽ Գ. — « Պօսյէ դորապետին կայրուհւոյն քով վարած պաշտօնը : — Յարաբերութեանց գլխավին անյայտութիւնը	597
Զորաբանակին բարբոտիւմը չի պաշտպանուեցաւ	599
Տեղական մամբայ վրայ գործածուած ազդեցութիւնը	402

ԳԼՈՒԽ Ե. — « Խորհուրդ հոկտեմբեր 24ի : — Անձ- նատու թեան պայմաններուն վրայ եղած վիճաբա- նութիւնը » : — Շանկարիկէ դորապետին պաշտօնը	404
Սիւնյ դորապետին պաշտօնը	409
Հոկտեմբեր 26ին Սիւնյ և Փարրա դորապետաց մէջ տեղի ունեցած խորհրդակցութիւնն ի Ֆրասքաթի	411
Վերադարձ Փարրա դորապետին	414
Երկրորդ տեսակցութիւն ի Ֆրասքաթի	417

ԳԼՈՒԽ Զ. — « Դրօշակը » : Խորհուրդ հոկտեմ- բեր 26ի	420
Հոկտեմբեր 27ին Սոյէյլ դորապետէն ուղղուած հր- րամաններն	424
Հոկտեմբեր 27ին դրօշակներն նուարան զրկուելու հրաման կը տրուի հան սյրուելու համար	428
Մարաշիային հրամանն կը յայտնէ որ դրօշակներն հոկտեմբեր 28ին պիտի յանձնուին	452
Քանի մը դրօշակներ կայրուին : — Լավօրբէ դօ- րապետին նամակը	459
Դրօշակներուն նկատմամբ թշնամոյն անհանգստութ	448

	Երես
Ժիրէլ գնդապետին հրամանագիրը	449
Սթիէլ դորապետին զրկած դրութիւնը	430
ԳԼՈՒԽ Է. — « Անձնատուութիւն »	455

ՀԱՄԱՌՑՑՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԽՆԴԻՐ 1 : — Օգոստոս 12էն մինչև սեպտեմբեր 1 եղած միջոցը	470
ԽՆԴԻՐ 2 : — Սեպտեմբեր 1էն մինչև հոկտեմբեր 29 եղած միջոցը	477
Պարտաւորութիւնք Մէջ քաղաքին համար	484
Պարտաւորութիւնք զօրաբանակին համար	487
Պարտաւորութիւնք զօրականաց համար	491
ՎԵՐՋԱՐԱՆ	493

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՆՐԱՏԱՐԱԿՉԻՆ

Որչափ որ տետրակիս սկիզբը Ա. Մուրատեան էֆէնտի անունը կը տեսնուի իբր թարգմանիչ գործոյս, սակայն յիշեալ էֆէնտին մինչև երկրորդ տետրակը թարգմանելէն յետոյ գաղթեցընելով իւր աշխատութիւնը, գործոյս երրորդ տետրակէն սկսեալ Կ. ՊԱՂՃԵԱՆ էֆէնտի սկսած է սորա թարգմանութիւնը և առաջին հատորն ալ լրացուցած, զոր յատկապէս ծանուցանել հարկ կը համարիմք, նորին թարգմանչութեան իրաւանց դէմ անիրաւութիւն մ'ըրած չ'ըլլալու համար:

«Ազգային գրադարան»



NL0340405

